

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԼՐԱԲԵՐ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ВЕСТНИК
ОБЩЕСТВЕННЫХ
НАУК

HERALD
OF SOCIAL SCIENCES

2(665)
ՄԱՅԻՍ-ՕԳՈՍՏՈՍ
МАЙ-АВГУСТ
MAY-AUGUST

**ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1940 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
ЖУРНАЛ ВЫХОДИТ 3 РАЗА В ГОД, ИЗДАЕТСЯ С НОЯБРЯ 1940 ГОДА
JOURNAL IS PUBLISHED 3 TIMES IN A YEAR, SINCE NOVEMBER 1940**

Գլխավոր խմբագիր՝ **ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
Խմբագրի տեղակալ՝ **ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ**
Պատասխանատու քարտուղար՝ **ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՅԱՆ, ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՎԱՐԴԱՆ
ԴԵՎՐԻԿՅԱՆ, ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ,
ՎԱԶԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՐԱԶ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (Նիդերլանդներ), ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՊՈԴՂՈՍՅԱՆ,
ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՏՅԱՆ, ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ, ԺԱՍՄԻՆ ԴՈՒՄ-ԹՐԱԳՈՒՏ (Ավստրիա),
ՊԱՏՐԻԿ ՏՈՆԱՊԵՏՅԱՆ (Ֆրանսիա), ՓԻԹԵՐ ՔԱՌԻԻ (ԱՄՆ)

Главный редактор – **ПАВЕЛ АВЕТИСЯН**
Заместитель редактора – **АРСЕН БОБОХЯН**
Ответственный секретарь – **ГАЯНЭ АРУТЮНЯН**

Редакционная коллегия

АРЦРУН АВАКЯН, АРАРАТ АГАСЯН, ГАМЛЕТ ГЕВОРКЯН, ВАРДАН ДЕВРИКЯН,
ЖАСМИН ДУМ-ТРАГУТ (Австрия), ГАГИК КАЗИНЯН, РУБЕН КАРАПЕТЯН, ВИКТОР
КАТВАЛЯН, ПИТЕР КАУИ (США), ГРАЧ МАРТИРОСЯН (Нидерланды), АШОТ МЕЛКОНЯН,
ВАЧЕ ОВАКИМЯН, НИКОЛАЙ ОГАНЕСЯН, ГЕВОРК ПОГОСЯН, РУБЕН САФРАСТЯН,
ПАТРИК ТОНАПЕТЯН (Франция), ЮРИЙ СУВАРЯН, АЛЬБЕРТ ХАРАТЯН

Editor-in-chief **PAVEL AVETISYAN**
Vice-editor **ARSEN BOBOKHYAN**
Responsible secretary **GAYANE HARUTYUNYAN**

Editorial Board

ARARAT AGHASYAN, ARTSRUN AVAGYAN, HAMLET GEVORGYAN, VARDAN DEVRIKYAN,
ALBERT KHARATYAN, VIKTOR KATVALYAN, RUBEN KARAPETYAN, VACHE HOVAKIMYAN,
NIKOLAY HOVHANNISYAN, GAGIK GHAZINYAN, HRACH MARTIROSYAN (Netherlands),
ASHOT MELKONYAN, GEVORG POGHOSYAN, RUBEN SAFRASTYAN, YURI SUVARYAN, JASMINE
DUM-TRAGUT (Austria), PATRICK TONAPETIAN (France), S. PETER COWE (USA)

©Լրաբեր հասարակական գիտությունների
©Вестник общественных наук
©Herald of Social Sciences

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ալբերտ Խառատյան – Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի հայոց պատ- րիարքությունների փոխհարաբերությունները (XVIII դ. սկիզբ-20-ա- կան թթ.).....	12
Վանիկ Վիրաբյան – Հայաստանում և Անդրկովկասում Իտալիայի ռազ- մաքաղաքական ներկայացուցչության գործունեության հարցի շուրջ (1918-1920 թթ.).....	31
Արարատ Հակոբյան – 1920 թ. թուրք-հայկական և 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմների պատմահամեմատական զուգահեռներ.....	47

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գառնիկ Գևորգյան – Մտացածին «Ազարբայջանի» ոճ պարսից պոե- զիայում.....	62
--	----

ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Ամալյա Հարությունյան – Առարկայի ու մեթոդաբանության կապը իրա- վագիտակցության բնույթի և էության ճանաչողության խնդրում.....	76
Աստղիկ Խուրշուդյան – Իրավական պետության հայեցակարգի հիմնա- վորումը գերմանական դասական փիլիսոփայության համակարգում....	86
Նելլի Պետրոսյան – Կրթության և դաստիարակության նշանակությունը Գրիգոր Լուսավորչի «Հաճախապատում ճառերում».....	97

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տաթև Հակոբյան – Հայաստանի փորձը միջհամայնքային համագոր- ծակցության ոլորտում.....	103
--	-----

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Գևորգ Պողոսյան, Ռիմա Պողոսյան – Սոցիալ-քաղաքական իրավիճակը 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններից առաջ և հետո.	111
Յուլիանա Մելքումյան, Մարիամ Հարությունյան – Սոցիալական շեր- տավորման վիզուալացումը հեռուստասերիալներում.....	121

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Գասպարյան – Եղիշե Չարենցի ստեղծագործության պատմակա- նության նախադրյալները (Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակի առթիվ).	135
--	-----

Գոհար Կարապյոզյան – Այլության նշահարումը՝ որպես կրոնաէթնիկական բաժանման գործիք (XVI-XVIII դդ. Օսմանյան կայսրությունը եվրոպացիների աչքերով).....	154
Կարինե Առաքելյան – Երգիծանքի ոճական միջոցները Նշան Պեշիկթաշլյանի «Գրպանի բառարանում».....	163
Ռուզաննա Խոստիկյան – Համանունաբանության կարևորությունը գործարար անգլերենում.....	173
Լուսինե Հայրիյան – Միհրականությունը կամ արևի հնագույն ընկալումները Ավետիք Իսահակյանի բանասիրական ուսումնասիրություններում.....	179
Նվարդ Վարդանյան – Հարսանեկան երգերը Գարեգին Սրվանձտյանցի բանահյուսական գրառումներում.....	192

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անահիտ Բեքարյան – Կանադայի հայ բեմի ստեղծագործական ուժերը...	200
---	-----

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անի Նազարյան, Նարինե Ստեփանյան – Սոցիալական կարծրատիպերի շարժընթացը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնները	215
---	-----

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երվանդ Գրեկյան, Արսեն Բոբոխյան – Ք.Ա. III հազարամյակի վերջի «Գերերաշտը» և վիշապ-քարակոթողների առաջացման խնդիրը.....	223
Արսեն Հարությունյան – Տաթևի վանքի շինարարական փուլերը (ըստ երկրաշարժերի տարեգրության).....	250
Աստղիկ Բաբաջանյան, Սոսե Աղայան – Դաշտադեմի միջնադարյան դղյակի ճարտարապետությունը.....	268
Լիանա Ավետիսյան – Փերիահայերի ծիսապաշտամունքային կյանքը. նշանադրություն, հարսանիք.....	287

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ստեփան Ղարիբջանյան – Մորուս (Մարգար) Հասրաթյան (ծննդյան 120-ամյակի առթիվ).....	299
---	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աննա Ասատրյան – <i>Զավեն Թագակչյան</i> , Հոգևոր երգատեսակները Զավախքի ժողովրդական ավանդույթում.....	304
--	-----

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Կլիմենտ Հարությունյան – Դերծովակալ Արտավազդ Արամի Սաղոյան...	312
Ռոբերտ Բաղդասարյան – Եղիշե Չարենցը ռուս-հայկական գրական առնչություններում (բանաստեղծի 125-ամյակին).....	318
Արմեն Կարապետյան – Զորավար Անդրանիկի կերպարը Եղիշե Քաջունու հուշագրության մեջ.....	322

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

Ալեքսանդր Մանասյան – Գիտելիքների ներաշխարհից դեպի նրանց բնազանցական հեռաստանները (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Համլետ Գևորգյանի ծննդյան 95-ամյակի առթիվ).....	327
---	-----

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ И ПОЛИТОЛОГИЯ

Альберт Харатян – Отношения между армянскими патриархатами Константинополя и Иерусалима (начало XVIII в. – 20-ые годы).....	12
Ваник Вирабян – К вопросу о деятельности итальянского военно-политического представительства в Закавказье и Армении (1918-1920 гг.)..	31
Арарат Акопян – Историко-сравнительные параллели между армяно-турецкой войной 1920 года и 44-дневной Арцахской войной 2020 года	47

ВОСТОКОВЕДЕНИЕ

Гарник Геворгян – Вымышленный «азербайджанский» стиль в персидской поэзии.....	62
---	----

ФИЛОСОФИЯ И ПРАВО

Амалия Арутюнян – Связь предмета и методологии в вопросе познания природы и сущности правосознания.....	76
Астхик Хуршудян – Обоснование концепции правового государства в системе немецкой классической философии.....	86
Нелли Петросян – Значение образования и воспитания в «Многовещательных речах» Григория Просветителя.....	97

ЭКОНОМИКА

Татев Акопян – Опыт Республики Армении в сфере межобщинного сотрудничества.....	103
--	-----

СОЦИОЛОГИЯ

Геворк Погосян, Рима Погосян – Социально-политическая ситуация до и после внеочередных парламентских выборов 2021 г.	111
Юлиана Мелкумян, Мариам Арутюнян – Визуализация социальной стратификации в телесериалах.....	121

ФИЛОЛОГИЯ

Давид Гаспарян – Предпосылки историчности произведений Егише Чаренца (к 125-летию со дня рождения Егише Чаренца).....	135
--	-----

Гоар Карагезян – Маркирование инаковости как инструмент религиозно-этнической сегрегации (Османская империя XVI-XVIII вв. глазами европейцев).....	154
Карине Аракелян – Стилистические средства сатиры в «Карманном словаре» Ншана Пешикташляна.....	163
Рузанна Хостилян – Значимость омонимии в деловом английском.....	173
Лусине Айриян – Митраизм или древние представления о солнце в филологических исследованиях Аветика Исаакяна.....	179
Нвард Варданян – Свадебные песни в фольклорных записях Гарегина Срвандзтянца.....	192

КУЛЬТУРА И ИСКУССТВОВЕДЕНИЕ

Анаит Бекарян – Творческие силы канадской армянской сцены.....	200
---	-----

ПСИХОЛОГИЯ

Ани Назарян, Нарине Степанян – Социально-психологические факторы, обуславливающие динамику социальных стереотипов.....	215
---	-----

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Ерванд Грекян, Арсен Бобохян – «Мегазасуха» конца III тысячелетия до н.э. и вопрос происхождения каменных stel-вишапов.....	223
Арсен Арутюнян – Этапы строительства Татевского монастыря (по летописи землетрясений).....	250
Астхик Бабаджанян, Сосэ Агаян – Архитектура средневекового замка в Даштадеме.....	268
Лиана Аветисян – Ритуально-культовая жизнь перийских армян: по-молвка, свадьба.....	287

ПУБЛИКАЦИИ

Степан Гарибджанян – Морус (Маргар) Асратян (к 120-летию со дня рождения).....	299
---	-----

РЕЦЕНЗИИ

Анна Асатрян – <i>Завен Тагакчян</i> , Типы армянской духовной песни в народной традиции Джавахка.....	304
---	-----

НАУЧНАЯ ХРОНИКА

Климент Арутюнян – Контр-адмирал Артавазд Арамович Сагоян.....	312
Роберт Багдасарян – Егише Чаренц в русско-армянских литератур- ных связях (к 125-летию со дня рождения поэта).....	318
Армен Карапетян – Образ полководца Андраника в воспоминаниях Егише Каджуни.....	322

НАШИ ЮБИЛЯРЫ

Александр Манасян – От имманентного содержания знаний к транс- цендентальным далям (к 95-летию со дня рождения академика НАН РА Гамлета Геворкяна).....	327
--	-----

CONTENT

HISTORY AND POLITICAL SCIENCE

Albert Kharatyan – The Relationships between the Armenian Patriarchates of Constantinople and Jerusalem (Beginning of the 18 th Century to 1720s).....	12
Vanik Virabyan – On the Question of the Activities of the Italian Military-Political Representation in the Transcaucasus and Armenia (1919-1920).....	31
Ararat Hakobyan – An Attempt to Hold Historical Parallels between the Turkish-Armenian War of 1920 and the 44-Day Artsakh War of 2020.....	47

ORIENTAL STUDIES

Garnik Gevorgyan – The Fictional "Azerbaijani Style" in Persian Poetry.....	62
--	----

PHILOSOPHY AND LAW

Amalya Harutyunyan – The Connection between the Subject and the Methodology in Recognizing the Nature and Essence of Legal Consciousness.....	76
Astghik Khurshoudyan – Justification of the Concept of the State of Law in the System of German Classical Philosophy.....	86
Nelly Petrosyan – The Meaning of Education and Upbringing in "Faithful Speeches" of Gregory the Illuminator.....	97

ECONOMICS

Tatev Hakobyan – The Experience in Intercommunal Cooperation of the Republic of Armenia.....	103
---	-----

SOCIOLOGY

Gevorg Poghosyan, Rima Poghosyan – Social-Political Situation before and after the 2021 Parliamentary Elections.....	111
Yuliana Melkumyan, Mariam Harutyunyan – Visualization of Social Stratification in Sitcoms.....	121

PHILOLOGY

David Gasparyan – Preconditions of Historicity in Yeghishe Charents' Works (On the 125th Anniversary of Yeghishe Charents).....	135
--	-----

Gohar Karagezyan – Marking Otherness as a Tool for Religious-Ethnic Segregation (The 16 TH -18 TH Century Ottoman Empire Through the Eyes of Europeans).....	154
Karine Arakelyan – Stylistic Means of Satire in the "Pocket Dictionary" of Nshan Peshiktashlian.....	163
Ruzanna Khostikyan – Significance of Homonymy in Business English.....	173
Lusine Hayriyan – Mithraism or Ancient Perceptions of Sun in Isahakyan's Philological Searches.....	179
Nvard Vardanyan – Wedding Songs in Folklore Recordings of Garegin Srvandztyants.....	192

CULTURE AND ART HISTORY

Anahit Bekaryan – Creative Power of the Armenian Stage in Canada.....	200
--	-----

PSYCHOLOGY

Ani Nazaryan, Narine Stepanyan – Socio-Psychological Factors that Determine the Dynamics of Social Stereotypes.....	215
--	-----

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Yervand Grekyan, Arsen Bobokhyan – The "Megadrought" at the End of the 3rd Millennium BC and the Problem of Origin of Vishap Stone Stelae.....	223
Arsen Harutyunyan – The Construction Stages of Tatev Monastery (According to Chronology of Earthquakes).....	250
Astghik Babajanyan, Soseh Aghaian – Architecture of the Medieval Castle of Dashtadem.....	268
Liana Avetisyan – The Ritualistic and Cultic Life of the Armenians of Peria: Engagement, Wedding.....	287

PUBLICATIONS

Stepan Gharibjanyan – Morus (Margar) Hasratyan (On the 125-th Anniversary).....	299
--	-----

LITERARY REVIEWS

Anna Asatryan – <i>Zaven Taghakchyan</i> , The Types of the Armenian Sacred Song in the Folk Tradition of Javakhq.....	304
---	-----

SCIENTIFIC CHRONICLE

Kliment Harutyunyan – Counter Admiral Artavazd Aram Saghoyan.....	312
Robert Bagdasaryan – Yeghishe Charents in Russian-Armenian Literary Relations (On the 125th Anniversary of the Poet).....	318
Armen Karapetyan – The Immage of General Andranik in Memoires of Eghishe Kajuni.....	322

OUR JUBILEES

Alexander Manasyan – From the Inner World of Knowledge to its Meta-physical Perspectives (On the Occasion of the 95th Anniversary of Hamlet Gevorgyan, the Academician of the National Academy of Sciences of the Republic of Armenia).....	327
--	-----

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XVIII դ. սկիզբ – 20-ական թթ.)

Ալբերտ Խառատյան

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդամյան 24/4
Էլ. հասցե՝ info@haygithimnadram.am
Հոդվածը ներկայացվել է 03.09.2021, գրախոսվել է 15.09.2021, ընդունվել է տպագրության 05.07.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.2-12

Ներածություն

XVIII դ. սկզբին որակական փոփոխություններ տեղի ունեցան Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի պատրիարքությունների գրեթե ավանդականացված փոխհարաբերություններում: Եթե պոլսահայ միլեթի շրջանակներում Կ. Պոլսի պատրիարքությունը նախապես կրում էր Երուսաղեմի շատ ավելի վաղեմի հայկական կրոնական միաբանության ազդեցությունը, ապա հետագայում, Օսմանյան Թուրքիայում միլեթներին տրված հնարավորությունների համեմատ, Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքը նախ բարոյապես, ապա կառավարման տեսակետից ինքն է սկսում կրել մայրաքաղաքի հայկական համայնքի հոգևոր կենտրոնի վարչական ազդեցությունը: Այդ այդպես էր, որովհետև և՛ հոգևոր-վարչական տեսակետից կենտրոնը մնում էր Կ. Պոլսի պատրիարքությունը՝ դրան համապատասխան իրավասություններով, և՛ ենթադրվող ինստիտուցիոնալ փոփոխություններով: Վերջիններս, որքան էլ դանդաղ և պահպանողական մտայնության սահմաններում, մի հայտնի չափով պայմանավորված էին միլեթների իրավական ու դավանական հատկանշական կողմերով, ինչպես և դրանց նկատմամբ օսմանյան պետության վերաբերմունքով: Ասվածը ցայտուն կերպով վերաբերում է հայոց զույգ պատրիարքությունների փոխհարաբերություններին և հատկապես XVIII դ. առաջին երկու տասնամյակներին դրանց կրած որակական տեղաշարժերին:

Միլեթներն ամրապնդելուն ուղղված՝ Բ. դռան քաղաքականությունը

Նախորդ դարի վերջերից լուրջ փոփոխություններ տեղի ունեցան Եվրոպայում Օսմանյան պետության մղած պատերազմների, այնուհետև միլեթների ավանդական տեսքն ու կացությունը պահպանելու մտահոգությունների ու գործողությունների հետ: Միլեթները եվրոպական ազդեցություններից պատվարելը, դրանց դավանական մեկուսի բնույթը պահպանելու խնդիրը գրեթե նույնա-

կանանում էին Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու հիմնահարցի հետ, որչափով կայսրությունն իր տարադավան և բազմազգ բնակչությամբ հենվում էր միլիթների արդեն մշակված կեցության և դրանց կառավարման դարավոր կարգուկանոնի վրա, որի կայունության հանդեպ որևէ սպառնալիք համազոր էր օսմանյան պետության կայունության դեմ ուղղված սպառնալիքի: Մյուս կողմից, միլիթները կրում էին որոշակի փոփոխություններ: Հայ և հույն հանրությունների նկատմամբ կաթոլիկական քարոզչության աշխուժացումը և դրան համապատասխան հաջողությունները մայրաքաղաքում ու գավառներում՝ տագնապ էին պատճառում Բ. դռանը, մասնավորապես Կ. Պոլսի հայ համայնքում դավանական գժտությունների իրողություններով: Օսմանյան պետությունը սկսում է, իր արևելյան բռնատիրական բնույթի համեմատ, նոր մոտեցումներ մշակել (հալածանքներ հայ կաթոլիկների նկատմամբ, ոչ միանշանակ և կամայական վերաբերմունք պատրիարքների գործադիր իշխանության և իրենց՝ պատրիարքների հանդեպ, զոշաքաղության (կոռուպցիա) այլանդակ դրսևորումներ և այլն), որոնք հասնում էին ծայրահեղությունների և ավելի պառակտում, այս դեպքում, հայ համայնքի դավանական միասնությունը: Կ. Պոլսի հայոց պատրիարքների արագընթաց պաշտոնակալումներն ու պաշտոնանկությունները, որոնք արտաքուստ թվում են որպես XVII դ. երկրորդ կեսից ժառանգված երևույթներ և դրանց ինքնաբերաբար շարունակություն, իրականում կրում էին վերոհիշյալ իրողությունների անմիջական կնիքը: Այստեղ արդեն ընդհուպ մոտենում ենք Կ. Պոլսի և Երուսաղեմի հայոց պատրիարքությունների փոխհարաբերություններում ընթացող տեղաշարժերին: Խոսքն առաջին հերթին վերաբերում է զույգ աթոռների կարգավիճակներին, որոնք առաջնահերթություն էին դառնում Բ. դռան սևեռում ուշադրության և հատկապես Կ. Պոլսի պատրիարքության ներսում խլրտացող հակամարտության պայմաններում՝ Ավետիք պատրիարքի աթոռակալման ժամանակից (1702) ի վեր: Այս ժամանակաշրջանին նախորդող՝ XVII դ. վերջերին միլիթների մեջ (հատկապես հույն և հայ) կաթոլիկ (կամ կաթոլիկամետ) համարվող տարրերի դեմ օսմանյան պետության կոշտ քաղաքականությունն արդեն գերաճել էր բացահայտ թշնամական գործողությունների (Մելքիսեդեկ Սուրհի և Եփրեմ Ղափանցի պատրիարքների բռնի տապալումների ուղեկցությամբ՝ 1701-1702 թթ.): Սկսվեց միլիթների համակարգն ամրապնդելուն ուղղված Բ. դռան նոր քաղաքականությունը, որն իր արտահայտությունը ստացավ Ավետիքի պատրիարքության (1702-1703, 1704-1706) ժամանակաշրջանում¹: 1701 թ. շեյխ ուլ-խսլամ Ֆեյզուլլահը լայնածավալ հարձակումներ սկսեց հայ կաթոլիկների դեմ (բռնարարքներ, բանտ, աքսոր, տուգանքներ և այլն) և իր նախաձեռնությամբ պատրիարքական աթոռը հանձնեց Ավետիք վարդապետին²: Հենց Ավետիքի

¹ Տե՛ս Օրմանեան 2001, 3135, 3134, 3158, 3168:

² Կարևորն այստեղ Բ. դռան ուղեգիծն էր և ոչ թե Ավետիքին դեռևս Երզնկայից հովանավորող Ֆեյզուլլահի վերաբերմունքը, թեև մի որոշ նշանակություն ուներ նաև անձնական գործոնը: Արևելյան

պատրիարքության ժամանակից էլ սկսվում է Բ. դռան ավելի քան 130-ամյա պայքարը՝ մինչև 1832 թ. կաթոլիկական միլեթի հաստատումը, միլեթների դավանական ցնցումների դեմ, գործնականում, ինչպես տեսանք, ստանալով հակառակ արդյունքը, այսինքն՝ խորացնելով այդ նույն միլեթների դավանական պառակտումները: Այս հակասականության հետևանքով, կարծում ենք, պետք է գնահատել հայ հանրության կայունության արտաքուստ պահպանությանն ուղղված, իրականում այդ քայքայող ուղեգծի իրացման հստակ քայլը՝ Երուսաղեմի պատրիարքությունը Կ. Պոլսի պատրիարքությանը կցելու իրավական ակտը: Մ. Օրմանյանը հիմնավորապես ցույց է տվել, որ զույգ աթոռների միավորման նախաձեռնողը շեյխ ուլ-խլամ Ֆեյզուլլահին էր և, հակառակ Մ. Չամչյանի, համոզում է, որ այդ տեղի է ունեցել ոչ թե 1701, այլ 1702 թ. հուլիսի 13-ի հրովարտակով³: Ինքը՝ Ֆեյզուլլահը, փաստորեն ներկայացնում էր օսմանյան կառավարող վերնախավի այն շերտը, որն առավել շահագրգռված էր պահպանելու դավանական հանրությունների կացության ավանդական անխախտելիությունը⁴: Դա ենթադրում էր պետության ճանաչված միլեթների հոգևոր կենտրոնների ամրապնդում՝ խրախուսելով դրան նպաստող իրավիճակները բուն իսկ միլեթների ներսում: Դրանից էր ակնկալվում, ի դեպ, ամբողջ XVIII դ. և հետագա տասնամյակների ընթացքում ևս կաթոլիկական, ինչպես և բողոքական արևմուտքի ուժգնացող քաղաքական ճնշումներին դիմակայելու հաջողությունը: Այս ուղեգիծն էր իրականացնում Ֆեյզուլլահը՝ երկու պատրիարքությունները կցելու միջոցով Կ. Պոլսի հայոց պատրիարքությանը այլ դավանանքների հարձակումների դեմ ամրացնելու մտայնությամբ, որ ոչ այլ ինչ էր, եթե ոչ օսմանյան պետությունը արևմտյան մարտահրավերների առջև ամրապնդելու պահպանողական մտայնություն⁵: Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում առաքելական և կաթոլիկ հայերի միջև ներհակությունների խորացումը մի հայտնի չափով նշված պետական քաղաքականության արդյունքն էր, երբ կարճ ժամկետներով դարասկզբին պատրիարքական աթոռին էին տիրում մերթ Մելիքսեթ Սուպիին, մերթ Մխիթար Քյուրտխատանցին կամ Եփրեմ Ղափանցին: Կ. Պոլսի հայ հանրությունը տարուբերվում էր դավանական ներազգային հուզումներից, որտեղ ամենուրեք զգացվում էր Բ. դռան կողմից պաշտոնապես ճանաչված դավանանքը սատարելու իրողությունը, և

մտածողության մեջ ամուր էր մնում հայրենակցական համակրանքը: 1650-ական թթ. այս կերպ Կ. Պոլսում տիվիկցի հայերի ազդեցիկ խմբակցությանը հովանավորում էր արքունի դիվանապետը (տե՛ս Չամչյանց 1984, 689):

³ Տե՛ս Օրմանեան 2001, 3138:

⁴ Այլ կերպ ասած՝ կայսրության ամբողջականության գաղափարը XVIII դ. սկզբից նույնանում էր Բ. դռան հակակաթոլիկական համոզմունքին, երբ «Սրբազան դաշինքի» տերությունների հետ հենց նոր կնքած Կադուլիցի պայմանագրով (1699) Օսմանյան Թուրքիան զգալի կորուստներ էր ունեցել իր եվրոպական տիրույթներում և փորձում էր վարել դրան համապատասխան ներքաղաքական ուղեգիծ՝ արևմուտքի հետագա ծավալումները կանխելու համար (տե՛ս Новичев 1963, 190):

⁵ Հ. Քյուրտյանն իրավագիտորեն նշում է, որ Ֆեյզուլլահը թունդ հակակաթոլիկ էր և չէր ուզում, որ Օսմանյան պետությունն իր հպատակների առիթով ենթարկվի տերությունների միջամտությանը (Տը Լա Մոթոն 1950, 104):

որտեղ բռնություններն ու մահապատժի դատավճիռներն ամենևին էլ երկրորդական տեղ չէին գրավում: 1700 թ. աշնանը կաթոլիկամետ Սուպիին ուղարկվում է թիարան, և վերստին պատրիարք է հռչակվում Եփրեմ Ղափանցին⁶: Սակայն երկպառակությունները շարունակվում էին Կ. Պոլսում՝ նոր հայտնված պատրիարքները եռանդի այս կամ այն պողոթնումներով շարունակում էին հակակաթոլիկական արշավները, իսկ նրանց պաշտոնագրկումները իշխանությունները հիմնավորում էին այդ նույն եռանդի պակասով:

Միմյանց հաջորդող Սուպիի և Եփրեմի կողմնակիցների միջև հարկավոր էր մի երրորդ անձ, որն առավել հարմար կլիներ Բ. դռան հիշյալ վերաբերմունքը առավել գործնական դարձնելու համար, և Ֆեյզուլահն ընտրում է դեռևս Երզնկայից իրեն ծանոթ և թեմական առաջնորդ Ավետիք վարդապետին: Մ. Օրմանյանը հայ հանրության մեջ շարունակվող դավանական բորբոքումները վերագրում է թուրք պաշտոնյային՝ նրա գործողությունների մեջ տեսնելով հակակաթոլիկական մոլուցքով լցված անձի: Անդրադառնալով Ֆեյզուլահից Եփրեմ պատրիարքին տրված հրամանին՝ կաթոլիկամետներին կամ կաթոլիկներին հետապնդելու մասին, Մ. Օրմանյանը գրում է, որ «Այդպիսի հրովարտակ մը բնական կերպով դուռ կը բանար բազմադիմի անիրաւութեանց և բռնադատութեանց, որոնք առաջ կուգային անձնական թշնամութիւններէ, անհատական վրէժխնդրութիւններէ և ստորին չարաշահութիւններէ», իսկ բանտարկությունների, աքսորների և վտարումների «իսկական պատճառը Ֆեյզուլահի դենպետն էր»⁷:

Իր բռնի գործողությունները հիմնավորելու կամ Կ. Պոլսի պատրիարքությանը դավանական անհանդուրժողականության պատվար դարձնելու համար Ֆեյզուլահը պետք է հուզումների դուռ բանար նաև Երուսաղեմի հայոց վանքի միաբանության մեջ՝ անշուշտ, հարկ եղած հրահանգներով ուղղորդելով Ավետիքին: Վերջինս օգտվում է առաջին իսկ պատեհ հնարավորությունից՝ ցուցադրելու Ս. Հակոբի վանքի անկառավարելի վիճակը: Նրա մոտ են հայտնվում վանքի տասներկու միաբաններ՝ բողոքելու պատրիարք Մինաս Ամդեցու դեմ (Ավետիքը նրան անվանում է «արքեպիսկոպոս Ս. Երուսաղեմայ»): Սրանց բողոքը երեք հիմնական կետեր ուներ. նախ, պատրիարքը միաբաններին պարտադրում է ոչ թե վանքի, այլ իրենց սեփական միջոցներով հոգալ սննդի և հագուստի ծախսերը, որի պատճառով վանականները ցրվում են: Պատրիարքը վանքը գցել է 100 հազար դրուշ պարտքի տակ: Նա վանքի բոլոր սկիհները, կանթեղները, բուրվառները սրբերի մատուցները և այլն, լցրել է սնդուկների մեջ և առաքել Կ. Պո-

⁶ Չամչյանց 729-730: Հռիփսեղյանի ուղեգիր Ա. դը Լամոթեն (Կ. Պոլսում էր գտնվում 1700 թ. հոկտեմբերին) գրում էր, որ Եփրեմ Ղափանցին իր մրցակից Մ. Սուպիին մեղադրում էր այն բանում, որ նա պատրիարքի աթոռին բազմել է ճիզվիտներից ստացած դրամի զորությամբ (տե՛ս Տը Լամոթեն 1950, 100): Ինքը՝ Եփրեմը, 1701 թ., ինչպես նկատում է Ա. Ալպոյաճյանը, խստությամբ է վարվում հայ կաթոլիկների հետ. արգելվեց Մխիթար Սեբաստացի և Խաչատուր Առաքելյան վարդապետների քարոզչությունը Կ. Պոլսի եկեղեցիներում (Ալպոյաճեան 1910, 119):

⁷ Օրմանեան 2001, 3134:

լիս, որոնք ստացել են այնտեղ գտնվող «եարամազ (ստահակ) մարդիկն»։ Սրանք այդ ամենը գրավ են դրել մի անգլիացի վաճառականի մոտ, որը անգլիական դեսպանի աջակցությամբ կողոպտում է վանքի սեփականությունները՝ պարտքի դիմաց⁸։

Պետք է կարծել, որ բողոքը սարքել էր օսմանյան պաշտոնեությունը՝ Երուսաղեմի վանքի ինքնուրույնությունը վերացնելու համար, որի նպատակը Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի՝ որպես պետության կողմից ճանաչված հոգևոր իշխանության կենտրոնի իրավասությունների ամրապնդումն էր։ Ֆեյզուլլահը Բ. դռան այդ մոտեցման իրականացնողն էր, Ավետիքը՝ նրա գործիքը, Երուսաղեմի հայոց պատրիարքությունը՝ միջազգային սկեռուն դարձած ուշադրությունից ձերբազատվելու թիրախ, որ դարձյալ ուղղվում էր կաթոլիկական Եվրոպայից և Ռուսաստանից ակնկալվող ճնշումների դեմ⁹։ Օսմանյան պաշտոնեության մասին վերոբերյալ ենթադրության օգտին է խոսում այն հանգամանքը, որ 1702 թ. օգոստոսից հետո Երուսաղեմի պատրիարքն անպարտ ճանաչվեց կրկնակի դատավարությունների հետևանքով՝ իբրև վանքի գլխավոր, որը «ոչ վատնեաց զինչս ազգին, հաւատարմութեամբ կատարեաց զամենայն գործն վանաց և ոչ երբեք հակամիտեալ է ի լատին կրօնս»¹⁰։

Այսուհանդերձ, Մինաս վարդապետի հարցն արդեն լուծված էր իր անվանարկության հետևանքով, և Ֆեյզուլլահին քիչ բան էր մնում իր մտահղացումը մինչև վերջ հասցնելու համար։ Հարկավոր էր, սակայն, հիմնավորել Մինաս վարդ. պաշտոնանկությունը, ուստի, ինչպես գրում է Մ. Չամչյանը, Ավետիքը «վաղվաղակի առաքեալ կալաւ զՄինաս վարդ. և եղ ղնել ի բանտի շղթայիք»¹¹։ Որքան էլ Ավետիքը չքմեղանար այդ գործում իր ակտիվ մասնակցությունը քողարկելու համար, փաստն այն է, որ նա գործում էր Ֆեյզուլլահի հետ և բարեխղճորեն կատարում էր նրա հրահանգները։ Այդ ինչպես կարող էր Ավետիքը բանից անտեղյակ լինել, երբ երկու աթոռների միացման վճիռը անհնարին էր կայացնել առանց Կ. Պոլսի պատրիարքին իրազեկելու, և որի հակառակն է պնդում Ավետիքը։ Ըստ նրա շարադրանքի, երբ ինքը, այդ ամենին անտեղյակ, եկեղեցում էր գտնվում («ես միամիտ կայի յեկեղեցին»), հայտնվում է արքունի բանբերը (չուֆաստար) և նրան առաջնորդում պալատ։ Այստեղ նրան հայտնում են, որ իրեն՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքին է տրվում նաև Ս. Հակոբի վանքի

⁸ Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի 1874, 150:

⁹ 1700 թ. հուլիսին Ռուսաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև կնքված պայմանագրով վերջինս պարտավորվում էր, ի թիվս այլ զիջումների, Սուրբ տեղյաց որոշ սրբությունների վերադարձ հույն ուղղափառ եկեղեցուն, Պաղեստինում՝ Սուրբ տեղիքում, ռուս ուխտավորների ազատ երթևեկի հնարավորություն (Новичев 1963, 191): Այս հանգամանքը ևս կարող էր նպաստել մահմեդական հոգևորականության ուղեգծին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի միջոցով ուժեղացնելու Ս. Հակոբի վանքի վերահսկողությունը, այս դեպքում՝ վերջինիս վարչական կառավարումը ամբողջովին Կ. Պոլսի պատրիարքությանը հանձնելու միջոցով:

¹⁰ Օրմանեան 2001, 3140:

¹¹ Չամչյանց 1984, 734:

գլխավորի պաշտոնը. «Ահա սուլթան Մուստաֆան քեզ շնորհեց յԵրուսաղեմայ հայոց մեր Եաքուպ մանաստիրն... Յապա ի հալաթ հագոյց ինձ, փառօք մեծաւ ուղարկեց եկեղեցին»¹²:

Ավետիքի կեղծ անտեղյակությունն ակնհայտ է դառնում իր իսկ խոստովանությամբ ևս. մեծ վեզիրի դիվանում իրեն նախ պատվիրում են Երուսաղեմի պատրիարքի հարմար թեկնածու գտնել, անգամ առաջարկում են Ամասիացի Գալուստ (Կայծակ) վարդապետին, ոմանք՝ նախկին պատրիարք Սարը Մատթեոսին¹³: Այս ամենին ներկա Ավետիքը պարզապես չէր կարող չիմանալ, որ ինքը նշանակվում է Երուսաղեմի պատրիարք: Եվս մեկ փաստարկ, որ Ավետիքը եղել էր աթոռների միացման մեղսակիցը: Ֆեյզուլլահին հակադրվող մեծ վեզիրը (նախկին «Տալպատան վեզիրն Պաղտատու») երբ Ավետիքին ուղղակի մեղադրում է Երուսաղեմի վանքը Կ. Պոլսի պատրիարքությանը կցելու և ուխտավորների դրամները յուրացնելու մեջ, շեյխ ուլ-իսլամը փրկում է նրան՝ հայտնելով, որ սուլթանն է տվել նրա պատրիարքական պաշտոնի «մանսուպն (նշանակումը) և Երուսաղեմայ առաջնորդությունն»¹⁴: Ի դեպ, նկատենք, որ մեծ վեզիրը՝ Տալպատան Մուստաֆա փաշան, չի թաքցրել իր թշնամական վերաբերմունքը Ավետիքի հանդեպ, ասել կուզի՝ Ֆեյզուլլահի և նրա յուրայինների խմբի հանդեպ: Դրա մասին է վկայում այն փաստը, որ 1703 թ. հուլիսի 1-ի ժամանակ հիշյալ մեծ վեզիրը սպանվել էր Ֆեյզուլլահի գրգռությամբ և ամբաստանությամբ¹⁵:

Առանձին հետազոտության նյութ են Ավետիքի հալածական ձեռնարկները հայ կաթոլիկների դեմ՝ անշուշտ, ոչ առանց օսմանյան պաշտոնեության թելադրանքի: «Սրբազան լիգայից»՝ եվրոպական պետություններից (Ավստրիա, Վենետիկ, Լեհաստան, Ռուսաստան) կրած պարտություններից և Կառլովիցի պայմանագրով իր պարտությունը ճանաչած Թուրքիան ապրելու էր քաղաքական ճգնաժամի նոր փուլ: Գլուխ բարձրացրած օսմանյան պահպանողականությունը անհանդուրժող կեցվածք էր ընդունելու կաթոլիկական դավանանքին հարած օսմանահպատակների նկատմամբ: Ավետիքի հովանավոր շեյխ ուլ-իսլամ Ֆեյզուլլահն այդ քաղաքական ճամբարից էր, որի կամքին անմոռունջ հնազանդ այդ պատրիարքը պետք է խիստ կամ անզիջում պայքար սկսեր հայազգի կաթոլիկների դեմ: Մ. Չամչյանը բացասական թանձր գույներով է ներկայացնում Ավետիքի հակակաթոլիկական գործողություններն այս ասպարեզում՝ հայ կաթոլիկներին հալածելը, ապա Բ. դոնից հրամանագիր ձեռք բերելը՝ իր գործողություններին օրինական տեսք տալու համար, նրա ուղեգծի շարունակությունն իր երկրորդ պատրիարքության ժամանակ՝ ընդհուպ պաշտոնազրկումն ու Թենեդոս

¹² Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի 1874, 151: Այս պատրիարքի ինքնակենսագրականը՝ ֆրանսիացի հայագետ Էդ. Դյուլորիեի խմբագրությամբ և առաջաբանով, տե՛ս Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի 1874, 71-75, 112-116, 150-156, 192-195:

¹³ Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի 1874, 150-151:

¹⁴ Կենսագրութիւն Ավետիք պատրիարքի 1874, 151-153:

¹⁵ Օրմանեան 2001, 3150:

աքսորվելը: Ընդ որում, Մ. Չամչյանը չի թաքցնում իր բացահայտ համակրանքը կաթոլիկների նկատմամբ՝ լռելյայն շրջանցելով Ավետիքի դեմ ֆրանսիական դեսպան Ֆերիոլի բռնությունները, ինչպես և նախկին պատրիարքի տառապանքները ֆրանսիական բանտերում՝ Մարսելում, Բաստիլում և այլն: Մ. Օրմանյանը մինչդեռ կարծում է, որ 1702 թ. հուլիսին Ավետիքի անկման պատճառը ֆրանսիական դեսպանի և հայ լատինամիտների սադրանքներն էին¹⁶:

4. Պոլսի և Երուսաղեմի հայոց պատրիարքությունների միավորումներն ու բաժանումները

Մ. Օրմանյանը Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունների միավորումը (ըստ նրա՝ 1702 թ. հուլիսին) համարում է աղետալի իրողություն, Ավետիքին՝ այդ իրողության պատճառը¹⁷: Սակայն դա աղետալի պետք է լիներ նաև իր՝ Կ. Պոլսի պատրիարքության համար, որը դարձավ Երուսաղեմի հետագա անտերունջ վիճակի և քայքայման մեղսակիցը: 1703 թ. ենիչերիների ապստամբությունը վերջ տվեց Ֆեյզուլլահի և նրա յուրայինների իշխանությանը, ուրեմն և Ավետիքի համատեղ պատրիարքությանը Կ. Պոլսում և Երուսաղեմում: Ավետիքը բանտարկվեց Եդիգուլեի աշտարակում¹⁸, ապա դեսպան Ֆերիոլի ռիսակալ գործողություններից հետո, ի վճարումն համագլխի կաթոլիկների նկատմամբ իր հետապնդումների, աքսորվեց Ավրատ կղզի: Շուրջ մեկ տարի անց՝ 1704 թ. դեկտեմբերին, հայ հանրության դավանական հակասությունների համեմատաբար մեղմացման և յուրային երևելիների միջնորդության շնորհիվ նա վերստին հայտնվեց Կ. Պոլսի պատրիարքական աթոռին¹⁹: Ռուս արևելագետ Մ. Մեյերը կարծում է, որ մայրաքաղաքում, քաղաքական իրավիճակների փոփոխություններով հանդերձ, XVIII դ. սկզբին նկատելի են կառավարման համակարգի փոփոխությունների երեք հիմնական հետևանքները՝ «սուլթանական պալատի դիրքերի թուլացում, կառավարության առաջատար դերի բարձրացում և ուլեմների (կրոնական դասը-Ա.Խ.) ազդեցության ընդլայնում»²⁰: Նա առանձնացնում է իշխանության համար սրանց միջև ընթացող պայքարը²¹, որով էլ կողմերը դրության տերն էին դառնում միմյանց փոխարինելով՝ այդ ընթացքում հուզումներ ու գրգռություններ հրահրելով ազգաբնակչության և ենիչերիների շրջաններում: Շեյխ ուլ-իսլամ Ֆեյզուլլահի վերելքն ու անկումը՝ ընդհուպ ենիչերիների ապստամբությունը, պայմանավորված էին նաև այդ մրցակցությամբ: Ուլեմների դասը, որին պատկանում էր ինքը, օսմանյան իշխող վերնախավում անվիճելիորեն նախապատվությունը տալիս էր միլեթների ավանդական տեսքը պահպանելու ներքին քաղա-

¹⁶ Օրմանեան 2001, 3152:

¹⁷ Օրմանեան 2001, 3138, 3139:

¹⁸ Չամչյանց 1984, 744, Օրմանեան 2001, 3152:

¹⁹ Չամչյանց 1984, 747:

²⁰ Мейер 1991, 144.

²¹ Мейер 1991, 144.

քականությանը, ուրեմն միլեթների վերնախավի նկատմամբ ուժեղ վերահսկողությանը: Արտաքին քաղաքականության հանրագումարը՝ Եվրոպայից կրած պարտությունները XVII դ. վերջերին, օսմանյան իշխանությանը սնուցանում էին հակակաթոլիկական տրամադրություններ, և դա անկախ այն բանից, թե սուլթանի վրա իշխանության եկած վերնախավի որ շերտն էր դառնում դրության տերը՝ պալատը, ուլեմների դասը, թե ռազմավարչական կառույցները: Դա էր պատճառը, կարծում ենք, որ հակակաթոլիկական տրամադրությունները XVIII դ. Օսմանյան Թուրքիայում մերթ սրացումներով, մերթ մեղմացումներով դառնում են ընդհանրական վերաբերմունք և քաղաքական ուղեգիծ: Ըստ այդմ, դրանցից էին ածանցվում օսմանյան բոլոր քաղաքական ուժերի բացասական գործողությունները միլեթների, այդ թվում՝ հայերի դավանական շեղումների դեմ:

Հատկանշական է, որ երբ Ավետիքը փակված էր Եդիգուլեի աշտարակում, եկեղեցու ավանդականության ջատագով նրա ազդեցիկ հակառակորդները իսկույն օգտվեցին նրա անկումից և կարողացան պետականորեն վավերացնել տալ երկու պատրիարքությունների անջատումը: Մ. Օրմանյանն այս առթիվ գրում է. «Աւետիք տակաւին կը մնար Ետիքուլեի աշտարակը եւ տակաւին պատրիարք չկար մէջտեղ, ուստի մեծամեծներ նոր եպարքոս Տամատ Հասան փաշային դիմեցին, եւ պետական հրամանով նորէն երկու պատրիարքութիւնները բաժնեցին»²²:

Ավետիքին հաջորդած Գալուստ Ամասիացին հռչակվեց որպես միայն Կ. Պոլսի պատրիարք 1703 թ. սեպտեմբերի 8-ին, երբ միաժամանակ Երուսաղեմի պատրիարք հաստատվեց Մինաս Ամդեցին²³: Կնշանակի՝ պատրիարքությունների բաժանումը վավերացվել էր 1703 թ. հուլիսի վերջերի և սեպտեմբերի սկզբների միջև:

Հայ հանրության կառույցների նկատմամբ օսմանյան ոչ միանշանակ մոտեցումները ինքնին ենթադրում էին մի քանի տարվա ընթացքում պատրիարքությունների բաժանումը և միացումը, այնուհետև վերստին բաժանումը հասկանալու համար: Այստեղ բավական դերակատարություն ուներ իր՝ Կ. Պոլսի պատրիարքության դիրքորոշումը Երուսաղեմի պատրիարքության հանդեպ, վերաբերմունքը Ս. Հակոբի վանքի ավանդական ինքնակառավարման նկատմամբ: Վերն ասվեց, որ Կ. Պոլսի պատրիարքությունը իր հաստատման ժամանակներից ի վեր՝ XV դ. երկրորդ կեսից, սերտ կապեր ուներ դարերի խորքից եկող և շատ ավելի հնագույն Երուսաղեմի աթոռի հետ՝ նախապես կրելով ազգային և հոգևոր այդ կենտրոնի մեծ ազդեցությունը: Հետագա զարգացումները պետք է հասցնեին Երուսաղեմի վանքի առավել հստակորեն ուրվագծվող կախվածությանը՝ պետության կողմից հայ հանրության գլուխ ճանաչված հոգևոր վերնախավից: Ս. Հակոբի վանքը, որքան էլ էր օժտված լիներ ինքնավարության բաղադրիչներով (սովորաբար՝ Երուսաղեմի պատրիարքի ընտրություն վանքի

²² Օրմանեան 2001, 3153:

²³ Օրմանեան 2001, 3153:

միաբաններից, նվիրակներ ուղարկելու սովորությամբ իրավունք, որ համազգային կշիռ էր տալիս վանքին՝ Ս. Տեղյաց սրբությունների համապատասխան կարգավիճակով, պետք է այդ իրավունքների պաշտպանությունը գտներ հենց Կ. Պոլսի պատրիարքության կողմից, հայտնվեր նրա ազդեցության ոլորտում, և որտեղ էջմիածնի կաթողիկոսի դերակատարությունն ուներ ընդամենը կրավորական բնույթ: XVII դ. վերջին քառորդին Կ. Պոլսի պատրիարքության ներսում ուժ և թափ հավաքած աթոռակոփվր պատրիարքի կոչմանը տիրանալու համար, պատրիարքական թեկնածուների հաճկատարությունը աշխարհիկ զորեղներին գոհացնելու վարքագծով ու կեցվածքով, սակայն, թուլացնում էին պատրիարքության համարումն ու լրջությունը հայ եկեղեցու հոգևոր կենտրոններում²⁴: Սակայն աթոռակոփներից ընդարմացած պատրիարքությունը ի պատկերի յուրում պետք է դարձներ նաև Երուսաղեմի առաջնորդությունը՝ անտեսելով պարտքերի մեջ խրված նրա վիճակը և օգուտներ ակնկալելով դրանից: 1690-ական թթ. վանքի պարտքը հասել էր 166-200 քսակի՝ պատկառելի մի գումար, որի գոյացմանը նպաստել էր ուխտավորների հոսքի նվազումը կամ դադարը՝ Օսմանյան Թուրքիայի հետ եվրոպական տերությունների հետ պատերազմի պատճառով²⁵: Պետք է անտեսել նաև Ս. Հակոբի վանքի անկման մյուս պատճառները, դրանց մեջ նախ՝ բարձրաստիճան եկեղեցականների սնափառությունն ու ընչաքաղցությունը, որոնք «բազմաձախ կաշառոք» միմյանցից խլում էին Երուսաղեմի պատրիարքի պաշտոնը, «ուստի լինէր բազմիցս, զի ի մէկ տարին երկու և երեք պատրիարք փոփոխիր»²⁶: Ավելին, Երուսաղեմի աթոռին միաժամանակ նստում էին երկու պատրիարքներ Երուսաղեմի պատրիարքությունը Կ. Պոլսի պատրիարքությանը միացնելուց դեռ առաջ՝ Հովհաննեսը և Մինաս Ամդեցին²⁷: Երուսաղեմի հայոց վանքի պատմագիր Հաննան նշում է այս ծանր կացության մյուս պատճառը՝ վանքի սեփականությունների անզուսպ կողոպուտը ընդհուպ անկանխիկ չարաշահումները (մուրհակներ, պարտավորագրեր և (այլն) և վանքի մյուսը (ունեցվածքը) չնչին գներով փոշիացնելը: Ս. Հակոբի վանքը, հարում է Հաննան, դարձել էր կողոպտիչների վայրենի խրախճանքի ասպարեզ: Կ. Պոլսից պատրիարքները Երուսաղեմ էին ուղարկում «զազգականս իրեանց և զծանօթս, որք իբրև զարաբացի լափիլզող գալլս և որպես կատաղի շունս արեան ծարաւեցեալ», գալիս էին, իբրև պաշտոնական վերակացուներ (**վեքի, դապգիմալ և պապա** անուններով)՝ վանքը թալանելու²⁸: Վաճառվում կամ գրավ էր դրվում ամեն ինչ՝ սկսած վանքի կալ-

²⁴ Պատրիարքական աթոռի համար տարբեր խմբակցությունների և առանձին հոգևորականների պայքարը նոր ուժով պողթկաց նաև հետագայում՝ 1790-ական թթ. վերջերին, Զաքարիա պատրիարքից հետո, որի խոհանոցը ուշագրավ մանրամասներով ցուցադրված է Ավ. Պերպերյանի աշխատության մեջ (տե՛ս Պերպերյան 2009, 39-41):

²⁵ Սաալանեանց 1931, 644:

²⁶ Հաննա 1782, 107:

²⁷ Սաալանեանց 1931, 645:

²⁸ Հաննա 1782, 108:

վածքներից ու շինություններից մինչև պաշտամունքի առարկաները՝ սկիհներ, բուրվառներ, ուրարներ, թանկարժեք հանդերձանք և այլն:

Կողոպուտի սեփական ձևն էին մշակել Կ. Պոլսում նստած պատրիարքներն ու առաջնորդները, որոնք ուխտավորներից հավաքում էին նվիրատվություններն ու հարկերը («առեալ եմք լրապէս զդարպասն, զքառասնիցն և զայլս»), այդ մասին ստացականներ ուղարկելով Երուսաղեմ՝ իրենց վեքիլներին ու նազըրներին²⁹:

Ս. Հակոբի վանքի կացությունը առավել շահախնդրական ու մերկապարանոց դարձավ Ավետիքի պատրիարքության ժամանակ: Նա ավելի ամրապնդեց նազըրների հարստահարող ինստիտուտը, որում, կարելի է կարծել, ընդգրկվում էին համայնքի ոչ միայն եկեղեցական, այլև աշխարհիկ երևելիների դրածոները:

Ավետիքը կտրականապես հերքում է իր մասնակցությունը Ս. Հակոբի վանքի թալանին, անգամ այն դեպքում, երբ անդրադառնում է իր մերձավոր և դրածո Մարտիրոսի (Քյուլիհանճի) չարաշահումներին, որին ինքն էր ուղարկել Երուսաղեմ (ոմն Պալըքեսերցի Հայրապետի հետ)՝ վեքիլի պաշտոնով: Շատ կասկածելի է հնչում Ավետիքի ինքնարդարացումը, թե այս երկուսը «մինչ Ը ամիս տիրեցին մէկ ստակ ցոյց ոչ ետուն ինձ և զպարտատեարքն իմ վրայ ուղարկէին զիմ վաստակած դրամն այլ կառնէին, զի հաւատացեալ էի նոցա և առանց իմ հրամանի ուրիշ մարդկանց դրամ կառնէին վասն անուան իմոյ. երկուքն ալ մի կամք, մի խորհուրդ լինելով՝ իւրեանք զդրամն դիզեցին և ինձ պարտք կուտեցին»³⁰:

Այդքանից հետո համոզիչ չէ Ավետիքի վարքագիծը իր դեմ քննադատությունները շարունակող Մարտիրոսի և մյուսների նկատմամբ, երբ մեծ վեզիրի առջև միջնորդում է նրանց ազատության համար: Տասներկու մարդու Ավետիքը մեղադրում է իբրև «չարք և ագահք և կողոպտողք եկեղեցեաց, որ միշտ գրգռիչք չարեաց և եկեղեցեաց զդրամն զաֆթեր են... և Մինաս վարդապետն նոքա ձգեցին պարտուց մէջ», և ապա՝ «Ես միշտ խաղաղութեան կու ջանայի, նոքա միշտ յորոգայթ պատրաստէին ինձ»³¹: Այս իմաստով հիմքերից զուրկ չէր մեծ վեզիրի սպառնալիքը Ավետիքին. «Դու ևս նոցա թապի (համամիտ, մեղսակից-Ա.Խ.) ես, որ նոցա տիրութիւն կառնես»³²:

Դժվար է հավատալ Ավետիքի քրիստոնեական հեզությանը իր թշնամիների հանդեպ այն դեպքում, երբ Ս. Հակոբի վանքում տեր ու տնօրինություն էին անում Կ. Պոլսից ուղարկված, այդ թվում և իր՝ Ավետիքի ուղարկած գիշատիչ վեքիլները: Կաթոլիկ հայերի դեմ ուղղված հալածանքների և Ս. Հակոբի վանքում կատարված չարաշահումների, բայց և ամենակարևորը՝ 1703 թ. հուլունների պայմաններում՝ ուղղված սուլթանի, նրա խմբակցության և Ֆեյզուլլահի դեմ, Ավետիքը պետք է ծանր հատուցեր. երբ պաշտոնանկ Ավետիքը իր կուսակիցների շնորհիվ,

²⁹ Հաննա 1782, 108:

³⁰ Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի 1874, 155:

³¹ Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի 1874, 153:

³² Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի 1874, 153:

պատրաստվում է կրկին վերադառնալ պատրիարքական աթոռ (1704 թ. դեկտեմբեր)³³, խնդրագիր է ուղղում (բնականաբար, իր հովանավորների թելադրանքով) սուլթան Ահմեդին, որ նա կրկին իրեն շնորհի «Ստամպոլու պատրիարքութիւնն և Սուրբ Երուսաղէմայ Մինաս վարդապետին տեղն»³⁴:

Սա արդեն երևելիների այն խումբն է, որը, Ավետիքին վերստին իշխանության բերելով (1704 թ. դեկտեմբեր), փայփայում էր Երուսաղեմը դարձյալ միացնել Կ. Պոլսի պատրիարքությանը, որ և արվեց՝ ի դժբախտություն Ս. Հակոբի վանքի և նրա միաբանության:

Կ. Պոլսի պատրիարք Ավետիքի բնութագիրը

Մ. Չամչյանի գրչի տակ Ավետիքը պատկերված է բացասական թանձր գույներով, միաժամանակ, դրան համապատասխան, անհատական նկարագրով: Ընդամին, Մ. Չամչյանը նրա չարագործությունները դիտարկում է դավանական պառակտումների հենքի վրա, բայց ինքնակա, անընդհատ չարիք մտմտացող գործչի ինքնուրույնությամբ, որն իր գործողություններում առաջնորդվում է սեփական բարոյական վարքագծով՝ հայ կաթոլիկների դեմ ուղղված հալածանքը հագեցնելով կեղծիքներով, սադրանքներով, անգթություններով և այլն: Եվ միայն մեկ անձ կա, որ նրան խրախուսում և մղում է չարագործությունների՝ դա Ֆեյզուլահն է՝ Ավետիքին ցուցաբերած իր հովանավորչությամբ: Այդպիսին է Ավետիքը Երուսաղեմի պատրիարք Մինաս վարդապետի դեմ նյութած սադրանքներում, կաթոլիկների դեմ մղած պայքարի դրվագներում, որտեղ վճռական նշանակություն ունի այդ հոգևորականի բացառիկ ընչաքաղցությունն ու գանձեր կուտակելու մոլուցքը:

Մ. Չամչյանի ներկայացրած Ավետիքի հակապատկերն ենք տեսնում իր՝ Ավետիքի ինքնակենսագրականում, որտեղ նա իրեն ներկայացնում է իբրև առաքինի և հեզ, աստվածավախ մարդ, որի դեմ անընդհատ չարիքներ են գործում և՛ իր համագգի հակառակորդները, և՛ օսմանյան իշխանավորները³⁵: Իր պարկեշտությունն ու ուղղամտությունը նա երանգավորում է դարաշրջանին հատուկ ոճով՝ աստվածային կամքի մշտական միջամտության և վերին արդարության վկայակոչումներով: Նա հյուսում է իր կյանքի առասպելականացված պատմությունը՝ ընդհուպ Ֆրանսիա առևանգվելը և Մարսելում ու Փարիզում հավատաքննության բանտերում տառապելը: Իր անմեղությունը նա հիմնավորում է երկնային արդարությամբ, որի անվրեպ վճիռներով ինքը գրեթե միշտ անվնաս է մնում, իսկ իր թշնամիները կործանվում կամ պատժվում են: Այդպիսին է Էրզրումի կուսակալ Խելիլ փաշան, որ բանտարկել էր Ավետիքին Երզնկայում եկեղեցի կառուցելու համար, սակայն, ի վերջո, գլխատվել էր սուլթանի հրա-

³³ Օրմանեան 2001, 3158:

³⁴ Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի 1874, 153:

³⁵ Խմբակցությունների բաժանված հայ երևելիների մեջ Ավետիքի կողմնակիցներից էր խոճա Մարգար Պարթևազը, հակառակորդներից՝ Թյոթել Օղլու Հովհաննեսը, Սահապայար Երեմիան, Էսքի Օղլու Նիկողոսը և այլք (Մրմըրեան 1909, 51):

մանով, Ավետիքի ձևակերպմամբ՝ «Արդարադատն յԱստուած ինքն եղև վրէժ-խնդիր վասն իւր տանն շինութեան»³⁶: Նույնպիսի հրաշապատում բնույթ ունի նրա թշնամի՝ Երզնկայի մուֆտիի փոխակերպումը բարեկամի՝ տեսիլքի շնորհիվ³⁷: Այս մուֆտիին ևս, չնայած Ավետիքի հանդեպ նրա վերաբերմունքի փոփոխությանը, սպասվում էր երկնքի անշրջելի միջամտությունը. ապստամբ ենի-չերիները սպանում են նրան, որով կատարվում է բարձրյալի կամքը: Այս և նման այլ տեսարաններում ինքնակենսագրության հեղինակը մշտապես զգացնել է տալիս իր բարոյական առավելությունը հակառակորդների նկատմամբ: Ավետիքը, սակայն, շատ զուսպ է իր երկրային հովանավորներին հիշատակելիս՝ ի դեմս շեյխ ուլ-իսլամ Ֆեյզուլլահի (ըստ Ավետիքի՝ սուլթանի «շահգատանների հոճան») (ժառանգների դաստիարակը): Իր վերելքների և, թվում է, աներևակայելի հաջողությունների համար Ավետիքը պարտական էր, կարելի է կարծել, պալատական խմբակի այդ նշանավոր դեմքին, որը, ինչպես տեսանք, միլեթների դավանական ամրությունը տեսնում էր եվրոպական ազդեցությանը, այսինքն՝ կաթոլիկականությանը դիմագրավելու մեջ: Եվ հենց այս տեսակետից էլ, կարծում ենք, պետք է գնահատել Մ. Չամչյանի՝ Ավետիքին տված սպանիչ որակումները՝ ամբողջովին բևեռացված արկածախնդրի և չարանենգ մարդու բնութագիրը: Մ. Չամչյանը, իր պատմության կոթողային նշանակությամբ հանդերձ, անզիջում էր, երբ խոսքը վերաբերում էր կաթոլիկ կամ կաթոլիկության հակամետ հայերի դեմ ուղղված հալածանքներին:

Ակնհայտ են Ավետիքի՝ որպես մարդու և ազգային գործչի չամչյանական բնութագրի և իր՝ Ավետիքի ինքնաբնութագրի միջև եղած խոր և կտրուկ տարբերությունները, որոնք հիշեցնում են սատանա և հրեշտակ զույգի համադրումը: Այս ծայրահեղությունը հնարավոր չէ բացատրել առանց այնպիսի խորաթափանց և ներհույս մի ուսումնասիրողի միջամտության, որպիսին Մ. արք. Օրմանյանն է: Ավետիքին նա ձերբազատել է բախտախնդրի և սինլքորի, ինչպես և ճակատագրորեն նախասահմանված առաքինությունների պաճուճանքներից և նկարագծել իբրև մի եկեղեցականի, որը գործում է ժամանակի և միջավայրի խճճված հարաբերությունների մեջ՝ ենթարկվելով և՛ մեկի, և՛ մյուսի պարտադրած պայմաններին և, սակայն, որպես անհատականության՝ հակազդելով այդ պայմաններին և իր անհատական կնիքը դնելով, ըստ հնարավորին, դրանց զարգացման ընթացքի ու սեփական ճակատագրի վրա: Մ. Օրմանյանը Ավետիքի կործանման պատճառը համարում է կաթոլիկական քարոզչության և ֆրանսիական դեսպան Ֆերիոլի մեքենայությունները, հակառակ այն բանի, որ Ավետիքը մեղմ և զուսպ ընթացք է ունեցել կաթոլիկ եկեղեցու հանդեպ, և որ նա՝ «հայադաւան եկեղեցւոյն հաւատարիմ պաշտպան, կատաղի հալածիչ մը (կաթոլիկների-Ա.Խ.) չեղաւ, մանաւանդ թէ ճարտար դարձուածներով յաջողեցաւ նոյնիսկ լատիններու հետ լաւ

³⁶ Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի 1874, 113:

³⁷ Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի 1874, 114-115:

յարաբերություններ մշակել և Ֆերիոլը ստիպել իրեն ընթացքին վրայ նպաստաւոր վկայութիւններ տալու»³⁸:

Մ. Օրմանյանը միայն մեկ դեպքում է խստորեն մեղադրում Ավետիքին՝ նշելով Երուսաղեմի պատրիարքությունը «իր վրայ դարձնելուն անտեղութիւնը», այսինքն՝ այն Կ. Պոլսի պատրիարքությանը կցելու գործողությունը: Այս ամենով հանդերձ՝ Մ. Օրմանյանը կարևորը համարում է այն, որ Ավետիքն իր պատրիարքության ժամանակահատվածում պաշտպանել է հայ եկեղեցու դավանանքն ու իրավունքները, և թեև նկատում է, որ կարելի է «փառասիրութեան և շահասիրութեան սուգտանքներ ալ ընել իր գործունեութեան ինչ-ինչ կետերուն վրայ, սակայն Ավետիքի դէմ ըլլալիք մեղադրանքները շատ կը նուագին, թերեւս կանայտանան, իր հակառակորդ լատիններուն եւ լատինամետներուն նենգաւոր եւ դաւաճան արարքներուն բաղդատութեամբ»³⁹:

Ակներև է, որ Մ. Չամչյանը և Մ. Օրմանյանը Ավետիքի գործունեությանն ու անձին մոտենում են պատմաքաղաքական տարբեր, անգամ հակադիր հայեցակետերից, որի հիմքում էին դավանական նախասիրությունների տարբերությունն ու հակադրությունը: Երկու պատմագիրներն էլ հենց այս հակադրությունից էին ածանցում Ավետիք պատրիարքի մարդկային, բարոյական նկարագիրը, որը երկու դեպքերում էլ, մոտեցումների բևեռացման տրամաբանությամբ, լիարժեք չի թվում: Եթե Մ. Չամչյանը բացահայտորեն պաշտպանում է հալածանքի ենթարկված կաթոլիկներին և ըստ այդմ բնութագրում Ավետիքին, ապա Մ. Օրմանյանը այս վերջինիս է զոհ համարում կաթոլիկական քարոզչության և քաղաքականության սադրանքների պայմաններում: Սակայն այստեղ կա առավել կարևորը՝ հայ ազգային եկեղեցու շահերի պաշտպանությունը, որ միանգամայն ազգի միասնության պաշտպանություն էր նշանակում, և որը առանձնացնում է Մ. Օրմանյանին՝ որպես խորաթափանց ուսումնասիրողի: Ավետիքին հաջորդած պատրիարքները (Մարտիրոս Քյուլիանճի, Սահակ Ապուլեխցի, Հովհաննես Չմյուռնացի, դարձյալ Ապուլեխցի) 1706-1715 թթ. ընթացքում ի վիճակի չէղան կայունության հասցնել Կ. Պոլսի պատրիարքության գործունեությունը: Հիմնական պատճառը հաճախակի պողոթնացող դավանական հուզումներն էին, որոնք որևէ պահի բորբոքվում էին օսմանյան կառավարության կողմից՝ ընդդեմ կաթոլիկ համարվող հայերի, և մյուս կողմից՝ եվրոպական դեսպաններին ապավինող կաթոլիկական քարոզչությունը:

Երուսաղեմի պատրիարքության կացությունը 1704-1716 թթ.: Հովհաննես Կոլոտը Երուսաղեմում և Կ. Պոլսում

Ինչպիսին Կ. Պոլսի պատրիարքության վիճակն էր, նույնպիսին մնում էր Երուսաղեմի պատրիարքությունը, որը Մինաս Համդեցու վախճանից հետո

³⁸ Օրմանեան 2001, 3225:

³⁹ Օրմանեան 2001, 3225:

(1704)⁴⁰ մինչև 1716 թ., փաստորեն միացված էր Կ. Պոլսի պատրիարքությանը⁴⁰: Երկրորդ անգամ զույգ աթոռների միացումից հետո (1705 թ. սկզբներ) Ավետիքի երկրորդ պատրիարքության ժամանակ, սակայն քաղաքական փոփոխված պայմաններում: Մի հայտնի չափով մեղմացել էին դավանական հակադրությունները, դրանց համեմատ, Կ. Պոլսի պատրիարքության կայունացման միտումները: Վերջիններիս մասին են վկայում Ս. Հակոբի վանքի ողբալի դրությունը շտկելու նպատակով Սահակ Ապուլեխցու և Կ. Պոլսի մի խումբ երևելի հայերի գործադրած ջանքերը՝ վանքն ազատելու վեքիլների, նազըրների և այլոց շահատակություններից և վճարելու սպառնալի չափերի հասած նրա պարտքը⁴¹: Պարտատերերը ձգտում էին դատարանի միջոցով բռնագրավել վանքի գրեթե ամբողջ ունեցվածքը, այդ թվում և բուն վանքը, բայց Կ. Պոլսի պատրիարքությունն իր մեջ ուժ գտավ դիմակայելու այս կործանարար վիճակին: Իրադարձությունների կենտրոնում հայտնվեց Հովհ. Կոլոտ վարդապետը, որը հեղինակություն էր ձեռք բերել Գլակա Ս. Կարապետ մայրավանքի (Տարոն) պարտքերը հաջողությամբ մարելու գործում⁴²: Նախադեպն արդեն կար, ուստի այս շնորհաշատ և եռանդուն հոգևորականի վրա ուղղեցին իրենց հայացքները պատրիարք Սահակը և նրա աշխարհիկ համախոհները: Նրան առաջարկվեց ստանձնել Երուսաղեմի վանքը պարտքերից և գրավադրումներից ազատելու խնդիրը: Համաձայնելով՝ Կոլոտն իր հերթին առաջ է քաշում մի շատ կարևոր նախապայման՝ վերադառնալ պատրիարքությունների ավանդական կարգավիճակին և դրանք բաժանել միմյանցից, որին և համաձայնում են բոլորը⁴³:

1713-1714 թթ., թիկունքում ունենալով Կ. Պոլսի համայնքի գլխավորների աջակցությունը, Հ. Կոլոտը, իբրև վեքիլ, անցկացրեց Երուսաղեմում և կարողացավ, հիմնականում, կազմակերպական իմաստով, շտկել վանքի ծանր վիճակը: Ավելացնենք, բավական դժվարին և բարդ պայմաններում մեզ արդեն ծանոթ Հովհաննես Պալըքեսերցին, որին Սահակ պատրիարքը Երուսաղեմի վեքիլ կամ փոխանորդ էր նշանակել, գործակից-վեքիլների հետ շարունակում էր իր անարգ գործը՝ ձգտելով ի չիք դարձնել Հ. Կոլոտի ջանքերը՝ վանքի պարտատերերի հետ վարած բանակցություններում⁴⁴: Պարտապան վանքի երաշխավորի պարտականությունը ստանձնած Հ. Կոլոտը հասավ պարտքը ժամանակի ընթացքում մաս առ մաս վերադարձնելու փոխհամաձայնության⁴⁵: Վենետիկի դեմ սկսված պատերազմը, միևնույն ժամանակ, Բ. դռանը մղեց դարձյալ խստություններ գործադրել հայ համայնքում թուլացած դավանական ներհակությունների

⁴⁰ Օրմանեան 2001, 3254:

⁴¹ Պարտքի չափը հասել էր 500 քսակի. 1713 թ. (կամ 1714) Երուսաղեմ մեկնած Հ. Կոլոտը կոնդակով օգնություն էր հայցում Կ. Պոլսի էսնաֆներից՝ բացատրելով, որ առանց դրա վանքը կանցնի օտարազգի պարտատերերին (տե՛ս Բամպուքճեան 1985, 29):

⁴² Հաննա 1782, 138:

⁴³ Հաննա 1782, 136-137:

⁴⁴ Օրմանեան 2001, 3236:

⁴⁵ Օրմանեան 2001, 3237:

դեմ՝ թիրախավորելով լատինամետներին: Այս ասպարեզում բորբոքումների և Երուսաղեմի վանքը բարեկարգելու կողմնակիցների ազդեցության աճի պայմաններում պատրիարք Սահակը պատրիարքությունը կամովին հանձնեց Հ. Կոլոտին (1715 թ. սեպտեմբեր): Վերջինս այդ պաշտոնն ստանձնեց ըստ պայմանավորվածության՝ բաժանվելու էին երկու աթոռները, ընդամենը, Կոլոտի առաջարկով Երուսաղեմի պատրիարքության գլուխ էր նշանակվելու իր ուսումնակից (դեռևս Ամրդոլու վանքից) Գլակա Ս. Կարապետ վանքի առաջնորդ Գրիգոր վարդապետը⁴⁶: Պատրիարքությունների անջատումը և պատրիարքների հաստատումը վավերացվեց արքունական հրամանագրով (1716 թ. նոյեմբեր): Դրան հետևեց Գրիգոր վարդապետի ուխտը՝ պարանոցին ծանր շղթա կրել մինչև Երուսաղեմի պարտքի վճարումը⁴⁷: Այս շղթան նա կրեց մինչև Կարապետ Ուլնեցու կաթողիկոսական ընտրությունը (1726), որից բաժանվեց վերջինիս և Կոլոտի ու հայ երևելիների խնդրանքով⁴⁸:

Երկու պատրիարքությունների փոխհարաբերությունների կարգավորման հաջորդ իրավական ակտը Կ. Պոլսում հրապարակ եկավ կաթողիկոսական ընտրությունից հետո (1726 թ. մարտ), երբ հրապարակվեցին Երուսաղեմի պատրիարքական թեկնածուին ներկայացվող երեք պայմանները⁴⁹: Դրանք հայտնի են «Հաննայի նզովքներ» անվամբ, որոնք բավական հանգամանորեն քննարկվել են մեր պատմագիտության մեջ, և որոնց կանդիդատներն անհրաժեշտ էր այլ առիթով: Այստեղ միայն նկատենք, որ այդ կանոններով սահմանվում էր Երուսաղեմի պատրիարքության ինքնավարությունը՝ միաբանության իրավունքների⁵⁰, ինչպես և Կ. Պոլսի պատրիարքությունից վարչական ու տնտեսական անկախության ընդգծումով: Այստեղ շրջանցվում է, սակայն, Կ. Պոլսի պատրիարքության հետ Ս. Հակոբի վանքի կրոնավարչական փոխհարաբերությունների խնդիրը, որ հետագայում՝ 1860-1861 թթ., բավական աղմուկի և հանրային գոտությունների առիթ դարձավ արևմտահայերի ազգային սահմանադրության պետական վավերացման նախօրյակին (այսպես կոչված «ներսէն-դուրսէն» հակադրությունը):

⁴⁶ Չամչյան 1984, 771, Օրմանեան 2001, 3251:

⁴⁷ Հաննա 1782, 141: Ս. Հակոբյանց վանքի պարտքը մարվեց 1720-ականի վերջերին, Գրիգոր Շղթայակրի և Հովհաննես Կոլոտի անսպառ եռանդի շնորհիվ, երբ, ինչպես ասվում է մի ձեռագրում, «զայնքան լեռնակուտակ պարտս Սրբոյ տանս, որք անարժանապէս դիտողք (ինձ)՝ վերահսկողները) բարդեալք էին, զայնս բոլոր հատուցին և բեղնատրեցին զարդս» (Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց 1966, 365):

⁴⁸ Խ. Մխիթարյանը հրապարակել է երկու «աղերսանաց գրեր»՝ ուղղված Գրիգոր Շղթայակրին, մեկը՝ Կ. Պոլսի երևելիների (1726, 16 օգոստոսի), մյուսը՝ Կարապետ Ուլնեցու (1726, 25 օգոստոսի) կողմից՝ շղթան հանելու հորդորով: Երևելիներն իրենց խոսքն ամրապնդում էին 5 հազար դուրուշով՝ խոստանալով, որ ինչ որ մնա պարտքից, այն ևս կվճարեն: Իսկ Ուլնեցին հայտնում է, որ չի գնա Էջմիածին «մինչև հանցի երկաթն ի պարանոցէ սրբոյդ (Մխիթարեան 1967, 121, 124):

⁴⁹ Հաննա 1782, 157-158, Չամչյանց 1984, 802:

⁵⁰ Եթե կանոններով նզովվում էին Կ. Պոլսի պատրիարքության կողմից Երուսաղեմի վանք վեքի կամ նազըր (վերակացու) ուղարկելու փորձերը, ապա, բնականաբար, Երուսաղեմը պահպանում էր Կ. Պոլսի պատրիարքարանում ներկայացուցչություն ունենալու իրավունքը: 1750-ականի վերջերին այդ պաշտոնին էր Գր. Պասմաճյանը՝ Կ. Պոլսի ապագա պատրիարքը (տե՛ս Յիշատակարան Գրիգոր Պասմաճեան պատրիարքի 1908, 11):

Եզրակացություններ

Կառավարիչի պայմանագրից (1699, հունվարի 26) հետո Օսմանյան պետությունը ներքաղաքական ուղեգիծ է որդեգրում միլիթները քայքայելուն ուղղված կաթոլիկական քարոզչության դեմ: Այն ենթադրում էր ոչ մահմեդական հանրությունների կրոնադավանական հիմքի և դրան համապատասխան կառույցների ամրապնդումը, որ գործնականի վերածվեց Կ. Պոլսի պատրիարքությանը Երուսաղեմի պատրիարքությանը միացնելու ակտով՝ Ավետիք պատրիարքի Ժամանակ (XVIII դ. սկզբներ): Նրա անձը և գործունեությունը լիովին ենթարկվում էին օսմանյան իշխանությունների կամքին և ուղեգծին, որ քայքայիչ նշանակություն ունեցավ հայ հանրության համար՝ նրա ներսում խորացան երկպառակությունները, սկսվեց կազմակերպված հալածանքը հայ հոռմեադավանների և լատինամետների դեմ՝ Կ. Պոլսի պատրիարքության միջոցով: Չհապաղեցին զույգ պատրիարքությունների միացման աղետալի հետևանքները՝ Ս. Հակոբի վանքի սեփականությունների գիշատչական կողոպուտն ու թալանը, որ կազմակերպում և իրականացնում էին Կ. Պոլսի պատրիարքի անունից վանքի վերակացու (վեքիլ, նազրը) նշանակված անձինք: Վանքը խրվեց ահռելի պարտքերի մեջ, նրա եկամուտները յուրացվում էին, վաճառվում կամ գրավ էին դրվում վանքապատկան գույքն ու սեփականությունները:

Երուսաղեմի պատրիարքությունը Կ. Պոլսի պատրիարքությանը կցելու իրողությունը (նախ, 1702 թ., ապա, երկրորդ անգամ՝ 1705 թ., որ տևեց մինչև 1716 թ.) նույնպես կապվում էր միլիթների հանդեպ օսմանյան պետական քաղաքականության շրջագծում Կ. Պոլսի հայոց պատրիարքության կրավորական ընթացքի հետ:

Երուսաղեմի պատրիարքության գրեթե կործանված վիճակին վերջ տրվեց հայ աշխարհիկ և հոգևորական պահպանողական վերնախավի հայրենասիրական դիմակայության և մասնավորապես Հովհաննես Կոլոտի (Կ. Պոլսի պատրիարք՝ 1715-1741) հույժ արդյունավետ գործունեության շնորհիվ: Ազգային և անհատական նյութական միջոցների կենտրոնացման գործելակերպով կարգավորվեց վանքի պարտքերի խնդիրը, և Երուսաղեմի հայոց պատրիարքությունն ունեցավ իր հոգևոր գլուխը՝ ի դեմս այս ասպարեզում նույնպես բացառիկ ջանքեր գործադրած Գրիգոր Շղթայակիր պատրիարքի: Երկու պատրիարքությունների փոխհարաբերությունները և առանձնացման խնդիրը կարգավորվեցին Կարապետ Ուլնեցու կաթողիկոսական ընտրությունից հետո՝ Երուսաղեմի պատրիարքության վերաբերյալ կանոնների հաստատումով («Հաննայի նզովքներ») 1726 թ. մարտին: Այս կանոններով կանխվում էին երկու պատրիարքությունների միացման հետագա փորձերը, և սահմանվում էր Երուսաղեմի պատրիարքության յուրօրինակ ինքնավարությունը հայ եկեղեցու նվիրապետական համակարգում:

Գրականություն

Ալայոյաճեան Ա. 1910, Ազգային սահմանադրութիւնը, իր ծագումը և կիրառութիւնը, Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիանդանոցի, Կ. Պոլիս, էջ 76-228:

- Բամպուրճեան Գ. 1984, Յովհաննէս պատրիարք Կոլոտ (1678-1741), Ստանպուլ, տպ. Մուրադ օֆսէթ, 415 էջ:
- Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի 1874, Արարատ, Էջմիածին, թիւ Բ, էջ 71-75, թիւ Գ, էջ 112-116, թիւ Դ, էջ 150-156, թիւ Ե, էջ 192-193:
- Հաննա Յ. 1782, Գիրք պատմութեան Սբ և մեծի քաղաքիս... Կ. Պոլիս, 1782, տպ. Յովհաննէս և Պօղոս, 355 էջ:
- Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց 1966, հ. 1, կազմ. Պողարեան Ն. եպս., Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 676 էջ:
- Մխիթարեան Խ. 1967, Համառօտ պատմութիւն Երուսաղէմի, Յերուսաղէմ, տպ. Ս. Յակովբեանց, 245 էջ:
- Մըմըմեան Յ. 1909, Մասնական պատմութիւն հայ մեծատուններու 1400-էն 1900, Կ. Պոլիս, գրատուն Պալէնց, 185 էջ:
- Յիշատակարան Գրիգոր Պասմաճեան պատրիարքի 1908, հրատ. Կիլիկիեան Բ., Պարիս, 149 էջ:
- Չամչյանց Մ. 1984, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, ԵՊՀ հրատ., 896+196 էջ:
- Պէդրպէրեան Ա. 2009, Պատմութիւն հայոց, հրատ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 597 էջ:
- Սաալանեանց Տ. 1931, Պատմութիւն Երուսաղէմի, հ. 1, Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 688 էջ:
- Տը Լամոթե Ա. 1950, Ուղեգրութիւն, «Հայրենիք», Բոստոն, թիւ 6, էջ 94-104:
- Օրմանեան Մ. արք. 2001, Ազգապատում, հ. Բ, Մայր աթոռ Ս. Էջմիածին, 3894 էջ:
- Мейер М.С. 1991, Османская империя в XVIII веке, Москва, «Наука», 263 с.
- Новичев А.Д. 1963, История Турции. I. Эпоха феодализма (XI-XVIII века), Москва, изд. Ленинградского университета, 313 с.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԵՎ ԵՐՈՒՍԱԴԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XVIII դ. սկիզբ – 20-ական թթ.)

Ալբերտ Խառատյան

Ամփոփում

XVIII դ. սկզբներից Օսմանյան պետությունը կիրառում է միլիթները առավել կառավարելի դարձնելու քաղաքականություն, որ հատկապես ուղղվում էր քրիստոնյա համայնքներում կաթոլիկական քարոզչության դեմ, և որը վերջին հաշվով հետամտում էր պահպանել կայսրության ամբողջականությունը: Դրանով էր պայմանավորված Կ. Պոլսի պատրիարքության կենտրոնաձիգ հոգևոր իշխանության ամրապնդումը՝ նրան Երուսաղեմի հայոց պատրիարքությունը միացնելու (1702-1703, 1705-1716) միջոցով: Իրականում խորացավ դավանական և խմբակցական պայքարը հայ աշխարհիկ և հոգևոր վերնախավում, որ հասցրեց Կ. Պոլսի պատրիարքների՝ հույժ կասկածելի արագ պաշտոնակալումներին և, միաժամանակ, Երուսաղեմի Ս. Հակոբի վանքի սեփականությունների ու եկամուտների անողորմ թալանին՝ Կ. Պոլսի հոգևոր պուզերենի մասնակցությամբ: Վանքը խրվեց մեծ պարտքերի մեջ՝ հարցականի տակ դնելով Երուսաղեմի հայոց պատրիարքության բուն իսկ գոյությունը: Դա կասեցվեց Կ. Պոլսի պատրիարքության կողմից Երուսաղեմում տեղապահ (վեքի) նշանակված Հովհաննես Կոլոտի բացառիկ եռանդուն և արդյունավետ գործունեության շնորհիվ: Չույգ պատրիարքությունները նորից բաժանվեցին (1716) նրա՝ պատրիարք ընտրվելուց հետո (1715-1741): 1726 թ. Երուսաղեմի պատրիարքության համար սահմանվեցին կանոններ (այսպես կոչված՝ «Հաննայի նգովքները»), որոնք կանխում էին երկու պատրիարքությունների միացման որևէ հնարավորություն և հաստատում Երուսաղեմի հայոց պատրիարքության յուրօրինակ ինքնավարությունը հայ հոգևոր կենտրոնների համակարգում:

Բանալի բառեր՝ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն, Երուսաղեմի հայոց պատրիարքություն, Բ. դուռ և միլեթներ, կաթոլիկական քարոզչություն, Ավետիք պատրիարք, Հովհաննես Կոլոտ պատրիարք, Գրիգոր Շղթայակիր:

ОТНОШЕНИЯ МЕЖДУ АРМЯНСКИМИ ПАТРИАРХАТАМИ КОНСТАНТИНОПОЛЯ И ИЕРУСАЛИМА (начало XVIII в. – 20-ые годы)

Альберт Харатян

Резюме

С начала XVIII в. Османская империя в отношении миллетов стала вести такую политику, которая позволяла в большей мере контролировать их деятельность, что в частности, было направлено против пропаганды католицизма в христианских общинах. Последнее преследовало цель сохранения целостности империи.

Это было обусловлено укреплением центробежной духовной власти Константинопольского патриархата путем присоединения к нему Иерусалимского армянского патриархата (1702-1703, 1705-1716). В связи с этим обострилась религиозная и групповая борьба между армянской светской и духовной элитой, что привело к подозрительно поспешной инаугурации константинопольских патриархов и одномоментно к безжалостному присвоению собственности и доходов иерусалимской церкви св. Акопа при участии константинопольского духовного сюзерена. Церковь оказалась в долгах, что поставило под угрозу существование Иерусалимского армянского патриархата. Это удалось пресечь благодаря энергичной деятельности Ованеса Колота, назначенного иерусалимским местоблюстителем (векилом) константинопольским патриархатом. Патриархаты вновь были отделены друг от друга (1716 г.) после избрания Ованеса Колота патриархом (1715-1741 гг.). В 1726 г. для иерусалимского патриархата были определены каноны (так называемые «Ганнские анафемы»), которые пресекали какую-либо возможность объединения обоих патриархатов и утверждали своеобразную автономию Иерусалимского армянского патриархата в системе армянских духовных центров.

Ключевые слова – Константинопольский армянский патриархат, Иерусалимский армянский патриархат, Высокая Порта и миллеты, католическая пропаганда, патриарх Аветик, патриарх Ованес Колот, Григор Шхтаякир.

THE RELATIONSHIPS BETWEEN THE ARMENIAN PATRIARCHATES OF CONSTANTINOPLE AND JERUSALEM (BEGINNING OF THE 18TH CENTURY TO 1720S)

Albert Kharatyan

Abstract

At the beginning of the 18th century the Ottoman state pursued the policy of making the millets more controllable. The policy was particularly directed against the Catholic propaganda in Christian communities which eventually was aimed at preserving the integrity of the

Empire. This factor conditioned the strengthening of the centralized religious authority of Constantinople patriarchate achieved by joining the latter to the Armenian patriarchate of Jerusalem (1702-1703, 1705-1716). In fact, the religious and in-group fight among the Armenian secular and religious elite was escalated, leading to very dubious quick appointments of Constantinople patriarchs as well as to the merciless robbery of St. Hakob's monastery in Jerusalem carried out with the direct participation of Constantinople's religious suzerain. The monastery was heavily in debt, calling into question the mere existence of the Armenian patriarchate in Jerusalem. This was averted owing to appointed proxy (vekil) Hovhannes Kolot's exceptionally vigorous and efficient activity. The two patriarchates were separated again (1716) after Kolot was elected as a patriarch (1715-1741). In 1726 new rules were set for the Jerusalem patriarchate (the so-called Hanna's damnation), which averted any possibility of merging between the two patriarchates and established a unique autonomy of the Armenian patriarchate in Jerusalem under the system of Armenian religious institutions.

Key words – the Armenian patriarchate in Constantinople, the Armenian patriarchate in Jerusalem, the Sublime Port and millets, Catholic propaganda, patriarch Avetik, patriarch Hovhannes Kolot, Grigor Shghtajakir (Gregory the Chain-Bearer).

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (1918-1920 ԹԹ.)¹

Վանիկ Վիրաբյան

Պատմական գիտությունների դոկտոր

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Էլ. հասցե՝ vanik.virabyan@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 12.12.2021, գրախոսվել է 12.12.2021, ընդունվել է տպագրության 05.07.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.2-31

Ներածություն

Առաջին հանրապետության տարիներին Անտանտի կրտսեր դաշնակից Հայաստանը իր կողմնորոշումներում հակված էր դեպի այդ երկրները, որոնք որոշակի խոստումներ էին տվել: Այս հանգամանքն էլ արտաքին-քաղաքական ընտրանքում պայմանավորեց կախվածությունը Անտանտից, որոնց հետ հարաբերություններում Հայաստանը գտնվում էր ծայրահեղ խճճված վիճակում՝ բազմաթիվ անորոշություններով: Դա առավել խորացավ Գերմանիայի և Թուրքիայի պարտությունից հետո, երբ վերջիններս կորցրին նախկին դիրքերը՝ զորքերը դուրս բերելով կովկասյան տարածաշրջանից, կորցնելով Վրաստանը և Ադրբեջանը: Տարանցիկ ռեսուրսային տեսանկյունից միանգամայն կարևոր և խաչմերուկային դիրք զբաղեցնող Անդրկովկասում գերմանա-թուրքական ներկայությանը վերջ տրվեց, և նրանց տեղը զբաղեցրեց Մեծ Բրիտանիան, որն իր ազդեցության տակ առավ ողջ Անդրկովկասը: Նրա ակտիվությանը զուգընթաց՝ սկսեցին այս տարածաշրջան ներթափանցել Ֆրանսիան, Իտալիան և այլ՝ ավելի փոքր ռազմաքաղաքական, միջազգային կշիռ ունեցող երկրներ, որոնք ևս որոշակի շահեր ունեին նոր կազմավորված կովկասյան պետություններում:

Բրիտանական երկընտրանքը

1918 թ. վերջին սկսվեց բրիտանական օկուպացիոն զորքերի ավիանումը Անդրկովկասի ռազմավարական նշանակության դիրքերում: Բրիտանական զորքերը տեղաբաշխվեցին ինչպես Թիֆլիսում, Բաքվում և ռազմավարական հետաքրքրություն ներկայացնող այլ վայրերում: Սուր պայքար ծավալվեց Բաքվի համար²: Չափազանց կարևորվեցին Բաքվի նավթային շրջանը, Բաքու-Բաթումի

¹ Հետազոտությունը տպագրվում է ՀՀ ԿԳՄՍ 2021 թ. հոկտեմբերի 11-ի N 1693-Ա/2 հրամանով հաստատված Գիտության պետական կոմիտեի պայմանագրային (թեմատիկ) հայտի (21T-6A102. «Հայաստանը Անդրկովկասում եվրոպական երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների հետ փոխհարաբերությունների համատեքստում (1917-1920 թթ.)» շրջանակում:

² Մելիքյան 2018, 84-93, Պետրոսյան 2018, 121-177, Bülent Gökay 1998, 33-50, Bülent Gökay 2006, 21-45:

կերոսինամուղը³ և առհասարակ հումքային ռեսուրսները, այդ թվում՝ Հայաստանի պղինձը, ոսկին, կաշին և այլն:

Սակայն, Կովկաս ժամանելով, 1919 թ. հենց սկզբից բրիտանական ռազմաքաղաքական շրջանակներում վճռեցին Կովկասը թողնել, քանզի կենսական կարևորագույն շահեր բացահայտվեցին Բաղդադ-Մոսուլ գծի ռազմավարական մեծ կարևորություն ունեցող շրջանում: Այս մտադրությունները բրիտանացիները քողարկված պահեցին մինչև ողջ Կովկասի և անդրկովկասյան հանրապետությունների անկումը և խորհրդայնացումը 1920 թ.⁴ Նրանց տրամադրելով ակնհայտորեն առաջխաղացում ունեցող բոլշևիզմի դեմ՝ որպես պատենշ վերածնվող ռուսական իմպերիայի աշխարհակալության դեմ, ինչն էլ ապակողմնորոշեց այդ հանրապետություններին, առանձնապես Հայաստանի Հանրապետությանը, որը դառնորեն վճարեց իր արևմտյան մտասկեռման համար, մեծապես վրիպեց իր արտաքին քաղաքական հաշվարկներում և ընտրանքում, որի հետևանքով կապիտուլյացվեց 1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմում, իսկ դաշնակիցները պարզապես լքեցին նրան: Բրիտանական հաշվարկը երկմիտ ու անորոշ էր, նաև բազմաշերտ: Բրիտանական կաբինետը դա փորձեց բացատրել նաև զորացրման, իբր թե այդ պահին Մեծ Բրիտանիայի ռազմական ծախսերի կրճատման պարտադրվածությամբ: Ռ. Հովհաննիսյանի պնդմամբ, «1919 թ. սկզբին պրեմիեր մինիստրը հանգեց այն հետևության, որ կրճատվող զինված ուժերը հարկավոր է կենտրոնացնել այն տարածաշրջաններում, որտեղ մտադրություն կար երկար ժամանակի համար պահպանել բրիտանական ներկայությունը»⁴:

1919 թ. գարնանն արդեն բրիտանացիների այդ մտադրությունը իրապես օրակարգային քաղաքականություն դարձավ, և առաջարկվեց բրիտանական զորքերը փոխարինել իտալականով: Դա ամենևին էլ չէր նշանակում, թե բրիտանացիները հրաժարվում էին Անդրկովկասում իրենց ռազմաքաղաքական շահերից: Եվ մինչ Փարիզի Խաղաղության վեհաժողովի կողմից Հայաստանի մանդատը ԱՄՆ-ին հանձնելը, 1919 թ. ապրիլին Անդրկովկասում անգլիացիներին փոխարինելու մասին հայտարարությամբ հանդես եկավ նաև Իտալիան: Այն բավարարում էր անգլիացիներին, որոնք հույս ունեին ապահով հեռանալ Կովկասից և զբաղվել իրենց գաղութներում Ֆրանսիայի հրահրմամբ առաջացած լարվածությամբ⁵: Բրիտանական զորքերը իտալականով փոխարինելու համաձայնագիրը Անգլիայի և Իտալիայի գլխավոր շտաբների միջև կնքվեց Փարիզում 1919 թ. մարտի 24-ին: Իսկ դեռևս մարտի 15-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ա. Բալֆորին գրած նամակում Զ.Ն. Քերզոնը ընդգծում էր, որ Անդրկովկասը ընդհանուր եզրեր չունի Իտալիայի ազգային շահերի և քաղաքա-

³ Муханов 2016, 84-90.

⁴ Ованнисян 2007, 138.

⁵ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.) 1972, 604:

կան ամբիցիայի հետ, և որ իտալացիները փոքր-ինչ կշիռ կամ հարգանք չեն ունենա կովկասյան ժողովուրդների մոտ, և երբ իրենք հեռանան, իտալացիները երես առ երես կկանգնեն մի իրադրության առաջ, որում բոլորովին անօգնական կլինեն⁶: Չնայած այս կասկածներին և որոշակի վարանմանը, Անգլիայի ռազմական խորհուրդը 1919 թ. ապրիլի 9-ին հավանություն տվեց համաձայնագրին⁷, և ապրիլի 12-ին Լլոյդ Ջորջի և Օռլանդոյի միջև համաձայնություն կայացավ⁸:

Իտալիան, ինչպես և բոլոր հաղթող երկրները Առաջին աշխարհամարտի ժամանակ ձգտում էին շահաբեր մասնակցություն ունենալ Գերմանիայի ու Թուրքիայի գաղութների և ավարի բաժանման առք ու վաճառքում: Սակայն պատերազմի արդյունքները հանրագումարի բերող երկրները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, գործնականում այդ հնարավորությունը չընձեռեցին Իտալիային. իտալացիները գրեթե ոչինչ չստացան: Իտալացի դիվանագետ Ալբրո-վանդի Մարեկոտտին փաստում է, որ «այդ փաստաթղթում նախատեսվում էր գերմանական գաղութների բաժանում: Նրա բոլոր գաղութները տրվում են Ֆրանսիային, Անգլիային, Ճապոնիային, իսկ Իտալիային՝ ոչինչ»⁹: Եվ դա այն դեպքում, երբ Իտալիան հավակնում էր աֆրիկական տարածքներին՝ Տոգոյին և Կամերունին, սակայն Անգլիայի և Ֆրանսիայի միջև դեռևս 1916 թ. մայիսին կնքված գաղտնի Սայքս-Պիկոյի համաձայնագրով դրանք դարձան Ֆրանսիայի շահերի գոտի՝ որպես պատերազմի արդյունքներով ձեռք բերված տարածքներ:

Անգլիացիները իտալացիներին առաջարկեցին չդժգոհել պատերազմում ունեցած փոքր օգուտներից և ստանձնել Անդրկովկասի մանդատը: Իտալացիներն էլ այս պարագայում մեծ հետաքրքրություն դրսևորեցին հարուստ Ադրբեջանի շահագործման նկատմամբ: 1919 թ. մայիսի 10-ին Ադրբեջանի կառավարությունը գեներալ Վ. Թոմսոնից ստացավ հեռագիր. «Պատիվ ունեմ զեկուցելու ձեզ, որ անգլիական զորքերը պետք է փոխարինվեն իտալական զորքերով: Իտալացի սպաների խումբն արդեն ժամանել է Վրաստան, որպեսզի կատարի անհրաժեշտ նախապատրաստությունները: Խնդրում եմ ձեզ նրանց ցուցաբերել ամեն տեսակի աջակցություն և օգնություն»¹⁰:

Փարիզում Իտալիայի դեսպանության ռազմական կցորդ կոմս Սադինոն մասնավոր զրույցում հայտարարում է, որ Իտալիան Կովկասում հավակնում է բացառապես տնտեսական շահերի: Նա Ազգերի լիգայից մանդատ կստանա Կովկասի նկատմամբ, սակայն կօգտվի ոչ միայն տեղական բնակչության համաձայնությունից, այլև Անդրկովկասում կմնա երեք տարուց ավելի կամ, ծայրահեղ դեպքում՝ հինգ տարի: Այդ ժամանակամիջոցում կովկասյան հանրապետությունները կստեղծեն կոնֆեդերացիա, կամրանան և կվճռեն սեփական

⁶ Գալոյան 1982, 261:

⁷ Գալոյան 1982, 261:

⁸ Գալոյան 1982, 262:

⁹ Альдрованди Марескотти 1944, 232.

¹⁰ Каземзаде 2010, 217.

ճակատագրերը: Եթե հայտնվի Ռուսաստանի Ֆեդերատիվ Հանրապետությունը, ապա կովկասյան պետությունները, հնարավոր է, ցանկանան մտնել նրա կազմի մեջ: Սադիկոն հասկացնել տվեց, որ Իտալիան ոչ մի դեպքում չի կռվի Դենիկինի դեմ, որը սպառնում է Ադրբեջանին: Կովկասը կարող է ունենալ իր սեփական զորքերը, իսկ Իտալիան կցուցաբերի նյութական և տեխնիկական օգնություն¹¹: Սադիկոյի հայտարարության մեջ արտացոլված էր Իտալիայի դիրքորոշումը, որը հույս ուներ տնտեսական օգուտներ կորզել Անդրկովկասում, սակայն ամենևին էլ չէր պատրաստվում Ռուսաստանի դեմ պատերազմի: Իտալիային առաջին հերթին գայթակղեց Բաքվի «սև ոսկին»: Ֆ. Կազեմզադեի վկայությամբ, այդ նպատակով 1919 թ. մայիսի 22-ին Բաքու է ժամանում արքայազն Սավոյացին, որին հաջորդում է գնդապետ Մելիսիոր (Մելքիադե) Գաբբայի ռազմական առաքելությունը՝ ցանկանալով պարզել, թե ինչքան զորք պետք է պահի Իտալիան, որպեսզի ապահովի խաղաղությունը և անվտանգությունը Անդրկովկասում: Ֆ. Կազեմզադեի կարծիքով, թե՛ մեկը, և թե՛ մյուսը, շատ էին համակրում Ադրբեջանին, իսկ Գաբբան խոստանում է ամեն ինչ անել, որպեսզի օգնեն Ադրբեջանին ոտքի կանգնելու¹²:

1919 թ. ապրիլի սկզբին Անդրկովկաս ուղարկված հատուկ ռազմական առաքելությունը գնդապետ Մ. Գաբբայի հրամանատարությամբ՝ ենթադրվող գործունեության շրջանի հետ ծանոթության համար, քողաածակույթ էր, իսկ իրական նպատակադրումը հետախուզական աշխատանքներն էին, առաջին հերթին, Ադրբեջանում, Վրաստանում և մասնավորապես Բաթումի մարզում, իսկ Հայաստանի Հանրապետության համար հատուկ պլանավորված խնդիր չառաջադրվեց, քանզի ենթադրվում էր, որ Հայաստանի խնամակալությունը կստանձնի որևիցե առանձին մանդատակիր պետություն: Իտալական ռազմական առաքելությունը բրիտանական զինված ուժերի ներկայացուցիչ գնդապետ Կ.Բ. Ստոքսի¹³ ուղեկցությամբ մայիսի 10-ին ափ դուրս եկավ Բաթումում:

Անդրկովկասի Բրիտանական հրամանատարությունը 1919 թ. մայիսի 10-ին Վրաստանի կառավարությանը և Թիֆլիսում հավատարմագրված դիվանագետներին պաշտոնապես իրազեկեց անգլիական զորքերը իտալականով փոխարինելու մասին, իսկ երկու օր անց Անդրկովկաս ժամանեց իտալական առաքելությունը՝ 18 սպա՝ գնդապետ Մ. Գաբբայի գլխավորությամբ¹⁴: 1919 թ. հունիսի 5-ին Գաբբան իր կառավարությանը հաղորդում է, որ Անդրկովկասը բռնազավթելու համար անհրաժեշտ է այնտեղ ուղարկել առնվազն 30000 զորք¹⁵: Հատկանշական է, որ Անդրկովկասում բրիտանական ռազմաքաղաքական ուժերի ներկայացուցչությունը նույնիսկ հարկ չհամարեց այդ կարևոր իրադարձության մասին խորհրդակցել

¹¹ Каземзаде 2010, 217.

¹² Каземзаде 2010, 218.

¹³ Ованнисян 2007, 95, 142.

¹⁴ Պետրոսյան 2006, 194:

¹⁵ Գալոյան 1982, 262:

Վրաստանի առաջնորդ Նոյ Ժորդանիայի և անդրկովկասյան մյուս պետությունների ղեկավարների հետ, ինչը շփոթի մեջ գցեց վերջիններիս: Վրաստանի վարչապետ Ն. Ժորդանիան վրդովվեց և դժգոհեց Փարիզի վեհաժողովի՝ Իտալիային իրավասություն տալու որոշման դեմ, իսկ Ծերեթելին հայտարարեց, որ վրաց ժողովուրդը ցանկանում է լիակատար անկախություն¹⁶:

Դաշնակիցներն իրենց իրավունք էին վերապահում ինքնակամ որոշումներ կայացնելու, կարծես թե Անդրկովկասը իրենց հայրենական կալվածքը լիներ, միաժամանակ դա սեփական ուժի ցուցադրում էր՝ ցույց տալով, որ գործնականում նորակազմ պետությունները դեռ բավականաչափ հեռու են իրական անկախության և ազատության ընկալումից: Կար նաև աշխարհաքաղաքական իրողությունների ըմբռնման փորձի պակաս, ռեսուրսների սով: Բրիտանական այս որոշումը առանձնապես դժգոհության ալիք բարձրացրեց Վրաստանում, որտեղ բրիտանական զորքերը իտալականով փոխարինելու մասին տեղեկությունները սկզբնապես փորձ արվեց անտեսել: Վրաստանի վարչապետ Ն. Ժորդանիան տեսակցեց Անդրկովկասում բրիտանական զորքերի բարձրագույն հրամանատարության ներկայացուցիչ գեներալ Ջորջ Նորթոն Կորիի հետ՝ փորձելով պարզել՝ արդյո՞ք իտալացիները ինքնուրույն են իրենց գործողություններում, թե՞ ենթարկվում են բրիտանական հրամանատարությանը, քանզի դրա համար հիմքեր կային: Ի պատասխան Կորին Ժորդանիային հայտնեց, թե հերթափոխողները «կգործեն այնպես, ինչպես և անգլիացիները՝ Անտանտի անունից»: Այդ պատասխանը չբավարարեց Ն. Ժորդանիային, որը չթաքցրեց իր տագնապը՝ ասելով. «Զորքերի այդպիսի հաճախակի փոփոխությունը, առանց մեր իմացության և համաձայնության, շատ տհաճ է: Մենք արդեն ծանոթացել ենք անգլիացիների հետ, նրանք հավաստիացրել են մեզ իրենց համակրանքների մասին և՛ այստեղ, և՛ Լոնդոնից իրենց հաղորդագրություններով, և հանկարծ այժմ գալիս են իտալացիները, մենք չգիտենք նրանց մտադրությունների մասին»¹⁷: Սակայն Հայաստանում այս անհանգիստ և շահագրգիռ տագնապը գրեթե բացակայում էր, չնայած մի շարք հեռագրեր հղվեցին Թիֆլիս ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը:

Ձ. Մեսխիձեի գնահատմամբ, միայն «նավթը նպատակ չէր Իտալիայի համար՝ որպես շահագրգռության առարկա: Ինտերվենցիան կարող էր նրա առաջ հեռանկարներ բացել սևծովյան տարածաշրջան ներթափանցելու համար ու վերսկսելու տրանսպորտային հաղորդակցությունը և առևտուրը Արևելքի երկրների հետ և քաղաքական գործընկերների ու մրցակիցների աչքում բարձրացնելու պետության հեղինակությունը»¹⁸: Այս առումով հետաքրքիր է Ռ. Հովհաննիսյանի դիտարկումը Իտալիայի շահագրգռվածության խորքային հիմքերի մասին. «Կով-

¹⁶ Каземзаде 2010, 257.

¹⁷ «Демократическое правительство» Грузии и английское командование 1928, 66-67.

¹⁸ Месхидзе 2007, 129.

կասում բրիտանացիներին իտալացիներով փոխարինումը կարող էր Իտալիայի համար բացել նոր շահութաբեր շուկաներ՝ ապահովելով նավթի, քարածխի, պղնձի և կենսականորեն կարևոր օգտակար հանածոների առատ մատակարարումներ, ինչպես նաև ուժեղացնելով Իտալիայի դիրքերը մերձավորարևելյան պայմանագրի շուրջ բանակցություններում: Բացի այդ, այն կարող էր նվազեցնել կառավարության քննադատությունը երկրի ներսում... թե իտալացի քաղաքական գործիչները ոչ մի բանի չկարողացան հասնել Փարիզի Խաղաղության կոնգրեսում»¹⁹:

Բրիտանիայի որոշումը պայմանավորված էր և այլ հովանավորների բացակայությամբ: ԱՄՆ-ի ղեկավարությունը պարզապես չցանկացավ մանդատ վերցնել նույնիսկ Հայաստանի նկատմամբ և առավել ևս խոշոր զինված ուժեր ուղարկել Կովկաս: 1920 թ. մարտին ԱՄՆ-ի Սենատը ՀՀ-ի նկատմամբ խնամակալությունն անվերապահորեն մերժեց: 1919 թ. երկրորդ կեսին Մեծ Բրիտանիան սկսեց ճնշում գործադրել իտալացիների վրա՝ պահանջելով գործել, քանզի 1919 թ. հունիսի կեսերին սկսել էր իր գործերի և ծովային ուժերի տարհանումը Անդրկովկասից, որն ավարտվեց օգոստոսի կեսերին: Ընդամենը մի փոքրիկ զորամաս թողեց Բաթումում: Ըստ հաշվարկների՝ իտալական հրամանատարությունը կարող էր Անդրկովկաս ուղարկել ինքնուրույն էքսպեդիցիա՝ 40 հազար մարդ՝ ծրագրելով գործարկել 12-րդ և 15-րդ բանակային կորպուսների զորամասերը, որոնք պետք է 1919 թ. ամռան սկզբին լողարկեին կովկասյան ափերի ուղղությամբ²⁰:

Իտալիայի վարչապետ Վիտտորիո Էմանուելե Օլանդոն²¹ խոստացավ տարածաշրջանից գնդապետ Մ. Գաբբայի վերադարձից հետո հայտարարել իրենց որոշման մասին՝ նախապես տեղեկանալով Մ. Գաբբայի՝ Կովկասի իրադրության մասին լիարժեք զեկույցին: Գաբբան Կովկասում մնաց երկու շաբաթ և 1919 թ. հունիսի 2-ին հետ վերադարձավ Հռոմ հաշվետվության համար, մի շարք պաշտոնյաների թողնելով Անդրկովկասում՝ փաստեր հավաքելու առկա ռազմաքաղաքական կացության մասին²²: Գնդապետ Գաբբան ներկայացված զեկույցում կարևորել էր Անդրկովկասում իտալական առաքելության աշխատանքները քաղաքական և տնտեսական ոլորտներում՝ դրա հետ մեկտեղ նշելով ստեղծված ծայրահեղ ոչ պարզ, խճճված ռազմաքաղաքական իրավիճակի և խորը սոցիալ-տնտեսական ճգնաժամի մասին և արտաքին քաղաքական և ռազմական՝ ակնհայտորեն լուրջ վտանգի վերաբերյալ ի դեմս Թուրքիայի և բուլղարիկյան Ռուսաստանի: Գաբբան անհրաժեշտ էր համարում լիակատար հսկողության իրավունք ստանալ Բաթում քաղաքի՝ որպես կովկասյան գլխավոր նավահանգստի նկատմամբ, որը կարևոր օղակ էր զենքի և այլ ապրանքների մատակարարման

¹⁹ Ованнисян 2007, 42, 140.

²⁰ Месхидзе 2007, 151, 154.

²¹ Վիտտորիո Էմանուելե Օլանդո (1860-1952 թթ.) – Իտալիայի վարչապետ 1917 թ. հոկտեմբերի 29-ից մինչև 1919 թ. հունիսի 23-ը: Նրան հաջորդել է Ֆրանչեսկո Նիտտին:

²² Ованнисян 2007, 153.

տեսանկյունից: Գաբբան կարևորում էր նաև Դենիկինի հետ պայմանավորվածության հաստատումը սահմանազատման հարցում, որն իբր թե կարող էր նպաստել իրադրության խաղաղեցմանը անդրկովկասյան հանրապետություններում, քանզի սպիտակգվարդիականների ներխուժման վտանգ էր տեսնում: Գաբբան տարածաշրջանի բռնազավթումն իրագործելու տեսանկյունից կարևորում էր ջրային-հանքային, հողային և անտառային ռեսուրսների, արդյունաբերության ճյուղերի և առևտրի, կապի և տրանսպորտի միջոցների նկատմամբ վերահսկողության հաստատումը:

Գաբբայի առաքելության կազմած և կառավարությանը ներկայացրած վիճակագրության փաթեթը որոշակի հետևության հանգեցրեց. «Իտալիան իրեն կապահովի վառելիքի տարբեր տեսակներով, հանքային նյութերով, ծառահատումներով, բամբակով, բրդով, կաշվով և արհեստագործական ապրանքներով, ինչպես նաև արտահանման շահավետ շուկաներով: Ավելին, հողը և կլիման նպաստավոր էին դիտվում իտալացիների խոշորածավալ ներգաղթի համար: Ռազմական ծախսերը կարող էին թեթև ձևով լուծվել...»²³: Ծանոթանալով Գաբբայի զեկույցին և առաջարկություններին՝ Իտալիայի վարչապետ Վիտտորիո Էմանուելե Օլանդոն ռազմական նախարար Էնրիկո Կավիզիային²⁴ հանձնարարում է մինչև 1919 թ. հունիսի 20-ը Կովկաս ուղարկել իտալական էքսպեդիցիոն կորպուս՝ 40 հազար թվաքանակով: Այդ հաղորդագրության հետ կապված՝ բրիտանական օկուպացիոն զորքերի տարհանումը հետաձգվեց մինչև 1919 թ. հուլիսի 15-ը²⁵:

Բրիտանական անորոշությունը և իտալական ծրագրերի ձախողումը

Բրիտանացիները, ծանրութեթև անելով իրենց ռազմավարական ծրագրերը, սկզբնապես խոստացան ապահովել իտալական զորամասերի փոխադրումը իրենց նավերով, սակայն հունիսի կեսերին հանկարծակի հրաժարվեցին այդ աջակցությունից՝ հայտարարելով, որ նավերն իրենց էլ չեն բավարարում սեփական զորամասերը տուն հասցնելու համար: Բրիտանական երկվությունը և փոփոխամտությունը իտալացիներին կանգնեցրեց խնդիրների առաջ՝ սեփական միջոցներով իրենց զորամասերը Կովկասյան ափեզր հասցնելու առումով: Իտալացիները բրիտանացիների վճռից դժգոհ մնացին: Վարչապետ Օլանդոն, որը ձգտում էր հսկողություն սահմանել անդրկովկասյան տարածաշրջանի նկատմամբ, տրանսպորտի և ռազմական նախարարություններից պահանջեց իրենց ապահովել նավերի անհրաժեշտ քանակով, որը, նրա կարծիքով, Անդրկովկա-

²³ Ованнисян 2007, 154.

²⁴ Կվիզա Էնրիկո (1862-1945 թթ.) – իտալացի հայտնի ռազմական և պետական գործիչ, Իտալիայի մարշալ (25.06.1926):

²⁵ Ованнисян 2007, 154-155.

սում հաստատվելու Իտալիայի ռազմավարական պլանների իրագործման ճանապարհին վերջին լուրջ խոչընդոտն էր. այդ հարցում նա սխալվում էր:

Միևնույն ժամանակ Իտալիայում այնքան էլ ոգևորված չէին, երկիրն ապրում էր ներքաղաքական սուր ճգնաժամ, հասարակությունը երկփեղկված էր: Այս անորոշությունը, ի վերջո, հանգեցրեց Իտալիայի հրաժարումին, ակնհայտ դարձավ Իտալիայի թուլությունը և ոչ պատրաստականությունը, որին նպաստեց նաև բրիտանացիների քողարկված սաբոտաժը: Որոշ ձգձգումներից հետո Իտալիան պաշտոնապես հայտարարեց Կովկասում ինտերվենցիայից հրաժարվելու իր որոշման մասին: Բրիտանական զորքերն իտալականով փոխարինելու ողիսականը 1919 թ. հունիսի վերջին ավարտվեց լիակատար ձախողմամբ, որը կանխորոշվեց վարչապետ Վիտտորիո Օլանդոյի կաբինետի հրաժարականով: Կաբինետի փոփոխությունը 1919 թ. հունիսի 21-ին և Օլանդոյի փոխարինումը Ֆրանչեսկո Նիտտիով վճռեց հարցը, և հուլիսի 18-ին Նիտտին այդ մասին հայտարարեց Փարիզում՝ Գերագույն խորհրդում՝ սակայն չհրաժարվելով մի շարք առևտրատնտեսական պլաններից, որոնք վերաբերում էին նաև Հայաստանին: Անորոշ շահարկումներից հետո Անդրկովկաս մուտք գործելու Իտալիայի ռազմաքաղաքական նկրտումները ձախողվեցին: 1919 թ. հուլիսի 31-ին Իտալիան ի դեմս Կովկասում իտալական ռազմաքաղաքական առաքելության ղեկավար Կ. Միքելլիի ՀՀ կառավարությանը ևս հատուկ տեղեկացրեց, որ «Իտալիայի թագավորական կառավարության արտաքին գործերի մինիստրը իրեն հանձնարարել է հայտնել, որ... բրիտանականի փոխարեն իտալական զորքեր չեն ուղարկվելու»²⁶:

Վ. Օլանդոն 1919 թ. հունիսի 23-ին լքեց Իտալիայի վարչապետի աթոռը: Այն զբաղեցրեց Ֆրանչեսկո Նիտտին²⁷, որի առաջին քայլերից մեկը եղավ իտալական զորքերի՝ Կովկաս ուղարկելու մասին որոշման վերջնական չեղարկումը: Նա հետագայում հիշողություններում բերեց փաստարկներ՝ հիմնավորելով իր գործողության արդարացիությունը. «Երբ ես 1919 թ. հունիսին ստանձնեցի կառավարման լծակները, իտալական ռազմական էքսպեդիցիան Վրաստան, որը նախապատրաստված էր ոչ միայն Անտանտի համաձայնությամբ, այլև ցանկությամբ, արդեն պատրաստ էր: Այնտեղ գտնվող ոչ մեծաթիվ անգլիական զորքերը հետ կանչվեցին:

Ըստ պլանի, 12-րդ բանակային կորպուսը, որը բաղկացած էր երկու հետևակային դիվիզիաներից և անգլիական ալպիական զորաջոկատից, պատրաստ էր մեկնել կովկասյան տարածաշրջան: Հաշվի էր առնվել ևս մի հանգամանք, որ Վրաստանն ուներ հսկայական հանքային հարստություններ, և այդ ժամանակ իտալացիները ենթադրում էին, որ վրացական պետությունը կարող էր Իտալիա-

²⁶ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 120, թ. 155:

²⁷ Ֆրանչեսկո Սևեդիո Նիտտի (1868-1953 թթ.) - Նիտտի Ֆրանչեսկո Սևեդիո Վինչենցո դե Պաոլա, իտալացի քաղաքական և պետական գործիչ, Իտալիայի վարչապետ (1919 թ. հունիսի 23-1920 թ. հունիսի 15-):

յին մատակարարել հումքի մեծ քանակություն: Ինձ զարմացրեց, որ ոչ միայն կառավարությունը, այլև խելոք ֆինանսիստների մի ամբողջ շարք և ընդհանրապես առաջադեմ մտքերի տեր անձինք այդ էքսպեդիցիայի համոզված կողմնակիցների շարքում էին: Իսկ ես, չնայած իմ ցուցաբերած ուժեղ հակազդեցությանը, որոշեցի անհապաղ և մեկընդմիջտ հրաժարվել այդ ձեռնարկումից՝ աջակցելով միայն զուտ առևտրական նախաձեռնությանը: Սակայն, էքսպեդիցիայի հետևանքը, անկասկած, դարձավ Իտալիայի ուղղակի պատերազմը մոսկովյան կառավարության հետ, որը կարող էր հանգեցնել անկանխատեսելի արդյունքների: Իրականում անցավ որոշ ժամանակ, և Վրաստանն ընկավ բոլշևիկների ձեռքը, որոնք այնտեղ ուղարկեցին իրենց 125-հազարանոց բանակը: Եթե Իտալիան կազմակերպեր այդ էքսպեդիցիան, նա ներգրավված կլիներ ռազմական սարսափելի արկածախնդրության մեջ, պատերազմական գործողությունների թատերաբեմը առաջ կբերեր անհավանական դժվարություններ նրա հեռացվածության, տրանսպորտի թանկության իմաստով և այլն: Եվ ի՞նչ նպատակով: Վրաստանը մինչ պատերազմը Ռուսական կայսրության մի մասն էր, և Անտանտի ոչ մի երկիր դա չէր էլ համարում անարդարացի»²⁸: Եվ այսպես, Իտալիայի վարչապետը, ըստ Ֆ. Կազեմզադեի, Կովկասի նկատմամբ իտալական մանդատում տեսավ ընդամենը անմիտ արկածախնդրություն, և Կովկաս մեկնելու իտալական պլանը, որպես անպետք մի թուղթ, պատմության աղբանոց նետվեց: 1919 թ. բրիտանական զորքերը Անդրկովկասից դուրս բերելու Անգլիայի որոշումը ևս մնաց ուժի մեջ: Բրիտանական զորքերը լքեցին Ադրբեջանի տարածքը, միայն մի քանի անգլիացի սպաներ մնացին որպես հրահանգիչներ և խորհրդատուներ ադրբեջանական բանակում²⁹:

Խնդրի վերջնական հանգուցալուծման առումով մնում էր, որ իր վճիռը կայացնե՞ր նաև Փարիզի վեհաժողովը, որտեղ այդ խնդրով պաշտոնական հայտարարություն արեց Իտալիայի արտգործնախարարության ղեկավար Թոմմազո Տիտտոնին³⁰, որը հրապարակեց տեքստը³¹:

Այսպիսով, Օդլանդոյի կառավարությանը փոխարինած Նիտտիի կառավարությունը, որը, կշռադատելով իրավիճակը, եզրահանգեց, որ ամենևին էլ չեն կարող զորք ուղարկել Անդրկովկաս: 1919 թ. հուլիսի 17-ին Փարիզում ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանը տեսակցեց իտալական պատվիրակության ընդհանուր խորհրդական Դի Մարտինոյի հետ՝ պարզելու, թե որքանով է ստույգ իտալական զորքերն անգլիականի փոխարեն Կովկաս փոխադրելու լուրը: Զրույցի ընթացքում Դի Մարտինոն հայտնում է, որ իտալական զորքերը Կովկաս փոխադրելու մասին լուրջ դիտավորություն կա, և այս մասին առանձնապես

²⁸ Нитти 1923, 123-124.

²⁹ Каземзаде Фируз 2010, 218.

³⁰ Տիտտոնի Թոմազո (1855-1931 թթ.) - 1919 թ. երրորդ անգամ ստանձնում է Իտալիայի արտգործնախարարի պաշտոնը՝ արդեն Ֆրանչեսկո Նիտտիի կառավարության մեջ:

³¹ Месхидзе 2007, 130.

պնդում են անգլիացիք, բայց այժմ այդ որոշումը հետ է վերցված, քանզի իտալացիք Կովկաս չեն գնալու³²։ Ավելին, 1920 ապրիլին Սան Ռեմոյի խորհրդաժողովում, երբ խոսք եղավ Հայաստանի մանդատը Իտալիային հանձնելու մասին, Նիտտին հայտարարեց, որ իրենց համար անհնար է աշխարհի այդ մասը զորք ուղարկելը։ Այդուհանդերձ, Մեծ Բրիտանիան չբեկանեց իր որոշումը Անդրկովկասից զորքերի դուրսբերման մասին, այլ, ընդհակառակը, հայտարարեց դրանց վերջնական հեռանալու մասին. վերջնաժամկետը՝ օգոստոսի 15-ին³³։

Իտալիայի կառավարությունն էլ կարգադրեց իր բոլոր պատրաստությունները կասեցնել։ Անդրկովկասում իտալական ռազմական առաքելության շտաբի պետ փոխգնդապետ Կառլո Միքելին 1919 թ. օգոստոսին Թիֆլիսում հրապարակեց Հռոմի պաշտոնական հաղորդագրությունը՝ մեկնաբանություններով հանդերձ. «Ինդրում ենք տեղեկացնել բրիտանական հրամանատարին և տեղական կառավարություններին, որ իտալական զորքերի ժամանում բրիտանականին փոխարինելու համար տեղի չի ունենա։ Իտալական կառավարությունը ցանկանում է հաստատել բարեկամական հարաբերություններ տեղական կառավարությունների հետ, աջակցել առևտրին, արդյունաբերությանը և ֆինանսական ձեռնարկումներին»³⁴։

Ռազմական առաքելության փոխարեն Իտալիան խոստացավ առևտրական պատվիրակություն ուղարկել անդրկովկասյան հանրապետությունների հետ տնտեսական հարաբերությունների զարգացման համար և առաջին հերթին՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ։ Վերջնակետը դրեց Իտալիայի արտգործնախարար Թ. Տիտտոնին, որն ի պատասխան իր հասցեին ուղղված քննադատությանը Փարիզի խաղաղության վեհաժողովում 1919 թ. օգոստոսի 11-ին հնչեցրեց կառավարության պաշտոնական դիրքորոշումը. «Մի ժամանակ Իտալիան մտածում էր Վրաստան և Ադրբեջան զորքեր ուղարկելու մասին, բայց ոչ մասնավորապես Հայաստան։ Վրաստանը պահանջում էր լիակատար անկախություն և առաջ չէր քաշում առարկումներ իտալական զորուժով օկուպացման դեմ։ Եթե Իտալիան վրացիների պայմաններով ընդուներ մանդատը, ապա ստիպված էր լինելու պատասխանատվություն ստանձնել պահպանելու վրացական անկախությունը։ Դա մենք, իհարկե, չէինք կարող անել։ Կպահանջվեր մոտ 40000 զինվոր, և հարկ կլիներ լրացուցիչ նավեր և մատակարարումներ որոնել։ Սկզբնական ծախսերը կկազմեին երևի թե... 75 միլիոն լիր, իսկ ամենամյա արժեքը կհասներ 1 միլիարդ լիրի։ Իտալիան չի կարող իր վրա վերցնել այդքան ծանր բեռ, և այդ պատճառով այս միտքը պետք է մի կողմ դրվի»³⁵։

³² Ահարոնյան 2001, 37։

³³ Ованнисян 2007, 157.

³⁴ Ованнисян 2007, 159.

³⁵ Ованнисян 2007, 159.

Այսպիսով, իտալացիների ժամանումը Անդրկովկաս այդպես էլ մնաց անիրականանալի: Ինչպես հայտնում է Ա. Խատիսյանը, նախատեսված էր 40 հազարանոց զորք ուղարկել, որից 8 հազարը *տեղակայվելու էր Հայաստանում*: Այդ զորքերը այդպես էլ չեկան³⁶: Ջորջ ուղարկել և գրավել Անդրկովկասը, որն իրենն էր համարում Ռուսաստանը, որն արդեն բախում էր դռները³⁷, Նիտտին համարում էր վտանգավոր, արկածախնդրական ձեռնարկ, և արդեն 1919 թ. օգոստոսին վերջնականապես մերժվեց Հայաստանի մանդատը: Այդ մասին Լոնդոնում Իտալիայի դեսպան Իմպերիալին Անգլիայի արտգործնախարարությանը հայտնեց օգոստոսի 1-ին³⁸:

Բրիտանական զորքերը վերջնականապես թողեցին Կովկասի սահմանները 1920 թ. թուրք-հայկական պատերազմի անմիջական նախօրյակին: Դաշնակիցները և առանձնապես Անգլիան, կարծես թե պայմանավորվածություն ունենալով Կովկասյան լեռներից իջնող բոլշևիկյան Ռուսաստանի հետ, վերջինիս հասկացրին, թե՛ տեսե՛ք, մենք արդեն հեռանում ենք, ինչպես և «*խոստացել ենք*»: Դա իրապես համընկնում է տարածաշրջանի խորհրդայնացման գործընթացի հետ, որն իրագործեց 11-րդ Կարմիր բանակը³⁹:

Ջ. Մեսսիժեն այսպես է բացատրում այդ իրավիճակը. «Նիտտիի համար բնորոշ էր տնտեսական նպատակահարմարության տրամաբանությունը, իսկ նրանց քաղաքական նախապատվությունները ոչ մի կերպ կապված չէին Կովկասի ժողովուրդներին նրանց անկախության որոնումներում աջակցելու հետ... Ավելին, նա ձգտում էր հարաբերությունները կարգավորել Խորհրդային Ռուսաստանի հետ...: Առաջին պաշտոնական քայլը՝ ուղղված իտալա-ռուսական փոխհարաբերությունների զարգացմանը, դարձավ 1920 թ. ապրիլի 27-ի՝ գերիների փոխանակման մասին պայմանավորվածությունը: Այնուհետև հետևեց կոոպերատիվ կազմակերպությունների միջև համաձայնությունը (կիսապաշտոնական հիմքի վրա): Ռուսաստանը Իտալիային մատակարարում էր հաց և նավթ, դրա փոխարեն ստանում դեղորայք, գյուղատնտեսական մեքենաներ և էլեկտրատեխնիկական ապրանքներ»⁴⁰:

Հայաստանի Հանրապետությունը Իտալիայի ռազմաքաղաքական ծրագրերում

1919 թ. հուլիսի 31-ին Իտալիայի՝ Կովկասում գտնվող ռազմաքաղաքական առաքելության ղեկավար Կ. Միքելլին հատուկ գրությամբ հավաստեց, որ «Իտալիայի թագավորական կառավարությունը ցանկանում է բարեկամական հարաբերություններ պահպանել Հայաստանի Հանրապետության կառավարության

³⁶ Խատիսյան 1968, 187:

³⁷ Թորոսյան 2017, 85:

³⁸ Սիարոնյան 2001, 44:

³⁹ Муханов 2017, 89-98.

⁴⁰ Ованнисян 2007, 130.

հետ և հովանավորել առևտրական, ֆինանսական և արդյունաբերական հարաբերությունների զարգացումը երկու երկրների միջև: Դրան հասնելու համար Իտալիայի թագավորական կառավարությունը պատրաստ է ամեն կարգի զիջումների, ինչպես նաև Անդրկովկաս ուղարկելու տեխնիկական խորհրդատուներ, եթե հանրապետության կառավարությունը դա ցանկանա: Դրա համար էլ իտալական առաքելությունը մնում է Անդրկովկասում և ուշադրությամբ կրնդունի բոլոր առաջարկություններն ու հարցումները, որ նրան կարվեն»⁴¹: Նշելով, որ Իտալիայում զանազան պլաններ են առաջարկվել արդյունաբերական զարգացման վերաբերյալ, Միքելլին գտավ, որ «խելամիտ կլինի, եթե երկու երկրների կառավարությունները աջակցեին իրենց սեփական շահերի համար», անգամ խոստանալով իտալական թագավորության աջակցությունը Փարիզի խաղաղության վեհաժողովի առաջիկա նիստերում Հայկական հարցը քննարկելու ժամանակ⁴²:

1920 թ. գարնանը Անդրկովկաս, այնուհետև առևտրական հարաբերությունների հաստատման համար Հայաստան ժամանեց մեծ առաքելություն, որը գլխավորեց Էտտյուրե Կոնտին: Անդրկովկասյան հանրապետությունների դեֆակտո ճանաչումից հետո Իտալիան առաջին տերությունն էր, որ բացեց քաղաքական գործակալություն ռազմականի փոխարեն՝ Մ. Գաբբայի գլխավորությամբ, Հայաստանում այդ գործակալությունը ներկայացրեց մարկիզ Ն. Դելի Ալբիցցին: Հարկ է արձանագրել, որ ռազմական առաքելությունը 1920 թ. մարտի 10-ից վերականգնվեց և վերանվանվեց Հայաստանում Իտալիայի թագավորական գործակալություն, որը գլխավորում էր գնդապետ Գաբբան, որի նստավայրը Թիֆլիսն էր⁴³: Հայաստանի անկախության դեյուրե ճանաչումից հետո իտալական կառավարությունը 1920 թ. մայիսին արտակարգ հանձնակատար և լիազորված նախարար նշանակեց Տրապիզոնի նախկին գլխավոր հյուպատոս, հայամետ Ջակոմո Գորրինիին, որը ժամանեց միայն աշնանը⁴⁴:

Եզրակացություններ

Այդուհանդերձ, չնայած իտալական առաքելությունը մնաց Անդրկովկասում, Հայաստանը դրանից շատ չշահեց, և գործը էական տեղաշարժեր չունեցավ, ընդամենը դեկլարատիվ բնույթի հայտարարություններ և անկեղծ բարեկամության մասին գեղեցիկ խոստումներ եղան: Իտալիան Հայաստանում ընդգծված առևտրական հետաքրքրություններ չունեց, որին նպաստեց նաև 1920 թ. Զ. Ջոլիտտիի կաբինետում Իտալիայի արտգործնախարար Կառլո Սֆորցայի⁴⁵ թուրքամետ կառավարության վարած քաղաքականությունը, չնայած երկու ժողովուրդների մշա-

⁴¹ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 120, թ. 155:

⁴² ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 120, թ. 155:

⁴³ Ցոլակյան 2004, 178:

⁴⁴ Туманян 2012, 406-407.

⁴⁵ Սֆորցա Կառլո (1872-1952 թթ.) - իտալացի քաղաքական և պետական գործիչ, արտգործնախարար 1920 թ. հունիսի 15-ից մինչև 1921 թ. հուլիսի 4-ը:

կուֆային հին կապերին: Հայաստանը 1918-1920 թթ. այդպես էլ չկարողացավ Իտալիայից զենք և ռազմամթերք ձեռք բերել և ի պատասխան գնդապետ Մ. Գաբբայի նախաձեռնության, որն էլ ցանկություն էր հայտնել զենքով օգնել Հայաստանին, Մֆորցան դեռ 1919 թ. հոկտեմբերի 30-ին հայտարարել էր, թե Իտալիան զգուշանում է զենք տալ Հայաստանին Ադրբեջանի հետ նրա հակամարտության պատճառով, որի դեմ հայերը կուղղեն զենքը, որ իբր թե այն գրգռում է մուսուլմաններին ընդդեմ Իտալիայի, և դա այն պարագայում, երբ թե՛ Ադրբեջանը և թե՛ Վրաստանը Իտալիայից ստացան ռազմամթերք և հանդերձանք: Այդ մասին է փաստում Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական, իշխան Միքայել Թումանյանը՝ ասելով, թե Հայաստանին զենք-զինամթերքով օգնություն ցուցաբերելու խնդրանքով դիմել է Անդրկովկասում Իտալիայի քաղաքական ներկայացուցիչ գնդապետ Գաբբային, խնդրելով Հայաստանին ուղարկել որոշ քանակի եռագիծ փամփուշտներ՝ կապված թուրքական վտանգի հետ: Զավեշտական է, որ, Թումանյանի վկայությամբ, իտալական կառավարությունը հարցին ինքնուրույն լուծում տալու համար դիմում է Անգլիայի արտաքին գործերի նախարարություն, որն իբր չէր զլացել և պատասխանել էր, *թե Հայաստանին Թուրքիայի կողմից ոչինչ չի սպառնում*⁴⁶, ինչն ակնհայտ ապակողմնորոշում էր: Այն միաժամանակ ցույց էր տալիս, որ Իտալիան ինքնակամ որոշումներ չէր կայացնում, քանզի Իտալիան կա՛մ Մեծ Բրիտանիայի, կա՛մ Ռուսաստանի, կա՛մ էլ մի այլ երկրի կրնկի տակ էր:

Գրականություն

- Ահարոնյան Ա. 2001, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան: Քաղաքական օրագիր, Երևան, ԵՊՀ հրատ., 251 էջ:
- Գալոյան Գ. 1982, Պատմության քառուղիներում, Երևան, «Հայաստան», 462 էջ:
- Թորոսյան Շ.Ա. 2017, Ծովային ելքի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունում 1919-1920 թվականներին, Երևան, ԵՊՀ հրատ., 234 էջ:
- Խատիսեան Ա. 1968, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բ տպագրութիւն, «Համազգային» մշակութային ընկերակցութիւն», Պէյրութ, «Համազգային տպարան», 487 էջ:
- Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 275, ց. 5, գ. 120, թ. 155:
- Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.) 1972, Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան», 810 էջ:
- Մելիքյան Վ.Մ. 2018, Պայքար Բաքվի համար (1917 թ. - 1918 թ. ապրիլ), Երևան, ԵՊՀ հրատ., 224 էջ:
- Պետրոսյան Գ. 2006, Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 415 էջ:
- Պետրոսյան Գ.Հ. 2018, Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. հայոց անկախ պետականության կերտումը (1917 թ. փետրվար - 1918 թ. հունիս), Երևան, ԵՊՀ հրատ., 268 էջ:

⁴⁶ Туманян 2012, 354.

- Ցոլակյան Վ.Ֆ. 2004, Հայ-իտալական առևտրատնտեսական հարաբերությունների պատմությունից (1919-1920 թթ.), Երևան, Բանբեր Երևանի համալսարանի, N 2 (113), էջ 177-183:
- Альдрованди Марескотти Л. 1944, Дипломатическая война. Воспоминания и отрывки из дневника (1914-1919 гг.), пер. с итал. М.А. Дояни, ред. и вступ. статья Б.Е. Штейна, Москва, «Госполитиздат», 392 с.
- «Демократическое правительство» Грузии и английское командование 1928, Подгот. к печати С.Е. Сефом, предисл. М.Н. Покровского, Тифлис, «Заккнига», 94 с.
- Каземзаде Ф. 2010, Борьба за Закавказье (1917-1921). Серия «История Кавказа». Институт стратегических исследований Кавказа, Стокгольм, SA&CC Press®, 328 с.
- Месхидзе Дж. И. 2007, Итальянская интервенция в Грузию в 1919 г.: планы и обстоятельства, Санкт-Петербург, изд. Санкт-Петербургского государственного университета. Вестник Санкт-Петербургского университета, серия 2, вып. 1, март. история, N 1, с. 127-134.
- Муханов В.М. 2016, О несостоявшейся итальянской интервенции в Закавказье в 1919 г., Москва, ИМИ МГИМО МИД России, «Международная аналитика», N 4 (18), с. 84-91.
- Муханов В.М. 2017, Советизация Армении в 1920 г. и Серго Орджоникидзе, Москва, ИМИ МГИМО МИД России, «Международная аналитика», N 1 (19), с. 89-98.
- Нитти Ф. 1923, Европа без мира, Прага-Москва, «Петроград», 224 с.
- Ованнисян Р. 2007, Международные отношения Республики Армения 1918-1920 гг., пер. с англ. Г.Г. Махмурян, Ереван, «Тигран Мец», 912 с.
- Туманян М. 2012, Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг., Ереван, НАА РА, 473 с.
- Bülent Gökyay 2006, The Battle For Baku (May-September 1918): A Peculiar Episode in The History of the Caucasus, «Middle Eastern Studies», vol. 34, Issue 1, January 1998, p. 33-50, Published by Frank Cass, London: «The Turkish Yearbook», vol. XXV, 21-45.

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ (1918-1920 ԹԹ.)

Վանիկ Վիրաբյան

Ամփոփում

1919 թ. սկզբին Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական շրջաններում հարց բարձրացավ բրիտանական զորքերը հետ կանչել Անդրկովկասից: Կովկասում գտնվող իտալական ռազմաքաղաքական առաքելությունը 1919 թ. հուլիսի 31-ին հավաստեց, որ Իտալիայի թագավորական կառավարությունը ցանկանում է բարեկամական հարաբերություններ պահպանել ՀՀ-ի հետ և նպաստել միմյանց միջև առևտրական, ֆինանսական և արդյունաբերական հարաբերությունների զարգացմանը, Անդրկովկաս ուղարկել տեխնիկական խորհրդատուներ, եթե Հայաստանի Հանրապետության կառավարությունը դա ցանկանար՝ խոստանալով աջակցություն Փարիզի խաղաղության վեհաժողովում Հայկական հարցը քննարկելու ժամանակ: 1920 թ. գարնանը Հայաստան ժամանեց մեծ առաքելություն առևտրական հարաբերությունների հաստատման համար, որը գլխավորեց Էտտյուրե Կոնտին: Անդրկովկասյան հանրապետությունների դեֆակտո ճանաչումից հետո Իտալիան առաջին տերությունն էր, որ ռազմականի փոխարեն քաղաքական գործակալություն բացեց Մ. Գաբբայի գլխավորությամբ. Հայաստանում այդ գործակալությունը ներկայացրեց մարկիզ Ն. Դելի Ալբիցցին: Հարկ է արձանագրել, որ ռազմական առաքելությունը

1920 թ. մարտի 10-ից վերականգնվեց Հայաստանում Իտալիայի թագավորական գործակալության, որը զխավորեց գնդապետ Գաբբան:

Այդուհանդերձ, չնայած իտալական առաքելությունը մնաց Անդրկովկասում, Հայաստանը դրանից շատ չշահեց, և գործը էական տեղաշարժ չունեցավ. ընդամենը դեկլարատիվ հայտարարություններ եղան: Դրան նպաստեց նաև 1920 թ. Զ. Զոլիտտիի կաբինետում Իտալիայի արտգործնախարար, թուրքամետ Կառլո Սֆորցայի վարած քաղաքականությունը: Հայաստանը այդպես էլ չկարողացավ Իտալիայից զենք և ռազմամթերք ձեռք բերել, չնայած գնդապետ Մ. Գաբբան կարծես թե ցանկություն էր հայտնել Հայաստանին զենքով ու զինամթերքով օգնելու: Սֆորցան դեռ 1919 թ. հոկտեմբերի 30-ին հայտարարել էր, պատճառաբանել, որ Իտալիան զգուշանում է զենք տալ Հայաստանին Ադրբեջանի հետ նրա հակամարտության պատճառով՝ չկամենալով զրգռել մուսուլմաններին ընդդեմ Իտալիայի, և դա այն պարագայում, երբ թե՛ Ադրբեջանը և թե՛ Վրաստանը Իտալիայից ստացան ռազմամթերք և հանդերձանք:

Բանալի բառեր՝ Հայաստանի Հանրապետություն, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Անդրկովկաս, Մ. Գաբբա, բրիտանական զորքեր, իտալական էքսպեդիցիոն կորպուս:

К ВОПРОСУ О ДЕЯТЕЛЬНОСТИ ИТАЛЬЯНСКОГО ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОГО ПРЕДСТАВИТЕЛЬСТВА В ЗАКАВКАЗЬЕ И АРМЕНИИ (1918-1920 ГГ.)

Ваник Вирабян

Резюме

Уже в начале 1919 года в военно-политических регионах Великобритании был поднят вопрос о выводе британских войск с Кавказа. Итальянская военно-политическая миссия на Кавказе 31 июля 1919 г. выступила с заверениями в том, что королевское правительство Италии готово поддерживать дружеские отношения с правительством Республики Армения, спонсировать развитие торговых, финансовых и производственных отношений и намеревается оказать поддержку при обсуждении Армянского вопроса на предстоящих заседаниях Парижской ассамблеи мира.

Весной 1920 г. в Закавказье, а затем в Армению прибыла миссия по установлению торговых отношений, которую возглавил Эттюр Конте. После фактического признания закавказских республик Италия стала первой державой, открывшей политическое агентство вместо военного. Это агентство, возглавляемое М. Габбой, в Армении было представлено в лице маркиза Н. Дели Альбици. Следует отметить, что 10 марта 1920 г. военная миссия была реорганизована в Королевское итальянское агентство Армении во главе с полковником с М. Габбой. Хотя и итальянская миссия осталась в Закавказье, но все ее заявления в отношении Армении оказались декларативными. Этому способствовала в 1920 году политика, проводимая членом кабинета Дж. Джолитти, министром иностранных дел Италии, туркофилом Карло Сфорца. Армения не смогла закупить оружие и боеприпасы в Италии, хотя полковник М. Габба заявил о желании помочь Армении оружием. 30 октября 1919 года Сфорца выразил опасения, что Италия боится поставлять оружие и боеприпасы Армении из-за конфликта с Азербайджаном,

который, якобы, настроит мусульман против Италии, и это в том случае, когда Италия сделала военные поставки и в Азербайджан, и в Грузию.

Ключевые слова – Республика Армения, Великобритания, Италия, Закавказье, М. Габба, британские войска, итальянский экспедиционный корпус.

ON THE QUESTION OF THE ACTIVITIES OF THE ITALIAN MILITARY-POLITICAL REPRESENTATION IN THE TRANSCAUCASUS AND ARMENIA (1918-1920)

Vanik Virabyan

Abstract

Already in the beginning of 1919 in the military-political circles of Great Britain the issue of withdrawing British troops from the Caucasus was raised. Nevertheless, the Italian military-political mission in the Caucasus on July 31, 1919 stated, that the Royal Government of Italy wanted to maintain friendly relations with the Government of the Republic of Armenia, sponsor the development of trade, financial and industrial relations, and was ready to make all kinds of concessions, such as sending technical advisers to Transcaucasia. It promised the support of the Italian Kingdom during the discussion of the Armenian issue at the forthcoming sittings of the Paris Peace Assembly. In spring of 1920, after the de facto recognition of the Transcaucasian republics, a large mission arrived to Armenia to establish trade relations, headed by Ettore Conte. Italy was the first power to open a political agency instead of a military one. Led by M. Gabba, that agency in Armenia was represented by Marquis N. Delhi Albitsi. It should be noted that the military mission on March 10 of 1920 was reorganized the Royal Italian Agency in Armenia, headed by Colonel Gabba.

Nevertheless, although the Italian mission remained in the Caucasus, Armenia did not gain much from it, the case did not change significantly with only declarative statements. To that contributed the policy pursued by Italian Foreign Minister, Turkophile Carlo Sforza in J. Jolitti's cabinet in 1920. Armenia was not able to obtain weapons or ammunition from Italy, although Colonel Gabba seemed to have expressed a desire to help Armenia with weapons and ammunition. On October 30, 1919 Sforza was still retaliated by saying that Italy was afraid to give arms to Armenia because of its conflict with Azerbaijan, which allegedly incited Muslims against Italy, and this in case when both Azerbaijan and Georgia received military supplies from Italy.

Key words – Republic of Armenia, Italy, Great Britain, Transcaucasia, M. Gabba, British troops, Italian expeditionary corps.

**1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ 2020 Թ. ԱՐՅԱԽՅԱՆ
44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ**

Արարատ Հակոբյան

Պատմական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդասարյան պող. 24/4

Էլ. հասցե՝ ararathakobyan47@gmail.com

Հոդվածը ներկայացվել է՝ 24.11.2021, գրախոսվել է՝ 30.11.2021, ընդունվել է տպագրության 05.07.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.2-47

Ներածություն

Արցախյան վերջին՝ 2020 թ. 44-օրյա պատերազմը և դրա հետևանքով ԼՂՀ տարածքների մի զգալի մասի, այդ թվում՝ հայկական հնամենի Շուշի քաղաքի, Հադրութի, Աղդամի և այլ շրջանների կորուստը խորհելու, քաղաքական դասեր առնելու տեղիք է տալիս: Այս իրադարձություններից ուղիղ մեկ դար առաջ՝ 1920 թ. աշնանը տեղի ունեցած թուրք-հայկական 52-օրյա պատերազմը ևս, ցավոք, ավարտվեց Հայաստանի պարտությամբ: Այդ երկու՝ շատ կողմերով իրար նման, սակայն որոշ հանգամանքներով նաև տարբերվող պատերազմների միջև պատմական համեմատություն ու զուգահեռներ անցկացնելը, ինչպես նաև այս հարցի բարձրացումն ու քննությունը, կարծում ենք, հետաքրքիր, և հույժ կարևոր, անհրաժեշտ և ուսանելի են պատմական փորձի ու դասեր առնելու, հետագա ճիշտ քաղաքականություն ու ռազմավարություն մշակելու, հնարավոր սխալներից ու ձախողումներից խուսափելու առումով: Իհարկե, դեռևս հնարավոր չէ ամբողջապես ծանոթանալ արցախյան այս վերջին ձախողված պատերազմի՝ ռազմաքաղաքական ու դիվանագիտական գաղտնիք համարվող ծալքերին ու համապատասխան փաստավավերագրի հավաստի աղբյուրներին ու նյութերին: Բայց և այնպես, օգտագործելով հրապարակի վրա եղած և լրատվամիջոցներով շրջանառվող տեղեկատվական որոշ աղբյուրներ ու նյութեր, որոնք, իհարկե, միշտ չէ, որ արժանահավատ են ու վստահելի, փորձենք պատմահամեմատական զուգահեռներ ներկայացնել վերոնշյալ տվյալների վերաբերյալ:

Պատմահամեմատական զուգահեռներ պատերազմները սկսելու ժամանակագրության, հանգամանքների, թուրք-ադրբեջանական տանդեմի զավթողական նկրտումների մասին

Ուշագրավ է, որ, կարծես զարմանալի զուգահեռությամբ, 1920 թ. թուրք-հայկական և 2020 թ. Արցախյան պատերազմները սկսվել են ուղիղ մեկ դար ընդմիջումով, ընդամենը մեկ օրվա տարբերությամբ. թուրք-հայկականը՝ 1920 թ. **սեպտեմբերի 28-ին** քննական Թուրքիայի կողմից, Խորհրդային Ռուսաստանի

կառավարության գիտությամբ ու լուռ համաձայնությամբ, ինչպես նաև Արևմուտքի «դաշնակիցների» անտարբերության պայմաններում, առանց պաշտոնապես պատերազմ հայտարարելու և Արցախյանը՝ 2020 թ. **սեպտեմբերի 27-ին**, այս անգամ թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից (Թուրքիայի ակտիվ ներգրավվածությամբ), դարձյալ գործնականում անարձագանք (մեծ ու փոքր տերությունների, այդ թվում՝ ՌԴ-ի, միջազգային հեղինակավոր կառույցների) Արցախի Հանրապետության, ՀՀ-ի և համայն հայ ժողովրդի դեմ: Երկու դեպքում էլ պատերազմները սանձազերծել է հակառակորդը՝ առանց նախապես որևէ հայտարարություն անելու¹:

Եթե թուրք-հայկականը տևել է 52 օր և ավարտվել 1920 թ. դեկտեմբերի 2-3-ին Ալեքսանդրապոլում կնքված, սակայն երկու կողմից էլ վավերացում չստացած պայմանագրով, իսկ 1921 թ. Կարսի՝ առ ոչինչ ճանաչված թուրք-անդրկովկասյան պայմանագրով, ապա Արցախյանը՝ ընդամենը 44 օր, և դադարեցվել է ՌԴ-ի միջնորդությամբ՝ 2020 թ. նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը դիմակայող հայ-ադրբեջանական կողմերի միջև ստորագրված զինադադարի մասին 9-կետանոց եռակողմ հայտարարություն-արձանագրությամբ՝ «ամբողջական հրադադարի և ռազմական գործողությունների ավարտի մասին»²: Ի դեպ, հիշենք, որ Արցախյան առաջին՝ հաղթական պատերազմը ևս ընդհատվել է ՌԴ-ի միջնորդությամբ՝ կողմերի միջև 1994 թ. մայիսի 12-ին հրադադարի կայացման մասին բիշքեկյան արձանագրությամբ³: Հարկ է նշել, որ եթե, թուրք-հայկական պատերազմի վերջնամասում՝ նոյեմբերի սկզբներին, երկու կողմերի փոխադարձ դիմումների և զինադադարի երկու ծախողված փորձերից հետո, ի վերջո, նոյեմբերի 18-ին, առանց Խորհրդային Ռուսաստանի միջնորդության, Ալեքսանդրապոլում ՀՀ ն.գ. նախարար Ս. Արարատյանի և Թուրքիայի Արևելյան ճակատի հրամանատար Բ. Կարաբեքիր փաշայի միջև կնքվեց վերջնական զինադադար, որին հետևեց դեկտեմբերի 2-լույս 3-ին ստորագրված, բայց այդպես էլ, ինչպես արդեն ասվեց, անվավեր ճանաչված Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ապա հայ-ադրբեջանական արցախյան դիմակայությունում հրադադարը կայացավ ՌԴ-ի միջնորդությամբ, 2020 թ. նոյեմբերի 9-ին Մոսկվայում՝ 5 տարի ժամկետով, հետագայում երկարաձգման հնարավորությամբ, ռուսական շուրջ 2000-անոց խաղաղապահ զորակազմի, 90 զրահամեքենայի, 380 միավոր ավտոմոբիլների և հատուկ տեխնիկայի տեղակայումով՝ հատկապես Լաչինի՝ 5 կմ լայնությամբ միջանցքի երկայնքով, ինչպես նաև ռազմագերիների, պատանդների փոխանակման պայմանով և այլն⁴: Այս ամենով հանդերձ՝ դեռևս վաղ է խոսել կողմերի միջև հաշտության և խնդրի համապարփակ կարգավորման մասին, քանզի կան բազում

¹ Հակոբյան 2020, 108-117:

² Հայաստանի Հանրապետություն, 10 նոյեմբերի 2020:

³ Մինասյան 2013, 160-161:

⁴ ՀՀ կառավարության պաշտոնական կայք. gov.am/files/docs/4520.pdf, էջ 2-3, Հայաստանի Հանրապետություն, 10 նոյեմբերի 2020:

չկարգավորված հարցեր, այդ թվում՝ Արցախի հիմնախնդրի կարգավորման ու կարգավիճակի հստակեցման հարցերը:

Հարկ է արձանագրել, որ ինչպես 1920 թ. թուրք-հայկական պատերազմը, որը քեմալականները սանձազերծել էին ամենից առաջ Սևրի պայմանագիրը «պատռելու», ինչպես նաև հայկական նոր տարածքներ բռնազավթելու նպատակով, ապա Արցախյան պատերազմը, նույնպես խնամքով նախապատրաստելով ու սանձազերծելով, Թուրքիա (Էրդողան) – Ադրբեջան (Ալիև) տանդեմը նպատակ է հետապնդել՝ ա/ բռնի ուժով դատարկել հայրենի Արցախը հայությունից՝ բռնազավթել այն անվտանգության գոտի համարվող ազատագրված 7 շրջանների հետ միասին և անգամ հավակնություններ ունենալ Սյունիքի, Սևանա լճի, նույնիսկ Երևանի նկատմամբ⁵, բ/ Թուրքիան իր կրտսեր եղբորը՝ Ադրբեջանին, ցուցաբերած համակողմանի օգնությամբ հանդերձ, ըստ էության, լինելով դիմակայությանը (պատերազմին) մասնակից կողմ, փաստորեն, ՌԴ-ի շահերին հակադիր, հետամուտ է հայտնվելու կովկասյան տարածաշրջանում, իսկ այնուհետև՝ իրագործելու դեպի անդրկասպյան երկրներ՝ Միջին Ասիա և Սիբիր թափանցելու վաղուց ի վեր փայփայած՝ երիտթուրքերի պանթուրքական-պանթուրանական ռազմավարական հեռագնա պլանները: Ինչ վերաբերում է այդ դիմակայության խնդրում մեծ տերությունների ու միջազգային հանրության արձագանքներին, ինչպես եղել է մեր ողջ պատմության ընթացքում, դրանք «անատամ», հակամարտող կողմերին հավասարապես ուղղված՝ կրակը դադարեցնելու և բանակցությունները վերսկսելու կոչեր են եղել:

Արձանագրված արդյունքների տեսակետից՝ երկու պատերազմում էլ հայկական կողմը գործնականում պարտություն է կրել՝ տալով մարդկային ու տարածքային խոշոր կորուստներ: Թուրք-հայկական պատերազմի հետևանքով Հայաստանը կորցրեց Կարսի մարզը, Արդահանի և Սուրմալուի գավառները, Նախիջևանի երկրամասը՝ ավելի քան 26,2 հազ. քառ. կմ տարածքով, արդեն խորհրդայնացած Հայաստանը պարփակվեց ընդամենը 29,8 հազ. քառ. կմ տարածքի մեջ, ինչը ամրագրվեց Մոսկվայի՝ 1921 թ. մարտի 16-ի (իրականում՝ մարտի 18-ի) ռուս-թուրքական և դրա նմանակն ու կրկնօրինակը հանդիսացող ն.թ. հոկտեմբերի 13-ի թուրք-անդրկովկասյան պայմանագրերում⁶: Իսկ Արցախյանի ժամանակ շատ կասկածելի, նույնիսկ անակնկալ պայմաններում թշնամու ձեռքն անցան հնամենի Շուշի քաղաքը, Արցախի Հանրապետության անբաժա-

⁵ Եվ սա այն դեպքում, ինչպես դիպուկ բնութագրել է ԱԳՆ մամուլի խոսնակ Աննա Նաղդալյանը՝ արձագանքելով ալիկյան նման հավակնություններին, որոնց մասին Ադրբեջանի նախագահը հայտարարել է 2021 թ. ապրիլյան իր ճեպագրույցներից մեկում, «Հավելշտալի է, երբ Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ իր բնօրրանում տարածքային պահանջներ է ներկայացնում մի երկրի դեկավար, որի անվանումն անգամ Հարավային Կովկասի տարածքում ունի միայն մեկդարյա պատմություն՝ թե՛ քաղաքական և թե՛ անգամ աշխարհագրական առումներով: Մենք հասկանում ենք, որ Ադրբեջանում վերջին հարյուր տարում ընթացել և ընթանում է նոր ինքնության ձևավորման գործընթաց»։ ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք, <https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2021/04/15/spox-armenpress/10894>.

⁶ Акопян 2021, 162, 190.

նեղի մասը կազմող Հադրութի շրջանը, 1990-ական թթ. Արցախին հարակից ու անվտանգության գոտի համարվող, ազատագրված 5-6 այլ շրջանները: Այդպիսով, ավելի քան 12 հազ. քառ կմ տարածքից փաստացի ԼՂՀ հսկողության տակ թողնվեց 2,5 հազ. քառ կմ: Այդ ամենից զատ, հետագայում՝ մեկ երկու ամիս անց, վիճակն առավել բարդացավ նրանով, որ 2021 թ. հունվարի 11-ի դարձյալ եռակողմ, լրացուցիչ հայտարարությամբ⁷, տարածաշրջանում բոլոր տեսակի տնտեսական կամ տրանսպորտային կապերն ապաշրջափակելու և միջպետական սահմանները հստակեցնելու անվան տակ, արդեն մայիսի 12-ից ադրբեջանական զինուժը առաջ ընթանալով՝ սկսեց մուտք գործել ու անմիջականորեն սպառնալ անգամ ՀՀ օրգանական մասը կազմող՝ Սյունիքի, Վարդենիսի և այլ շրջանների սահմաններին ու տարածքներին:

Համեմատական զուգահեռներ Ռուսաստանի, միջազգային հանրության և Հայաստանի անմիջական հարևանների ցուցաբերած դիրքորոշումների վերաբերյալ

Պատմական զուգահեռներ կատարելու առումով առավել հետաքրքրական է Ռուսաստանի (այն ժամանակ՝ ՌՍԴԽՀ, ներկայումս՝ ՌԴ) դիրքորոշումը այդ երկու պատերազմների առնչությամբ: Եթե թուրք-հայկական պատերազմի ընթացքում համաշխարհային հեղափոխության կեղծ կարգախոսներով առաջնորդվող Վ. Լենինի գլխավորած խորհրդային կառավարությունը համակողմանի՝ զենք-զինամթերքով, ոսկով, դիվանագիտական աջակցությամբ օգնություն ցուցաբերեց քեմալականներին՝ խնդիր ունենալով թուրքերի միջոցով ջախջախել «Արևմուտքի իմպերիալիզմի գործակալ որակվող դաշնակցական Հայաստանին» և իբրև իրեն փայաբաժին՝ խորհրդայնացնել Ախուրյան-Արաքս գետերից դեպի հյուսիս-արևելք ընկած՝ իրեն «հասանելիք» Հայաստանի արևելյան հատվածը՝ ցամաքային կապ հաստատելով Թուրքիայի հետ, համաշխարհային հեղափոխության քարոզչության միջոցով խորհրդայնացնել բուլշևիկյան «կարմիր» կարգախոսներ կրող քեմալական Թուրքիան, միգուցե նաև ամբողջ Արևելքը, ապա, Արցախյան պատերազմում, ՌԴ-ն և նրա նախագահ Վ. Պուտինը ԵԱՀԿ Մինսկի խմբի մյուս երկու՝ ԱՄՆ և Ֆրանսիա, համանախագահող երկրների գրեթե անտարբերության պայմաններում, սեփական շահերին հետամուտ, հանդես բերեց նախաձեռնողականություն, կողմերի միջև դիվանագիտական հավասարակշռող մոտեցում ու չեզոքություն, կարելի է ասել՝ հավասարապես զենք-զինամթերք վաճառելով երկու կողմին էլ:

Այս կապակցությամբ մտահոգություն է առաջացնում այն հանգամանքը, որ, ինչպես հայտնի է՝ 1992 թ. մայիսի 15-ին ԱՊՀ 6 երկրների, այդ թվում՝ ՌԴ-ի հետ Տաշքենդում ստորագրված «Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի» (ԿԱՊ) (1999 թ. վերանվանվեց ՀԱՊԿ) 4-րդ հոդվածը սահմանում էր. «Եթե ԿԱՊ-ի

⁷ Հայաստանի Հանրապետություն, 11 հունվարի 2021:

անդամ պետություններից որևէ մեկը ենթարկվի ագրեսիայի որևէ պետության կամ պետությունների խմբի կողմից, ապա դա կդիտվի որպես ագրեսիա անվտանգության պայմանագրի մասնակից բոլոր պետությունների դեմ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով»⁸։ Ավելին, Հայաստանի անվտանգության ապահովման համար, որպես լրացուցիչ երաշխիք, 1997 թ. օգոստոսի 29-ին Մոսկվայում, պետական ամենաբարձր մակարդակով ՌԴ-ի և ՀՀ-ի միջև ստորագրվեցին «Բարեկամության, համագործակցության և **փոխադարձ օգնության** (ընդգծումը՝ Ա.Հ.) մասին» պայմանագիր, համատեղ հռչակագիր⁹։ Ինչպես նկատում ենք, Հայաստանը դաշնակցային կրկնակի կապ է ունեցել ՌԴ-ի հետ, սակայն Հայաստանին, Արցախին ու հայ ժողովրդին պատուհասած 44-օրյա պատերազմական արհավիրքի ընթացքում Ռուսաստանը, եթե նկատի չառնենք երկու կողմին էլ ուղղված՝ ռազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ կոչերն ու հայտարարությունները, կարելի է ասել՝ էական օգնություն չցուցաբերեց իր ռազմավարական դաշնակցին։ Ավելորդ է խոսել ՀԱՊԿ մյուս անդամ-երկրների մասին, որոնք նույնպես առատ զենք-զինամթերք էին վաճառում իրենց «դաշնակցի» հակառակորդ կողմին։ Ավելին, այդ պատերազմի ընթացքում Հայաստանը ՌԴ-ից չստացավ անգամ բարոյական աջակցություն, և այս խնդրում պետք է տեսնել Հայաստանի ներկայիս գործող իշխանությունների մեղքի բաժինը։ Նկատենք, որ Արցախյան պատերազմի ընթացքում Հայաստանի դաշնակից Ռուսաստանի՝ ստանձնած դաշնակցային պարտավորությամբ հայկական կողմին օգնություն չցուցաբերելը որոշ քաղաքագետներ փորձում են բացատրել նրանով, որ մարտական գործողություններն ընթացել են միջազգայնորեն չճանաչված ԼՂՀ-ի տարածքում։ Բայց կարելի է որպես հակադարձ փաստարկ բերել այն մասին, որ նոյեմբերի 9-ի հայտարարությունից հետո, երբ, սկսած 2021 թ. գարնանից, «հայադրբեջանական պետական սահմանների ճշգրտման ու հստակեցման» անվան տակ, Ադրբեջանի զինուժը մի քանի կիլոմետր ներխուժեց ՀՀ տարածք՝ սպառնալով նաև ՀՀ սահմաններին ու հանրապետության անմիջական անվտանգությանը (Սյունիքի, Վարդենիսի, Երասխավանի և այլ հատվածներում), այս պարագայում ևս ՌԴ կառավարությունը դարձյալ գործնականում չարձագանքեց և սահմանափակվեց խաղաղարար ուժեր տեղակայելով այս անգամ նաև Հայաստանի սահմանների «վիճելի» համարվող հատվածներում։ Ինքնին հասկանալի է՝ իր հեռագնա նպատակներով։ Սա ևս կարելի է արձանագրել որպես հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող հերթական մտահոգիչ փաստ։

Հայաստանի Առաջին հանրապետությանը մինչև 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և բուն պատերազմի ընթացքում ռազմաքաղաքական ու դաշնակցային պայմանագիր չի ունեցել որևէ երկրի ու պետության հետ, թեև ջանքեր է գործադրել համագործակցելու Արևմուտքի, անմիջական հարևաններ Վրաս-

⁸ Հայաստանի Հանրապետություն, 26 մայիսի 1992:

⁹ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1996-1998 թթ. 2002, 409-414:

տանի և Իրանի, ինչպես նաև կամավորական բանակի (Կոչակ, Դենիկին, Վրանգել) և անգամ Խորհրդային Ռուսաստանի կառավարության հետ (Գ. Չիչերին - Լ. Շանթ), սակայն գործնականում՝ անարդյունք:

Եթե 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում բուլղարիկյան Ռուսաստանը զինեց ու ֆինանսավորեց քեմալական Թուրքիային, ինչը մեծապես հեշտացրեց թուրքերի հաղթանակը Հայաստանի, նաև Հունաստանի դեմ, ապա 2020 թ. պատերազմում ՌԴ-ն, լինելով հանդերձ ՀՀ-ի ռազմավարական դաշնակիցը, փորձեց վարել ընդամենը միջնորդի, հակամարտող կողմերին հաշտեցնելու, հավասարակշռելու քաղաքականություն: Ի դեպ, փաստենք, որ 1920 թ. սեպտեմբերի 30-ին, այսինքն՝ պատերազմից 2 օր անց Ռուսաստանի և Ադրբեջանի միջև Մոսկվայում կնքվել է ռազմատնտեսական պայմանագիր, որը ուժի մեջ է մտել ստորագրման իսկ պահից: Այն ստորագրել էին ՌՍԴԻՀ ա.գ. Ժողկոմ Գ. Չիչերինը և ԱՍԽՀ ա.գ. Ժողկոմ Բ. Շահթախթինսկին¹⁰:

Ինչ վերաբերում է հարևան երկրների՝ Վրաստանի ու Իրանի դիրքորոշումներին, ապա թե՛ 1920 թ. և թե՛ 2020 թ. պատերազմների ժամանակ նրանց կառավարությունները պաշտոնական հայտարարություններով վարել են չմիջամտելու, չեզոքության քաղաքականություն, սակայն, Վրաստանի չեզոքությունը 2020 թ. կրել է կողմնակալ բնույթ, և վրաց իշխանությունները ադրբեջանաթուրքական կողմին օգային ու ցամաքային հաղորդակցության ճանապարհ են տվել Ադրբեջանին: Իսկ 1920 թ. Հայաստանի դեմ պատերազմի պատրաստվող Թուրքիայի հանդեպ դիրքորոշման հարցում փաստական տվյալներ կան, որ Վրաստանի կառավարությունը Անգորային խոստացել էր չեզոքություն պահպանել, որի դիմաց Արդահանի գավառից որպես հատուցում ստանալ որոշ հողատարածք¹¹: Մինչդեռ Իրանի ցուցաբերած դիրքորոշման հարցում կարելի է արձանագրել այն իրողությունը, որ հայ Ժողովրդին պատուհասած և՛ 1920 թ., և՛ 2020 թ. պատերազմների ժամանակ հայ Ժողովրդի հազարամյակների հարևանը Հայաստանի հանդեպ հանդես է բերել բարյացակամ լոյալություն ու դրական չեզոքություն, բայց ոչ գործնական օգնություն:

Հայոց վաղնջական Կարս և Շուշի քաղաք-ամրոցների պատմական ճակատագրերի համեմատական փորձ

1920 թ. հոկտեմբերի 30-ին, մի քանի ժամվա ընթացքում **Կարս** քաղաք-ամրոցի անկման¹² և 2020 թ. նոյեմբերի սկզբին, որոշ չստուգված տվյալներով և շատերի համար տակավին անհասկանալի հանգամանքներում, գրեթե առանց դիմադրության՝ **Շուշին** թշնամուն հանձնելու հանգամանքների միջև ևս առկա են որոշակի նմանություններ:

¹⁰ Документы внешней политики СССР 1959, 222-223.

¹¹ Արծրունի 2002, 291:

¹² Եազըճեան 2007, 4:

Անշուշտ, անբեկանելի է Կարսի և Շուշիի՝ պատմականորեն հայկական լինելու հարցը: Նշենք, որ Ֆ. Էնգելսը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի առիթով Կարսի ամրոցը համարում էր «**Հայաստանի պատվարը** (ընդգծումը՝ Ա.Հ.)»¹³: Մարքսիզմի հիմնադիր Կ. Մարքսը, որը հետաքրքրվում էր ռուս-թուրքական հարաբերություններով, կարծես կրկնելով (շարունակելով) Պատմահայր Մ. Խորենացու միտքը արգավանդ ու բերրի Շիրակի մասին (խոսքը Արևմտյան Շիրակի, այն է՝ Շուրագյալի կամ Կարսի բարձրավանդակի մասին է), այն համարում էր «**Հայաստանի ամենահարուստ և առավել յուրացված շրջաններից մեկը**»¹⁴:

Ի տարբերություն մարքսիզմի հիմնադիրներ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի արտահայտած հայանպաստ և անկողմնակալ մտքերի՝ խորհրդային պետության հիմնադիր ու առաջնորդ Վ.Ի. Լենինը միանգամայն այլ՝ թուրքանպաստ մոտեցում է հանդես բերել՝ Կարսը թուրքական քաղաք համարելով¹⁵: Ինչ վերաբերում է Շուշիի պատմական պատկանելության խնդրին, ապա, ոչ միայն խորհրդային, այլև ժամանակակից Ռուսաստանի քաղաքական ղեկավար շրջանակներում, նույնիսկ ամենաբարձր մակարդակով վիճելի է համարվում Շուշիի բնիկ հայկական լինելու հարցը:

Այնուամենայնիվ, Կարսի անկման հանգամանքները պատմավավերագրական ու հուշագիր գրականության մեջ բավականաչափ բացահայտված են: Այսպես, բանակում ու բնակչության շրջանում բոլշևիկների վարած հակակառավարական ու հակապատերազմական քարոզչության ու այլ հանգամանքների հետևանքով նրանց մեջ ծայր առան զանգվածային դասալքությունն ու բարոյալքությունը, որոնց պատճառով, ի դեպ, Կարսի ամրոցի մոտակայքում ինքնասպանություն գործեցին երիտասարդ գնդապետ Հ. Մազմանյանը և էլի մի քանի սպաներ: Բացի այդ, այն ժամանակ իրենց հրամանատարական բարձրության վրա չգտնվեցին մի շարք գեներալներ, այդ թվում՝ Կարսի ամրոցի կայազորի հրամանատար գեներալ Դ. Բեկ-Փիրումյանը, Կարսի ենթաճակատի հրամանատար, գեներալ Հ. Հովսեփյանը և ուրիշներ:

Շուշին հանձնելու հանգամանքները, սակայն, դեռևս մնում են չպարզաբանված: Այդուամենայնիվ, որոշ փաստական տվյալներ հիմք են տալիս պնդելու, որ Արցախի բանակը փորձել է պաշտպանել Շուշին, և խոսք չի կարող լինել զորքի դասալքության մասին, զինվորներն ու սպայակազմը գտնվել ու գործել են իրենց մարտական դիրքերում, սակայն, հավանաբար, Հայաստանի իշխանությունների և բարձր հրամանատարության թողտվության ու անփութության կամ էլ արտաքին ուժերի ռազմաքաղաքական ու դիվանագիտական ազդեցության պատճառով, փաստորեն, առանց լուրջ պաշտպանության Շուշին տրվել է Ադրբեջանին:

¹³ Маркс и Энгельс 1958, 611.

¹⁴ Маркс и Энгельс 1957, 117.

¹⁵ Геноцид армян 2003, 336.

Կողմերի ռազմուժերի համեմատության և հնարավոր զինադադարի հարցեր

Անդրադառնալով երկու պատերազմներում կողմերի ռազմուժերի համադրությանը՝ պետք է արձանագրել, որ 1920 թ. պատերազմում ՀՀ-ն իր 40 հազարանոց (կանոնավոր և կամավոր) բանակով հիմնականում դիմակայում էր Քյազիմ Կարաբեքիր փաշայի գլխավորած թուրքական բանակին՝ քրդական ավազակախմբերի ներգրավմամբ: Ի դեպ, փաստենք, որ հայկական զորքի մի մասը տեղեկաված էր Ղազախի, Վարդենիսի, Սյունիքի ու Նախիջևանի հատվածների երկարությամբ, որպեսզի կանխեր բոլշևիկյան Կարմիր բանակի հնարավոր մուտքը դեպի ՀՀ տարածք: Արցախյան պատերազմի ընթացքում Արցախի պաշտպանական բանակը հարկադրված մարտնչում էր Ադրբեջանի դեմ, որին համակողմանիորեն օգնում էր ոչ միայն Թուրքիան, այլև վերջինիս կողմից պատերազմի մեջ ներքաշված արաբ, աֆղան զինյալ վարձկան-ահաբեկիչները, պակիստանյան հատուկ ջոկատայինները՝ թուրքական «բայրաքթար» և իսրայելական անօդաչու ինքնաթիռներ, ժամանակակից այլ զինտեխնիկա օգտագործելով: Հիշենք, որ Արցախյան պատերազմին նախորդել էր 2020 թ. ամռանը թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժությունը, որից հետո մեծ քանակությամբ զինտեխնիկա էր մնացել Ադրբեջանում¹⁶: Ռուսական աղբյուրների տվյալներով, արցախյան բանակի դեմ կռվող օտարերկրյա զինյալ վարձկանների թիվը հասել է 2000-ի¹⁷: Հիմքեր կան պնդելու, որ Արցախի դեմ կռվող, փաստորեն, ադրբեջանաթուրքական բանակը հայկականի նկատմամբ ունեցել է 2-3 անգամ զինուժի և ռազմական տեխնիկայի գերակշռություն:

Երկու պատերազմների նախնական զինադադարի հնարավոր կայացման վերաբերյալ կարելի է հետևյալ համեմատական դիտարկումն անել: 1920 թ. հոկտեմբերի 14-ին հայկական բանակը Կարսի ճակատում՝ Բեգլի Ահմեդի, Նոր Սելիմի և Մերդենեկի ուղղությամբ հակահարձակման փորձ կատարեց, որը, սակայն, ավարտվեց ճախողումով ու, փաստորեն, դարձավ Կարսի անկման նախադրուղ: Այս պարագայում կարող է հարց առաջանալ՝ գնահատելով ռազմաքաղաքական իրավիճակը, Հայաստանի արտաքին մեկուսացվածությունը, բանակի մարտական ցածր ոգին ու անմարտունակությունը, դասալքությունը, հրամանատարների անբավարար արհեստավարժությունն ու նվիրվածությունը և նման հանգամանքներ՝ հնարավոր չէ՞ր արդյոք այն ժամանակ գնալ թուրքերի հետ զինադադարի ու հաշտության՝ ակնկալելով համեմատաբար քիչ կորուստներ: Կարծում ենք, որ թուրքերը, եթե, անգամ Կարսը չգրաված, համաձայնեին ու գնային հայկական կողմի հետ զինադադարի ու հաշտության, ապա, անկասկած, նրանք կդնեին ԹԱՄԺ-ի 1920 թ. հունվարի 28-ի ընդունած «Ազգային ուխտ»-ով ծրագրված արևելահայ տարածքների մի մասի ևս բռնազավթման պահանջը՝

¹⁶ Ղարիբյան, Գասպարյան 2021, 6-7:

¹⁷ Ղարիբյան, Գասպարյան 2021, 17:

Կարսի մարզով, Արդահանով՝ մինչև Արփաչայ (Ախուրյան) – Երասխ (Արաքս) գետերի հնահունը, Հայաստանի զինաթափություն և այլն¹⁸, կամ էլ՝ առնվազն 1918 թ. մարտի 3-ի՝ Բրեստ-Լիտովսկի ու հունիսի 4-ի՝ Բաթումի պայմանագրերով նախատեսված սահմանը: Ավելին, քեմալականների առաջնորդ Մ. Քեմալ փաշայի խոսքով ասած՝ «հայկական բանակի և հայկական պետության ոչնչացումը»¹⁹:

Պատմական էքսկուրսի ու համեմատության առումով նմանօրինակ դատողություն կարելի է անել ուղիղ 100 տարի հետո սանձազերծված պատերազմի հետ կապված. արդյոք հնարավոր չէ՞ր՝ ա/ տարիների ընթացքում, ինչպես հարկն է, պատրաստվել պատերազմին՝ հաստատ համոզված լինելով, որ թշնամին վաղ թե ուշ կփորձի դիմել զենքի ուժին, բ/ հնարավոր չէ՞ր ավելի վաղ, անգամ մինչև պատերազմի սկսվելը գնալ գործնական զինադադարի և չունենալ ամենացավալին՝ հազարավոր մարդկային, ինչպես նաև տարածքների՝ Շուշիի, Հաղորդի, Աղդամի և մյուս շրջանների կորուստներ: Մինչդեռ հակառակորդը պատերազմին նախապատրաստվել էր տասնամյակների ընթացքում:

Պատերազմներում Հայաստանի իշխանությունների և զինվորականության պատասխանատվությունը և նվիրվածությունը

Արցախյան պատերազմի առաջին իսկ օրը՝ սեպտեմբերի 27-ին, Արցախի Հանրապետության նախագահը և ՀՀ վարչապետը (հիշենք նաև 2019 թ. օգոստոսի 23-ին Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում վերջինիս արտասանած հայտնի պարտավորվածության մասին՝ «Արցախը Հայաստան է և վերջ»)՝²⁰ հայտարարեցին ռազմական դրություն և ընդհանուր զորահավաք²¹: Բայց դժվար է միանշանակ գնահատական տալ այդ խնդիրների հետևողական իրագործման վերաբերյալ:

Պետք է նշել, որ մեկ դար առաջ՝ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ, Առաջին հանրապետության ՀՅԴ բյուրո-կառավարությունը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ. սեպտեմբերի 30-ից ամբողջ հանրապետությունում հայտարարվեց ռազմական դրություն, հայտարարություններ արվեցին ընդհանուր զորակոչի, ռազմադաշտային դատարանների ստեղծման (դավաճանության ու դասալքության դեպքում մահապատժի ենթարկելու համար), ռազմապաշտպանական ռեսուրսների ու հանրային ուժերի կենտրոնացման վերաբերյալ՝ համապատասխան օրենքներով ու միջոցառումներով²²:

Ընդգծենք, որ Առաջին հանրապետության բյուրո-կառավարությունը, պատերազմի ընթացքում և դրան նախորդած ժամանակաշրջանում, իր նորաստեղծ բանակի հետ միասին՝ «Հայրենիքը վտանգի մեջ է», «Դեպի՝ ճակատ, ընկերներ»,

¹⁸ Սաֆրաստյան 2019, 57, 60-61:

¹⁹ Кемаль 1943, 314.

²⁰ ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք. <https://armenpress.am/arm/news/985770/arm/>.

²¹ ՀՀ Կառավարության պաշտոնական կայք. Հայ-ադրբեջանական պատերազմ-(2020), hy.wikipedia.org/wiki/.

²² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 243, թ. 1, ֆ. 280, ց. 2, գ. 36, թ. 1:

«Ամեն ինչ ֆրոնտի համար: Ամեն ճիգ հաղթելու համար»²³ կարգախոսներով, ամենայն նվիրումով ջանքեր է թափել Ժողովրդի անվտանգությունը և երկրի սահմանները պաշտպանելու ուղղությամբ, բայց ՀՀ վարչապետ Ս. Վրացյանի պատկերավոր խոսքերով ասած՝ Հայաստանը հայտնվել էր «բլիզնիկյան մուրճի և թուրքական սալի միջև»²⁴, և հասկանալի է, որ դատապարտված էր պարտության:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ երկու պատերազմների ընթացքում էլ անբավարար էր, երբեմն էլ վստահություն չէր ներշնչում նրանց պաշտոնական տեղեկատվությունը:

Նախ նշենք, որ 1920 թ. ապատեղեկատվության մեծ դպրոց անցած թուրքական պաշտոնական «Անադոլու» մամլո գործակալությունը, որը գործում է նաև մեր ժամանակներում, կեղծ ու զրպարտչական լուրեր էր տարածում Հայաստանի մասին: Ինչպես իրենց հուշերում պատմում են ՀՀ երկրորդ վարչապետ Ալ. Խատիսյանը և ՀՀ ԱԳՆ պետքարտուղար Հ. Տեր-Հակոբյանը, «Անադոլուն» այդ պատիր լուրերի կողքին զետեղել էր նաև մի հաղորդագրություն, թե իբր պատերազմը սանձազերծել են հայերը և անգամ նպատակ են ունեցել տիրել Էրզրումին²⁵: Այնինչ փաստերը ցույց են տալիս, որ, ընդհակառակը, թուրք միլիների (ազգայնականների) բարձրագույն ղեկավարությունը տակավին 1920 թ. սկզբներից խնամքով մշակում ու նախապատրաստում էր Հայաստանի դեմ պատերազմի պլանը: Վավերագիր փաստերը վկայում են, որ Հայաստանի դեմ պատերազմը ծրագրել է հենց Մ. Քեմալ փաշան, որը դեռ 1920 թ. փետրվարին (5-ին) էր հրահանգել Արևելյան ճակատում 15-րդ կորպուսի հրամանատար Ք. Կարաբեքիր փաշային զորակոչ անել (սեֆերբերլիք) և սկսել զորքերի կենտրոնացումը՝ թիկունքից կովկասյան արգելքը (այսինքն՝ Հայաստանը՝ Ա.Հ.) ոչնչացնելու համար²⁶: Սակայն եղանակային (ձմեռային) պայմանների պատճառով այն հետաձգվել էր: Հայաստանի վրա Թուրքիայի հարձակման հաջորդ մտադրությունը եղել է մայիս ամսին: Բայց այս անգամ էլ թուրքերի հարձակումը հետաձգվել է ՌՍԴԽՀ ա.գ. կոմիսար Չիչերինի՝ ԹԱՄԺ-ի նախագահ Մ. Քեմալ փաշային ուղղած 1920 թ. հունիսի 3-ի նամակի պատճառով. նա առաջարկում էր իր միջնորդությունը և խորհուրդ էր տալիս առայժմ հայերի դեմ ռազմական գործողություններ չձեռնարկել²⁷:

Նույն կերպ, կարելի է ասել, մեր օրերում թուրք-ադրբեջանական քարոզչամեքենան արցախյան և շատ այլ հարցերի շուրջ ընդգծված հակահայկական, ստահող լուրեր է տարածում, ինչը տեղեկատվական պատերազմի դաշտում

²³ ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 180, թ. 1-2, Վրացյան 1993, 498:

²⁴ Վրացյան 1993, 471, 487:

²⁵ Խատիսյան 1968, 268-269, Տեր-Յակոբյան 1921, 82-84:

²⁶ Кемаль 1934, 313.

²⁷ Документы внешней политики СССР 1958, 555.

շատերին է հայտնի: Հայտնի է նաև, որ Արցախյան պատերազմի ողջ ընթացքում Ադրբեջանում արգելափակված են եղել գրեթե բոլոր սոցիալական մեդիաները²⁸:

1920 թ. հայկական լրատվամիջոցներն ու հատկապես թերթերը (պաշտոնական ու ոչ պաշտոնական՝ «Հառաջ», «Ժողովուրդ», «Դիրքերում», «Ռազմիկ» և այլն), պատերազմի ու ռազմաճակատներում տիրող օպերատիվ վիճակի մասին ամեն օր, «Հայրենիքը վտանգի մեջ է» նշանաբանով, իրենց համարների առաջին էջերում գետեղում էին Հայաստանի հեռագրական գործակալության, կառավարության, զին. նախարարության և այլ իրազեկ մարմինների տեղեկությունները պատերազմի ընթացքի, Կարսի, Սուրմալուի ռազմաճակատների մարտական ու պաշտպանական գործողությունների, ճակատին օժանդակելու, դիվանագիտական և այլ քայլերի մասին: Սակայն այդ ամենով հանդերձ, 1920 թ. պատերազմում ՀՀ-ն ծանր պարտություն կրեց, որը պետք է բացատրել, առաջին հերթին, բանակում ծայր առած զանգվածային դասալքությամբ, բանակի բարձր հրամանատարության պաշտոնական դիրքի չարաշահումներով, ոչ պատշաճ պրոֆեսիոնալիզմով և այլն:

Ինչ խոսք, հայկական բանակի պարտությունը Արցախյան պատերազմում ավելի բազմաշերտ է՝ ներքին խնդիրներից զատ, եղել են արտաքին քաղաքականության բացթողումներ, կառավարող շրջանակների թույլ տված սխալներ ու ձախողումներ:

Հայ հանրության սոցիալ-հոգեբանական ընկալումների համեմատություն

Հետաքրքիր են հայ հանրության **սոցիալ-հոգեբանական** ընկալումները այս երկու պատերազմի ընթացքում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռևս 1920 թ. հայ ժողովրդի մի մեծ զանգվածի շրջանում առկա է եղել այն մոլորյալ մտայնությունը, թե՛ «թուրքը որչափ ալ առաջ գայ», ռուսը կգա և «նրան ետ կը շարտի»²⁹: Արցախյան պատերազմի ընթացքում ևս շատ հայերի մեջ արմատացած էր այդ հոգեբանությունը, չնայած ՌԴ-ի հանես բերած չեզոք կեցվածքին:

Թուրքերի հետ մերձենալու բոլշևիկների, մեղմ ասած, ոչ հայանպաստ քաղաքականության առնչությամբ բոլշևիկ Բ. Բոլյանը գրում էր. «Ժողովուրդը համոզված էր, որ թուրքերը եկել են Խորհրդային Ռուսաստանի գիտությամբ, որպեսզի տապալեն դաշնակցական կառավարությունը և Հայաստանի միջոցով կապ հաստատեն Ռուսաստանի հետ»³⁰: Այստեղից էլ՝ հայրենիքը պաշտպանելու հարցում տեղ գտած անտարբերությունն ու զինվորականության զանգվածային դասալքությունը: Մինչդեռ 2020 թ. պատերազմի հետ կապված՝ կարող ենք արձանագրել՝ հազիվ թե կարելի է խոսել հայ հանրության մեջ տարածված նման երևույթի առկայության մասին:

²⁸ ՀՀ Կառավարության պաշտոնական կայք. Հայ-ադրբեջանական պատերազմ-/2020/, hy.wikipedia.org/wiki/

²⁹ Տէր-Յակոբեան 1921, 74:

³⁰ Борьян 1929, 136.

Մեր համոզմամբ՝ ներկայումս հայ հանրության գիտակցության մեջ հիմնականում հաղթահարվել է ռուսի և թուրքի բարեկամ կամ առավել ևս՝ դաշնակից լինելու գաղափարը, չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանը և Թուրքիան մեր տարածաշրջանում՝ դարձյալ իրենց շահերին համընկնող մերձեցման փորձեր են անում: Ինչ վերաբերում է Թուրքիա-Ադրբեջան տանդեմին, ապա Թուրքիայի անսքող միջամտությունը Արցախյան այս վերջին պատերազմին և հետապնդած պանթուրանական նկրտումները համայն հայությանը վերջնականորեն համոզեցին, որ Թուրքիայի՝ օսմանյան թուրք, թե Ադրբեջանի՝ կովկասյան թուրք կամ թաթար լինելու միջև չկա որևէ տարբերություն. երկուսն էլ, ըստ էության, հայ ժողովրդի թշնամի՝ նույն թուրքն են:

Իսկապես՝ այն ժամանակ թուրքերի հարձակումը Հայաստանի վրա, ըստ ամենայնի, կատարվել է Խորհրդային Ռուսաստանի գիտությամբ ու համաձայնությամբ: Արցախի ձախողված պատերազմի պատճառներն ու հանգամանքները վերլուծելիս կարող է հարց ծագել. արդյոք հիմքեր կա՞ն պնդելու, թե այս պատերազմն էլ է տեղի ունեցել Ռուսաստանի գիտությամբ ու լուռ համաձայնությամբ: Այս հարցում ձեռնպահ մնալով՝ կարծում ենք, որ ժամանակը կհաստատի կամ կհերքի դրա իրական լինելը: Ռուսաստանի ներկայիս դիրքորոշման առնչությամբ նշենք, որ ուշադրության է արժանի քաղաքագետ Ա. Շահբազյանի տարողունակ ու քաղաքական ծայրեր պարունակող հետևյալ հարցադրումը՝ աշխարհաքաղաքական նոր իրողությունների տիրույթում «Ռուսաստանը մեզ կդիտի կա՞մ որպես **գործընկեր**, կա՞մ **առևտրի առարկա**, կա՞մ **հակառակորդ**»³¹: Այս համատեքստում, մենք հակված ենք կարծելու, որ ՌԴ-ն, բնականաբար, իր շահերի թելադրանքով՝ Հայաստանը Արցախի հետ միասին, առայժմ ավելի շատ դիտում է որպես «**քաղաքական առևտրի առարկա**»:

Եզրակացություններ

1920 թ. սեպտեմբերի 28-ին, առանց հայտարարություն անելու, քեմալական Թուրքիան պատերազմ սանձազերծեց հայ ժողովրդի դեմ: Այդ օրը վաղ առավոտյան թուրքական զորքերը, Արևելյան ռազմաճակատի հրամանատար Ք. Կարաբեքիր փաշայի գլխավորությամբ, մի քանի ուղղությամբ հարձակվեցին Հայաստանի վրա, որով էլ սկսվեց 52-օրյա պատերազմը: Ներքին ու արտաքին աննպաստ հանգամանքների հետևանքով Հայաստանը ծանր պարտություն կրեց և հարկադրված կնքեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որը, սակայն, իրավական որևէ ուժ չունեցավ:

Հայոց անկախության, պետականության և ՀՀ-ի ու Արցախի հայության անվտանգության համար դարձյալ արտաքին սպառնալիքը չի վերացել, և այն ռազմաքաղաքական առումով շարունակում է մնալ օրակարգում:

³¹ Շահբազյան 2021, 16:

Այս ամենով հանդերձ, երբ խոսք է բացվում այս մեկ դարում հայ ժողովրդին պատուհասած այդ երկու դառնադետ և կորստաբեր պատերազմների մասին, դա ամենևին չի նշանակում, թե Հայաստանն ու հայ ժողովուրդը, այդ ընթացքում միայն պարտություններ է կրել: Լավագույն օրինակը 1992-1994 թթ. Արցախյան առաջին հաղթական պատերազմն է, որի ամենավառ դրսևորումներից էր 1992 թ. մայիսի 8-ին Հայոց հաղթական ոգու խորհրդանիշներից մեկը հանդիսացող՝ Շուշիի ազատագրումը: Կարծում ենք՝ ոչ հեռու ապագայում, կազմակերպվելով ու համախմբվելով, կարող ենք նոր հաղթանակներ արձանագրել:

Գրականություն

- Արծրունի Վ. 2002, Հայ-տաճկական պատերազմը, հայ սպայությունը, Շատախ, Երևան, «Մուղնի», 456 էջ:
- Եազըճեան Գ. 2007, Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները, Երևան, հեղինակային հրատ., 115 էջ:
- Խաչատրյան Կ. 1997, ՀՍԽՀ սահմանների հարցը 1921 թ. խորհրդա-թուրքական հարաբերությունների ոլորտում, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, N 3, էջ 41:
- Խատիսեան Ալ. 1968, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պեյրոթ, «Համազգային», 487 էջ:
- Խուրշուդյան Լ. 2002, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, ԵՊՀ հրատ., 352 էջ:
- ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք, <https://armenpress.am/arm/news/985770/arm/>. (ներբեռնման օրը՝ 18.06.2020):
- ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք, Հայ-ադրբեջանական պատերազմ-2020-<https://hy.wikipedia.org/wiki/>. (ներբեռնման օրը՝ 18.06.2020):
- ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք, <https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2021/04/15/spox-armenpress/10894>. (ներբեռնման օրը՝ 15.06.2020):
- ՀՀ Կառավարության պաշտոնական կայք. Հայ-ադրբեջանական պատերազմ-(2020), hy.wikipedia.org/wiki/. (ներբեռնման օրը՝ 18.06.2020):
- ՀՀ Կառավարության պաշտոնական կայք. gov.am/files/docs/4520.pdf, էջ 2-3:
- ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 243, թ. 1, ֆ. 280, ց. 2, գ. 36, թ. 1:
- Հակոբյան Ա. 2020, 1920 թ. թուրք-հայկական պատերազմի սկսման օրվա հարցի շուրջ (պատերազմի 100-ամյակի առիթով), Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, Երևան, N 1, էջ 108-117:
- Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 4047, ց. 1, գ. 180, թ. 1-2:
- Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, Երևան, «Գիտություն», 455 էջ:
- Հայաստանի Հանրապետություն, Երևան, 10 նոյեմբերի 2020:
- Հայաստանի Հանրապետություն, Երևան, 11 հունվարի 2021:
- Հայաստանի Հանրապետություն, Երևան, 26 մայիսի 1992:
- Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1996-1998 թթ. 2002, Երևան, «Տիգրան Մեծ», 467 էջ:
- Ղարիբյան Ա., Գասպարյան Ռ. 2021, Արցախյան 44-օրյա պատերազմի վերաբերյալ ռուսական պաշտոնական արձագանքները, Հայագիտության հարցեր, Երևան, N 2 (23), էջ 6-7:
- Մինասյան Էդ. 2013, Հայաստանի Երրորդ հանրապետության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 624 էջ:

- Սաֆրաստյան Ռ. 2019, Մուստաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), Երևան, «Տիր», 140 էջ:
- Վրացյան Ս. 1993, Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 704 էջ:
- Տէր-Յակոբեան Յ. 1921, Հայաստանի վերջին աղէտը, Կ. Պոլիս, տպ. Մ. Տէր-Սահակեան, 126 էջ:
- Շահբազյան Ա. 2021, Ռուսաստանը և մենք, Դրօշակ, «Նամե» տպագրատուն, Երևան, N 8 (1654), օգոստոս, էջ 16:
- Акопян А. 2021, Московский и Карсский договоры в судьбе армянского народа, Ереван, «Гитутюн», 199 с.
- Геноцид армян (документы и комментарий) 2003, сост. проф. Ю.Г. Барсегов, т. 2, ч. 1, Москва, «Гардарики», 911 с.
- Борьян Б.А. 1929, Армения, международная дипломатия и СССР, ч. 2, Москва-Ленинград, «Госполитиздат», 434 с.
- Документы внешней политики СССР 1958, т. 2, Москва, «Госполитиздат», 803 с.
- Документы внешней политики СССР 1959, т. 3, Москва, «Госполитиздат», 723 с.
- Кемаль М. 1934, Путь новой Турции, т. 3, Москва, «Госполитиздат», 488 с.
- Маркс К. и Энгельс Ф. 1957, Сочинения, т. 9, Москва, «Госполитиздат», 630 с.
- Маркс К. и Энгельс Ф. 1958, Сочинения, т. 11, Москва, «Госполитиздат», 652 с.

1920 Թ. ԹՈՒՐԻՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ 2020 Թ. ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԶՈՒԳԱՇԵՌՆԵՐ

Արարատ Հակոբյան

Ամփոփում

Ուղիղ մեկդարյա ընդմիջումով Հայաստանը և հայ ժողովուրդը երկու ծանրագույն պարտություն կրեցին: Այդ պատերազմների պատմահամեմատական քննությունը ցույց է տալիս, որ երկու դեպքում էլ եղել է ռազմաքաղաքական գործընթացների, դեպքերի ու իրադարձությունների բավական մեծ նմանություն, քանզի Հայաստանն ու հայ ժողովուրդը փորձել են դիմակայել նույն հավակնություններն ունեցող ու ռազմավարական նպատակներ հետապնդող, իրար ցեղակից թուրք-ադրբեջանական տանդեմին: Մյուս կողմից՝ ժամանակաշրջանի և արտաքին ու ներքին բնույթի հանգամանքների փոփոխությամբ պայմանավորված, այդ պատերազմների միջև, բնականաբար, կան նաև տարբերություններ:

Արցախյան այս վերջին պատերազմի թողած հետևանքները՝ հազարավոր մարդկային զոհերն ու մեծաթիվ վիրավորները, վեհաշուք Շուշիի և հայրենի մնացյալ տարածքների կորուստները, Արցախի ինքնիշխանության սահմանափակումները Հայաստանում, Արցախի Հանրապետությունում և Սփյուռքում բարոյահոգեբանական բարդ ու ծանր մթնոլորտ ստեղծեցին: Այդ իրավիճակում Հայաստանի ու համայն հայության առջև կանգնած հրամայականն է՝ մեկտեղել համազգային ու համապետական ջանքերը, ապաքինել թշնամու հասցրած վերքերը, փորձել հաղթահարել երկրին ու ժողովրդին հասցված տարածքային, նյութական ու հոգևոր կորուստները, վերականգնել բանակը և ապահովել հայրենիքի անվտանգությունը:

Բանալի բառեր՝ Հայաստան, Արցախի Հանրապետություն, պատերազմ, Թուրքիա, Ադրբեջան, Շուշի, զուգահեռներ:

ИСТОРИКО-СРАВНИТЕЛЬНЫЕ ПАРАЛЛЕЛИ МЕЖДУ АРМЯНО-ТУРЕЦКОЙ ВОЙНОЙ 1920 ГОДА И 44-ДНЕВНОЙ АРЦАХСКОЙ ВОЙНОЙ 2020 ГОДА

Արարատ Ակոբյան

Резюме

За одно столетие Армения и армянский народ потерпели два тяжелых поражения. Историко-сравнительный анализ этих войн выявляет схожесть военно-политических процессов и событий, поскольку Армения и армянский народ как в 1920, так и в 2020 г. пытались противостоять турецко-азербайджанскому тан-дему. Однако, в силу изменения ряда внешних и внутренних обстоятельств, между этими войнами, конечно, есть и различия.

44-дневная война завершилась ограничением суверенитета Арцаха и соз-давшейся тяжелой морально-психологической атмосферой в Армении, в Нагор-ном Карабахе и в диаспоре и т.д. В сложившейся ситуации важнейшим импера-тивом для Армении и всех армян является объединение национальных и обще-государственных усилий для преодоления нанесенных стране и народу челове-ческих, территориальных, материальных и моральных потерь.

Ключевые слова – Армения, НКР, война, Турция, Азербайджан, Шуши, па-раллели.

AN ATTEMPT TO HOLD HISTORICAL PARALLELS BETWEEN THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE 44-DAY ARTSAKH WAR OF 2020

Ararat Hakobyan

Abstract

With a break of exactly one century Armenia and the Armenian people suffered two heavy defeats. A historical and comparative analysis of these wars shows that in both cases there was a great similarity in military-political processes and events since Armenia and the Armenian people tried to resist the Turkish-Azerbaijani tandem, having similar ambitions and pursuing the same strategic goals.

On the other hand, due to the change in the external and internal circumstances of the period between these wars, of course, there were differences. As for the consequences of the recent, in fact, third Artsakh war, the bloody wounds inflicted by it are still fresh: with thousands of victims and numerous wounded, the loss of majestic Shushi and the rest of the territory of the Motherland, the restriction of the sovereignty of Artsakh and the creation of a difficult moral and psychological atmosphere in Armenia, in Nagorno-Karabakh and in Diaspora, etc. In the current situation, the most important imperative for Armenia and all Armenians is to unite national and state efforts, heal the wounds inflicted by the enemy and, overcoming the human, territorial, material, and spiritual losses inflicted on the country and people, look ahead.

Key words – Armenia, NKR, war, Turkey, Azerbaijan, Shushi, parallels.

ВЫМЫШЛЕННЫЙ «АЗЕРБАЙДЖАНСКИЙ» СТИЛЬ В ПЕРСИДСКОЙ ПОЭЗИИ

Гарник Геворгян

Кандидат филологических наук

Кафедра иранистики ЕГУ

РА, Ереван, ул. Алека Манукяна 1

Эл. адрес: garnikgevorgian@gmail.com

Статья представлена 07.12.2021, рецензирована 14.12.2021, принята к публикации 05.07.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.2-62

Вступление

В истории низамиведения много рифов и водоворотов, одним из которых является принадлежность творчества великого персидского поэта XII века к иракскому стилю персидской классической поэзии. Вопреки истинным историко-культурным реалиям, утвержденным в этот период в литературном пространстве персоязычного мира, вводятся в научный обиход искусственные, вымышленные теории, которые не только противоречат духу низамиведения, но и порой искажают облик литературоведения и науки в целом.

Стиль творчества Н. Ганджави был тесно связан с художественным образом его эпохи и являл собой сумму средств выражений, отражающих не только эстетическую концепцию поэта, но и всего периода персидской литературы XII в.

Как указывает В.Н. Перетц в книге «Краткий очерк методологии истории русской литературы»: «Стиль, живописующий душевные переживания, тончайшие оттенки настроений, первоначально создаваемый индивидуальным творчеством поэта, вместе с тем является характерным показателем поэтического мышления и восприятия эпох. Всякая эпоха есть эпоха господства определенного стиля. Однородность, общность идей, настроений и переживаний влечет за собою сходство и даже однородность в манере выражения мира чувствований и идей. Поэтический стиль эпохи проникает все произведения ее, как бы объединяя их в одно целое. Стиль обращает литературу данного периода и данной группы – как бы в создание одного коллективного лица с определенной в каждом случае физиономией...»¹.

¹ Перетц 1922, 14-15.

Стилевые особенности классической персидской литературы

В персидской классической литературе традиционно различают три стиля – хорасанский, иракский и индийский. Корни исследования и начальной классификации эпох стилей средневековой поэзии восходят к периоду Сефевидов (XVI в.).

В XVIII веке основоположники литературного течения «Базгашт» (Возвращение) (Сейед Али Моштаг Эсфахани, Мирза Абдолвахаб Нешат Эсфахани, Фатхали Хан Саба, Махмуд Хан Саба Кашани, Соруш Эсфахани и другие) с целью избавления от орнаментальности индийского стиля и выхода из кризиса в поэзии, начавшегося после А. Джами (XV в.), в литературных кружках («Базгашт», «Нешат», «Хакан») изучали особенности стиля поэзии домонгольского периода и старались восстановить традиции хорасанского и иракского стилей².

В XIX веке представитель известной литературной семьи Саба – Надим Баши (Ходжасте) в Мешхеде своим ученикам преподавал особенности хорасанского стиля. Отец М. Малек-ош-Шоара Бахара, основоположника иранской стилистики, Малек-ош-Шоара Собури был учеником Надим Баши и поддерживал тесную связь с семьей Саба. Склонность Бахара к иранской стилистике поэзии унаследована им от отца³.

В XX в. в сферу исследования стилей персидской классической поэзии в Иране большой вклад внесли М.Т. Бахар – «Учение о стилях или история персидской литературы» в трех томах, М.Дж. Махджуб – «Хорасанский стиль в персидской поэзии», П. Шоджаи – «Хорасанский стиль в персидской поэзии», Н. Таджробекар – «Стиль поэзии в период правления династии Каджаров», С. Шамиса – «Стилистика», М. Голамреза – «Стилистика в персидской поэзии», а С. Нафиси в классификации стилей иранской поэзии использовал европейские методы стилистики.

Европейских литературоведов больше интересовал индийский стиль, а советские востоковеды занимались всеми тремя стилями – хорасанским, иракским и индийским.

Вышеупомянутые стили разделяются по идеологическим, лингвистическим и тематическим принципам. Географический аспект вторичен и носит весьма условный характер. Хорасанским или же иракским называются стили лишь потому, что их основатели были выходцами из восточных или западных районов Ирана.

² Комиссаров 1999, 12-13, 15, 22, Мовсисян, Шехоян 1989, 5-6.

³ Šamisa 1993, 142-143.

Хорасанский стиль, распространенный в персидской поэзии с IX до XI века, характеризуется простой рифмой, употреблением исконно иранских, архаичных слов, отрицанием в лексике слов арабского происхождения. Приверженцы этого стиля воспевали светские темы, славное прошлое Ирана, храбрость древнеиранских царей и богатырей, в особенности ярко выраженный эпический дух этих времен.

По мнению М.-Н. О. Османова, в поэзии IX-X вв. изобретательность полностью преобладает над выразительностью, доминирует гиперболизация, величественная простота, определенную роль играет симметричность, а монументальность является господствующей стилиевой категорией и т.д.⁴

Последователями этого стиля считаются Рудаки, К. Табризи, Ш. Балхи, Н. Хосроу, Онсори, Манучехри, Ф. Систани т.д.

Но начиная с XI в. «величественная простота» поэзии уступает место сложным выражениям и высокопарной лелсике. Усложнение стиля наблюдается уже в стихотворениях газневидских и сельджукских поэтов, особенно в поэзии Онсори, Анвари и З. Фаряби. Начинается процесс перехода от хорасанского стиля к иракскому, который заканчивается в XII веке, когда центр персоязычной литературной жизни из Хорасана переместился в западные и северо-западные провинции Ирана, то есть в Персидский (Аджамский) Ирак, Атропатену и Ширван.

А.Н. Болдырев зарождение иракского стиля связывает с именем Анвари⁵.

С переходом с востока на запад в поэзии усиливаются философская, богословско-кораническая тематика и мистические мотивы, умножается арабская лексика, поэты избегают простоты и ясности стиля.

Основоположниками иракского стиля являются Н. Ганджави и Х. Ширвани на севере (Ширван), Дж. Эсфахани, К. Эсфахани в Исфахане, а Аттар – в Нишапуре. В иракском стиле творили такие классики, как Саади, Моулана, Хафез и другие.

По мнению литературоведа З.Н. Ворожейкиной, наименее изученным из трех стилей остается до настоящего времени иракский. В специальных работах можно найти лишь отдельные высказывания об иракском стиле⁶. Она отмечает, что ею рассмотрена «лишь грань иракского стиля, и за рамками темы остались многие, значительно более масштабные и важные литературные явления. Это эпоха суфийской поэзии. Ф. Аттар был современником исфаханских поэтов (Дж. Эсфахани, К. Эсфахани). Эпоха иракского стиля – это не-

⁴ Османов 1974, 62-90.

⁵ Болдырев 1982, 12-15.

⁶ Ворожейкина 1984, 243.

бывалый расцвет романтической поэзии, достигшей вершины литературного искусства у другого выдающегося современника наших поэтов – Н. Ганджави.

Вторая половина XII – начало XIII в. были также временем быстрого развития художественной прозы на новоперсидском языке, становления новых жанров занимательного светского чтения. В ходу у читателей были в ту пору приключенческие романы (дастаны)»⁷.

Произведения основоположников и выходцев из северо-запада иранского мира – Ширвана ещё окончательно не отошли от хорасанского стиля и продолжали воспевать героический и патриотический дух того периода, выражая огромную любовь к родине – Ирану:

Вся вселенная – лишь тело, а Иран – душа.

Говорю об этом смело, правдою дыша.

Дух земли – Иран. И ныне – внеми каждый слух:

Пусть прекрасно тело мира – выше тела дух.

(перевод В. Державина)

Объяснение этого явления четко дано у М. Бахара, подчеркивающего, что между хорасанским и иракским стилями существует прямая преемственность, иначе говоря, иракский стиль является развитием хорасанского в новых исторических условиях.

Вымышленный «азербайджанский» стиль как основа азербайджанизации творчества Н. Ганджави

Вышеупомянутая классификация персидской классической поэзии и в Иране, и за рубежом была общепринятой в науке до 30-ых гг. XX века, когда усилиями советских иранистов было введено в обиход понятие «азербайджанской школы» в персидской поэзии⁸ как основа для включения Низами в рамки азербайджанской поэзии.

В России и СССР до конца 1930-х гг. идентификация Низами как персидского поэта также не вызывала сомнений⁹. В. Шнирельман отмечает, что Низами был объявлен азербайджанским поэтом лишь в 1938 году¹⁰.

Согласно А.О. Тамазишвили, азербайджанизация Низами была приурочена к 800-летию юбилею поэта¹¹. Он отмечает, что первоначально эта идея возникла у первого секретаря ЦК КП(б) Азербайджанской ССР М. Багирова. Однако в конце 1930-ых годов решение этого вопроса выходило за рамки

⁷ Ворожейкина 1984, 244-245.

⁸ Бертельс 1962, 74.

⁹ Гомоз 2011, 113-120.

¹⁰ Шнирельман 2003, 133.

¹¹ Тамазишвили 2001, 185-186.

республиканского уровня, поскольку попытка азербайджанизации Низами могла быть расценена союзной властью как националистическая, к тому же этому могли противостоять ряд учёных, прежде всего из Ленинграда, где была сильная востоковедческая школа¹².

Окончательную точку в вопросе поставил И. Сталин, заявив в беседе с А. Фадеевым и П. Павленко о тюркской самоидентификации в стихах Низами¹³. Сталин отмечал, что он не должен принадлежать персидской литературе, несмотря на язык его стихов¹⁴.

После этого советские ученые, получив «яркую и глубокую по своей научной правоте» установку, стали заниматься глубоким исследованием творчества Низами и его эпохи. Вопреки своим убеждениям, под давлением идеологизированных и партийных научных деятелей Е.Э. Бертельс в «Правде», в начале февраля 1939 года, опубликовал фактически заказную статью «Великий азербайджанский поэт Низами»¹⁵. «Впервые он констатировал существование «азербайджанской школы» поэзии, выделяющейся из всей средневековой литературы, написанной на языке фарси»¹⁶.

В 1939 г. Е.Э. Бертельсом в журнале «Литературный Азербайджан» был опубликован цикл статей о творчестве Низами¹⁷, вслед за этим вышла в свет его книга «Великий азербайджанский поэт Низами»¹⁸. Интересно то, что в своей первой публикации (1923 г.), посвящённой Низами, известный востоковед его считал персидским поэтом.

До Е. Бертельса Ю. Марр был единственным востоковедом, на которого могли опираться сторонники азербайджанизации великого персидского поэта. Ученый еще в 1929 г. утверждал: «Низами является своим для Кавказа, в частности для той этнической группировки, которая до последнего времени сохранила персидскую традицию в своей литературе, то есть для Азербайджана, где гянджинский поэт все-таки более в почете, чем в Персии»¹⁹.

По мнению А. Тамашишвили, причисление Низами к азербайджанским поэтам, а его творчества – к достижениям азербайджанской литературы стало «главным, революционным для отечественной науки результатом этой «юбилейной» кампании»²⁰.

¹² Шнирельман 2003, 133.

¹³ Чпқўпўшў 1989, 4:

¹⁴ Правда, 03.04.1939.

¹⁵ Правда, 03.02.1939.

¹⁶ Бертельс 1962, 74-75.

¹⁷ Бертельс 1939, N 3, 60-69, N 5, 43-53, N 6, 16-29, 1940, N 2, 44-55.

¹⁸ Бертельс 1940, 16-17.

¹⁹ Араслы 1939, XIX.

²⁰ Тамашишвили 2004, 173-199.

Произведения Низами спешно стали переводить на азербайджанский язык. «Но невозможно без улыбки отметить тот факт, что из Баку в Душанбе была отправлена телеграмма с просьбой направить таджикского переводчика для консультирования азербайджанских ученых в работе над переводами «собственного национального» поэта»²¹.

А вот 16 апреля «Правда» опубликовала стихотворное послание Сталину от интеллигенции Баку (авторы: С. Вургун, Р. Рза, С. Рустам), с благодарностью за «возврат» Низами Азербайджану:

Владели нашим Низами, певца присвоив, чужаки,
Но гнезда, свитые певцом в сердцах признательных, крепки.
Ты нам вернул его стихи, его величье возвратил.
Бессмертным словом ты о нем страницы мира озарил²².

22 сентября 1947 г. «Правда» публикует статью «Низами» заместителя председателя Союза писателей СССР Н. Тихонова: «Известно, что Низами писал свои поэмы на фарсиском языке. Этот факт был не раз использован врагами азербайджанского народа, буржуазными историками, иранскими националистами, чтобы провозгласить Низами иранским поэтом, будто бы не имеющим ничего общего с его родиной – Азербайджаном. Но эта наглая лож никого не обманет»²³.

В 1947 году заместитель председателя Госплана Азербайджанской ССР (с 1970 года – председатель Совета министров АзССР) А. Ибрагимов так характеризовал роль Сталина в развитии низамиведения: «Вопрос об изучении творчества Низами в широком масштабе в смысле исследования многогранного и богатого его наследия, его эпохи был начат учеными Советского Союза в 1939 г. после того, как наш великий вождь товарищ Сталин – знаток истории вообще, истории народов Советского Союза в частности, знаток национального вопроса в беседе с писателями говорил о Низами, цитировал его произведения. После этого ученые Советского Союза, получив яркую и глубокую по своей научной правоте установку, развернули исключительно большую работу в области исследования творчества Низами и его эпохи»²⁴.

На сентябрьских юбилейных мероприятиях 1947 года в Баку генеральный секретарь Союза писателей СССР А.А. Фадеев был еще более категоричен: «Если бы не было советской власти, самого величайшего гения азербайджан-

²¹ Чпқўпўшў 1989, 4:

²² Вургун, Рза, Рустам 1939, 3-12.

²³ Правда, 22.09.1947.

²⁴ Ибрагимов 1947, 134.

ского народа, гения всего человечества Низами не знал бы даже сам азербайджанский народ»²⁵.

По этому поводу В.А. Шнирельман пишет, что известный советский иранист Е.Э. Бертельс, следуя сталинской политике о создании так называемой «азербайджанской нации и литературы»²⁶, в классификации стилей классической персидской поэзии намеренно подчеркивал этнический и региональный принципы, которые никак не соответствовали историческим реалиям. Вслед за ним отдельные исследователи в СССР, в Европе и США стали различать в классической поэзии четыре стиля, добавив так называемый «азербайджанский», вопреки традиционно принятым трем основным литературным стилям – хорасанский, иракский и индийский. Сначала этот стиль Бертельсом был назван «транскавказским», а чешский иранист Ян Рыпка предпочитал называть его закавказской (тебризской, ширванской или арранской) школой.

Иранский ученый А. Рияхи выражает уверенность в том, что в отличие от того, что предполагают исследователи советской эпохи и их последователи, антология «Нозхат аль-Маджалес» доказывает, что в иранской провинции Азербайджан (южнее Аракса), а также в Арране и Ширване (севернее Аракса) существовала общая иранская культура, основанная на едином варианте среднеперсидского языка (пехлеви) и арранском диалекте фарси²⁷.

Экспорт «новаторства» советской иранистики в Иран

К сожалению, начиная с 70-ых годов XX века тенденция «азербайджанизации» персидских средневековых поэтов и создания так называемого «азербайджанского» стиля как почвы присвоения части иранской культуры из страны Советов и Азербайджанской ССР была экспортирована в Иран.

В Иране тоже нашлись последователи нового ревизионистского подхода и классификации стилей персидской поэзии. Известный иранский литературовед С. Шамиса полагает, что теорию иранских стилистов старшего поколения следует забыть и предоставить возможность новому поколению исследователей классифицировать стили средневековой поэзии. По его мнению, воспитание нового поколения стилистов персидской поэзии займет около полувека²⁸.

Говоря о труде М. Бахара, С. Шамиса высоко оценивает роль автора в иранском литературоведении и стилистике. Вместе с тем он указывает и на

²⁵ Бакинский рабочий, 23.09.194.

²⁶ Шнирельман 2003, 133.

²⁷ Šahrbaraz (http://shahrbaraz.blogspot.am/2010/10/blog-post_23.html).

²⁸ Šamisa 1993, 71-72.

недостатки в книге первого иранского стилиста. В частности, согласно С. Шамиса, М. Бахару не известны европейские методы классификации стилей поэзии, и он в большинстве случаев опирается на лингвистические принципы в процессе классификаций стихотворений. Однако при этом С. Шамиса подчеркивает, что Бахар, в силу своего таланта, не имея представления о принципах западной науки, сделал важный шаг, направив иранскую стилистику в научное русло. С. Шамиса сожалеет, что кроме позитивных штрихов, Бахар в то же время нанес и урон иранской стилистике, сконцентрировавшись лишь на особенностях хорасанского стиля, и не уделил внимание иракскому и индийскому стилям персидской поэзии. До сих пор иранская стилистика оставалась на этом уровне²⁹.

Приступив к новой классификации стилей средневековой поэзии, С. Шамиса отметил, что в персидской классической поэзии существуют и промежуточные стили. По его мнению, одним из них является «азербайджанский» стиль, зародившийся на северо-западе Ирана и занимающий нишу между хорасанским и иракским³⁰.

Изменение стиля – процесс долговременный и постепенный, но при всем нашем уважении к известному литературоведу наших дней у нас возникает естественный вопрос – под названием Азербайджан какую северо-западную провинцию он имеет в виду – исконный Азарбайджан (Атурпатакан/Атропатена) или территорию исторического Ширвана и Аррана, которые только в начале XX в. стали называться Азербайджаном? Если ученый имеет в виду Ширван или Арран XII в., где творили Н. Ганджави, Х. Ширвани и другие персоязычные поэты, приемлемее будет этот «промежуточный стиль» называть *ширванским* или *арранским*, а вовсе не азербайджанским. Название «азербайджанский» вместо *ширванского* для XII в. не только является анахронизмом с точки зрения историографии, но и служит благодатной почвой для возможных научных манипуляций.

Помимо этого, остается необоснованным, как именно так называемый промежуточный период может считаться полноценным стилем наравне с иракским и хорасанским? С другой стороны, если литературовед обосновывает, что переход от хорасанского к иракскому стилю – это длительный процесс, то по каким критериям данный промежуточный период квалифицируется как независимый стиль? Тогда между хорасанским и так называемым «азербайджанским» стилями, исходя из той же логики, должен быть еще один *про-*

²⁹ Šamisa 1993, 142-148.

³⁰ Šamisa 1993, 71-72.

межточный стиль. Если каждый переходный период, согласно С. Шамиса, будет считаться отдельным стилем, то это даст возможность говорить о наличии бесконечных периодов и стилей, что неприемлемо для академической науки.

Промежуточный период, как бы он не назывался, являвшийся составной частью определенных культурных эпох, не только не может характеризовать одну определенную эпоху в целом, но и не имеет доминирующих черт в выделенном промежутке времени. На это указывает выделение так называемого «азербайджанского» стиля. Придуманные черты «азербайджанского» стиля характерны либо для иракского стиля либо для хорасанского. По-другому и не могло быть. То есть это иракский стиль, который в начале своего существования еще не совсем отмежевался от хорасанского стиля, на базе которого и возник. В свою очередь петербургский ученый А. Тамимдари, опираясь на мнение С. Шамиса, утверждает о наличии так называемого промежуточного «азербайджанского» стиля и пишет, что в XII в. существовали три поэтических стиля – хорасанский, иракский и азербайджанский (средний между хорасанским и иракским)³¹.

Получается, что сталинско-бертельсевская «гипотеза» снова возвратилась на родину (Петербург) и опирается на новое «обоснование», как ни странно, на этот раз «исходящее» уже из Ирана.

Иранская исследовательница С. Беренджиан в книге «Литературные произведения на парси и азари в Иранском Азербайджане в 20-ом веке»³² известных поэтов К. Табризи, Х. Ширвани, Н. Ганджави и т.д., являющихся выходцами из северо-западных персидских провинций Азербайджана, Аррана и Ширвана, называет представителями так называемого «азербайджанского» *стиля*, игнорируя или путая исторические и географические реалии.

Фактически, понятие «азербайджанский» *стиль* – это литературоведческая реальность сравнительно нового времени³³, до 1991 года не присутствовавшая в иранском литературоведении. Классические иранские литературоведы указанных поэтов исконного Азербайджана, Аррана и Ширвана считают представителями иракского *стиля*³⁴, а во всех исследованиях иранских литературоведов до указанного периода К. Табризи считается поэтом хорасанского *стиля*, а Х. Ширвани и Н. Ганджави – представителями иракского *стиля*.

С. Беренджиан, однако, признаёт, что среднеиранский язык азари до монгольского нашествия был распространен в иранской провинции Азербай-

³¹ Тамимдари 2007, 84.

³² Berenjian 2006, 32.

³³ Šahrbaraz (http://shahrbaraz.blogspot.com/2010/10/blog-post_23.html).

³⁴ Danešpažuh (<http://www.ibna.ir/fa/doc/report/101378/>).

джан и только в XIX веке ошибочно был отождествлен с тюркским говором этого края, но затем так называемый «азербайджанский» стиль она сравнивает с хорасанским стилем и сталинско-бертельсевичской выдумкой. К указанным уже ранее особенностям она добавляет «христианский символизм и образительность». Но надо отметить, что «христианский символизм и образительность» характерны лишь для ряда стихов Х. Ширвани, так как мать поэта была несторианкой. С другой стороны, использование христианских символов особенно в одной из касыд Хакани фактически преследовало цель привлечения внимания византийского царевича – А. Комнина, который высвободил поэта из тюрьмы. С другой стороны, христианская тематика – та же богословская, которая свойственна иракскому стилю. Если использование имён Марии и Иисуса можно рассматривать в качестве «убедительных доводов», то несколько своих касыд Хакани посвятил путешествию в Мекку и Медину, а в ряде других прославлял Пророка ислама и Каабу, или страстно желал отправиться в путешествие в Хорасан, что не может считаться признаком особого стиля³⁵. В поэзии Низами, М. Бейлакани и других персоязычных поэтов Ширвана и Аррана нет такого множества «христианских символов», чтобы, не имея представления о них, нельзя было бы не понять их стихов. Не случайно, что выдающийся иранист Владимир Минорский, посвятив пространную статью вышеупомянутой касыде средневекового ширванского поэта, не считает его представителем вымышленного «азербайджанского» стиля³⁶.

В 1997 году А. Закери в «Кейхан-е Фарханги» опубликовал статью под заглавием «Азербайджанский стиль в персидской поэзии»³⁷. Автор, вопреки всем исследованиям прошлого и даже самому себе, стиль Низами и Хакани характеризует как «азербайджанский». Примечательно, что вместе с тем А. Закери признает: «Эти поэты себя считают основоположниками иракского стиля, и до сих пор никто из них свой стиль не назвал *азербайджанским*». Однако даже после этого автор не отступает со своих позиций и «азербайджанский» стиль называет одним из направлений иракского стиля.

Только литературные критерии определяют сущность литературного периода

Точно такие же доводы приводит Дж. Мамедов в своей ревизионистской статье «О некоторых спорных вопросах относительно родины и национальности Н. Ганджави», утверждая, что: «Когда в XII в. сельджуки расширили свой

³⁵ Šahrbaraz (http://shahrbaraz.blogspot.com/2010/10/blog-post_23.html).

³⁶ Minorsky 1945, 550-578.

³⁷ Zakeri 1997, 31-34.

контроль в регионе, их наместники, фактически автономные местные принцы, поощряли персидскую письменность. К середине XII в. много важных поэтов обладали и пользовались их патронажем, а там разработался отчетливый «азербайджанский» стиль поэзии на персидском языке, который контрастировал с хорасанским или восточным стилем в своей риторической сложности, прогрессивном использовании метафоры технической терминологии и в изображении христианства»³⁸.

Надо отметить, что для научного изложения и объяснения реалий средневековой персидской поэзии следует оперировать едиными чисто литературоведческими и в более широком смысле культурологическими критериями для определения периодов и стилей в развитии литературы. Однако из вышеизложенного становится очевидным, что в процессе перехода от хорасанского стиля к иракскому рядом исследователей специально был привнесен географический и исторический аспект.

Ни в коем случае нельзя литературное явление в рамках конкретного периода объяснять не с литературоведческих позиций и выделить период в истории литературы без учета совокупности характерных именно для него литературных явлений, слагающихся в определенную литературную систему, как поступают ряд нынешних теоретиков классификаций стилей классической персидской поэзии. На значение единого и только литературоведческого критерия в периодизации и конструировании истории литературы указывали в свое время известные теоретики литературы Р. Уэллек и О. Уоррен: «Литературный критерий – и только он – определяет существо и границы литературного периода»³⁹. По их мнению, период есть отрезок времени, который задает тон определенной системе литературных норм и образцов и типу художественной условности, возникновение которых, равно как и распространение, расщепление, интеграция и исчезновение, может быть прослежено...». Именно в фиксации «смены одной системы норм – другой» и заключается «история периода».

В свою очередь «система норм», или «некоторое единство», «может быть только величиной относительной», то есть реализуется наиболее полно лишь в определенный период. Если бы это была величина абсолютная, то каждый период был бы обособлен и изолирован от соседних китайской стеной, и не могло быть и речи о развитии культуры или литературы. «Поэтому в каждом периоде непременно присутствуют и пережитки предшествовавшей системы норм, и зародыши будущей»⁴⁰.

³⁸ Мамедов 2010, 107-117.

³⁹ Уэллек и Уоррен 1978, 282.

⁴⁰ Уэллек и Уоррен 1978, 282-284.

Заключение

Опираясь на строки самих поэтов той эпохи о стиле своих стихотворений, на научные подходы большинства литературоведов к процессу классификаций стилей классической персидской поэзии и оставляя в стороне ошибочные, а часто и антинаучные мнения, несомненно, можно констатировать, что именно исфаханские и ширванские поэты XII в. являются основоположниками иракского стиля.

Литература

- Чоққинյան Ա. 1989, Մշակութային կողմնություն, Գրական թերթ, Երևան, նոյեմբերի 23, էջ 4:
Մոսկովյան Հ., Շեխոյան Լ. 1989, Ժամանակակից պարսից գրականության պատմության ակնարկներ, Երևան, Ապոլոնիա, 331 էջ:
- Араслы Г., Ариф М., Рафили М. 1939, Поэзия азербайджанского народа. Антология азербайджанской поэзии, Москва, «Гослитиздат», 428 с.
- Бажан М., Доклад на собрании интеллигенции города Киева 2 апреля 1939 года, Правда, 03.04.1939, N 92.
- Бертельс Е.Э. 1962, Избранные труды, Низами и Физули, т. 2, Москва, «Восточная литература», 554 с.
- Бертельс Е.Э., Великий азербайджанский поэт Низами, Правда, 03.02.1939, N 33.
- Бертельс Е.Э., Низами Гянджеви, «Литературный Азербайджан», 1939, N 3, с. 60-69, N 5, с. 43-53, N 6, с. 16-29, 1940, N 2, с. 44-55.
- Бертельс Е.Э. 1940, Великий азербайджанский поэт Низами, Баку, «АзФАН», 147 с.
- Болдырев А.Н. 1982, У истоков индийского стиля (ПП и ПИКНВ, ч. II, с. 12-15).
- Ворожейкина З.Н. 1984, Исфаганская школа поэтов и литературная жизнь Ирана в предмонгольское время – XII – начало XIII в., Москва, «Наука», 270 с.
- Вургун С., Рза Р., Рустам С. 1939, Литературный Азербайджан, Письмо бакинской интеллигенции товарищу Сталину, N 4, с. 3-12.
- Гомоз В.В. 2011, Азербайджанизация Низами, Вестник Санкт-Петербургского университета, сер. 13, вып. 3, с. 113-120.
- Ибрагимов А.М. 1947, Низами Гянджеви. Материалы научной конференции, посвящённой жизни и творчеству поэта (3-6 июня 1947 г.), Баку, изд. АН АЗССР, 135 с.
- Комиссаров Д.С. 1999, История персидской литературы XIX–XX веков, Москва, «Восточная литература», 535 с.
- Мамедов Дж. М. 2010, О некоторых спорных вопросах относительно родины и национальности Низами Гянджеви, Вестник СПбГУ, сер. 13, с. 106-116.
- Османов М.Н. 1974, Стиль персидско-таджикской поэзии IX-X вв., Москва, «Наука», 269 с.
- Перетц В.Н. 1922, Краткий очерк методологии истории русской литературы, Пг., «Академия», 164 с.
- Тамазишвили А.О. 2001, Иранистика в России и иранисты, Москва, ИВ РАН, 240 с.
- Тамазишвили А.О. 2004, Неизвестные страницы отечественного востоковедения, вып. II, Москва, «Восточная литература», 512 с.
- Тамимдари А. 2007, История персидской литературы, Санкт-Петербург, «Петербургское востоковедение», 240 с.
- Тихонов Н., «Низами», Правда, 22.09.1947, N 250.
- Уэллек Р. и Уоррен О. 1978, Теория литературы (пер. с англ.), Москва, «Прогресс», 328 с.
- Фадеев А.А., Речь товарища А.А. Фадеева, Бакинский рабочий, 23.09.1947, N 187.
- Шнирельман В.А. 2003, Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье, Москва, «Академкнига», 592 с.

- Minorsky V. 1945, Khakani and Andronicus Comnenus, Bulletin of the School of Oriental and African Studies, University of London, vol. XI, No. 3, p. 550-578.
- Berenjian S. 2006, Adabiyat-e azari va farsi dar Azarbayjan-e Iran dar sadey-ebistom, motarjem: Esmayil Faqih, Tehran, Našre Markaz, 264 s.
- Danešpažuh M., Nezami dar masnavi bazmi saramad-e šaeran ast, <https://www.ibna.ir/fa/report/101378/> (ներբեռնման օրը՝ 03.08.2021).
- Šamisa S., Sabkšenasi 1993, j. 2, Tehran, Ferdows, 330 s.
- Šahrbaraz, Sabk-e saxtegi-ye azarbayjani, http://shahrbaraz.blogspot.am/2010/10/blog-post_23.html (ներբեռնման օրը՝ 22.04.2017).
- Zakeri A. 1997, Sabk-e azarbayjani dar šer-e farsi, Keyhan-e Farhangi, xordad va tir, šomare-ye, 133.

ՄՏԱՑԱԾԻՆ «ԱԶԱՐԲԱՅՋԱՆԻ» ՈՃ ՊԱՐՍԻՑ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Գառնիկ Գևորգյան

Ամփոփում

Պատմամշակութային առանձնահատկություններից ելնելով՝ իրանական գրականագիտական միտքը պարսից դասական շրջանի գրականության մեջ (IX-XV դդ.) տարբերակում է երեք՝ խորասանյան, իրաքյան և հնդկական ոճեր: Սակայն XX դ. առաջին կեսին խորհրդային որոշ իրանագետներ շրջանառության մեջ են դնում «ազարբայջանի ոճ» կեղծ հասկացությունը՝ այն տեղավորելով խորասանյան և իրաքյան ոճերի միջակայքում (XI-XII դդ.): Մերձգիտական այս դրույթը պարարտ հող է դառնում ադրբեջանական «գրականագետների» համար Շիրվանյան դպրոցի պարսկալեզու գրական ժառանգության յուրացման ճանապարհին: Ցավոք, նրանց հաջողվում է 1990-ականներին Բաքվի այս նկրտումներն արտահանել նաև Իրան:

Բանալի բառեր՝ ոճ, խորասանյան, իրաքյան, հնդկական, Նիզամի Գանջավի, պարսից պոեզիա, «ազարբայջանի» ոճ:

ВЫМЫШЛЕННЫЙ «АЗЕРБАЙДЖАНСКИЙ» СТИЛЬ В ПЕРСИДСКОЙ ПОЭЗИИ

Гарник Геворгян

Резюме

Исходя из историко-культурных особенностей, иранское литературоведение в классической персидской литературе (IX-XV вв.) различает три стиля – хорасанский, иракский и индийский. Но в первой половине XX в. некоторые советские иранисты ввели в научный обиход вымышленное понятие – «азербайджанский стиль» как промежуточный между хорасанским и иракским стилями (XI-XII вв.). Эта околонульная гипотеза послужила благодатной почвой для азербайджанских «литературоведов» на пути присвоения литературного наследия ширванской школы персоязычной поэзии. К сожалению, в 1990-ых гг. азербайджанским литературоведам удалось экспортировать эту гипотезу также в Иран.

Ключевые слова – стиль, хорасанский, иракский, индийский, Низами Ганджави, персидская поэзия, «азербайджанский» стиль.

THE FICTIONAL "AZERBAIJANI STYLE" IN PERSIAN POETRY

Garnik Gevorgyan

Abstract

Due to the historical and cultural peculiarities, the Iranian literary scholars divide the literature of the Persian classical period (IX-XV centuries) into three styles: Khorasani, Iraqi and Indian. However, in the first half of the XX century, some Soviet Iranologists introduced the false notion of "Azerbaijani style", placing it between the Khorasani and Iraqi styles (XI-XII centuries). This pseudo-scientific thesis becomes a fertile ground for Azerbaijani "literary critics" on the way to misappropriate the Persian-language literary heritage of the Shirvan school. Unfortunately, in the 1990s, Baku's aspirations were managed to be exported to Iran.

Key words – style, khorasani, iraqi, indian, Nizami Ganjavi, Persian poetry, "Azerbaijani" style.

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԵՎ ԷՌՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴՐՈՒՄ

Ամալյա Հարությունյան

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ
ՀՀ, Երևան, Արամի 44

Էլ. հասցե՝ amalia77harutunyan@yahoo.com

Հոդվածը ներկայացվել է 30.11.2021, գրախոսվել է 03.12.2021, ընդունվել է տպագրության 05.07.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.2-76

Ներածություն

Առարկայի և մեթոդի անքակտելիությունն ակնհայտ է: Մեթոդների որոնումը բխում է առարկայի գաղափարից (օրինակ՝ իրավունքի գաղափարից), իսկ հենց գաղափարն անհնար է արտահայտել առանց համապատասխան մեթոդների: Միտքը միանգամայն պարզ է: Սակայն այդպիսի տրամաբանական կառուցվածքը քիչ տեղեկություն է հաղորդում առարկայի ու մեթոդի կապի բնույթի մասին և թույլ չի տալիս պատասխանել այն հարցերին, թե արդյո՞ք համապարփակ է առարկայի ու մեթոդի կապը: Դրա համար անհրաժեշտ է նախապես պարզաբանել մի քանի հանգամանք:

Առարկայի և մեթոդաբանության կապը

Առաջին՝ առարկայի և մեթոդի կապի բնույթը կախված չէ նրանից, թե ինչ տեսության հետ գործ ունենք: Յուրաքանչյուր գիտական տեսություն (կամ գիտական նմուշի նմանությամբ կառուցվածքավորված տեսություն) վերաբերում է իրականությանը, կապված է օբյեկտիվորեն գոյություն ունեցող առարկային, բխում է նրանից: Այդ պատճառով գիտության բնագավառում մեթոդի համեմատությամբ առարկան, անշուշտ, ունի առաջնային նշանակություն: Գիտությունը միշտ առարկայական է, իսկ առարկան հանդես է գալիս որպես ճանաչողական խնդիր:

Հարցն այլ կերպ պետք է դրվի որպես մեթոդի տեսություն դիտարկվող մեթոդաբանության պարագայում: Մեթոդաբանությունը կապված է ճանաչողական գործընթացի ռեֆլեքսացման, իր առարկայի վրա կենտրոնացած մտածողության մեխանիզմների բացահայտման և վերլուծության հետ¹: Մեթոդաբանությունը զբաղվում է ճանաչողության կազմակերպման ձևերի դիտարկմամբ և առարկայի մասին գաղափարի բովանդակության հետ այդ ձևերի կապի որոշ-

¹ Тихомиров 2015, 76-77.

մամբ: Մեթոդաբանական մտածողությունը ոչ թե առարկայական, այլ կառուցվածքաձևավորող մտածողություն է: Մեթոդաբանական մտածողության գործողության օրինակ կարող է ծառայել հարակից գիտությունների կապին առաջադրվող պահանջներից մեկի բացատրությունը. որևէ իրավաբանական տեսության շրջանակում մեկ այլ իրավաբանական տեսության գիտելիքների օգտագործման համար անհրաժեշտ է այդ գիտելիքներն ազատել նախկին գաղափարային ենթատեքստից, դրանք դուրս բերել նոր գաղափարային դաշտ, նոր հասկացության տեսանկյունից իմաստավորել և սահմանել որպես նրա իմաստային բաղադրիչներ, իսկ այնուհետև ներառել նոր տեսության հասկացությունների համակարգում: Թվում է՝ նշված պահանջը բավական պարզ է ու բնական: Սակայն միանգամայն վերահսկելի գործընթացի միջոցով այդ պահանջին կարելի է հետևել միայն էական կամ լիովին ձևայնացված մի շարք տեսությունների պարագայում: Բովանդակային տեսություններում, որոնց թվին են դասվում նաև սոցիալական տեսությունները, հիմնականում դժվար է լինում հետևել նկարագրված մեխանիզմի գործողությանը:

Այլ կերպ ասած՝ մեթոդաբանական մտածողությունը գոյություն ունի «զտված» ճանաչողական գործընթացների շնորհիվ և դրանք արտահայտում է բովանդակային, առարկայական մտածողությունից տարբերվող իր տրամաբանության համաձայն: Անշուշտ, նման պարագայում ստիպված ենք փաստել առարկայի համեմատությամբ մեթոդի առաջնային նշանակության մասին: Այս դեպքում մեթոդը դառնում է պատրաստի ձև նոր բովանդակության համար: Հենց այդ պատճառով մեթոդաբանության համար չափազանց կարևոր է կարողանալ պատրաստի ձևերը ճշգրտման միջոցով համապատասխանեցնել կոնկրետ ճանաչողական գործընթացին: Պահանջը ևս դյուրըմբռնելի է: Սակայն այն կապված է ճշգրտման որոշակի ալգորիթմների գոյության հետ:

Երկրորդ՝ փիլիսոփայության համար առարկայի կամ մեթոդի առաջնային դերի մասին հարցն էական է, քանի որ նրա առարկան գոյություն ունի մինչև նրա մասին խորհելը (սակայն գոյություն ունի ընդհանրապես, ոչ առանձնահատուկ ձևով) և դրսևորվում է խորհրդածության ձևով: Եթե գիտության համար մեթոդաբանության մասին հարցն իր էությամբ որոշակի առարկային համապատասխան այս կամ այն մեթոդների կիրառման ռացիոնալ հիմքերի մասին հարց է, ապա փիլիսոփայությունը, ինչպես պարզեցինք, ամբողջությամբ հանդես է գալիս որպես մեթոդաբանություն: Այս հատկության առումով այն նույնական է ռացիոնալ մտքի էության հետ:

Ընդհանուր առմամբ, ճանաչողությունը, առավել ևս տեսական ճանաչողությունը ոչ թե առարկայի պարզ արտացոլում է, այլ կառուցում է այն²:

Գիտությունն օբյեկտի «հետևից է գնում», այլ ոչ թե արարում է այն, ապա այն միշտ գործ ունի միայն որպես օբյեկտի մի մաս հանդես եկող առարկայի հետ,

² Գևորգյան, Բաղդասարյան 2015, 76-78:

ինչպես նաև որպես իրականության մի մաս հանդես եկող առարկայի հետ: Տվյալ մասի (հատվածի) էությունը բացահայտվում է օրինաչափությունը և նրա գոյության անհրաժեշտությունը պարզելու միջոցով: Ուստի կամայական գիտական տեսությունը վաղ թե ուշ սկսում է հետաքրքրվել այլ առարկաների հետ սեփական առարկայի կապակցվածությամբ, ավելի լայն իմաստային համատեքստում իր առարկայի ներառվածությամբ: Այդ ամենը հանգեցնում է համագիտական մեթոդների մշակման անհրաժեշտությանը:

Փիլիսոփայությունը, անշուշտ, կապված է այս կամ այն առարկայի հետ, սակայն պայմանավորված չէ նրանով³: Այն ներառում է առարկան՝ այլ առարկաների հետ իր օրգանական կապակցվածությամբ հանդերձ: Փիլիսոփայական խորհրդածության համար առարկան ներկայանում է ոչ թե որպես իրականության մի մաս, այլ որպես նրա խտացում, «մարմնացում», կենտրոնակետ, իր բովանդակային կոնկրետությամբ հանդերձ ներկայացված՝ ընդհանուր վերցված իրականություն: Աշխարհը ներկայացնելով նրա էությամբ՝ փիլիսոփայությունը դառնում է սեփական սահմանումների աղբյուր, ուստի նա այս կամ այն կերպ ձևավորում է այն: Առարկայի փիլիսոփայական իմաստավորումը միշտ սկզբունքորեն բաց է լինում ցանկացած բովանդակության հանդեպ:

Սակայն քանի որ իրավունքի փիլիսոփայությունը⁴ այստեղ դիտարկում ենք ոչ որպես սոցիալական փիլիսոփայության բաղկացուցիչ, թեև օրգանական մաս, ապա առարկայի նկատմամբ փիլիսոփայության վերաբերմունքն ակնհայտորեն պետք է տարբերվի իրավունքի փիլիսոփայության վերաբերմունքից: Եթե, ինչպես արդեն նշեցինք, փիլիսոփայությունն անառարկայական է այն իմաստով, որ նրա համար առարկա կարող է դառնալ ամեն ինչ, ինչպես նաև այն իմաստով, որ առարկան չի որոշում նրա իմաստավորման մեթոդը, ապա իրավունքի փիլիսոփայությունն ունի իր առարկան, և այդ առարկայի դերում հանդես են գալիս իրավունքը և այն ամենը, ինչը կարող է կապված լինել նրա հետ: Տվյալ առարկայի մասին փիլիսոփայման որոշակիությունը նաև ենթադրում է առարկայի իմաստավորման համապատասխան մեթոդի գոյություն: Այլ կերպ ասած՝ «փիլիսոփայություն» բառն առաջին և երկրորդ հասկացություններում ունի տարբեր իմաստային կշիռներ, որ պետք է անպայման հաշվի առնել տեսական հետազոտության բնույթը որոշելիս:

Փիլիսոփայության մասին նշվածից կարելի է եզրակացնել, որ փիլիսոփայության մեթոդաբանությունը պետք է հասկանալ ոչ թե որպես հասարակական կամ կոնկրետ գիտական մակարդակի համեմատությամբ գիտելիքի կազմակերպման ինչ-որ ավելի բարձր մակարդակի եղանակ, այլ որպես սկզբունքորեն այլ ինտելեկտուալ միավորում: Դա նշանակում է, որ գիտական մտածողության համար սովորական համարվող մեթոդաբանությունները՝ հիմնված ճանաչողա-

³ Кузнецов, Кузнецова, Миронов, Момджян 2004, 10-11.

⁴ Մանրամասն տե՛ս Нерсисянц 2008, Ստեփանյան 2016:

կան գործընթացների սկզբունքային միատեսակության վրա, չի արտացոլում իրական իրավիճակը:

Մեթոդը պետք է համապատասխանեցված լինի առարկայի բնույթին: Եթե մեթոդաբանությունը համապատասխանում է առարկային, ապա կարող ենք ստանալ ոչ միայն մտքի որոշակի երևակայություն, այլև օբյեկտիվ և էական բնութագրեր ունեցող որևէ այլ բան: Գաղափարը բավականին պարզ է: Այնուամենայնիվ, համարժեքության սկզբունքի խախտումը ցանկացած տեսության և հատկապես սոցիալական տեսությունների բնագավառում հաճախ է հանդիպում: Այսպիսի փաստացի դրությունը պահանջում է մեթոդաբանության համարժեքության խնդիրների ավելի որոշակի դրվածք և, ամենայն հավանականությամբ, նաև որոշակի նոր լուծումներ:

Ակնհայտ է, որ մեթոդաբանության համարժեքության մասին հարցը չի վերաբերում նրանում պարունակվող հայեցակարգային գաղափարների համախմբին, քանի որ դրանք հնարավոր չէ վերացնել հետազոտության ցանկացած ընթացքի և անգամ հոգևոր դիրքորոշումներն արմատապես փոխելու դեպքերում⁵: Նրանք առարկայի իմացության պայմաններ են, սակայն ամենևին էլ չեն մարմնավորում զուտ ճանաչողական գործընթացը: Մեթոդաբանության համարժեքության խնդիրն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ անդրադառնում ենք ճանաչողության սկզբունքների, մեթոդների և միջոցների ոլորտին, որոնք կոչված են բովանդակային առումով համալրելու որոշակի հայեցակարգային գաղափարները և ինտուիցիաները:

Համարժեք կլինի այնպիսի մեթոդաբանությունը, որը ոչ թե պարզապես թույլ է տալիս հետազոտել առարկան և ճանաչողության արդյունքները համաձայնեցնել ելակետային գաղափարների հետ, այլև ներկայացնել հենց առարկայի յուրօրինակությունը, ինչպես նաև նրա ըմբռնման ու կառուցման յուրօրինակությունը: Համարժեքը կլինի այն ճանաչողությունը, որի սկզբունքներն ու մեթոդները հատուկ են հենց տվյալ առարկային: Պատմականության սկզբունքը իրավունքի փիլիսոփայության համար առանձնահատուկ սկզբունք չէ. այդ սկզբունքի առումով փիլիսոփայությունը նման է սոցիոլոգիային և պատմական տեսությանը, ուստի տվյալ սկզբունքը չի տալիս իրավունքի զուտ փիլիսոփայական-իրավական ըմբռնումը: Երևույթի մեջ պատմականի ու տրամաբանականի միասնականության սկզբունքն⁶ ունի համապարփակ, «արտաառարկայական» բնույթ, իսկ դա նշանակում է, որ չի կարող ներկայացնել առանձին վերցված *իրավունք* երևույթը:

Ընդհանրապես, մեթոդի կամ սկզբունքի կիրառելիության մասին հարցը պետք է տարբերակել: Իրավաբանական տեսության ոլորտում հետազոտությունը սկսելիս սովորաբար նշում են դիալեկտիկական մեթոդի մասին, փիլիսոփա-

⁵ Принцип формального равенства и взаимное признание права 2016, 111-112.

⁶ Керимов 2001, 109-126.

յության մեջ շատ հաճախ օգտագործվում են պատմական և տրամաբանական մեթոդները: Անշուշտ, կոնկրետ առարկայի նկատմամբ կարելի է կիրառել գրեթե բոլոր մեթոդներն ու սկզբունքները և կարելի է ստանալ զանազան դրական կամ բացասական արդյունքներ: Կոնկրետ մեթոդաբանության այսպիսի «ամենակերությունը» բացատրվում է միասնականության ու իրականության պահերի ընդհանուր կապակցվածության վրա հիմնվող ճանաչողական դիրքորոշմամբ: Սակայն այս կամ այն տեսության ինքնուրույնությունն սկսվում է այն պահից, երբ այն անդրադառնում է հետազոտվող երևույթի առանձնահատկություններին:

Նշանակում է՝ առարկայի համընդհանուր բնութագրերն ի վիճակի չեն որևէ կերպ համալրելու իր էության մասին գիտելիքը և այդ պատճառով թույլ չեն տալիս լիովին հասնել ճանաչողական նպատակին:

Որևէ կոնկրետ տեսության պարագայում այս կամ այն մեթոդաբանական սկզբունքների ու մեթոդների տեղին լինելն այնքան էլ հստակ չէ: Միայն շատ հազվադեպ դեպքերում կարելի է միանշանակորեն պնդել, որ որևէ մեթոդ տեղին կամ ոչ տեղին է տվյալ տեսության մեջ: Սակայն ցանկացած կոնկրետ մեթոդաբանության մեջ հնարավոր է պարզել նաև միանգամայն հստակ սահմանները, որոնք չի կարելի անցնել: Այդ սահմանները որոշվում են ոչ միայն տեսության առարկայով, այլև տեսության բնույթով:

Իրավագիտակցության մեթոդաբանություններ

Ամենից առաջ խոսքը փիլիսոփայական, համագիտական և կոնկրետ գիտական մեթոդաբանությունների առանձնահատկությունների մասին է: Մասնավորապես անվիճելի է համարվում այն փաստը, որ դիալեկտիկական, լինելով առանձնահատուկ փիլիսոփայական մեթոդ, ցանկացած ոչ փիլիսոփայական տեսության համար չի կարող համարվել համարժեք, թեև գիտության մեջ ընդունված է այն որպես կոնկրետ հետազոտության առարկա նշելը: Բացառություն չէ նաև իրավաբանական տեսությունը: Շատ հաճախ հանդիպում ենք այն պնդմանը, որ դիալեկտիկական մեթոդը իրավաբանական հետազոտության համար անհրաժեշտ և պարտադիր մեթոդ է⁷: Սակայն այն կիրառվում է «իրավաբանորեն բեկված» և որոշակիացված տեսքով, ինչ-որ «իրավաբանական դիալեկտիկայի», այսինքն՝ միայն առանձնահատուկ իրավաբանական առարկային հատուկ դիալեկտիկայի ըմբռնման և արտահայտման տեսքով:

Տվյալ դեպքում ակնհայտ է դիալեկտիկայի փիլիսոփայական իմաստը չըմբռնելու փաստը: Դիալեկտիկան, համենայն դեպս, իրավաբանական տեսության համար սովորական այն նորոյա իմաստով, որը ձևավորվել է գերմանական փիլիսոփայական տեսության շրջանակում, ընդհանուր վերցված կենցաղի համապարփակ բնութագրերի արտահայտման և ինքնիրականացման մեթոդ է: Հենց մտածողության առարկան սկսում է հանդես գալ իր յուրահատկությամբ, փիլիսո-

⁷ Кузнецов, Кузнецова, Миронов, Момджян 2004, 174-175.

փայական վերլուծությունը դառնում է լոկ բարի ցանկություն: Փիլիսոփայության ոլորտում և միայն նրանում եզակին նույնական է համընդհանուրի հետ, ուստի այդ նույնականության ըմբռնման մեթոդաբանությունը չի կարող կիրառվել որևէ այլ կոնկրետ տեսության մեջ: Դա պատճառաբանվում է ոչ թե նրանով, որ այն սկզբունքորեն հնարավոր չէ ներառել ճանաչողության մեջ, այլ նրանով, որ այդ կիրառության գիտական հետևանքներն առանձնահատուկ չեն:

Տվյալ պնդումից չի հետևում, որ, օրինակ, սոցիալական փիլիսոփայությունը կամ իրավունքի փիլիսոփայությունն արդեն օժտված չեն այդպիսի հատկություններով, քանի որ դրանք որոշակի առարկայի՝ սոցիալական իրականության, իրավունք երևույթի նկատմամբ կիրառվող փիլիսոփայում են: Ե՛վ մեկ, և՛ մյուս դեպքում մենք գործ ունենք ունիվերսալության հետ. մի երևույթի, որը համարժեք է ամբողջությամբ վերցված իրականությանը և որպես այդ իրականության մասին գաղափար՝ տարբերվում է դրա առարկայական մարմնավորումից:

Ժամանակակից դիալեկտիկան աշխարհըմբռնման մեթոդաբանություն է⁸: Ներգրավված լինելով առարկայի կոնկրետության (առանձնահատկության) ըմբռնման գործընթացում՝ դիալեկտիկան դառնում է «անվանական»: Մի կողմից՝ ցանկացած որոշակի առարկա, գործընթաց, իրադարձություն ձեռք են բերում բնական կամ սոցիալական օրինաչափությունների համընդհանրության փաստացի հաստատումների իմաստ, դրանք ցուցադրում են մտահայեցողությունը, մյուս կողմից՝ առարկայի մասին գիտելիքի բովանդակության մեջ իրականության ներառումն ինքնին վկայում է այդ առարկայի էության ըմբռնման սահմանային խորության մասին: Սակայն հարկ է նշել, որ և՛ մեկը, և՛ մյուսը գիտական ճանաչողության պատրանքներ են:

Եթե կոնկրետ տեսությունը (այդ թվում՝ իրավաբանական տեսությունը) փորձում է իր առարկայի ճանաչողությանը պարտադրել կատեգորիալ մտածողություն, ապա այն վաղ թե ուշ վերածվում է անառարկայական դատարկախոսության, բառային «լարախաղացության», բառարվեստի, դառնում է իրականության խեղաթյուրում՝ առաջին հերթին:

Երկրորդ՝ հենց փիլիսոփայության ոլորտում ոչ համարժեք կլինեն այն բոլոր մեթոդներն ու սկզբունքները, որոնք կառուցվում են կոնկրետ առարկայի, երևույթի, գործընթացի հետ առարկայի, երևույթի, գործընթացի գաղափարների նույնականացման վրա: Կարելի է տարբեր կերպ մանրամասն ուսումնասիրել կոնկրետ ազգային իրավունքը, այն ուսումնասիրել առանձին երկրներում, նրա զարգացման տարբեր փուլերում, կարելի է հավաքել մարդկանց իրավական կյանքի վերաբերյալ վիթխարի փաստացի նյութ և այդպես էլ չհանգել այն գաղափարին, որը կլինեք ոչ թե նյութի ձևական-տրամաբանական ընդհանրացում, ոչ թե սահմանային-վերացական հասկացություն, այլ այդ փաստայնության համադրող հիմք, որն իրավական իմաստ կհաղորդեր յուրաքանչյուր առանձին փաստի,

⁸ Մանրամասն տե՛ս Социально-культурная природа познания 1991:

իրադարձության, գործընթացի⁹: Իրավունքի գաղափարը և՛ առկա է յուրաքանչ-յուր կոնկրետ երևույթում, և՛ հակադրվում է նրան, և՛ ճանաչողության արդյունք է, և՛ միշտ նախորդում է ցանկացած ճանաչողական գործողության:

Նշենք, որ փաստի, օրինակի, ճանաչողության էմպիրիկ բազայի դերը չի կարելի գերազնահատել առարկայի ըմբռնման և ցանկացած այլ տեսության մեջ: Առանց ելակետային գաղափարների որոշակի համախմբի՝ նրանք քիչ բան կարող են հավելել առարկայի մասին արդեն իսկ գոյություն ունեցող գիտելիքին: Եվ ընդհակառակը, առարկայի վերացական, տեսական վերլուծության մեթոդներն այնքան էլ էական չեն էմպիրիկ հետազոտությունների անցկացման համար: Էմպիրիկ ճանաչողության մեջ ընդհանրացումների, տեսական դրույթների դերը կարևոր է, և դեռևս մինչև վերջ հասկանալի չէ էպիստեմոլոգիական խնդիրը: Սակայն մեթոդաբանության համարժեքության խնդիրը պետք է հասկանալ ոչ միայն որպես այս կամ այն մեթոդների ու սկզբունքների կոնկրետ գործադրմամբ, այլև դրանց ներուժային ունակության յուրահատկությամբ: Միևնույն սկզբունքներն ու մեթոդները կարող են կիրառվել տարբեր տեսություններում, սակայն իրենց փոխալսմանավորվածություններով («ուղղահայաց»՝ որպես նրանց հիերարխիա, «հորիզոնական»՝ որպես նրանց համադրություն, կենտրոնացում) նրանք արտացոլում են կոնկրետ տեսության մեջ կիրառվող մեթոդաբանության առանձնահատկությունը:

Հենց դա էլ նրանց «կոնֆիգուրացիան» է: Այսպես, իրավաբանությունը կառուցվում է ձևական-տրամաբանական մոտեցման հետ համատեսական և կոնկրետ տեսական (պատմասոցիոլոգիական) մեթոդների համադրման վրա. իրավունքի փիլիսոփայության մեթոդաբանությունը համատեսական ճանաչողության մեթոդները կապում է բովանդակային տրամաբանության, դիալեկտիկայի հետ¹⁰:

Մի քանի արտահայտությունների օգնությամբ մեթոդաբանության առանձնահատկությունն արտահայտելու փորձերը, որպես կանոն, ավարտվում են անհաջողությամբ: Իսկ ի՞նչ կարող է պարզաբանել իրավաբանական գիտության մեթոդի, օրինակ, այսպիսի ձևակերպումը. դա իրավաբանական մեթոդ է, որն իրավաբանական ճանաչողության, իրավաբանական գիտելիքի ստեղծման և կազմակերպման եղանակ է: Միտքն առավելագույնս շրջահոսուն է և սկզբունքորեն ճիշտ, ուստի չի կարելի առարկել դրան: Սակայն այսպիսի նմուշի օրինակով առանց երկար մտածելու կարելի է տալ որևէ գիտության մեթոդի սահմանումը: Նաև պարզ է, որ մեթոդաբանության առանձնահատկությունը կարելի է արտահայտել ինչպես այն ամբողջությամբ վերցված նրա «կոնֆիգուրացիա» ներկայացնելու միջոցով, այնպես էլ նրա էական տարրերի հարաբերական ինքնուրույնության օգնությամբ:

Անշուշտ, ընտրված մեթոդաբանության ինտեգրող բնույթագրերի մասին հստակ պատկերացումը չի կարող օգնել կոնկրետ ճանաչողական գործընթացը վերստեղծելու կամ դրան գերազանցելու հարցում: Օրինակ՝ իրավագիտության

⁹ Малько, Трофимов 2017, 39-40.

¹⁰ Теория познания 1991.

տեսանկյունից և նրա սահմաններում իրավաբանական մեթոդի սահմանումը, որպես ճանաչողության եղանակ, հուշում է այն մասին, որ իրավագիտությունը տվյալ դեպքում իրականության արտացոլումն է՝ ըստ համապատասխան իրավական մտածողության և իրավական մշակույթի: Սակայն այդ կերպ ընկալվող իրավաբանական մեթոդաբանությունը, մեր կարծիքով, աղավաղում է օբյեկտը, պարտադրելով այնպիսի բովանդակություն և իմաստներ, որոնք ընդունակ չեն անհրաժեշտ ծավալով արտահայտելու իրավունքի բնույթն ու էությունը: Իսկապես, եթե բոլոր իրավաբանական գիտությունները ելնում են իրավունքի մեկ ընդհանուր հասկացությունից, ապա մեթոդաբանության առումով դրանք միմյանցից հնարավոր չէ տարբերել, և դրանք ինքնուրույն տեսություններ չեն: Այդ դեպքում դրանց կազմավորումն ամենևին էլ ճանաչողական գործընթաց չէ. այն միայն կազմակերպական ընթացակարգ է, որը հիմնվում է ձևական տրամաբանության պահանջների վրա: Սակայն դժվարությունը հենց այն է, որ, օրինակ, իրավունքի հասկացությունը և քաղաքացիական կամ քրեական իրավունքի հասկացությունը միայն ձևատրամաբանական իմաստով կարող են դիտարկվել որպես տեսակային կախվածության մեջ գտնվող հասկացություններ: Իրական ճանաչողական գործընթացում նրանք հանդես են գալիս որպես որակապես տարբեր իրականություններն արտացոլող հակառակ, ինքնուրույն հասկացություններ: Այդ հասկացություններից յուրաքանչյուրի պարագայում «իրավունք» բառը լոկ նույնական բառ է: Տվյալ հասկացությունների տեսակային կախվածությունն իրավաբանական մտածողության պատրանք է, սակայն այնպիսի պատրանք, որից իրավաբանական միտքն առանց իր բնույթը փոխելու չի կարող հրաժարվել:

Երբ իրավաբան-մեթոդաբաններն ամեն դեպքում սկսում են նկարագրել իրավաբանական մեթոդը, պարզվում է, որ, ընդհանուր առմամբ, այն առանձնահատուկ համագիտական մեթոդ է, և որ այլ գիտությունների մեթոդներն օգտագործվում են որպես իրավաբանական ճանաչողության եղանակներ ու հնարքներ: Օրինակ՝ պարզվում է, որ մոդելավորման կամ փորձի մեթոդները՝ որպես իրավաբանական մեթոդի բաղադրիչներ, իրավաբանական մոդելավորում և իրավաբանական փորձ են¹¹: Այլ կերպ ասած՝ մեթոդաբանության որոնման ամբողջ ընթացակարգը հղի է առարկայի առանձնահատկությունը նշելու միջոցով համագիտական կամ կոնկրետ գիտական մեթոդների պարզ վերանվանման վտանգով: Նշենք նաև այն մատրիցայի մասին, որն ավելի վաղ վերլուծել ենք, և որի արդյունավետությունը մեթոդաբանական խնդիրների լուծման համար արդեն գնահատել ենք:

Նշվածից հետևում է, որ մեթոդաբանության համարժեքության խնդիրը բավական արդիական է իրավաբանական տեսության համար: Չի կարելի տեսությունը համարել լիարժեք և համարժեք, եթե դրա մեթոդաբանությունը պարզաբանված չէ, և եթե առարկայի նկատմամբ առանձնահատուկ հայացքը որոշված չէ: Մասնավորապես, այս խնդիրը հնարավոր չէ վերացնել այն դեպքում, եթե

¹¹ Մանրամասն տե՛ս Правовые модели и реальность 2014.

մենք պարզապես նշենք որպես իրենց օբյեկտ իրավունքը դիտարկող տեսությունների բազմության ներքին միասնականության կամ էլ միջգիտակարգային հետազոտությունների անհրաժեշտության մասին:

Եզրակացություններ

Այսպիսով, ընդգծեցինք որպես իրավագիտակցության բնույթի, տրամաբանության ու առանձնահատուկ բովանդակության հայեցակետում իրավագիտակցություն երևույթի փիլիսոփայական-իրավական վերլուծությանը նախորդող փուլ դիտարկվող մեթոդաբանության խնդրի ուրվագծերը: Մեթոդաբանության կառուցվածքի և հիմնական տարրերի նկարագրության միջոցով, ըստ էության, որոշեցինք և՛ փիլիսոփայական-իրավական մեթոդաբանության, և՛ կոնկրետ մեթոդաբանությունների նպատակաուղղված ու որակյալ մշակման ուղիները և եղանակները: Տվյալ խնդրի գործում որոշիչ դերը պետք է պատկանի հենց փիլիսոփայությանը, որն այդ դեպքում դիտարկվում է որպես մեթոդաբանական մտածողության ռեֆլեքսիա:

Գրականություն

- Գևորգյան Հ.Ա., Բաղդասարյան Վ.Խ. 2015, Տրամաբանություն, Երևան, «Էդիթ Պրինտ», 271 էջ:
 Ստեփանյան Հ.Մ. 2016, Իրավունքի փիլիսոփայություն, Երևան, «Գիտություն», 700 էջ:
 Керимов Д.А. 2001, Методология права, 2-е изд., Москва, «Аванта+», 560 с.
 Кузнецов В.Г., Кузнецова И.Д., Миронов В.В., Момджян К.Х. 2004, Философия. Учебник, Москва, «ИНФРА-М», 519 с.
 Малько А.В., Трофимов В.В. 2017, Правовая жизнь общества как объект теории права: к постановке проблемы, «Государство и право», N 5, Москва, с. 39-40.
 Нерсесянц В.С. 2008, Философия права, Москва, «Норма», 848 с.
 Правовые модели и реальность 2014, Монография, О.А. Акопян, Н.В. Власова, С.А. Грачева и др.; отв. ред. Ю.А. Тихомиров, Е.Е. Рафалюк, Н.И. Хлуденева, Москва, Институт законодательства и сравнительного правоведения при Правительстве Российской Федерации, «ИНФРА-М», 280 с.
 Принцип формального равенства и взаимное признание права 2016, Москва, «Проспект», 208 с.
 Теория познания 1991, Социально-культурная природа познания, в 4 томах, т. 2, Москва, «Мысль», 478 с.
 Тихомиров Ю.А. 2015, Право: прогнозы и поиски, Москва, «ИНФРА-М», 240 с.

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԵՎ ԷՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԴՐՈՒՄ

Ամալյա Հարությունյան

Ամփոփում

Գիտության բնագավառում առարկան մեթոդի համեմատությամբ ունի առաջնային նշանակություն: Գիտությունը միշտ առարկայական է, իսկ առարկան հանդես է գալիս որպես ճանաչողական խնդիր: Իսկ մեթոդաբանությունը զբաղվում է ճանաչողության կազմակերպման ձևերի դիտարկմամբ և առարկայի մասին գաղափարի բովանդակության

հետ այդ ձևերի կապի որոշմամբ: Մեթոդաբանական մտածողությունը ոչ թե առարկայական, այլ կառուցաձևավորող մտածողություն է: Մեթոդաբանության համարժեքության խնդիրը պետք է հասկանալ ոչ միայն որպես այս կամ այն մեթոդների ու սկզբունքների կոնկրետ գործադրմամբ, այլև դրանց ներուժային ունակության յուրահատկությամբ: Միևնույն սկզբունքներն ու մեթոդները կարող են կիրառվել տարբեր տեսություններում: Ինչ վերաբերում է իրավունքի փիլիսոփայությանը, ապա այն ունի իր առարկան, և այդ առարկայի դերում հանդես են գալիս իրավունքը և այն ամենը, ինչը կարող է կապված լինել դրա հետ:

Բանալի բառեր՝ իրավագիտակցություն, փիլիսոփայություն, իրավունքի փիլիսոփայություն, մեթոդաբանություն, օբյեկտիվացում, մեթոդաբանական մտածողություն, կառուցաձևավորող մտածողություն:

СВЯЗЬ ПРЕДМЕТА И МЕТОДОЛОГИИ В ВОПРОСЕ ПОЗНАНИЯ ПРИРОДЫ И СУЩНОСТИ ПРАВОСОЗНАНИЯ

Амалия Арутюнян

Резюме

Предмет в науке играет первостепенную роль в сравнении с методом. А методология определяет связь форм познания с содержанием представления о предмете. Методологическое мышление не предметное, а конструктивное мышление. Под проблемой методологической эквивалентности следует понимать не только конкретное применение того или иного метода и принципа, но и специфику их потенциала. Одни и те же принципы и методы могут применяться к разным теориям. Что касается философии права, то она имеет свой предмет, ролью которого является все, что может быть с ней связано.

Ключевые слова – правосознание, философия, философия права, методология, объективация, методологическое мышление, конструктивное мышление.

THE CONNECTION BETWEEN THE SUBJECT AND THE METHODOLOGY IN RECOGNIZING THE NATURE AND ESSENCE OF LEGAL CONSCIOUSNESS

Amalya Harutyunyan

Abstract

In the field of science the subject is of primary importance compared to the method. Science is always objective, and the subject acts as a cognitive problem. And the methodology deals with the observation of the forms of cognition, by determining the connection of those forms with the content of the idea about the subject. Methodological thinking is not objective, but constructive thinking. The issue of methodological adequacy should be understood not only as the concrete application of this or that method and principle, but also as the uniqueness of their potential ability. The same principles and methods can be applied to different theories. As for the law of philosophy, it has its own subject. The law and everything that can be connected with it act in the role of that subject.

Key words – legal consciousness, philosophy, philosophy of law, methodology, objectification, methodological thinking, constructive thinking.

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Աստղիկ Խուրշուդյան

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ՀՀ, Երևան, Արամի 44

Էլ. հասցե՝ astghik@sci.am

Հոդվածը ներկայացվել է՝ 25.12.2021, գրախոսվել է՝ 27.12.2021, ընդունվել է տպագրության 05.07.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.2-86

Ներածություն

Իրավական պետության թեմայի ուսումնասիրությունը խիստ արդիական է հատկապես հայ հասարակության համար՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական, ազգային մարտահրավերներին համարժեք լուծումներ գտնելու տեսակետից: Այդ տեսությունը ձևավորվել է գերմանական փիլիսոփայության մեջ, այնուհետև զարգացել գերմանական իրավագիտության ոլորտի գիտնականների կողմից: Գերմանիայում իրավական պետության կատեգորիան իր արտահայտությունն է ստացել Վեյմարյան սահմանադրությունում:

Վերհանելով անցյալի փորձը, ինչպես նաև հաշվի առնելով ազգային պետականաշինության պրակտիկան՝ փորձել ենք դրանց միջոցով ուղիներ փնտրել մեզանում, որոնք հնարավորություն կընձեռեն իրավական պետության կայացման համար:

Պատմաիրավական վերլուծություն

Իրավական պետության հայեցակարգի ձևավորման պատճառը Գերմանիայում բուրժուական հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունն էր, որն էլ, իր հերթին, թելադրում էր տնտեսության ազատականացում¹: Բուրժուական իրավական պետության էությունը պահանջում էր արտադրության և առևտրի ազատություն, որն ուղղված էր ավատական կարգի դեմ: Իրավաբանորեն այդ պահանջներն արտահայտում էին ոչնչով չսահմանափակված սեփականության երաշխիքները, որոնք վերաբերում էին ինչպես սեփականության ձեռքբերման, այնպես էլ տիրապետման, օգտագործման և օտարման իրավազորություններին: Դրա համար էլ իրավական պետության տեսական-իմացաբանական ակունքները բխում են ձևավորվող գերմանական բուրժուազիայի իրավաբանական աշխարհայեցողությունից:

¹ Соколов 2002, 29.

Իրավական պետության մասին բուրժուական ուսմունքը զգալի դերակատարում ունեցավ բացարձակ ոստիկանական պետության դեմ պայքարում և քաղաքացիական իրավունքների հաստատման գործում: Նոր ժամանակների իրավաբանական մտածողությունը պահանջում էր ժողովրդավարական ազատություններ, մարդու բնական իրավունքների պաշտոնական ճանաչում, իշխանությունների տարանջատում և պետական իշխանության սահմանափակում՝ իրավունքի միջոցով:

Ընդհանարապես Նոր ժամանակների «իրավաբանական մտածողությունը» Գերմանիա ներթափանցեց հեղափոխական Ֆրանսիայից: Շատ կարճ ժամանակահատվածում Գերմանիայի Մայնց քաղաքում կազմակերպվեց «Յակոբինների ակումբը» (1792-1793 թթ.), որը գլխավորում էր Գեորգ Ֆորսյերը: «Ակումբը» նրա գլխավորությամբ փորձում էր իրականություն դարձնել բուրժուաների հիմնական գաղափարները՝ ազատություն, հավասարություն և եղբայրություն²: Այդ շարժման գաղափարախոսներից մեկը՝ Գեորգ Վեդեկինդան, հանդես գալով ժողովրդի առջև՝ նշում էր. «Ժողովրդավարությունում ինքնիշխանությունը պատկանում է ժողովրդին: Ինքնիշխանությունը՝ օրենքների ընդունման և կատարման իրավունքն է ...ազատությունը ժողովրդական ինքնիշխանության արտահայտությունն է և օրենսդրության հիմքը³»:

Մայնցի հեղափոխական իրադարձությունները մնացին որպես մի կարճ ու փոքրիկ դրվագ XIX դարի գերմանական ոչ հեղափոխական բուրժուազիայի պատմության մեջ, և ինչպես նշում է պրոֆեսոր Կ. Պորոկը. «Մայնցի յակոբինների ակումբի գաղափարները պետության և ժողովրդավարական կարգերի մասին օտար էին գերմանական քաղաքական էությանը»:

Նախորդ դարաշրջանների տեսական հիմնավորումները պետության իրավական կառուցվածքի և կառավարման ձևի, իրավունքի (օրենքի) գերակայության մասին առավել փաստարկվեցին և տրամաբանական կոտ համակարգի ձևով մշակվեցին գերմանական դասական փիլիսոփայության նշանավոր մտածողների՝ Ի. Կանտի (1724-1804) և Գ. Հեգելի (1770-1831) իրավաքաղաքական ուսմունքներում:

Իրավական պետության մասին ուսմունքի հիմնաքարը դրել է գերմանական դասական փիլիսոփայության խոշոր ներկայացուցիչ Իմանուիլ Կանտը⁴: Նա առանձնացնում է սոցիալական բոլոր օրենքները («ազատության օրենքները») բնության օրենքներից և դրանք անվանում է բարոյական օրենքներ (տվյալ դեպքում Կանտը բարոյականությունը հասկանում է շատ լայն առումով՝ որպես ընդհանրապես սոցիալական նորմերի համակարգ): Նա տարբերակում է բարոյական

² Förstes 1961.

³ Wedekind 1963.

⁴ Соколов 2002, 21.

(էթիկական) նորմերը իրավաբանական նորմերից և ներմուծում «արարքի լեգալություն» հասկացությունը իրավաբանական օրենքների մեջ:

Կանտը տարբերակում է իրավունքը նեղ իմաստով (կամ խստիվ իրավունքը) և իրավունքը լայն իմաստով: Խստիվ իրավունքը փոխադարձ իրավագործությունները բնորոշող արտաքին օրենքների համալիր է: Լայն իմաստով իրավունքը չի ենթադրում արտաքին օրենքներ: Այս դեպքում խոսքն արդարության և ծայրահեղ անհրաժեշտության իրավունքի մասին է: «Առաջինը թույլ է տալիս իրավունք առանց հարկադրանքի, երկրորդը՝ հարկադրանք առանց իրավունքի»⁵: Արդարությունն այստեղ դիտարկվում է ոչ թե որպես էթիկական, այլ իրավական կատեգորիա:

Իրավական վիճակը կամ կացությունը Կանտը բնորոշում է որպես հանրային, այսինքն՝ արտաքին օրենքների համակարգ, որը ստեղծվում է ողջ ժողովրդի միասնական կամքով: Այդ պատճառով էլ պետության ստեղծման գործընթացը ներկայացնում է պայմանագիր հանուն բոլորի համար ընդհանուր օրենսդրության ստեղծման՝ մասնավոր բոլոր կամքերը մեկ ընդհանուր կամքի մեջ միաբանելու մասին⁶: Պայմանագիրն ինքնին, որպես այդպիսին, էմպիրիկ փաստ չէ: «Այդ պայմանագիրը, - գրում է Կանտը, - գուցե ճիշտ է տեսականորեն, սակայն պիտանի չէ պրակտիկայի համար»⁷: Օրենսդիր իշխանությունը կոչված է արարելու արդար օրենքներ, իսկ արդար է միայն այն օրենքը, որին ժողովուրդը տվել է իր համաձայնությունը: Կամ, այլ ձևով, «այն, ինչ ժողովուրդը չի կարող որոշել իր իսկ վերաբերյալ, չի կարող որոշել նաև օրենսդիրը ժողովրդի վերաբերյալ»⁸: Կանտն ընդգծում է նաև իրավունքի և օրենքի միջև առկա տարբերությունը. «Իրավունքը յուրաքանչյուրի ազատության սահմանափակումն է մյուս բոլորի ազատության հետ համաձայնության պայմանով, որքան դա հնարավոր է ըստ որոշակի ընդհանուր օրենքի, իսկ հանրային իրավունքը այն արտաքին օրենքների միասնականությունն է, որոնք հնարավոր են դարձնում նման լիակատար համաձայնությունը»⁹: Այսպիսով, հանրային օրենքները պետք է արտահայտեն և ապահովեն ազատությունը, այսինքն՝ իրավունքը, իսկ դրանց ենթարկվող մարդիկ լինեն իրավական կարգավիճակում: Ընդ որում, այդ կարգավիճակը Կանտը բնորոշում է, մի կողմից, որպես քաղաքացիական կեցություն, մյուս կողմից՝ որպես պետություն: «Ժողովրդի կազմում առանձին անհատների նման վիճակը միմյանց հետ հարաբերություններում քաղաքացիական կացություն է (status civitis), իսկ դրանց ընդհանրությունը՝ հենց իրենց՝ սեփական քաղաքացիների նկատմամբ պետություն (civitas)»¹⁰: Թեև Կանտն ամեն անգամ չէ, որ հետևողական է այս տարբերությունը ցույց տալու ժամանակ, սակայն նրա հիմնական միտքը հաս-

⁵ Кант 1965, 257.

⁶ Теория государства и права 2019, 516.

⁷ Кант 1994 т. 8, 185.

⁸ Кант 1994. т. 8, 194.

⁹ Кант 1994. т. 8, 176.

¹⁰ Кант 1994. т. 6, 342.

կանալի է. և՛ հասարակությունը, և՛ պետությունը իրավունքի առկայություն են ենթադրում ինչպես քաղաքացիների, այնպես էլ քաղաքացիների և իշխանության միջև հարաբերություններում: Այդ պատճառով էլ «պետությունը (civitas) իրավական օրենքներին ենթարկվող բազում մարդկանց միավորում է»¹¹:

Իսկ իրավական օրենքների ստեղծումը, համապատասխանաբար նաև ազատության պահպանումը հնարավոր են միայն այն ժամանակ, երբ պետության մեջ կատարվել է իշխանության բաժանում¹²: Իշխանության երեք ճյուղերը (օրենսդիր, գործադիր և դատական) փոխադարձորեն լրացնում և սահմանափակում են միմյանց: Գործադիր իշխանության գլուխը, պետության ղեկավարը և նրա կողմից նշանակվող պաշտոնատար անձինք կառավարում են՝ հրապարակելով որոշումներ, որոնք վերաբերում են կոնկրետ դեպքերին: Կառավարությունը, որը միաժամանակ և օրենսդիր է, բռնապետական է: Նույն պատճառով՝ կառավարիչ չպետք է լինի օրենսդիր և գործադիր իշխանությունից: Կանտը երդվյալ ատենակալների դատարանի կողմնակից է, քանի որ ատենակալների միջոցով ժողովուրդը, թեկուզ միջնորդականացված ձևով, այնուամենայնիվ, ինքն է իրականացնում արդարադատությունը:

Կառավարման ձևերը դասակարգելիս Կանտը ելնում է երկու չափանիշներից՝ սովորենությամբ օժտված անձանց թվից և ժողովրդի կառավարման եղանակից: Առաջին չափանիշը Կանտին թույլ է տալիս առանձնացնել պետության երեք ձև կամ իշխելու երեք տեսակ՝ միապետություն, ազնվապետություն և բռնապետություն: Ըստ երկրորդ չափանիշի, պետությունները բաժանվում են հանրապետությունների և բռնապետությունների: Ընդ որում, Կանտը շեշտում է, որ հանրապետական կառավարումը չպետք է շփոթել ժողովրդավարականի հետ: Ժողովրդավարությունը բռնապետական պետություն է, քանի որ «այն հաստատում է այնպիսի գործադիր իշխանություն, որի ժամանակ բոլորը վճռում են մեկի փոխարեն կամ, համենայն դեպս, մեկի դեմ»¹³: Իրավաչափ կարգ է համարում է Կանտը, «զուտ հանրապետությունը»: «Դա, - գրում է նա, - պետական միակ ամուր կարգն է, որի ժամանակ օրենքը գերակա է և կախված չէ ոչ մի առանձին անձից»¹⁴: Օրենքները, ըստ նրա, պետությանը ծառայում են որպես «ղեկավար սկզբունքներ»:

Կանտն աստիճանաբար հանգում է պետական իշխանության գերակայության տեսությանը, որի դեպքում անձը պետք է ենթարկվի պետության գերագույն ղեկավարությանը. վերջինս ճանաչվում է որպես բարձրագույն բարոյական արժեք: Իրավական կարգը ևս ճանաչվում է որպես բարձրագույն բարոյական արժեք՝ անկախ անձնական հայեցողությունից: Այն իրավիճակը, որում յուրաքանչյուրը ղեկավարում է իր հայեցողությամբ, Կանտը համարում է անօրինակա-

¹¹ Кант 1994, т. 6, 344.

¹² Нерсисянц 2004, 135.

¹³ Кант 1994, т. 7, 17.

¹⁴ Кант 1994, т. 6, 377.

նություն և բանականությանը հակասող¹⁵: Ուրեմն միայն իրավական կարգի պայմաններում են մարդիկ ենթակա իշխանությանը, դրանով իսկ յուրաքանչյուրը պահպանում է իր ազատությունն ու ինքնավարությունը: Հասարակական այդպիսի մտածողությունը և իրավագիտակցությունը այժմ էլ հարիր են եվրոպական հասարակական կարգերին: Այս առումով այն խիստ արդիական է հետխորհրդային համակարգերի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար, քանզի բոլոր մակարդակներում հաղթանակում է համատարած իրավական անօրինականությունը:

Կանտի՝ իրավական պետության և իրավունքի գերակայության հայեցակարգում ուրույն տեղ ունեն ազատ, ինքնավար մարդ-անձնավարությունը և նրա մասնավոր կյանքը, որտեղ սահմանափակված է պետական իշխանության միջամտությունը: Այս առումով Կանտը նշում է, որ պետական իշխանությունը պետք է լինի ճշմարիտ, արդարացի և *բանական*¹⁶, այսինքն՝ ողջամտության սահմաններում:

Գերմանական դասական փիլիսոփայության մեկ այլ փայլուն ներկայացուցիչ՝ Գևորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգելը, պետության և իրավունքի մասին համակարգված և ամբողջական ուսմունք է մշակել, որն էական ազդեցություն է ունեցել ինչպես իր ժամանակաշրջանի, այնպես էլ հետագա դարերի փիլիսոփայական և իրավաքաղաքական ուսմունքների վրա:

Հեգելի փիլիսոփայական համակարգում ազատությունը ներկայացնում է ոգու զարգացման ողջ ընթացքի որոշիչ սկզբունքը և վերջնական նպատակը¹⁷:

Իրավունքի և ազատության փոխհարաբերակցությունը օբյեկտիվ ոգու հեգելյան փիլիսոփայության մեջ միջնորդվում են *ազապ կամքով* (ընդգծումը՝ Ա.Խ.), որն ազատությունը ներկայացնում է իրավունքի գաղափարի դիալեկտիկայի ողջ բարդության մեջ: Բանականությունը, որի վրա հիմնվում է պետությունը, իրեն իրականացնում է որպես կամք:

Հասարակական հարաբերությունների կարգավորման գործում իրավունքը գործունակություն և դինամիզմ է ստանում կամքի շնորհիվ, որը ներկայացնում է իշխող դասակարգի պահանջմունքները, շահերն ու նպատակները: Այդ իսկ պատճառով իրավունքի ընդհանուր տեսության արմատական հիմնախնդիրներից է սոցիալական կյանքի վրա իրավական ներգործության մեխանիզմում կամքի ծագումնաբանության, կառուցվածքի և գործառնական նշանակության ուսումնասիրությունը: Փիլիսոփայության զարգացման պատմության մեջ կամքի կատեգորիայի մշակման գործում առանձնապես նշանակալի դերը պատկանում է Հեգելին: Այս հարցում նա շատ ավելի բարձր է կանգնած, քան իր և հետագա ժամանակների շատ փիլիսոփաներ ու հոգեբաններ, որոնք մինչև այժմ էլ (անտեսելով գիտության օբյեկտիվ տվյալները) քարոզում են իրականությունից կտրված և

¹⁵ Новгородцев 1914, 18.

¹⁶ Кант 1965, 79, 240.

¹⁷ Гегель 1990, 67.

նույնիսկ մտածողությունից անկախ «կամքի ազատությունը»: «Կամքը, որը կամում է միայն վերացական համընդհանուրը, ոչինչ չի կամում և հենց այդ պատճառով էլ կամք չէ», - գրում է Հեգելը: Կամքը բնորոշելով որպես իրավունքի հող՝ Հեգելը նշում է. «Կամքը, որը ոչինչ չի որոշում, իսկական կամք չէ... Մարդն իրականության մեջ է մտնում միմիայն որոշման շնորհիվ... Քարացածությունը չի ցանկանում դուրս գալ իր մեջ խտացած մտորումից, որում նա իր համար պահպանում է համընդհանուր հնարավորությունը: Սակայն հնարավորությունը դեռ իրականություն չէ»¹⁸:

Ընդգծելով իրականության հետ անձի կամքի՝ որպես մտածողության հատուկ տեսակի անմիջական կապը՝ Կանտը նշում է, որ «անհնար է պատկերացնել, թե մարդը, մի կողմից, բանական մտածող է, մյուս կողմից, կամող է, որ նրա մի գրպանում մտածողությունն է, իսկ մյուսում՝ կամքը. հակառակ պարագայում դա կլինի սին պատկերացում: Տարբերությունը մտածողության և կամքի միջև լոկ տարբերությունն է տեսական և գործնական վերաբերմունքի միջև: Սակայն դրանք չեն ներկայացնում երկու ունակություն, կամքը մտածողություն է որպես իրեն դեպի առկան տեղափոխող գոյ, որպես առկա գոյը իրեն տալու հակում»¹⁹: Եվ մեկ այլ աշխատության մեջ. «Այնժամ, երբ ինտելեկտը ջանում է միայն վերցնել աշխարհը, ինչպես որ այն կա, կամքը, ընդհակառակը, ձգտում է այն բանին, որ միայն հիմա աշխարհը դարձնի այն, ինչ նա պետք է լինի»²⁰:

Կամքի նշված հատկանիշները ներառում են նրա ոչ միայն հոգեբանական, այլև սոցիալական առումները: Այս կապակցությամբ հարց է ծագում եզակի և ընդհանուր կամքի հարաբերակցության մասին: Իրավունքի, պարտքի, կամքի և կրոնի մասին հեգելյան ուսմունքի առարկան «մարդկային կամքն է, այն էլ համընդհանուր կամքի հանդեպ անհատական կամքի հարաբերակցության առումով»²¹: Հենց համընդհանուր կամքն էլ, ըստ Հեգելի, իրավունքի հիմքն է, քանի որ եթե այն չլիներ այդպիսին, «ապա գոյություն չէր ունենա ոչ մի իսկական օրենք, ոչինչ չէր կարող սանձահարել բոլորին: Ամեն ոք կարող էր վարվել այնպես, ինչպես կկամենար և ուշադրություն չէր դարձնի մյուսների ինքնակամությանը»²²:

Բացատրելով եզակի և համընդհանուր կամքի հարաբերակցությունը՝ Հեգելը գրում է. «Մարդու առանձնահատկությունը կամ եզակիությունը չեն խոչընդոտում կամքի համընդհանրությունը, այլ ստորադաս են նրան: Արդար կամ բարոյական, այսինքն՝ գերազանց արարքը, թեև անհատականորեն (առանձին մարդու կողմից է կատարվել), սակայն բոլորը համաձայն են այդ արարքին: Հետևաբար, նրանք դրա մեջ ճանաչում ու տեսնում են հենց իրենց կամ իրենց սեփական կյանքը: Այստեղ կատարվում է նույնը, ինչը և արվեստի ստեղծագործությունների հետ»²³:

¹⁸ Гегель 1990, 67.

¹⁹ Гегель 1990, 68, 69.

²⁰ Гегель 1990, 338.

²¹ Гегель 1971, 29.

²² Гегель 1971, 30.

²³ Гегель 1971, 28.

Այս դատողություններում ճիշտ է ուրվագծված անհատների առանձին արարքների հանդեպ իրավունքի մեջ ընդհանուր կամքի նշանակությունը: Սակայն ուշադիր ընթերցողի աչքից չի վրիպում դեռևս հազիվ նշմարելի հեռացումը կամքի առարկայականությունից, օբյեկտիվայնությունից, իրականությունից: Եվ իսկապես, «գերազանց արարքը» ոչ միշտ է ստանում «համընդհանուր» ճանաչում, առաջին հերթին այն պատճառով, որ նրա իմաստն ու նշանակությունը տարբեր դասակարգերի ներկայացուցիչների կողմից շատ հաճախ գնահատվում է ոչ միայն տարբեր, այլև միանգամայն հակառակ իմաստով: Իրավունքը մասնավորապես ամրագրում է միայն այն արարքները, որոնք «գերազանց» են համարվում իշխող դասակարգերի տեսանկյունից:

Մարդկանց որոշակի արտադրական գործունեության և այդ գործունեության ընթացքում ձևավորվող հարաբերությունների հիման վրա ձևավորվում է ինչպես անհատական, այնպես էլ համընդհանուր կամք: Միևնույն հիմքը պայմանավորվում է անհատական և համընդհանուր կամքի միասնություն, թեև այդ միասնության ներսում առկա են նաև դրանց տարբերությունները: Անհատական կամքի բովանդակությունը ներառում է առաջին հերթին այն գիտելիքներն ու փորձը, որոնք կուտակել է մարդկությունը և տվյալ անհատի կողմից յուրացվել են հասարակական գիտակցությունից և հասարակական պրակտիկայի շնորհիվ: Ինչպես անհնար է ազգային, սոցիալական, կենցաղային և այլ կապերից դուրս մեկուսացված գոյություն ունեցող անհատը, այնպես էլ անհնար է նաև զուտ անհատական բովանդակությամբ կամք՝ միմիայն տվյալ կոնկրետ անհատի կամքը:

Բուն անհատի կամքը դառնում է այն, ինչ կա միայն կենսական հատուկ երևույթների, հանգամանքների ու պայմանների զանգվածի շնորհիվ, շնորհիվ այն հասարակական հարաբերությունների, որոնցում անխուսափելիորեն գոյություն է ունենում և գործում մարդը: Սակայն առանձին անհատի կամքի բովանդակության մեջ մտնում է նաև այն, ինչն անձնական ճանաչման, փորձի և ստեղծագործության արդյունք է: Այդ պատճառով էլ յուրաքանչյուր անհատական կամք ամենևին էլ հանդես չի գալիս որպես «ավտորիտար պահ», այլ ունի իր առանձնահատկությունը, անկրկնելիությունը, և դրանով իսկ ձեռք է բերում համեմատաբար ինքնուրույն գոյություն: Անհատական կամքի հենց այս հատկություններն են հիմք ծառայում ընդհանուր կամքի ձևավորման համար, քանի որ այս հատկությունների բացակայության դեպքում բոլորի կամքերը կհամընկնեին, և անհնար կլիներ տարբերակել անհատական առանձին կամքերը: Առանձին անհատների կամքը անմիջական և սերտ կապի մեջ է գտնվում ընդհանուր կամքի, նրա առաջացման, գոյության և գործունեության հետ: Անհատական և ընդհանուր կամքերն այնքան օրգանապես են կապված միմյանց հետ, որ նրանց միջև չկան կտրուկ եզրեր, դրանք փոխգործակցում են, փոխներթափանցում և իրենց զարգացման ընթացքում փոխակերպվում են մեկը մյուսին:

Հենց անհատական կամային ակտերի հիման վրա էլ ձևավորվում է ընդհանուր կամքը, որը թեև ներառում է առանձին անձանց անհատական ճանաչման, փորձի և ստեղծագործության որոշակի տարրեր, այնուամենայնիվ, չի հանգում դրանց պարզ թվաբանական գումարին: Կապերն այստեղ շատ ավելի բարդ են: Զարգացման ընթացքում դրանք ստանում են ընդհանրացման տարբեր աստիճաններ՝ սկսած ձևական կամ ոչ ձևական «փոքր խմբերին» պատկանող անհատների միատեսակ կամային ակտերի միասնությունից մինչև սոցիալական խոշոր գոյացումների՝ դասակարգերի, ազգի կամ ողջ ժողովրդի բարդ հասարակական կամքի ձևավորումը:

Հեգելի հայեցակարգի համաձայն, համընդհանուր կամքի պահանջը իրականությունից իր գազաթնակետին է հասնում միայն ազատության կատեգորիայի հետ նրա հարաբերակցությունը դիտարկելիս: Ազատության համընդհանրության մեջ «ազատությունն, անշուշտ, գտնվում է հենց իր մոտ, քանի որ այն չի հարաբերակցվում ոչ մի այլ բանի, քան ինքն իր հետ, և դրանով էլ հենց վերանում է որևէ այլ բանից կախվածության հարաբերությունը»²⁴: Կոնկրետ ազատության իրականությունն են հանդիսանում միայն պետությունը, բարոյականությունը, իրավունքը: Հեգելը գրել է. «Իրավունքի համակարգը իրագործված ազատության թագավորությունն է»: Այնուհետև՝ «Իրավունքն իսկապես ինչ-որ ընդհանրապես սուրբ բան է, սուրբ միայն այն պատճառով, որ նա բացարձակ հասկացության ինքնագիտակից ազատության առկա գոյն է»²⁵:

Մեր կարծիքով, ազատությունը ոչ թե հեգելյան «ոգու սկզբունքն» է, այլ իրականություն, որն արտահայտում է անհրաժեշտության զարգացման օրինաչափությունների ճանաչումը և դրանց կիրառումը մարդկանց պրակտիկ գործունեության մեջ: Այդ պատճառով էլ իրավաստեղծ գործունեության ընթացքում, օրինակ, որքանով ավելի խոր են բնորոշված իրավական նորմերում իրականության զարգացման օբյեկտիվ պահանջմունքները, միտումները, օրինաչափությունները, որքանով ճիշտ են նախանշված դրանցում ի շահ սոցիալական առաջընթացի այդ օրինաչափությունների կիրառության ուղիները, այնքանով էլ հասանելի է ազատության ավելի բարձր մակարդակը: Ընդ որում, հարցի առավել նպատակահարմար որոշման ընտրությունը կախված է ոչ միայն գործի իմացությունից, այլև այն պայմաններից, որոնցում իրականացվում է այդ որոշումը: Այստեղից հետևում է, որ իրապես գիտական իրավաստեղծությունը կարող է իրականացվել միայն ազատության պայմաններում: Դրա հետ մեկտեղ իրավունքը, արտահայտելով և օգտագործելով ճանաչված անհրաժեշտությունը, դառնում է ազատությանը հասնելու ամենաարդյունավետ միջոցներից մեկը:

Ոչ պակաս հետաքրքիր են հանցավոր արարք կատարած անձի կամքի ազատության վերաբերյալ Հեգելի նկատառումները: «Երբ լսում ենք, որ ազա-

²⁴ Гегель 1934, 50.

²⁵ Гегель 1934, 31, 53.

տությունը ընդհանրապես ցանկացածն անելն է, ապա նման պատկերացումը մենք կարող ենք համարել որպես մտքի կոլտուրայի լիակատար բացակայություն», - գրում է նա: Եվ այնուհետև. «Հասարակ մարդը կարծում է, որ ինքն ազատ է այն ժամանակ, երբ իրեն թույլատրվում է գործել կամայականորեն, սակայն հենց կամայականության մեջ է նրա անազատության պատճառը»²⁶:

Թեպետև Հեգելը իր պետաիրավական հայեցակարգով հանդես է գալիս որպես պետականամետ մտածող, այդուհանդերձ, հեգելյան մեկնաբանությամբ՝ պետությունը օրինական և բանական է (կամ այդպիսին պետք է լինի), որովհետև պետական իշխանությունը գործում է (պետք է գործի) օրենքի, բարոյականության և բանականության հենքի վրա:

Գերմանական դասական փիլիսոփայության հիմնադրույթները գաղափարական աղբյուր դարձան XIX դ. գերմանական իրավագիտության համար, որի շնորհիվ իրավաբանական ձևակերպում ստացավ «իրավական պետություն» կատեգորիան և օգտագործվեց արևմտյան ժողովրդավարական երկրների պետական ու սահմանադրական պրակտիկայում:

Եզրակացություններ

Այսպիսով, Նոր դարաշրջանում իրավական պետականության գաղափարները զարգացան նախորդ քաղաքական-իրավական մտքի նվաճումների և մարդու ազատությունների ու իրավունքների, պոզիտիվ իրավունքի և պետության նկատմամբ բնական իրավունքի գերապատվության, պետական իշխանության իրականացման իրավական ձևերի ու սահմանների, պետական տարբեր մարմինների իշխանական իրավագործությունների սահմանազատման մասին բնական-իրավական պատկերացումների հունով:

Այսօր էլ իրավական պետության ուսմունքը և պրակտիկան շատ ուսանելի են, այսպես կոչված, անցումային երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար իրավական պետություն կառուցելիս:

Գրականություն

Кант И. 1965, Сочинения в 6 т., т. 4, Москва, «Мысль», 478 с.

Кант И. 1994, Сочинения в 8 т., т. 4, Москва, «ЧОРО», 630 с.

Кант И. 1994, Сочинения, в 8 т., т. 6, Москва, «ЧОРО», 613 с.

Кант И. 1994, Сочинения, в 8 т., т. 7, Москва, «ЧОРО», 495 с.

Кант И. 1994, Сочинения, в 8 т., т. 8, Москва, «ЧОРО», 718 с.

Гегель Г. 1990, Философия права, Москва, «Мысль», 524 с.

Гегель Г. 1971, Работы разных лет, В двух томах, т. 2, Москва, «Мысль» 630 с.

Гегель Г. 1934, Сочинения. 14 томах, т. 7, Москва, Ленинград, «Соцэкгиз», 380 с.

Нерсесянц В.С. 2004, История политических и правовых учений. Учебник для вузов, Москва, «Норма», 944 с.

²⁶ Гегель 1934, 44, 45.

- Новгородцев П.И. 1914, История новой философии права (немецкие учения XVI-XIX ве-
ка). Лекции. Типо-лит. Н.А. Яшкина, 234 с.
- Соколов А.Н. 2002, Правовое государство: от идеи до ее материализации, Калининград,
«Янтарный сказ», 455 с.
- Валадес Диего 2009, Конституционные проблемы правового государства, Москва, «Идея-
Пресс», 168 с.
- Рабченко Н.Г. 2002, Проблемы естественного права в учениях немецких юристов: дис-
сертация канд. юрид. наук. Санкт-Петербургский ун-т МВД России, СПб., 210 с.
- Теория государства и права 2019, Учебник. 2-е изд., переаб. и доп., под ред. А.С. Пигол-
кина, Ю.А. Дмитриева, Москва, «Юрайт», 516 с.
- Wedekind G. 1963, Über die Regierungverfassungen, Berlin, Rot und Schwaz, 524 S.
- Störig H.J. 1993, Kleine Weltgeschichte der Philosophie, Frankfurt am Main, Frischer Taschen-
buch Verlag, 343 S.
- Schelauske H. 1968, Philosophische Probleme der Naturrechtsdiskussion in Deutschland, Köln, Ba-
chem, 642 S.

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Աստղիկ Խուրշուդյան

Ամփոփում

Իրավական պետության հայեցակարգային մոտեցումները պետության իրավական կառուցվածքի և կառավարման ձևի, իրավունքի գերակայության մասին մանրամասն մշակվեցին գերմանական դասական փիլիսոփայության, մասնավորապես Ի. Կանտի և Գ. Հեգելի փիլիսոփայական ուսմունքներում: Իրավական պետության կամ պետական իշխանության սահմանափակումը իրավունքով էական նշանակություն ունեցավ արևմտյան Եվրոպայի պետականաշինության պրակտիկայում և ժողովրդավարական կարգերի հաս-
տատման գործընթացում: Այն չի կորցրել իր արդիականությունը և պրակտիկ նշանա-
կությունը նաև մեր օրերում, հատկապես անցումային շրջանի պետականաշինության
ոլորտում: Շատ ուսանելի է նաև Հայաստանի Հանրապետության համար իրավական պե-
տություն կառուցելու գործում:

Բանալի բառեր՝ պետություն, իրավունք, իրավական պետություն, պետական իշխա-
նություն, փիլիսոփայական համակարգ, պետական իշխանության սահմանափակում, բա-
նականություն:

ОБОСНОВАНИЕ КОНЦЕПЦИИ ПРАВОВОГО ГОСУДАРСТВА В СИСТЕМЕ НЕМЕЦКОЙ КЛАССИЧЕСКОЙ ФИЛОСОФИИ

Астхик Хуршудян

Резюме

Детальное рассмотрение концептуальных подходов к правовому государству
в немецкой классической философии, в частности в философских учениях И. Канта
и Г. Гегеля, дает возможность заключить, что ограничение правового государ-

ства или государственной власти правом имело существенное значение в практике государственного строительства Западной Европы и в процессе установления демократических порядков. Оно не утратило своей актуальности и практического значения и в наши дни, особенно в сфере государственного строительства в переходный период, который переживает также Республика Армения.

Ключевые слова – государство, право, правовое государство, государственная власть, философская система, ограничение государственной власти, интеллект.

JUSTIFICATION OF THE CONCEPT OF THE STATE OF LAW IN THE SYSTEM OF GERMAN CLASSICAL PHILOSOPHY

Astghik Khurshoudyan

Abstract

This article discusses in detail conceptual approaches to the state of law in German classical philosophy, in particular in the philosophical doctrines of I. Kant and G. Hegel. The article substantiates the approach, according to which the restriction of the state of law or state power by law was essential in the practice of state building in Western Europe and in the process of establishing democratic orders. It has not lost its relevance and practical significance in our days, especially in the field of state building during the transitional period, which the Republic of Armenia faces as well.

Key words – state, law, state of law, state power, philosophical system, restriction of state power, intellect.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ «ՀԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌԵՐՈՒՄ»

ՆԵՂԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի հայցորդ
ՀՊՄՀ փիլիսոփայության և տրամաբանության ամբիոն
ՀՀ, Երևան, Արուսյան 52

Էլ. հասցե՝ n.i.petrosyan@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 22.10.2021, գրախոսվել է 28.10.2021, ընդունվել է տպագրության 05.07.2022
DOI: DOI: 10.53548/0320-8117-2022.2-97

Ներածություն

Կրթությունը մարդու մտավոր զարգացվածության, հմտությունների և ճանաչողական ընդունակությունների յուրացման մակարդակն է: Միաժամանակ կրթությունը ենթադրում է նաև լավ դաստիարակություն, վարքի կատարելություն և այլն, քանի որ կրթված մարդ ասելով հաճախ հասկանում ենք ոչ միայն այն, թե մարդն ինչ գիտի, այլև այն, թե ինչպես է իրեն դրսևորում միջավայրում: Կրթությունն ունի պատմական բնույթ, հասարակական կյանքի զարգացմանը համապատասխան՝ այն բարդանում է: Եթե տասնամյակներ ու դարեր առաջ ընդամենը գրել-կարդալ իմացողը կարող էր համարվել կրթված անձնավորություն, ապա այսօր կրթվածությունը ենթադրում է գիտելիքների հիմունքների հիմնավոր տիրապետում, գիտական աշխարհայացքի ձևավորում, սովորելու առաջավոր ձևերի տիրապետում, ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելու կարողություններ և այլն: Թեև կրթությունը հիմնականում մտավոր զարգացման բնութագիր է, բայց, այնուամենայնիվ, այն ակնարկում է նաև մարդու դաստիարակությունը: Նշանակում է կրթությունը ուսուցման և դաստիարակության արդյունք է, մարդու կայուն, կարելի է ասել՝ անդարձելի բնութագիրը:

Սույն հոդվածում փորձել եմ տալ դեռևս Գ-Դ դարերում կրթության ու դաստիարակության դերն ու նշանակությունը հայ ժողովրդի ազգային և բարոյական նկարագրի ձևավորման տեսանկյունից՝ որպես օրինակ ունենալով Հայոց առաջին հայրապետ Գրիգոր Լուսավորչի անվամբ մեզ հայտնի «Հաճախապատում ճառերի» ժողովածուն:

Ս. Գրիգոր Լուսավորիչը Հայոց եկեղեցու առաջին եպիսկոպոսապետ-կաթողիկոսն է, հայ եկեղեցու նվիրապետական կառույցի հիմնադիրը, որը Գ դարի վերջին և Դ դարի սկզբին իր ծավալած գործունեությամբ նպաստեց քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու գործին՝ մեկընդմիջտ մնալով սերունդների հիշողության մեջ:

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակվելուց հետո Ս. Գրիգոր Լուսավորիչը Տրդատ Մեծի աջակցությամբ երկրի տարբեր գավառներում հիմնում է բազմաթիվ եկեղեցիներ, ձեռնադրում հոգևորականներ¹:

Հայաստանի բոլոր շրջաններում բացվում են դպրոցներ, որտեղ, քրիստոնեական ուսուցումից բացի, դասավանդում էին նաև հունարեն և ասորերեն: Եկեղեցիներում ծիսական արարողությունները կատարվում էին այդ լեզուներով, թեպետ կրթված եկեղեցականներից շատերը Ս. Գրքի անհրաժեշտ հատվածները բերանացի թարգմանում էին հայերեն:

Հակառակ այն իրողության, որ դեռ չունեինք հայոց գրեր, այդուհանդերձ, հայ եկեղեցական ավանդությունը Ս. Գրիգոր Լուսավորչի անունով մեզ է ավանդել մի քանի կարևոր երկեր, որոնց շարքում իր բացառիկ արժեքով առանձնանում է «Հաճախապատում ճառք» ժողովածուն²:

Գրիգոր Լուսավորչի հեղինակած «Հաճախապատում ճառերը»

Բանասիրության մեջ երկերի հեղինակային պատկանելությունը կասկածի տակ է առնվել, բայց միայն Լուսավորչի անունը կրելը ցույց է տալիս այդ երկերի վայելած հեղինակությունը: Բացի այդ, ըստ մեր վաղ շրջանի պատմիչների և մատենագիրների վկայության, Գրիգոր Լուսավորիչն է ոչ միայն հայ հոգիների լուսավորիչը՝ «զմերոյ լուսաւորութանցն լուսաւոր վերակացուն», ինչպես նրան բնութագրել է Խորենացին, այլև «մերոյ լուսաւորութեան նախաշաւիղ և նահապետը», այսինքն՝ հիմնադիրը մեր եկեղեցական մատենագրության³:

Ճառերն ու քարոզները սերտորեն աղերսվում են մեկնողական երկերին: Սրանց հիմնական նպատակը նմանապես եղել է Ս. Գրքի և քրիստոնեական սկզբունքների բացատրությունը: Սակայն եթե մեկնությունները, որպես ուսումնասիրություններ, շարադրվում, գրառվում և ավելի շատ օգտագործվում էին ուսումնագիտական կենտրոններում, ապա քարոզները կամ ճառերը, իբրև կենդանի խոսք, հնչեցվում էին ատյանում, եկեղեցում, և այդ պատճառով էլ կոչվում էր ատենախոսություն, բանախոսություն:

Մեծանուն եկեղեցականների ճառերը կամ քարոզները, որոնք ասվել էին տարբեր առիթներով, և գրի էին առել հենց հեղինակները կամ ավելի հաճախ սղագիրները, արտագրվելով ու բազմացվելով դառնում էին հավատացյալ ժողովրդի սեփականությունը:

Ճառախոսական երկերն ու քարոզներն իրենց բուռն զարգացումն են ապրում հատկապես Ա-Դ դարերում, երբ հրամայական անհրաժեշտություն կար (հիմնականում ոչ գրաճանաչ ժողովրդին) բացատրելու Ս. Գիրքը և քրիստոնեական հայտնության բոլոր կողմերը: Այս նպատակով թարգմանված՝ ընդհանրական եկեղեցու հայրերի ու վարդապետների ճառերը կարևոր խթան են դառնում,

¹ Ազանթագեղոս 1983, 488:

² Սրբոյ Հօրն Մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Հաճախապատում ճառք լուսաւորք 1894, 5:

³ Մովսեսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց 1913, 247:

որ հայ իրականության մեջ այդ ճառերի հետևողությամբ գրվեն համաբնույթ ճառեր (ինչպիսիք են Գրիգոր Լուսավորչի անվամբ հայտնի «Հաճախապատումը», Հովհան Մանդակունու, Գրիգոր Տաթևացու և այլոց ճառերը)⁴:

«Հաճախապատում» բառը ժամանակակից բառարանների բացատրությամբ նշանակում է ընդարձակ և մանրամասն պատմող, գրող, հաճախաբան, ինչպես նաև կրոնական, մեկնաբանական և վարդապետական գրվածք, բանավոր կամ գրավոր շնորհավորանքի խոսք, ներբողական, երբեմն էլ գործածվում է երկար-երկար խոսք երկարաբանության իմաստներով⁵:

Հայ եկեղեցու առաքելական վարդապետության հիմնական աղբյուր Աստվածաշնչից հետո «Հաճախապատում ճառքը» մեծ արժեք է հայ եկեղեցական մատենագրության մեջ, որն անփոփոխ տալիս է դավանական և բարոյական բոլոր սկզբունքները՝ իբրև հիմունք և սահման նորա հավատարիմ «որդվոց»⁶:

Ժողովածուն բաղկացած է (23 ԻԳ) հոգելից, հոգեշահ ճառերից. դրանցից յուրաքանչյուրը նվիրվել է կա՛մ դավանական, կա՛մ բարոյախոսական մի նյութի:

Ճառերի դասավորության մեջ չկա որևէ օրինաչափություն կամ տրամաբանություն: Այդ ամենին զուգահեռ՝ ճառագիրը նաև հասարակական խնդիրներ չի հարուցում, այլ խոսում է անհատական արարքների մասին⁷:

Ճառերից յուրաքանչյուրը, բնականաբար, նվիրված լինելով որևէ թեմայի, այնուամենայնիվ, չի կենտրոնանում մի խնդրի վրա, և հեղինակը թեթևակի թոչնու է զանազան կողմեր, որն էլ դժվարացնում է մտքի զարգացմանը հետևելը: Հեղինակը պարզապես ձգտում է խրատել և ուսուցանել: Ճառերի մեծ մասը (17) բարոյախրատական բնույթի «հոգևոր խրատներ» են, իսկ մնացածը ներառում է Ամենասուրբ Երրորդության, արարչագործության, մարդու ստեղծման, ազատ կամքի, բարու և չարի հարցերը:

Եզրակացություններ

Թեև ճառերի նյութը կրոնաբարոյական է, սակայն ճառերն ընդհանուր առմամբ ունեն խրատական, դաստիարակչական և ուսուցողական բնույթ ու նկարագիր և, լինելով տարբեր ծավալի ու բովանդակության, դրանցում հնարավոր է առանձնացնել քրիստոնեական վարդապետությանը, բարոյականությանը և կենցաղավարությանը վերաբերող առանձին հարցեր:

Հեղինակի նպատակն է ուսուցանել քրիստոնեական հավատք, քարոզել բարեպաշտություն, քրիստոնեական ուսմունք և բարոյական արժեքներ, արմատավորել նորադարձ հոգիների մեջ սրբություն և առաքինություն: Ճառագիրը

⁴ Ինչպես, օրինակ, Տեառն Յովաննու Մանդակունույ Հայոց հայրապետի ճառք 1860:

⁵ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1974, 439, տե՛ս նաև Կարինեան 1999:

⁶ Սրբոյ Հօրն Մերոյ երանելոյն Գրիգորի Լուսավորչի Հաճախապատում ճառք լուսատրք 1894, Ը:

⁷ Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսավորչի յաճախապատում ճառք եւ աղոթք 1838, 4, հմմտ. Յաճախապատում 2005:

նաև քարոզում է քրիստոնեական առաքինի կյանքի պայմաններ, բարքերի մաքրություն, ժուժկալություն, գթություն: Խրատում է բարին գործել, հեռու մնալ անառակությունից, չարիքից, և այս բոլորը «աշխարհի խաղաղութան և շինութան համար»⁸:

Քրիստոնեության մուտքը հայոց հող և հայ սրտերի մեջ պատմական կարևոր իրադարձություն էր: Դ դարում քրիստոնեության պետական կրոն հռչակումը Հայաստանում մտավոր շարժման մի նոր գաղափարախոսության և ազգային եկեղեցու ոգու արթնացման սկիզբ և կարևոր ազդակ էր: Գրիգոր Լուսավորիչն իր կազմակերպչական գործունեության ընթացքում կարողացավ նոր վարդապետության համար հաջող հող նախապատրաստել:

Այս առիթով ճիշտ է նկատել Լեոն. «Ամենեն դժվար գործը, որ կանգնած էր հենց սկզբից քրիստոնեության առաջ՝ ժողովրդի դաստիարակությունն էր: ...Փրկել նոր կրոնը կարելի էր ժողովուրդը դաստիարակելու միջոցով»⁹:

Արդարև, անգնահատելի է Լուսավորչի անվանակիր երկերի դերն ու նշանակությունը, բայց ավելի կարևոր է այն, որ նա վերստին նոր կյանքի կոչեց հայությանը՝ իր առաքելական քարոզչությամբ, վարդապետությամբ և մատենագրական երկերով զարկ տվեց հարյուրավոր սերունդների կրթության գործին:

«Հաճախապատում ճառքը», լինելով հայ եկեղեցական մատենագրության առաջին աշխատություններից մեկը և առաջին կրոնական բնույթ ունեցող երկը, իր բարոյական, խրատական և դաստիարակչական առաքելությամբ բացառիկ գրական հուշարձան է նաև ապագա սերունդների համար: Բացի այդ, արտահայտելով Հայ Առաքելական եկեղեցու դավանաբանական դիրքորոշումը՝ հիմնված Ս. Գրքի, առաքելական ավանդության և ընդհանրական եկեղեցու գաղափարախոսության վրա, «Հաճախապատում ճառքը» է՛լ ավելի արժեքավորվեց որպես Հայ եկեղեցու դավանության և վարդապետության կարևորագույն սկզբնաղբյուր:

Գրականություն

Ազգաթանգեղոս 1983, Պատմութիւն Հայոց, աշխատ. Գ Տեր Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 700 էջ:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1974, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 574 էջ:

Լեո 1966, Երկերի ժողովածու, հ. 1, Հայոց պատմություն, Երևան, «Հայաստան», 567 էջ:

Կարինեան Խ. 1999, Բառարան յունարէնէ հայերէն, Աթենք, հրատ. նշված չէ, 1239 էջ:

Մովսեսի Խորենացու Պատմութիւն Հայոց 1913, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Տիփլիս, տպ. Մն. Մարտիրոսեանցի, 396 էջ:

Մկրյան Մ. 1976, Հայ հին գրականության պատմություն (V-X դարեր), Երևան, ԵՊՀ հրատ., 566 էջ:

Յաճախապատում 2005, Գրաբար բնագրից թարգմանեց Մովսէս Նաճարեանը, Հալեպ, տպ. Արեւելք, 239 էջ:

⁸ Տէր-Միքէլեան 1894, 74, տե՛ս Մկրյան 1976, 128-129:

⁹ Լեո 1966, 420-424:

Սրբոյ Խորն մերոյ Գրիգորի Լուսավորչի յաճախապատում ճառք եւ աղոթք 1838, Վենետիկ, տպ. Սրբոյն Ղազարու, 222 էջ:

Սրբոյ Հօրն Մերոյ Երանելոյն Գրիգորի Լուսավորչի Հաճախապատում ճառք լուսաւորք 1894, աշխատ. Ա. Տեր-Միքայելյանի, Էջմիածին, տպ. մայր աթոռոյ Ս. Էջմիածնի, 354 էջ:

Տեառն Յովաննու Մանդակունոյ Հայոց հայրապետի ճառք 1860, Բ տպագրութիւն, Վենետիկ, Ս. Ղազար, 219 էջ:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ «ՀԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌԵՐՈՒՄ»

Նելլի Պետրոսյան

Ամփոփում

Հայ մատենագրության մեջ Ս. Գրիգոր Լուսավորչի անունով մեզ հասած երկերից մեկը՝ «Յաճախապատում ճառքը», էական ազդեցություն է թողել հայ ժողովրդի քրիստոնեական մտքի և բարոյական դաստիարակության հետագա զարգացման վրա: Թեպետ այս երկի հեղինակային պատկանելությունը բանասիրության մեջ կասկածի տակ է առնվել, բայց բազմաթիվ ուսումնասիրողների և պատմիչների վկայությամբ (Մ. Խորենացի) քրիստոնեության հիմնադիրն է այդ աշխատության հեղինակը:

Հայ եկեղեցու առաքելական վարդապետության հիմնական աղբյուր Աստվածաշնչից հետո «Հաճախապատում ճառքը» մեծ արժեք է հայ եկեղեցական մատենագրության մեջ, որն անփոփոխ տալիս է դավանական և բարոյական բոլոր սկզբունքները:

Բանալի բառեր՝ «Յաճախապատում ճառք», Գրիգոր Լուսավորիչ, բարոյախրատական, հեղինակային պատկանելություն, Հայոց եկեղեցի, կրթություն, դաստիարակություն:

ЗНАЧЕНИЕ ОБРАЗОВАНИЯ И ВОСПИТАНИЯ В «МНОГОВЕЩАТЕЛЬНЫХ РЕЧАХ» ГРИГОРИЯ ПРОСВЕТИТЕЛЯ

Нелли Петросян

Резюме

«Многoveschatelnye речи» Григория Просветителя – одна из важных работ литургического характера в армянской религиозной литературе. Труд Григория Просветителя имеет огромное морально-дидактическое значение.

Хотя и авторство этого труда приписывалось не только ему, но на самом деле рассматриваемое ценное религиозно-богословское сочинение, по мнению ряда исследователей и историков (М. Хоренаци), было написано основоположником христианского учения Григорием Просветителем. Вслед за Святым Писанием «Многoveschatelnye речи» стали источником апостольского учения Армянской апостольской церкви, в котором собраны ее основные теологические и нравственные положения.

Ключевые слова – «Многовещательные речи», Григорий Просветитель, морально-дидактический, авторская принадлежность, Армянская апостольская церковь, образование, воспитание.

THE MEANING OF EDUCATION AND UPBRINGING IN "FAITHFUL SPEECHES" OF GREGORY THE ILLUMINATOR

Nelly Petrosyan

Abstract

The "Faithful speeches" of Gregory the Illuminator is one of the most important works of liturgical character in the Armenian religious literature. The work of Gregory the Illuminator has a great moral-didactic significance.

Although the authorship of this work was attributed to Mesrop Mashtots, but in fact this is a valuable religious-theological composition and, according to a number of researchers (M. Xorenaci), was written by the founder of Christian teaching – Gregory the Illuminator. After the Bible the "Faithful speeches" became the oldest source of the Armenian Apostolic Church doctrine, which comprises its moral principles.

Key words – "Faithful speech", Gregory the Illuminator, moral-didactic significance, the author's identity, Armenian Apostolic Church, education, upbringing.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՐՁԸ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Տաթև Հակոբյան

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ

ՀՀ, Երևան, Նալբանդյան 128

Էլ. հասցե՝ tatevhakobyan04@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 15.04.2019, գրախոսվել է 10.02.2021, ընդունվել է տպագրության 05.07.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.2-103

Ներածություն

Հայաստանում միջհամայնքային համագործակցության համար հնարավորություն ստեղծեցին օրենսդրական փոփոխությունները, որոնց համաձայն, 2006 թ. հունվարի 1-ից¹ գույքահարկի, իսկ 2009 թ. հունվարի 1-ից² հողի հարկի բազաների վարումն անցնում էր տեղական ինքնակառավարման մարմիններին, սակայն ոչ բոլոր համայնքներն ունեին բավարար ռեսուրսներ հարկերի բազաների վարումն ապահովելու համար, ինչն էլ նպաստեց համայնքների համագործակցությանը: Դրա շնորհիվ մեր երկրում համայնքների համագործակցության հիմնական ուղղությունը դարձավ հարկերի միասնական բազաների վարումը: Փորձենք ներկայացնել Հայաստանում համայնքների համագործակցության հիմնական տեսակներն ու դրանց գործունեության արդյունքները:

Համայնքների միությունը՝ որպես համագործակցության հիմնական տեսակ

Հարկահավաքման ոլորտում համայնքների համագործակցությունը բավական տարածված է տարբեր երկրներում, և, ինչպես նշում են տեսաբանները, «եթե համայնքների համագործակցության շնորհիվ առկա է մասշտաբից տնտեսում, ապա դա տեսանելի է նախ և առաջ հարկերի հավաքման ոլորտում»³:

Հայաստանի Հանրապետությունում ձևավորվել է միջհամայնքային համագործակցության երկու տեսակ՝ միջհամայնքային մարմնի ստեղծում ենթադրող համայնքների միությունը և պայմանագրի հիման վրա ձևավորված միջհամայնքային կառույցը:


¹ ՀՀ օրենքը «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին, 03.12.2003, ՀՕ-38:

² ՀՀ օրենքը «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին, 28.11.2006, ՀՕ-223:

³ Allers, de Greef 2018, 146.

2018 թ. մարտի 7-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքը, որտեղ մանրամասն ներկայացված են այդ միավորումների ստեղծման, գործունեության, լուծարման սկզբունքները: Չնայած այն բանին, որ օրենսդրական կարգավորում ստացել են միջհամայնքային միավորումները, մեր երկրում համագործակցության հիմնական եղանակը համայնքների միություններն են եղել, քանի որ միջհամայնքային միավորումները բավական երկար ժամանակ չէին ստանում օրենսդրական կարգավորում, ինչն էլ խոչընդոտում էր այդ մարմինների ձևավորումը: Այդ պատճառով էլ համայնքները այլ համայնքների հետ համագործակցելու և իրենց համատեղ խնդիրները լուծելու համար ստեղծեցին *Իրավաբանական անձանց միություն (ԻԱՄ)* հանդիսացող համայնքների միություններ: 2016 թ. ընդունված փոփոխություններով վերացան իրավաբանական անձանց միությունները, և սահմանվեց, որ «ոչ առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների կամ օրենքով նախատեսված այլ ձևերով»⁴: Հետևաբար, արդեն 2017 թ. հետո միությունները գրանցվեցին որպես հասարակական կազմակերպություն կամ հասարակական հիմնադրամ, իսկ մինչ այդ ստեղծված ԻԱՄ-ները պետք է մինչև 2018 թ. փետրվարը վերակազմավորվեին: Դրանք կամավոր սկզբունքով ստեղծված, շահույթ չհետապնդող կազմակերպություններ են: Ինչպես երևում է գծապատկերից, այս միություններն ունեցել են ինչպես ընդհանուր կառավարում իրականացնող նախագահ, այնպես էլ ընթացիկ ղեկավարում իրականացնող գործադիր տնօրեն: Սակայն, եթե հաշվի առնենք, որ այս կառույցների հիմնական գործառույթը հարկերի միասնական բազաների վարումն է, ապա կարծում ենք, որ այս կառուցվածքը բավական մեծ է:

Գծապատկեր

Համայնքների միությունների կառուցվածքը⁵

Համայնքների միությունների (ՀՄ) բյուջեն ձևավորվել է անդամավճարների, ինչպես նաև դրամաշնորհների կամ տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից որևէ տեսակի աջակցության միջոցով: Այս աջակցությունն էլ

⁴ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 16.12.2016, ՀՕ-32:

⁵ Դրամիյան, Մանուկյան, Դավաթյան, Գրադյան 2014, 15:

հավասարապես բաշխված չի եղել բոլոր համայնքների միությունների վրա, մասնավորապես Մարտունու, Մխչյանի, Վարդենիսի, Մուշի, Ստեփանավանի, Սևանի համայնքների միություններին ոչ մի աջակցություն չի ցուցաբերվել, մինչդեռ կան միավորումներ, որոնք աջակցություն են ստացել մի քանի անգամ:

Տվյալները չեն փոխվել մինչև 2015 թ. ներառյալ: Գրանցված են եղել 25 ՀՄ-ներ, որոնք ընդգրկել են համայնքների ավելի քան 54 տոկոսը՝ 495 համայնք (աղ. 1): Հիմնական մասը՝ 17 համայնքների միություն, զբաղվել է անդամ-համայնքների հողի հարկի և գույքահարկի բազաների հաշվառմամբ և հաշվարկմամբ:

Ինչպես նշեցինք, Համայնքների միությունների ստեղծման հիմնական նպատակը հարկերի բազաների միասնական վարումն է եղել, սակայն կան միություններ, որոնց ստեղծման հիմքում եղել են այլ նպատակներ: Առանձնակի ուշադրության է արժանի Վեդի միջհամայնքային միավորում ՀՄ-ի գործունեությունը: Համայնքների խոշորացումը չի ընդգրկել այս միության անդամ-համայնքներին, և միությունը շարունակում է գործել բավական ակտիվ և արդյունավետ: Ճիշտ է, այս միությունը կատարում է տարբեր ծրագրերի մշակում և իրականացում, բայց ամենից արդյունավետը անդամ-համայնքներում աղբահանության կազմակերպումն է: 2010 թ. սկսած՝ Վեդիի միջհամայնքային միավորման անդամ-համայնքների աղբահանությունը իրականացվում է համատեղ՝ Եվրոպական միության կողմից տրված 200 հազար եվրո դրամաշնորհի միջոցով: Այդ ծրագրի իրականացման 20 տոկոսն էլ ներդրվել է անդամ-համայնքների կողմից: Ստեղծվել է «Մաքուր երկիր» ՍՊԸ-ն, ձեռք են բերվել աղբամաններ և աղբատար մեքենաներ: Առանձին 5 հա տարածք է հատկացվել աղբավայր հիմնելու համար: 21 մլն դրամ հատկացվել է տարածքը փորձաքննելու, ցանկապատելու, վարչական շենք կառուցելու, հոսանք, ջուր անցկացնելու համար: Բնակիչներին բաժանվում են կանաչ և սև պոլիէթիլենային տոպրակներ՝ աղբի տարանջատման համար: Բացի այդ, «Մաքուր երկիր» ՍՊԸ-ն աղբի վերամշակման ծրագիր է մշակել, որի առաջին փուլն իրականացնելու համար 50.000 ԱՄՆ դոլար դրամաշնորհ է ստացել ՄԱԿ-ի Հայաստանի գրասենյակից: Այս գումարով վերամշակման արտադրամասի համար ձեռք է բերել տարածք: Արտադրամասի կեսն արդեն պատրաստ է, տեղադրել են հոսքագիծ: Ծրագիրն ամբողջությամբ իրականացնելու համար անհրաժեշտ են բավական մեծ ֆինանսական ներդրումներ: Այդ պարագայում այն կդառնա Հայաստանի առաջին աղբ վերամշակող արտադրամասը⁶: Սա միջհամայնքային համագործակցության տեսակ է, որի շնորհիվ ստեղծվում է մասնավոր իրավաբանական անձ՝ համայնքին ծառայություններ մատուցելու համար: Համագործակցության այս օրինակը բավական տարածված է Ֆրանսիայում, որտեղ համայնքներին ծառայություն մատուցելու համար գործում են մոտ 1200

⁶ «Մաքուր երկիր» ՍՊԸ-ի տնօրեն Յուրա Հարությունյանի հարցազրույցը hetq.am-ին:

սահմանափակ պատասխանատվության ընկերություններ՝ ստեղծված համայնքների խմբի կամ այլ հասարակական կազմակերպությունների կողմից⁷:

Միջհամայնքային համաձայնագրեր

Հայաստանում համայնքների համագործակցության մյուս տաքերակի՝ միջհամայնքային կառույցի հիմքում միջհամայնքային համաձայնագիրն է: Սա կամավոր համագործակցության տեսակ է, կառուցվածքով քիչ կարգավորված, քանի որ չի ենթադրում պաշտոնական մարմնի ստեղծում, որը պետք է վերահսկի համաձայնության իրականացումը⁸: Միջհամայնքային համաձայնագրով համայնքները կարող են բաժանել աշխատանքներն իրար մեջ կամ իրականացնել մի համայնքի աուֆօրս: Մեր երկրում երկրորդ տարբերակն է, այսինքն, մեկ համայնք իրականացնում է հարևան համայնքների հողի հարկի և գույքահարկի բազաների վարումը: Միջհամայնքային կառույցների կազմում միայն գյուղական համայնքներ են, որոնք որոշակի վճարի դիմաց փոխանցում են այս գործառույթի իրականացումը մեկ այլ համայնքի:

Աղյուսակ 1

ՀՀ-ում գործող համայնքների միությունները՝ ըստ մարզերի և դրանցում ընդգրկված համայնքների թիվը (2012 թ.)⁹

Մարզերը	Համայնքների միությունները	Համայնքների միություններում ընդգրկված համայնքների թիվը
Ք. Երևան	Հայաստանի համայնքների միություն	40
Արագածոտն	Ապարան, Մուշ	33
Արարատ	Վեդի, Արարատ, Հայանիստ, Արարատ	67
Արմավիր	-	-
Գեղարքունիք	Մարտունի, Սևան, Գեղամա, Վարդենիս	61
Լոռի	Գուգարք, Թումանյան, Ստեփանավան, Տաշիր	91
Կոտայք	-	-
Շիրակ	Ախուրյան	8
Սյունիք	Մեղրի, Սիսիան, Գորիս, Կապան	108
Վայոց Ձոր	Վայոց Ձոր	27
Տավուշ	Նոյեմբերյան, Դիլիջան, Բերդ, Իջևան	60
Ընդամենը	25	495

Համայնքների միությունների և միջհամայնքային կառույցների մասին պաշտոնական տվյալներ չկան: Միակ պաշտոնական տվյալը, որն ամեն տարի հրապարակվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար-

⁷ Council of Europe (CoE) 2010, 67.

⁸ Slack 2007, 22.

⁹ Թումանյան 2015, 25:

րության կողմից, հարկային միասնական բազա վարող մարմինների թիվն է: Պարզ է, որ համայնքների խոշորացումից հետո դրանք պետք է կտրուկ նվազեին: Եթե 2017 թ. հունվարի 1-ի դրությամբ հողի հարկի և գույքահարկի միասնական բազա վարող համայնքների միությունները 12-ն են եղել, իսկ միջհամայնքային կառույցները՝ 41-ը¹⁰, ապա 2019 թ. դրանց թիվը համապատասխանաբար եղել է 3 և 21¹¹: Գործող միջհամայնքային կառույցների և համայնքների միությունների տվյալները տե՛ս աղ. 2-ում:

Աղյուսակ 2

Գույքահարկի և հողի հարկի բազաները համատեղ վարող կառույցները (2019 թ.)¹²

Մարզեր	Համայնքների միություն (ՀՄ)		Միջհամայնքային կառույց (ՄՀԿ)	
	Քանակը	Անվանում	Քանակը	Անվանում
Արագածոտն	0		9	Արուն, Սասունիկ, Ավան, Մաստարա, Դաշտաղեն, Կաթնաղբյուր, Ներքին Բազմաբերդ, Ներքին Սասնաշեն, Թաթուկ
Արարատ	2	Մխչյան, Հայանիստ	2	Ոսկետափ, Վերին Արտաշատ
Արմավիր	0		1	Աղավնատուն
Գեղարքունիք	0		3	Ծովագյուղ, Ծովակ, Տորֆավան
Լոռի	0		2	Բազում, Վահագնի
Կոտայք	0		0	
Շիրակ	0		4	Ազատան, Սարտակ, Պեմզաշեն, Մեղրաշեն
Սյունիք	0		0	
Վայոց Ձոր	0		0	
Տավուշ	1	Իջևան	0	
Ընդամենը	3		21	

Խոշորացման հետևանքով համայնքների միություններից շատերը կորցրել են իրենց նշանակությունը, քանի որ դրանց անդամ-համայնքները ընդգրկվել են միավորված համայնքներում: Չնայած այն բանին, որ դրանց մեծ մասը գրանց-

¹⁰ Ամփոփ տեղեկանք գույքահարկի և հողի հարկի տվյալների բազաների վերաբերյալ (2017 թ. հունվարի 1-ի դրությամբ), Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

¹¹ Ամփոփ տեղեկանք գույքահարկի և հողի հարկի տվյալների բազաների վերաբերյալ (2019 թ. փետրվարի 26-ի դրությամբ), Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

¹² Տեղեկանք ՀՀ մարզերում գույքահարկի և հողի հարկի բազաներ շահագործող Համայնքների միությունների և միջհամայնքային կառույցների վերաբերյալ (2018 թ. փետրվարի 26-ի դրությամբ), Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

ված է ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստրում¹³ որպես գործող, սակայն մարզպետարաններից, համայնքապետարաններից ստացված տվյալներով, իրականում գործում է միայն 4 կազմակերպություն՝ հողի հարկի և գույքահարկի հաշվարկումն ու հաշվառումն իրականացնող Հայանիստ, Մխչյան, Իջևան ՀԿ-ները և Վեդի միջհամայնքային միություն ՀԿ-ն:

Եզրակացություններ

Ուսումնասիրելով Հայաստանում համայնքների համագործակցության կուտակված փորձը՝ կարող ենք եզրակացնել.

- չնայած այն փաստին, որ համայնքների կեսից ավելին 2015 թ. ընդգրկված է եղել համայնքների միություններում, այս երևույթը մեր երկրում չի զարգացել մի շարք խոչընդոտների պատճառով, որոնցից հիմնականը համայնքի ֆինանսական ռեսուրսների սակավությունն ու օրենսդրական դաշտի անկատարությունն են:

- 2015 թ. սկսեցին իրականացվել որոշակի քայլեր, մասնավորապես համայնքների խոշորացման գործընթացը, որն ուղղված էր համայնքների ֆինանսական վիճակի բարելավմանը, իսկ «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի ընդունումն էլ հիմք դարձավ համայնքների համագործակցության տարբերակներից մեկի՝ միջհամայնքային միավորումների ստեղծման և զարգացման համար: Սակայն համայնքների խոշորացման արդյունքները ցույց են տալիս, որ համայնքների ֆինանսական խնդիրները դեռևս չեն լուծվել:

- Չնայած այս գործընթացը մեր երկրում չի զարգացել մի շարք խնդիրների պատճառով, կուտակված փորձը կարող է հիմք դառնալ ապագայում մեր երկրում համայնքների համագործակցության համար, որը կարող է իրականացվել ոչ միայն օրենսդրական կարգավորում ստացած միջհամայնքային միավորումների, այլև համագործակցության այլ տարբերակների միջոցով ևս:

Գրականություն

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգ <https://www.e-register.am/am/search> (ներբեռնման օրը՝ 15.04.2019):

Դրամիյան Ա., Մանուկյան Ա., Դավաթյան Ա., Գրադյան Ա. 2014, Հայաստանում գործող միջհամայնքային կազմակերպությունների գործունեության ներկա վիճակը, մարտահրավերները և զարգացման հեռանկարները, Երևան, «Վան Արյան», 69 էջ:

Թումանյան Դ. 2015, Տեղական ինքնակառավարումը Հայաստանում 2012-2013 թթ., գիրք 6, Երևան, «Վան Արյան», 392 էջ:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, <http://www.mtad.am/> (ներբեռնման օրը՝ 15.04.2019):

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 16.12.2016, ՀՕ-32:

¹³ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգ:

- ՀՀ օրենքը «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին, 03.12.2003, ՀՕ-38:
- ՀՀ օրենքը «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին, 28.11.2006, ՀՕ-223:
- «Մաքուր երկիր» ՍՊԸ-ի տնօրեն Յուրա Հարությունյանի հարցազրույցը hetq.am-ին, <https://hetq.am/hy/article/63810> (ներբեռնման օրը՝ 15.04.2019):
- Council of Europe (CoE) 2010, The United Nations Development Programme (UNDP) and the Local Government Initiative (LGI) of the Open Society, Inter-municipal cooperation, Toolkit Manual, 105 p.
- Enid Slack 2007, Managing the Coordination of Service Delivery in Metropolitan Cities: The Role of Metropolitan Governance. The World Bank Finance Economics and Urban Development Urban Development Unit, 67 p.
- Allers M.A., de Greef J.A. 2018, Intermunicipal Cooperation, Public Spending and Service Levels, Local Government Studies, Taylor & Francis Journals, vol. 44 (1), p. 127-150.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՐՁԸ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Տաթև Հակոբյան

Ամփոփում

Հայաստանում միջհամայնքային համագործակցության համար հնարավորություն ստեղծեցին օրենսդրական փոփոխությունները, որոնց համաձայն, գույքահարկի և հողի հարկի բազաների վարումն անցնում էր տեղական ինքնակառավարման մարմիններին, սակայն ոչ բոլոր համայնքներն ունեին բավարար ռեսուրսներ այն իրականացնելու համար, ինչն էլ նպաստեց համայնքների համագործակցությանը: 2018 թ. ընդունված ՀՀ օրենքը «Միջհամայնքային միավորումների մասին» խթան էր Հայաստանում համայնքների համագործակցության զարգացման համար, այն տեղական ինքնակառավարման ոլորտի բարեփոխումների հիմնական ուղղություններից է: Ընդհանուր խնդիրների լուծման նպատակով համայնքները համագործակցում են իրար հետ՝ ձևավորելով համայնքային միություններ և միջհամայնքային կառույցներ:

Բանալի բառեր՝ համայնք, միջհամայնքային համագործակցություն, համայնքների միություն, միջհամայնքային միավորում, միջհամայնքային կառույց, հարկեր, օրենսդրական կարգավորում:

ОПЫТ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ В СФЕРЕ МЕЖОБЩИННОГО СОТРУДНИЧЕСТВА

Татев Акопян

Резюме

Мотивацией межобщинного сотрудничества в Армении стали законодательные изменения, согласно которым вопросами учета баз налогов на имущество и землю занимаются органы местного самоуправления.

Закон РА «О Межобщинных объединениях», принятый в 2018 году, стал стимулом для развития межобщинного сотрудничества в Армении, что является одним из основных направлений реформ в области местного самоуправления.

Общины сотрудничают для решения общих проблем, создавая общинные союзы и межобщинные структуры.

Ключевые слова – община, межобщинное сотрудничество, общинный союз, межобщинное объединение, межобщинная структура, налоги, законодательное регулирование.

THE EXPERIENCE IN INTERCOMMUNAL COOPERATION OF THE REPUBLIC OF ARMENIA

Tatev Hakobyan

Abstract

The main motive for inter-communal cooperation in Armenia was legislative changes, according to which the accounting of the bases of property taxes and land tax was transferred to the local self-government bodies, but not all communities had sufficient resources, which contributed to inter-communal cooperation.

The Law "On Inter-Community Unions" adopted in 2018 became an incentive for the development of intercommunity cooperation in Armenia, which is one of the main directions of local government reforms. Despite existing obstacles, communities work together to solve common problems, creating communal unions and intercommunal structures.

Key words – community, intercommunal cooperation, communal union, Inter-Community Unions, intercommunal structure, tax, legislative regulation.

**ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 2021 Թ. ԱՐՏԱՀԵՐԹ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ**

Գևորգ Պողոսյան

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր
ՀՀ, Երևան, Արամի 44
Էլ. hawugb' gevork@sci.am

Ռիմա Պողոսյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ
ՀՀ, Երևան, Արամի 44
Էլ. hawugb' rimapoghossyan3@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 24.05.2021, գրախոսվել է 21.04.2022, ընդունվել է տպագրության 05.07.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.2-111

Ներածություն

2020 թ. պատերազմում պարտությունից հետո, շարունակվող համաճարակի և երկրում քաղաքական ճգնաժամի պայմաններում մեր բնակչությունը, ըստ սոցիոլոգների ձևակերպման, ապրում էր «վնասված» հասարակությունում¹: Անցած տարվա բազմափուլ հավաքներն ու բողոքի երթերը, որոնց հիմնական պահանջն էր պարտված կառավարության հրաժարականը, փաստորեն արդյունքի չհանգեցրին: Վարչապետի հրաժարականն էին պահանջում Հայաստանի երեք նախորդ նախագահները, երկու կաթողիկոսները, բուհերը, գիտությունների ակադեմիան, մտավորականությունը: Սակայն ո՛չ կառավարությունը հրաժարական տվեց, ո՛չ էլ վարչապետը պաշտոնից հրաժարվեց: Պարզ էր, որ նրանք պատրաստ չէին իշխանությունից զրկվել նաև այն պատճառով, քանի որ անխուսափելիորեն կարող էին հայտնվել խիստ դատարանի առջև: Քաղաքական խոր ճգնաժամը որոշվեց հանգուցալուծել արտահերթ խորհրդարանական ընտրությունների միջոցով: Վաղուց հայտնի է՝ ովքեր կազմակերպում են ընտրությունները, նրանք էլ հաղթելու առավել մեծ հնարավորություն ունեն: Հետխորհրդային հանրապետություններում դեռ չի եղել մի դեպք, որ քաղաքական ընդդիմությունը հաղթի և իշխանության գա ժողովրդավարական ընտրությունների միջոցով: Որպես կանոն՝ նրանք իշխանության են եկել տարբեր «գույների» հեղափոխությունների միջոցով. Վրաստանում՝ 2003 թ. «վարդերի» հեղափոխու-

¹ Тощенко 2020, 67.

թյունով, Ուկրաինայում՝ 2004 թ. «նարնջագույն» հեղափոխությունով, Ղրղըզստանում՝ 2005 թ. «կակաչների» հեղափոխությունով², Մոլդավիայում՝ 2009 թ. «յասամանի» հեղափոխությունով, Հայաստանում՝ 2018 թ. «թավշյա» հեղափոխությունով: Հայաստանի Հանրապետության 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունները նույնպես գրեթե չտարբերվեցին բոլոր նախորդ ընտրություններից:

խորհրդարանական ընտրությունները պարտված պատերազմի համա-տեքստում

Անկախ Հայաստանի պատմության մեջ տեղի է ունեցել ինը խորհրդարանական ընտրություն՝ 1990, 1995, 1999, 2003, 2007, 2012, 2017, 2018 և 2021 թթ.: Բոլոր նախորդ ընտրություններում մասնակիցների տոկոսը միջինում կազմել է 55-58%: Ընտրողների ամենամեծ մասնակցությունը եղել է 2012 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ՝ 62,33%:

Պատմական ամենացածր մասնակցությունը գրանցվել է նախորդ՝ 2018 թ. վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններում՝ 48,63%, և անցած 2021 թ. արտահերթ ընտրություններում՝ 49,39%:

Փաստորեն, ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների մոտ կեսն է մասնակցել վերջին խորհրդարանական ընտրություններին: Ամենաբարձր մասնակցությունը գրանցվել է Սյունիքի մարզում (60,38%), իսկ ամենացածրը՝ Շիրակում (41,24%): Քաղաքներում մասնակցությունը մի փոքր ավելի ցածր է եղել, քան մարզերում: Քաղաքների մեջ ռեկորդային ցածր մասնակցություն է գրանցվել Տաշիրում (40,71%), իսկ ամենաբարձրը՝ Կապանում (60,38%):

Սոցիոլոգների տեսակետից՝ քաղաքացիների ցածր մասնակցությունը, որպես կանոն, որոշակի քաղաքական օտարվածության մասին է վկայում: Երբ մարդիկ անտարբեր են ընտրությունների նկատմամբ, նրանց համար միևնույն է, թե ով կընտրվի, նրանք իրենց ապագան չեն կապում այդ ընտրությունների, իշխանությունների, երբեմն էլ պետության ու անգամ երկրի հետ: Վաղուց է նկատվել, որ բոլոր ընտրություններից հետո երկրից արտագաղթն աշխուժացել է: Այս տարվա 6 ամիսների ընթացքում Հայաստանից հեռացել է մոտ 94 հազար մարդ³: Եթե այս միտումը շարունակվի, ապա մինչև տարեվերջ մենք կունենանք աննախադեպ շատ՝ շուրջ 180 հազար արտագաղթող: Համեմատության համար դիտարկենք ՀՀ-ում վերջին տասը տարիների ընթացքում միգրացիոն վիճակագրության ցուցանիշները⁴:

² Найденов 2014, 148-178.

³ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հունիսին: ՀՀ վիճակագրական կոմիտե, մամուլի հաղորդագրություն, Երևան, 6 օգոստոսի 2021 թ., <https://www.armstat.am/file/doc/99525463.pdf>

⁴ https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_2%20Population%20and%20social%20processes_28%20Population/PS-pp-132019.px/table/tableViewLayout2/?rid=b4152f69-b071-4ead-995d-4696d8712830

Աղյուսակ 2-ից երևում է, որ 2020 թ. միգրացիայի սալդոն նույնիսկ դրական է եղել, այսինքն՝ մեր երկիր ժամանածները 3 300 մարդկանցով ավելի շատ են եղել, քան երկրից մեկնածները: Բայց այստեղ պետք է նկատել, որ դրա հիմնական պատճառը COVID համավարակի հետևանքով շատ երկրների փակ սահմաններն են եղել:

Մասնակիցների ցածր թիվը, հնարավոր է, պայմանավորված է նաև հանրապետությունում առկա բնակչության թվի ուժնազմամբ: Բանն այն է, որ առկա բնակչության թիվը միգրացիայի պատճառով շատ ավելի քիչ է, քան տրված է պաշտոնական վիճակագրությամբ: Այսպես, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով՝ 2021 թ. ՀՀ-ում կար 2,595,512 ընտրական իրավունք ունեցող քաղաքացի, որոնցից միայն 1,281,997-ն են մասնակցել ընտրություններին: Համեմատության համար նշենք, որ 2017 թ. մոտավորապես նույնքան քաղաքացիներից (2,588,590) ընտրություններին մասնակցել էր 300 հազարով ավելի շատ՝ 1,575,415 ընտրող (60,86%): Բերենք մեկ այլ օրինակ. 1995 թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցել էր 1,183,573 ընտրող, իսկ 25 տարի անց՝ 2021 թ., մասնակցել է 1,281,997 ընտրող, այսինքն՝ ընդամենը 100 հազարով ավելի: Մինչդեռ 25 տարվա ընթացքում հանրապետության բնակչությունն աճել է 500 հազարով: Այլ կերպ ասած՝ բնակչության թիվը զգալիորեն աճել է, իսկ ընտրողների թիվը համեմատաբար շատ քիչ է: Նշանակում է, որ կա՛մ մարդիկ բացակայել են երկրից, կա՛մ էլ ընտրությունների նկատմամբ հետաքրքրությունն է նվազել:

Այնուամենայնիվ, գործող քաղաքական վարչակարգին հաջողվեց 2021 թ. ընտրությունների միջոցով վերարտադրվել իշխանություններում: Դեռ ընտրություններից առաջ Ն. Փաշինյանը հայտարարեց, որ իրենք պետք է ստանան ընտրողների 60%-ի ձայները: Եվ իրականում ժողովրդավարական ոչ մի երկրում այդպիսի բարձր տոկոս չի գրանցվել վերջին 50 տարիների ընթացքում: Հիշեցնենք, որ գրեթե բոլոր սոցիոլոգիական հարցումների արդյունքները խոսում էին ընտրություններում մասնակցող երկու առաջատար ուժերի՝ Ն. Փաշինյանի ղեկավարած «Քաղաքացիական պայմանագիր» և Ռ. Քոչարյանի ղեկավարած «Հայաստան» դաշինքի մոտավորապես հավասար վարկանիշների մասին: Դիտարկենք ՀՀ-ում կատարված մի շարք նախընտրական սոցիոլոգիական հարցումների արդյունքները:

Ինչպես երևում է աղյուսակ 3-ում բերված տվյալներից, «Քաղաքացիական պայմանագիր/Իմ քայլ» կուսակցության վարկանիշը փետրվար-հունիսի ընթացքում 33,7%-ից նվազել է մինչև 24,1%-ի: Իսկ «Հայաստան» դաշինքի վարկանիշը նույն ժամանակահատվածում 7,8%-ից բարձրացել է մինչև 23,8%՝ գրեթե հավասարվելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարկանիշին: Երկու սոցիոլոգիական կենտրոնների (IRI/CRRC և MPG/Gallup International) հարցումների արդյունքները որոշ չափով իրար հակասում են: Այսպես, օրինակ, ապրիլ-մայիս ամիսների ընթացքում կատարված հարցումներով, «Քաղաքացիա-

կան պայմանագիր» կուսակցության վարկանիշը, ըստ IRI/CRRC կազմակերպության, հավասար էր 33,0%-ի, իսկ ըստ MPG/Gallup International կազմակերպության՝ նվազել էր 27,2%-ից մինչև 24,8%-ի: Նման տարածայնությունները կարող էին պայմանավորված լինել նաև կիրառված տարբեր մեթոդաբանություններով:

Աղյուսակ 1

Ընտրողների մասնակցությունը 1990-2021 թթ. խորհրդարանական ընտրություններին⁵

	Տարեթիվը	Ընտրողների ընդհանուր թիվը	Ընտրությունների մասնակցների թիվը	Մասնակցությունը (%)	Կուսակցությունների և դաշինքների թիվը
	1990	2,136,983	1,286,464	60,20	2
	1995	2,069,183	1,183,573	57,20	15
	1999	2,137,066	1,137,133	53,21	21
	2003	2,137,151	1,188,256	55,60	16
	2007	2,317,810	1,375,733	59,39	23
	2012	2,484,891	1,572,518	62,33	10
	2017	2,588,590	1,575,415	60,86	9
	2018	2,573,579	1,251,531	48,63	11
	2021	2,595,512	1,281,997	49,39	25

Աղյուսակ 2

Միգրացիայի սալոն 2010-2021 թթ.

Տարիներ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Միգրացիայի սալոն	-37 300	-28 500	-9 400	-24 400	-21 800	-25 900	-24 800	-24 000	-18 286	-15 400	+3 300

Աղյուսակ 3

2021 թ. ամսաթիվ	«Քաղ.պայմանագիր/Իմ քայլ»	«Հայաստան» դաշինք
15-17 փետրվարի**	33,1%	7,8%
26-29 մարտի**	31,7%	8,0%
23-27 ապրիլի**	27,2%	9,9%
8 ապրիլի-4 մայիսի*	33,0%	-
18-21 մայիսի**	24,8%	14,3%
24-27 մայիսի**	22,9%	17,5%
31 մայիսի-4 հունիսի**	22,4%	20,6%
7-10 հունիսի**	24,1%	23,8%

Հարցումը կատարած կազմակերպությունը

* IRI (CRRC)

** MPG/Gallup International

Նշենք, որ երկու կազմակերպություններն էլ սոցիոլոգիական հարցումները կատարել են հեռախոսազանգերի միջոցով: Հատկապես քաղաքական բնույթի հեռախոսային հարցումները, այն էլ Հայաստանի այսքան լարված իրավիճակում

⁵ Տվյալները կազմված են www.armstat.am և www.elections.am վիճակագրության հիման վրա:

և հեռախոսակապի հնարավոր գաղտնալսման պայմաններում, առանձնապես մեծ վստահություն չեն ներշնչում: Բացի այդ, մասնագետները գիտեն, որ հեռախոսային հարցումներն ունեն բազմաթիվ այլ մեթոդական խնդիրներ: Սրանք էին այն հիմնական պատճառները, որ մեր կազմակերպությունը՝ Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան (ՀՍԱ), զերծ մնաց 2021 թ. նախընտրական հեռախոսային հարցումներ կատարելուց: Այնուամենայնիվ, նախընտրական սոցիոլոգիական հարցումները հանրության մեջ որոշակի պատկերացումներ ձևավորեցին քաղաքական ուժերի հարաբերակցության մասին: Սակայն ընտրությունների վերջնական արդյունքները շատերի համար անակնկալ եղան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերջնական տվյալներով, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն ստացել էր ընտրողների ձայների 54%-ը: Այսինքն՝ 30%-ով ավելի շատ, քան հավաստում էին MPG/Gallup International կազմակերպության սոցիոլոգները: Սոցիոլոգիական հարցումների և ընտրություններում ստացված վերջնական արդյունքների միջև նման ահռելի տարբերություն նախկինում երբեք չի եղել: Փորձագետները նշում էին իշխանությունների՝ վարչական ռեսուրսի կիրառման մասին: Իհարկե, հնարավոր է, որ իշխանությունները մեծապես օգտագործել են, այսպես կոչված, «վարչական ռեսուրսը»: Սակայն անգամ դրա կիրառման ազդեցությունով նման մեծ տարբերությունն անբացատրելի է:

Այնուամենայնիվ, փորձենք գնահատել այդ ռեսուրսը: Հանրապետությունում կա մոտ 208 հազար պետական ծառայող. դրան գումարենք բանակը, ոստիկանությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, մարզպետարանները, քաղաքապետարանները, թաղապետարանները, գյուղապետարանները և կստանանք մոտավորապես 300 հազար մարդ: Իրենց ընտանիքի անդամների հետ այդ թիվը կհասնի 500-600 հազարի: Փաշինյանի կուսակցության օգտին քվեարկել էր 688 761 ընտրող (կամ 54%): Հիշեցնենք, որ 2018 թ. խորհրդարանական ընտրություններին նրա կուսակցությունն ստացել էր ավելի շատ ձայներ՝ 884 456 (կամ 70,4%): Հիմա մի պահ պատկերացնենք՝ որքան ձայն կստանար Փաշինյանի կուսակցությունը, եթե նա չլիներ վարչապետի պաշտոնակատար, և եթե ընտրությունները կազմակերպեր ու անցկացներ այդ նպատակի համար ձևավորված ժամանակավոր հանձնաժողովը, այլ ոչ թե գործող կառավարությունն իր բոլոր լծակներով: Կարծում ենք՝ ընտրությունների արդյունքներն այլ կլինեին: Միայն այդպիսի ընտրությունները կարող ենք համարել իսկապես ժողովրդավարական՝ բոլոր կուսակցությունների համար հավասար պայմանների ապահովումով, թափանցիկ ու արդար: Իսկ այն, ինչ տեղի ունեցավ հունիսի 20-ին Հայաստանում, պարզապես գործող իշխանությունների հերթական վերարտադրությունն էր՝ վարչական ռեսուրսի արդյունավետ օգտագործմամբ և արտաքին ուժերի լուր համաձայնությամբ:

Իհարկե, նախորդ իշխանությունները նույնպես օգտագործում էին նույն ռեսուրսը: Միայն այն տարբերությամբ, որ նախորդ իշխանությունները միջազգային

դիտորդների, ԵԱՀԿ-ի, տեղական սորոսական ՀԿ-ների, քաղաքացիական հասարակության և օտարերկրյա դեսպանությունների ուշադիր հսկողության ներքո էին: Իշխանությունների թույլ տված յուրաքանչյուր խախտում կամ շեղում նրանք անմիջապես լուրջ քննադատում էին: Այդ նույն խմբերը Փաշինյանի և նրա կուսակցության ոչ մի գործողություն քննադատության չարժանացրին: Կարծես գործող իշխանությունների վերարտադրումը լիովին ձեռնտու էր դրսի բոլոր ուժերին: Դրա մասին վկայում էր այն, որ ընտրություններից անմիջապես հետո նրանք շտապեցին շնորհավորել ու ճանաչել ընտրությունների արդյունքները:

Հայաստանը նախկինում էլ հիմնականում եղել է արտաքին ուժերի ազդեցության ներքո: Սակայն ներկայում այն կարծես ամբողջովին անցել է արտաքին կառավարման տակ՝ կորցնելով իր սուբյեկտայնությունն ու ինքնիշխանությունը: Բոլոր կարևորագույն որոշումներն ընդունվում են Երևանից դուրս, երբեմն՝ առանց Երևանի մասնակցության: Զգալի աճել է արտաքին խոշոր տերությունների (ԱՄՆ, Ռուսաստան, Եվրամիություն) ազդեցությունը Հայաստանի ներքաղաքական գործընթացների վրա: Ավելին, անգամ տարածաշրջանի հարևան պետությունները՝ Իրանը, Վրաստանը և հատկապես Թուրքիան ու Ադրբեջանը, փորձում են լուրջ ազդեցություն գործել մեր երկրի ներքաղաքական օրակարգի վրա: Այսպիսի բարդ ու լարված աշխարհաքաղաքական արտաքին պայմաններում արդյունավետ նավաստելու համար կառավարությունից պահանջվում է մեծ հմտություն, դիվանագիտական փորձ և պատասխանատվություն, որը, ցավոք, բացակայում է օրվա իշխանությունների սակավաթիվ կադրային զինանոցում:

Սակայն այսօր Հայաստանի Հանրապետության նոր՝ ութերորդ գումարման խորհրդարանն ունի պատմականորեն աննախադեպ քաղաքական կառուցվածք: Արտահերթ ընտրությունները իշխանություններին հնարավորություն տվեցին պահպանելու իշխող դիրքերը՝ ստանալով սահմանադրական մեծամասնության համար անհրաժեշտ 71 մանդատ: Սակայն խորհրդարան անցավ նաև բոլորովին նոր՝ արմատական ընդդիմություն իր երկու դաշինքներով՝ «Հայաստան»՝ 27 մանդատ, և «Պատիվ ունեն»՝ 7 մանդատ: Այսպիսով, վերջին 20 տարիների ընթացքում առաջին անգամ ՀՀ խորհրդարանը կազմված է մեկ իշխող ուժից և երկու իսկապես ընդդիմադիր կուսակցություններից: Հետևաբար, ընդդիմադիրների փողոցային պայքարը ներխուժում է խորհրդարան՝ սկզբնավորելով քաղաքական պայքարի մի նոր փուլ: Պատերազմում պարտությունից հետո երկրում առաջացած քաղաքական խոր ճգնաժամը չհանգուցալուծվեց, այլ պարզապես անցավ հաջորդ փուլ: Ապագա զարգացումները ցույց կտան այս նոր փուլի քաղաքական արդյունավետությունը: Նկատենք, որ ընդդիմության առաջնորդները հայտարարեցին, որ իրենք ամենևին մտադիր չեն լիովին հրաժարվելու բողոքի զանգվածային ակցիաներից ու փողոցային պայքարից: Ընտրությունների շնորհիվ նրանք պարզապես ընդլայնեցին իրենց քաղաքական պայքարի տարածեսակ միջոցները: Իսկ Հայաստանի հասարակությունը վերջապես ստացավ արդ-

յունավետ գործող Ազգային ժողով՝ ուժեղ իշխանությունով և ակտիվ արմատական ընդդիմությունով: Նկատենք նաև, որ նախորդ խորհրդարանում գործող երկու ընդդիմադիր՝ «Լուսավոր Հայաստան» և «Բարգավաճ Հայաստան» կուսակցություններից ոչ մեկը չկարողացավ հաղթահարել ընտրությունների նվազագույն հինգտոկոսանոց շեմը: Եթե «Լուսավոր Հայաստանի» համար դեռ ընտրություններից առաջ սոցիոլոգները կանխատեսում էին պարտություն, ապա «Բարգավաճ Հայաստանի» դեպքում այն անսպասելի էր: Ըստ երևույթին, այս անգամ կուսակցությունը բավարար ջանքեր, ակտիվություն ու միջոցներ չներդրեց հաղթանակի հասնելու համար:

2018 թ. մեր երկրում կայացան վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններ, 2021 թ. տեղի ունեցան արտահերթ ընտրություններ, այս տրամաբանությամբ՝ 2023 թ. հնարավոր է ակնկալել նոր վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններ: Դրանք կարող են նպաստել Հայաստանի Հանրապետությունում նոր, երիտասարդ, ժողովրդավար ու նվիրյալ ուժերի իշխանության գալուն: Հայաստանը նախորդ դարի 90-ականների կեսերին ստացել էր պատմականորեն աննախադեպ, կարելի է ասել՝ ճակատագրական նվեր: Բազմաթիվ կորուստներից, պետականության անկումից, ցեղասպանությունից հետո հայ ժողովուրդը ճակատագրի կամոք ունեցավ եզակի պատմական հնարավորություն. հայ ազգը միջազգային հանրության առջև ներկայացավ երկու պետականությունով՝ Հայաստանի Հանրապետություն և Արցախի Հանրապետություն՝ աշխարհասփյուռ հայության եռամիասնությամբ: Ընդ որում, ՀՀ-ն՝ ՄԱԿ-ի կողմից ճանաչված անկախ ազգային պետություն, ԱՀ-ն՝ ազատագրված փաստացի ինքնուրույն (թեպետ և միջազգայնորեն չճանաչված) պետականություն և 120 երկրներում բնակվող հայ սփյուռքը՝ մոտ 8 միլիոն հայություն: Հայ ազգի, նրա մտավոր սերունդի և ՀՀ քաղաքական ղեկավարության առջև ծառացած էր միայն մեկ կարևորագույն ու պատմական խնդիր. հայության այս երեք հատվածների զարգացման ու համակարգման տեսլականը՝ հայեցակարգի մշակումը, գծագիրը, հեռանկարային նպատակների կերտումը: Սակայն դա չարվեց: Մինչդեռ XXI դարի համար հայությունը կարող էր առավել շահավետ, արդյունավետ մարտավարություն ստեղծել՝ հաշվի առնելով հայ սփյուռքի ցանցային կառուցվածքը, հայոց նորագույն պետականության արդիական զարգացումը և հայ միջնաբերդի՝ Արցախի հզոր ռազմավարական կառուցապատումը: Այս առումով ասելիքներ ու անելիքներ շատ կային: Բայց պատմության մեզ ընծայած բախտորոշ հնարավորությունները, կարելի է ասել, հանցավոր կերպով կորսվեցին:

Եզրակացություններ

Անցած խորհրդարանական ընտրությունները մեկ անգամ ևս ցույց տվեցին, որ Հայաստանի Հանրապետությունում անկախությունից հետո քաղաքական դաշտը դեռ չի ձևավորվել պատշաճ մակարդակով: Քաղաքական կուսակցությո-

յունները, բացառությամբ մի քանիսի, ձևավորվում են առանձին անհատների կամ խմբավորումների շուրջ՝ արտահայտելով հիմնականում սեփական նեղ շահերն ու հետաքրքրությունները: Երկրում գրանցված և գործող քաղաքական կուսակցությունները ճնշող մեծամասնությամբ մեկ անձի շուրջ խմբավորված ու, որպես կանոն, այս կամ այն նախընտրական ժամանակի համար կազմավորված յուրայինների խմբեր են, որոնք ընտրություններից հետո սովորաբար անհետանում են քաղաքական դաշտից: Այս ժամանակավոր, նպատակային խմբերի նույնիսկ անվանումներն ու ծրագրերը գաղափարապես ու քաղաքականապես զուտ պայմանական են և ունեն անորոշ իմաստավորում: Նրանց անվանումներից ընտրողների համար դժվար է կռահել տվյալ կուսակցության գաղափարախոսական ու աշխարհաքաղաքական կողմնորոշումները: Քաղաքական կուսակցությունների մեծամասնության գործունեությունն ու մարտավարությունը խիստ պայմանավորված են կուսակցության առաջնորդի անձով: Որպես կանոն, այդ անձը մենակ է կայացնում որոշում կուսակցության ողջ գործունեության և մարտավարության վերաբերյալ: Միջազգային փորձը վկայում է, որ ժողովրդավարության ուղին ընտրած նոր երկրների համար զգալի ժամանակ է պահանջվում սեփական կայուն քաղաքական դաշտը ձևավորելու համար: Այս առումով 2021 թ. խորհրդարանական ընտրությունները կարող են լուրջ քայլ համարվել այդ ճանապարհին:

Գրականություն

- Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հունիսին. ՀՀ վիճակագրական կոմիտե, մամուլի հաղորդագրություն, Երևան, 6.08.2021 թ.:
- Պողոսյան Գ.Ա., Հարությունյան Մ.Ա., Առաքելյան Վ.Մ. 2007, Հայաստան. Օտարացած հասարակություն, Երևան, «Լուսաբաց», 168 էջ:
- Պողոսյան Գ.Ա. 2006, Հայ հասարակությունը XXI դարակգրին, Երևան, «Լուսաբաց», 375 էջ:
- Պողոսյան Գ., Մխիթարյան Ս. 1997, Քաղաքական կուսակցությունները Հայաստանում, Երևան, «Մխիթար Գոշ», 64 էջ:
- Крылов А.Б. 2019, Армения: конец «двоевластия» и начало нового политического цикла, Россия и новые государства Евразии, N 1, с. 112-117.
- Наумов А.О. 2014, «Цветные революции» на постсоветском пространстве: взгляд десять лет спустя, Государственное управление. Электронный вестник, вып. N 45, с. 148-178, file:///C:/Users/user/Downloads/tsvetnye-revolutsii-na-postsovetskom-prostranstve-vzglyad-desyat-let-spustya.pdf (дата верификации: 20.02.2021).
- Погосян Г., Аракелян И., Осипов В. 2017, Миграция и депопуляция в Армении, Ереван, Институт философии, социологии и права НАН РА, «Лимуш», 200 с.
- Погосян Г.А. 2013, Армянские выборы: неоконченная пьеса для власти и оппозиции, «Мониторинг общественного мнения», ВЦИОМ, Москва, 7 (113), январь-февраль, с. 136-147.
- Погосян Г.А. 2005, Современное армянское общество. Особенности трансформации, Москва, изд. Академии наук «ACADEMIA», 323 с.
- Рейнгольд Г. 2006, Умная толпа: новая социальная революция, Москва, «Фаир-пресс», 416 с.
- Тенденции и риски радикализации общества 2019 (гл. ред. Погосян Г.А.), Ереван, «Европринт», 208 с.

- Тощенко Ж.Т. 2020, Общество травмы: между эволюцией и революцией (опыт теоретического и эмпирического анализа), Москва, «Весь Мир», 352 с.
- Derluguian G., Hovhannisyian R. 2018, The Armenian Anomaly: Toward an Interdisciplinary Interpretation – Demokratizatsiya, The Journal of Post Soviet Democratization, vol. 26, N 4, Fall 2018, p. 441-464.
- Gherasimov C. 2019, Armenia Needs a New Opposition: How the EU Can Help Institute Checks and Balances. DGAPstandpunkt 6, 6.03, p. 1-3, <https://dgap.org/en/think-tank/publications/dgapviewpoint/armenia-needs-new-opposition>.
- Nye J.S. 2004, Soft Power. The Means to Success in World Politics, New York, Public Affairs, 175 p.
- Pogosian G. 1996, An Armenian's Life in Armenia, Yerevan, Noyan Tapan, 36 p.
- Sharp G. 2003, From Dictatorship to Democracy: A Conceptual Framework for Liberation, Boston: The Albert Einstein Institution, 94 p. (first published in 1994).
- <https://www.armstat.am/file/doc/99525463.pdf> (ներբեռնման օրը՝ 08.11.2021).
- https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_2%20Population%20and%20social%20processes_28%20Population/PS-pp-132019.px/table/tableViewLayout2/?rxid=b4152f69-b071-4ead-995d-4696d8712830 (ներբեռնման օրը՝ 08.11.2021).

ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 2021 Թ. ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ

Գևորգ Պողոսյան, Ռիմա Պողոսյան

Ամփոփում

Հետպատերազմական բարդ իրավիճակն ու շարունակվող կորոնավիրուսային համաճարակը հանգեցրին հասարակության քաղաքական ճգնաժամի, որի հանգուցալուծումը երկրի իշխանությունները փորձեցին իրականացնել արտահերթ խորհրդարանական ընտրությունների միջոցով: Չնայած ընտրողների ցածր մասնակցությանը ընտրություններին և գործող կառավարության քաղաքական վարկանիշի անկմանը՝ Ն. Փաշինյանի թիմին հաջողվեց ընտրությունների արդյունքով նոր խորհրդարանում պահպանել սահմանադրական մեծամասնությունը: Միաժամանակ, արմատական քաղաքական ընդդիմությունը նույնպես հաջողությամբ մտավ նոր խորհրդարան՝ բողոքի փողոցային պայքարը տեղափոխելով երկրի բարձրագույն օրենսդիր մարմին: Փաստորեն, Հայաստանում արտահերթ խորհրդարանական ընտրությունների միջոցով տեղի ունեցան գործող իշխանության վերարտադրություն և խորհրդարանական ընդդիմության նորացում:

Բանալի բառեր՝ Հայաստան, քաղաքական ճգնաժամ, խորհրդարանական ընտրություններ, իշխանություն, ընդդիմություն, հակամարտություն, իշխանության վերարտադրություն:

СОЦИАЛЬНО-ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ ДО И ПОСЛЕ ВНЕОЧЕРЕДНЫХ ПАРЛАМЕНТСКИХ ВЫБОРОВ 2021 Г.

Геворг Погосян, Рима Погосян

Резюме

Тяжелая послевоенная ситуация и продолжающаяся пандемия коронавируса подвели армянское общество к политическому кризису, разрешение которого

власти страны попытались осуществить путем внеочередных парламентских выборов. Несмотря на невысокий уровень участия избирателей в выборах и падение политического рейтинга действующей власти, команде Н. Пашиняна удалось в результате выборов сохранить за собой конституционное большинство в новом парламенте. Однако непримиримой политической оппозиции также удалось пройти в новый парламент и, таким образом, перенести уличную протестную борьбу в высший законодательный орган страны. Фактически в результате внеочередных парламентских выборов в Армении имело место воспроизводство действующей власти и обновление парламентской оппозиции.

Ключевые слова – Армения, политический кризис, парламентские выборы, власть, оппозиция, противостояние, воспроизводство власти.

SOCIAL-POLITICAL SITUATION BEFORE AND AFTER THE 2021 PARLIAMENTARIAN ELECTIONS

Gevorg Poghosyan, Rima Poghosyan

Abstract

The difficulties of post-war situation and ongoing coronavirus pandemy brought the Armenian society to a political crisis, the resolution of which the country's authorities tried to implement through the parliamentary elections. Despite the low level of voter's participation in the elections and the drop in the political rating of current government, N. Pashinyan's team managed to retain a constitutional majority in the new parliament as a result of the elections. But along with them, the fundamental political opposition also managed to get into the new parliament, and thus move its street protest struggle into the walls of the country's highest legislative body. In fact, as a result of the extraordinary parliamentary elections in Armenia, there was a reproduction of power and a change of political opposition.

Key words – Armenia, political crisis, parliamentary elections, power, opposition, confrontation, reproduction of power.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ՎԻԶՈՒԱԼԱՑՈՒՄԸ ՀԵՌՈՒՍՏԱՍԵՐԻԱԼՆԵՐՈՒՄ

Յուլիանա Մելքումյան

Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
ԵՊՀ սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոն
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ yulianamelkumyan@ysu.am

Մարիամ Հարությունյան

Արմավիրի Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վարժարան
ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Աբովյան 149
Էլ. հասցե՝ myan9393@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 10.12.2021, գրախոսվել է 03.06.2022, ընդունվել է տպագրության 05.07.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.2-121

Սոցիալական շերտավորման մեկնաբանությունը

Անհավասարությունն ու սոցիալական տարբերակումը բնորոշ են մարդկության գոյության բոլոր ժամանակաշրջաններին: Սոցիալական անհավասարությունը բացատրելու համար սոցիոլոգներն առաջ են քաշել «սոցիալական շերտավորում» հասկացությունը: Այն արտացոլում է հասարակության անդամների սոցիալական կարգավիճակի տարբերությունները և կարող է սահմանվել որպես հասարակության ներքին հիերարխիկ բաժանում սոցիալական խմբերի, որոնց ներկայացուցիչները տարբեր սոցիալական հնարավորություններ և տարբեր ապրելակերպ ունեն¹:

Հիմնվելով Ու. Բեկի «սոցիալական վերելակի»² գաղափարի վրա՝ Պ. Բերգերը առաջ է քաշում այն դրույթը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կապիտալիստական հասարակություններում եկամուտների աճը, կրթության հանրայնացումը և սոցիալական պաշտպանության համակարգերի զարգացումը փոխակերպել են սոցիալական անհավասարության էությունը՝ «աղքատության անհավասարությունից» դեպի «հարստության անհավասարություն»: Եթե «աղքատության անհավասարության» պարագայում մեծամասնությունն ապրում է ռեսուրսների և տնտեսական կապիտալի սակավության, անբավարարության պայմաններում, ապա «հարստության անհավասարության» պարագայում ռեսուրսները բավարար են, և մենք գործ ունենք համընդհանուր բարեկեցության հասարակության հետ³:

¹ Шкаратан 2012, 526.

² Beck 1986.

³ Berger/Neu 2017.

Սոցիալական անհավասարության ժամանակակից հիերարխիկ համակարգում ընդունված է առանձնացնել երեք հիմնական խավեր՝ **վերնախավ, միջին խավ և ստորին խավ կամ աղքատներ**։ Յուրաքանչյուր խավ ունի իրեն բնորոշ առանձնահատկությունները, որոնցով էլ պայմանավորված է անհատի նույնականացումը տվյալ խավի հետ։

Սոցիալական շերտավորման հիմնական գործոնները

Սոցիալական շերտավորման հիմքում դրվում են ամենատարբեր ատրիբուտներն ու բնութագրիչները՝ շերտավորման գործոնները։ Դրանք տարբերվում են հասարակությունից հասարակություն, փոփոխվում են ժամանակի ընթացքում, կորցնում են իրենց արդիականությունը կամ ավելի ազդեցիկ են դառնում։ Քաղաքական, սոցիալական, տնտեսական, տեխնոլոգիական և այլ տիպի զարգացումները կարող են ձևավորել շերտավորման նոր գործոններ։ Հասարակության զարգացման հետ մեկտեղ աստիճանաբար բարդանում է նաև հասարակության հիերարխիկ կառուցվածքը. այն ավելի շերտավորված է դառնում⁴, սրվում է նաև անհավասարությունն ըստ եկամուտների, կրթական մակարդակի, իշխանության և այլ գործոնների։

Շերտավորման հիմնական գործոնների շարքում կարելի է առանձնացնել իշխանությունը, ֆիզիկական ուժը, սեփականությունը, տնտեսական կապիտալը, հեղինակությունը, մասնագիտությունը, կրթությունը, մշակութային և սոցիալական կապիտալը⁵։ Թեև այս բոլոր գործոններն առկա են մեզ շրջապատող սոցիալական իրականության մեջ, այնուամենայնիվ, տարբեր կշիռ և նշանակություն ունեն առանձին հասարակություններում։ Յուրաքանչյուր հասարակության շերտավորումն արտացոլում է տվյալ մշակույթում գերիշխող արժեքային համակարգը, որը կազմում է իշխող վերնախավի կողմից պարտադրված գերիշխող գաղափարախոսության հիմքը⁶։

Ցուցադրական վարքը և ցուցադրական սպառումը՝ որպես սոցիալական պատկանելության վիզուալացում

Հասարակության յուրաքանչյուր սոցիալական շերտ ունի իրեն բնորոշ վարքային դրսևորումները։ Այդ վարքային դրսևորումները զուգորդվում են որոշակի սպառման նմուշներով, որոնց միջոցով անհատը փորձում է նույնականացնել իրեն այս կամ այն սոցիալական շերտի հետ։

Սպառումը, որպես այդպիսին, նախատեսված է մարդկանց պահանջմունքները բավարարելու համար։ Ֆիզիոլոգիական պահանջմունքները՝ սնվելը, շոգից և ցրտից պաշտպանվելը, հանգստանալը և այլն, նույնն են հասարակության բոլոր

⁴ Berger/Neu 2017, 98.

⁵ Шкаратан 2012, 88.

⁶ Шкаратан 2012, 89.

անդամների համար: Բայց այն, թե ինչպես է յուրաքանչյուրը բավարարում այդ պահանջմունքները, պայմանավորում է իր սոցիալական կարգավիճակը՝ դիրքը սոցիալական շերտավորման հիերարխիկ համակարգում: Պահանջմունքների բավարարման անհրաժեշտությունը պարտադրում է սպառողական վարք, և հենց սպառելու միջոցով է մարդը ցուցադրում իր սոցիալական պատկանելությունը այս կամ այն խավին⁷: Ըստ այդմ՝ սոցիալական կառուցվածքում անհատի զբաղեցրած տեղը, իր հերթին, մեծ դեր ունի նրա սպառողական գործունեության ծավալի և բովանդակության տեսանկյունից⁸:

Ցուցադրական սպառման գաղափարն առաջ է քաշել Թ. Վերլենը՝ համարելով, որ սպառումը վկայում է ոչ այնքան անհատների տնտեսական վիճակի, որքան սոցիալական բարձր կարգավիճակ ունենալու ցանկության մասին: Ցուցադրական սպառումը ապրանքների, ծառայությունների ձեռքբերման գործընթաց է, որով գնորդը նպատակ ունի ցուցադրելու, վիզուալացնելու սեփական եկամուտն ու հարստությունը՝ որոշակի սոցիալական կարգավիճակի հասնելու կամ սեփական կարգավիճակը պահպանելու համար⁹: Նմանատիպ սպառման ընթացքում ապրանքների արժեքը սոցիալական կարգավիճակի խորհրդանիշ է: Սպառվող բարիքները ձեռք են բերում ոչ այնքան գործնական, որքան խորհրդանշական կարևորություն: Բարիքների գինը որոշվում է ոչ թե արտադրանքի իրական հատկություններով, այլ հասարակության մեջ արհեստականորեն ստեղծված առասպելների միջոցով¹⁰: Այսպիսով՝ անհատը ցուցադրական սպառումն իրականացնում է ոչ այնքան սեփական պահանջմունքները բավարարելու, որքան շրջապատին սեփական կարողություններն ի ցույց դնելու նպատակով¹¹: Հագուստը, խնջույքներն ու հանդեսները ցուցադրական բնույթ են կրում, հնարավորություն են տալիս ցուցադրելու, թե ինչ ունեցվածքի տեր է անհատը, որպեսզի նույնիսկ անձանորը միանգամից կարողանա գնահատել անձի հարստությունը¹²:

Սոցիալական կարգավիճակի վիզուալացումը ժամանակակից աշխարհում չի սահմանափակվում միայն հանդերձանքի ցուցադրական սպառմամբ, այլև ներառում է փոխադրամիջոցների, զարդերի, բջջային հեռախոսների, կահույքի, գույքի, ժամանցային պրակտիկաների, խոսքի յուրօրինակ դարձվածների, սպասվորների, ընտանի կենդանիների և այլնի սպառումը:

Վիզուալ հաղորդակցություններ և վիզուալացում

Հեռուստատեսության, այնուհետև համացանցի առաջացումն ու տարածումը նպաստեցին վիզուալ հաղորդակցությունների դերի մեծացմանը: Վիզուալ հաղոր-

⁷ Հովսեփյան 2013, 3:

⁸ Цимерман 2007, 14.

⁹ Հովսեփյան 2013, 3:

¹⁰ Цимерман 2007, 14.

¹¹ Веблен 1984, 3.

¹² Веблен 1984, 76.

դակցությունը տեղեկատվության փոխանցման գործընթացն է վիզուալ լեզվի (պատկերներ, նշաններ, ինֆոգրաֆիկա և այլն) և վիզուալ ընկալման միջոցով¹³։ Մարդն իրեն շրջապատող աշխարհը ճանաչում և ընկալում է հիմնականում տեսողության շնորհիվ, այն միջնորդավորված է տարատեսակ պատկերներով։ Այդ իսկ պատճառով վիզուալ տեղեկատվությունը շատ ավելի հեշտ և արագ է ընկալվում, քան ծավալուն տեքստերը։ Այն արագ ներմուծվում է ստացողի միտք, մտապահվում և առաջացնում է որոշակի զուգորդումներ և կարծրատիպեր¹⁴։ Վիզուալ հաղորդակցությունն ընդգրկում է նաև վիզուալ օբյեկտների արտադրման և սպառման գործընթացը, դրանց իմաստները և նշանակման գործընթացը¹⁵։

Ըստ էության՝ վիզուալացումը տեխնոլոգիա է, որն ունի որոշակի նպատակ և կարող է պատկերել ցանկացած բնույթի տվյալ՝ միջավայր, իրադարձություն, աչքի համար անտեսանելի չափազանց մեծ (օրինակ՝ Արեգակնային համակարգ) կամ աննկատ փոքր (օրինակ՝ վիրուս կամ մանրէ) օբյեկտ, վերացական երևույթ կամ առօրյա առարկա։ Նմանապես վիզուալացվում են քաղաքական ցանկացած իրավիճակ, որևէ սոցիալական խնդիր, սոցիալական անհավասարությունը, սոցիալական կարգավիճակը և դրա հետ կապված մի շարք հիմնահարցեր։

ՉԼՄ-ները՝ որպես սոցիալական շերտավորումը վիզուալացնելու գործիք

ՉԼՄ-ները նպաստում են ցուցադրական սպառման նմուշների տարածմանը՝ թելադրելով սոցիալական տարբեր շերտերին բնորոշ վարքային մոդելներ։ Հեռուստատեսությունը հասարակական կյանք է ներխուժել XX դ. սկզբին և տեղեկատվության ստացման ու ընտանեկան ժամանցի կազմակերպման կարևորագույն գործակալներից է դարձել արդեն XX դ. երկրորդ կեսից։ Ի տարբերություն ՉԼՄ այլ տեսակների՝ հեռուստատեսությունը, բացի ստատիկ վիզուալ պատկերներից, սկսեց կիրառել նաև դինամիկ վիզուալ պատկերներ՝ անիմացիա, վիդեո, կինո, սերիալ և այլն։ Դինամիկ վիզուալ պատկերներն ընկալման և զուգորդությունների ձևավորման առումով ավելի ազդեցիկ են։ Մինչև համացանցի ի հայտ գալը հեռուստատեսությունը առավել մոլորիմեդիա ՉԼՄ էր, որն ապահովում էր դինամիկ պատկերի, խոսքի և ձայնի համակցություն։ XX դ. վերջին - XXI դ. սկզբին ավանդական հեռուստատեսությունը ենթարկվեց փոփոխությունների. ի հայտ եկան հեռահաղորդակցության նոր հնարավորություններ։ Սրան նպաստեցին թվայնացումը, համացանցի տարածումը, կոնվերգենցիան, վիդեո և աուդիո կոնտենտի սպառման անհատականացումը սմարթ-հեռախոսների տարածման շնորհիվ և այլ արտաքին ու ներքին գործոններ։ Այս ամենը փոխակերպեց հեռուս-

¹³ Березин 2003, 123.

¹⁴ Швед 2015, 72.

¹⁵ Melkumyan 2020, 13.

տատեսային կոնտենտը մուլտիմեդիա կոնտենտի և պարտադրեց հեռուստատարատադրանքի սպառման պրակտիկաների փոփոխություն¹⁶:

Հեռուստատեսությունը ժամանակակից մարդու առօրյայի նշանակալի մասն է կազմում՝ փորձելով շրջանակել այդ առօրեականությունը¹⁷: Այն, մի կողմից, «ստեղծում է հանրային արժեքներ և հաղորդում է զանգվածներին պատկերանշանային նոր կոդեր, մյուս կողմից՝ մանիպուլացնում է զանգվածային գիտակցությունը»¹⁸:

Հեռուստատեսությունը, թերևս, համացանցից հետո ամենաանձնավորված հաղորդակցության միջոցն է. վերջինիս շնորհիվ ուժգնանում է հեռուստատեսային հաղորդակցության տեսաձայնային բնույթը, որը հեռուստադիտողի մեջ կարող է տպավորություն առաջացնել, թե հաղորդավարը կամ հեռուստատեսային այլ կերպարներ հենց իրենց հետ են զրուցում: Հեռուստատեսության հայտնի հերոսները դառնում են հասարակությանը բովանդակություն, ոճ, մտածելակերպ, բառապաշար թելադրողներ¹⁹:

Հեռուստատարտադրանքն էական ազդեցություն ունի վարքագծային նոր մոդելների և նորմերի, սպառման նոր չափանիշների ստեղծման ու տարածման վրա: Այն մոդելավորում է մարդկանց կենսագործունեությունը, որոշում է մարդկանց վերաբերմունքը իրական աշխարհի նկատմամբ և ներկայացնում է մտավոր, հուզական և վարքային օրինակներ, որոնք ինչ-որ կերպ ազդում են մարդկանց վրա:

Հեռուստասերիալները՝ որպես սոցիալական իրականության կառուցակցման գործիք

Հեռուստածրագիրն ընդգրկում է փաստագրական, մշակութային-լուսանկարչական, կրթական-ուսուցողական, էստրադային-ժամանցային, սպորտային, գեղարվեստական բաղադրիչներ²⁰: Գեղարվեստական բաժնի մեջ մտնում են թատրոնը, երաժշտական ծրագրերը, կինո- և հեռուստաֆիլմերը²¹:

Հեռուստասերիալները մեր կյանք ներխուժեցին հեռուստատեսության հետ մեկտեղ, այնուհետև ենթարկվեցին գրեթե նույն փոխակերպումներին, ինչ և հեռուստատեսությունը ու տեղափոխվեցին սպառման նոր եղանակներ ենթադրող այլ հարթակներ՝ համացանց, անհատական սմարթ-հեռախոս և այլն:

Ըստ ժանրային առանձնահատկությունների՝ տարբերում են օճառային օպերաներ (Soap opera) կամ դասական սերիալներ, սիթքոմներ կամ իրավիճակային

¹⁶ Хлызова 2016.

¹⁷ Черных 2007.

¹⁸ Ավետիսյան 2010, 30:

¹⁹ Միրաքյան 2010, 96:

²⁰ Борецкий 1967.

²¹ Борецкий 1998, 145.

կատակերգություններ և հեռուստանովելներ²²։ Սիթքումները սերիալներից տարբերվում են կարճամետրաժ լինելով և էկրանային ծիծաղով, իսկ հեռուստանովելները սիրային պատմություն կամ դետեկտիվ/դրամատիկ սյուժե են պարունակում։

Հեռուստասերիալը, մի կողմից, արտացոլում է սոցիալական իրականությունը, իսկ մյուս կողմից, կառուցակցում է այն՝ հմտորեն օգտագործելով սոցիալական շերտավորման վիզուալացման տարբեր հնարքներ²³։ Հեռուստասերիալը բազմաբնույթ և բազմագործառության հեռուստաարտադրանք է։ Վերջինիս միջոցով իրականացվում են հեռուստատեսության ժամանցային և սոցիալական գործառույթները, այդ թվում՝ նորմատիվացնող, սոցիալական վերահսկողության, նույնականացման և այլն։ Ցանկացած հեռուստասերիալ նպատակ ունի հեռուստադիտողին երկար ժամանակ էկրանի մոտ պահելու և նրա հետաքրքրությունը արտադրանքի նկատմամբ պահպանելու։ դրվագ առ դրվագ, յուրաքանչյուր օր պատմությունը դադարում է ամենահետաքրքիր պահին և շարունակվում հաջորդ օրը։ Դա խթան է կրկին վերադառնալու և դիտումը շարունակելու համար²⁴։

Հեռուստասերիալները հայկական իրականություն են ներխուժել դեռևս 1990-ական թվականներից։ Սկզբնական շրջանում ցուցադրվում էին արտասահմանյան արտադրության սերիալները։ Դրանք աստիճանաբար ընդգրկեցին մեծ լսարան և դարձան ամենապահանջված հեռուստաարտադրանքը։ Սակայն դրանք պատմում էին այլ հասարակությունների մասին՝ բրազիլական, մեքսիկական, ամերիկյան և այլն։

Հայկական արտադրության հեռուստասերիալները եթեր են հեռարձակվել՝ սկսած 2005 թ.։ Առաջինը «Վերվարածներն ընտանիքում» հեռուստասերիալն էր։ Հետզհետե աճեց նաև հայկական հեռուստասերիալների արտադրությունը և քանակը եթերաժամանակում։ Այսօր դրանք ունեն մեծ լսարան, ընդգրկված են «փրայմ թայմ»-ում և, հետևաբար, ունեն ազդեցության մեծ տիրույթ։ Նվիրված լինելով հասարակական կյանքի տարբեր ոլորտների՝ այս կամ այն կերպ անդրադառնում են հասարակական կառուցվածքին և սոցիալական շերտավորմանը, եթե ոչ որպես սյուժեի հիմնական առանցք, ապա գոնե որպես ենթատեքստ հեռուստասերիալի հերոսների միջև փոխհարաբերությունները նկարագրելու և բացատրելու համար։

Հեռուստադիտողը սկսում է իրեն զուգորդել սերիալի այն հերոսի հետ, որն իրեն ամենամոտն է սոցիալական բնութագրիչներով և այս կամ այն չափով կրկնօրինակում է նրա վարքային մոդելները։ Կերպարների վարքը հեռուստադիտողն ընկալում է որպես սոցիալական կյանքի նորմ։ Այսպիսով՝ հեռուստասե-

²² Борецкий 1998, 145.

²³ Ромах, Попова 2009, 148.

²⁴ Ромах, Попова 2009, 147.

րիալները, մի կողմից, վիզուալացնում են իրական կյանքը, մյուս կողմից՝ նպաստում դրա վերարտադրմանը և վերակառուցմանը:

Հարուստների, միջին խավի ներկայացուցիչների և աղքատների վիզուալացումը «Ֆեյք մամա» հեռուստասերիալի օրինակով

«Ֆեյք մամա» հայկական արտադրության հեռուստասերիալը սկսել են ցուցադրել 2019 թ. հոկտեմբերին «Արմենիա» հեռուստաալիքի «փրայմ թայմ»-ով: «Ֆեյք մամա» իր բնույթով կատակերգական սիթքոմ է: Այն հասանելի է նաև «Արմենիա» հեռուստաընկերության YouTube-յան ալիքով, որտեղ յուրաքանչյուր սերիայի դիտողականությունը 1 մլն է և ավել: Հեռուստասերիալում հարուստների, միջին խավի ներկայացուցիչների և աղքատների վիզուալացման ուսումնասիրման համար կոնտենտ վերլուծության են ենթարկվել բոլոր 24 սերիաները՝ յուրաքանչյուրը 25-28 րոպե տևողությամբ:

Այս հեռուստասերիալում հերոսների այս կամ այն սոցիալական շերտին պատկանելությունը ցույց տալու համար վիզուալացվում են հետևյալ ատրիբուտները՝ տուն (էքստերիեր), տան ինտերիեր, հագուստ, աքսեսուարներ, ավտոմեքենա, ժամանց/զբաղմունք, սնունդ և այլն:

Ընդհանուր առմամբ, «Ֆեյք մամա» սերիալում ավելի հաճախ ցուցադրվում են աղքատներն ու հարուստները՝ համապատասխանաբար ժամանակի 42% և 43%, քան միջին խավի ներկայացուցիչները՝ 13%: Իսկ 2% դեպքերում հնարավոր չէր նույնականացնել կինոհերոսի սոցիալական կարգավիճակը: Տարբեր սոցիալական խավերին անդրադառնալիս նախապես ցույց է տրվում, թե ով որտեղ է բնակվում. հարուստը՝ քաղաքում (Երևան), իսկ աղքատը՝ գյուղում (Արևշատ): Գյուղական համայնքի մասին հարուստ կինոհերոսներն ասում են՝ «հեռավոր և խուլ գյուղ է»: Առաջին հերթին խոշոր պլանով ցուցադրվում են **տունը** և **տան էքստերիերը**: Հարուստն ապրում է երկհարկանի մեծ առանձնատանը՝ նորաոճ ճարտարապետական լուծումներով, մեծ լողավազանով, շատրվանով, նրբագեղ քանդակներով, մեծ և ընդարձակ այգով՝ պատված եղևնիներով, դեկորատիվ ծառերով ու ծաղիկներով, որոնք խնամված են և հատուկ ձևավորված: Ֆիլմում հաճախակի ցուցադրվում են հարուստի տան մեծ դարպասները, իսկ դրանց բարձր արժեքն ընդգծելու համար ասվում է՝ «...դարպասի այն կողմի «դարբենին» կասես, որ այդ դուռը իրենից թանկ է»²⁵: Գյուղաբնակ աղքատի տունը ցածր, երկհարկանի, հին և խաբխուր կառույց է՝ փայտե սյուներով և պատշգամբով: Պատուհանները փայտից են, բայց արդեն հին ու փտած, տեղ-տեղ ժանգոտ ճաղավանդակներով: Տունն ունի փոքր բակ և այգի՝ պատված անկանոն աճած, չխնամված խոտածածկույթով:


Միջին խավի ներկայացուցչի տունը կամ բնակարանը հեռուստասերիալի որևէ դրվագում չեն երևում: Սակայն հեռուստասերիալում ցուցադրված է միջին

²⁵ «Ֆեյք մամա», սերիա 1:


խավի ներկայացուցիչ, փոքր ձեռնարկատեր Ահարոնի **տան ինտերիերը**: Այն համալրված է հին և նոր կահույքով, սմարթ հեռուստացույցով, սալիկապատ հատակով, պատերին փակցված են նկարներ, կան սենյակային բույսեր:

Հարուստների տան ինտերիերը վիզուալացնելիս շեշտադրվել են հետևյալ ատրիբուտները՝ սալիկապատ ոսկենախշ հատակ, նրբագեղ կահույք՝ բազմոց, մեծ նկարներ, քանդակներ, հյուրասենյակի պահարան, սեղան, մեծ և պատկերազարդ նկարներ, քանդակներով լուսամուկի, վերելակ, ջակուզի և այլն: Աղքատ հերոսի՝ Վրեժի տան կենցաղային պայմանները վատ են՝ առաստաղից ջուր է կաթում, կահույքը հնամաշ է, իրերը՝ թափթփված ու կեղտոտ, հատակը՝ հնացած և գունաթափված. այնպիսի տպավորություն է, որ ոչինչ իր տեղում չէ, և պահառանների պակաս կա (*նկ. 1*)²⁶:

Հագուստը, արքեսուարները, զբաղմունքը, ժամանցը և, իհարկե, **ավտոմեքենաները** թույլ են տալիս լավագույնս արտահայտել այս կամ այն սոցիալական շերտին կինոհերոսի պատկանելությունը: Հարուստ տղամարդ Թոմը հիմնականում կրում է վերնաշապիկ՝ թևքերին ճարմանդներով, և համապատասխան տաբատ՝ համադրված պիջակով կամ կաշվե բաճկոնով: Արքեսուարներից կրում է ոսկյա վզնոց, «Rolex» ֆիրմայի ժամացույց, ծխում է սիգար, իսկ հեռախոսը iPhone XS է (*նկ. 2*)²⁷:



Նկ. 1. «Ֆեյք մամա» հեռուստասերիալում հարուստի, միջին խավի ներկայացուցչի և աղքատի տների ինտերիերների վիզուալացումը



Նկ. 2. «Ֆեյք մամա» հեռուստասերիալում հարուստ տղամարդու ատրիբուտները

Թոմն իր ժամանակն անցկացնում է սրճարաններում, ակումբներում, ծխում է նարգիլե, զբաղվում որսորդությամբ, գոլֆ խաղում, երեկոն անցկացնում է աղջիկների հետ և այլն: Հեռուստասերիալի սյուժեի համաձայն, նա ժամանակին

²⁶ «Ֆեյք մամա», սերիա 3, 15:

²⁷ «Ֆեյք մամա», սերիա 7, 1:

եղել է ավելի ցածր խավի ներկայացուցիչ և հարստացել է՝ ամուսնանալով հարուստ Թերեզայի հետ: Վերջինս անընդհատ հիշեցնում է, որ Թոմն աղքատ է եղել և ժամանակին կրել է «Եղվարդի բոթաս», օգտագործել է «Դուլար օդեկոլոն» և «Dorado» ֆիրմայի հեռախոս: Սոցիալական հիերարխիայով բարձրանալիս՝ փոխվում է նաև վերոնշյալ հերոսի անունը՝ հայկական Թորգոմ-ը դառնում է Թոմ, քանի որ ըստ նրա՝ Թորգոմ անունը հնացած է:

Հարուստ կանանց կերպարները ցուցադրելիս հաշվի են առնում տարիքային առանձնահատկությունները: Մեծահասակ հարուստ կինը՝ Մարետան, կրում է դասական նրբաճաշակ հագուստ, մուշտակ, մեծ և թանկարժեք աքսեսուարներ՝ ոսկյա մատանիներ երկու ձեռքին, մեծ ոսկյա օղեր և զանազան վզնոցներ: Երիտասարդ հարուստ կինը՝ Թերեզան, առանց որևէ հատուկ առիթի, որպես առօրյա հագուստ, կրում է ատլասե երեկոյան զգեստներ, ադամանդե քարերով ոսկյա մատանիներ, օղեր և վզնոցներ՝ համապատասխան դիմահարդարումով և սանրվածքով (նկ. 3)²⁸: Խոսքի մեջ հերոսները շեշտում են հագուստի և զարդերի բարձր գինը՝ ներկայացնելով հարուստ խավին համապատասխան ցուցադրական սպառման պրակտիկաներ:



Նկ. 3. «Ֆեյք մամա» հեռուստասերիալում հարուստ կանանց կերպարների վիզուալացումը

Հարուստ կանայք յուրաքանչյուր սերիայում դիմահարդարվում են և վարսահարդարվում համապատասխան մասնագետների օգնությամբ. դա նրանց հիմնական զբաղմունքն է: Որևէ այլ զբաղվածություն հարուստ կանայք չունեն, իսկ հարստությունը պարզապես ժառանգել են:

Հեռուստասերիալում կան նաև հարուստի վարորդի, տան սպասավորների և թիկնապահի կերպարներ: Այս կերպարները հարուստի կարգավիճակն ընդգծող ատրիբուտներ են:

Հարուստ Թերեզան հանդես է գալիս նաև աղքատ կնոջ կերպարով, երբ կորցնում է հիշողությունը և հայտնվում է աղքատ հերոս Վրեժի տանը, ներկայացվում որպես նրա կին և երեխաների մայր: Աղքատ կնոջ դերում նա հանդես է գալիս կեղտոտ, առանց դիմահարդարման և աքսեսուարների, իր մարմնի չափերից մեծ հագուստով՝ խալաթով կամ շրջազգեստով, մեծ չափսի գործած բաճկոնակով, ռետինե կոշիկներով: Նա կայուն աշխատանք չունի՝ մեկ կթվորուհի է,

²⁸ «Ֆեյք մամա», սերիա 19, 1:

մե՛կ հացթուփ, մե՛կ մատուցողուհի: Աղքատ Վրեժը նույնպես հիմնական աշխատանք չունի, ժամանակ առ ժամանակ աշխատում է որպես այգեպան կամ շինարար կամ էլեկտրատեխնիկա վերանորոգող, ինչպես նաև «խոպանչի» է:

Վրեժը երեք երեխա ունի՝ երկու տղա և մեկ աղջիկ (Վահե, Նարե, Խաչիկ): Նրանց սոցիալական կարգավիճակը վիզուալացնելիս հեռուստատեսությամբ օգտագործվել է մեծ չափսի, լայն, կիսամաշված հագուստ, հիմնականում վանդակավոր նախշերով վերնաշապիկներ, ջինսե և սպորտային տաբատներ, ծակ գուլպաներ և այլն (նկ. 4.)²⁹: Աղքատ ընտանիքի երեխաները փնթի են, չարաճճի, վարվելաձև չգիտեն, ամեն փոքր խնդրի պատճառով կարող են կռվել միմյանց հետ: Ի դեպ, հարուստ զույգը՝ Թերեզան ու Թոմը երեխա չունեն:



Նկ. 4. Աղքատ ընտանիքի երեխաների կերպարները

Հեռուստատեսությամբ ներկայացված են նաև ոստիկանը, փոքր ձեռնարկատեր Ահարոնը, որոնց կարելի է նույնականացնել որպես միջին խավի ներկայացուցիչներ: Ահարոնը, որը գյուղում փոքրիկ «սննդի օբյեկտ» ունի, կրում է տարբեր ոճերի հագուստ՝ հիմնականում վերնաշապիկ և բլուզ, դասական պիջակ ու տաբատ: Կրում է ոսկյա զննոց՝ խաչով, մատանի և բավական մեծ ժամացույց: Նա փորձում է իր իրական սոցիալական կարգավիճակից բարձր երևալ: Սակայն նրա «սննդի օբյեկտի» կահավորանքն աղքատիկ է, մատուցվող սնունդը՝ վատ որակի, սպասքը նույնպես էժանագին տեսք ունի:

Սոցիալական կարգավիճակն ընդգծելու կարևորագույն միջոցներից է **ավտոմեքենան**: Հարուստ կինոհերոսներից յուրաքանչյուրն ունի իր սեփական ավտոմեքենան և անձնական վարորդը: Հարուստ կնոջ մեքենան «Mercedes Benz» մակնիշի C 63 մոդելի 2019 թ. արտադրության մոխրագույն ավտոմեքենա է, որի արժեքը մոտ 100.000 ԱՄՆ դոլար է: Նրա ամուսնու ավտոմեքենան սպիտակ է՝ «Mercedes Benz» մակնիշի S 221 մոդելի, 2010 թ. արտադրության, արժեքը՝ մոտ 20.000 ԱՄՆ դոլար: Աղքատ Վրեժը վարում է խորհրդային արտադրության կանաչ «Մոսկվիչ 412», որը հայտնի է «Բուդկա մոսկվիչ» անունով: Միջին խավի

²⁹ «Ֆեյք մամա», սերիա 14:

ներկայացուցիչ փոքր ձեռնարկատերը վարում է խորհրդային տարիների արտադրության կաթնագույն «ԴԱՅ 24» ավտոմեքենա, իսկ ոստիկանը՝ «Nissan» մակնիշի սև ավտոմեքենա:

Կինոհերոսների **սննդակարգը** նույնպես օգտագործվել է նրանց սոցիալական կարգավիճակը շեշտելու համար: Հարուստը սնվում է հիմնականում ռեստորանում, իսկ տանը կերակուր պատրաստում է սպասուհին: Հարուստները խմում են կոկտեյլներ կամ ալկոհոլային թանկարժեք խմիչքներ: Թոմը, որն առաջ ավելի ցածր խավի ներկայացուցիչ էր, երբեմն սնվում է նաև բուրգերներով³⁰:

Աղքատ խավի ներկայացուցիչները սնվելու բան չունեն, ընտանիքը նստած է գրեթե դատարկ սեղանի շուրջը: Աղքատի երեխաները սնվում են, հիմնականում, քաղցր ձողիկներով, կրեկերներով, կեղևազրկում են արևածաղկի սերմերը³¹:

Հեռուստասերիալի հերոսների անունները նույնպես պատահական չեն ընտրված: Աղքատ հերոսների անունները հայկական ծագումնաբանություն ունեն՝ Վրեժ, Վահե, Նարե, Խաչիկ, Թորգոմ: Միջին խավի ներկայացուցիչների անունները տարբեր են՝ և՛ հայկական՝ Բագրատ, և՛ օտարալեզու ծագման՝ Ահարոն: Իսկ հարուստների անուններն օտարալեզու ծագում ունեն՝ Մարիետա, Թերեզա, Թոմ: Բացի այդ՝ հեռուստասերիալի հերոսներից մեկը՝ Թորգոմը, որն ավելի ցածր բարեկեցության մակարդակ ուներ մինչև ամուսնանալը, հարուստ կնոջ հետ ամուսնանալուց հետո անվանափոխվում է Թոմի:

Եզրակացություններ

Հեռուստասերիալները ոչ միայն արտացոլում են սոցիալական իրականությունը, այլև նպաստում են դրա վերարտադրությանը, փոփոխմանը կամ զարգացմանը՝ ձևավորելով այս կամ այն սոցիալական շերտի վերաբերյալ որոշակի կարծրատիպեր: Հեռուստասերիալը դիտողները նմանակում են այն կինոհերոսների վարքը, որոնք նրանց առավել մոտ են սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներով կամ ցանկալի սոցիալական դիրք են զբաղեցնում: Մեծ հեռուստալսարան ունեցող հեռուստասերիալներում ցուցադրված վարքը, խոսքը, տեսքը հեշտությամբ ներթափանցում է հասարակության մեջ և կառուցակցում մեր առօրյան, սոցիալական խավերի միջև փոխհարաբերությունները, հասարակության մեջ սոցիալական դիրքը բարելավելու մոդելները:

Մասնավորապես, «Ֆեյք մամա» հեռուստասերիալը, վիզուալացնելով ունեցվածքի, ապրելակերպի և վարքային մոդելներ, ձևավորում է հետևյալ կարծրատիպերը՝

- Գյուղում ապրում են հիմնականում աղքատ խավի ներկայացուցիչներ կամ ծայրահեղ աղքատներ, իսկ հարուստներն ապրում են քաղաքում:
- Աղքատները թափթփված են, չխնամված, վարվելաձև չգիտեն և այլն:

³⁰ Burger House արագ սննդի ռեստորանը հեռուստասերիալի նկարահանման հովանավորն է:

³¹ APACHI ֆիրման հեռուստասերիալի նկարահանման հովանավորն է:

▪ Շինարարը, էլեկտրիկը, այգեպանը, կթվորուհին, մատուցողը, հացթուխը աղքատի մասնագիտություններ են: Իսկ հարուստը մասնագիտություն չունի. հարստությունը նա կա՛մ ժառանգում է, կա՛մ հարուստ խավի ներկայացուցչի հետ ամուսնության միջոցով է ձեռք բերում:

▪ Աղքատները բազմազավակ են, իսկ հարուստները երեխա չունեն:

▪ Հարուստներն օտարալեզու ծագմամբ անուններ ունեն, իսկ հայկական ծագումով անուններ ունեն հիմնականում աղքատները:

Այսպիսի կարծրատիպերը նպաստում են աղքատների պիտակավորմանը, արժեզրկում են գյուղացու աշխատանքը և մի շարք կարևոր մասնագիտություններ, դրդում են գյուղից արտագաղթելուն:

Հեռուստասերիալն առաջարկում է հարստանալու լատենտ կամ բացահայտ ձգտում ունեցող հեռուստադիտողին հարստանալու կեղծ մոդելներ՝ սոցիալական հիերարխիայի աստիճաններով կարելի է բարձրանալ հարուստի հետ ամուսնանալու կամ ունեցվածքը ժառանգելու միջոցով: Աշխատանքն ու մասնագիտությունը սերիալում չեն դիտարկվում որպես հարստանալու միջոց: Հարուստը չի աշխատում, իր ողջ ժամանակն անցկացնում է հարդարվելով, զվարճանալով և թանկ մարզածներով զբաղվելով: Երեխա ունենալը և բազմազավակությունը նույնպես պիտակավորվում են:

Գրականություն

Ավետիսյան Ա.Շ. 2010, Հեռուստատիքանություն, Երևան, ԵՊՀ հրատ., 40 էջ:

Հովսեփյան Ս. 2013, Արդի ցուցադրական սպառման բնութագիրը (Երևան քաղաքի օրինակով), Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն, 141.5, Երևան, էջ 3-12:

Միրաքյան Վ. 2010, Լրատվամիջոցների ազդեցության հնարավորությունները, Երևան, հեղինակային հրատ., 230 էջ:

Березин В.М. 2003, Массовая коммуникация: сущность, каналы, действия, Москва, «РИП-холдинг», 174 с.

Борецкий Р.А. 1998, В Бермудском треугольнике ТВ. Под общей ред. Я.Н. Засурского, Москва, «Икар. Факультет журналистики МГУ», 145 с.

Борецкий Р.А. 2010, Начало. К истории ТВ: выпавшее звено, или Мое забытое телевидение, Москва, ВК, 311 с.

Веблен Т. 1984, Теория праздного класса, Москва, «Прогресс», 368 с.

Роман О.В., Попова Л.О. 2009, Феномен телевизионных сериалов в современной массовой культуре, ТГУ им. Г.Р. Державина, научная статья 2 (14), Тамбов, с. 147-154.

Хлызова А.А. 2016, Телевидение в условиях конвергенции СМИ на современном этапе, Учен. зап. Казан. ун-та., кн. 4, с. 1108-1122.

Цимерман Ю.А. 2007, Демонстративное потребление в современном обществе: институциональный анализ, Москва, Диссертация на правах рукописи, 187 с., <https://docplayer.com/40801607-Cimerman-yuliya-aleksandrovn-demonstrativnoe-potreblenie-v-sovremenom-obshchestve-institucionalnyy-analiz-specialnost-ekonomicheskaya-teoriya.html> (дата верификации 02.06.2022).

- Черных А. 2007, Мир современных медиа, Москва, Издательский дом: «Территория будущего», 312 с.
- Швед О.В. 2015, Визуальная коммуникация в современном мире, Виенна: "East West" Association for Advanced Studies and Higher Education GmbH, с. 70-82.
- Шкаратан О.И. 2012, Социология неравенства. Теория и реальность, Москва, изд. дом Высшей школы экономики, 526 с.
- Berger P., Neu C. 2017, Soziale Ungleichheit und soziale Schichtung, in: Joas H. (Hrsg.), Lehrbuch der Soziologie, Frankfurt am Main/New York, Campus, 4. Auflage, 992 S.
- Beck U. 1986, Risikogesellschaft. Auf dem Weg in eine andere Moderne, Frankfurt, M., Suhrkamp, 396 S.
- Melkumyan Y. 2020, Visualization of Social Strata in Media, Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, N 2 (32), էջ 3-13:
«Ֆեյք մամա» հեռուստասերիալ (<https://www.youtube.com/watch?v=fYB443TAZkc>):

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ՎԻԶՈՒԱԼԱՑՈՒՄԸ ՀԵՌՈՒՍԱՍԵՐԻԱԼՆԵՐՈՒՄ

Յուլիանա Մելքումյան, Մարիամ Հարությունյան

Ամփոփում

Սոցիալական անհավասարության ժամանակակից հիերարխիկ համակարգում ընդունված է առանձնացնել երեք հիմնական խավ՝ վերնախավ, միջին խավ և ստորին խավ կամ աղքատներ: Սոցիալական շերտավորման հիմքում դրվում են ամենատարբեր ատրիբուտներն ու բնութագրիչները՝ շերտավորման գործոնները: Հասարակության յուրաքանչյուր սոցիալական շերտ ունի իրեն բնորոշ վարքային դրսևորումները, սպառման նմուշները, որոնց միջոցով անհատը փորձում է նույնականացնել իրեն այս կամ այն սոցիալական շերտի հետ: Ցուցադրական սպառման միջոցով անձը վիզուալացնում է սեփական սոցիալական կարգավիճակը: Հեռուստասերիալները ոչ միայն վիզուալացնում են սոցիալական իրականությունը, այլև նպաստում են դրա վերարտադրությանը, փոփոխմանը կամ զարգացմանը՝ ձևավորելով այս կամ այն սոցիալական շերտի վերաբերյալ որոշակի կարծրատիպեր: Մեծ հեռուստալսարան ունեցող հեռուստասերիալներում ցուցադրված վարքը, խոսքը, տեսքը հեշտությամբ ներթափանցում են հասարակության մեջ և կառուցակցում մեր առօրյան, սոցիալական խավերի միջև փոխհարաբերությունները, հասարակության մեջ սոցիալական դիրքը բարելավելու մոդելները: Մասնավորապես, «Ֆեյք մամա» հեռուստասերիալը, վիզուալացնելով հարուստների, միջին խավի ներկայացուցիչների և աղքատների ունեցվածքի, ապրելակերպի և վարքային մոդելներ, ձևավորում է մի շարք կարծրատիպեր:

Բանալի բառեր՝ սոցիալական շերտավորում, հարուստ, միջին խավ, աղքատ, վիզուալացում, հեռուստասերիալ, սոցիալական անհավասարություն:

ВИЗУАЛИЗАЦИЯ СОЦИАЛЬНОЙ СТРАТИФИКАЦИИ В ТЕЛЕСЕРИАЛАХ

Юлиана Мелкумян, Мариам Арутюнян

Резюме

В современной иерархии социального неравенства принято выделять три основных класса: элиту, средний класс и необеспеченные слои. Социальная стра-

тификация основывается на различных факторах. Каждый социальный слой имеет свои модели потребления, поведения и образа жизни, посредством которых люди идентифицируют себя с тем или иным социальным слоем. Демонстративное потребление позволяет визуализировать социальный статус. Сериалы не только визуализируют социальную реальность, но и способствуют ее воспроизводству, изменению или развитию, формируя определенные стереотипы о различных социальных слоях. Поведение, речь и внешний вид, демонстрируемые в сериалах, имеющих большую аудиторию, легко проникают в общество и конструируют нашу повседневность, отношения между различными социальными слоями, модели продвижения по ступеням социальной иерархии. Сериал «Фейк-мама», визуализируя имущество, образ жизни и поведение представителей элиты, среднего класса и необеспеченных слоев, формирует ряд стереотипов.

Ключевые слова – социальная стратификация, социальная иерархия, богатые, средний класс, бедные, визуализация, телесериал.

VISUALIZATION OF SOCIAL STRATIFICATION IN SITCOMS

Yuliana Melkumyan, Mariam Harutyunyan

Abstract

The goal of this article is to discuss the visualization of social stratification in soap operas. Three main classes: the upper class, the middle class and the lower class or the poor, are usually distinguished in the social hierarchy of modern societies. Social stratification is based on various factors. Each social stratum of society has its own patterns of consumption and behavior, through which the individuals try to identify themselves with a particular social stratum. A person visualizes his/her own social status by demonstrative consumption. Soap operas not only visualize social reality, but also contribute to its reproduction, change or development by forming certain stereotypes about different social strata. The behavior, speech, and appearance shown in soap operas with a large TV audience easily seep into society, construct our daily life, affect the relationship between social classes and the patterns of improving one's social position in the society. The sitcom "Fake Mama" forms a number of stereotypes by visualizing property, lifestyle and behavior patterns of the rich, middle class and poor.

Key words – social stratification, social hierarchy, the rich, the middle class, the poor, visualization, sitcom.

**ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ
(Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակի առթիվ)**

Դավիթ Գասպարյան

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդամյան 24/գ

Էլ. հասցե՝ grakanagetgasparyan@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 03.09.2021, գրախոսվել է 14.02.2022, ընդունվել է տպագրության 05.07.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.2-135

Ներածություն

Չարենցի ստեղծագործության պատմականության նախադրյալները պայմանավորված են նախ՝ իրականության ու ժամանակաշրջանի բացառիկ պատմականությամբ, ապա՝ որպես բանաստեղծ, իրեն պատմության շարժիչ ուժ տեսնելու ինքնաճանաչողությամբ, ինչպես նաև իրականությունը մի նոր անդրադարձ գեղարվեստական իրականությամբ վերարտադրելու կարողությամբ: Չարենցը ինքը՝ որպես զենքը ձեռքին կռվող զինվոր, հեղափոխական, պետական աշխատող և բանաստեղծ, երկիր կառուցող էր, իսկ իր դերի պատմական նշանակության գիտակցմամբ ստեղծեց ժամանակի գլխավոր հերոսի նախատիպը՝ դառնալով իր օրերի պատմիչ-բանաստեղծը:

Պատմությունը պատերազմներն ու հեղափոխություններն են, հաղթանակներն ու պարտությունները, քաղաքականությունն է ու քաղաքական ղեկավարությունը, երկրի տնտեսական ու մշակութային կառուցումն է, ժողովուրդն է: Ամեն ինչ դառնում է պատմություն, և ամեն ինչ պատմություն է: Այս տեսադաշտում առաջնայինը պատմություն կերտող անհատն է՝ լինի զինված առաջնորդ թե գաղափարական մարտիկ: Իրականությունը՝ այս դեպքում Չարենցի կյանքի ժամանակը՝ 1910-1930-ական թթ., ձևավորում է համապատասխան պատմական միջավայր՝ ազգային կյանք, հեղափոխություն, հանրային կյանքի կառուցման առաջնային գաղափարներ, համախոհներ և հակառակորդներ: Չարենցի ստեղծագործության մեջ ձևավորվում են ժամանակը ներկայացնող հիմնական հերոսների խորհրդանշանները՝ առաջնորդ, հեղափոխական ուժեր, մարտնչող մարտիկներ, կուսակցական գործիչներ...

Պատմականության նախադրյալները

1920 թ. հունիսին Երևանում լույս է տեսնում Չարենցի «Բոլորին, բոլորին, բոլորին (Երեք ռադիոպոեմ)» գիրքը. զետեղված են «Նայիրի երկրից», «Դեպի ա-

պագան», «Բրոնզե թևերը կարմիր գալիքի» ռադիոպոեմները: Այստեղ դարերի ու ժողովրդի անունից խոսող բանաստեղծի պատմական կերպարն է.

Ե՛ս – ե՛ս եմ նորից.-

Դարերից եկած անհո՛ւն մի պոետ-

Եղիշե Չարենց-

Նայիրի երկիր, քո երգիչը վառ,

Օրհներգուն պայծառ

Ու զավակը մեծ...¹

Պատմությունը տեղնուտեղը ծուլվում է պատմական կերպարին: Ռադիոկայանը կառուցվել էր նախորդ տարի. 1919 թ. «...հոկտեմբերին արդեն վերջացել էր կառուցումը Երևանի ուժեղ ռադիոկայանի, որ գործում էր մինչև Բասրա, Թաշքենդ ու Հաշտարխան»²: «Մշակ» թերթը 1920 թ. հունիսի 8-ի համարում հաղորդում է. «Իտալական թագավորական շտաբի գնդապետ Գաբբուն հունիսի 7-ին 13 արկղ իրեր ստացավ՝ Երևանում հիմնվող նոր ռադիոկայանի համար»:

Ահա Երևանի նորակառույց հզոր ռադիոկայանը կենդանի ռադիոկայան է դառնում նաև Չարենցի պոեզիայի համար: Սրանք ամեննևն պատահական զուգահեռություններ չեն: Եվ իզուր չէր Չարենցն աշխարհով մեկ աղաղակում.

Ռադիոկայան է իմ հոգին հիմա

Ամբողջ աշխարհի ու մարդկանց հանդեպ.

Ու բա՛րձր է, բա՛րձր է կայանն իմ հոգու՝

Մասիսի նման բարձր է ու հաստատ–

Հզո՛ր, ահարկո՛ւ:³

Նույն կերպ՝ պատմականորեն նույնքան վավերական են 1915-1918 թթ. ստեղծված «Դանթեական առասպել», «Վահագն», «Ազգային երազ», «Սոմա», «Ամբոխները խելագարված» պոեմները, որոնցում եղեռնն է ու հայ կամավորների առաքելությունը, հեղափոխությունն է ու հայոց պետականության վերականգնումը:

1920 թ. սեպտեմբերի 28-ից նոր թափ են առնում թուրքական հարձակումները. հոկտեմբերի 30-ին ընկնում է Կարսը՝ Չարենցի ծննդավայրը: Հոկտեմբերի 6-ին Երևանում գրում է «Մահվան տեսիլ» եղերերգը: Չարենցի խոսքը տրոփում էր հայրենիքի պատմաքաղաքական իրադարձությունների շնչառությամբ, որի ամենացայտուն վկայությունն այս եղերերգն է: Իրական են և՛ կախաղանի պատկերները, որոնք դասալիքներին պատժելու համար դրված էին Երևանի, Կարսի հրապարակներում, և՛ վերջին զոհի զգացողությունները:

«Երկիր Նայիրի» վեպը

Այս նույն ոգով 1921-1924 թթ. գրում է «Երկիր Նայիրի» վեպը, զուգընթաց տպագրում «Նորք» հանդեսում (1922, 1923, 1925), իսկ 1926-ին լույս ընծայում

¹ Չարենց 1963, 98:

² Վրացյան 1982, 353:

³ Չարենց 1963, 100:

առանձին գրքով՝ հայերեն և ռուսերեն: Չարենցն այստեղ հանդես է գալիս վիպասան պատմիչի դերում և ոգում իր քաղաքի դառնաղի ասքը: Վեպի հերոսների մեջ կան նաև պատմական անձինք, որպիսին է Կարսի քաղաքագլուխ Համազասպ Նորհատյանը: Վեպը պատմական է՝ պատմությանն ուղղված նոր հայացքով: Ահա և արձագանքը. ««Երկիր Նայիրի» վեպը՝ երիտասարդ տաքարյուն ու խռովահույզ այդ ստեղծագործությունը, նոր հայտնագործություն էր այդ ժամանակի արձակում, և հիշում եմ, թե ինչպես դրա մասին շատ էին խոսում Երևանից հեռու Լենինգրադում...»⁴:

Նախակերպարի առումով պատմականության շունչ ունի անգամ վեպի հետ կապված այս զավեշտալի դեպքը: Կարսեցիները ծաղրում են համաքաղաքացի Ենոք Մահտեսյանին՝ նրան համարելով վեպի հերոսներից Մեռելի Ենոքի նախատիպը: Արգո կարսեցին Գրողների միությունում հանդիպում է Չարենցին և, առանց իմանալու, որ Չարենցն է, ասում է մտքում եղածը: Չարենցը հյուրին երեկոյան ժամադրում է իր տուն, հյուրը գալիս է, Չարենցը բացում է դուռը և զարմացած հյուրին ասում, որ Չարենցը հենց ինքն է, որ կա: Հյուրին հրավիրում է տուն, հարգում, պատվում և տալիս այսպիսի տեղեկանք. «Չարենցը տեղեկացնում է ամենքին, որ Ենոք Մահտեսյանը... Մեռելի Ենոքը չէ»:

Չարենցին ծանոթ էր Անդրեյ Բելիի «Պետերբուրգ» (գրել է 1912-1913 թթ., տպագրել՝ 1922-ին) վեպը, որի անդրադարձներն ակնհայտ են «Երկիր Նայիրի»-ում: Բելին խորհրդապաշտության գեղագիտությամբ որոնում էր Մայր Ռուսիայի կերպարը՝ ո՞վ է ռուսը, ի՞նչ է Ռուսիան, Չարենցը՝ Երկիր Նայիրին՝ ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և ո՞ր ենք գնում:

Վեպի հերոսներից Մագութի Համոն կարսեցի էր, ծնունդով՝ Համազասպ Նորհատյան, ՀՅԴ գործիչներից: Հայաստանի Հանրապետության շրջանում եղել է Կարսի քաղաքապետը: Ամեն կերպ փորձում էր Կարսը փրկել դարավոր ոսոխից: Մահապատժի են ենթարկել թուրքերը, ըստ վեպի՝ կախվել է բերդի աշտարակում:

Վեպը ռուս-թուրքական դաշինքին զոհաբերված և աստիճանական ոչնչացման դատապարտված Հայաստանի ողբերգությունն է՝ ընդհանուր առմամբ՝ հեզանքի, իսկ տեղ-տեղ էլ անգամ խելագարության հասնող զավեշտի լեզվով, որով հետև խաչ քաշվեց ոչ միայն Արևմտյան Հայաստանի ազատագրման դարավոր հույսի վրա, այլև ոսոխին տրվեց Կարսի մարզը:

Դեռևս «Ազգային երազ» պոեմում (1917-1918 թթ.) Չարենցը նայեց, տեսավ ու գտավ պարտության ու նահանջի իրական պատճառների նախադրյալը և այդ երկը ենթավերնագրեց «Պոեմ երգիծական և ողբերգական»: Երկու դեպքում էլ երգիծանքը պարտության մորմոքի ծովն է, որ բարձրանում է՝ մշուշի պես քողարկելու զարհուրելի ողբերգությունը, որ կոչվում է հայրենիքի կորուստ: Այդպես նրա աչքի առջև դատարկվեց Վանը, ընկավ Կարին-Էրզրումը, դարավոր ոսոխը ոտքը դրեց հայրենի Կարս: Այդպես պարտության ամոթն ու խայտառակությունը

⁴ Տիխոնով 1961, 25:

դարձան ազգային երազից ազգային ողբի վերածված համազգային կեղեքման բաղադրիչներ և ստացան նաև ինքնահեգնանքի կերպարանք: Սրբազան արժեքները տրորվեցին: Պարտությունը պառակտում է ազգը, որոնում մեղավորներ, դավաճաններ, բերում անվստահություն, հասցնում խելագարության ու ինքնասպանության: Այստեղից էլ՝ ամեն տեսակի մահվան տեսիլները, ողբերն ու ողբերգերը...

Ժամանակն իր կնիքն ունի. Չարենցի ժամանակակից, եվրոպական ավանգարդի առաջնորդներից Ջորջո դե Կիրկոն (1888-1978) 1926-ին կերտում է «Կատակերգություն և ողբերգություն» կտավը. անդեմ տղամարդ է և անդեմ կին, անտիկ թատերական ոճի տարրեր են և գերժամանակակից լուծումներ, պատվանդանի կողքին ընկած դիմակ է և վարագույրի պատառիկ: Ողբերգություն է՝ կատակերգության շղարշով: Ճիշտ Չարենցի վեպի կառուցվածքն է:

Չարենցի վեպը կորստի հետ հաշտեցման ճիչ է. հանգուցյալը որքան էլ թանկ ու հարազատ լինի, որքան էլ դառնաղի ողբաս ու ինքդ քեզ ծվատես, միևնույն է՝ դիակը պետք է թաղել. այլևս վերջ, երազանքների ժամանակն ավարտվեց, ուզես-չուզես սա՛ է Հայաստանը, այս խորհրդային հանրապետությունը, Արարատյան դաշտի այս «խորշակյալ, անդուռ» փակուղին, որը և է հայրենիք՝ անունը խորհրդային Հայաստան:

Վեպի երկրորդ գլուխն սկսվում է դազաղի պատկերով: Գրում է. «...սրտի բուռն տրոփով սկսեցի գրել նայիրյան այդ քաղաքի պատմությունը, բայց հիմա, երբ ուզում եմ անցնել նրա հետագա օրերին ու դեպքերին, պատկերել նրա օրերն ու վաստակները – դառն, ծանր մի մորմոք թանձրանում է սրտիս, ուտում է սիրտս»⁵: Հաջորդում է այլասացությունն այն մասին, թե ինչպես մի անգամ տեսել է փողոցի մեջտեղով անձրևի ու ցեխաջրերի միջով գնացող գավառական վարժապետի կամ փոստ-հեռագրային ցրիչի արտաքինով մի մարդու, որ սիրած, հարազատ հանգուցյալի համար գլխին դրած տանելիս է եղել իրենից շատ ավելի ծանր ու մեծ մի դեղնավուն դազաղ: Հաջորդում է հեղինակի ողբերգական անդրադարձը. «Այդպես էլ ե՛ս, ընթերցո՛ղ, ճի՛շտ այդ վարժապետի նման, – ո՛ր եմ գնում: Ինչո՞ւ եմ հպել – բայց ո՛չ թե ողնաշարիս, այլ զանգիս ուղեղին դազաղանման այս բեռը, և ուզում եմ տեղ հասցնեմ... ո՛ր: Եվ մի՞թե այնտեղ, տքնությանս վերջում, որպես նվիրական սիրելի մի մեռել – չպիտի՞ պատկերանա ինձ երկիրը Նայիրի, որին դամբանելու համար տանում եմ ես ահա խոհերիս տողաշար դազաղը – տանում եմ կամքիս հակառակ, որովհետև, այո, *հարկավոր* է տանել: Չէ՞ որ, այո՛ – թաղել է հարկավոր *բողոր* մեռելներին, որքան էլ նրանք սիրելի և հարազատ լինեն, չէ՞ որ, միևնույն է, հակառակ դեպքում կքայքայվեն նոքա՛ զագրելի և ախտաբույր, այնպես որ անգամ սիրահարը կզգվի պաշտելի աճյունից»⁶: Սա պարտության ողբերգության գույժն է՝ նայիրյան հույզերի փլու-

⁵ Չարենց 1966, 77-78:

⁶ Չարենց 1966, 77-78-79:

զումը, որից հետո դեռ պետք է ապրել և համակերպվել դառը իրականությանը՝ թանկ հարազատն այլևս չկա, մեռել է, և նրան պետք է հուղարկավորել: Հոգեբանական մահացու դժվարություններ հաղթահարելու ճանապարհով Չարենցը ծեռքը մեկնում է ցավակցելու ապրողներին, բայց նաև նրանց սատարելու և գոնե այդքանով փրկելու մեծ հույսի վերջին տրորված հանգրվանը: Չմոռանանք՝ այդպես էր ավարտվում նաև «Դանթեական առասպել» պոեմը. ահա վերջին տողերը. «...Ու պե՛տք է քայլե՛լ ու քայլե՛լ համառ՝ // Ապրելու հսկա տենչը բեռ արած...»⁷:

Խորհրդային գրաքննության աշալուրջ հսկողության պայմաններում Չարենցի համար ամենևին հեշտ չէր ազգային կյանքի ճշմարտությունն ասել մինչև վերջ, բայց գեղարվեստական վարպետության հնարավոր միջոցներով և հատկապես երգիծանքի շղարշով պարուրված՝ ասում է: Հապա մի հիշեք վերջին տեսարանը, երբ Կարսի քաղաքագլուխ Մազուֆի Համոյին թուրքերը կախում են Կարսի բերդում և գլխավերևում տախտակ փակցնում այս գրությամբ՝ «Մ. Հ. Ա. Ն.»⁸, որ նշանակում է՝ Մազուֆի Համո Արքա Նայիրի, այդպես ժամանակին խաչված Քրիստոսին էին ծաղրել. «Եվ նրա գլխի վերևը դրեցին նրա հանցապարտության գիրը, թե՛ սա է Հիսուսը՝ հրեաների թագավորը»⁹, «Պիղատոսը մի տախտակ էլ գրեց և դրեց խաչի վրա. և գրված էր «Հիսուս Նազովրեցի՝ հրեաների թագավոր»»¹⁰: Իբր ծաղրեցին, բայց ժամանակի մեջ ծաղրվածները նրանք էին, ովքեր չէին հավատում Քրիստոսի հավատի հաղթանակին և Մազուֆի Համոյի հայրենասիրության հարությանը: Այստեղ է գրողի հանճարը՝ արտաքին շղարշի տակ թաքցրած իր բուն ասելիքը տեղ հասցնելու վարպետությունը: Պատմությունը գեղարվեստական լուծում է ստանում, բայց չի հեռանում պատմականությունից:

Եվ ահա Չարենցի վեպն ընդունվեց խանդավառությամբ, հայերեն ու ռուսերեն արժանացավ մի քանի հրատարակության ու նպաստավոր գրախոսությունների: Այդպես, որովհետև տեսան վեպի արտաքին շերտը՝ ա՛յն, ինչ պետք էր ժամանակի համար՝ ազգային իդեալների ու հերոսների ծաղր, մինչ խորքում ազգային ողբերգությունն էր, բոլշևիկների հրահրված դասալքությամբ պայմանավորված պարտության ամոթը:

Վեպը գրելիս Չարենցին առաջնորդող բուն նպատակը, նրա առաջնային գերխնդիրը **մնացորդին՝ մնացածին փրկելն էր**, Խորհրդային Հայաստանում մնացորդաց սերնդին հոգեբանորեն կյանքի կոչելը, որովհետև հայի պատմական ճակատագրի առջև ոչ միայն թուրքն էր, այլև ներքին քաղաքական փոփոխությանը՝ Առաջին Հանրապետությունից խորհրդային վարչակարգի անցնելուն հոգեբանորեն հարմարվելու նախապայմանը:

⁷ Չարենց 1963, 36:

⁸ Չարենց 1966, 270:

⁹ Նոր կտակարան 1981, Ավետարան ըստ Մատթեոսի, գլ. ԻԷ, 36-37:

¹⁰ Նոր կտակարան 1981, Ավետարան ըստ Հովհաննեսի, գլ. ԺԹ, 19, նույնը՝ Ըստ Մարկոսի, գլ. ԺԷ, 32, ըստ Ղուկասի, գլ. ԻԳ, 38:

Նոր ժամանակների բանաստեղծի կերպարը

1922 թ. հունիսի 14-ին «Երեքի» դեկլարացիան հրապարակելուց հետո Չարենցը հանդես է գալիս նոր ժամանակների բանաստեղծի կերպարով: Ահա այդ պատկերաքանդակը. «Արևի նարնջե ֆոնին // Տեսե՛լ եք // Դուք // Թեք // Երկաթե պրոֆի՛լը իմ... // Ի՞նչ է՝ // Սովո՞ր էիք // Կոպեկնոց դրամի վրա // Արքայի դեմք տեսնել... // Հիմա ե՛ս եմ՝ // «Որդի բանվորի» – // Իմ դեմքն է հիմա հուրհրան // Քանդակվել արևին լուսե»¹¹: Չարենցը ներքին հնարավորություններով լրացնում է նոր բանաստեղծի կերպարը.

Ինչ որ չի՛, չի՛ երագել
Դեռ ո՛չ մի պոետ-աստղաբիբ,
Ուզո՞ւմ եք՝ որպես գնդասեղ
Արև՛ը խրեմ փողկապիս:
Առնեմ որպես սինի
Երկինքը աստղերի խաղով–
Ու տանե՛մ այն հարսանիք,
Որպես միրգ՝ մի ճուֆ խաղող¹²:

Այս կերպարը ծնունդ տվեց «Պոեզոգություն» (1922), «Ռոմանս անսեր» (1922) ժողովածուներին և մի քանի պոեմների: Չարենցը իրականության առջև կանգնեց երկիր կառուցող բանաստեղծի նոր կերպարով: Նրա ամբողջ թափը հիմա վերածվում է կառուցողական գործունեության: Չարենցը ողջունում է գալիքը: Հանուն կյանքը վերագինող երկաթի ուժի «Շոգեգալուստը» հակադրում է Եսենինի «Քառասունքի»-ին: Ռուս բանաստեղծը բնությունն ավերող երկաթի աղետի ողբն էր անում, հայ բանաստեղծը երկաթով ուզում է իր հետամնաց երկիրը փրկել¹³: Միևնույն պահին Չարենցը բաց բանավեճ է վարում Արտաշես Տեր-Մարտիրոսյանի հետ՝ նկատի ունենալով նրա «Աշնուտ» ժողովածուն.

Հասկանո՞ւմ եք՝ հողմակոծ ու ժխոր
Օրերի գծերով երկաթե
Գնացքի նման մի դղորդ,
Մոտենում է Գալիքը թեժ:

<...>: Պիտի գա՛, պիտի գա՛, պիտի գա՛
Երկաթի հզո՛ր գնգոցով–
Դեպի մեր խողերը գորշաքար,
Դեպի մեր երկիրը քոսոտ:

Իսկ դո՞ւ, պոե՛տ Աշնուտի,
Քո գլուխը ինչո՞ւ ես կքել
Ու թողել ես, որ մուժը մթին
Մշուշե թե՛ սիրտդ, թե՛ քեզ¹⁴:

¹¹ Չարենց 1963, 14:

¹² Չարենց 1964, 26:

¹³ Տե՛ս Կարապետյան 1979, 193-200:

¹⁴ Չարենց 1964, 30-34:

Այսպես կգրեր միայն երկրի տնտեսական վերազինմամբ մտահոգված բանաստեղծը, որի համար պոեզիան դառնում է երկրին ծառայելու հնարավորություն. այս հայացքով քնարական ամեն մի զեղում նրա համար 1922-1924 թթ. դառնում է ավելորդ վարդաշուր:

«Էպիքական լուսաբաց» ժողովածուն

1930 թ. հունվարի սկզբին Երևանում լույս է տեսնում Չարենցի «Էպիքական լուսաբաց» ժողովածուն: Ունի հավելված՝ «Ներբող առ քննադատ №№. միևնույն ժամանակ էպիլոգ սույն ժողովածուի»: «Էպիքական լուսաբացը» վերահրատարակել է «Երկեր»-ում (1932), որտեղ սկզբից ավելացրել է 1930-ին Լենինգրադում գրած «Մուսայիս (Նախ՝ աղջիկ էիր դու մի հասարակ)» բանաստեղծությունը:

Գրքի «Էպիքական ֆրագմենտներ» բաժնում զետեղված են «Հատվածներ չգրված պոեմից», «Հոկտեմբեր 25-26 1917», իսկ «Չափածո նովելներ» բաժնում՝ «Homo sapiens», «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում», «Մեծ առօրյան», «Գանգրահեր տղան» երկերը:

«Չափածո նովելը»՝ որպես գրատեսակ, ազդակներ ունի այս տարիներին Չարենցին ոգեշնչած Պուշկինից. վերջինս դեպի չափածո խոսքի ազատ պատմողականություն տանելու ճանապարհին իր «Պղնձե հեծյալը» պոեմը բնորոշեց «Պետերբուրգյան պատմվածք»: Չարենցը նույն պատմողականության պահանջը վերածեց չափածո նովելի: Այնտեղ՝ «Պղնձե հեծյալ», այստեղ՝ «Չուգունե Մարդը»՝ այսպիսի հուշումով. «Նրա հանգով է, որ հյուսեցի // Ես էլ այս երգս...»: Ավելորդ չէ հիշեցնել՝ Չարենցի գրադարանի գրքերից 45-ը պուշկինյան գրականություն է՝ երկերը և նրա մասին:

Պատմականությունն այստեղ շերտեր ունի՝ առօրյա, մոտիկ անցյալ՝ որպես ինքնակենսագրություն կամ երկրի պատմություն և պատմական անցյալ:

Առօրյան, առօրեական կյանքն ու շրջակա միջավայրը պատմական հայեցակարգով դիտելու հնարավորություն են՝ այստեղ և՛ մեծ առօրյայից դուրս մնացած հաշվետարն է՝ վերածված մանր ու չնչին մարդու («Մեծ առօրյան»), և՛ գրական միջավայրն է՝ իր անառողջ և մանր բարքերով: «Ներբող առ քննադատ №№»-ը հասցեագրված է հենց այդ միջավայրին: Գրական քննարկումներից մեկի ժամանակ, երբ արտասանել են այն՝ «Օ, դո՛ւ, նայիրյան մարքսիզմի չստեր // Հագած ֆիլիստեր, // Օ, դո՛ւ, պատահմամբ սերտած մտքերի // Մի խղճուկ գերի...» և մեղադրել Չարենցին, նա տեղից ընդոստ բացականչել է. «Ընկեր Բ.[սպել] էդ քո՛ մասին է հենց ասված»¹⁵: Չարենցին շրջապատել էր կուսակցական վստահություն ձեռք բերած գրական թերուսների մի ոհմակ:

Մոտիկ անցյալը պատմականորեն մարմնավորված է ինքնակենսագրական պատումներում և հատկապես «Homo sapiens» չափածո նովելում: Պատմական անցյալի գեղարվեստական տարեգրության էջեր են «Անակնկալ հանդիպում

¹⁵ Նորենց 1961, 197:

Պետրոպավլովյան ամրոցում», «Հոկտեմբեր 25-26 1917» երկերը. առաջինում Միքայել Նալբանդյանի կերպարն է, երկրորդում հեղափոխության օրն է:

Պատմականության հիմքերը նաև ավանդույթի հետ են կապվում. Չարենցի համար Պուշկինից առաջ և հետո Դանտեն էր: Չմոռանանք՝ մեծ իտալացին իր «Մահամնա» պոեմում մեկ անգամ չէ, որ արժարժում է բանաստեղծական արվեստի հարցեր, ինչն «Էպիքական լուսաբացում» Չարենցի տարերքն էր: Որքան հարազատ են բառի դիմադրության Չարենցի տեսությանը Դանտեի այս տողերը. «...արվեստի գործն իր ձևով // Հղացվածից մերթ տարբեր է դուրս գալիս // Նյութի հետ հաշտ չընթանալու պատճառով»¹⁶: Չարենցի հանճարն այս գրքում բյուրեղացել և որոշակի ծրագրային ուղղվածություն է ստացել.

Էլ չի հոնդում սիրտս վայրենի,
Ինչպես դաշտերում նժույգ սանձարձակ.–
Գզվեց ինձ սիրով մի ձեռ հայրենի,
Եվ ես մի գիշեր իմաստուն դարձա:
<...> Ես չեմ երգելու այժմ շառաչուն
Գալիքի մասին, որ գալու է դեռ.
Իմ ներսում հիմա հուզվում են, աճում
Ու շարժվում ուրիշ խոհերի գնդեր:–
Ներկա՛ն է հիմա իմ դեմ աղմկում,
Ինչպես կրքերի ամեհի մի ծով.–
Եվ անցնում եմ ես քնարս բեկուն,
Այս հազարագույն օվկիանի միջով¹⁷:

Ի՛նչ են մեր մեծ դարի հանդեպ
Երգերը մեր թոթովախոս...
Մենք, որ մի նոր կյանք ենք կանգնել,
Չունենք երգեր հատու ու խոր:
Ինչ գրել ենք մինչև հիմա՝
Եղել է լոկ առաջաբան
Մի վիթխարի երգի համար,
Որ գալու է, բայց դեռ չկա¹⁸:

Պատմականություն և մոնումենտալ արվեստի պահանջ

Պատմականության շնորհիվ Չարենցը հասնում է մոնումենտալ արվեստի պահանջին:

Ըստ սոցիալիստական ռեալիզմի տեսաբանների սխեմատիկ պատկերացումների՝ մոնումենտալիզմը ծավալատարածական ընդգրկում է ենթադրում, ինչպես ես-երի միավորումով առաջացած մենք-ը: Անգամ Երվանդ Քոչարի պես արվեստագետը մոնումենտալիզմը պայմանավորեց օրվա մեքենայական և համայնական կյանքի պահանջով, փոքրիկ ես-ի ձուլումով համայնական մենք-ի մեջ:

¹⁶ Ալիգիերի 1969, 385, երգ Ա, տող 127-129:

¹⁷ Չարենց 1968, 18-19:

¹⁸ Չարենց 1968, 26-27:

Համայնականությունը նրա համար արդեն իսկ մեծության նախադրյալ էր¹⁹: Այս ծավալային մոնումենտալիզմն ազդեց գրական ժանրերի վրա. սովորական դարձան չափածո նովելը, չափածո պատմվածքը, չափածո վիպակը, չափածո վեպը: Նույնը արվեստի մյուս բնագավառներում՝ ճարտարապետություն, երաժշտություն, նկարչություն, քանդակագործություն, նաև քաղաքաշինություն, արդյունաբերական խոշորացող ձեռնարկություններ, անհատական տնտեսություններին փոխարինող կոլեկտիվ տնտեսություններ: Մեծ ու անծայրածիր երկրում ամեն ինչ պետք է մեծ լիներ՝ հեղափոխությունը՝ մեծ, առաջնորդը՝ մեծ, ծրագիրը՝ մեծ. մի միտում, որ, ի վերջո, հասնում է մեծագարության՝ գիգանտոմանիայի:

Հակառակ սոցիալիստական ռեալիզմի գռեհիկ տեսաբանների՝ մոնումենտալ արվեստը Չարենցն ընկալեց որպես վեհ ու հերոսական, կատարյալ ու մնայուն արվեստի պահանջ: Ըստ այդմ՝ մոնումենտալիզմը նրա համար այլ բացատրություն ուներ: Մոնումենտալ, այսինքն՝ զտված անկարևոր մանրուքներից, ժամանակի բնութագրական ցայտուն թանձր գծեր ու խտացումներ, նաև շարժունություն և արագություն՝ ընդդեմ մեռած անշարժի, նաև ժամանակի շունչը խտացնող անհատականություն, կենդանի մարդ՝ իր հոգեբանական բարդ ու հակասական ապրումներով: Մոնումենտալիզմը Չարենցն ընդունեց նաև վիպականության պահանջով՝ իր բառով՝ հենց որպես էպիքականություն: Ավելորդ չէ ավելացնել, որ նույն այդ վիպականության պահանջով Պաստեռնակը վերամշակեց նախկին բանաստեղծությունները, դրանք ամփոփեց «Էպիքական մոտիվներ» շարքի մեջ և զետեղեց «Պատմեշի վրա» գրքում (Լենինգրադ, 1929)²⁰:

Պատմականությունը տեղաշարժում է նաև արվեստի գեղագիտությունը, անգամ անփոփոխ թվացող այնպիսի մի բնագավառում, ինչպիսին տաղաչափությունն է: Չարենցն այս ժողովածուի որոշ գործերում, ապա և «Գիրք ճանապարհի»-ում սկսում է կիրառել տաղաչափական մի նոր համադրություն, որի ազդակները ևս Պուշկինից են, ավելի որոշակի՝ հենց նույն «Պղնձե հեծյալից». դա չափական խաղացկուն տատանումներով խոսակցական ազատ հնչերանգի ստեղծումն է: Հայոց և ռուսաց տաղաչափությունները տարբեր համակարգեր են, նույնական փոխանցումները բացառվում են, ուստի հարցն այստեղ շատ ավելի խորքային է՝ ընդգրկելով չկադապարված տունը, մոտավոր առձայնությային հանգը, տողը, կիսատողը, հատածը, դադարը և բարդ ոտքը՝ անդամը, իր ազատ տատանումներով 5-6 վանկի միջև: Չարենցի արածը տաղաչափական գյուտ էր, որի նախադեպ կարելի է համարել Շեքսպիրի՝ Մասեհյանի թարգմանությունները և ահա Պուշկինի ազատ յամբը:

Արվեստի գեղագիտությունը Չարենցը նորոգում է նաև բառապաշարի շերտերում և գրական ժանրերի համակարգում. ընդարձակում է գրաբար հնաբանությունների, քերականական ձևերի կիրառության ոլորտը և նորոգում այնպիսի

¹⁹ Քոչար 1928, 254:

²⁰ Пастернак 1929.

միջնադարյան ժանրեր, ինչպիսիք տաղի տարատեսակներն են՝ խորհուրդը, գովքը, թուղթը, ուղերձը:

«Գիրք ճանապարհի» ժողովածուն

1934 թ. հուլիսի վերջին Երևանում լույս է տեսնում «Գիրք ճանապարհի» ժողովածուի նոր տարբերակը: Չարենցը հանդես է գալիս երգի նոր տեսությամբ. «Չմոռանաք երբե՛ք, երբ հյուսելու լինեք ձեր երգը շառաչուն, // Որ երգը երկրի՛ց է աճում և ո՛չ թե ձայներից կամ բառերից», «...դարե՛րն են ձեզ հետևում.– // Թեև դարն է ծնում և երկիրն է տալիս երգին շունչ ու ոգի– // Բայց երգը երկրից ու դարից մի՛շտ երկար է տևում», «*խորհուրդ չի ընդունում ապագայի երգը,– // Եվ այս է իմ խորհուրդը յոթերորդ...»* («Յոթը խորհուրդ գալիքի երգասաններին»)²¹:

«Գիրք ճանապարհի» ասելով՝ Չարենցը նկատի ուներ պատմության հիշողությունը: Ըստ այդմ՝ հեղինակի ստեղծագործական տարիքը ոչ թե իր բնական տարիքն է, այլ մարդկության, եթե ոչ մարդկության, ապա այնքան, որքան իր ժողովրդի մտավոր հիշողությունն է՝ առասպելյալ Հայկից մինչև Սասնա ծռեր ու Նարեկացի, նրանցից մինչև Թումանյան ու Տերյան: Ահա իր անդրադարձը. «Աչքերս հառել եմ անցյալին՝ ապագայի նժույզը նստած»: Որպես հեղինակ, որպես հերոս՝ Չարենցն այստեղ հանդես է գալիս մտածողի, իմաստունի կերպարով:

Չարենցը ձգտում էր ամբողջին՝ մասը, դրվագը կամ պահը լիարժեք ներկայացնելու համար: «Գիրք ճանապարհի» վերնագիրը հենց դա է նշանակում: Առանց ամբողջի իմացության՝ մասը չի գտնում իր տեղը, չի բացահայտվում ձգողական դաշտի ամբողջական կշռելությամբ: Ամբողջը հայոց պատմությունն է՝ Հայկ Նահապետից մինչև Սարգսրապատ, Մյասնիկյան ու Խանջյան, որ այստեղ ներկայանում է կա՛մ որպես փիլիսոփայություն ամբողջի մասին («Պատմության քառուղիներով»), կա՛մ որպես ամբողջի առանձին դրվագ («Դեպի լյառը Մասիս», «Մահվան տեսիլ», «Ջրահապատ...», «Աքիլլե՛ս, թե՛ Պյերո»):

Ամբողջը նաև մարդկային կյանքն է՝ որպես տիեզերական համապարփակ ոգի, որ այստեղ և՛ խորհրդածություն է տիեզերական ոգու մասին («Մահվան տեսիլ» պոեմի «Մուտքը», առանձին երկեր), և՛ խոսք՝ անհատապես այդ ոգին մարմնավորողների (Նարեկացի, Թումանյան, Տերյան, Մեծարենց, Գյոթե, Հայնե, պատմական և քաղաքական դեմքեր):

Չարենցի գրական միջավայրում քաղաքական սխեման էր՝ իր միօրինակ նույնական դաջվածքներով, որ այլ բան չէր, քան մտքի սով, որն էլ գալիս է պրոլետգրողների՝ որպես ստեղծագործող անհատականության կաղապարվածությունից, որ նրանց անհատականության բացակայության նշան է: Չարենցը մտքերի, գաղափարների հարաճուն հորձանք էր, որ վերարտադրման կերպ ու ձև էր որոնում մե՛կ միջնադարյան խորհուրդների ու թղթերի տարատեսակներով,

²¹ Չարենց 1968, 397-398:

մե՛կ կշռույթի ու տաղաչափական ձևերի նոր համադրությամբ, մե՛կ լեզվական խորքային ու տարբեր շերտերի նոր միասնությամբ:

«Պատմության քառուղիներով» պոեմում առկա «Այս խորշակյալ, անդուռ Արարատյան դաշտում...» պատկերի սկիզբը 1923 թ. հոդվածներից մեկում է. «Հայաստանը դարձել էր անդուռ մի փակուղի, որը, դրսի անցուդարձին անհաղորդ, ապրում էր իր անձուկ, ողորմելի կյանքով»²²: Խոսքը նեղվածքի մասին է, որն ընդարձակելու ելք էր որոնում:

«Օ, չի եղել մեր գայլը պղնձյա...» հատվածի կապակցությամբ «մեր գայլի» «կերպարը» ժամանակին տվել է Առաքել Դավրիժեցին²³: Չարենցի պատկերած «նիհար, կողերը լերկ» գայլի նախահայրերն են սրանք, որ դեռ շարունակում են իրենց ոռնոցը պատմիչի գրքի էջերում և այնտեղից հասնում մինչև XX դար:

1930-ականներին Չարենցին մեղադրեցին ազգային նիհիլիզմի և գոեիկ սոցիոլոգիզմի մեջ՝ նկատի ունենալով հայ ժողովրդի անցած պատմական ուղուն, ազգային-ազատագրական շարժումներին և հասարակական մտքի առանձին ներկայացուցիչների տված այն գնահատականները, որոնք առկա են «Մահվան տեսիլ» և «Պատմության քառուղիներով» պոեմներում: Այդ Ի՞նչ է, Չարենցը չգիտե՞ր հայոց պատմությունը, ինչը՝ որպես ազգային հիշողության սկիզբ, ընթացք ու նախահիմք պահպանելու համար կյանքով հատուցեց: Չարենցի առջև ոչ թե բարոյական հաղթանակով տեղ-տեղ գունավորված պատմության մշուշն էր, ծործի վերածված դրոշակը, այլ իր տեսած 1915 թվականը, իր տեսած Կարինի ու Կարսի անկումը, իր տեսած հոշոտված Երկիր Նաիրին, Անդրֆեդերացիայի կազմում շահատակվող Խորհրդային Հայաստանը, որի համար էլ այդպես մղկտում էր: Կողերը լերկ մեր ծեր գայլի դիմաց հիմա ոչ թե Հոռմի պղնձյա գայլն էր, այլ թուրքական տափաստանային գորշ գայլը, որ հայոց պատմական հայրենիքից քջեց թեկուզև նիհար, թեկուզև կողերը լերկ, բայց մե՛ր գայլին... Ի՞նչ է, Չարենցը չգիտե՞ր իմաստությունը:

Բայց չի մոխրանում հիշատակը...

Հիշատակը արդյոք լույսերի՞ց է,

Լույսերի՞ց է արդյոք նա սերում, թե հուրերից անշեջ...-

Հիշատակը սերում է գործերից,- հիշատակը մշուշ է,

Որ բարձրանում է եփվող ջրերից, բայց մնում է ինքը - անմեռ²⁴:

«Սասունցի Դավիթ» պոեմի կապակցությամբ Կարապետ Մելիք-Օհանջանյանը հիշում է, որ «1932 թվին «եռանդագին ուսումնասիրում էր»: Դժգոհել է՝ «մեր վեպը լավ չի գրի առնված...»²⁵:

²² Չարենց 1967, 46:

²³ Տե՛ս Դավրիժեցի 1988, 81-82:

²⁴ Չարենց 1968, 387:

²⁵ Մելիք-Օհանջանյան 1961, 326:

Այս տարիներին է, որ Խանջյանը Չարենցին առաջարկում է «կազմակերպել «Սասնա ծռերի» հրատարակության գործը՝ լույս ընծայելով ծանոթ պատումները և գրի առնելով նորանոր պատումներ»²⁶։ Ինչը և անում է՝ ներգրավելով Մ. Աբեղյանին։

Շարունակենք Չարենց և Դանտե անդրադարձը։ Չարենցի «Մահվան տեսիլ» պոեմում հոգիների նույն հանդերձյալ աշխարհն է, ինչ Դանտեի «Աստվածային կատակերգության» մեջ։ Այնտեղ «Դժոխքի» ինը պարունակներն են, «Քավա-րանի» յոթ բոլորակները և «Դրախտի» երկնային ինը ոլորտները, այստեղ նա-վարկությունն է հայոց պատմության անդնդախոր գետով, որի ճանապարհին հանդիպում են անցած-գնացած դեմքեր։ Այնտեղ Դանտեի ուսուցիչ առաջնորդը Վերգիլիուսն է (Ք.ժ.ա. 70 - Ք.ժ. 19), այստեղ՝ ինքը՝ Դանտեն.

Ընկնում ենք քեզ հետ միասին մենք ճանապարհ երկար,
Եվ մեր առջև ահա իր հորձանքն է ձգում արնափրփուր մի գետ,
Որ բաժանում է դժնի անցյալից այս լուսավոր ներկան, –
Եվ մենք նստում ենք Մտածումի նավը, որ նավարկենք քեզ հետ։–

Գնում ենք ահավասիկ քեզ հետ Քերթության ու խոհի դժվար ճանապարհով
Դեպի ափը դեմի՝ ամեն՝ հույս ու հավատ թողնելով այս ափին,
Եվ Մտածումս ահա, որպես մշտնջենական ու կորովի Քարոն,
Նավարկում է դեպի անցյալը, դեպի Անցյալը դառն, դեպի ափը Մահվան ու Սարսափի²⁷։

Երևակայության աշխարհն է, որտեղ ամեն ինչ մարմնավորվում է տեսիլքի մեջ, և տեսիլքը դառնում է անդրաշխարհիկ իրականություն։ Դանտեի պոեմում կան ինչպես առասպելական, այնպես և պատմական հերոսներ, իսկ պատմական կերպարների հաջորդականությունը Չարենցի պոեմի հիմնաշերտն է։ Այնտեղ Դանտեն պատմում է նրանց երկրային կյանքի մասին, այստեղ, առանց անուն-ները տալու, Չարենցը պատմում-կերպավորում է անցյալի ազգային հեղինա-կությունների կերպարները և խորհրդածում նրանց հետ։ Չարենցի կերպավոր-ման ուրվագծերն այնքան դիպուկ են, որ անուններն անմիջապես կոահվում են։

«Մահվան տեսիլ» պոեմի կապակցությամբ ուշագրավ է Մխիթարյան միա-բան հայր Ներսես Տեր-Ներսիսյանի «Տանթե և Չարենց» հոդվածը, որի մեջ «իտալացի մեծ վարպետի դիմաց» դնում է «Արարատյան աշխարհի մե՛ր բա-նաստեղծը, որ մեծ է նմանապես իր տեսակին մեջ, ու Տանթեի աշակերտներուն մեջեն՝ ամենեն հարազատը»²⁸։

Դանտեն՝ որպես Ուսուցիչ, դիմում էր Վերգիլիուսին. «Դու ես վարպետս ու հեղինակն իմ երեց, // Դու ես լոկ նա, որից ես էլ ստացա // Գողտրիկ ոճը, որը պատիվ ինձ բերեց»²⁹։ Իր հերթին Չարենցը դիմում է Դանտեին.

Ինչպես Վիրգիլը լուսավոր, որ ցույց տվեց մի օր քեզ երկնային դժտողը։–
Ահավասիկ գնում ենք քեզ հետ միասին, աշակերտ ու վարպետ,
Քերթության թոթովախոս մանուկ և այր բազմավաստակ,

²⁶ Մելիք-Օհանջանյան 1961, 327։

²⁷ Չարենց 1968, 225-226։

²⁸ Բազմավեպ 1965, թիվ 11-12, 365։

²⁹ Ալիգիերի 1969, 10, երգ Ա, 85-87 տողեր։

Մեր խոհերով, մեր կյանքով, մեր երգերով անհունորեն տարբեր,
Բայց և հարազատ ու արյունակից, իբրև միևնույն մարդկության
երկու տարբեր հասակ³⁰:

««Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դպրության» պոեմի մասին» ուսումնասիրության մեջ Խորեն Սարգսյանը պոեմը բաժանում է երեք մասի և շերտ առ շերտ բացում պոեմի պատմականությունը: Ըստ նրա՝ «Չարենցն սկսում է մեր օրերից». սա համարում է պոեմի «առաջին հորձանքը», որն ընդգրկում է 11 ութնյակ (Ա.-ԺԱ.): Երկրորդ հորձանքն ընդգրկում է 12 ութնյակ (ԺԲ.-ԻԳ.), որտեղ հայացք է ուղղում միջնադարյան տաղերգությանը, երրորդ հորձանքը՝ 13 ութնյակ է (ԻԴ.-ԼԶ.)՝ միջնադարի աշխարհիկ պոեզիայի բարձր գնահատականով³¹:

Հակոբ Կոջոյանը գիրքը ձևավորել է Ք. ծ. ա. IX դարի Ասորեստանի արքա Սալմանասար Երկրորդի կոթող-հիշատակարանի ոճով, որ տարածքային ընդհանրությամբ պիտի արտացոլի նաև հայկական ոճը. գծի ու շարժման գեղագիտություն է, հարկերով բաժանված պատկեր-գործողությունների շարք՝ ձևերի նույնական, բազմադարս դասավորությամբ ու տակի գրություններով³²:

Պատմության ծաղրը

1935 թ. փետրվարի 2-ին, 25-ին, մարտի 3-ին, 22-ին, 23-ին, ապրիլի 23-ին ՀԽՍՀ ՆԳԿ վարչությունում Չարենցը հարցաքննվել է որպես ահաբեկիչ և ժխտել իր դեմ հարուցված զրպարտչական մեղադրանքները:

Որպես ահաբեկիչ Չարենցին մեղադրելու կապակցությամբ հարցաքննել են կուսիրատի վարիչ Նշան Մակինցին: Մակինցն ասում է, որ Չարենցին ճանաչում է 1927 թվականից, պետիրատում համատեղ աշխատանքից, և նրան համարում է «արատավոր մարդ»³³: Ըստ նրա՝ 1930 կամ 1931 թվականին, երբ Չարենցն ապրում էր հյուրանոցում, գիշերով զանգահարել է նրան տուն և խնդրել այցելել իրեն: Եղել է հուզախոյվ վիճակում: Սեղանին եղել է հանգուցյալ կնոջ գիպսե դիմակն ու գիպսե ձեռքը. «Չարենցն ասում էր, որ իր համար ծանր է ապրելը և ուզում է վերջ տալ կյանքին»³⁴: Մակինցը Չարենցին տարել է իր տուն, երկու օր պահել, որ հանգստանա: Երրորդ օրը նորից անհանգիստ էր և բորբոքված: Մակինցի տանը դարակից աննկատ վերցրել է ատրճանակը և փորձել ինքնասպանություն գործել: Գիշերվա ժամը 2-ին ատրճանակը լիցքավորել է, որ կրակի իր վրա, բայց Մակինցն ու կինը մի կերպ խլել են ձեռքից: Դրանից հետո մոլեգնած վիճակում գնացել է հյուրանոց: Որոշ ժամանակ անց այնտեղից զանգահարել է կուսակցական Ա. Բզնունին, թե Չարենցը կտրել է զարկերակը և կանչում է իրեն: Մակինցը կանչել է պրոֆեսոր Քեչեկին, որը կապել է Չարենցի վերքը:

³⁰ Չարենց 1968, 225:

³¹ Եղիշե Չարենցի ստեղծագործությունը 1957, 258-267:

³² Տե՛ս Գասպարյան 1996, 410-419:

³³ Չարենց 1996, 590-594:

³⁴ Չարենց 1996, 590-594:

Քաղաքական տեսակետից Մակինցը նրա մեջ տեսնում է «նացիոնալիստական տարրերի առկայություն», «նացիոնալիստական տրամադրություններ»³⁵, քանի որ Չարենցը շարունակ պնդել է, թե Վրաստանից անկախանալու նպատակով անհրաժեշտ է կառուցել Երևան-Ադստաֆա երկաթուղին: Համատեղ Մոսկվա մեկնելու ճանապարհին ասել է. «...խոշոր հայ ղեկավարների՝ հանգուցյալ Մյասնիկյանի, Լուկաշինի փոխարեն եկել են Հայկազ Կոստանյանի տեսակի մարդիկ, որոնց նշանակում են վերևից»³⁶: Մակինցը նացիոնալիզմ է նկատել նաև նրա ստեղծագործության մեջ:

1935 թ. փետրվարի 10-11-ի գիշերը՝ 12-12.30-ի սահմաններում, երեք անգամ զանգահարել է Մակինցին, կանչել իր մոտ, դժգոհել Սահակ Տեր-Գաբրիելյանին ժողովմխորիի նախագահի պաշտոնից ազատելու կապակցությամբ, ասել. «Ինչպե՞ս պետք է լինի կաուչուկի, երկաթգծի և ընդհանրապես շինարարության հետ: Ամեն ինչ կկորչի գրողի ծոցը»³⁷: Նախատել է Մակինցին. Բասարգեչարի շրջկոմի քարտուղար աշխատած ժամանակ՝ «...դու հանուն քո կարիերայի հայ գյուղացուց հավաքել ես ցորենի վերջին կիլոգրամը: <...> մենք՝ հայերս, որպես ազգ, խեղճ և անօգնական մարդիկ ենք, չունենք մեր ղեկավարները»: Իբր ասել է՝ «տեղորի դիմենք և սպանենք Արիսյանին, որպեսզի արթնացնենք մասսային, ժողովրդին: <...>: Վերջապես, խորհրդային ճանապարհը մի՞թե հայ ազգի զարգացման միակ հնարավորությունն է»³⁸:

Հաջորդ օրը՝ 11.11.1935-ին, Մակինցը այս մասին մանրամասն զեկուցել է Կենտկոմում, անգամ ասել. «...անհրաժեշտ է հսկողություն սահմանել Չարենցի վրա, հետևել նրա մտերիմ ընկերներին, պարզել, թե ով է նրա մոտ լինում» և խնդրել է այդ մասին տեղեկացնել ՆԳԺԿ-ին: Որպես Չարենցի գաղափարակից ընկերներ՝ Մակինցը տալիս է Ներսիկ Ստեփանյանի, Բակունցի, Ավազանի անունները³⁹:

1935 թ. փետրվար 25-ին Չարենցը, որպես ահաբեկիչ, հարցաքննվում է:

«Հարց. Մակինցի ցուցմունքներից պարզ է դառնում, որ Դուք մտադիր եք եղել կոնկրետ տեղորի ենթարկել ընկ. Արիսյանին:

Պատասխան. Հնարավոր է, որ զրույցի ժամանակ կարող էի թույլ տալ այնպիսի արտահայտություն, թե՝ «տաս սատկացնես»: Շարունակում է, որ նման արտահայտություն կարող էր թույլ տալ Արիսյանի, Վշտունու, Դաբաղյանի հասցեին և մանրամասնում. «Որովհետև նրանք ամեն կերպ ջանում են վարկաբեկել ինձ ու իմ գրական բարեկամներին: Կոնկրետ Արիսյանը ամբողջ երեք ամիս ինձ տանջամահ արեց իմ վերջին «Գիրք ճանապարհի» ժողովածուի հրատարակության ժամանակ, չնայած որ և՛ ընկ. Խանջանը, և՛ ընկ. Տեր-Գաբրիելյանը կողմ էին գրքի տպագրությանը, բայց Արիսյանը համառորեն արգելում էր գիրքը և

³⁵ Չարենց 1996, 591:

³⁶ Չարենց 1996, 592:

³⁷ Չարենց 1996, 593:

³⁸ Չարենց 1996, 593:

³⁹ Չարենց 1996, 594:

ամեն կերպ քամահրում էր ինձ: <...> նրա հետ վեճի մեջ եմ և այն կարծիքի եմ, որ նա մեր գրական գործում վնասում է մեզ:

«Հարց. Դուք Ձեզ մեղավոր ճանաչո՞ւմ եք տեռորիստական տրամադրություններ արտահայտելու համար:

Պատասխան. Մակինցիի հետ ունեցած կիսալուրջ բորբոքված խոսակցությունը ես չեմ համարում տեռորիստական մտադրության արտահայտություն...»⁴⁰:

«Homo Sovietikus»-ը մարմնավորվում է տարբեր կերպարներով՝ որպես կուսակցական գործիչ, որպես ՆԳԺԿ-ի քննիչ, որպես խորհրդային պաշտոնյա, որպես սխեմատիկ գրող, որպես գրական բթամիտ քննադատ. դրանց թիվը շատ էր. ահա առանձին կերպարներ՝ Գուրգեն Վանանդեցի, որը «Դաշնակցական ֆաշիզմը հին արժեքների ժառանգի դերում» հողվածում բարբարոսաբար տրորում է ազգային գրական արժեքները. «միստիք, հիվանդոտ Ահարոնյանի վիպագրություն, անասնային բնագոյը սրբագործող Շանթի դրամատուրգիա, ցեղապաշտ անտաղանդ գրչակաների մի լեգեոն, – Կոստան Զարյան, Արմենուիի Տիգրանյան և մյուսներ...»⁴¹: Նույն կերպ Չարենցը ծաղրումանակի է ենթարկել Նաիրի Զարյանին, Գուրգեն Հայկունուն, Ազատ Վշտունուն, Հարություն Մկրտչյանին (Քսպե), Ալազանին, Լևոն Արիսյանին, Սերիկ Դավթյանին և պետական-կուսակցական ծառայողների այլևայլ ներկայացուցիչների: Նրանց դիմանկարները Չարենցի էպիգրամներում են. ահա, օրինակ, Լևոն Արիսյանին նվիրվածները՝ «Լ.Ա.», «Եթե հասկանար գեթ ինքը Ցեկան», «Որտեղի՞ց եկավ և ո՞նց ընկավ», «Մեծա՛ցել է նա Վանում», ««Նրա» կնոջը», ««Հերոս» Լևոնին»⁴²:

Այս լարված իրադրության մեջ 1935 թ. փետրվարին պետհրատը մերժում է Չարենցի երկերի նոր ժողովածուի տպագրությունը՝ «պատճառաբանելով թղթի պակասությունն ու հերթը»⁴³: Իսկ 1935 թ. մարտի 8-ին Չարենցը հեռացվում է պետհրատում զբաղեցրած պաշտոնից:

Նույն օրը «Հայտարարություն» վերնագրված գրությամբ դիմում է Հայաստանի խորհրդային գրողների միության վարչություն. «Հայտնում եմ, որ այսօրվանից ես դուրս եմ գալիս Գրողների կորպորացիայից՝ ցանկություն ունենալով իմ ընդունակությունները (եթե այդպիսիք կան) կիրառել խորհրդային արվեստի այլ ասպարեզներում՝ կինո, թատրոն, օպերետ, ռեկլամ և այլն: Եթե այս ասպարեզներում ևս ես չկարողացա ապահովել իմ ապրուստի միջոցները, մնում է մտնել որևէ գործարան կամ զբաղվել որևէ կուստար արդյունաբերությամբ:

Խնդրում եմ դիմումս ընդունել առանց հետին մտքերի, չտալ նրան քաղաքական բովանդակություն: Ես չեմ այն հիմարը, որը կարող է բողոքել օբյեկտիվ հնարավորությունների դեմ: Ինչպես երևում է՝ փոքր ժողովրդի գրողը չի կարող

⁴⁰ Չարենց 1996, 343-347:

⁴¹ Գրական թերթ 1935, թիվ 4, 20 փետրվար:

⁴² Տե՛ս Չարենց 1996, 151-156:

⁴³ Իսահակյան 1997, 297:

ապրել միմիայն գրական աշխարանքով: Քսան և հինգ տարի գրականությամբ զբաղվելուց հետո, ահավասիկ տեսնում եմ, որ չեմ կարող ապահովել միջին կուլտուրական կենցաղ՝ ծառայելով գրականությանը: Երեք տարի է սպառվել է իմ երկերի ժողովածուն, ամեն կողմից պահանջում են այն, – բայց Պետհրատը մերժում է տպագրել նոր ժողովածու՝ պատճառաբանելով *թղթի և հերթի բացակայությամբ*: Եվ ես *ինքս* գտնում եմ, որ Պետհրատը իրավացի է: Ուրեմն ի՞նչ անել: Քսան և հինգ տարի ստեղծագործելուց հետո ապրել միայն թարգմանական կամ խմբագրական աշխարանքով: Համաձայն եմ: Բայց... ցավն այն է, որ նույնիսկ այս տիպի աշխատանքը մեզանում կարող է դիտվել իբրև բարձր բարիք, որ պետք է բաշխվի բոլոր գրողների վրա, և ամեն մեկին կարող է հասնել սահմանափակ քանակությամբ աշխատանք... Ես ամենից քիչ հավակնություն ունեմ բողոքելու այս ամենի դեմ, – փոքրիկ իրականության մեջ չի կարելի ունենալ «մեծ» պրետենզիաներ <...>: Վերջացնելով, խնդրում եմ կրկին՝ չտալ դիմումիս քաղաքական իմաստ և այսօրվանից ջնջել իմ անունը գրողների ցանկից: Թերևս ես կարողանամ ավելի օգտակար լինել խորհրդային կուլտուրայի այլ ասպարեզներում և, միևնույն ժամանակ, ստիպված չլինեմ զբաղվել գործի և հասույթի մուրացկանությամբ»⁴⁴:

Չարենցին ՀԳՄ շարքերից հեռացնելու կապակցությամբ տեղի է ունենում երկու նիստ. մարտի 11-ին՝ ՀԳՄ վարչության կուսակցական խմբի, մարտի 13-ին՝ բանաստեղծի ծննդյան օրը, ՀԳՄ վարչության: Մասնակցել են՝ Տեր-Սիմոնյան, Բակունց, Ջարյան, Վշտունի, Նորենց, Դաբաղյան, Ալազան, Մահարի, Ջանան, Դեմիրճյան, Ջնդի, Էֆենդիև, Սիրաս, Ջորյան, Կենտկոմի կուլտպրոպից՝ Հովիկ Մելիքյան:

Առաջին նիստի արձանագրության որոշումից. «1) Չարենցի վերոհիշյալ դիմումը հանդիսանում է ըստ էության քաղաքական մի փաստաթուղթ, որն արտահայտում է մեր դասակարգային թշնամու պրովոկացիոն, զրպարտիչ դիրքը հանդեպ խորհրդային իշխանության: Չարենցն իր այդ դիմումով ժխտում է «փոքր ազգությունների» գրականության ու կուլտուրայի զարգացումը և անվանարկում է այն:

2) Կուսխմբակն արձանագրում է, որ այս դիմումով Չարենցն ավելի խորացնում է իր կողմից մի շարք առիթներով արտահայտած ռեակցիոն նացիոնալիստական, ինչպես և հակահասարակական տեսակետները <...>:

3) Կուսխմբակը խստիվ դատապարտում է Չարենցի ըստ էության հակախորհրդային, հակահասարակական վերջին հայտարարությունը և գտնում է անհրաժեշտ նրան հեռացնել Հայաստանի խորհրդային գրողների միության վարչությունից և միությունից»⁴⁵:

Եզրակացություններ

Եղիշե Չարենցի ստեղծագործության մեջ պատմականությունը պայմանավորված էր իր ժամանակով, որը լի էր պամաքաղաքական իրադարձություններ-

⁴⁴ ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 1, թ. 12-12 հալ.:

⁴⁵ ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 3, թ. 5-6, ֆ. 122, ց. 2ա, գ. 19, թ. 100-102:

րով: Նա այդ իրադարձությունների հորձանուտի մեջ էր ոչ թե որպես կրավորական դիտող, այլ գործուն մասնակից: Չարենցը իր ժամանակի հերոսն էր՝ որպես գործող անձ և ամեն ինչի մեջ տեսնում էր ոչ միայն պատմական ներկան, այլև պատմական անցյալն ու ապագան:

Գրականություն

- Ալազան Վ. 1990, «Տառապանքի ուղիներով», Երևան, «Խորհրդային գրող», 240 էջ:
- Ալիգիերի Դ. 1969, Աստվածային կատակերգություն. Դրախտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., երգ Ա, տող 127-129, Արբուն Տայանի վերանայված թարգմանությամբ, 808 էջ:
- Բազմավեպ 1965, Վենետիկ, թիվ 11-12, էջ 365:
- Գասպարյան Դ. 1996, «Գիրք ճանապարհի»-ի գեղարվեստական ձևավորումը, «Եղիշե Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը», Երևան, ԵՊՀ հրատ., 676 էջ:
- Գրական թերթ 1935, Երևան, թիվ 4, 20 փետրվար:
- Գրական թերթ 1935, Երևան, թիվ 11, 20 մայիս:
- Գրական թերթ 1936, Երևան, թիվ 1, 10 հունվար:
- Գրական թերթ 1997, Երևան, 1 ապրիլ:
- Գրականության և արվեստի թանգարան, Չարենցի ֆոնդ, 163:
- Դավրիժեցի Ա. 1988, «Պատմություն», Երևան, «Սովետական գրող», 592 էջ:
- Եղիշե Չարենցի ստեղծագործությունը 1957, Հոգվածների ժողովածու, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 358 էջ:
- Իսահակյան Վ. 1997, Չարենցի հետ Երևանում, «Չարենցի հետ: Հուշեր», Երևան, 424 էջ:
- Կարապետյան Հ. 1979, «Մի թաքուն» բանավեճի մասին, «Չարենցյան ընթերցումներ», գիրք IV, Երևան, ԵՊՀ հրատ., 360 էջ:
- ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 1, թ. 12-12 հակ.:
- ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 10, թ. 92:
- ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 3, թ. 5-6, մեքենագիր, ֆ. 122, ց. 2ա, գ. 19, թ. 100-102:
- Հասրաթյան Մ. 1997, Եղիշե Չարենց, «Չարենցի հետ: Հուշեր», Երևան, «Նաիրի», 424 էջ:
- Մելիք-Օհանջանյան Կ. 1961, Մի թերթիկ իմ հուշերից, «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին», Երևան, «Հայաստան», 396 էջ:
- Նորենց Վ. 1961, Հավերժ կենդանի դեմք, «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին», Երևան, «Հայաստան», 396 էջ:
- Նոր կտակարան 1981, Ս. Էջմիածին, Մայր աթոռ, Ավետարան ըստ Մատթեոսի, գլ. ԻԷ, 36-37, 712 էջ: Ավետարան ըստ Հովհաննեսի, գլ. ԺԹ, 19, նույնը՝ Ըստ Մարկոսի, գլ. ԺԷ, 32, ըստ Ղուկասի, գլ. ԻԳ, 38:
- Չարենց Ե. 1917, Գիրք մնացորդաց, Երևան, «Տիգրան Մեծ», 486 էջ:
- Չարենց Ե. 1963, Երկերի ժողովածու, հ. II, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 400 էջ:
- Չարենց Ե. 1964, Երկերի ժողովածու, հ. III, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 376 էջ:
- Չարենց Ե. 1966, Երկերի ժողովածու, հ. V, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 650 էջ:
- Չարենց Ե. 1968, Երկերի ժողովածու, հ. IV, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 626 էջ:
- Չարենց Ե. 1983, Անտիպ և չհավաքված երկեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 528 էջ:
- Չարենց Ե. 1996, Նորահայտ էջեր, Երևան, ԵՊՀ հրատ., 636 էջ:
- Վրացյան Ս. 1982, Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, «Ալիք», 680 էջ:
- Տիխոնով Ն. 1961, Հեղափոխական փոթորիկի բանաստեղծը, Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, Երևան, «Հայաստան», 396 էջ:
- Քոչար Ե. 1928, «Մոնումենտալ պեյզաժ», «Հունահայ տարեգիրք», Բ տարի, Աթենք, 320 էջ:
- Антонов-Овсеенко Антон 1999, «Берия», Москва, «АСТ», 480 с.
- Медведев Р. 1990, О Сталине и сталинизме, Москва, «Прогресс», 484 с.

XXII съезд Коммунистической партии Советского союза 1962, Стенографический отчет, т. 2, Москва, 608 с.

Пастернак Б.Л. 1929, Поверх барьеров: стихи разных лет, М.-Л., «Госиздат», 152 с.

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ (Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակի առթիվ)

Դավիթ Գասպարյան

Ամփոփում

Պատմականությունը Չարենցի ստեղծագործության հիմքն է: Դա պայմանավորված է իրեն որպես գրող պատմության մաս, պատմության կերտող ուժ տեսնելու հատկությամբ, որն ի վերջո հասավ իր օրերի պատմիչը լինելու գիտակցության: Չարենցը գեղարվեստի լեզվով կերտում էր իր օրերի պատմությունը, որի վկայությունը նրա բոլոր գործերն են՝ սկսած 1915-1920 թթ. գործերից մինչև կյանքի վերջում գրած անտիպ էջերը: Ընդգրկում է 1910-1930-ական թթ. բարդ ու հարուստ ժամանակը, երբ գրականությունը ծուլված էր պատմությանը:

Պատմականությունը Չարենցի համար պայմանավորված էր պատմական իրադարձություններով, պատմական դեմքերով, պատմական գործերով, պատմությունը շարժող գաղափարներով: Այս տեսադաշտում հայոց պատմությունն է՝ ցեղասպանություն, Հոկտեմբերյան հեղափոխություն, հայոց պետականության վերականգնում, Առաջին Հանրապետություն, Կարսի անկում, Հայաստանի խորհրդայնացում, երկրի կառուցում, նոր մարդիկ, նոր խնդիրներ...

Այս ճանապարհին Չարենցը պատկերեց ոչ միայն պատմական դեմքերի՝ խմբապետ Շավարշ, Լիպարիտ Մխչյան, Լենին, Մյասնիկյան, Խանջյան և ուրիշներ, այլև հայտնաբերեց Homo Sapiens-ին փոխարինած Homo Sovietikus-ին: Չարենցը տեսավ խորհրդային քաղաքական այն տեղաշարժերը, որոնք Homo Sovietikus-ի գործունեությամբ հասցրին 1937 թվականի բռնաճնշումներին, որոնց զոհ գնաց նաև ինքը:

Պատմական այս շրջանի գեղարվեստական վավերացումներ են Չարենցի անխտիր բոլոր գործերը՝ սկսած «Երկիր Նայիրի» վեպից մինչև «Էպիքական լուսաբաց», «Գիրք ճանապարհի» ժողովածուները, հետագա տարիների անտիպ ժառանգությունը:

Բանալի բառեր՝ Եղիշե Չարենց, պատմական իրադարձություններ, պատմական դեմքեր, պատմության գեղարվեստական մարմնավորում, պատմության հերոս, «Էպիքական լուսաբաց», «Գիրք ճանապարհի»:

ПРЕДПОСЫЛКИ ИСТОРИЧНОСТИ ПРОИЗВЕДЕНИЙ ЕГИШЕ ЧАРЕНЦА (К 125-летию со дня рождения Егише Чаренца)

Давид Гаспарян

Резюме

История – основа творчества Чаренца. Как писатель, он осознал себя частью истории. Чаренц описывал исторические события языком искусства, о чем свидетельствуют все его произведения.

Первая мировая война, геноцид, Октябрьская революция, восстановление армянской государственности, Первая Республика, падение Карса, советизация

Армении, строительство страны, новые люди, новые проблемы – вот неполный перечень исторических событий и реалий, нашедших отражение в его многогранном творчестве.

В своей поэзии он обращался ко многим историческим личностям, таким как Хмбапет Шаварш, Липарит Мхчян, Ленин, Мясникян, Ханджян и другие. Он создал образ Homo Sovieticus-а, пришедшего на смену Homo Sapiens. Чаренц был свидетелем советских политических катаклизмов, приведших к репрессиям 1937 года, жертвой которых стал сам.

Художественным подтверждением этого исторического периода являются все произведения Чаренца, начиная с романа «Страна Наири» и кончая сборниками «Эпический рассвет» и «Книга пути». Этот исторический этап нашел отражение и в его неизданном литературном наследии.

Ключевые слова – Егише Чаренц, исторические события, исторические личности, художественное воплощение истории, герой истории, «Эпический рассвет», «Книга пути», поэма.

PRECONDITIONS OF HISTORICITY IN YEGHISHE CHARENTS' WORKS (On the Occasion of the 125th Anniversary of Yeghishe Charents)

David Gasparian

Abstract

History is the basis of Charents's work. This is due to his ability to see himself as a part of history as a writer, a force that created history, which eventually came to realize the historian of his day. Charents used to write the history of his days in the language of art, which is evidenced by all his works, starting with 1915-1920 from works to atypical pages written at the end of life. It covers 1910-1930s, a difficult however rich time when literature was assimilated into history.

For Charents, history was conditioned by historical events, historical figures, historical works, ideas that move history. In this field of view is the Armenian history: Genocide, October Revolution, restoration of the Armenian statehood, the First Republic, the fall of Kars, the sovietization of Armenia, the building of the country, new people, new problems...

In this way, Charents not only portrayed historical figures, such as group leaders Shavarsh, Liparit Mkhchyan, Lenin, Myasnikyan, Khanjyan and others, but also discovered Homo Sovieticus, which replaced Homo Sapiens. Charents saw the Soviet political upheavals that led to the repressions of 1937 through the activities of Homo Sovieticus, of which he himself fell victim.

Artistic confirmations of this historical period are all the works of Charents, from the novel "Yerkir Nayiri" to the collections "Epic Dawn" = "Epic Light" and "Book of the Road" = "Book of Roads", the atypical heritage of the following years.

Key words – Yeghishe Charents, Literature of 1910-1930s, historical events, historical figures, artistic embodiment of history, hero of history, "Epic Dawn", "Book of the Road", poem, collection, interrogation, accusation.

МАРКИРОВАНИЕ ИНАКОВОСТИ КАК ИНСТРУМЕНТ РЕЛИГИОЗНО-ЭТНИЧЕСКОЙ СЕГРЕГАЦИИ (ОСМАНСКАЯ ИМПЕРИЯ XVI–XVIII ВВ. ГЛАЗАМИ ЕВРОПЕЙЦЕВ)

Гоар Карагезян

Кандидат филологических наук

Старший научный сотрудник Института литературы им. М. Абеяна НАН РА

РА, Ереван, ул. Григора Лусаворича 15

Эл. адрес: gkaragyozyan@gmail.com

Статья представлена 21.12.2021, рецензирована 24.12.2021, принята к публикации 05.07.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.2-154

Вступление

Реляции западноевропейских путешественников представляют значительный интерес, поскольку заключают в себе богатейший материал по посещенным ими странам и их народам. Цели, преследуемые путешественниками, были различными. Наряду с искателями приключений на Восток потянулись дипломаты и миссионеры. Особое место стали занимать путешествия, принимаемые европейцами с торговыми целями. Зачастую эти коммерческие поездки носили не только торгово-экономический, но и научно-образовательный характер, обретали характер «путешествий за знаниями». Стали предприниматься и путешествия с чисто научной целью, называемые ныне «научным туризмом». В статье рассматриваются записки европейских путешественников XVI–XVIII вв., совершивших путешествия на Восток – в частности, в земли, подвластные Османской империи. Мир, в который им предстояло войти, был четко сегментирован по социальному, пространственному, религиозному и этническому признакам. Города были разделены на греческие, армянские, еврейские, мусульманские и прочие кварталы; жить полагалось только на определенной территории; доступ иноверцев к государственной службе был закрыт, и ряд профессий были предусмотрены лишь для представителей одной какой-то нации. Что касается одежды, то и она была четко регламентирована: подданные Оттоманской Порты в зависимости от конфессиональной и этнической принадлежности в качестве идентификационных знаков должны были носить одежду, призванную маркировать иноверцев. Эти «знаки инаковости» (signs of otherness – понятие, которым оперировала Рут Меллинкофф) использовались в Османской империи как инструмент идентификации, сегрегации и стигматизации иноверцев и чужеродцев.

Идентификаторы этноконфессиональной принадлежности в Османской империи

Переходя рубеж, разделяющий христианский мир от нехристианского, путешественник-европеец становился странником в чуждом, непредсказуемом мире – иноверцем, гяуром. Гийом Рубрук, пересекая границу христианских земель в 50-ых годах XIII века, писал: «Итак, когда мы вступили в среду этих варваров, мне показалось, что я вступаю в другой мир»¹. Из своего «положительного» пространства европейский путешественник попадал в неизвестный, чужеродный, настораживающий мир. Перемещение европейца по неизведанному нехристианскому миру было чревато опасностями, ибо это был мир противостоящих христианству иноверцев, а, следовательно, с точки зрения европейца, мир беззакония, несправедливости, обмана и ловушек. Как заметил Ю.А. Лотман, «движение в географическом пространстве становится перемещением по вертикальной шкале религиозно-нравственных ценностей»².

Путешественники, осознавая трудности, с которыми им предстоит столкнуться на Востоке, отправлялись в путешествие достаточно подготовленными. Нужно было быть в курсе политической, правовой, экономической ситуации, знать климатические особенности страны, этноконфессиональный состав населения, иметь представление о нравах, обычаях, быте народа, маршруте, состоянии дорог и конечно об опасностях, которые могут их подстеречь в чужеродном пространстве. Изучая труды посетивших Восток своих предшественников, они пытались выработать максимально приближенную к миропорядку мусульманских стран модель поведения. Подобное подстраивание и приноровление было необходимо для обеспечения собственной безопасности. Следовательно, путешественникам нужно было заведомо понять, как вписаться в регламентированный уклад, чего следует остерегаться, дабы не навлечь на себя гнев и подозрение, и как себя вести, чтобы не оскорбить чувств иноверцев. Последние питали далеко не самые теплые чувства к пришельцам, не исповедующим ислам, особенно к христианам. Об этом имелись многочисленные задокументированные свидетельства путешественников. Так, автор путевых записок «Путешествие в Левант» – французский путешественник Жан Тевено (1633-1667) пишет, что, если «при выходе утром из дома набожным туркам первым повстречается христианин или еврей, они возвращаются в свое жилище со словами «да убережет нас бог от сатаны». Над франками же они глумятся как могут, называя их безхвостыми обезьяна-

¹ Путешествие в восточные страны Плано Карпина и Рубрука 1957, 103.

² Лотман 1965, 210.

ми (singes, qui n'ont point de queue), в основном из-за одежды, которая их сильно шокирует³. Французский путешественник, ученый-ориенталист Константин Франсуа Волней (1757-1820), предпринявший в 1782 году многолетнее путешествие по Османской империи, Сирии, Египту, повествует о сохранив-



шемся обычае у мусульман, согласно которому, если «неверный» съел из их блюда или выпил из их сосуда, то их разбивают⁴. Французский путешественник Франсуа де Ла Булле-Ле Гуз (1623-1668/1669 гг.), объездивший многие страны и гионы Востока и запечатлевший свои наблюдения и впечатления в ценном, насыщенном полезной для путешественников информацией по пройденным странам труде «Путешествие и наблюдения господина де Ла Буле-Ле Гуза», о жителях Тебриза пишет, что они последователи секты Али⁵ – тельные враги оттоманов (османов) (de la Secte de Haly ennemis mortels des Ottomans). Де Ла Булле-Ле Гузу пришлось сменить турецкую одежду на персидскую, поскольку детвора бегала за ним, обзывая неверным и османом – рогоносцем (cornard Ottoman)⁶. Путешественник пишет, что ему и его спутникам, из-за страха быть принятыми в Эрзеруме за шпионов, пришлось одеться на турецкий манер⁷. На территории Османской империи он не только облачился в турецкую одежду, но и сменил свое имя Франческо на Ибрагим Бек, поскольку уроженцы Востока, для которых «имя Франческо было трудно выговариваемым, называли его Франком, т.е. европейцем – словом, ругательным среди мусульман»⁸.

Таким образом, турецкая одежда в границах Османской империи была гарантией безопасности. Французский путешественник, натуралист и ботаник, профессор Сорбонны Пьер Белон (1517-1564) настоятельно рекомендует для беспрепятственного и безопасного передвижения с караваном, состоящим из турок, облечься в турецкую одежду⁹. «Переходя границу Турции, – читаем в «Реляции путешествия» по странам Востока, составленной Жаком де Буржем, попутчиком миссионера, епископа Берита (Бейрута), – покидаешь страну раб-

³ Thévenot 1674, 112.

⁴ Volney 1797, 55.

⁵ Ахл-и хакк или али-илахи (али - бог их), - одна из шиитских сект, возникла примерно в XV-XVII вв.

⁶ La Boullaye-Le Gouz 1657, 90.

⁷ La Boullaye-Le Gouz 1657, 71

⁸ La Boullaye-Le Gouz 1657, 71-72.

⁹ Belon 1588, 49.

ства, в то время, как на персидской земле можно даже одеваться на французский манер»¹⁰.

Записки путешественников, являясь частью механизма воссоздания и культивирования представлений о «других», изобилуют описанием бесконечного переодевания путешественников на протяжении их странствований по Востоку. Эта перманентная смена одежды напоминала театрализованное действо, карнавал. Бургундский путешественник, советник Филиппа Доброго, герцога Бургундского Бертрандон де ла Брокьер, совершивший в 1432–1433 гг. путешествие по Ближнему Востоку, во избежание опасности при пересечении границы турецких земель облачается в турецкий костюм: он приобретает турецкий головной убор, два белых кафтана до пят, красные сапожки с длинными голенищами¹¹. На протяжении всего странствования по Востоку, включая Малую Азию, Армению, Грузию и острова греческого архипелага, французский путешественник, профессор ботаники Жозеф Питтон де Турнефор (1656–1708) неоднократно меняет гардероб. Так, в Константинополе он и его провожатые скидывают «европейскую одежду и облачаются в долиман»¹², но поскольку эта одежда была неудобной для ведения полевых работ и верховой езды, путешественники «запаслись также одеждой на армянский манер (*un habit à l'Arménienne*) и сафьяновыми сапожками»¹³. В Грузии «были в почете шляпы». Соответственно, путешественники не остерегались их носить. В Дилижане они предстали в национальной одежде турок. Жители Дилижана, «поинтересовались, почему мы не в европейской одежде (*des habits à la franque*) и без шляп. Мы ответили, что пришли из страны турок, которым подобная экипировка вряд ли пришлась бы по вкусу»¹⁴. Турецкий национальный костюм путешественники припасли для церемониальных визитов¹⁵. В Анкаре они купили белые тюрбаны, дабы разбойники, которые безжалостно грабили на дорогах франков, приняли их за мусульман¹⁶. Ла Буле-Ле Гуз припас «белый тюрбан для сельской местности, дабы не отличаться от мусульман, и другой – бело – синий, по христианскому образцу, для городов»¹⁷.

Эта тяга к смене гардероба имела определенную мотивацию и была далеко не случайной. Вскоре после захвата турками-османами Константинополя

¹⁰ *Rélation du voyage de Mgr. l'évêque de Beryte* 1666, 88.

¹¹ *Le Voyage d'Outremer de Bertrandon de la Broquière* 1892, 60–61.

¹² Долиман (зд.) – турецкая длиннополая одежда, спереди открытая, без застёжек, с узкими рукавами.

¹³ Tournefort 1717, 8.

¹⁴ Tournefort 1717, 184–185.

¹⁵ Tournefort 1717, 8.

¹⁶ Tournefort 1717, 360.

¹⁷ La Boullaye-Le Gouz 60.

Мехмед II издал закон, предписывающий подданным в зависимости от их этнической и конфессиональной принадлежности носить особые, отличительные одежды. Греки должны были носить черные штаны и туфли, армяне – лиловые туфли и фиолетовые штаны, евреи – небесно-голубые штаны и туфли, и лишь немногие избранные неверные имели право надевать желтые туфли и красные штаны, как турки¹⁸.

Что касается почитаемого турками зеленого и белого цвета, то подданным турецкого султана – христианам и евреям, категорически запрещалось носить одежду этих цветов. Считалось, что это излюбленные цвета пророка Мухаммеда, ибо, как сказал сподвижник пророка Мухаммеда Анас ибн Малик, «Самым любимым цветом Посланника Аллаха (Мухаммеда) был зеленый».

Итальянский путешественник Пьетро делла Валле (1586-1652) пишет, что «носители крови лжепророка Мухаммеда также имели право носить тюрбан зеленого цвета, в качестве знака различия»¹⁹. Согласно Белону, одежда зеленого цвета свидетельствовала, что носящий ее принадлежит к роду Мухаммеда (*sont de la lignee de Mahomet*)²⁰. И далее, «совершившим дважды или трижды паломничество в Мекку позволяется надеть зеленый тюрбан»²¹. В отношении белого, «у них (мусульман), – уверяет Пьетро делла Валле, – он был знаком принадлежности к конфессии (*c'est une marque de Religion*)»²².

Подданным турецкого султана – христианам и евреям, согласно путевым запискам Тевено, категорически запрещалось «иметь даже небольшое пятнышко этого цвета (зеленого) на своей одежде», в противном случае они «подверглись бы избиению палками». «Христиане также не смели носить белый тюрбан, – продолжает излагать свои наблюдения Тевено, – ...в случае, если их застали бы в нем, то они должны были стать турками или умереть»²³. Николе Николас (517-1583), придворный географ при Генрихе II, в 1551 году включенный в состав посольств Габриэля д'Арамона, посланного в Турцию ко двору Сулеймана Великолепного, в XVII главе своих «Навигаций, паломничеств и путешествий», затрагивая тему костюма армян в Османской империи, отмечает, что армяне «носят тюрбан синего цвета, испещренный белым и красным. Поскольку никому другому, кроме турок, не дозволяется носить просто белый тюрбан»²⁴.

¹⁸ Гудвин 2012, 25.

¹⁹ Les fameux voyages de Pietro della Valle 1670, 124.

²⁰ Pierre Belon 1588, 420.

²¹ Pierre Belon 1588, 420.

²² Les fameux voyages de Pietro della Valle 1670, 124.

²³ Thévenot 1665, 156.

²⁴ Nicolay 1576, 250.

По уверению французского путешественника и живописца Гийом-Жозефа Грело, автора «Реляции о новом путешествии в Константинополь», совершенном в 1672-1675-ых гг., считалось преступлением, если даже обувь проживающего в Турции христианина была почитаемого Мухаммедом цвета²⁵. Дифференциацию одежды по национальному и конфессиональному признакам как проявление расовой сегрегации не мог не заметить и Турнефор. Он отмечает, что «подданные государя, армяне и евреи должны носить обувь красного, фиолетового или черного цвета». Им категорически запрещалось носить обувь желтого цвета. «Подданные Султана не смеют носить желтую обувь (Paboutches), что чревато избиением дубинкой, а только красную»²⁶, – подтверждает Тевено. Среди иноверцев только иностранцам дозволено носить желтые туфли. Этого установившегося порядка с такой точностью придерживаются, что «по голове и ногам, – возмущается Турнефор, – определяют [в Турции] религиозную принадлежность»²⁷.

Французский ученый и путешественник Гийом-Антуан Оливье (1756-1814) в течение своего продолжительного путешествия по Востоку подметил, что запрет на «цвета мусульман и не мусульман» распространялся не только на одежду, но и на дома: «У турок дома были покрашены в белый и красный цвет, у греков, армян и евреев – в черно-коричневый. В Турции так заведено: господ от рабов можно различить по одежде и домам»²⁸.

Заключение

Турки-османы на протяжении столетий выстраивали свою государственность в рамках деления мира на «дар аль-ислам» (территория ислама) и «дар аль-куфр» (территория неверия). Этот принцип деления распространялся и на территорию самой Порты и ее христианского населения, которое виделось как «объект завоевания». «Политика турецкой империи была направлена на то, чтобы как можно больше инородческого элемента слилось с турецким, чтобы турками стали все вокруг»²⁹. Через маркеры инаковости, а одежда и цвета являлись визуализацией религиозной и этнической инаковости – идентификатором этноконфессиональной принадлежности, отличительной меткой, определялись границы между «своими» и «чужими». Последние должны были жить по жестким правилам, установленным Портой. Огра-

²⁵ Grelot 1680, 250.

²⁶ Théveno 1665, 156.

²⁷ Tournefort 1718, 53.

²⁸ Olivier 1801-1807, 109.

²⁹ Лурье 1997, 244.

ничение прав и свобод иноверцев подталкивало многих к принятию ислама, и, соответственно, к отуречиванию населения. Европейские путешественники, побывавшие в подвластных Османской империи землях, приводят в своих травелогах множество свидетельств жесткой сегрегации и дифференциации в турецком обществе, реализующихся в сложной системе знаков, одним из проявлений которых является закон, предписывающий подданным носить особые, отличительные одежды.

Библиография

- Гудвин Дж. 2013, Величие и крах Османской империи, Москва, Колибри, «Азбука-Аттикус», 416 с.
- Лотман Ю.М. 1965, О понятии географического пространства в русских средневековых текстах (Тр. по знаковым системам), т. 2, Учен. зап. Тарт. гос. ун-та, Тарту, с. 210-216.
- Лурье С.В. 1997, Историческая этнология, Москва, «Аспект Пресс», 448 с.
- Путешествие в восточные страны Плано Карпина и Рубрука 1957, Москва, изд. Географической литературы, 270 с.
- Belon Pierre 1598, Les Observations de plusieurs singularitez et choses mémorables trouvées en Grèce, Asie, Judée, Egypte, Arabie & autres pays étranges..., Paris, Edité par Hiersome De Marnef & Guillaume Cavellat, 468 p.
- Grelot G.-J. 1680, Relation nouvelle d'un voyage de Constantinople, Paris, Rocolet, 306 p.
- La Boullaye-Le Gouz François de 1657, Les voyages et observations du sieur de La Boullaye-Le-Gouz. ..., Paris, G. Clousier, 555 p.
- Le Voyage d'Outrermer de Bertrandon de la Broquière 1892, publ. et annot. par Ch. Schefer, Paris, Ernest Leroux, 323 p.
- Les fameux voyages de Pietro della Valle 1670, Rouen, Grevais Clousier, t. 1, 348 p.
- Nicolay Nicolas de 1576, Les navigations, peregrinations et voyages faicts en la Turquie, Ànvers, G. Silvius, 306 p.
- Relation du voyage de Monseigneur l'évêque de Beryte 1666, Vicaire apostolique du royaume de la Cochinchine, Par la Turquie, la Perse, les Indes, &c. jusqu'au Royaume de Siam & autres lieux. Par M. de Bourges, Prêtre, Missionnaire Apostolique 1666, Paris, chez Denys Bechet, 245 p.
- Thévenot Jean de 1674, Relation d'un voyage fait au Levant, Paris, chez Louis Bilaine, 575 p.
- Tournefort Pitton de 1717, Relation d'un voyage du Levant: fait par ordre du Roi par M. Pitton de Tournefort, Lyon, t. III, 379 p.
- Tournefort, Pitton de 1718, Relation d'un voyage du Levant: fait par ordre du Roi par M. Pitton de Tournefort, Amsterdam, t. II, 306 p.
- Volney Constantin-François 1783, Voyage en Syrie et en Égypte, pendant les années 1783, 1784 et 1785, t. I, Paris, Desenne Volland, t. 2, 458 p.
- Olivier G.-A. 1801-1807, Voyage dans l'Empire Othoman, l'Égypte et la Perse, fait par ordre du gouvernement pendant les six premières années de la République, Paris, H. Agasse, t. 1, 466 p.

МАРКИРОВАНИЕ ИНАКОВОСТИ КАК ИНСТРУМЕНТ РЕЛИГИОЗНО-ЭТНИЧЕСКОЙ СЕГРЕГАЦИИ (ОСМАНСКАЯ ИМПЕРИЯ XVI–XVIII ВВ. ГЛАЗАМИ ЕВРОПЕЙЦЕВ)

Гоар Карагезян

Резюме

Записки европейских путешественников XVI–XVIII вв., совершивших путешествия в земли, подвластные Османской империи, повествуют о мире, с которым они столкнулись. Согласно их наблюдениям, этот мир был четко сегментирован по социальному, пространственному, религиозному и этническому признакам. Города были разделены на греческие, армянские, еврейские, мусульманские кварталы; жить полагалось только на определенной территории; ряд профессий были предусмотрены только одной какой-то нации. Что касается одежды, то и на нее было установлено четко регламентирование: подданные Оттоманской Порты, в зависимости от конфессиональной и этнической принадлежности в качестве идентификационных знаков должны были носить одежду, призванную маркировать иноверцев. Эти «знаки инаковости» (signs of otherness – понятие, которым оперировала Рут Меллинкофф) использовались в Османской империи как инструмент идентификации, сегрегации и стигматизации иноверцев и чужеродцев.

Ключевые слова – Османская империя, маркирование, сегрегация, одежда–маркер инаковости, иноверец, европейские путешественники.

ԱՅԼՈՒԹՅԱՆ ՆՇԱՀԱՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԿՐՈՆԱԲԵՆԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԳՈՐԾԻՔ (XVI–XVIII ԴԴ. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԻ ԱԶԲԵՐՈՎ)

Գոհար Կարապյոզյան

Ամփոփում

XVI–XVIII դդ. Օսմանյան կայսրության ենթակա երկրներում ուղևորություն կատարած եվրոպացի ճանապարհորդների համաձայն, աշխարհը հստակ բաժանված էր սոցիալական, տարածական, կրոնական և էթնիկական հատկանիշներով: Քաղաքները բաժանված էին հունական, հայկական, հրեական և մահմեդական թաղերի. ապրել պետք էր միայն որոշակի տարածքում: Կային մասնագիտություններ, որոնք թույլատրված էին միայն տվյալ ազգությանը: Հագուստը խիստ կանոնարկված էր: Օսմանյան պետության հպատակները, կախված կրոնական և ազգային պատկանելությունից, պետք է կրեին այլահավատներին նշահարող հագուստ՝ որպես նույնականացման նշան: «Այլության նշաններ» (signs of otherness) հասկացությունը, որը կիրառել է Ռուտ Մելինկոֆը, Օսմանյան կայսրությունում օգտագործվում էր որպես նույնականացման գործիք՝ այլադավանների և այլազգիների սեգրեգացիայի և խարանձան համար:

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, նշահարում, սեգրեգացիա, նույնականացում, հագուստ՝ որպես այլության նշան, այլիավատ, եվրոպացի ճանապարհորդներ:

**MARKING OTHERNESS AS A TOOL FOR RELIGIOUS-ETHNIC SEGREGATION
(THE 16TH-18TH CENTURY OTTOMAN EMPIRE THROUGH THE EYES OF EUROPEANS)**

Gohar Karagezyan

Abstract

The article deals with the notes of the 6th–18th century European travellers who travelled to the lands subject to the Ottoman Empire. The world they encountered was clearly segmented along social, spatial, religious and ethnic lines, according to their observations. The cities were divided into Greek, Armenian, Jewish, and Muslim quarters; people were supposed to live only in the predestined territory; there were professions allowed only to one particular nation. As for their clothing, there was a clear regulation established for it: subjects of the Ottoman Porte, depending on their religious and ethnic belonging as identification signs, had to wear clothes aimed at marking adherents of different faiths. These signs of otherness, a notion Ruth Mellinkoff operated with, were used as a tool for identifying, segregating and stigmatizing adherents of non-Muslim faith and aliens in the Ottoman Empire.

Key words – the Ottoman Empire, marking, segregation, clothes as signs of otherness, representative of non-Muslim religion, European travellers.

ԵՐԳԻԾԱՆՔԻ ՈՃԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ «ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆՈՒՄ»

Կարինե Առաքելյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

ՀՀ, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15

Էլ. հասցե՝ karine.arakelyan.2016@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 03.09.2020, գրախոսվել է 15.09.2020, ընդունվել է տպագրության 05.07.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.2-163

Ներածություն

Երգիծական բառարանները երգիծական գրականության անքակտելի մասն են: Այսպիսի բառարաններ միշտ գոյություն են ունեցել: Հաճախ դրանց ստեղծողները եղել են դասական երգիծաբանները, ինչպես Երվանդ Օտյանը: Նա կազմել է «Ընթացիկ բառարանը», որն ամփոփում է հիմնականում քաղաքական երգիծանքի անկրկնելի նմուշներ. «Երեսփ. ժողով – Ազգ. շահերու և արժանապատվության գերեզմանատունը, Քաղ. ժողով – Մեծություն մը ...պարապոթյամբ լեցուն, Կուսակցական համերաշխություն – Զորին ծնավ ըսելու պես բան մը»¹ և այլն:

Այսօր էլ հումորի վարպետները իրենց ելույթներում հաճախ են մեջբերումներ անում այսպիսի բառարաններից, ինչպես Եվգենի Պետրոսյանն իր «Խառնաշփոթ բառարանից»:

Երգիծանքի լեզվաբանական միջոցները «Գրպանի բառարանում»

Երգիծական բառարան հեղինակել է նաև ֆրանսահայ ականավոր երգիծաբան Նշան Պեշիկթաշյանը՝ այն անվանելով «Գրպանի բառարան»: Այստեղ պատկերավորման, լեզվական ամենատարբեր արտահայտչական միջոցներով, բառերի հետաքրքիր ու անսպասելի ստուգաբանություններով ու բացատրություններով և զանազան այլ ձևերով հեղինակը ծաղրում է հասարակության շրջանում տեղ գտած արատավոր տարբեր երևույթներ ու իրողություններ, փորձում սթափեցնել ընթերցողին՝ մարդուն, նրան վերադարձնել իր մարդկային կերպարին:

Բառարանը ներառում է 126 գլխաբառ: Բառարանի ներածական մասում Պեշիկթաշյանը գրում է. «Այս բառարանը կազմելու համար օգտուած ենք միայն մեր երգիծական գործերէն, այն ալ մասամբ... Օգտուած ենք առաւելապէս կեանքի մատենաներէն, որոնք տեսանելի չեն ամէն մարդու. տեսանելի ըլլալու

¹ Օտյան 1962, 704:

պարագային իսկ «ամէն մարդ չի կանա կարդայ»... Մեր երկը թէւ փոքրիկ բառարան մըն է, բայց ստեղծագործական ճիւղի վրայ բուսած է»²:

Ինչպես արդեն նշեցինք, Պեշիկթաշյանը «բառահողմածները» կազմելիս օգտվել է զանազան եղանակներից, հնարներից ու միջոցներից, որոնցից մեկը ստուգաբանությունն է՝ իրական կամ մտացածին: Օրինակ, *ընկեր* բառը ստուգաբանվում է որպես «ընկեր, բարեկամ... = Կազմուած է *ըն(դ)* նախդիրով *կեր* արմատից և նշանակում է բուն «միասին ուտող, հացակից, ճաշակից...»³: Հեղինակը բառացիորեն կրկնում է այս ստուգաբանությունը, սակայն հավելում, որ ժամանակի ընթացքում բառն «իմաստափոխության» է ենթարկվել և «ուրեմն «ընկեր» կը նշանակէ ապուրը միասին ուտող, հին իմաստով. իսկ նոր իմաստով կը նշանակէ զիրար ուտող» (թիւ 9, էջ 6): Ժամանակի ընթացքում ապականվել են մարդկային բարքերն ու հարաբերությունները, դրա հետևանքով նաև ընկեր և ընկերություն վեհ գաղափարները, ինչի մասին գրել է հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանն իր պոեմում.

Իմ խոր վերքերը ո՞վ կնյութեր ինձ,

թե չլինեին ընկեր, բարեկամ,

Որոնք համբույրով սիրտս բացեցին,

որոնք համբույրով խայթեցին նրան⁴:

Եթե *ընկեր* բառի դեպքում հեղինակն օգտվել է իրական ստուգաբանությունից, ապա այլ բառերի պարագայում նա կատարում է իր սեփական ստուգաբանությունը՝ այն ծառայեցնելով գեղարվեստական այլևայլ նպատակների: Այսպես է *տանձ* բառը, որը, բացի *պտուղ* իմաստից, հատկապես արևմտահայ բարբառներում ունի այլ իմաստներ, մասնավորապես. «1. Տանձ: 2. Պլ. Սբ. Աղն. Ապուշ, հիմար: 3. Դոնձ, Հմշ. Կուպիտ, գռեհիկ: * Տանձ գլուխ, 1. Ճաղատ: 2. Փխբ. Հիմար, ապուշ»⁵: Այն նաև մաս է կազմում տարբեր դարձվածների. «Տանձի կոթ կամ Տանձի պոչ.-1. Ապուշ, տխմար: 2. Բարակ, նիհար... Տանձ կշռել, - Նոյնն է Հավկիթ կշռել»⁶: Նշված իմաստները հաշվի առնելով՝ Պեշիկթաշյանը առաջ է քաշում բառի իր ստուգաբանությունը, որն ավելի քան համահունչ է դրանց, բայց արդեն ծիծաղաշարժ է և խոսքին հումորային երանգ է հաղորդում. «Տանձ. Պտուղ, նաեւ մարդ: Հականիշն է «անձ» բառին «տ» ժխտական տառով, - «անձ», «տանձ», ինչպես գեղ, տգեղ, մոյն, տմոյն, գէտ, տգէտ»⁷:

Երբեմն հեղինակը բառը «ստուգաբանում» է որպես «երկլեզվյան» բաղադրիչներ ունեցող միավոր, որ դարձյալ ծառայում է խոսքը հումորով համեմ-

² Պեշիկթաշյան 1962, 9, 1-9: Այսուհետև այստեղից արվող մեջբերումների համարը և էջը կնշվեն շարադրանքին կից:

³ Աճառյան 1973, 687:

⁴ Իսահակյան 1974, 336:

⁵ Հայոց լեզվի բարբառային բառարան 2010, 327:

⁶ Սուքիասյան, Գալստյան 1975, 634:

⁷ Պեշիկթաշյան 1962, 10, 24-31: Այսուհետև այստեղից կատարվող մեջբերումների համարը և էջը կնշվեն շարադրանքին կից:

լուն, նրան անսպասելիություն հաղորդելուն և այլն: Այսպիսին է միլիոն բառի ստուգաբանությունը, համաձայն որի՝ «Այս բառը կազմուած է հայերէն «մի» ու ֆրանսերէն «լիոն» բառերով: «Մի» կը նշանակէ «մէկ», իսկ «լիոն» կը նշանակէ «առիւծ», ուրեմն «միլիոն» կը նշանակէ «մէկ առիւծ»» (թիւ 10, էջ 26): Փողի իշխանության դարում այս աշխարհի հզորները մյուսներին թելադրում են իրենց կամքը, և ստացվում է, որ «միլիոն մը ունեցողը ունի մէկ առիւծ, այսինքն ոյժը ունի առիւծի: Միլիոնատէր մը քանի մը տասնեակ առիւծի տէր է, իսկ բազմամիլիոնատէր մը ունի հարիւրաւոր առիւծներու զօրութիւն: Միլիոնատէր մը, բնականաբար, աւատապետն է վայրի անտառի մը, որուն մէջ կը վխտան առիւծներ, վագրեր, յովազներ, ինձեր, աղուէսներ, օճեր ու բորենիներ» (ն.տ.):

Հիշենք *զավակ* բառի ստուգաբանությունը: Համաձայն Աճառյանի բառարանի՝ «որդի, ծնունդ, ցեղ, սերունդ (հնագոյն իմաստն էր «սերունդ, ցեղ՝ առանց սեռի խտրութեան...»)»⁸: Իսկ Զահուկյանը գրում է «թերևս փոխառություն իրանական աղբյուրից. հմմտ. Սողդ. zwn «կենդանի արարած, երեխա»: - Զահ. ՀԼՊ 525»⁹:

Պեշիկթաշլյանը խոսում է բառի ստուգաբանության մասին, ապա նշում. «Նախապէս «օ» գիրը չունենալով՝ մեր նախնիքը այդ տառին տեղ կը գրէին «ա»։ որով «զօ»-ն եղած է «զա»։ անոր ծայրն ալ դրուած է «ակ» փոքրացնող մասնիկը, որով եղած է «զաակ», այսինքն՝ փոքրիկ անասուն կամ պզտիկ կենդանի: Անուն մը, որ նախատական ըլլալէ աւելի, իրապաշտական է, քանի որ զաակ մը, իր սկզբնական շրջանին, տարբերութիւն չունի անասունէ: Կան ալ, որոնք մեծնալով ալ, դժբախտաբար, տարբերութիւն չեն ունենար» (թիւ 9, էջ 5-6): Հեղինակը փորձում է գտնել բառի ստուգաբանությունն «ապացուցող» այլ փաստեր ևս, որոնք խոսքին զվարճալի երանգներ են հաղորդում: Նա նշում է հատկապես խոսակցական լեզվում հաճախակի հանդիպող *լամուկ* և *լակուր* բառերի մասին, որոնցից «վերջինը կը նշանակէ շան ձագ, միաժամանակ՝ մանուկ» (ն.տ.):

Ինչպես արդեն նշեցինք, բառարանը կազմելիս Նշան Պեշիկթաշլյանն օգտվել է պատկերավորման, արտահայտչական տարբեր միջոցներից, որոնցից ամենատարածվածը փոխաբերությունն է: Սա ինքնին հասկանալի է, քանի որ բառերի մի սովոր մասը անվանողական իմաստից բացի ունի փոխաբերական իմաստ կամ իմաստներ, որոնք խոսքի հարստացման անսպառ աղբյուր են: Այդպես է նաև Պեշիկթաշլյանի բառարանում:

Ահա *բարբարոս* բառը, որն իր պատմական իմաստից զատ նշանակում է «Քաղաքակրթության ստորին աստիճանի վրա գտնվող մարդ»¹⁰: Հեղինակը բառին տալիս է իր փոխաբերական մեկնաբանությունը, որի հիմքում ընկած է քաղաքակրթ աշխարհի ու նրա կեղծ արժեքների խորը քննադատությունը, և բառի բացատրությունը դառնում է սատիրայի դրսևորման խիստ ինքնատիպ

⁸ Աճառյան 1973, 687:

⁹ Զահուկյան 2010, 820:

¹⁰ Աղայան 1976, 1616:

արտահայտություն. «Մարդ, որ դեռ չէ սորված քաղաքավարորեն կեղծելու, կեղեքելու եւ կերակրուելու կենցաղագիտութիւնը» (թիւ 9, էջ 3):

Նույն թեմային Պեշկեթաշյանն անդրադարձել է բազմաթիվ այլ աոիթներով: Դրանում կարող ենք համոզվել՝ կարդալով մի հատված «Վայրենի մը» պատմվածքից, որը ներկայացնում է սևամորթ աֆրիկացու և եվրոպացու զրույցը. «Մենք՝ վայրենիներս, դուրսէն սեւ ենք, սակայն ներսէն սպիտակ: Իսկ դուք դուրսէն ճերմակ եք ու ներսէն սեւ...Մենք կ'ուտենք, երբ անօթի ենք, մինչդեռ դուք կ'ուտուիք, երբ անօթի եք, ու կ'ուտէք, երբ կուշտ եք»¹¹:

Երբեմն բառի բացատրության ժամանակ հեղինակն օգտագործում է մի շարք փոխաբերություններ, որոնք մեկ ամբողջական շղթա են կազմում և առարկան կամ երևույթը բնութագրում խիստ համակողմանի, վերհանում տարբեր մեթոդի կողմեր և փորձում առաջարկել լուծումներ: Այդպես է *արևելահայերեն* բառի բացատրության պարագայում, որտեղ մի քանի նախադասության մեջ խտացված են ազգի խեղված ճակատագրին առնչվող լրջագույն խնդիրներ, հայի տեսակի և ինքնության պահպանության հրամայականներ. «Աշխարհաբար հայերէնը երկուորեակ լեզու մըն է: Արեւելահայերէն կոչուող եղբայրը եղաւ բախտաւոր՝ դառնալով պետական լեզու: Վաղուց ի վեր արեւելահայերէնը բազմակին է՝ ամուսնացած ըլլալով ֆրանսացի, գերմանացի, ռուս ու թաթար կիներու հետ, որոնք, իբրեւ դրամօժիտ, իրեն բերած են բառե՛ր, բառե՛ր ու բառե՛ր, որոնց բնաւ պէտք չունէր, քանի որ կրնար առնել իր Արեւմտահայ եղբորմէն, որուն ունեցածները հաւասարապէս իրն ալ են» (թիւ 9, էջ 3):

Այս խնդրի համատեքստում է *դիրեկտոր* բառի «բացատրություն-ստուգաբանությունը»: Բառահոդվածում երգիծանք է առաջանում հենց առաջին նախադասությունից, երբ հեղինակը գրում է ««Տնօրէն» կամ «տեսուչ» բառերուն արեւելահայերէնն է «դիրեկտորը»» (թիւ 9, էջ 4):

Նշված բառը հայերենին է անցել ռուսերենի միջնորդությամբ, սակայն ունի լատինական ծագում. «[< директор < лат. director < dirigere ուղղել, ուղղորդել], գ. Տնօրեն՝ հիմնարկի՝ ձեռնարկության կամ միջնակարգ ուսումնական հաստատության ղեկավար պաշտոնյան՝ պետը»¹²:

Պեշկեթաշյանը բառին տալիս է իր ստուգաբանությունը, համաձայն որի, այն կազմված է direct և turf արմատների միավորումից: Առաջինը նշանակում է *սյուն*, երկրորդը, որի վերջին գիրը ընկած լինելով՝ մնացել է *տոր*, նշանակում է հողաձուփ: Այսպիսով, ըստ հեղինակի, դիրեկտոր նշանակում է հողաձուփի սյուն: Առաջանում է զավեշտական, միևնույն ժամանակ՝ տխուր իրավիճակ, քանի որ իրենց իրական առաքելության՝ ուղղելու, ղեկավարելու, նեցուկ լինելու, ճանապարհ ցույց տալու և հարթելու, օրինակ ծառայելու փոխարեն «բազմաթիւ տեսուչ-

¹¹ Պեշկեթաշյան 1941, 82:

¹² Հայրապետյան 2011, 644:

ներ ուրիշ բան չեն, եթե ոչ սիւներ հողածուխի, անհրաժեշտ պարագային վառուելու եւ իրենց գտնուած հաստատութիւնը տաքցնելու համար» (թիւ 9, էջ 4):

Պատկերավորման լեզվական միջոցներից Պեշիկթաշլյանի բառարանում առկա են բազմաթիվ հակադրոյթներ: Հակադրոյթ է առաջանում, երբ հակադիր իմաստ ունեցող բառերի գործածությամբ հակադրվում են առարկաներ, հատկանիշներ, երևոյթներ: Այն լայն տարածում ունի գեղարվեստական գրականության, նաև երգիծաբանության մեջ: Անվանի երգիծաբանները հաճախ են դիմել այս հնարին, ինչպես Հակոբ Պարոնյանն իր «Մեծապատիվ մուրացկաններ» վիպակում, որտեղ լեզվական ու խոսքային հականիշների կիրառությամբ կազմված հակադրոյթունների, տրամաբանոյթունից բացարձակապես զուրկ խոսքի միջոցով հեղինակը բացահայտել է բանաստեղծի փուլ չէությունը. «անոնք անցյալ են, մենք՝ ապառնի, անոնք խավար են, մենք՝ լույս, անոնք տգետ են, և մենք՝ գիտուն, անոնք ատելոյթուն են, մենք՝ սեր, անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են, մենք՝ բանջարեղեն, անոնք վարունգ են, մենք՝ խնձոր, անոնք փուլ են, մենք՝ վարդ...»¹³:

Ինչպես նշված հատվածում, այնպես էլ առհասարակ հակադրոյթները հաճախ կառուցվում են հականիշների հմուտ ու տեղին օգտագործմամբ: Այդպիսի դեպքերը բազում են նաև Պեշիկթաշլյանի բառարանում: *Բերան* բառի բացատրությունը, որի միջոցով հեղինակն անդրադառնում է մարդկային տարբեր տեսակների ու բնավորոյթունների և դրանց դրսևորմանը բերանի միջոցով: «Բերան. Բանուկ վաճառատուն մը, որ կգբաղի ներածումով եւ արտածումով... Բերաններ կան, որոնք ածուխ կ'ուտեն ու կրակ կը փսխեն, իսկ բերաններ ալ կան, որոնք եթէ քիւօ մը անոյշ ուտեն, երկու քիւօ ժահր կ'արձակեն» (թիւ 9, էջ 3): Անշուշտ, այս բացատրության մեջ կարելի է նկատել Աստվածաշնչից եկող մեկնության արձագանքը լեզվի ու բերանի մասին. «զլեզու մարդկան ոչ ոք կարէ հնազանդել, զչարն եւ զանկարգ եւ զլի թունօք մահաբերին: Նովաւ օրինեմք զՏէրն եւ զՀայր. եւ նովաւ անիծանեմք զմարդիկ, որ ըստ նմանութեան Աստուծոյ արարան: Ի նմին բերանոյ ելանեն օրհնութիւնք եւ անէծք»¹⁴:

Հակադրոյթ է առաջանում *այր* բառի բացատրության ժամանակ, երբ հեղինակը զուգահեռ է անցկացնում ժամանակների և տիրող բարքերի միջև, խորհրդածում տղամարդու դերի մասին և այդ ամենն արտահայտում մի քանի շատ դիպուկ բառերով: Անցյալն ու ապագան ներկայացնում են տարբեր ծայրահեղոյթուններ, որոնք նկարագրելիս մեծ է խոսքային հականիշների դերը. «Անցեալին մէջ հրամայող մը անապատի մէջ... Ապագային հլու հնազանդ մը հարճի վերածուած» (թիւ 9, էջ 2):

Եթե մինչ այժմ մեր բերած օրինակներում հակադրոյթները հականիշ զույգերի միջոցով են կազմվում, ապա կան նաև դեպքեր, երբ դրանք կազմվում են հականիշ եոյակների միջոցով՝ ստեղծելով, եթե կարելի է ասել, «եռաստիճան»

¹³ Պարոնյան 1954, 576:

¹⁴ Աստուածաշունչ մատեան, Նոր Կտակարան 1997, 242:

հակադրություն, ինչպես *օրենք* բառի պարագայում. «Զօրաւորին դրախտն է, տկարին՝ դժոխքը, չարագործին՝ քաւարանը» (թիւ 10, էջ 31):

Գեղարվեստական խոսքի ոճավորման գործում իր ուրույն տեղն ունի օքսիմորոնը: Այն ոճական հնար է, «որն արտահայտվում է իմաստով միանգամայն հակադիր և տրամաբանորեն մեկը մյուսին բացառող բառերի կապակցությամբ»¹⁵:

Շնորհիվ իր այս՝ կառույցի երկու եզրերի հակադիր նշանակություն ունենալու հանգամանքի, օքսիմորոնը լայն կիրառություն ունի երգիծաբանության մեջ: Նշան Պեշկեթաշյանը ևս տարբեր առիթներով օգտագործել է օքսիմորոններ, ինչպես. «*Շնորհալի գիժն է Տարօնցին՝ վարձատրուած Ս. Կարապետէն*»¹⁶:

Օքսիմորոնի հաջողված օրինակի ենք հանդիպում բառարանի *ազգ* բառի բառահոդվածում, որը քաղաքական երգիծանքի հրաշալի դրսևորում է. «Միլիոնաւոր մարդոց միութիւն մը, իր անմիաբանութեամբ անուանի թէ՛ դաւանական, թէ՛ դասակարգային, թէ՛ դաւադրական, թէ՛ գաղափարական, թէ՛ գեղեցկագիտական հարցերու մէջ: Այս միլիոնաւոր *միութենական անմիաբանները* երբեմն կ'ակմբուին միեւնոյն կրկէսին մէջ՝ խաղալու, խեղկատակելու, դիմակաւորուելու, դերակատարելու, նոյնիսկ իրարու արին թափելու համար» (թիւ 9, էջ 2):

Օքսիմորոն է առկա *քաղաքակրթություն* բառի բացատրության ժամանակ: Ձևի ու բովանդակության մեջ կա ճշացող հակասություն: Մարդիկ ներքուստ չեն քաղաքակրթվել ու դրա ցանկությունն էլ ամենևին չունեն, բայց հաճախ ստիպված են արտաքուստ քաղաքակիրթ ձևանալ, ինչը ծանր լուծ է դառնում, և վերջին հաշվով ստացվում է, որ քաղաքակրթությունը «ազատ ստրկութիւնն է» (թիւ 10, էջ 31):

Պեշկեթաշյանի «Գրպանի բառարանում» առկա են պատկերավորման այլ միջոցների ոճական կիրառություններ: Դրանցից մեկը բառախաղն է: Այն «բառի կամ կապակցության այնպիսի փոխակերպություն է, որը տեղի է ունենում խոսքի մեջ դրանց նոր իմաստավորման կամ արտաքին նմանության հիման վրա տարբեր գաղափարներ նույնացնելու միջոցով, որ կատարվում է սրամտության նպատակով»¹⁷: Բերենք երկու օրինակ. «Գրող...Գողին ու գրողին մէջ եղած տարբերութիւնը տառ մըն է միայն. «ր» գիրը: Ով որ ճարտարութիւն չէ ունեցած դառնալու գրող, յաջողած է ըլլալ գող» (թիւ 9, էջ 4), «Զոքանչ. Փեսային կեսուրը կամ փեսային գլխուն վրայ կախուած սուրը» (թիւ 9, էջ 6):

Բառարանում հեղինակն օգտագործել է բազմաթիվ ու բազմապիսի շրջասություններ: Պայմանավորված իրենց բնույթով՝ ասելիքը նկարագրորեն արտահայտելու հանգամանքով, շրջասությունները առհասարակ լայն կիրառություն ունեն երգիծական գրականության մեջ: Ահա դրանցից մեկը՝ *ամուսնությունը*. «Ամուսնութիւնը միջազգային, մեծագոյն, հին ու յափտենական վիճակահանութիւն մըն է, միլիոնաւոր թիւերով, որոնք յաճախ կ'ելլեն պարապ, երբեմն կու տան պատիժ ու պատուհաս, քիչ անգամ ալ պարգեւ...» (թիւ 9, էջ 2):

¹⁵ Պետրոսյան, Գալստյան, Ղարազոյան 1975, 328:

¹⁶ Պեշկեթաշյան 1941, 82:

¹⁷ Պողոսյան 1991, 396:

Նույն բառի բացատրության մեջ առկա է մեկ այլ հետաքրքիր երևույթ: Կարճանք բնագիրը. «Պրոպատիկէ աւագան է ամուսնութիւնը, որուն մէջ նետուելով՝ օրիորդները կը հրաշափոխուին ձկնորսի, իսկ պարոնները կ'այլափոխուին ձուկի՝ տապկուելու համար» (ն.տ.): Պրոբատիկէի ավագանի մասին հիշատակություն կա Նոր Կտակարանում: Հովհաննես Ավետարանիչը գրում է. «Յետ այսորիկ տօն էր Հրէից, եւ ել Յիսուս յերուսաղէմ: Եւ էր յերուսաղէմ ի Պրոբատիկէ աւագանին, որ կոչէր Եբրայեցերէն Բեթեզդա, հինգ սրահ: Յորս անկեալ դներ բազմութիւն յոյժ հիւանդաց՝ կուրաց, կաղաց, գօսացելոց, որ ական ունէին ջրոցն յուզելոյ: Եւ հրեշտակ Տեառն ըստ ժամանակի իջանէր յաւագանն եւ յուզէր զջուրսն, եւ որ նախ ի շարժումն ջուրցն իջանէր, բժշկէր՝ ոչ ունելով նշան հիւանդութեան»¹⁸:

Ինչպես տեսնում ենք, *Պրոբատիկէ ավագան* կապակցությունը բառարանում բոլորովին շեղվել է իր նախնական իմաստից և ձեռք բերել երգիծական բովանդակություն: Հրաշագործելու ունակությունը, որը հեղինակը վերագրում է ամուսնությանը, որևէ աղերս չունի բժշկելու նրա հայտնի կարողության հետ:

Իմաստային և ոճական միանգամայն տարբեր նպատակներ են հետապնդում կրկնությունները այլևայլ մակարդակներում: Կրկնությունների արմատները գալիս են դարերի խորքից, և սրանք իրավամբ կապվում են ժողովրդական բանահյուսության հետ: Պեշկյթաշյանի բառարանում ձևի պարագայի հետաքրքիր կրկնություն ենք գտնում *երգախաղ* բառի բացատրության մեջ: Հեղինակը նախ նշում է, որ երգախաղը օպերա միջազգային բառի հայերեն թարգմանությունն է, ապա անցնում բացատրությանը, որը հումորային հետաքրքիր իրադրություն է ստեղծում. «Թատերախաղ մը, որուն գործող անձերը կը խօսին *երգելով*, կը սիրեն *երգելով*, կը նախանձին *երգելով*, կը դաւեն *երգելով*, կը վիճին *երգելով*, կը կռուին *երգելով*, կը ճաշեն *երգելով*, կը քալեն *երգելով*, կը քնանան *երգելով* (իբրեւ ինքնօրօր), կը մեռնին *երգելով*, մեռեալին վրայ կ'երգեն *երգելով*» (թիւ 9, էջ 5):

Խոսքը ոճավորելու մեծ կարողությամբ է օժտված բաղաձայնությամբ՝ նույն կամ նման բաղաձայնների կուտակումը: Հայ գրականության պատմության մեջ այն հայտնի է վաղ շրջանից, բարձր վարպետությամբ է օգտագործվել միջնադարյան բանաստեղծների, հատկապես սուրբ Գրիգոր Նարեկացու կողմից՝ թե՛ Մատյանում, թե՛ տաղերում:

Պեշկյթաշյանը բառարանում կիրառել է բաղաձայնությամբ՝ այն ծառայեցնելով երգիծական նպատակների: Դա հատկապես ակնառու է *թերթ* բառի բացատրության ժամանակ, որտեղ առկա է *թ* հնչյոթի բաղաձայնությամբ: Այս շնչել խոլ բաղաձայնի կուտակումը անխզելիորեն կապված է բառահողվածի բովանդակային պլանի հետ. նշված տառով սկսվող բառերը կամ զենք են նշանակում, կամ զենքի հետ սերտ առնչություն ունեցող նվագարան, իսկ *թերթ* ինքնին, ըստ հեղինակի, ամենաուժեղ զենքն է. քանի որ ներառում է միանգամայն տարբեր զինատեսակներ և խոցում է դրանցից շատ ավելի անվրեժ. «*Թերթ. թնդանոթ, թուր ու թմբուկ: Թերթ*

¹⁸ Աստուածաշունչ մատեն, Նոր Կտակարան 1997, 100:

չունեցողը թող զգուշանայ թերթին հետ խնդիր ունենալ: Կը դատապարտուի լռութեան: Ամէն ծայն, ամէն խօսք, մանաւանդ վերջին ծայնը, վերջին խօսքը, անսխալական վճիռը թերթինն է: Պէտք չէ բերանը բանալ տալ թնդանօթին...» (թիւ 9, էջ 7):

«Գրպանի բառարանում» հանդիպում են մեկ նախադասությամբ բացատրություններ: Նման դեպքերում ասելիքը խիստ խտանում է, եւ երգիծանքը դառնում է ավելի կտրուկ, ավելի դիպուկ, ինչպէս՝ «Աւանակ. ազատագրուած չորքոտանի, որ կ'ըսէ մարդուն. - Տէ՛ր, տարոսը քեզի» (թիւ 9, էջ 3), «Դագաղ. Տուփ, ուր կ'ամփոփուի մեր բովանդակ ոչնչութիւնը» (թիւ 9, էջ 7), «Լրտեսուի. Պարուի եւ գաղտնի տեղեկութեանց պարոթայ» (թիւ 9, էջ 8), «Կուռք. Հին կուռքերը չաստվածներ էին, նոր կուռքերը չմարդիկ են», «Հարս. Սպիտակազգեստ հրեշտակ մը. պահապան հովանի կամ հոգեառ», «Հող. Մեռելներով ապրող ու ողջերը ապրեցնող հայր մը», «Ձրի. Ձրին իտեալ գինն է ամէն տեսակի ապրանքներուն» (թիւ 10, էջ 25):

Կան բացատրություններ՝ արտահայտված մեկ բառով կամ բառակապակցությամբ, ինչպէս. «Ձեռնոց. Ձեռքի դիմակ», «Ձուլարան. Արտասահման» (թիւ 10, էջ 25), «Մամոնայ. Յաճախ սատանի մանանայ» (թիւ 10, էջ 26), «Ովասիս, Աւազի ովկիանոսներուն մէջ կղզի» (թիւ 10, էջ 27), «Ռամիկ. Բոլոր ազնուականներուն ազգածառերուն արմատը» (թիւ 10, էջ 28), «Վիճակագրութիւն. Թիւերուն ստութեանց ճշմարիտ միջոցը» (թիւ 10, էջ 29), «Քաջ. Վախկոտութենէ վախցող» (թիւ 10, էջ 31) և այլն:

Բառարանում գտնում ենք համակուտական ուշագրավ կիրառություն: «Ընդհանրապէս համակուտակումը յուրօրինակ թվարկում է (հին ճարտասանության մեջ համակուտական որոշ արտահայտություններ կոչվել են թվարկումն մասանց), թվարկում այնպիսի գաղափարների, որոնք միասնաբար թողնում են շատի և ուժեղի տպավորություն»¹⁹: Պար բառի բացատրության ժամանակ հեղինակը դիմում է այս միջոցին՝ ավելի համակողմանի ու ընդգծված ներկայացնելու ժանրի տարբեր տեսակներն ու առանձնահատկությունները, ժամանակակից երիտասարդության կերպարը, ապրումները, ձգտումները, նաև անհոգությունը, կյանքի հանդեպ սպառողական մոտեցումը. «Արդի նոր սերունդներուն արարողական արուեստը, մտային ու մարմնական միութեան մարզանքը, հոգեկան հացկերոյթը, հնձանի աշխատանքը, սիրոյ սերմնացանը, խառնիճաղանջ խրախճանքը խաղաղութեան եւ վերջապէս իրարու հետ կոտորտուելու եւ կոթողուելու կրօնքը» (թիւ 10, էջ 28):

Եզրակացություններ

Խորն ու բազմաշերտ է Նշան Պեշիկթաշյանի բառարանը. դրանում արծարծված խնդիրների, երգիծանքի տարբեր դրսևորումների, դրանց արտահայտման ձևերի ու միջոցների քննությունը կարելի է շատ երկար շարունակել, և ասելիք միշտ կմնա: Նշենք, որ «Գրպանի բառարանը» առանձնանում է ոչ միայն իմաստային խորքերով ու ենթաշերտերով, այլև աննախադեպ ճոխ լեզվով, լեզվա-

¹⁹ Պողոսյան 1991, 396:

ոճական զանազան միջոցների հմուտ ու տեղին օգտագործմամբ, ինքնատիպ բացատրություններով. ձևի ու բովանդակության կատարյալ ներդաշնակությամբ: Այստեղ առկա են երգիծանքի բոլոր տեսակները, և դրանց արտացոլման համար ընտրված են լեզվական ճշգրիտ միավորները: Այն աներկբայորեն երգիծական գրականության փայլուն նմուշ է, որը հեղինակը խիստ համեստաբար անվանել է «Գրպանի բառարան»:

Գրականություն

- Աղայան Էդ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1616 էջ:
- Աճառյան Հ. 1973, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 687 էջ:
- Աստուածաշունչ մատեն 1997, Հայաստանի Աստուածաշունչային ընկերություն, տպ. Մեծ Բրիտանիայում, 1450 էջ:
- Հայոց լեզվի բարբառային բառարան 2010, հ. 2. Երևան, «Գիտություն», 327 էջ:
- Իսահակյան Ա. 1974, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, «Հայաստան», 336 էջ:
- Հայրապետյան Ա. 2011, Օտար բառերի բառարան, Երևան, հեղինակային հրատ., 644 էջ:
- Պարոնյան Հ. 1954, Ընտիր երկեր, գիրք 1, Երևան, «Հայպետհրատ», 576 էջ:
- Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազուլյան Թ. 1975, Լեզվաբանական բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 328 էջ:
- Պէշկեթաշլեան Ն. 1962, Գրպանի բառարան (մաս Ա), Բագին, ամսագիր գրականութեան և արուեստի, Պէյրուֆ, թիւ 9, էջ 1-9:
- Պէշկեթաշլեան Ն. 1962, Գրպանի բառարան (մաս Բ), Բագին, ամսագիր գրականութեան և արուեստի, Պէյրուֆ, թիւ 10, էջ 24-31:
- Պէշկեթաշլեան Ն. 1941, Հայ աղբրտիք, Փարիզ, մատենաշար «Արմենական մշակոյթ», թիւ 1, 82 էջ:
- Պողոսյան Պ. 1991 Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Երևան, ԵՊՀ հրատ., 396 էջ:
- Ջահուկյան Գ. 2010, Հայերենի ստուգաբանական բառարան, Երևան, «Աստղիկ», 820 էջ:
- Սուքիասյան Ա., Գալստյան Ս. 1975, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 634 էջ:
- Օսյան Ե. 1962, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, «Հայպետհրատ», 704 էջ:

ԵՐԳԻԾԱՆՔԻ ՈՃԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ «ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆՈՒՄ»

Կարինե Առաքելյան

Ամփոփում

Նշան Պէշկեթաշլեանի «Գրպանի բառարանը» հայ երգիծաբանության փայլուն նմուշներից է: Այն ներառում է 126 գլխաբառ, որոնց բացատրություններն առանձնանում են ոչ միայն իմաստային խորքերով ու ենթաշերտերով, այլև աննախադեպ ճոխ լեզվով, լեզվաոճական զանազան միջոցների հմուտ ու տեղին օգտագործմամբ, ինքնատիպ բացատրություններով, վերլուծություններով, ստուգաբանություններով, ձևի և բովանդակությամբ:

յան կատարյալ ներդաշնակությամբ: Այս բառարանում առկա են երգիծանքի բոլոր տեսակները, և դրանց արտացոլման համար ընտրված են լեզվական ճշգրիտ միավորներ:

Բանալի բառեր՝ երգիծանք, բառարան, լեզու, խոսք, ոճ, ստուգաբանություն, պատկերավորման միջոցներ:

СТИЛИСТИЧЕСКИЕ СРЕДСТВА САТИРЫ В «КАРМАННОМ СЛОВАРЕ» НШАНА ПЕШИКТАШЛЯНА

Карине Аракелян

Резюме

«Карманный словарь» Ншана Пешикташляна является блестящим образцом армянской сатиры. Он включает 126 заглавных слов, толкование которых отличается не только смысловой глубиной и пластами, но и искусным и уместным использованием разных языковых средств, оригинальным анализом, абсолютной гармонией формы и содержания. В этом словаре присутствуют все виды сатиры, для отражения которой отобраны точные языковые единицы.

Ключевые слова – сатира, словарь, язык, речь, стиль, этимология, средства изображения.

STYLISTIC MEANS OF SATIRE IN THE "POCKET DICTIONARY" OF NSHAN PESHIKTASHLIAN

Karine Arakelyan

Abstract

The "Pocket Dictionary" of Nshan Peshiktashlian is a brilliant example of Armenian satire. It includes 126 capital words, that have different explanations not only in distinguishing the profundity and shades of meanings, but also in exceptional rich language, the best use of different lingual-stylistic means, original interpretations, analysis, etymologies: absolute concord of form and content. All kinds of satire are present in this dictionary, and for their reflection the correct linguistic units are selected.

Key words – satire, dictionary, language, speech, style, etymology, figurative means.

SIGNIFICANCE OF HOMONYMY IN BUSINESS ENGLISH

Ruzanna Khostikyan

ASUE, Chair of Languages

Associate Professor

128, Nalbandyan Street

E-mail: ruzanworld@gmail.com

The article has been delivered on 15.01.2021, reviewed on 10.02.2021, accepted for publication on 05.07.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.2-173

Introduction

The given work aims at continuing a series of articles on linguistic topics currently focusing on the phenomenon of homonymy to show differences of meanings in homonymous pairs of business English words, types of homonyms and their differences and, finally, making an attempt of differentiating between the two confusing phenomena such as polysemy and homonymy.

Comprehension of the meaning of homonymous words we come across in Business English helps us avoid some of the misinterpretations of language realities and better acquisition of the language and the precise distinction of polysemic and homonymous words contributes to the building of proper business English vocabulary.

The Purpose of Learning Homonyms for Business Students

An absolute conviction exists among all linguists concerning the importance of giving special attention to homonymous pairs in learning general and business English words that arises from the necessity to differentiate their meanings to avoid confusing situations. The point is that ¹English is not only the most widely spoken language in the world, but also most widely accepted written language, which means that all official and business documentation is done in English.

Therefore, the use of precise, accurate and error-free language is very important. Recognition of homonymous pairs, in particular, homographs, is possible only on a contextual basis or in word combinations, otherwise, viewed separately, they can't be informative as they have the same graphical form.

So, which words do we call **homonyms**? These are words which are **spelled or pronounced similarly**. Homonyms usually take **two forms**; those with phonological similarity are called **homophones** and the ones with similarity of graphical form are called **homographs**. Examples of homophones are write/right, site/sight, wait/weight, etc. Examples of homographs are lead /li:d/ (of a dog), and lead /led/(on the roof) or tear /tiə/ on the eyes and tear /teə/ on the shirt. There are some homonyms which are

¹ <https://www.netscribes.com>, p. 1 downloaded June, 29.

simultaneously **homophonic and homographic**. For example, mail (armour) and mail (post), minute (unit of time) and minute (of agenda) mean (having the meaning of smth) and mean (being not generous, unkind).

The analysis shows that although a considerable number of the **latter form** of homonyms can be found in **business English** terms, they can also be found in non-business context. Examples are **settle** (repay) a debt, settle (inhabit) on the shore of the island; **commision** (payment to the middleman) – commission (a group of officials chosen for a certain responsibility, e.g. European Commission), **exchange** (a place where financial instruments can be bought or sold) – exchange (changing one thing for another), **outlet** (point of purchase, shop) – outlet (pipe through which water can come out), **pool** (common fund of money) – pool (a small area of still water), **average** (accident on the water) – average (middle, ordinary) income, person. Examples of non-business homonymous pairs are **blind** (window shade, a screen for a window) – **blind** (unable to see), peer (person equal in a status or age) – peer (In the U.K., member in the House of lords).

Still another analysis proves that **homophonic pairs** can be frequently seen in English and **business English**. Here are the examples: **compliment** (expression of admiration) – **complement** (supplement, complete something); **ensure** (assure, make believe) – **insure** (obtain insurance), **incite** (urge) – **insight** (deep perception and understanding, e.g. of consumers), **accede** (agree) – **exceed** (be greater than); e.g. demand for money often **exceeds** its supply; **differ** (be different) – **defer** (postpone), e.g. **deferred** (payment, taxes), **principal** (an important person) – **principle** (fundamental doctrine), e.g. international accounting **principles**, **pore** (tiny openings on the skin) – **pour** (flow of capital) etc. Homophonic words can be often met in common words as well. Let's consider some of them; **blew** – **blue**, **by** – **buy** – **bye**, **cent** – **sent**, **flower** – **flour**, **cheep** – **cheap**, **current** – **currant**, **die** – **dye**, **fair** – **fare**, **for** – **four**, **guessed** – **guest**, **new** – **knew**, **hole** – **whole**, **due** – **dew**, **here** – **hear**, **our** – **hour**, **bare** (without clothing) – **bear** (wild animal) etc.

According to the following observation the availability of pure homographs is less frequently found. Here are some more examples we would like to show to a reader:

Sewer /su:ər/ meaning **draining** and **sewer**/səuər/ meaning someone who sews, **wound** /wəʊnd/ (past tense of wind) – wound /wu:nd/, meaning injury, or **wind**/wɪnd/, direction of the air and wind/wəɪnd/, which means twisting something, e. g. a wool ball, or **desert**/dɪ'zɜ:t/, meaning to leave smb., smth. to abandon, and desert/'dezət/, like a large area of land with almost no water.

What becomes more difficult for linguists is to² distinguish between **polysemy** and **homonymy**.

² Finch 2005, 151.

Polysemy is a sense relation of a lexeme or word in which a lexeme acquires more than one meaning, as distinct from homonymy, in which two lexemes have either the same sound or the same written form.

At a theoretical level, the distinction is quite clear in that homonyms are separate lexical items and the relationship between the words is purely accidental, not logical. Therefore, words are totally unrelated. e.g. **Crane**, a machine to lift heavy things and **crane**, a large bird, **Consonant**, phonetic symbol, and **consonant**, corresponding, being in harmony with smth; e.g. *She is consonant with her social position*, **Credit**, meaning appraisal and respect, e.g. why not give him credit for such a scrupulous work, and credit like a bank **credit**, buying smth. on **credit**.

In the case of polysemy, however, we are dealing with a single lexical item that has acquired more than one sense. In practice, however, the distinction is often difficult to make. It seems first that the most direct solution is to take the word *origin* or *etymology* as the principal criterion, but that will also lead us to confusing decisions. **Apple** (fruit) and *apple in the idiom the **apple** of the eye (the most beloved person)* or **pupil** (student at school) and **pupil** (the centre of the eye). A similar problem exists with the word **sole** as a fish and **sole** as part of a shoe. These words have a common origin and, therefore, are polysemic by etymology. We can see some logical similarities between apple as an important favorite fruit and apple as a loved person, and pupil as the centre of educational process and pupil as the centre of the eye, however, not all of them can be observed to have some logical sense similarities as was the case with sole and credit. Therefore, we can state that when most of the senses are unrelated, people will classify them as separate lexical items, therefore, homonyms.

It likely appears that a more useful approach is to look for a **common core** of meaning existing between senses for the recognition of polysemic words and set aside the matter of etymology.

The term³ **flight** can have the following meanings 1. the power of flying 2. an air journey 3. an air craft making such a journey 4. a series of steps 5. digression in the sense of fleeing, running away 6. a unit of the air force.

Words capable of acquiring more than one meaning are **polysemic**, opposed to those that can have only one meaning called **monosemic**. Let's consider some frequently used polysemic terms in Business English. e.g. **Consolidate (join, unite) accounts – consolidate (make strong), break (annul) a contract – break a vase, peddle**, sell goods house to house and **peddle**, spread news or smth. else all over, **grapevine**, grapes growing on the vine and **grapevine**, an informal communication means for spreading rumours, **gearing**, movement of device, mechanism, directing smth, **gearing**, proportion of the company's borrowed capital to its own capital.

³ Hornby 1998, 447.

The word **account** means first, a description or analysis of something, I gave a detailed account on the robbery in my house to the police. In a business context **account** is an **arrangement** with a bank to leave money there and a written **financial statement** with the money paid or owed. **Account** also means **consider**, and to **account for smth.** is equal to **explain the cause of smth**, **consider smth.** for example, *Please account for your disrespectful attitude towards the committee members.*

An Idiom **on account of smth.** is explained **because of smth**, for the reason of smth. *We delayed our flight on account of terrible weather.* A commonly used phrase is *take into account* which means consider the importance of smth, for example, *you must take his physical state into account when you give him such a task*

Another business term is **premium**⁴. Premium in **insurance** business means regular payment by a customer to an insurance company, additional payment to the regular one, **in branding** it is high quality brand, **premium pricing** is above the average price for smth valuable, e.g. for CD Rome attached to the book, and **in marketing** premium is a free good given to a customer to promote sales. The term **stock** is also polysemic, first of all it implies **supply of goods** available, e.g. fuel stocks will be running very low in winter, **a storehouse of goods** available for sale, e.g. the shop has a big stock of microcomputers, **amount of securities** bought and sold at the stock exchange, e.g. the prices on our stocks are skyrocketing, and *farm animals* such as **livestock**.

Policy assumes insurance policy, a **document** stating the terms and conditions of an insurance transaction, as well as **a plan, a direction** of actions taken by government or a business.

Provision is an **item or article** in a contract or agreement, in accounting terms, it means **reserve funds** for taxes.

One of the examples of polysemic terms is the term **bill**. First of all, it is the **statement of money for home services**, water/telephone/gas/ bills and so on, a proposed **draft** to the new law **presented to the parliament**, a **banknote** in the US and in some specific phrasal terms such as **bill of exchange** - *an order to pay money* to a named person, **bill of lading**, transport document listing the details of a cargo etc. Another example is **market** as a consumer and **market** as a shop.

Conclusions

In conclusion to this analysis we can say that all the terms considered have more or less a common core of the meanings for polysemic words. As in the case with **flight**

⁴ Farrall, Lindsley 2009, 6.

the common core of all the meanings is direction upwards, to the heights, to the sky, or running away from somewhere.

In **account** the core meaning of all lexemes is the ability to count figures, indicators, or present them in some documents, describe and analyze them. The word **premium** also proves this assumed theory of the core meaning, proposing smth. above the average, smth more, smth. of higher quality.

The list of polysemic words can be, certainly, continued but, assumably, the number of the examined words is enough to say that the best approach to understand whether we come across polysemy and not homonymy lies in finding the core meaning of all the words and not in their origin or etymology.

Although it requires quite an extended time and efforts to make distinction between the categories of homonymous words, from linguistic viewpoint it makes sense and it pays since deeper penetration into the essence, to a great extent, improves the comprehension and proper knowledge of such words in English and Business English context by penetrating into the slightest details of each of the word to bring the acquired lexics to a relatively possible perfection.

Literature

- Бизнес 1990, Оксфордский толковый словарь: англо-русский, Москва, «Прогресс Академия», 747 с.
- Frendo E., Mahoney S. 2016, English for Accounting, Oxford University Press, 64 p.
- Farral C., Lindsley M. 2009, Marketing, Cambridge University Press, 144 p.
- Finch G. 2005, Key Concepts in Language and Linguistics, London, Palgrave Macmillan, second edition, 249 p.
- Helm S. 2010, Market Leader Accounting and Finance, England, Pearson Longman, 96 p.
- Hornby A.S. 1998, Oxford Advanced Learner's Dictionary of Current English, Oxford University Press, Fifth Edition, 1426 p.
- Grigoryan Kh., Grigoryan Z. 2010, English-Armenian Contemporary Dictionary, Yerevan, Ankyunakar publishing, 1126 p.

ՀԱՄԱՆՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Ռուզաննա Խոստիկյան

Ամփոփում

Անգլերենում, մասնավորապես գործարար լեզվի փաստաթղթագրության մեջ հանդիպող համանուն բառերի ոչ ճշգրիտ իմացությունը, հետևաբար նաև համապատասխան ճիշտ տարբերակման բացակայությունը հանգեցնում են սխալ բառընկալմանը և աղավաղում ընդհանուր իմաստը: Նման իրողությունից խուսափելու համար, կարծում ենք, նախ, անհրաժեշտ է ուսուցանողին սովորեցնել համանուն բառերի և դրանց համահնչյուն և համապատկեր տեսակների հստակ բաղիմաստները՝ հենվելով վերջիններիս հնչյունաբանական և ձևային առանձնահատկությունների վրա: Սա թույլ կտա ոչ միայն խուսափել շփոթեցնող լեզվական իրողություններից, ընկալումներից, այլև համանուն բառազույգերի

հստակ տարբերակումը կնպաստի ընդհանուր և գործարար լեզվի խորքային ու բազմաշերտ իմացությանը և կատարելագործմանը: Ելնելով լեզվաբանների վերջին ուսումնասիրություններից՝ առաջարկում ենք բազմիմաստ և համանուն բառերի տարբերակման ամենաարդյունավետ եղանակը՝ հիմք ընդունելով առանցքային իմաստը և ոչ թե ստուգաբանությունը:

Բանալի բառեր՝ համանունաբանություն, համահնչյուն բառ, համապատկեր բառ, բազմիմաստություն, մենիմաստություն, առանցքային իմաստ:

ЗНАЧИМОСТЬ ОМОНИМИИ В ДЕЛОВОМ АНГЛИЙСКОМ

Рузанна Хостикиан

Резюме

В английском языке, в особенности в деловой письменной документации, можно встретить случаи нечеткой дифференциации значений омонимичных слов, что может привести к искажению смысла, раздвоению или двусмысленности этих слов, что также меняет контекст устной и письменной речи. Письменная документация требует самой четкой дифференциации значения слов. Следует уделять особое внимание обучению студентов точным значениям омонимичных пар, дифференцируя их по типу омофонов и омографов с учетом фонетических и графических особенностей. Это позволит не только доступным образом дифференцировать значения омонимичных слов, но и будет способствовать глубокому и многогранному усвоению и усовершенствованию общей и деловой лексики английского языка. Помимо этого, согласно последним исследованиям лингвистов, наиболее эффективен способ дифференциации омонимов и полисемантичных слов на основе учета их ключевого значения.

Ключевые слова – омонимия, омофон, омограф, полисемия, моносемия, ключевой смысл.

SIGNIFICANCE OF HOMONYMY IN BUSINESS ENGLISH

Ruzanna Khostikyan

Abstract

English homonyms found in oral and written speech and, in particular, in business documentation can lead to misunderstandings and confusions of language realities due to the lack of precise knowledge and ability of differentiation of the core meanings of homonyms and their types. Homophones can create difficulties of understanding because of the similarity of pronunciation and homographs cause difficulties due to the similarities in the graphical form. The author suggests paying special attention to the understanding of meanings of homonymous words and their precise differentiation to avoid misleading situations. The phenomenon of polysemy is also presented in the article and the way of differentiation of polysemic words from homonyms is explained on the basis of their core meaning rather than the etymology of these words.

Key words – homonymy, homophone, homograph, polysemy, monosemy, core meaning.

ՄԻՋՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԱՐԵՎԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Լուսինե Հայրիյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ hayriyan.1976@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 27.05.2021, գրախոսվել է 15.06.2021, ընդունվել է տպագրության 05.07.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.2-179

Ներածություն

Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունները եղել և մնում են հայ բանասիրության ուշադրության կենտրոնում: Լույս են տեսել մեծաթիվ և մեծաթեք աշխատություններ, հոդվածներ, որոնք հիմնավոր կովան են հանդիսացել իսահակյանագիտության զարգացման գործում, սակայն բանագետ-բանահավաք Իսահակյանը հաճախ մնացել է սովերում: Հարուստ ու բազմակողմանի են հանճարեղ բանաստեղծի կապերն ու առնչությունները բանահյուսության հետ, որոնց արժեքավոր մենագրություններով անդրադարձել են Ա. Ղանալանյանը¹, Հ. Աբեղյանը² և ուրիշներ:

Դեռևս մանկության օրերին Իսահակյանի երևակայությունը թանավորվել է «դարերի խորքից եկող բանաստեղծական ֆոլկլորով»³: Նա ջերմությամբ է հիշում «անուշ տատիկներից» լսած «հոգի կախարդող հեքիաթներն» ու «փորձաշատ պապիկների» զրույցները, նրանց խոսքն ու առածը, «թափառական գուսանների և գյուղացի աղջիկների» «չքնաղ տաղերն ու խաղերը, մեր մելոսը՝ սրտահույզ երգերը», ինչպես նշում է բանաստեղծը՝ «Մեր հնադարյան, խորիմաստ ֆոլկլորը», որին ինքը երախտապարտ էր⁴:

Բանաստեղծը տարերայնորեն չի օգտվել բանահյուսական երկացանկից, այլ բանահավաք-բանագետի հետևողականությամբ ուսումնասիրել, գրի է առել նոր նյութեր, հայտնի նյութերի անհայտ տարբերակներ: Ընդգծենք պատմագագարական տարբեր շրջաններից գրառված բանահյուսական նմուշների ծաղկաքաղը, որը հրապարակվել է «Ազգագրական հանդեսում»՝ «Փշրանքներ ժողովրդական բանահիստությունից» խորագրով⁵:

¹ Ղանալանյան 1955:

² Աբեղյան 1975:

³ Իսահակյան 1951, 89:

⁴ Իսահակյան 1951, 168:

⁵ Իսահակյան 1904 104-108:

Իսահակյանին ծանոթ էին հայոց ազգային դյուցազնավեպի ժամանակին հրապարակված բոլոր պատումներն ու նույնիսկ բանագետներին անհայտ որոշ տարբերակներ: Վարպետն անթաքույց ակոսասանքով է Մ. Աբեղյանին հայտնում էպոսի տարբերակներից մեկի մասին, որ գրի չէր առել. «Բասենում լսած «Դավիթ և Միերի» վարիանտը Կովկաս գնալուս գտնեմ այն մարդին և գրի առնեմ. դա իմ կյանքի մեծ սխալներից մեկն է, որ ծովացա առիթից օգտվել. այդ վարիանտը սքանչելի էր. Միերը պիտի ելնի և ռամկությունը աշխարհ բերե»⁶: Այդ մասին է վկայում նաև Մ. Աբեղյանը «Ազգագրական հանդեսում». «Մինչև այժմ Սասունի պատմուածք չունինք. Պ. Ա. Իսահակեանը 1901 թ. յայտնեց, որ Կաղզուանում ապրում է մի ծերունի Սասունցի, որ իրեն համարում է Միերի սերունդ, Միերենց տնից, և գիտէ վէպը: Եթէ այդ ծերունին մինչև այժմ չի մեռած, յարմարութիւն ունեցողը պէտք է աշխատէ գրել»⁷:

Էպոսի մի հատված էլ վարպետը գրի է առել 1902 թ. Արմուտլի գյուղում (Կարսի նահանգի Բասեն գավառ) մշեցի որմնադիր 45-ամյա Փալաբեղ Ուստա Մանուկից (տարբերակն ամբողջական չի փոխանցվել)⁸:

«Ժողովրդի բանաստեղծն ու ժողովրդական բանահյուսությունը» հոդվածում Արամ Ղանալանյանն առանձնացնում է նաև բանավոր ավանդության բազմաժանր նյութերի գործածության մի քանի ուղիներ, որոնց հետևել է Իսահակյանը. *ա. բանահյուսության ազդեցությունը կրող ստեղծագործություններ ու ժողովրդական արտահայտչամիջոցներ, ժողովրդական ոճով ստեղծված առած-ասացվածքներ, բ. ասոյթաբանության կիրառություն, գ. բանահյուսական ամբողջական երկերի կամ առանձին դիպաշարերի և մոտիվների մշակում*⁹:

Արևի հնագույն ընկալումներն Իսահակյանի հետազոտական դիտակետում

«Սասունցի կոլտնտեսականների մոտ» հոդվածում Իսահակյանը պատմում է իր ամառային մեկուկեսամսյա շրջագայության, Թալինում ապրող սասունցիներին հյուրընկալվելու և ժողովրդագիտական հարուստ ու ինքնատիպ նյութեր գրառելու մասին. «...Ընդհուպ ծանոթացա կոլտնտեսականների հետ, նրանց աշխատանքի և կենցաղի հետ, մոտիկից ճանաչելով հինավուրց ժողովրդի այս թանկագին մնացորդներին՝ սիրեցի նրանց. հավաքեցի էթնոգրաֆիկ և ֆոլկլորային շատ նյութեր, և շնորհակալ լինելով իմ սիրելի հյուրընկալներից, գոհ բաժանվեցի նրանցից¹⁰»: Ծոցատետրի մի գրառումով էլ բանահավաքն արժեքավոր տեղեկություններ է փոխանցում սասունցիների հավատալիքների և արևապաշտության վերապրումների մասին. «Սասունցիների մեջ ամենամեծ երդումը արևն է: Երբ երդում ուտողը զանազան երդումներ է անում, սրբի, աստծո՝ չեն հավա-

⁶ Աբեղյան 1975, 52:

⁷ Աբեղյան 1906, 18:

⁸ Աբեղյան 1975, 53

⁹ Ղանալանյան 1945, 3:

¹⁰ Իսահակյան 1977, 362-363:

տում. երբ ասում է «էն արևը, կամ էն արևը վկա», այն ժամանակ այլևս չհավատալ չի կարելի, դրանից դուրս, բարձր էլ երդում չկա¹¹»: Հավատալիք, որը, թերևս աղերսվում է Միհրի պաշտամունքին. հնդիրանական միթոսայի՝ արևի, դաշինքի, ուխտի և բարեկամության աստվածությանը¹²: Նկատենք, որ «արևով» բաղադրվող երդումները պատմաագագրական տարբեր շրջաններում առ այսօր ունեն կիրառության լայն շրջանակ: Երդումը հմայական-կիրառական բանահյուսության նախնական կարևոր տեսակներից է, որ տարածված է եղել աշխարհի բոլոր ժողովուրդների կենցաղում ու հանդես է գալիս ժողովրդական կյանքի տարբեր բնագավառներում: Բոլոր ժամանակներում էլ երդվողը վկայակոչել է աստծուն, սրբերին, նվիրական անձանց, սուրբ ընկալվող երևույթներն ու առարկաները (արև, ճրագ, լույս, օջախ, Ավետարան, Խաչ, հաց և այլն)՝ ապացուցելու համար իր ճշմարտացիությունն ու հավատարմությունը՝ հավատալով երդման հմայական գերբնական զորությանն ու դրա իրագործմանը: Երդմանաբանադրական ժանրերը կենցաղավարում են ցայսօր¹³՝ «արևով» բաղադրվող մեծաքանակ անեծքներով, օրհնանքներով, երդում-բարենադեմքներով (*«Արևդ խըվարի»*, *«Արևդ թաղեն»*, *«Թաղեն գլուխդ ու արևդ»*, *«Մեռնի քու արևը»*, *«Քու արևու թել կտրի»*, *«Քու արևուց զրկվիս»*, *«Այս բժիկ (լուսավոր) արևը վկա»*, *«Իմ արև, քու արև»*, *«Յերկէն արև էղնիս»*, *«Ապրի քու արև»*, *«Կանաչ-կտրիճ արև»*, *«արևիդ դուրբան»*, *«գլխուդ ու արևիդ մեռնիս»*, *«Իմ տղի արև մեռնի, թե...»* և այլն):

Քիչ չեն նաև անեծք պարունակող և արևով հարադրվող աստվաբաբելական, ուրարտական, հեթիթական սեպագիր արձանագրությունները, բարի ու չար ցանկության խոսքերը, որոնք կիրառվել են հմայագործական նպատակներով: Արձանագրային անեծքները հեղինակում էին Մենուա, Մենուայի որդի Արգիշտի, Սարգուրի երկրորդ արքաները՝ սպառնալով վնասատուին ոչնչացնել արևի տակից՝ Խալդի, Թեյշեբա, Շիվինի աստվածների անբեկանելի պատժով¹⁴: Այս առումով տեղին է հիշել նաև բաբելական «Ներբող արևին» փառաբանական արձանագրությունը: Արև-աստծո գովքը հանդիսացող, ձոներգային բնույթի մի ստեղծագործություն, որն Իսահակյանը թարգմանել է 1908 թ-ին¹⁵:

¹¹ Արեդյան 1975, 22:

¹² Արևի պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում հարատևել է հազարամյակներ, որի նյութեղեն վկայություններն են ժայռապատկերներն ու հուշարձանները, վաղ երկաթե դարի և բրոնզեդարյան դամբարաններից հայտնաբերված հնագիտական նյութերը, ծիսական կիրառություն ունեցող խեցեգործական առարկաները: Արևի պաշտամունքի խոստում վկան է մեր բանավոր մշակութային ժառանգությունը: Այսպիսով՝ մեզ փոխանցված նյութական մշակույթի մնացորդները, հայ ժողովրդական բանահյուսության ու ազգագրության հարուստ տվյալները հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմելու Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների հնագույն հավատալիքների և, առանձնապես, արևի պաշտամունքի մասին: Հներն արևին վերագրել են արարչական զորություն՝ օժտելով կենսահաստատ զորության, զարթոնքի, պտղաբերության և ամենայն բարիքներ ստեղծողի գործառույթներով (այս մասին մանրամասն տես Հարությունյան 2001, 38):

¹³ Ղուեջյան 2017, 27-29:

¹⁴ Հարությունյան 1975, 25-40:

¹⁵ Իսահակյան 1974, 282:

Արևին ուղղված գովաբանական ծոներգեր են հիշեցնում նաև «Աբու-Լալա Մահարի» պոեմի որոշ հատվածներ.

... Դու աստծուց հզոր, դու կյանքի աղբյուր,
դու իմ անմահ մայր, մայրական դու գիրկ,
դու միակ բարի, դու միակ սուրբ, սուրբ¹⁶:

Հայկական լեռնաշխարհի բնակիչների համար արևը եղել է կենսափոխ-
տոփայության առանցքներից մեկը, որն առանցքային նշանակություն է ստացել
նաև Ավետիք Իսահակյանի որոշ ստեղծագործություններում:

Արևն ուրույն դրսևորում է ունեցել հայոց կրոնա-պաշտամունքային հնագույն
համակարգում՝ իր կենդանակերպ և մարդակերպ (անտրոպոմորֆ) անձնավո-
րումներով (արևը պատկերացվել է կտուցին օղ բռնած թռչունի կամ զույգ թռչուն-
ների, առյուծի, Հրեղեն աղջկա, մանկան կամ պատանու (արևամանուկ), աչքի,
թանկարժեք քարի, լուսացայտ անիվի և այլ կերպավորումներով¹⁷): Արևի առյու-
ծակերպ պատկերացումը շաղկապված է եղել երկնային լույսի և արեգակնային
աստվածություն՝ «առյուծ արև-շիր խորշիդ» Միհրին: Հայկական լեռնաշխարհում
ծիրերը հնուց ի վեր կապված են համարվել արևի հետ¹⁸: Ձին ուրարտական արևի
աստված Շիվինի խորհրդանիշն էր¹⁹: Ըստ Ստրաբոնի՝ Արմենիայի սատրապը
պարսից արքային (Աքեմենյան տիրապետության շրջանում) տարեկան 20 հա-
զար մտրուկ էր ուղարկում միհրական տոների համար: Քսենոփոնի վկայությամբ՝
արևին ձիեր էին զոհաբերում նաև Հայաստանում: Վաղարշակ թագավորը
«...Արմավիրում մեհյան շինելով արծաններ²⁰ է կանգնեցնում արեգակին, լուսին
և իր նախնիներին», - վկայում է Խորենացին²¹:

Հայոց մեջ արևի պաշտամունքը պահպանվել է նաև քրիստոնեական
շրջանում. արևապաշտության նկարագիր է տալիս, օրինակ, Վ դ. հեղինակ Եզնիկ
Կողբացին. «Եւ այնու կենդանութեամբ, ասեն, ամենայն արարածք զնորա բնու-
թենէն կախեալ կան, որպէս ճառագայթք արեգական զանուէն կախեալ կան: Եւ
ինքն մի է և բազում, և բազում է և մի. որպէս արեգակն մի է և բազում, զի մի
անիւ է և բազում ճառագայթք»²²: Մեծ կենսափորձ ունեցող Իսահակյանը նույն-
պես կյանքն իմաստավորում է «ԱՐԵՎ, ՍԵՐ, ՓԱՌՔ, ՊԱՐ, ԵՐԳ, ԿԻՆ» մեծությո-
ւուններով: «Պեսիմիզմն ու վիշտը» «թույն» համարելով՝ կենսասեր բանաստեղծը
«բյուր անեծք» է տալիս նրանց, «ովքեր վիշտ են երգում»: Կոչում է լարել քնար-
ները (սագերը) և երգել ի փառս Արևի, Սիրո, Փառքի, Պարի, Երգի, Կնոջ և,

¹⁶ Իսահակյան 1974, 75:

¹⁷ Հարությունյան 2018, 43-50:

¹⁸ Սկանդինավյան հավատալիքներում արևը ներկայանում է ձիու կերպավորումով, «Ռիգվեդայում»
աստվածային Էտաշա ձին արևի տեսք ունի, կելտերի և սլավոնների համար ձին արևի խորհրդանիշ
է, իսկ հին հնդկական և լիտվական դիցարաններում ձին արարվում է արևից:

¹⁹ Հմայակյան 1990, 45:

²⁰ Արծան-կոթող, զոհասյուն:

²¹ Եգանյան 2020, 9-14:

²² Եզնիկայ վարդապետի Կողբացոյ 1914, 142:

իհարկե, Կյանքի²³: Հաճախ նույնանում է արևի հետ, ձգտում դեպի արևը՝ համարելով այն կյանքի գոյության խորհրդանիշ, բնության զորեղ երևույթներից. «...ուզում եմ ես միայն բարձր արև լինել... թող մարդիկ բարի, ազնիվ, համեստ ու անուշ ծաղիկներ լինեն: Ես՝ հերոս՝ արև»²⁴, «Ես վազում եմ դեպի լույսը - արևը, որ ստվերս իմ հետևից գա, իմ հետևից գաք դո՛ւք, մարդիկ»²⁵, - նկատում է խոհագրողը «Հիշատակարանի» էջերում:

Նույն կերպ է վարվում Իսահակյանի «Արևի մոտ» (1905) հեքիաթ-նովելի փոքրիկ հերոսը՝ երջանկություն փնտրելով անկարեկից մարդկանցից հեռու՝ արևի մոտ: Ի դեպ, այս հուզիչ ստեղծագործության հիմքում ժողովրդական հեքիաթների «որբ երեխայի ճամփորդությունը դեպի արևը» մոտիվն է²⁶:

Իսահակյանը դեպի զորեղ Լուսատուն՝ երջանկության, ազատության ու լուսավոր ապագայի խորհրդանիշն է տանում նաև իր լավագույն պոեմներից մեկի ազատաբաղձ հերոսին՝ Աբու-Լալա Մահարուն, որը, ինչպես ընդգծում է Ավիկ Իսահակյանը, «հեղինակի փիլիսոփայական սուբստանցիայի արտահայտիչը, նրա երևակայության և իդեալների մարմնավորումը»²⁷ դարձավ. «...Դեպի արևը դարեր ու դարեր թռի՛ր, սլացի՛ր, ազնիվ քարավան, Նրա լուսեղեն, բոցեղեն գրկում, որ արևանամ և հավերժանամ»²⁸:

Արև է տենչում Աբու Մահարին, արևի մոտ է շտապում հեքիաթի հերոսը: Մահարին մղվում է դեպի արևը՝ իր մեջ կաղապարող երջանկության և ազատության կիզակետը, խորհրդանիշը այն իդեալիստական պատկերացումների, որ փափագում էր իր հոգում²⁹: Արևը երջանկության, լուսավոր կյանքի, անիրականալի հույսերի մարմնացումն է նաև հեքիաթային հերոսի համար, սակայն, եթե պոեմում այն «ազատության հոմանիշն է»³⁰, հեքիաթում, անշուշտ, *գթառուարության* խորհրդանշական կերպավորումը:

Բացառիկ է *արև* խորհրդապատկերի առկայությունը Իսահակյանի ստեղծագործության համակարգում: Բանաստեղծական հայացքի ընդգրկունությունն Իսահակյանի ստեղծագործություններում պայմանավորված է արևի և այլ խորհրդանիշների կիրարկությամբ, որոնք, ինչպես տեսանք, կարևոր նշանակություն են ունեցել ժողովրդական հավատալիքային համալիրում: Բերենք մի խոսուն օրինակ «Աբու-Լալա Մահարի» պոեմից, որտեղ ակնարկվում է առյուծ-արև կապը՝ արևի հնագույն առյուծակերպ ընկալումը.

Շեմս-արևն ելավ՝ շքեղ, լուսավառ...

²³ Իսահակյան 1977, 273:

²⁴ Իսահակյան 1977, 170:

²⁵ Իսահակյան 1977, 185:

²⁶ Տե՛ս Ղանալանյան 1955, 50-51:

²⁷ Իսահակյան 2007, 141:

²⁸ Իսահակյան 1974, 76:

²⁹ Իսահակյան 2007, 156:

³⁰ Իսահակյան 2007, 156:

Վառ-վառ հորհրաց, ինչպես տիտանյան հսկա առյուծի ոսկեփառ մորթի³¹:

Միհր-Մհերի կերպարը Ավետիք Իսահակյանի բանագիտական հայացքներում

Ստեղծագործական երկարատև կյանքի ընթացքում Իսահակյանը հրատարակել է հրապարակախոսական, գիտաբանասիրական հոդվածներ և ուսումնասիրություններ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի հետաքրքիր ու արժեքավոր է, քանզի հեղինակն աչքի էր ընկնում ընդգծված տեսական մտածողությամբ: Այս շարքում առանձնանում են հատկապես «Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին³²» ու կարելի է ֆինանսական ազգային էպոս «Կալևալայի» հարյուրամյակին նվիրված գիտաբանասիրական արժեքավոր հոդված-ուսումնասիրությունները³³: «Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին» հոդվածով բացահայտվում են մեր և մյուս էպոսների ընդհանրությունները, մեր ազգային վեպի նշանակությունը համաշխարհային էպիկական ժառանգության մեջ: Այն արժեքավոր ավանդ է «Սասնա ծռերի» ուսումնասիրության հարընթացում: Եվ դա միանգամայն բնական է, քանի որ Իսահակյանը քաջածանոթ էր հայ և համաշխարհային բանավետստին (հնդկական, չինական, պարսկական, արաբական, հրեական, քրդական, սերբական, ռուսական, ֆրանսիական, գերմանական և ֆիննական բանահյուսություններին)³⁴:

Ինչպես Դ. Դեմիրճյանն է վկայում՝ դեռևս «Մանուկ Հայաստանը և Դև-Սուլթանը» կամ «Մասսա Մանուկ» վիպագրի (1890-ական թվականների երկրորդ կես) արարման գործընթացն ուղեկցվում էր հետազոտական պրպտումներով. «Նա կամենում էր գտնել «գրական» ինքնաստեղծ էպոսի համար մի նոր ոճ ու ձև: Նա կամենում էր ընդգրկել բոլոր էպոսների ձևերը և գտնել նրանց սինթեզը: Եվ անհագուրդ, անդուլ կարողում էր, կրկին ձեռքի տակ եղած նյութերը, անհանգիստ որոնում: Ահա այդ պրոցեսը, այդ երկար որոնումները, երկար ջանքերը հիմք դնելու մի նոր չեղած բանի, ստեղծել մոնումենտալ մի գործ, նվիրել դրան թեկուզ ամբողջ կյանքը - դա հիմնական գիծն է Ավետիք Իսահակյանի³⁵:

Բանագետի խորատեսությամբ՝ հոդվածագիրն ընդգծում է «մեծ բանաստեղծ» հայ ժողովրդի տաղանդը, շնորհիվ որի, «խորտակելով ժամանակագրական և աշխարհագրական բոլոր սահմանները, իր ստեղծագործական քուրայի մեջ լցրել է իր հին ու նոր աստվածներին, իր հին ու նոր հավատալիքները, իր հին ու նոր հերոսներին, իր հին ու նոր պատմական հուշերը, նաև էպիկական

³¹ Իսահակյան 1974, 75:

³² Գրել է 1939 թ. «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակի տոնակատարության առիթով: Կարդացել է Գ. Սունդուկյանի անվան թատրոնում՝ ՍՍՀՄ Գրողների միության վարչության պլենումում, 1939 թ. սեպտեմբերի 16-ին: Հրապարակվել է նույն օրերին (այս մասին մանրամասն տե՛ս Իսահակյան 1977, 420):

³³ Իսահակյան 1977, 262:

³⁴ Տե՛ս Ղանալանյան 1986, 201:

³⁵ Դեմիրճյան 1963, 201-202:

ընդհանուր մոտիվները և ազգային առանձնահատուկ առասպելները և խառնել է բոլորը ի մի ու ծուլել է նրանցից իր հանճարեղ պատմությունը...³⁶։ Շեշտում և արժևորում է մեր վեպի ուրույն հատկանիշներից մեկը՝ գրական մշակումների, միջամտությունների չենթարկվելու առանձնահատկությունը, որը չի կարելի պնդել «Շահ-Նամեի», «Նիբելունգների երգի» կամ հունական «Իլիական» էպոսի մասին. «Մեր վեպը, այսպիսով, բացառապես ժողովրդական ստեղծագործության արդյունք է։ Այս տեսակետից եզակի նշանակություն ունի նա և ուսումնասիրությունների համար՝ անչափելի արժեք»³⁷։ Գնահատելով դյուցազնավեպի անադարտությունը՝ հողվածագիրն ընդունում է այն իբրև հետազոտական հարուստ փաստանյութ, առանձնացնում վեպի հնամենի՝ առասպելաբանական, տոտեմական, անիմիստական աշխարհըմբռնման, տիեզերական ուժերի և բնության աստվածացման (անձնավորման) հետքերը, հատկանշում առասպելական մտածողության առանձնահատկությունները³⁸։ «Կալևալայի» հարյուրամյակին նվիրված հողվածում հեղինակը դարձյալ կարևորում է ժողովրդագիտության համար հետազոտական սկզբնաղբյուր հանդիսացող էպոսի դիցաբանական տարրերը՝ աշխարհաստեղծման առասպելները, աստվածների մասին դիցաբանական ուշագրավ տեղեկություններն ու համաշխարհային վեպերի թափառաշրջիկ նյութերը։

Մեր վեպի գրեթե բոլոր ուսումնասիրողները այս կամ այն կերպ անդրադարձել են պատմումների առասպելական և պատմական հիմքերին։ Իսահակյանն էլ, քննելով էպոսի դիցաբանական խորքը, ընդգծում է համաշխարհային մի շարք էպիկական հերոսների (Գիլգամեշ՝ Իշտար աստվածուհու դուստր, Ջիզֆրիդ՝ Վոթան աստծու թոռ, Ամարան՝ Խոսյաու աստծո ազգական, Ողուղ՝ աստվածուհի լուսնյակ և այլն) աստվածային ծագումը, շեշտում Սանասարի աստվածային տարրերի ուժը՝ համարելով ամպրոպային դյուցազն ու հրեղեն, խոսում Միերի թեոգենիկ ծագման շուրջ՝ մակաբերելով Միեր-Միիր փոխառնչության արմատները³⁹։

«Սասնա Շուեր» հերոսավեպի տիպաբանական բոլոր խմբերի պատմումներում վիպվում են հերոսների դյուցազնական արարքները, որոնք կերպավորվել են հիմնականում երեք հնավանդ առասպելների հիման վրա։ Հերոսավեպի սյուժեային հիմքն են կազմում սրբազան երկվորյակների, ամպրոպային աստծո կամ դյուցազնի, Միիր կամ Միթրա աստծո առասպելական սյուժեները, որոնք հարակցվել են միմյանց թեմաների ընդհանրությամբ, վիպական վերամշակմամբ և պարմական ավանդությունների հետ սերտաճմամբ⁴⁰։ Ուսումնասիրության համատեքստում Իսահակյանն անդրադարձել է վեպի վերոհիշյալ հիմնաքարային երկու՝ ամպրոպային աստծո կամ դյուցազնի և Միիր կամ Միթրա աստծո առասպելական դիպաշարերին։ Միանգամայն բնական է, որ ազգային էպոսի դի-

³⁶ Իսահակյան 1977, 157:

³⁷ Իսահակյան 1977, 156:

³⁸ Տե՛ս Իսահակյան 1939, 28-29:

³⁹ Տե՛ս Իսահակյան 1939, 29, 32-38:

⁴⁰ Տե՛ս Հարությունյան 2010, 76:

ցաբանական հենքն ուսումնասիրող Իսահակյանը հիմնականում կենտրոնանում է Միերի կերպարի վրա, քանի որ մեր վիպական բանահյուսության գիտականներից ու էպոսի ճյուղերից մեկի լավագույն մշակողներից էր («Սասմա Միեր» պոեմ): Թերևս այդ է պատճառը, որ Միիր-Միեր ծագումնաբանական կապը պարզաբանող հոդվածագիրը հանգում է այնպիսի եզրակացությունների, որոնք չեն կորցրել արդիականությունը⁴¹: Անդրադառնալով Հին աշխարհի կրոնական ուղղություններից մեկին, որը բացառիկ նշանակություն է ունեցել Հայաստանում, Իսահակյանը չի բավարարվում միհրականության միայն տեղական դրսևորումների քննությամբ՝ լայն տեղեկություններ փոխանցելով նաև իրանական և արևմտյան միհրապաշտության վերաբերյալ: Ըստ Սարգիս Հարությունյանի՝ «հայոց Միիր-Միերը իր մեջ կրել է թե՛ իրանական և թե՛ արևմտյան միհրապաշտության հատկանիշները և, ըստ երևույթին, փոխանցիկ օղակ է հանդիսացել իրանական և արևմտյան միթրայիզմի միջև»⁴²: Միհրապաշտության երկու հիշյալ ուղղությունների հետ վիպական Միերի փոխառնչություններն է ներկայացնում նաև Իսահակյանը, որն ուսումնասիրության արժանիքներից է:

Արժևորելով նախորդների և, մասնավորապես, Մանուկ Աբեղյանի հետազոտությունները՝ Իսահակյանը չէր համաձայնում նրանց բոլոր տեսակետներին ու եզրահանգումներին: Օրինակ՝ Մեծ Միերի «Առյուծաձև» մականունն Աբեղյանը ստուգաբանում է «առյուծ ձևող կամ կիսող»⁴³: Իսահակյանն այլ դիրքորոշում է հայտնում խնդրո առարկայի շուրջ. «Առյուծաձև Միերն էլ, որ Միերի երկճյուղումն է, մեր վեպի մեջ հանդես է գալիս արևային մակդիրով: Առյուծաձև չի նշանակում առյուծ ձևող, պատառող, այլ առյուծակերպ: Առյուծը հին պարսիկների և հայերի ըմբռնումով՝ սրբազան կրակի սիմվոլն է. առյուծաձև, պարսկերեն Շիր-խուրշիդ, հոմանիշներ են: Եվ առյուծաձև Միեր կնշանակե առյուծակերպ Միեր, առյուծ Միեր ինչպես Հովի. Թումանյանը կիրառել է արդեն իր «Սասունցի Դավիթ» պոեմում՝ «Առյուծ Միերը զարմով դյուցազուն»⁴⁴: Ի դեպ, այս մասին Վարպետը գրառում է կատարել նաև ծոցատետրերից մեկում՝ դարձյալ հայտնելով նույն տեսակետը⁴⁵: Ընդունելով Միիրի հնդիրանական ծագումը, որի պաշտամունքը հասնում է մինչև մ.թ.ա. V-III հազարամյակներ⁴⁶, Իսահակյանը իրավացիորեն նկատում է, որ «Միերը Միիր աստվածն է. Միերը կրակն է, կայծակն, ամպրոպն է. Միերը արևն է»⁴⁷: Մի շարք հետազոտողներ Միիրին համադրում են Արեգակի՝

⁴¹ Էպոսի առասպելաբանական, պատմական, մասամբ նաև պատումների տիպաբանական քննությունը կատարել են առաջին գրառողները՝ Գ. Սրվանձտյանցը, Մ. Աբեղյանը, Գ. Հովսեփյանը, Բ. Խալաթյանցը, Ս. Կանայանը և այլք, և հետագայում էլ շարունակվել է, սակայն շատ խնդիրներ դեռևս մնում են էպոսագետների ուսումնասիրության շրջանակում:

⁴² Հարությունյան 2001, 40:

⁴³ Աբեղյան 1966, 419:

⁴⁴ Իսահակյան 1977, 166:

⁴⁵ Դարբինյան 1991, 150:

⁴⁶ Խաչատրյան 1981, 54:

⁴⁷ Իսահակյան 1977, 166:

հայ ժողովրդի դիցարանի Արևի աստծո հետ, որի գլխավոր տաճարներից մեկը եղել է Բագահառիճում: Հին հայոց Արեգ ամիսը համապատասխանում է պարսից Միհր ամսին, որ թերևս վկայում է հայոց մեջ մինչև իրանական ազդեցությունը արևային աստվածության բնիկ հայկական անվան (Արեգ) գոյությունը⁴⁸: Միհր արևային աստվածության պաշտամունքը լայն տարածում է ստացել հայոց մեջ՝ մտնելով «Սասնա ծռեր» հերոսավեպ՝ Միեր անձնանունով⁴⁹: Այսպիսով, Իսահակյանը նույնպես անդրադառնում է Միհր աստծո վիպական ժառանգներին՝ Մեծ և Փոքր Միերներին և հայ-իրանական պանթեոնների զուգադրումներին: Նշենք, որ ժամանակակից բանագիտության համար տեսանելի են նաև Խալդի-Միթրաս (արևմտյան Միթրայի պաշտամունքը)-Միեր կապերը, քանի որ հին Հայաստանում Խալդին նույնացվում էր Միթրա-Միհրին. դա վկայում են «Միերի դռան» ուրարտական արձանագրությունները: Արևմտյան Միթրայի պաշտամունքը հիմնականում կորցրել էր ընդհանրությունները զրադաշտական Իրանի Միթրայի հետ: Ըստ Դյակոնովի՝ հռոմեական Միթրասի բոլոր հիմնական հատկանիշները (ծնունդը ժայռից, պաշտամունքը որմնախորշերում կամ քարայրներում, կապն առյուծի հետ և այլն) հասնում են մինչև Խալդի⁵⁰: Ուշագրավ է, որ Իսահակյանը թեպետ չի նշում Խալդի-Միեր-Միթրաս առնչությունները, սակայն Միերի դուռը կապում է և՛ իրանական, և՛ արևմտյան միհրապաշտության հետ: Ընդգծելով Միերի թեոգոնիկ ծագման վեդայական-իրանական արմատները՝ հողվածագիրը տանում է Միհրին նվիրված պարսկական նշանավոր զոհարանների («Դեր-ի Միհր» և «Միերի դուռ») և Ազոավաքարի համեմատականը: Սակայն չի մոռանում անցկացնել նաև *Միերի դուռ* և *Միթրական ժայռեր* զուգահեռը՝ մատնանշելով *Միհրի դռների*, *վիմածին Միհրի* և *Միթրայան ժայռերի* (հռոմեացի միհրականների գաղտնի հավաքատեղիները քարայրերում) առնչությունները⁵¹: Նկատենք, որ Գ. Սրվանձոյանցը դեռևս 1874 թվականին Կ. Պոլսում հրատարակված «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Միերի դուռ» աշխատության առաջաբանում էր կոահել, թե «Միերն ինքն գուցե Միհր Մեծն լինի և յուր դուռը ուղղակի հարավո հանդեպ կամ արեվու լինելով՝ պաշտելու պատշաճ»⁵²: Սակայն Իսահակյանը, հարուստ տեղեկություններով և ճշգրիտ դիտարկումներով, ընդգծում է Միերի դռան համադրելիությունը և՛ *Միհրի դուռ* սրբազան քարանձավների, և՛ արևմտյան *Միթրական ժայռերի* հետ. թեպետև միհրապաշտության երկու թևերը զգալիորեն տարբերվում էին:

Փոքրասիական երկրների և Փոքր Հայքի նվաճումից հետո (մ.թ.ա. III դարից)՝ Միթրա-Միհրի պաշտամունքը տարածվում է հռոմեական ողջ կայսրության մեջ: Միհրի արևմտյան պաշտամունքում շեշտված էին նրա արևային, ռազմի, ցլի

⁴⁸ Խաչատրյան 1981, 56:

⁴⁹ Հարությունյան 2001, 38:

⁵⁰ Дьяконов 1983, 4, 191-193.

⁵¹ Իսահակյան 1977, 163, 169-170:

⁵² Սասնա ծռեր 1944, 5:

սպանությամբ երկրային բարիքների արարչագործության, ինչպես նաև մարդկության փրկչական գործառույթները, որոնք առկա էին նաև հայոց միհրապատության մեջ (արտացոլված են «Սասնա ծռերում»)։ Ըստ արևմտյան ավանդության՝ Միթրան ծնվում է ժայռից (*Թեոս էք պեդրաս-ժայռածին աստված*), որի ականատեսն էին հովիվները։ Հայոց վեպում բացակայում է ժայռածնության մոտիվը, փոխարենն առկա է Փոքր Միերի ժայռում՝ Ագռավաքարում փակվելը⁵³։

Ուշագրավ է Միհր-Միերի երկվության վերաբերյալ Իսահակյանի ուրույն դիրքորոշումը. եթե Լեոն «Դաիթ եւ Միեր⁵⁴» գրախոսականում Միերի ուժն ավերիչ և դժոխային է համարում, որը տրված է միայն չարիք գործելու համար, Աբեղյանը «Հայ ժողովրդական առասպելներում»⁵⁵, Միերին զուգամիտելով Արտավազդի հակասական կերպարին, խոսում է վերջինիս առավել չար, քան բարի լինելու մասին, իսկ Թ. Ավդալբեկյանն էլ Միերին իբրև՝ «Միթրայի հայ փոփոխակ⁵⁶» համարում է նեո, ապա Իսահակյանը գտնում է, որ Միհրի փոխնակ՝ դիալեկտիկ հակասությունների համամիասնություն Միերը, «վերջնական սինթեզի մեջ բարի է⁵⁷», «քանի որ պահել էր միհրական հին, ազնիվ, նվիրական հատկություններից էական տարրեր⁵⁸»։

Ուսումնասիրության շրջանակում Իսահակյանը տարբերակում է Միթրա-Միերի մի շարք գործառույթներ. *ա. Միթրան առաջ բերքի հավասարապես և արդար բաշխող, բ. ճշմարտության, բարության և բարոյական մաքրության պաշտպան, գ. կանխարես և կանխագետ, աշխարհն աննինջ հսկող, դ. իմաստություն տվող և երջանկաբեր, չարից ազատող ու բարիք գործող, ե. նենգությունը, խաբեությունը, ուխտադրժությունը կամ ուխտազանցությունը պատժող, գ. Աստծո դեմ մարտնչող և գոյեմարտող չար, կործանիչ ոգի* (զուգադրում է, Աստվածաշնչյան սատանայի, Ավեստայի Բյուրասաց աժդահակի, հունական Պրոմեթևսի, հայոց Արտավազդի, վրաց առասպելական Ամիրանի, որ փակվում է Սակորեն՝ Ագռավի լեռան մեջ, օսական էպոսի Ամրանի և գերմանական Լյուցիֆերի, որ փակվում է Միրոլի լեռներում), *է. Միհր-Միերը փրկիչ⁵⁹*. փրկչական գործառույթը բնորոշ էր մագդեզական՝ զրադաշտական Միհրին, որը պետք է հաղթեր Ահրիմանին և փրկեր մարդկությունը չարից՝ իշխելով նորոգված տիեզերքի վրա։ Իսահակյանն իրավացիորեն մատնանշում է միթրայիզմի և քրիստոնեական ուսմունքների փոխազդեցությունների, Միհրի փոխակերպման և դիվաց-

⁵³ Հարությունյան 2001, 39-40:

⁵⁴ Լէօ 1890, 367:

⁵⁵ Աբեղյան 1985, 190:

⁵⁶ Ավդալբեկյան 1929, 121:

⁵⁷ Իսահակյան 1977, 166:

⁵⁸ Իսահակյան 1977, 166:

⁵⁹ Աբեղյանը նույնպես ընդգծել է Միերի փրկչական գործառույթը՝ նկատելով, որ վերջինս պիտի «մարտիրոսվի» և հավատքը պաշտպանելու համար նահատակվի (այս մասին մանրամասն տե՛ս Աբեղյան 1966, 149):

ման մասին: Սակայն, ըստ հողվածագրի, ժողովրդի համակրանքը վեպում պատկանում է «տրագիկ» ճակատագրով հերոսին: Այդ է պատճառը, որ *Միերի դուռը* սրբավայր և ուխտատեղի էր դարձել, իսկ հավատավորները անձկությամբ սպասում էին Միերի փրկչական զորությանն ու առաքելությանը:

Եզրակացություններ

Այսպիսով՝ Իսահակյանի ստեղծագործությունների պատկերահմաստային բովանդակության քննությամբ պարզվում է *արևի* առանցքային նշանակությունը ժողովրդական հավատալիքային համալիրում և բանաստեղծի խորհրդանշանների յուրօրինակ համակարգում, իսկ «Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին» հողվածի վերլուծությամբ՝ հողվածագրի ուրույն մտահանգումները, արտածումներն ու բանագիտական հայացքները: Հատկանշական է, մասնավորապես, Միթրա-Միհր- Միեր զուգահեռը, որը տևական ժամանակ գտնվել է Իսահակյանի մտատեսության և հետազոտական հետաքրքրությունների ծիրում: Ուստի քննվող հողվածը թեև շարադրված է հանրամատչելիության սկզբունքով, սակայն արժանի է նաև գիտական շրջանառության:

Գրականություն

- Աբեղեան Մ. 1906, Հայ ժողովրդական վեպը, Ազգագրական հանդես, 13 (1), Թիֆլիս, էջ 5-36:
- Աբեղյան Հ. 1975, Իսահակյանը և ժողովրդական էպոսը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 260 էջ:
- Աբեղյան Մ. 1966, Երկեր, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 572 էջ:
- Աբեղյան Մ. 1985, Երկեր, հ. Ը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 672 էջ:
- Ադայբեգեան Թ. 1929, Միհրը հայոց մէջ, Վիեննա, «Մխիթարեան տպարան», 162 էջ:
- Դեմիրճյան Դ. 1963, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, «Հայպետհրատ», 632 էջ:
- Դարբինյան Վ. 1991, Ավետիք Իսահակյանի ծոցատետրերի լեզվական հարստությունից, Բանբեր Երևանի համալսարանի, N 3 (75), Երևան, էջ 146-152:
- Եգանյան Լ. 2020, Ազատանի բազմանիստ ապակյա կնիքի պատկերագրությունը և իմաստաբանությունը, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, «Գիտական աշխատություններ», N 1 (23), Գյումրի, էջ 9-14:
- Եզնըկայ վարդապետի Կողբացոյ 1914, Եղծ աղանդոց, Թիֆլիզ, «Տպ. Ն. Աղանեանի», 226 էջ:
- Իսահակեան Ա. 1904, Փշրանքներ ժողովրդական բանահիստությունից, Ազգագրական հանդես, գք. 12, Թիֆլիս, էջ 104-108:
- Իսահակյան Ավ. 1939, Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին, Խորհրդային գրականություն, N 8-9, Երևան, էջ 28-38:
- Իսահակյան Ավ. 1951, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, «Հայպետհրատ», 239 էջ:
- Իսահակյան Ավ. 1974, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, «Հայաստան», 336 էջ:
- Իսահակյան Ավ. 1977, Հիշատակարան (Գրական ժառանգություն 10), Երևան, «Սովետական գրող», 471 էջ:
- Իսահակյան Ավ. 1977, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, «Հայաստան», 453 էջ:
- Իսահակյան Ավ. 2007, «Աբու-Լալա Մահարի» պոեմի հերոսը և հեղինակը, Պատմաբանասիրական հանդես, N 2, Երևան, էջ 134-161:

- Լէօ 1890, Դալիթ եւ Միեր (ժողովրդական վէպ), Հանդէս գրականական եւ պատմական, չորրորդ գիրք, Մոսկուա, էջ 337-377:
- Խաչատրյան Ժ. 1981, Իրանա-հայկական դիցաբանական աղբյուրների շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, Երևան, էջ 54-73:
- Հարությունյան Ս. 1975, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 271 էջ:
- Հարությունյան Ս. 2001, Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, «Մուղնի», 81 էջ:
- Հարությունյան Ս. 2010, «Սասնա ծռեր» հերոսավեպի ծիսաառասպելական մի քանի հատկանիշների մասին, Պատմա-բանասիրական հանդես, N 1 (74), Երևան, էջ 74-79:
- Հարությունյան Ս. 2018, Հայ առասպելաբանություն, Երևան, «Անտարես», 528 էջ:
- Հմայակյան Ս. 1990, Վանի թագավորության պետական կրոնը. Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 158 էջ և 31 էջ աղյուսակներ:
- Ղանալանյան Ա. 1945, Ժողովրդի բանաստեղծը և ժողովրդական բանահյուսությունը, Գրական թերթ, N 21 (341) Երևան, էջ 3:
- Ղանալանյան Ա. 1955, Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 104 էջ:
- Ղանալանյան Ա. 1986, Հայ գրականությունը և բանահյուսությունը, Երևան, «Սովետական գրող», 307 էջ:
- Ղոնջյան Լ. 2017, Հայկական ժողովրդական երդումները և դրանց կիրառությունը բանավոր ու գրավոր ավանդության մեջ, Կանթեղ, N 4 (73), Երևան, «Ասողիկ», էջ 27-38:
- Սասնա ծռեր 1944, Աբեղյան Մ.Խ. (խմբ.), աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, հ. Բ, մաս Ա, Երևան, «Պետհրատ», 446 էջ:
- Дьяконов И. 1983, К вопросу о символе Халди, Древний Восток, N 4, Ереван, с. 190-195.

ՄԻՀՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԱՐԵՎԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Լուսինե Հայրիյան

Ամփոփում

Արևի պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում հարատևել է հազարամյակներ: Հայոց մեջ արևին վերագրել են արարչական զորություն և պաշտել՝ որպես կենսահաստատ զորություն, զարթոնքի, պտղաբերության և ամենայն բարիքներ ստեղծող գերբնական ուժի: Այդ պատճառով էլ բազմաթիվ առարկաների վրա արևը պատկերվել է երկրաչափական մարմինների տեսքով, ինչպես նաև կենդանակերպ կամ մարդակերպ: Արևն առանցքային նշանակություն ունի նաև Ավետիք Իսահակյանի որոշ ստեղծագործություններում («Արևի մոտ», «Աբու-Լալա Մահարի» և այլն): Արևի պաշտամունքի և միհրապաշտության վերաբերյալ ուշագրավ և խոր վերլուծություններով առանձնանում է հատկապես բանաստեղծի «Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին» հոդվածը, որտեղ նա, բանագետի խորատեսությամբ, բացահայտում է թե՛ իրանական և թե՛ արևմտյան միհրապաշտության առանձնահատկություններն ու միհրապաշտության երկու հիշյալ ուղղությունների հետ հայոց Միհր-Միերի փոխառնչությունները:

Բանալի բառեր՝ Ավետիք Իսահակյան, արև, Միհր, միհրականություն, էպոս, բանահավաք, բանահյուսություն, Միեր:

**МИТРАИЗМ ИЛИ ДРЕВНИЕ ПРЕДСТАВЛЕНИЯ О СОЛНЦЕ В
ФИЛОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЯХ АВЕТИКА ИСААКЯНА**

Лусине Айриян

Резюме

Культ солнца на Армянском нагорье существовал на протяжении тысячелетий. Армяне приписывали солнцу созидательную силу и поклонялись ему, как символу плодородия и созидания. Именно поэтому на многих предметах солнце изображено в виде геометрических фигур, животных или имеет человекоподобный облик. Солнце имеет ключевое значение в некоторых произведениях Аветика Исаакяна («У солнца», «Абул-Ала Маари» и др.). В своей статье «Опыт мифологии нашего эпоса» Ав. Исаакян раскрывает особенности иранского и западного митраизма, а также связь армянского Михр-Мгера с двумя вышеупомянутыми направлениями этого религиозного культа.

Ключевые слова – Аветик Исаакян, солнце, Михр, митраизм, эпос, собиратель, фольклор, Мгер.

**MITHRAISM OR ANCIENT PERCEPTIONS OF SUN IN AVETIK ISAHAKYAN'S
PHILOLOGICAL SEARCHES**

Lusine Hayriyan

Abstract

The cult of Sun has existed in the Armenian Highlands for thousands of years. Among the Armenians the Sun was attributed to the creative power, it was worshiped as a vital power, a supernatural energy of awakening, fertility, as a creator of all kindness and goodness. This is the reason why it was/is depicted on different objects in the form of geometric bodies as well as in the form of animals or in the form of a human being, i.e. anthropoid. Sun is also of key importance in some of Avetik Isahakyan's works: "To the Sun", "Abu-Lala Mahari", etc. Among the works with the poet's remarkable and deep analyses there stands out an article called: "An Experiment on the mythology of our epic", where, through the insight of the philologist, he reveals the peculiarities of both the Iranian and the Western kinds of worship of Mihr and the relations of Armenian Mihr-Mher with the two mentioned branches of Mithraism.

Key words – Avetik Isahakyan, Mihr, Mithraism, epic poem, folklore gatherer, folklore, Mher.

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐԸ ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԳՐԱԴՈՒՄՆԵՐՈՒՄ

Նվարդ Վարդանյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. հասցե՝ vardanyan.nvard@ysu.am

Հոդվածը ներկայացվել է 22.11.2021, գրախոսվել է 10.02.2022, ընդունվել է տպագրության 05.07.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.2-192

Ներածություն

Հայ ժողովրդական բանահյուսության գրառման և հրատարակման լայնածավալ աշխատանքների սկզբնավորման հարցում անուրանալի է խոշոր մտավորական, բանահավաք, ազգագրագետ Գարեգին Սրվանձտյանցի դերը: Ինչպես բանահյուսական այլ տեսակների, այնպես էլ հարսանեկան երգերի գրառման և հրատարակման պատմության մեջ կարևորվում և յուրահատուկ ուշադրության են արժանանում Գ. Սրվանձտյանցի գրառումները: Սույն հոդվածում կքննենք հարսանեկան երգերի հրատարակման պատմությունը մինչև Գ. Սրվանձտյանցը և նրա մոտեցումն այս ծիսերգերի գրառման և լույսընծայման սկզբունքների հարցում:

Հարսանեկան երգերի հրատարակումը մինչև Գ. Սրվանձտյանցը

Հայոց հարսանեկան երգերի գրառման և հրատարակման պատմությունը սկսվում է XIX դարի երկրորդ կեսից, երբ առանձին պարբերականներում և ժողովածուներում, ժողովրդական այլ երգանմունքների և ծիսական նկարագրերին զուգահեռ, սկսում են ի հայտ գալ նաև հարսանեկան երգային բնագրերը: Մեզ հայտնի առաջին նմուշը հանդիպում է 1850 թ. «Արարատ» պարբերականում: Հարսանեկան երգի մի փոքրիկ հատված է դա, որ հյուսվել էր Լենկթեմուրի մասին ավանդությանը¹:

Հարսանեկան երգերի ամբողջական բնագրերը՝ ընդարձակ երգաշարով, առաջին անգամ հրատարակվել են 1852 թ. Վենետիկում Ղևոնդ Ալիշանի կազ-

¹ «Արարատ» 1850, 45: Մի փոքրիկ նյութ կա, որի մեջ հիշատակվում են հարսանեկան երգի տողեր: «Հարսանքոց մէջ փեսի առաջէն ինչի՞ թուր կ'տանին»: Մի ավանդություն է հիշվում, թե Լենկթեմուրի կյանքը մի հայ փրկում է և շատ սիրվում նրա կողմից: Հայը սիրահարվում է ասորի աղջկա, աղջկան չեն տալիս կնության: Լենկթեմուրը իր թուրն ուղարկում է և հրամայում տալ աղջկան: Թուրը թողնում է Հայաստանում, որ ամեն անգամ երբ հայն ասորու սիրահարվի, դրանով գնա և համաձայնություն տան: Սրա հետ է կապվում Նախիջևանում հարսի անունից փեսային ուղղված երգի ստեղծվելը. «*Կոյս անարար՝ կուգամ քեզի, Ասորուծ սիրով՝ պահէ մեզի, Սիրական քորիկներ՝ տառուր ձեզի. թագաւորն զօրեղ կուգայ թուրով-մարդը շար է՝ կանոն զօռով և այլն*»:

մած «Հայոց երգք ռամկականք» երկվեզու՝ հայերեն և անգլերեն ժողովածուում²: Երգաշարը բաղկացած էր հարսին ու փեսային նվիրված հատվածներից: «**Հարսի երգ**»³ վերնագիրն ամփոփում է հրաժեշտի և բաժանման ծիսական գործողությունների ժամանակ կատարվող լացերգերը՝ «**Շեմկիկ, մի՛ ժաժա**», «**Ձմերիկ խաբեցին թոփ մը շիշով**» սկիզբներով: «**Երգ հարսանեաց փեսայի**»⁴ ընդհանուր վերնագիրը դարձյալ երգային մի քանի հատված է ընդգրկում՝ թագվորագովքերին շատ բնորոշ՝ «**Օրհնեալ բարերար Աստուած**», «**Մեր թագուորին ծաղիկ պիտէր ծաղկունաց**», «**Մեր թագուորն էր խաչ...**» սկիզբներով և հարսանեկան խնջույքներում շատ սիրված թոնոցի-պար կատակերգը՝ «**Էն դիզան, բէր բէր դիզան**»: Ալիշանի ժողովածուում այս երկու երգաշարերը հաջորդում են իրար. ակնհայտ է, որ նա այս երգերը դիտարկել է որպես հարսանեկան ծիսաշարի մի ամբողջություն: Հարսի երկու երգերը չեն անջատված իրարից և բերված են հաջորդաբար: Փեսայի երգաշարը կազմված է անջատ հատվածներից: Ալիշանի հրատարակած հարսանեկան երգերը հետագայում վերահրատարակվում են Գամառ-Քաթիպայի (Ռափայել Պատկանյանի) «Ազգային երգարան հայոց»⁵ (1856) և Միքայել Միանսարյանցի «Քնար հայկական»⁶ (1868) ժողովածուներում: Եթե Պատկանյանի ժողովածուում, պայմանավորված այբբենական դասավորության սկզբունքով, հարսի և փեսայի երգաշարերը հեռացել էին իրարից⁷, ապա Միանսարյանցը, ընդհակառակը, դրանք հրատարակել էր միասին: Ավելին, Միանսարյանցը, առաջ տանելով Ալիշանի սկսած գործը, տարբերակում է անհատական, հեղինակային և ժողովրդական երգերը: Եթե Ալիշանը «Հայոց երգք ռամկականք» ժողովածուում հեղինակային և ժողովրդական երգերը հրատարակել էր խառը՝ առանց տարանջատման, որպես սկզբունք ընդունելով լոկ երգերի ժողովրդական լեզուն ու ոճը⁸, ապա Միանսարյանցը ժողովածուի բաժիններում առանձնացնում է ժողովրդական և անհատական երգային բնագրեր: Այս երգերի շարքում տարանջատվում են նաև հարսանեկան երգային բնագրերը. ժողովրդականները՝ «Հասարակաց (ռամկական) երգեր» բաժնում, անհատականները՝ «Խնճոյքի, ուրախութեան, հարսանեաց եւ երգիծական երգեր» բաժնում⁹:

Հարսանեկան երգերի գրառումը սկզբից ի վեր երկու տարբեր ուղղություններով է զարգացել: Այս երգերը գրառվել են կա՛մ ժողովրդական երգերի շարքում, կա՛մ հարսանեկան ծեսի ազգագրական նկարագրության մաս են կազմել:

² Ալիշան 1852:

³ Ալիշան 1852, 37-41:

⁴ Ալիշան 1852, 41-47:

⁵ Գամառ-Քաթիպա 1856: Ելնելով այն հանգամանքից, որ Պատկանյանը երգերը դասավորել էր ըստ այբբենական կարգի՝ այստեղ հարսի և փեսայի երգաշարերը հրատարակված են անջատ. «Երգ հարսին»՝ 133-134 էջերում, «Երգ հարսանեաց փեսայի» երգաշարը՝ 177-179 էջերում:

⁶ Միանսարեանց 1868, 143-146:

⁷ Ժողովածուում հարսի և փեսայի երգաշարերը հրատարակված են անջատ. «Երգ հարսին»՝ 133-134 էջերում, «Երգ հարսանեաց փեսայի» երգաշարը՝ 177-179 էջերում:

⁸ Այս մասին տե՛ս Վարդանյան 2021, 83:

⁹ Տե՛ս Վարդանյան 2021, 365-435:

Վերջին դեպքում գրառողները ոչ միշտ է, որ կարևորել են երգային բնագրերի ամբողջական պահպանումը կամ, ընդհանրապես, դրանց մասին հիշատակումը: Հարսանեկան ծեսի այսպիսի մի նկարագիր է լույս տեսել 1863 թ. «Կռունկ հայոց աշխարհի» պարբերականի 5-րդ համարում: Սենեքերիմ Արծրունու «Նոր Պայագիտու գաղթական մշեցուց նշանդրէքն ու հարսանիքը»¹⁰ դրամատուրգիական ստեղծագործության ձևով շարադրված աշխատություն է, որում հիշատակվում է ընդամենը մեկ ծիսերգ՝ **«Թագվորի մէր թուս արի»**¹¹, այն էլ ոչ ամբողջական (ընդամենը ութ տող):

Նույնաբնույթ մի աշխատություն է 1873 թ. «Մեղու Հայաստանի» պարբերականի 37, 38, 39 համարներում շարունակաբար լույս տեսած Կարապետ Մատինեանցի «Յարութիւնի եւ Վարդիշաղի պսակը» (Ալեքսանդրապոլի կէանքից): Սակայն, ի տարբերություն Նախորդի, Շիրակի հարսանեկան ծեսն ամբողջացնող այս նկարագրի մեջ առավել մեծ տեղ է հատկացված ծիսերգային բնագրերին: Շարադրանքի երրորդ՝ վերջին հատվածում տեղ են գտնել հայերեն և տաճկերեն երգեր, որոնք կատարվել են փեսային հագցնելու և հարսնառի ծիսական արարողությունների ժամանակ (**«Ես վերեն կուգայի...», «Ելեր ես, կերթաս գը...», «Ոչ փեդ ունինք, ոչ աթար...», «Չեմ էրթար, մերիկ, չեմ երթար...»**)¹² և մի քանի տաճկերեն հատվածներ):

Ժամանակագրական առումով հաջորդը 1874 թ. Ա. Սեդրակեանի «Քնար մշեցվոց և վանեցվոց» ժողովրդական երգերի ժողովածուն է, որտեղ տեղ է գտել հարսանեկան 3 ծիսերգ՝ **«Թագվորի գովք»**, **«Հարսի երգ»**, **«Թագվորի մոր դեմ»**¹³:

Հարսանեկան երգերը «Մանանա» ժողովածուում

Գ. Սրվանձտյանցի գրառած հարսանեկան երգերի առաջին նմուշները լույս են տեսել 1876 թ. «Մանանա» ժողովածուի **«Երգք և նվագք հայրենյաց»** բաժնում: Ուշագրավ է, որ ինչպես մյուս ժանրերի դեպքում, այստեղ ևս Սրվանձտյանցը հանդես է գալիս ոչ միայն որպես առաջին գրառողներից, այլև առաջին ուսումնասիրողներից մեկը: Հիշյալ բաժնի փոքրիկ նախաբանում ընդհանուր ակնարկ է կատարվում ժողովրդական երգատեսակների վերաբերյալ, հիշատակվում են հայ գեղջուկի առտնին և դաշտային այն բոլոր աշխատանքներն ու զբաղմունքը, որոնք ուղեկցվել են երգով: Ահա այստեղ Սրվանձտյանցն առանձին անդրադառնում է նաև ծիսերգերին՝ նշելով. **«Իսկ փոնի, հարսանյաց, խնջուից և այլ հանդիսավոր ավուրց համար հափուկ խաղեր ու փաղեր կան, թե հոգևոր թե մարմնավոր, թե հայերեն թե փաճկերեն կամ քրդերեն, ի ձեռին ունելով ջութակ մը կամ փավիղ մը: Կը խառնեն նաև այս խաղուց հեփ գովասանք ի վերա Նարեկացվոյն, Ս. Կարապետին, Ս. Երուսաղեմին. երբեմն ևս ապաշխա-**

¹⁰ Կռունկ հայոց աշխարհի 1963, 385-400:

¹¹ Կռունկ հայոց աշխարհի 1963, 398:

¹² Մեղու Հայաստանի 1873, 1-2:

¹³ Սեդրակեան 1874:

րուբյան հորդորներ, մեր անգիր աշուղներ»¹⁴: Երգերի այսպիսի բնութագրումն արդեն տարանջատում է կենցաղային-քնարական երգատեսակները ծիսերգերից: Ուշագրավ է, որ ծիսերգերի դեպքում ընդգծվում է նաև դրանց հմայական բնույթը՝ սրբերին ուղղված խնդրանքների և կրոնական մոտիվների հղմամբ: Չկիրառելով ավելի ուշ առաջացած եզրույթները՝ Սրվանձտյանցն ըստ էության խոսում է ծիսերգերի և դրանց հիմնական հատկանիշներից մեկի մասին:

Ուշագրավ է, որ «Մանանա» ժողովածուի **«Երգք և նվագք հայրենյաց»** բաժնում Սրվանձտյանցը զետեղում է և՛ միջնադարյան հեղինակային տաղեր, ինչպիսիք են Գր. Նարեկացու, Գր. Աղթամարցու, Հովհ. Երզնկացու որոշ գործերը, և՛ ժողովրդական երգեր: Այս նույն սկզբունքով էին կազմված նաև մինչ այդ հրատարակած՝ Ղ. Ալիշանի և Գամառ-Քաթիպայի երգարանները: «Մանանա» ժողովածուում լույս է տեսնում հարսանեկան երկու երգ. **«Երգ հարսնածուփեան»** («Թագվորի մեր դուրս էլի» սկիզբով) և **«Գովասանք փեսայի և հարսին»** («Թագվոր ի՞նչ բերեմ քեզ նըման» սկիզբով), որոնք իրար կողքի էին դրված: Ինչպես երևում է, Սրվանձտյանցը ծանոթ է եղել մինչ այդ հրատարակված հարսանեկան երգերին: «Մանանայի» հիշյալ երգային բնագրերի ծանոթագրության մեջ նա գրում է. **«Ուրիշ շար փեսակ երգեր կան հարսանյաց, բայց մենք հերիք համարեցինք այսքանը. մնացյալներեն հափուկորո արդեն հրափարակյալ կան»**¹⁵:

Հարսանեկան երգերը «Արևելյան մամուլի» էջերում

«Մանանա» ժողովածուից հետո Գ. Սրվանձտյանցը ժողովրդական երգեր է հրատարակում «Արևելյան մամուլի» էջերում՝ **«Գառառական երգեր»** ընդհանուր խորագրի ներքո: Պարբերականի 1883 թ. 1-ին, 8-րդ և 10-րդ համարներում¹⁶ ժողովրդական այլ երգերի շարքում լույս են տեսնում նաև հարսանեկան երգերի Մոկսի, Ակնի, Մշո, Վանա նմուշներ: «Արևելյան մամուլի» խմբագրությունը ոգևորությամբ է արձագանքում Սրվանձտյանցի ուղարկած այսպիսի նյութերին: Երգաշարի առաջին նմուշի հրատարակությունը սկսվում է խմբագրական բավական ջերմ խոսքով, որտեղ արժևորվում է Սրվանձտյանցի բանահավաքչական աշխատանքը, ու հիշատակվում է «Գրոց-բրոցի», «Հնոց-նորոցի», «Թորոս ախպարի» ունեցած ջերմ ընդունելությունը ընթերցող շրջանակներում, վստահություն է հայտնվում, որ նույնպիսի արժեքավոր նմուշներ են այն ժողովրդական երգերը, որոնք ուղարկել է Սրվանձտյանցը: 1883 թ. առաջին համարում լույս է տեսնում **«Մոկացի հայոց հարսանյաց պարը»**, որին նախորդում է Սրվանձտյանցի համառոտ նկարագիրը հարսանեկան այս պարերգի կատարման հանգամանքների վերաբերյալ: Նույն թվի 8-րդ համարում լույս են տեսնում Ակնի երեք հարսանեկան երգեր՝ Կամրկապ գյուղի բանասացից գրառված, իսկ 10-րդ համարում

¹⁴ Սրվանձտյանց 1978, 223:

¹⁵ Սրվանձտյանց 1978, 267:

¹⁶ Արևելյան մամուլ 1883, 41-42, 374-376, 466:

ժողովրդական այլ երգերի շարքում լույս է տեսնում նաև մեկ հարսանեկան երգ, որը երգում են հետամուսնական դարձի ծիսակարգի ժամանակ:

Հարսանեկան երգերը «Համով-հոտով» ժողովածուում

«Արևելյան մամուլում» տպագրված հարսանեկան երգերը՝ մեկ երգի հավելմամբ, 1884 թ. լույս են տեսնում նաև «Համով-հոտով» ժողովածուի «Ճաշակ չորրորդ»-ում՝ **«Գեղջկական երգեր»** խորագրի ներքո¹⁷: Եթե «Մանանա» ժողովածուում հարսանեկան երկու վերոհիշյալ երգերը հրատարակվել էին կողք կողքի, ապա «Համով-հոտով»-ում Սրվանձտյանցը չի պահպանում նույն սկզբունքը: Այստեղ այս երգերը խառը դասավորությամբ ցրված են ժողովրդական երգերի մեջ: Առաջին հայացքից պատահական թվացող երևույթն իրականում Սրվանձտյանցի՝ դիտավորությամբ կիրառված հնարք է, որն ունի իր բանաստեղծական մեկնաբանությունը. **«Երգերու մեջը ավելորդ համարեցի դասավորություն, որ թերևս զգալի երևա ոմանց: Դաշտի ծաղիկներ խառն կը լինին փեսակով և գույնով, այդ ևս յուր հաճոյականն ունի: Եվ միթե մարդն իսկ այնպես չէ՞. միևնույն ժամուն մերթ կ'աղոթե, մերթ կը փխրի, մերթ կը սիրե, մերթ կ'ափե, մերթ կ'օրհնե, մերթ կ'անիծե, մերթ կը հանգչի, մերթ կը գործե, մերթ կը հառաչե, մերթ կը զբոսնու, խաղ կը կանչե. և ահա այս է երգոց պարկերն ու եղանակը»**¹⁸:

Սրվանձտյանցը այս ժողովածուում ևս նշում է, որ երգերը հրատարակում է ընտրողաբար: **«Հավաքածս երգերեն շարերը ձգած եմ ի բաց զանազան պարճառներով: Նույնպես ի բաց ձգած եմ անոնք, որոց հրապարակությանը հանդիպած եմ այլոց ձեռքով»**¹⁹: Ակներև է, որ նա քաջաձանթո է հրատարակվող բանահյուսական նյութերին և կրկնություններից խուսափելու համար չի հրատարակում երգերի արդեն տպագրված տարբերակները:

Ժողովածուում տպագրված վեց հարսանեկան երգերից երեքը Սրվանձտյանցը ընդգրկել է մի փնջում՝ **«Ակնա ժողովրդական երգեր»** ընդհանուր խորագրի ներքո²⁰: Երգերի վերնագրերի փոխարեն ուսումնասիրողը նկատառումներ է արել ծեսում դրանցից յուրաքանչյուրի կատարման ժամանակի և կատարողների վերաբերյալ. **«Հարսնառ զնացող կանայք առ հարսն ասեն»**, **«Մեկնելու պահուն ասեն»**, **«Առ դրան փեսայի ասեն»**: Երգերն իրենց բնույթով տիպիկ իրադրային են՝ բնորոշ ծիսական որոշակի փուլի, և բովանդակությամբ էլ առանցքային դեր ունեն հարսանեկան ծեսում: Մինչ այդ երգերի այլ տարբերակներ հայտնի չէին, և դրանք, փաստորեն, առաջին անգամ տպագրվում էին Սրվանձտյանցի ժողովածուում: Հարսնառի և հարսնաբերի ծիսական փուլերի ժամանակ երգվող այս երեք երգերը հետագա գրառումներից հետո էլ մնում են տարբերակների լավագույն նմուշներ՝ իրենց ամբողջականությամբ, մոտիվների և արտահայտչաձևերի

¹⁷ Սրվանձտյանց 1978, 497:

¹⁸ Սրվանձտյանց 1978, 498:

¹⁹ Սրվանձտյանց 1978, 497:

²⁰ Սրվանձտյանց 1978, 518-520:

հարստությամբ: Մյուս երեք հարսանեկան երգերը ցրված են «Համով-հոտովի» երրորդ ճաշակի երգերի մեջ: Դրանցից մեկը՝ **«Սոկացի հայոց հարսանյաց պարը»**²¹, հրատարակվում է «Արևելյան մամուլին» ուղղված փոքրիկ առաջաբանով, որում Սրվանձտյանցը խոսում է Հոգվոց վանքի մոտ պարերգի գրառման ժամանակ ստացած տպավորությունների մասին, նկարագրում պարերգի կատարողներին և ընդհանուր տոնական մթնոլորտը: Ժողովածուի մյուս հարսանեկան երգը՝ **«Նոր հարսը հերանց փունը դարձ կը փանին, նոր փեսան ինքզինքը կը մխիթարե երգելով»**²², շատ սիրված և հետագայում տարբերակներով հայտնի դարձած թագվորագովք է, որը ժողովածուում վերնագրված է **«Փեսայի համար օրհներգ»**²³:

Ինչպես տեսնում ենք, թեև երգերը տպագրվում են ծիսական նկարագրություններից անջատ, սակայն երգերի վերնագրերը պարունակում են հստակ տեղեկություններ ծիսերգերի կատարման տեղի, ժամանակի և հանգամանքների մասին, որն էլ թույլ է տալիս երգերը դիտարկել ծիսական շղթայում՝ հստակ պատկերացում ունենալով դրանց գործառնականության վերաբերյալ²⁴:

Եզրակացություններ

Այսպիսով, Գ. Սրվանձտյանցի գրառած և հրատարակած հարսանեկան երգերը ժանրի շատ արժեքավոր նմուշներ են, որոնք բանահավաքն ընտրել է խնամքով, և որոնք տարբերվում են մինչ այդ պահը եղած հրապարակումներից: Հարսանեկան երգերի նրա գրառումները աչքի են ընկնում կառուցիկությամբ, որոնք երգերի հետագա տարբերակների գրառումների համապատկերում դարձյալ մնում են առավել ամբողջական և բարձրարվեստ նմուշների շարքում:

Սրվանձտյանցը կարևորել է ծիսական շղթայում երգերի կատարման ժամանակն ու հանգամանքները՝ նշումներ կատարելով երգերի վերնագրերում և հստակեցնելով երգերի գործառնականության մասին տեղեկությունները:

«Մանանա» ժողովածուում հստակ տարանջատելով ծիսական երգերը՝ Սրվանձտյանցը, այնուամենայնիվ, դրանք դիտարկում է որպես հայ գյուղացու հարուստ առօրյայի մի մասը՝ «Համով-հոտով»-ում երգերի ցրիվ դասավորությամբ:

²¹ Սրվանձտյանց 1978, 529:

²² Սրվանձտյանց 1978, 533:

²³ Սրվանձտյանց 1978, 555:

²⁴ Եվս մեկ հարսանեկան երգ, որ գրի է առել Գ. Սրվանձտյանցը, պահպանվել է նրա արխիվում և առաջին անգամ հրատարակվել է 1986 թ.: Խոսքը **«Թագվորի հերը զար ու խաչ հաներ...»** սկիզբով երգին է վերաբերում, որը հայտնի այս ծիսերգի համշենական տարբերակն է և տեղ է գտել Բարունակ Թողաթյանի կազմած «Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության» գրքում (Թողաթյան 1986, 90): Երգի գրառմանը կցված է եղել Գ. Սրվանձտյանցի ծանոթագրությունը, որին դարձյալ ծանոթանում ենք Թողաթյանի ժողովածուից. «Երբ որ հարսը փեսային դուռը բերին, դռան առջև այս գովասանական երգը կըսեն՝ թագավորը գովերգելով»: Այնուհետև՝ երգի ավարտին, նշում է. «Հարսը հորը տնեն ծիուն դինն նե երկու աղվես կորկեն փեսին տունը, երկան փեշկիր մը, մեջը սահան մը և երկու գդալ կղենն դրկեն փեսային տունը և սահանն ու գդալը երեք օր ավագին մեջ կպահեն, որպեսզի թագավորն ու հարսը շատ ապրեն» (Թողաթյան 1986, 246):

յամբ ստեղծելով հայ գեղջուկի քնարական բանահյուսության բազմերանգության պատկերը:

Գրականություն

Ալիշան Ղ. 1852, Հայոց երգք ուսմականք, Վենետիկ, Ս. Ղազար, 87 էջ:

Արարատ 1850, Թիֆլիս, N 3, սեպտեմբեր 16, էջ 45:

Արևելյան մամուլ 1883, Կ.Պոլիս, N 1, էջ 41-42, N 8, էջ 374-376, N 10, էջ 466:

Գամառ-Քաթիպա 1856, Ազգային երգարան հայոց, Ս. Պետերբուրգ, տպ. Յակոբ Եօնսոսի, 221 էջ:

Թողլաքյան Բ. 1986, Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության, ժողովեց, կազմեց և ծանոթագրեց Բարունակ Թողլաքյանը, Երևան, ԵՊՀ հրատ., 256 էջ:

Կոունկ հայոց աշխարհի 1963, N 5, էջ 385-400:

Միանսարեանց Մ. 1868, Քնար հայկական, Ս. Պետերբուրգ տպ. Օ.Ի. Բակստա, 620 էջ:

Վարդանյան Ն. 2021, Հայ ժողովրդական երգերի՝ Ղևոնդ Ալիշանի հրատարակությունները, Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն, Երևան, N 1, էջ 77-86:

Մեղու Հայաստանի 1873, N 39, էջ 1-2:

Սեդրակեան Ա. 1874, Քնար մշտցոյ եւ վանեցոյ, Վաղարշապատ, տպ. ս. Կաթողիկէ էջ-միածնի, 46 էջ:

Սրվանձտյանց Գ. 1978, Երկեր, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 668 էջ:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐԸ ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆԶՏԱՆՑԻ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ

Նվարդ Վարդանյան

Ամփոփում

Ինչպես բանահյուսական այլ տեսակների, այնպես էլ հարսանեկան երգերի գրառման և հրատարակման պատմության մեջ կարևորվում են հայ խոշոր բանահավաք ու ազգագրագետ Գարեգին Սրվանձտյանցի գրառումները: Քաջածանոթ լինելով մինչ այս մամուլում և առանձին ժողովածուներում լույս տեսած հարսանեկան երգերի սակավաթիվ նմուշներին՝ Սրվանձտյանցը իր գրառումներից ընտրում է միայն նրանք, որոնց բնագրերը դեռ հրատարակված չեն եղել:

Սրվանձտյանցի գրառած հարսանեկան երգերը լույս են տեսել «Մանանա», «Համով-հոտով» ժողովածուներում և «Արևելյան մամուլ» պարբերականի համարներում: Երգերի դասավորության սկզբունքների, դրանց որոշ առանձնահատկությունների և ժողովրդական այլ երգատեսակների հետ ունեցած փոխհարաբերությունների մասին կատարած դիտարկումներով Սրվանձտյանցը դառնում է նաև այս երգերի առաջին ուսումնասիրողներից մեկը: Սրվանձտյանցը կարևորել է ծիսական շղթայում երգերի կատարման ժամանակի և հանգամանքների վերաբերյալ տվյալներ հաղորդելը և այդ մասին նշումներ է կատարել երգերի վերնագրերում՝ այդպիսով հստակեցնելով երգերի գործառնականության մասին տեղեկությունները: Սրվանձտյանցի հրատարակած հարսանեկան երգերը ժանրի շատ արժեքավոր նմուշներ են, որոնք աչքի են ընկնում կառուցիկությամբ և երգերի հետագա տարբերակների գրառումների համապատկերում դարձյալ մնում են առավել ամբողջական և բարձրարվեստ նմուշների շարքում:

Բանալի բառեր՝ Գարեգին Սրվանձտյանց, հարսանեկան երգեր, գրառում, հրատարակություն, «Մանանա», «Համով-հոտով», դասակարգում:

СВАДЕБНЫЕ ПЕСНИ В ФОЛЬКЛОРНЫХ ЗАПИСЯХ ГАРЕГИНА СРВАНДЗТЯНЦА

Нвард Варданян

Резюме

В истории записи и издания свадебных песен значительную роль сыграл армянской фольклорист и этнограф Гарегин Срвандзтянц. Из своих многочисленных записей Срвандзтянц выбрал только те тексты, которые не были опубликованы до этого.

Свадебные песни, записанные Срвандзтянцем, были изданы в сборниках «Манана», «Хамов-Хотов» и в номерах журнала «Аревелян мамул» («Восточная пресса»). Г. Срвандзтянцем была дана классификация песен, были исследованы ряд их особенностей в соотношении с другими видами народных песен. Исследователь приводит данные о времени и обстоятельствах исполнения свадебных песен в обрядовой цепочке. Свадебные песни, изданные Срвандзтянцем, по сей день остаются в числе наиболее полных, высокохудожественных версий армянских свадебных песен.

Ключевые слова – Гарегин Срвандзтянц, свадебные песни, запись, публикация, «Манана», «Хамов-хотов», классификация.

WEDDING SONGS IN FOLKLORE RECORDINGS OF GAREGIN SRVANDZTYANTS

Nvard Vardanyan

Abstract

Along with other genres of folklore, the recordings and publications of Armenian wedding songs by the great Armenian folklorist and ethnographer Garegin Srvandztyan are also significant. Being well acquainted with the few samples of wedding songs previously published in print and in separate collections, Srvandztyants selects from his numerous recordings only those texts that have not been published before.

Wedding songs recorded by Srvandztyants have been published in the collections "Manana", "Hamov-Hotov" and in issues of the magazine "Arevelyan Mamul" ("Eastern Press"). With his observations on the principles of classification of songs, some of their features and their relationship with other types of folk songs, Srvandztyants also becomes one of the first researchers of these songs. Srvandztyants considered it important to provide information about the time and circumstances of the performance of wedding songs in the ritual chain and noted this information in the titles of the songs. The wedding songs published by Srvandztyants still remain among the most complete, highly artistic versions of Armenian wedding songs.

Key words – Garegin Srvandztyants, wedding songs, recordings, publication, "Manana", "Hamov-hotov", classification.

ТВОРЧЕСКИЕ СИЛЫ КАНАДСКОЙ АРМЯНСКОЙ СЦЕНЫ

Анаит Бекарян

Кандидат филологических наук, старший научный сотрудник Института искусств НАН РА
РА, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4

Эл. адрес: abekaryan@mail.ru

Статья представлена 07.12.2021, рецензирована 14.12.2021, принята к публикации 05.07.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.2-200

Вступление

Выступавшие на канадской армянской сцене актеры в основном не были профессионалами. Они принимали участие в спектаклях, организуемых различными группами. Но при этом канадский армянский театр был представлен немногочисленной группой актеров с профессиональным образованием, являвших собой яркую творческую индивидуальность. Ими были сформированы театральные труппы с интересным репертуаром, занявшие свою нишу в истории театра армянской диаспоры.

Сельма Кекликян (1927-2004)



Оперная певица, актриса, руководительница театра, национальный деятель Сельма Кекликян родилась в Греции, в Салониках. Ее детство прошло в Каире, где обосновалась их семья. Училась в каирской Национальной гимназии Нубарян и в колледже Сент Клерс: «Музыка оказала на меня огромное влияние еще в детские годы, помню, как мама пела мне колыбельную Каначяна¹, и я не могла сдержать своих слез, что стало предметом шуток в нашей семье», – вспоминала впоследствии Сельма Кекликян. «Песня словно была хлебом

¹ Каначян Барсег (1885-1967) – ливанский армянский композитор и хормейстер. Самый старший из учеников Комитаса. Автор известных сольных и хоровых песен на слова армянских поэтов. «Орор» (колыбельная) на слова Р. Патканяна по сей день занимает достойное место в репертуаре солистов.

насущным для нашей семьи. Церковные песнопения были первыми музыкальными произведениями, услышанными мною².

Мой отец³ пел во всех хорах, а также играл в театральных труппах общины. И естественно, единственным моим желанием было принять участие в этих выступлениях вместе с ним. Чувство музыкального вкуса мне было привито хором «Комитас» и церковью. Нотопись тогда представлялась мне некой неизъяснимой графикой. Я начала подражать современным певцам с белоснежных афиш и своим исполнением их песен развлекала близких на дружеских вечеринках⁴.

На одной из таких встреч будущая певица познакомилась с египетским армянским музыкантом, критиком и композитором Липаритом Назарянцем⁵. Последний воодушевил ее и посоветовал брать уроки по классу вокала, поскольку она обладала редким контральто и музыкальностью. Сельма Кекликян училась вокалу у известного педагога – госпожи Фельдман. Выступала по каирскому радио, а в дальнейшем продолжила учебу в Каирской консерватории. Когда была сформирована труппа Каирского оперного театра, С. Кекликян сначала пела в оперном хоре, а в дальнейшем выступала с солистами гастролировавшего в Каире миланского Ла Скала и Бельгийского оперного театра. На страницах иноязычных каирских газет публиковались материалы, посвященные С. Кекликян как обладательнице уникального голоса с неповторимым тембром.

В 1962 г. семья Кекликянов переехала в Монреаль, где певица выступала с сольными концертами. Ее первые выступления на канадском телевидении в роли княгини в опере Пуччини «Сестра Анжелика», а также в роли мамы Лючии в опере Маскани «Кавалерия Рустикана» имели огромный резонанс в канадской музыкальной среде. В июне-июле 1971 г. в посвященных оперным вечерам афишах рядом с фамилиями всемирно известных исполнителей присутствовало также имя Сельмы Кекликян как исполнительницы арий из «Дона Карлоса» Верди и «Фауста» Гуно: «Мы рады слушать снискавшую любовь монреальцев Сельму Кекликян. Ее имя в ряду известных представителей искусства вызывает у нас чувство гордости»⁶, – писала газета «Рнцршиишн» («Бурастан»). Многие франкоязычные и англоязычные газеты откликнулись

² Рнцрш 1978, N 757, 7:

³ Речь идет о Хорене Тетяне (1901-1980).

⁴ Рнцрш 1978, N 757, 7:

⁵ Липарит Назарянц (1868-1947) – журналист, юрист, поэт, музыкант. Член Армянской партии Дашнакцутюн. Автор романсов, один из которых создан на основе стиха Мисака Мецаренца «Белые розы».

⁶ Рнцршиишн 1971, N 95, 13:

на выступления певицы, дав высокую оценку ее исполнительскому искусству. На афише монреальского летнего фестиваля в 1974 г. присутствовало имя канадского скрипача, композитора, дирижера, музыкального критика, педагога, писателя Жана Валерана (1915-1994) как автора оперы «Le Magicien» («Маг») и американского композитора итальянского происхождения Джана Карло Менотти (1911-2017), автора произведения «Медиум» (1946). С. Кекликян исполняла роль мадам Флоры в опере «Медиум». Фестиваль был освещен на страницах канадской периодики. В монреальской газете «The Gazette» Жак Капика дал высокий отзыв об армянской певице: «Сельма Кекликян в роли мадам Флоры была безупречна... Она мастерски владеет своим бархатным голосом в интерпретации произведения Менотти»⁷. Не менее теплый отклик на выступление С. Кекликян был издан на страницах монреальской газеты «The Montreal Star» критиком Эриком Мэклинном: «Лучшей частью вчерашнего [оперного] вечера была опера «Медиум», где Сельма Кекликян воплотила образ мадам Флоры, с которым так созвучен теплый бархатный голос певицы»⁸.

Известный канадский дирижер Вильфред Пелетие (1896-1982), именем которого назван зал оперного театра в Монреале Place des Arts⁹, был настолько впечатлен выступлениями Сельмы Кекликян, что заключил с ней контракт об исполнении партий в «Фаусте», «Риголетто» и др. операх. Певица пользовалась огромной популярностью в музыкальных кругах Канады.

С монреальской оперной труппой она гастролировала в разных городах Канады. Выступала также во время гастролей в США. В ее репертуаре было много армянских песен, полюбившихся иностранной аудиторией. С. Кекликян была первой певицей, включившей в свой репертуар образцы армянской национальной музыки и ознакомившей с ней канадских слушателей. Она популяризировала армянское музыкальное искусство, всегда принимала участие в концертах, посвященных армянской музыке, в театральных и опереточных спектаклях, имеющих отношение к армянскому искусству.

В 1976 г. певицей была основана театральная труппа «Армянян» при содействии Арто Ншаняна¹⁰, Саргиса Сандикяна, Перча Меликяна, своего суп-

⁷ Рnцђu 1974, N 668, 23:

⁸ Рnцђu 1974, N 668, 23:

⁹ Вильфред Пеллетие (Wilfred Pelletier (1896-1982)- канадский дирижер, пианист, композитор, музыковед. В 1963 г. концертный зал Монреала «Place des Arts» был назван его именем – зал Пеллетие, вмещающий 3000 зрителей. По сей день является полифункциональным концертным залом. В последний раз в этом зале, названном его именем, Пеллетие дирижировал в 1978 году, когда ему было 82 года. У входа в зал стоит скульптура Пеллетие, созданная Арто Чакмакчяном (1933-2019) в 1984 г.

¹⁰ Арто Ншанян (1933-1999) - армянский актер Спюрка (диаспоры), родился в Каире, окончил Национальную гимназию Галустян. С юношеских лет увлекался театром, впервые сыграл на сцене в

руга – Сероба Кекликяна и консультанта – своего отца Хорена Тетяна. «За время сценической деятельности, когда я бескорыстно и безотказно содействовала всем нуждающимся в моей помощи, я замечала, как некоторые с неприязнью относились друг к другу. Но театр должен был быть выше этого и для всех без исключения быть в равной степени любимым и привлекательным. Посему независимо от партийных ограничений мы создали самодеятельную труппу, в которой могли работать армяне с разными идеологическими взглядами»,¹¹ – писала С. Кекликян. В 1976-1985 гг. труппа подготовила более 24 спектаклей. Сельме Кекликян как режиссеру удалось создать такую труппу, которая благодаря неиссякаемому энтузиазму, без какой-либо поддержки со стороны общины и партии, не имея помещения, в своих домах и квартирах либо арендованных клубах организовывала встречи, проводила репетиции. Следует подчеркнуть то обстоятельство, что почти все актеры во имя существования армянского театра в этом далеком для них городе работали в сложнейших условиях, поскольку им приходилось выступления в театре сочетать с основной работой. В репертуары труппы были включены произведения Ерванда Отяна и Микаела Кюрчяна («Чаршл Артин-ага»), Оскара Уайльда («Веер»), Аракси Оганян («Саят-Нова»), Дереника Демирчяна («Вардананк»), Ширванзаде («Из-за чести»), Григора Тер-Григоряна («Птичка в клетке», 1978), представленные на суд зрителя в Константинополе и др. городах, и пользующиеся популярностью пьесы Грем Симона/Симона Экмечяна («Невестка и свекровь»), Мориса Хенекена («Дитя»), Марселя Паньола («Топаз»), Паруйра Масикяна («Смотрины»), пьесу-мюзикл Сирвард Ншанян («Тридцать лет спустя»), Арутюна Эсекуляна¹² («Угрызения совести»), А. Пароняна («Высокоцитимые попрошайки»), а также патриотическую пьесу Геворга Пагджя-

16 лет в роли Гарника-ага в комедийном спектакле «Чаршл Артин-ага». Играл в каирском Общенациональном театре, в театре Армянского союза любителей живописи и Союза любителей чтения, а также в частных театральных труппах Аракси Оганян, Арпиар Вардян, Седы Гочунян. В 1963 г. обосновался в Канаде, принимал активное участие в армянской театральной жизни Монреаля.

¹¹ Քնիշի 1980, N 795, 21:

¹² Арутюн Эсекулян (1914-?) – армянский писатель Спюрка, педагог. Окончил Каирскую гимназию Галустьян (1923), Кипрский колледж Мелконян (1936), учился в семинарии Антилиаса (1932-1934). В 1936-1940 гг. учился на отделении педагогики и арменоведения Брюссельского университета, был студентом Николая Адонца. В 1946 г. в Лувенском университете защитил диссертацию «Армянские храмы как очаги культуры» (на франц. яз.), и ему была присуждена ученая степень доктора педагогических наук. Преподавал в гимназии Мелконян (1946-1950, 1957-1972), в семинарии Антилиаса (1950-1957), в Бейрутском искусствоведческом колледже. Занимался литературной и общественной деятельностью на Кипре и в Ливане. Он является автором стихов, литературных и педагогических исследований, статей и трех пьес. Его пьесы «Беды нации», «Угрызения совести», «Где был Армянский Бог?» неоднократно ставились на Кипре, в Ливане и Канаде. В 1978-1980 гг. являлся секретарем Монреальского Всеармянского благотворительного союза (ВАБС), являлся основателем и редактором журнала «Нор айг» («Новая заря»). В Монреальском университете Конкордиа он преподавал армянский язык и литературу.

на¹³/Вазгена Айгуни, 1913-1999 («Создание алфавита» и «На родину»). По поводу последней постановки С. Кекликян писала: «Я попыталась осуществить постановку взволновавшей меня патриотической пьесы «На родину», в которой представлены душевные переживания бежавших в разные страны армян, в том числе армян Канады».

Изданная в 1941 г., эта пьеса актуальна по сей день. В ряду постановок, осуществленных С. Кекликян с театральной труппой «Армянян», особое место занимает опера «Ануш», транслировавшаяся по телевидению, а также по радио в Квебеке и получившая высокую оценку как на страницах армянской, так и иностранной периодики.

Еще в мае 1946 г. опера «Ануш» была поставлена в Каире. Оперный спектакль был подготовлен местными силами, и в роли главного персонажа Моси выступил известный певец Мигран Еркат,¹⁴ а партию матери Моси исполнила 19-летняя Сельма Кекликян: «Постановка была блестящей, не считая отдельных недостатков, которые неизбежны при отсутствии государственных средств и средств диаспоры», – писал рецензент¹⁵. Говоря об исполнительнице роли матери Моси, он отмечал, что «Сельма Тетейан (Сельма Кекликян – А.Б.) обладает прекрасным голосом и мимически соответствует роли...»¹⁶.

Помимо театральных постановок, труппа «Армянян» организовывала лекции и разные мероприятия. С 1980 г. С. Кекликян стала также художественным руководителем монреальского филиала Всеобщего армянского благотворительного союза. Ею была создана труппа «Вильям Сароян», бенефисным спектаклем которой стала пьеса «Мое сердце в горах», вслед за ней были поставлены пьесы «Птичка в клетке» и «Ох, нервы, нервы» драматурга Григора Тер-Григоряна. «Следует признать, что этот спектакль был лучшим среди перечисленных», – писала газета «Նոր փյուռ» («Новая заря»), – благодаря гармоничному объединению старых и новых сил и главным образом благода-

¹³ Пагджян Геворк (Вазген Айгуни, 1913-1999) – армянский деятель культуры Спюрка, поборник Армянского вопроса, доктор юридических наук. Учился в Бейрутской гимназии Св. Григора Лусаворича, затем – во французском университете Сен Жозеф. В 1970 г. обосновался в Канаде, в Квебекском университете преподавал арменоведение, в 1972 г. на Монреальском телевидении организовал передачи на армянском языке, основал центральный орган Константинопольского армянского союза (Мхитарян-Эсяян- Центральный) – под девизом «Одна нация – одна культура». Автор ряда пьес – «На родину», «Чудесное открытие», «Справедливый суд», «Патриотичный деятель» и др.

¹⁴ Мигран Еркат (1921-1986) – армянский оперный певец, Народный артист Армянской ССР (1961). Народный артист СССР (1971). Родился в Константинополе, учился в Александрийском лицее им. Дж. Верди. В 1941 г. впервые вышел на сцену Каирской Королевской оперы. В 1942-1947 гг. являлся солистом Александрийского театра «Алгамбра» и Каирского Королевского оперного театра. В 1947-1986 гг. был солистом Ереванского государственного академического театра оперы и балета им. Александра Спендиаряна.

¹⁵ ՄԻԴ 1946, N 8353, 3:

¹⁶ ՄԻԴ 1946, N 8353, 3:

ря терпеливому и опытному режиссеру, усилия которого увенчались победой»¹⁷.

Что же касается постановки пьесы Арамашота Папаяна «Умри – тогда я полюблю тебя», то газета «Новая заря» откликнулась и на эту работу С. Кекликян: «С. Кекликян, как неустанная труженица в сфере вокального и театрального искусства, с помощью молодых актерских сил попыталась представить армянам Монреаля новую пьесу. Мы ценим ее усилия и надеемся, что она предстанет перед общественностью с еще более удачными спектаклями»¹⁸.

Известная армянская актриса из Канады Арсине Ханджян начинала свою карьеру в этой театральной труппе¹⁹. Труппа выступала со спектаклями, представленными по пьесам как армянских, так и иностранных авторов.

С. Кекликян в своем переводе ставила произведения Агаты Кристи, Марселя Панеоля, Оскара Уайльда и др. Как пишет С. Кекликян, она выбирала материалы, «исток которых составляли страдания народа, его душевные раны, [те] драматургические произведения, которые заключали в себе нравственно-дидактические постулаты»²⁰. Именно руководствуясь этим, она перевела пьесу Джона Патрика «Все любят Обала», которая не протяжении многих лет шла на Бродвее. А в связи с постановкой «Мышеловки» Агаты Кристи в газетах писали, что этот спектакль по своей режиссуре превзошел все предыдущие. В 1985 г. труппа «Вильям Сароян» выступила со спектаклем по пьесе французского драматурга армянского происхождения Ваге Кача «Пир хищников». Эта сложная для постановки пьеса благодаря блестящей режиссуре С. Кекликян и актерским силам труппы имела огромный успех», – отмечала газета «Джеральд» («Գեղարդ»)»²¹.

Театральной труппой «Малая сцена», основанной в Монреале в 1988 г. Культурным союзом Мамиконян при церкви Св. Григора Лусаворича, Сельмой Кекликян было осуществлено несколько постановок: пьеса канадского писателя Мишеля Трембле «Ох, женщины, женщины», Мольера – «Двое глухих», Гоголя – «Записки сумасшедшего», английского драматурга Рея Куини – «Деньги, деньги», «Беги к жене своей». Отметим, что названные произведения были переведены на западноармянский именно Сельмой Кекликян.

¹⁷ Նոր արդ 1987, N 71:

¹⁸ Նոր արդ 1982, N 11-12, 14:

¹⁹ Арсине Ханджян выступила с труппой ВАБС-а «Вильям Сароян» в пьесе «Каждый любит Обала» и «Мышеловка».

²⁰ Նոր արդ 1983, N 15, 6:

²¹ Գեղարդ 1985, N 77, 12:

ԵՐԲ ԲԱՐԵԿԱՄ ՈՒՆԻՍ, ԲՆԱԻ ԳԷՇ ԲԱՆ ԶԻ ԿՐՆԱՐ ՊԱՏԱՀԱՆՈՒՄ ԲԵՋԻ

ՍՈՍԻԱԼԻՍՏԻԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հ. Բ. Ը. Մ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՏԵՐԱԳԻՐ
ՀՈՆ ԲԱԹՐԻՔ Ի

ԱՍԷՆՔԸ ԿԸ ՄԻՐԵՆ ՕՐԱԼԸ
ԿԱՏԱԿ ՄԸ՝ 3 ԱՐԱՐՈՎ

ԲԵՄԱԳՐՈՒԹԻՒՆ
ՍՅԼՄԱ ՔԷՔԼԻԿԱՆ Ի

ՇԱՐԱԹ, 30 ԱՊՐԻԼ 1983 ժԱՄԸ 20:00 ԻՆ
ԿԻՐԱԿԻ, 1 ՄԱՅԻՍ 1983 ժԱՄԸ 19:00 ԻՆ
ԿԻՐԱԿԻ, 8 ՄԱՅԻՍ 1983 ժԱՄԸ 19:00 ԻՆ

Հ. Բ. Ը. Մ. ՎԱՀՐԱՄ ՍՈՒՓԻԱՍ ՄՐԱՀԻՆ ՄԷՋ
805 ՄԱՆՈՒԿԵԱՆ ՓՈՂՈՑ

ՄԻԼԻՈՆՆԵՐ ԶՈՒՆԻՄ, ՈՒՐԵՄՆ ԹՇՆԱՄԻ ԱԼ ԶՈՒՆԻՄ

UNION ARABE
DE MONTREAL

ՄՈՆՏՐԵԱԼԻ
ԱՐԱՄԵՆԵԱՆ
ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

ԴԵՐԵՆԻԿ
ԴԵՄԻՐՁԵԱՆԻ

ՎԱՐԴԱՆԱՆՔԸ
ՄԱՐ

ԻՐ ՀԱՐԻՐԱՄԵԱՆՆԵՆ ԿՈՒՐՈՒՄ

ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻ ՎԵՐԱՄԵՆ
ԿՈՒՐՆ ՏԵՏԷՆԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԿԱՆԵԱՆ ԿՈՍՏԸ
Որոշել եմք, որ ինչպես և որպես ինչպես
այն ինչ որ ըստ իմ հայելու մեր ժողովուրդին:
Ձի հարազան Վերադարձին ինչպե՞ս
Կարգավորվենք ինչպե՞ս, միայն միայնակ
բնակ համար՝ ինչպե՞ս, միայնակ
միայնակ միայնակ ինչպե՞ս,
միայնակ միայնակ միայնակ ինչպե՞ս

ՍԱՐԱՐՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
ՊՐԵՋԵԿՏԻ ՎԱՐԴԱՆԱՆՔԸ
ԲԱՐՈՅԱԼԻՆ ԶԱՆԵՏԱՆԱԿ

Զարթո՛ւ 4 Մարտ, 1978 ժամը 20:30-ին
Կիրակի 5 Մարտ 1978 ժամը 18:30-ին

SALLE LUCIEN PAGÉ
8200 BOUL. ST-LAURENT

ՄՈՆՏՐԵԱԼԻ ԱՐԱՄԵՆԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ

Նորակերպ Միկնոթիամբ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ
ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՁԵԱՆԻ

✦ ՎԱՐԴԱՆԱՆՔԸ ✦
✦ ✦ ✦ ✦ ✦ ✦ ✦ ✦ ✦

Նուիրուած իր ճնշիւն 100-լակին
ՎԷՄԸ Բարձրագոյն վերադարձին ՏԵՏԷՆԱՆ
Տառակցութեամբ գաղութի փորձառու ուսուցիչ
Նաև օժանդակութեամբ
Վարդապետը դիրասան Պր. Սարգիս Տեղեկան-ի
և

Նորակերպ՝ Լիւնաճառայ Բիւրի-Ճանթի դիրասան Պր. Պաշիթ Էվիլիկլան-ի


Քիմարութիւն Սէլմա Բէքլիկլան
Իրաւաբանական և պարային պարզած Ներմանմանով ճոխացուած
փողի պիտի ունենայ յարգանքի հարուցում Պր. Ս. Տեղեկան-ի

ՇԱՐԱԹ 4 ՄԱՐՏ 1978 ժամը 20:30-ին
ԿԻՐԱԿԻ 5 ՄԱՐՏ 1978 ժամը 18:30-ին
SALLE LUCIEN PAGÉ
8200 BOULV. ST-LAURENT

ՄՈՒՏՔ : 5.00 ԳՐԱՐ
ԳՐԱՐԱՆ ԿԱՏԱՐ ԴԻՄԼ

Ժ. Գարակոչլան 274-5974
Ե. Ալիքսանյան 276-3931
Ս. Բէքլիկլան 733-0240

В тот же год, в 1988 году, труппа «Малая сцена» отметила десятилетие своей деятельности постановкой двухактной комедии известного армянского драматурга, названного «Бомарше наших дней» и «Рыцарем юмора» Жоры (Геворка) Арутюняна «Больной N 199». Как эта, так и другие пьесы драматурга пленяли зрителей своим неповторимым юмором, искренностью, сердечностью, гуманизмом и добротой.



Пьесы драматурга ставились не только в Армении – Ереване, Гюмри, Капане, но и за пределами республики – в Таллине, Львове, Москве, Будапеште и в далеком Монреале. Монреальский спектакль был принят зрителем очень тепло. Вот что писал о спектакле журнал «Бурастан»: «Всего лишь двухактная комедия «Больной N 199», автор которой врач-драматург Жора (Геворк) Арутюнян, живущий в Армении, посвящена 70-летию драматурга; кассовый сбор со спектакля по желанию автора пьесы будет предоставлен фонду для ремонтных работ церкви Св. Григора Лусаворича»²². «Огромную долю нашей оценки и благодарности мы шлем автору. Умение подобрать нужную пьесу, проявить вкус при внесении ряда изменений с учетом сегодняшнего дня и индивидуальных особенностей труппы, искусство подачи материала и обеспечения качества – вот особенности, характеризующие заслуженного постановщика – госпожи Сельмы Кекликян»²³.

Все актеры, занятые в спектакле, играют на профессиональном уровне, заслуживают похвалы даже те, кто был задействован в эпизодах, поскольку им удалось создать самобытные и впечатляющие образы»²⁴. Узнав об этой

²² Բուրաստան 1998, նոյեմբեր-դեկտեմբեր, 25:

²³ Բուրաստան 1998, նոյեմբեր-դեկտեմբեր, 25:

²⁴ Բուրաստան 1998, նոյեմբեր-դեկտեմբեր, 25:

постановке, автор пьесы Жора Арутюнян с благодарственным письмом обратился к С. Кекликян, отметив, что служители «малой сцены» не щадят сил для развития и распространения армянского искусства».

С. Кекликян играла также в канадских фильмах. В фильме реж. Атома Эгояна «Семейный просмотр» (1987 г.) она сыграла роль всеми позабытой старой бабушки в доме престарелых. Фильм получил первую премию на канадском кинофестивале. С. Кекликян в этой роли говорит на армянском языке. Первоначально по сценарию было задумано, что С. Кекликян будет играть роль итальянской женщины, но С. Кекликян предложила несколько изменить сюжетную линию, и режиссер пошёл ей навстречу, дав ей возможность, будучи армянкой, играть на армянском языке.

В 1987 г. в связи с 60-летием С. Кекликян канадское правительство в числе местных актеров воздало дань уважения также ей. Премьер-министр Канады Брайан Малруни лично выразил благодарность за служение искусству, вручив ей почетную грамоту от имени канадского правительства.

Хорен Тетейан (1901-1980)



«50 лет я служил армянской сцене и литературе, служил, хотя моя жизнь полна была лишений, но лишения доставляли мне радость. Я подобен был христианину, который идет в церковь, чтобы причаститься, и идет, соблюдая пост. Ведь служение армянской литературе – молитва»²⁵.

Актер, сатирик, театровед Хорен Тетейан родился в Смирне. Начальное образование получил здесь же, в гимназиях Месропян и Бояджян. Впервые как актер принял участие в исторической драме «Гайл Ваан» («Волк Ваан») в 1909 г. вместе со своим отцом. Вот что он пишет в своих воспоминаниях: «Хочу вернуть своего читателя в 1909-ый год, в период после принятия Османской конституции, когда для турецкоподданных армян жизнь возродилась словно из пепла в одном из центров Турции со значительным армянским населением ... В Константинополе и Смирне активно развивалось национальное театральное искусство. Долгие годы мы не имели возможности приобщиться к национальной драматургии, армянское общество жаждало

²⁵ Քույր 1985, 15 փետրվարի, 7:

этого, и после принятия Конституции армяне были очень воодушевлены. В вышеназванной пьесе «Гайл Ваан» (автор Карапет Гюмджян) Х. Тетейн сыграл одну из центральных ролей: «...и в этой драме мы с отцом выступили как актеры: отец – в роли епископа Мушега, а я – в роли маленького Цолака»²⁶, – вспоминал впоследствии актер. Хорен Тетейн, который в 1919 г. сформировал театральную труппу «Артавазд», играл на сцене вместе с Ваграмом Папазяном и Ованесом Абеяном. В 1920 г. Х. Тетейн выступил в пьесе Ширванзаде «Из-за чести» в роли Вардана – слуги из Шамаха.

«Когда в 1922 г. начались погромы в Смирне, Ованес Абеян со своей женой Ольгой и дочерью Марикой, как и члены его актерской труппы, находились в Смирне. Не успел он поставить спектакль, как погромы перевернули городскую жизнь с ног на голову. О. Абеян стал очевидцем этих кровавых событий и был очень подавлен, такого ужаса ему еще не приходилось видеть»²⁷. После смирнинских погромов армяне нашли пристанище в Греции и Болгарии. О. Абеяну удалось с большими трудностями перевезти свою семью и часть актеров труппы в город Салоники. В том же – 1922 г. Смирну покинул Х. Тетейн. Он также обосновался в Салониках, где им была сформирована театральная труппа, в которую вошел Ованес Зарифян. В 1930 г. Х. Тетейн переехал в Каир. 21-го февраля 1950 г. Каирский клуб либеральной партии Рамкавар вместе с Союзом любителей армянского искусства подготовил спектакль по пьесе Смбата Бюрата²⁸ «Вардананк» или «Орел Аварайра», приуроченный к празднику Вардананц. Эта пьеса впервые была поставлена в Каире в 1900 г. силами объединенной труппы Фасуладжян-Пенлеян. В этом спектакле Хорен Тетейн сыграл роль Михрнерсеха и, как пишет рецензент, «смог воплотить в этом персонаже образ азарапета и советника одновременно»²⁹. Египетский армянин Ованес Воскерчян – поклонник театрального искусства, вспоминая об этом плодотворном периоде развития армянского театрального искусства в Египте, пишет: «Хорен Тетейн – сатирик, bass, певец, актер – достойная личность, ценит время, у него я научился пунктуальности, он работал без суфлера и обладал особой дикцией»³⁰. В 1953 г. им была поставлена в Каире пьеса «Вардананк» (на основе одноименного романа – А.Б.),

²⁶ Տեղեկան 1947, 12-13:

²⁷ Գեղորգեան 1957, 300:

²⁸ Смбат Бюрат (Тер-Казарянц, 1862-1915). Погиб во время геноцида. Армянский писатель, педагог, общественный деятель. Окончил Иерусалимскую гимназию Жарангаворац (1880), посещал лекции по педагогике в Сорбоннском университете. Является автором пьес «Орел Аварайра» или «Вардананк» (1909), «На кровавом пути» (1911), «Последняя крепость» и др.

²⁹ Արեւ 1950, N 9487, 4:

³⁰ Էվերէկեան 2004, 25 մարտի, 3:

спектакль был подготовлен супругами Оганян с их же участием. В этом спектакле Х. Тетяян сыграл роль священника Гевонда. Пьеса «Вардананк» была очень популярна и любима египетским зрителем. Евгения Аристамян³¹ пишет о том, что этот спектакль не нуждался в рекламе... это был единственный спектакль, который собирал огромную аудиторию армян, не было необходимости в продаже билетов, народ валом валил, приводя с собой детей и пожилых матерей, это и впрямь был национальный праздник, если в течение недели пьеса шла дважды, то театр опять был переполнен зрителями»³².

В 1961 г. в Каире отмечалось 40-летие литературной и театральной деятельности Тетяяна. В 1963 г. Хорен Тетяян переехал в Канаду, в Монреаль, где продолжил свою театральную деятельность в различных театральных труппах. В 1978 г. монреальская театральная труппа «Армянян» поставила спектакль «Вардананк» по Д. Демирчяну, посвятив его 60-летию литературно-театральной деятельности Хорена Тетяяна и 100-летию со дня рождения Д. Демирчяна, воздав тем самым дань памяти известному писателю и дань уважения мастеру сцены – Х. Тетяяну. Вот что пишет об этом спектакле Давид Эвереклян: «Замерзшие и покрытые снегом улицы Монреаля оживились. Армянские театралы Египта, Сирии, Греции, забыв обо всем, проникнутые любовью к сцене направляются в клуб константинопольских армян, где идут репетиции пьесы «Вардананк».

На уличных газонах, на полях лежит снег, высотой в человеческий рост, кружит метель в этой стране морозов, однако театральное пламя горит ярко, обжигая сердца, которые не чувствуют холода»³³. В спектакле «Вардананк» было задействовано 25 актеров-актрис, Х. Тетяян играл роль дедушки Абраама. Роскошная национальная одежда актеров – плод усилий Сельмы Кекликян, автор музыки – Сирвард Ншанян. Это подтверждает мысль о том, что «сохраняя армянский театр в диаспоре, мы сохраним и защитим наш язык, литературу, нашу живопись и музыку, поскольку театр – квинтэссенция всего этого»³⁴. Спектакль имел широкий резонанс, монреальская периодика от-

³¹ Евгения Аристамян-Полиакина (1890-1970), певица, танцовщица, одна из танцовщиц Московского Королевского театра. В 1917 г. вместе с родителями уехала в Константинополь, где ставила опереточные и балетные спектакли. Затем переехала в Смирну, где также успешно занималась режиссурой. После погромов в Смирне вместе с родителями обосновалась в Греции, а впоследствии – в Египте, где на первых порах выступала под именем Эожен Кавкасян. В 1931 г. вышла замуж за талантливого русского скрипача Наума Полиакина. После смерти мужа, в 1948 г. эмигрировала в Армению, в Ереван. Сотрудничала с газетами «Արև» («Солнце») и «Հայրենիք» («Родина») (изд. в Бостоне). В 1962 г. в Ереване была издана ее книга «Маленький египтянин Мурса».

³² Եւգինուհեան 1981, 361:

³³ Էվերեկլեան 1989, 105:

³⁴ Դերասան թատերագիր Մ. Մարութեան 1969, 68:

кликнулась на это культурное событие: «Вардананк» Д. Демирчяна уходит в глубь веков как одно из мощных проявлений неиссякаемой веры армян, что нашло отражение и на армянской сцене, с посылом не расслабляться, адресованным монреальскому армянскому обществу»³⁵, – писала монреальская еженедельная газета «Այսպիսի» («Будущее»). В интервью монреальскому телевидению во время программы на армянском языке Тетейан отметил следующее: «Хотелось бы произведение талантливого Дереника Демирчяна иметь в качестве ориентира. Эту пьесу (на основе романа Демирчяна – А.Б.) я создал, адаптировав её для Спюрка, пытаюсь избежать риторики, насколько это возможно»³⁶. В 1979 г. Хорен Тетейан участвовал в спектакле «Топаз», а 3-го и 4-го марта того же года в театре «Мари Анн» была поставлена пьеса «Сноха и свекровь», свыше 50-ти раз ставившаяся театральной труппой «Бейрутские кулисы» в Ливане и Сирии, где также выступал Хорен Тетейан. Эта пьеса была поставлена и в Торонто – в ответ на приглашение в Торонто в 1980 г.

Хорен Тетейан инсценировал роман Ерванда Отяна (1869-1926) «Семья, честь, нравственность», в котором повествуется история константинопольской армянской семьи. По инициативе Х. Тетейана спектакль сопровождался музыкой и танцами. В связи со 100-летием Ерванда Отяна культурный Союз Текеян Провиденса и Бостона пригласил театральную труппу монреальского Культурного союза Текеян с предложением поставить инсценировку вышеназванного романа Отяна, в которой Х. Тетейан исполнил роль Гукаса – эфенди. «Х. Тетейан и как сатирик, и как актер, и как знаток константинопольской жизни блестяще инсценировал роман Ерванда Отяна, превратил это произведение в пьесу и внес ряд изменений. Роль Гукаса-эфенди Х. Тетейан сыграл тонко, психологически, прочувствовав каждое слово и каждую паузу»³⁷, – писала газета «Բնիշիւմ» («Бурастан»).

Х. Тетейан писал очерки о театре, которые публиковались в 1963 г. на страницах газеты «Արև» («Солнце»). Обладая даром рассказчика, он писал рассказы и мемуары, издававшиеся в газете «Кулисы». Первое сатирическое произведение Х. Тетейана увидело свет в 1920 г. Он сотрудничал со смирнинским периодическим изданием «Արևելյան մամուլ» («Восточная печать»), с каирской «Ջահաշիր» («Несущий лампаду»), «Ավազան» («Аэроплан»), с монреальской газетой «Այսպիսի» («Будущее»), с константинопольской «Մարմար» («Мрамор») и «Բնիշիւմ» («Кулисы»). Им были изданы сборник сатири-

³⁵ Հայրենիքի ծայն 1978, N 27, 5 հուլիսի:

³⁶ Բնիշիւմ 1978, N 75, 10: Հմմտ. Ապագա 1978, 18 մարտի, Հայրենիքի ծայն 1978, N 27, 5 հուլիսի:

³⁷ Բնիշիւմ 1970, N 76, 14:

ческих рассказов «Улыбка» (1947 г.) и повесть «Записная книжка юноши» (1949 г.). Его перу принадлежат десятки пьес и комедий.

Заключение

Театр Спюрка продолжает жить и созидать, несмотря на жизненные перипетии, преодолевая трудности на пути служения любимому виду искусства, порой вопреки неизбежным неудачам.

В неблагоприятных условиях чужбины, а иногда недоброжелательного отношения тех или иных организаций в силу лояльности (отсутствия членства в партиях Спюрка), театральные труппы, руководимые Сельмой Кекликян, постоянно пополнялись талантливыми актерскими силами – независимо от их партийной принадлежности, и если даже они были не столь совершенны, то, по меньшей мере, пользовались популярностью и снискали любовь канадского армянского зрителя, приобщавшегося благодаря подвижнической деятельности Сельмы Кекликян к образцам драматургического творчества как армянских, так и иностранных писателей. Театр способствовал духовной консолидации диаспоры, осознанию и сохранению национальной идентичности на чужих берегах. Искра любви к национальной культуре, зажженная в сердцах соотечественников усилиями Сельмы Кекликян, помогала жить и выживать, способствовала воспитанию поколений армян, волею исторических обстоятельств оказавшихся вдали от Родины.

Литература

Ապագա 1978, 18 մարտի:

Արեւ 1946, N 8353, էջ 3:

Արեւ 1950, 25 փետրվարի, N 9487, էջ 4:

Բուրաստան 1970, N 76, էջ 14:

Բուրաստան 1971, N 95, էջ 13:

Գեղարդ 1985, N 77, էջ 12:

Գեորգեան Կ. 1957, Ամենուն տարեգիրքը. Իզմիրի աղետը և դերասանապետ Յ Աբելեան, Պեյրուֆ, Լիբանան, էջ 300:

Դերասան թատերագիր Մ. Մարութեան. իր բեմական եւ գրական գործունեութեան 50 ամեակի առթիւ 1918-1968, 1969, Թեհրան, տպարան «Մոդեռն», 81 էջ:

Եսփունճեան Ա. 1981, Եգիպտահայ մշակոյթի պատմութիւն, Գահիր, էջ 361:

Հայրենիքի ծայն 1978, 5 հուլիսի, N 27:

Նոր այգ 1982, 10 դեկտեմբերի, N 11-12, էջ 14:

Նոր Այգ 1987, հունվար-փետրվար, N 71, էջ 16:

Նոր Այգ 1983, N 15:

Տետեան Խ. 1947, «Գայլ Վահան» թատերական ներկայացման մը ողիսականը, Ժպիտ, Գահիրե, էջ 12-13:

Քուլիս 1974, 15 հոկտեմբերի, N 668, էջ 23:

Քուլիս 1978, 1 ապրիլի, N 75, էջ 10:

Քուլիս 1978, 1 հուլիսի, N 757, էջ 4-8:

Քուլիս 1980, 1 փետրվարի, N 795, էջ 21:

Քուլիս 1985, 15 փետրվարի, էջ 7:

Էվերեկյան Դ. 1989, Թատերական կեանքի ճամփուն վրայ (Գանատական երկնակամարին տակ: Երբ կաշխատենք Արմենեան թատերախումբին մէջ), Վարդանանք, Լոս Անջելես, էջ 105:

Էվերեկյան Դ. 2004, Նիւթեր Սփյուռքահայ թատրոնի պատմութեան (Եգիպտոս-Լիբանան-Նիւ-Եորք-Հայաստան), հարցազրոյց բեմի անխոնջ նուիրեալ Յովհաննես Ոսկերիչեանի հետ, Ջահակիր, 25 մարտի, էջ 3:

ТВОРЧЕСКИЕ СИЛЫ КАНАДСКОЙ АРМЯНСКОЙ СЦЕНЫ

Анаит Бекарян

Резюме

Выступавшие на канадской армянской сцене актеры в основном не были профессионалами. Они принимали участие в спектаклях, организуемых различными группами. Но при этом канадский армянский театр был представлен немногочисленной группой актеров с профессиональным образованием, являвших собой яркую творческую индивидуальность. Ими были сформированы театральные труппы с интересным репертуаром, занявшие свою нишу в истории театра армянской диаспоры.

К числу подвижников армянского искусства относится также талантливая армянская оперная певица, актриса, основатель театральной труппы «Армянян», пропагандист армянской культуры в Канаде Сельма Кекликян, внесшая достойный вклад в популяризацию духовного наследия армянского народа.

Другим ярким представителем армянской культуры являлся актер, сатирик, театровед Х. Тетейан, который занимался также литературной деятельностью. Им были изданы сборник сатирических рассказов «Улыбка», пьесы и повесть «Записная книжка юноша».

Ключевые слова – Сельма Кекликян, Хорен Тетейан, Смирна, труппа «Армянян», труппа «Вильям Сароян», «Вардананк», «Ануш».

ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅ ԲԵՄԻ ՍԵՆՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ

Անահիտ Բեքարյան

Ամփոփում

Կանադահայ բեմում հանդես եկող դերասանները մեծավ մասամբ պրոֆեսիոնալներ չէին: Նրանք մասնակցել էին տարբեր խմբերի կողմից կազմակերպվող ներկայացումներին: Այդուհանդերձ, կանադահայ թատրոնը ներկայանում էր ստեղծագործական վառ անհատականությամբ օժտված, մասնագիտական կրթություն ունեցող փոքրաթիվ արտիստներով: Նրանք ստեղծել էին հետաքրքիր խաղացանկով թատերախմբեր, որոնք իրենց տեղն ունեն սփյուռքահայ թատրոնի պատմության մեջ:

Հայ արվեստի նվիրյալների թվին է պատկանում նաև օպերային տաղանդավոր երգչուհի, դերասանուհի, «Արմենյան» թատերախմբի հիմնադիր, Կանադայում հայ մշակույթի քարոզիչ Սելմա Քեքլիկյանը, որն արժեքավոր ներդրում է ունեցել հայ ժողովրդի հոգևոր ժառանգության հանրայնացման գործում:

Հայ մշակույթի մյուս ակնառու ներկայացուցիչը արտիստ, երգիծաբան, թատերագետ Խորեն Տետեյանն է, որն զբաղվել է նաև գրական գործունեությամբ: Նա հրատարակել է «Ժպիտ» երգիծական պատմվածքների ժողովածուն, պիեսներ և «Երիտասարդի մը հուշատետրը» վիպակը:

Բանալի բառեր՝ Սելմա Քեքլիկյան, Խորեն Տետեյան, Ջմյունիա, «Արմենյան» թատերախումբ, «Վիլյամ Սարոյան» թատերախումբ, «Վարդանանք», «Անուշ»:

CREATIVE POWER OF THE ARMENIAN STAGE IN CANADA

Anahit Bekaryan

Abstract

The actors performing on the Armenian stage in Canada were mostly non-professionals, who starred in performances staged by various companies. At the same time, the Armenian theatre in Canada was represented by a small team of professional actors. They joined theatre companies with an interesting repertoire and had a great role in the history of the theatre of the Armenian Diaspora.

Selma Keklikyan, a talented Armenian opera singer, actress, founder of the “Armenian” company, promoter of the Armenian culture in Canada, made a significant contribution to the cultural legacy of the Armenian people.

Another prominent representative of the Armenian culture was actor, satirist, and theater critic Kh. Teteyan, who was also engaged in literary activities. He published a collection of satirical stories “Smile”, plays and the story “A young man's notebook”.

Key words – Selma Keklikyan, Khoren Teteyan, Smyrna, Armenian theatre company, William Saroyan theatre company, Vardanank, Anush.

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՅԸ
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ**

Անի Նազարյան

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
ՀՀ, Երևան, Տիգրան Մեծի 17
Էլ. հասցե՝ nazaryanani23@asp.u.am

Նարինե Ստեփանյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
ՀՀ, Երևան, Տիգրան Մեծի 17
Էլ. հասցե՝ nstepanian@rambler.ru
Հոդվածը ներկայացվել է 27.11.2020, գրախոսվել է 03.12.2020, ընդունվել է տպագրության 05.07.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.2-215

Ներածություն

«Կարծրատիպ» (հունարեն στερεός – կարծր և τύπος – դրոշմ, կնիք) եզրույթը գիտական շրջանառության մեջ է դրել ամերիկացի սոցիոլոգ, լրագրող Ուոլթեր Լիպմանը XX դ. 20-ական թթ.: Իր «Հասարակական կարծիք» գրքում (1922 թ.) նա կարծրատիպերը բնորոշում է որպես կարգավորված, սխեմատիկ, մշակույթով պայմանավորված «աշխարհի պատկերներ» մարդու գիտակցության մեջ, որոնք բարդ սոցիալական երևույթների ընկալման գործընթացում խնայում են մարդկանց ճիգերը և պաշտպանում նրանց սոցիալական դիրքը, արժեքները, սովորույթներն ու իրավունքները¹:

Թեև Ու. Լիպմանը և նրան հաջորդող հեղինակների մեծ մասը (Թ. Ադորնոն², Գ. Օլպորտ³, Ու. Քվասթհոֆ⁴, Յու. Օլբրիգ⁵, Ռ. Թաջուրի⁶, Վ.Գ. Կրիսկոն⁷, Վ.Վ. Կրասնիխ⁸) կարծրատիպերը դիտարկում էին որպես կայուն և անփոփոխ սոցիալական երևույթներ, սակայն հետագայում պարզ դարձավ, որ սոցիալական կարծրա-

¹ Липман 2004, 95-114.

² Адорно 2001.

³ Allport 1954.

⁴ Quasthoff 1978.

⁵ Allbig 1949.

⁶ Taguiri 1969.

⁷ Крыско 2008.

⁸ Красных 2003.

տիպերը արտաքին-սոցիալական և ներքին-հոգեբանական տարբեր ազդեցությունների ներքո կարող են ենթարկվել որոշակի փոփոխությունների. որոշ կարծրատիպեր կարող են մասամբ կորցնել իրենց նշանակությունը, մյուսները՝ ամբողջությամբ կազմալուծվել:

Հասարակության զարգացմանը զուգընթաց՝ սոցիալական կարծրատիպերի շարժընթացն անընդհատ է. ժամանակի ընթացքում մի կարծրատիպը փոխարինում է մյուսին: Այսօր ոչ ստանդարտ համարվող երևույթները վաղը կարող են վերածվել կարծրատիպերի և ընդհակառակը: Պատմությանը հայտնի են կարծրատիպային պատկերացումների փոփոխության բազմաթիվ դեպքեր: Վերջին շրջանում հատկապես նկատելի փոփոխությունների են ենթարկվել սեռադերային և տարիքային կարծրատիպերը:

Սոցիալ-տնտեսական զարգացումների, գլոբալացման, համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով կտրուկ փոփոխվել են կանանց և տղամարդկանց սոցիալական և ընտանեկան դերերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև աշխատանքային և մասնագիտական պարտականությունները: Դա առավել ակնառու է անցումային հասարակություններում: Եթե նախկինում ընդունված էր այն կարծրատիպը, որ ընտանիքի գլխավորը և ֆինանսապես ապահովողը տղամարդն է, իսկ կինը պետք է զբաղվի երեխաներով և տնային տնտեսությամբ, ապա այսօր կանանց մեծ մասը ֆինանսապես անկախ է և որոշ տղամարդկանցից ավելի է վաստակում: Նույն միտումը նկատվում է նաև ձեռներեցության, գիտության, տեխնիկայի և քաղաքական ոլորտներում: Նախկին՝ «Կանայք չպետք է զբաղվեն քաղաքականությամբ», «Ձեռներեցությունը տղամարդկանց մենաշնորհն է», «Գիտության և տեխնիկայի ոլորտում պետք է աշխատեն միայն տղամարդիկ» կարծրատիպերին փոխարինելու են եկել բիզնեսի ոլորտում մեծ հաջողությունների հասած, գիտության և տեխնիկայի ասպարեզում նկատելի ավանդ ունեցող և մեծ համբավ վայելող կանայք, ճանաչված կին քաղաքական գործիչները:

Վերջին շրջանում նկատելի փոփոխությունների են ենթարկվել նաև տարիքային կարծրատիպերը՝ տարբեր տարիքի անձանց վերագրվող կարծրատիպային պատկերացումները: Եթե նախկինում հասարակական կյանքի կառավարումը հասուն տարիքի մարդկանց «մենաշնորհն» էր, ապա այսօր այդ կարծրատիպն այլևս չի գործում: Մեր օրերում շատ երիտասարդներ պետական լուրջ պաշտոններ են զբաղեցնում և իրենց ակտիվ մասնակցությամբ նպաստում են հասարակական կյանքի տնտեսական, իրավական, քաղաքական, մշակութային ոլորտների զարգացմանն ու կառավարմանը: Նախկինում գործող շատ կարծրատիպեր «կոտրվել են» նաև տարեց մարդկանց պարագայում: «Ծեր մարդիկ թույլ են, նվազ, անաշխատունակ, խնամքի կարիք ունեցող, չեն կարող մասնակցել հասարակական կյանքին» կարծրատիպերը ներկայումս կորցրել են իրենց արդիականությունը: Այսօր տարեց մարդկանց շրջանում բավական շատ են կենսունակ ձեռնարկատերերը, ակտիվ քաղաքական գործիչները, պետական

պաշտոնյաները, որոնք մեծ ակտիվությամբ և արգասաբերությամբ շարունակում են իրենց ծառայությունը մատուցել հասարակական կյանքի տարբեր ասպարեզներում: Սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային գործունեքով պայմանավորված կարծրատիպերի փոփոխության կամ կազմալուծման այսպիսի բազում օրինակներ կարելի է բերել:

Սոցիալական կարծրատիպերի կայունության և փոփոխականության վերաբերյալ մոտեցումները ռուս և արևմտյան հոգեբանական գրականության մեջ

Կարծրատիպերի կայունության առանձնահատկությանն առաջին անգամ անդրադարձել է Ու. Լիպմանը, և հենց այդ հատկանիշի շնորհիվ է սոցիալական այդ երևույթը նա անվանել «կարծրատիպ»: Կարծրատիպերի կայունության պատճառը Լիպմանը բացատրում է սոցիալական արժեքների պահպանման անհրաժեշտությամբ և պահանջով⁹:

Ա.Վ. Մերենկովը նշում է, որ սոցիալական կարծրատիպերի կայունությունը պայմանավորված է երկու գործոնով: Առաջինը վերաբերում է կարծրատիպերի համապատասխանությանը անհատի (կամ խմբի) կենսագործունեության պայմաններին: Որքան հաճախ է կարծրատիպը հակասության մեջ մտնում անհատի (կամ խմբի) կենսափորձի հետ, այնքան ավելի արագ այն կարող է փոփոխության ենթարկվել: Երկրորդը սոցիոմշակութային գործոնն է, որը պայմանավորված է կարծրատիպերի ձևավորման ժամանակաընթացքի հետ: Որքան ավելի վաղ է ձևավորվել կարծրատիպը և որքան ավելի երկար է պահպանվել տվյալ մշակութային միջավայրում, այնքան ավելի կայուն է և դժվար է ենթարկվում ձևափոխությունների¹⁰:

Սոցիալ-հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ սոցիալական կարծրատիպերն իրենց բնույթով կայուն են և դժվարությամբ են ենթարկվում փոփոխությունների: Նույնիսկ մարդու կենսափորձի անհամապատասխանությունը որոշակի կարծրատիպի բովանդակությանը ոչ միշտ է հանգեցնում դրանց փոփոխությանը: Ինչպես նշում է Ե.Վ. Օրլովը, «Խոսելով սոցիալական կարծրատիպի կայունության մասին՝ պետք է խոսել ոչ թե դրանց անփոփոխության, այլ ցանկացած կոնկրետ պահին այլ փոփոխություններին դիմադրելու մասին¹¹»:

Դ. Մացումոտոն ևս շեշտում է սոցիալական կարծրատիպերի փոփոխություններին դիմադրելու առանձնահատկությունը: Նրա համոզմամբ, այն տվյալները, որոնք հակասում են մարդկանց կարծրատիպային պատկերացումներին, այն աստիճան են «հղկվում», որ դրանք կարելի է կիրառել նույնիսկ ի նպաստ կարծ-

⁹ Липман 2004, 76.

¹⁰ Меренков 2001, 288-290.

¹¹ Орлов 1991, 11.

րատիպերի: Իսկ այն տվյալները, որոնք հնարավոր չէ կիրառել հոգուտ կարծրատիպերի, պարզապես անտեսվում են և դիտվում որպես պատահականություն¹²:

Թեև կարծրատիպերը բավական երկար են պահպանվում և դժվարությամբ են ենթարկվում փոփոխությունների, այնուամենայնիվ, պետք է նշել, որ դրանց կայունությունը հարաբերական է: Ինչպես նշում է մեր հայրենակից Ս. Մուրադյանը, կարծրատիպերի փոփոխությունը փաստ է: Ցանկացած կարծրատիպ վաղ թե ուշ ճանաչվում է այդպիսին և փոխարինվում է ավելի համարժեք գիտելիքով¹³:

Լինելով պարզեցված, կաղապարային, սահմանափակ բովանդակությամբ գոյացություն (պատկերացում)՝ անհատի աշխարհընկալման կառուցվածքում կարծրատիպի ազդեցությունը միանշանակ չէ, և դա ակնառու է հատկապես բարդ իրավիճակներում: Երբ անհատը բախվում է իր կարծրատիպային պատկերացումներին հակասող փաստերի հետ, հնարավոր են երկու տարբեր ելքեր: Մի դեպքում կարծրատիպը ձևափոխվում է կամ կազմալուծվում, այսինքն՝ անձը սկսում է երևույթն ընկալել ավելի բազմակողմանի, օբյեկտիվ հայացքով, մյուս դեպքում կարծրատիպն ամբողջությամբ պահպանվում է, և փաստերն անտեսվում են՝ դիտվելով որպես բացառություն: Նման իրավիճակներում անձի հակազդումները կախված են նրա մտածողության ճկունությունից, խառնվածքից, բնավորությունից, անձնային աճի մակարդակից:

Սոցիալական կարծրատիպերը փոփոխությունների են ենթարկվում սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային զարգացումների շնորհիվ:


Ի.Վ. Վալիևը կարծրատիպերի փոփոխականությունը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնները ներկայացնում է «կարծրատիպերի տարածություն» եռաչափ մոդելի միջոցով: Ըստ այդմ՝ կարծրատիպերը ձևավորում են որոշակի «կարծրատիպերի տարածություն», որը կարելի է ներկայացնել եռաչափ երկրաչափական տարածական համակարգի միջոցով (գծ.):

Երեք առանցքներից մեկում տեղակայված են տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային գործոնները, մյուսում՝ անհատական, խմբային և հասարակական մակարդակում գործող կարծրատիպերը, երրորդում՝ անձի կենսաբանական, հոգեբանական և սոցիալական կառուցվածքային բաղադրիչները: Վալիևի մոդելը ցույց է տալիս, որ սոցիալական կարծրատիպերը կարող են փոփոխվել (ձևավորվել կամ կազմալուծվել) այնպիսի արտաքին գործոնների ազդեցության ներքո, ինչպիսիք են տնտեսականը, քաղաքականը և սոցիալ-մշակութայինը: Այդ փոփոխությունները տեղի են ունենում կարծրատիպերի թե՛ անհատական, թե՛ խմբային, թե՛ հասարակական մակարդակներում, և այդ փոփոխությունների գործընթացում իրենց կարևոր դերն ունեն անձի՝ որպես կենսաբանական, հոգեբանական և սոցիալական էակի անհատական առանձնահատկությունները: Ներկայացված մոդելի համաձայն, կարծրատիպերի փոփոխությունը բնութագրվում է

¹² Мацумото 2003.

¹³ Մուրադյան 1985, 86:

ոչ այնքան դրանց ձևավորմամբ կամ կազմալուծմամբ, որքան կարծրատիպերի ընդհանուր համակարգում յուրաքանչյուր կարծրատիպի գրաված դիրքի փոփոխությամբ՝ ելնելով դրա նշանակալիությունից և արդիականությունից¹⁴:



ԳՃ. Սոցիալական կարծրատիպերի կառուցվածքը, ըստ Ի.Ն. Վալիևի

Կարծրատիպերի փոփոխության գործընթացը տեղի է ունենում ինչպես հասարակական, այնպես էլ՝ անհատական մակարդակներում:

Հասարակական մակարդակում կարծրատիպերի շարժընթացն ընթանում է հասարակության քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, մշակութային զարգացումների տեմպերին համապատասխան: Այսինքն, որքան դինամիկ են սոցիալական գործընթացները, և որքան որակապես ավելի բարձր մակարդակով են ընթանում սոցիալական փոփոխությունները, այնքան ավելի դինամիկ է կարծրատիպերի ձևափոխության գործընթացը: Անհատական մակարդակում սոցիալական կարծրատիպերի շարժընթացի վրա առավելապես ներգործում են անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ պահանջմունքները, համոզմունքները, արժեքային կողմնորոշումները, խառնվածքը, բնավորությունը, անձնային աճի մակարդակը և այլն:

Սեռադերային, մասնագիտական և տարիքային կարծրատիպերի շարժ-
ընթացի ուսումնասիրության փորձարարական հետազոտության արդյունքե-
րի վերլուծություն

Սոցիալական կարծրատիպերի շարժնթացը ուսումնասիրելու նպատակով իրականացրել ենք փորձարարական հետազոտություն, որը միտված էր վերհանելու անձի կարծրատիպերի և անձնային աճի փոխկապակցվածությունն ու փոխալմանն ավորվածությունը: Ուսումնասիրության են ենթարկվել սեռադեբալին,

¹⁴ Валиев 2006.

տարիքային և մասնագիտական կարծրատիպերը (տեսականների ընտրությունը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ դրանք հասարակության մեջ առավել շրջանառող կարծրատիպերն են): Հետազոտության շնորհիվ հանգեցինք այն եզրակացության, որ անձի կարծրատիպային պատկերացումների արտահայտվածության և նրա անձնային աճի միջև առկա է հակադարձ համահարաբերակցական կապ. որքան բարձր է անձնային աճի մակարդակը, այնքան ցածր է անձի կարծրատիպային պատկերացումների արտահայտվածության մակարդակը և ընդհակառակը¹⁵: Այստեղից բխեց այն ենթադրությունը, որ անձնային աճը խթանելով՝ հնարավոր է ներգործել անձի կարծրատիպային պատկերացումների շարժընթացի վրա: Մեր վարկածն ապացուցելու նպատակով իրականացրեցինք անձնային աճը խթանող վարժանք, որի արդյունքները հաստատեցին մեր վարկածը: Անձնային աճի խթանմանն ուղղված վարժանքից հետո հետազոտվողների մոտ դիտվեց անձնային աճի մակարդակի բարձրացում և դրա հետ մեկտեղ՝ անձի կարծրատիպային պատկերացումների արտահայտվածության մակարդակի նվազում: Փաստորեն, արդյունքները ցույց տվեցին, որ անձնային աճը կարող է հանդես գալ իբրև կարծրատիպերի շարժընթացը պայմանավորող հոգեբանական գործոն:

Փորձարարական հետազոտությունները ցույց տվեցին, որ սեռադերային կարծրատիպային պատկերացումների շարժընթացն առավել ակնառու է, ինչը վկայում է այն մասին, որ սեռադերային կարծրատիպերն ավելի հեշտությամբ են ենթարկվում փոփոխությունների: Հետազոտության տվյալների համաձայն, համեմատաբար նվազ փոփոխությունների են ենթարկվում մասնագիտական կարծրատիպերը, ինչը վկայում է նրանց առավել կայունության և ռիզիկոյության մասին:

Մեր ուսումնասիրությունների շնորհիվ պարզվեց նաև, որ անձնային աճի մակարդակի բարձրացման հետ մեկտեղ անձի կարծրատիպային պատկերացումներն աղավաղվում են, որոշ դեպքերում՝ ամբողջությամբ քայքայվում կամ կազմալուծվում¹⁶:

Եզրակացություններ

Հիմնվելով սոցիալական կարծրատիպերի շարժընթացի վերաբերյալ հոգեբանական գրականության մեջ առկա պատկերացումների և մեր իրականացրած հետազոտությունների վրա՝ կարող ենք նշել, որ սոցիալական կարծրատիպերի փոփոխականությունն անժխտելի է: Սոցիալական կարծրատիպերի շարժընթացը տեղի է ունենում անհատական, խմբային և հասարակական մակարդակներում, պայմանավորված է սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային գործոններով, և այդ գործընթացում իրենց ուրույն տեղն ունեն անձի կենսաբանական, հոգեբանական և սոցիալական կառուցվածքային բաղադրիչները:

¹⁵ Նազարյան 2016:

¹⁶ Նազարյան 2016:

Անձնային աճը հանդես է գալիս որպես կարծրատիպերի շարժընթացը պայմանավորող հոգեբանական գործոն:

Գրականություն

- Մուրադյան Ս.Ա. 1985, Ստերեոտիպի փիլիսոփայական իմաստը, խմբ.՝ ակադեմիկոս Գ.Ա. Բրուտյան, Երևան, «Հայաստան», 152 էջ:
- Նազարյան Ա.Ս. 2016, Սոցիալական կարծրատիպերի շարժը անձնային աճի գործընթացում, Հանրային կառավարում գիտական հանդես, N 3, էջ 216-225:
- Նազարյան Ա.Ս. 2016 Սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի փոխազդեցությունը, Հոգեկան առողջության հայկական հանդես, N 2, էջ 50-55:
- Адорно Т. 2001, Исследование авторитарной личности, Москва, «Серебряные нити», 416 с.
- Валиев И.Н. 2006, Динамика стереотипов социального взаимодействия в условиях реформированного общества. дис. канд. философских наук, Казань, 138 с.
- Красных В.В. 2003, Свой среди чужих, миф или реальность, Москва, «Гносис», 375 с.
- Крыско В.Г. 2008, Этническая психология: учебное пособие, Москва, «Академия», 320 с.
- Липпман У. 2004, Общественное мнение, Москва, Институт фонда «Общественное мнение», 384 с.
- Мацумото Д. 2003, Психология и культура. 1-е издание, 720 с., http://www.gumer.info/bibliotek_Buks/Psihol/Mats/04.php (ներքեռնման օրը՝ 10.02.2019).
- Меренков А.В. 2001, Социология стереотипов, Екатеринбург, Урал, «Унта», 292 с.
- Орлов Ю.М. 1991, Восхождение к индивидуальности: кн. для учителя, Москва, «Просвещение», 287 с.
- Allbig U. 1949, Public Opinion and Propaganda, New York, Henry Holt and Company, 421 p.
- Allport G.W. 1954, The nature of prejudice, Cambridge, "Addison-Welsey", 438 p.
- Quasthoff U.M. 1978, The Uses of Stereotype in Everyday Argument, Journal of Pragmatics, Amsterdam, "Benjamins", vol. 2, p. 1-48.
- Taguiri R. 1969, Person Perception, The Handbook of Social Psychology, vol. 3, New York, Addison Wesley Publishing Company, p. 395-449.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Անի Նազարյան, Նարինե Ստեփանյան

Ամփոփում

Սոցիալական կարծրատիպերի շարժընթացը պայմանավորող սոցիալ-հոգեբանական գործոնների ուսումնասիրության հիմնահարցը ժամանակակից հոգեբանության կարևորագույն և համեմատաբար քիչ ուսումնասիրված հիմնախնդիրներից է: Չնայած սոցիալական կարծրատիպերը բավական ղժվարությամբ են ենթարկվում փոփոխությունների, այնուամենայնիվ, դրանց կայունությունը հարաբերական է: Սոցիալական կարծրատիպերը փոփոխությունների են ենթարկվում սոցիալական, քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացումների շնորհիվ: Դրանց շարժընթացը պայմանավորված է նաև հոգեբանական գործոններով:

Հետազոտելով սոցիալական կարծրատիպերի և անձնային աճի փոխազդեցությունը՝ հանգել ենք այն եզրակացության, որ անձնային աճը հանդես է գալիս իբրև սոցիալական կարծրատիպերի շարժընթացը պայմանավորող հոգեբանական գործոն:

Բանալի բառեր՝ սոցիալական կարծրատիպ, սեռադերային կարծրատիպ, տարիքային կարծրատիպ, մասնագիտական կարծրատիպ, կարծրատիպերի կայունություն, սոցիալական կարծրատիպերի շարժընթաց, անձնային աճ:

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ, ОБУСЛОВЛИВАЮЩИЕ ДИНАМИКУ СОЦИАЛЬНЫХ СТЕРЕОТИПОВ

Ани Назарян, Нарине Степанян

Резюме

Проблема изучения социально-психологических факторов, обуславливающих динамику социальных стереотипов, является одним из наиболее важных и относительно мало изученных вопросов современной психологии. Хотя социальные стереотипы устойчивы к изменениям, их стабильность относительна. Социальные стереотипы меняются в результате социальных, политических, экономических и культурных процессов. Динамика социальных стереотипов также обусловлена психологическими факторами.

Изучение взаимодействия социальных стереотипов и личностного роста приводит к заключению, что личностный рост является психологическим фактором, определяющим динамику социальных стереотипов.

Ключевые слова – социальный стереотип, гендерный стереотип, возрастной стереотип, профессиональный стереотип, устойчивость стереотипов, динамика социальных стереотипов, личностный рост.

SOCIO-PSYCHOLOGICAL FACTORS THAT DETERMINE THE DYNAMICS OF SOCIAL STEREOTYPES

Ani Nazaryan, Narine Stepanyan

Abstract

The problem of studying the socio-psychological factors that determine the dynamics of social stereotypes is one of the most important and relatively little studied issues of modern psychology. Although social stereotypes are resistant to change, their stability is relative. Social stereotypes change as a result of social, political, economic and cultural processes. The dynamics of social stereotypes is also conditioned by psychological factors.

Studying the interaction of stereotypes and personal growth, we came to the conclusion that personal growth is a psychological factor that determines the dynamics of social stereotypes.

Key words – social stereotype, gender stereotype, age stereotype, professional stereotype, stereotypes stability, dynamics of social stereotypes, personal growth.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ք.Ա. ՍՈՒ ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻ ՎԵՐՋԻ «ԳԵՐԵՐԱՇՏԸ» ԵՎ ՎԻՇԱԴ-ՔԱՐԱԿՈԹՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Երվանդ Գրեկյան

Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. hawugv'ervandgr@yahoo.com

Արսեն Բոբոխյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. hawugv'arsenbobokhyan@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 27.08.2021, գրախոսվել է 31.08.2021, ընդունվել է տպագրության 05.07.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.2-223

Ներածություն

«Վիշապները» (վիշապ-քարակոթողները) հնագույն Հայաստանի կոթողային արվեստի յուրահատուկ նմուշներ են¹: Դրանց ուսումնասիրությունը սկսվել է մոտ հարյուր տարի առաջ² և մեծ առաջընթաց է գրանցել հատկապես վերջին տասնամյակում կատարված դաշտային, լաբորատոր և տեսական աշխատանքների շնորհիվ³: Բացի նորահայտ գտածոներից, որոնց թիվն անցնում է մի քանի տասնյակից, նոր աշխատանքները կենտրոնացել են այդ կոթողների հնագիտական համատեքստի, տարածական բաշխվածության, տիպաբանության և այլ խնդիրների վրա⁴:

Վիշապ-քարակոթողներին առնչվող խնդիրներից ամենաբարդը դրանց թվագրությունն է: Նախկին ուսումնասիրողները կոթողների կանգնեցման շրջանը դիտարկել են Ք.ա. VI հազ. մինչև I հազ. կեսերն ընկած միջակայքում: Նոր հետազոտությունների շնորհիվ ստեղծված տվյալների շտեմարանը, որը մեծապես

¹ Հետազոտությունը իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 20TTSH-005 և 21AG-6A080 ծածկագրով թեմաների շրջանակում:

² Март, Смирнов 1931. ուսումնասիրության պատմության համար տե՛ս Bobokhyan et al. 2012, 8-14, Gilibert et al. 2012, 94-95, 99-101 (հղված գրականությամբ):

³ Bobokhyan et al. 2012, 14-27, Gilibert et al. 2012, 93-132, Բոբոխյան և այլք 2015, 269-396, Bobokhyan et al. 2015, 202-213, Bobokhyan et al. 2015 [2016], 37-43, Bobokhyan et al. 2018, 255-270, Bobokhyan et al. 2019, 98-105, Von der Osten et al. 2018, 197-206, Hnila et al. 2019, 283-302, Hovhannisyan et al. 2020, 27-51:

⁴ Բոբոխյան 2019, 8:

հենվում է արագածյան Տիրինկատար հնավայրի պեղումների արդյունքում ձեռք բերված մոտ 40 ռադիոածխածնային վերլուծությունների վրա, հստակորեն ցույց է տալիս վիշապների դարաշրջանի վերջը երկաթի դարի սկզբում (Ք.ա. մոտ II հազ. վերջեր), սակայն խնդրահարույց է կոթողների սկզբնավորման խնդիրը: Մասնավորապես՝ առկա տվյալները թույլ են տալիս շրջանառել երկու աշխատանքային վարկածներ: Դրանցից առաջինը խոսում է վիշապների առաջացման ուշնորքարե-դարյան/վաղադնձեդարյան (Ք.ա. մոտ VI հազ. վերջեր), երկրորդը՝ միջինբրոնզե-դարյան (Ք.ա. մոտ III հազ. վերջեր) թվագրության օգտին⁵: Ներկա հոդվածի հեղինակները, չբացառելով լեռնաշխարհում կոթողային արվեստի մինչբրոնզեդարյան սկզբնավորման հնարավորությունը, այնուամենայնիվ, հակված են երկրորդ՝ միջինբրոնզեդարյան թվագրությանը՝ ենթադրելով, որ վիշապները կանգնեցվել են Ք.ա. III հազ. վերջերին «թռեղք-վանածորյան» մշակույթի կրողների կողմից՝ լինելով վերջիններիս բարձր և միջինլեռնային սրբավայրերի առանցքային կետերը: Վիշապների պաշտամունքը կենտրոնական դեր է խաղացել նաև միջին բրոնզի դարի հետագա մշակույթային ավանդույթների, ինչպես նաև ուշ բրոնզի դարի «լճաշեն-մեծամորյան» մշակույթի կրողների համար: Այս տեսակետը հիմնավորվում է ոչ միայն համապատասխան դարաշրջանի հասարակական, պատմամշակութային, արժեհամակարգային, խորհրդաբանական (պատկերագրական, ծիսապաշտամունքային) առանձնահատկություններով, այլև հաստատվում է հինառաջավորասիական բնապատմական զարգացումների համատեքստում: Ներկայացվող աշխատանքը կենտրոնանում է հատկապես վերջին հայեցակետի վրա՝ շեշտելով էկոլոգիական/կլիմայական գործոնի կարևորությունը մշակութային երևույթների մեկնության պարագայում:

Վաղ բրոնզից միջին բրոնզ անցումը Հայկական լեռնաշխարհում

Մինչ բուն խնդրին անցնելը ամփոփ ներկայացնենք այն իրավիճակը, որով բնութագրվում է Հայկական լեռնաշխարհը վիշապ-քարակոթողների ի հայտ գալու պահին: Լեռնաշխարհի վաղ բրոնզի դարը ներկայանում է շուրջ հազար տարի տևած «կուրարաքսյան» մշակույթով⁶: Ք.ա. XXVI-XXV դդ. սահմանագծից սկսած՝ այն փլուզվում է՝ իր տեղը զիջելով նոր ավանդույթներին. փոխվում են տնտեսվարման ձևը, թաղման կարգն ու գույքակազմը: Հայկական լեռնաշխարհի մեծ մասում Ք.ա. մոտ 2200 թ. հետո կուր-արաքսյան հուշարձաններ այլևս չեն փաստագրվում⁷:

⁵ Նոր հետազոտությունների հիմնական տվյալները դեռևս մնում են չիրատարակված: Նախնական հրապարակումների համար տե՛ս Gilibert et al. 2012, 114-117, 119-120, Բորոխյան և այլք 2015, 288, Bobokhyan et al. 2015 [2016], 40, Von der Osten et al. 2018, 202, Hnila et al. 2019, 292-296: Թվագրության խնդիրների համար հմնտ. նաև Պետրոսյան Հ. 2015, 95, Բորոխյան 2017, 33-34, Սիմոնյան 2019, 567-568 (հղված գրականությամբ):

⁶ Ավետիսյան 2012, 11-12. կուր-արաքսյան մշակույթի համար վերջին տասնամյակի աշխատանքներից տե՛ս, մասնավորապես, Badalyan, Avetisyan 2007, Smith et al. 2009, Smith 2015, 102-126, Marro 2011, 290-309, Sagona 2018, 213-280 (նշված գրականությամբ):

⁷ Areshian 2005, 71, Ավետիսյան 2012, 6, 2014, 9, Smith 2015, 133:

Այս դարաշրջանը Պ. Ավետիսյանն անվանում է «հետկուրարաքայան»՝ իր երեք փուլերով՝ I (Ք.ա. XXIV դ. երրորդ քառորդ - Ք.ա. XXIII/XXII դդ. սահմանագիծ), II (Ք.ա. XXIII/XXII դդ. սահմանագիծ - Ք.ա. XVIII/XVII դդ., իր երկու՝ IIա (Ք.ա. XXIII/XXII դդ. - Ք.ա. XIX դ.) և II բ (Ք.ա. XIX դ. սկիզբ - Ք.ա. XVIII-XVII դդ. սահմանագիծ) ենթափուլերով և III (Ք.ա. XVIII/XVII դդ. - Ք.ա. XVI դ. երրորդ քառորդ)⁸:

Վիշապ-քարակոթողների ի հայտ գալը համապատասխանում է հետկուրարաքայան IIա փուլի սկզբին: Ինչ է ներկայացնում այս շրջանը: Նախ և առաջ, ավարտվում է երկրագործության վրա հիմնված «կուր-արաքայան» մշակույթի համատարած անկման գործընթացը այդ մշակույթի միջուկը կազմող Կուր և Արաքս գետերի միջագետքում: Արաքսի ավազանում կուր-արաքայան բնակավայրերը լքվում են կամ ավերվում, նոր ի հայտ եկած «վաղ դամբանաբլուրների» մշակույթը ներկայացնող մշտական բնակատեղիներ հայտնի չեն, և, ըստ էության, կարելի է խոսել լայնածավալ ապաբնակեցման մասին: Եզակի թվով համաժամանակյա դամբարանները լավագույն դեպքում վկայում են նոսր բնակչության առկայության մասին⁹:

Նույն երևույթը դիտարկվում է Վանա լճի ավազանում, որտեղ ևս Ք.ա. III հազ. վերջերին կուր-արաքայան մշտական բնակատեղիները լքվում են, իսկ միջին բրոնզի հասարակությունները ներկայանում են համեմատաբար սակավաթիվ դամբարաններով և դամբարանադաշտերով¹⁰: Ապաբնակեցում է նկատվում Ուրմիա լճի ավազանում¹¹: Կուր-արաքայան բնակավայրերը ավերվում կամ լքվում են նաև Մուղանի հարթավայրում¹² և այլուր: Գրեթե նույն է պատկերը Կուրից հյուսիս ընկած գոտում. ու թեև այստեղ կուր-արաքայան բնակավայրերի ապաբնակեցմանը հակառակ հանդիպում են «վաղ դամբանաբլուրների» մշակույթին բնորոշ նյութերով բնակատեղիներ, սակայն դրանք քանակապես նոսր են և ցուցաբերում են թուուցիկ բնակության հետքեր¹³:

Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ մերձեփրատյան գոտում դիտարկվում է հակառակ գործընթացը: Մալաթիայի շրջանում և Խաթբերդի դաշտում վաղ բրոնզ III փուլում (Ք.ա. 2400-2000/1900 թթ.) փաստագրված բնակավայրերի թիվը վաղ բրոնզ II-ի (Ք.ա. 2750-2500/2400 թթ.) համեմատ գրեթե կրկնապատկվում է¹⁴: Սա կարող է վկայել բնակչության մեխանիկական աճի մասին: Արաքս գետի և Վանա լճի ավազանների ապաբնակեցումը և փոխարենը՝ լեռնաշխարհի արևմուտքում այս նույն շրջանում դիտարկվող բնակավայրերի քանակի, ինչպես նաև դրանց զբաղեցրած մակերեսի ընդհանուր աճը կարող էր

⁸ Ավետիսյան 2014, 38-43:

⁹ Ավետիսյան 2014, 45-46:

¹⁰ Marro 2011, 305, Özfiat 2019, 96-97.

¹¹ Avetisyan 2014, 46, Palumbi, Chataigner 2014, 257.

¹² Alizadeh et al. 2018, 471-475.

¹³ Smith 2012, 379, Rova 2014, 64-65, Palumbi, Chataigner 2014, 257.

¹⁴ Baştürk, Konakçı 2005, 99-101, Tab. 2-3, տե՛ս նաև Di Nocera 2008, 636-638, Figs 2-3, Frangipane 2011, 984-985:

փոխկապակցված լինել՝ պայմանավորված դեպի Մալաթիա և Խարբերդի դաշտ բնակչության արտահոսքով:

Ք.ա., թթ.	Հյուսիսսիրիամիջագետքյան գոտի	Հայկական լեռնաշխարհ
2300-2200/2150	Վաղ Ջեզիրե IV. Ք.ա. մոտ 2230 թ. հյուսիսային Սիրիայի և Միջագետքի անցրդի երկրագործական գոտիներում հաստատված աքքադական տիրապետության փլուզում, աքքադական կենտրոնների և հարակից բնակավայրերի հապճեպ կամ աստիճանական լքում, հետաքքադական թռուցիկ բնակության հետքեր: Ք.ա. մոտ 2200 թ. ապա-բնակեցում, բնակչության զանգվածային տեղաշարժեր դեպի ջրի բավարար հոսք ունեցող կամ ստորգետնյա աղբյուրներից սնվող, արդյունավետ երկրագործական հնարավորություններ ընձեռող տարածքներ (Եփրատ, Օրոնտես, Ամյուկ գետերի հովիտ, վերինմերձ-տիգրիսյան գոտի):	Հետկուրարաքսյան I (Վաղ բրոնզ IV / միջին բրոնզ I). Ք.ա. մոտ 2300 թ. կուր-արաքսյան մշակույթային միասնության վերջնական տրոհում և անկում, վերջինիս միջուկային գոտում, Վանա և Ուրմիա լճերի շրջանում մշտական բնակավայրերի լքում և ավերում: Այդ մշակույթի միջուկային գոտու և Վանա լճի ավազանի ապաբնակեցում, բնակչության տեղաշարժ դեպի ջրի բավարար հոսք ունեցող, արդյունավետ երկրագործական հնարավորություններ ընձեռող վերինեփրատյան կամ բարձրլեռնային գոտիներ: Էթնիկ ներթափանցումներ («վաղ դամբանաբլուրների» մշակույթի կրողներ):
2200/2150-2000/1900	Վաղ Ջեզիրե V. Ք.ա. մոտ 2150 թ. քաղաքային կյանքի շարունակություն, բնակավայրերի մակերեսի և բնակչության աճ Եփրատի ավա-մերձ գոտիներում, Օրոնտես գետի ավազանում և Ամյուկի հովտում: Ք.ա. մոտ 2050 թ. քոչվորական կենցաղվարության և քոչվորական խմբերի տեղաշարժերի աճ (խա-նացիներ/ամորեացիներ), քոչվորական խմբերի ռազմականացում:	Հետկուրարաքսյան IIա (միջին բրոնզ I). լեռնաշխարհի հիմնական մասում մշտական բնակավայրերի բացակայություն, քոչվորական կեն-ցաղ, «թռեղք-վանածորյան» մշա-կույթի հաստատում, հասարակույթ-յան ռազմականացում: Վերինեփրատյան գոտում քաղաքային մշա-կույթի ծաղկում, տարածքային և բնակչության աճ, կուր-արաքսյան մշակույթի մասնակի հարատևություն:
2000/1900-1800 1800-1700	Հին Ջեզիրե I. Ք.ա. մոտ 1950 թ. քոչվոր կենցաղի աշխուժացում, խաբուրյան գունագարդ խեցեղենով բնորոշվող նոր մշակույթի ներթա-փանցում: Ք.ա. մոտ 1900 թ. բնա-կավայրերի վերաբնակեցում, բնա-կավայրերի և բնակչության կտրուկ աճ: Վաղպետական կազմավորում-ների և կայուն թագավորություն-ների ձևավորում, ամորեական հարստությունների հաստատում: Հին Ջեզիրե II. Ք.ա. մոտ 1800 թ. տարբեր թագավորությունների պայքար և տարածքային աճ, խա-բուրյան խեցեղենի մշակույթի դասական շրջան:	Հետկուրարաքսյան IIբ (միջին բրոնզ II). Ք.ա. մոտ 1900 թ. բնակ-չության աճ, Նախկին լճված տա-րածքների բնակեցում, շարժունա-կության և քոչվորական կենցաղա-վարության գերակայություն, «թռեղք-վանածորյան» գունագարդ խեցեղենով բնորոշվող մշակույթի ծաղկման շրջան: Վերինեփրատյան գոտում քաղաքային մշակույթի որոշակի անկում: Ք.ա. մոտ 1800 թ. անցում մասնակի նստակեցության, սոցիալական շերտավորման խորացում: Հիերար-խիկ հասարակության և պետական պարզ կազմավորումների շրջան:

Աղյուսակ. Հյուսիսսիրիամիջագետքյան գոտու և Հայկական լեռնաշխարհի՝ Ք.ա. III-II հազ. սահմանի պատմական գործընթացների համեմատական

Ընդհանրապես, «վաղ դամբանաբլուրների» և հաջորդող «թռեղք-վանա-ծորյան» մշակույթներին բնորոշ է մշտական բնակատեղիների բացակայությունը: Այս մշակույթային համալիրները ներկայանում են գլխավորապես դամբարան-

ներով և դամբանաբլուրներով, հաճախ՝ կուր-արաքսյան լքված բնակավայրի տարածքում կամ որևէ բնակավայրի հետ չառնչվող առանձին դամբարանադաշտերում (Թռեղք, Վանաձոր, Ներքին Նավեր, Արուն, Քարաշամբ, Լոռի բերդ և այլն)¹⁵: Սա խոսում է շարժունակ հասարակության և վերջինիս (կիսա)քոչվոր կենսակերպի մասին: Միաժամանակ, հարուստ, այսպես կոչված, «արքայական թաղումների» ի հայտ գալը, զենքերի նոր տեսականին և դրանց քանակական աճը վկայում են հասարակության որոշակի հիերարխիկ կազմակերպվածության և ռազմականացման մասին¹⁶, ինչը կարող էր լինել ճգնաժամային շրջանում բնապաշարների համար մղվող պայքարի արդյունք:

Կուրարաքսյան մշակույթի բնակավայրերի լքումն ու ապաբնակեցումը, կենցաղավարության փոփոխությունը, հասարակության ռազմականացումն ու բնական պաշարների համար մղվող պայքարը միայն տարածաշրջան էթնիկական նոր խմբերի/մշակույթների ներթափանցմամբ բացատրելը¹⁷, կարծում ենք, ճիշտ չի լինի: Այն կարող էր հիմնականում պայմանավորված լինել էկոլոգիական գործոններով (տե՛ս ստորև): Այս նույն ժամանակ ի հայտ եկած մշակութային նոր երևույթը՝ վիշապարակոթողները, ըստ երևույթին, այդ հասարակությունների արձագանքն էր էկոլոգիական նոր իրողությունների հանդեպ:

Ի՞նչ արձագանքի մասին է խոսքը:

Վիշապարակոթողների պատկերագրությունը, միջավայրը, տարածական ընդգրկումը և, ամփոփ ասած, դրանց ընդհանուր բնութագիրն առավել կամ պակաս չափով հստակ է: Դրանք մեծ մասամբ կանգնեցվել են բարձրլեռնային գոտիներում՝ աղբյուրների մոտ և գետերի ակունքների շրջանում, ջրային ավազանների մերձակայքում, հաճախ ունեն ձկան տեսք¹⁸: Քարակոթողների մի մեծ խումբ դիմային կողմում կրում է մորթազերծված ցլի պատկեր՝ եղջյուրներով գլուխը և առաջին զույգ վերջույթները, մյուս կողմում՝ հետևի վերջույթները և պոչը: Հաճախ դրանք պատկերվում են ցլի բերանից սկիզբ առնող ալիքաձև գծերով՝ խորհրդանշելով հոսող ջուր կամ անձրև¹⁹: Վաղուց է ենթադրվել, որ վիշապների ի հայտ գալու պատճառներից մեկը և դրանց հիմնական գործառույթը ջրի հետ կապն է, ինչն ակնհայտ է և լրացուցիչ հիմնավորման կարիք չունի²⁰: Ենթադրվում է, որ դրանք տեղադրվել են երաշտի ժամանակ՝ իբրև նվիրաբերում ամպրոպի կամ ջրի աստվածությանը և ուղեկցվել են ցլի զոհաբերությամբ՝ երկնային արգելափակված ջրերը երկիր թողնելու ակնկալիքով, ինչն էլ արտահայտվել է

¹⁵ Ավետիսյան 2014, 45:

¹⁶ Ավետիսյան 2014, 47-48:

¹⁷ Օրինակ՝ Smith 2012, 679, 2015, 131-132:

¹⁸ Վերջին ուսումնասիրություններից տե՛ս Պետրոսյան Ա. 2015, 15, Թումանյան 2015, 101-103 (գրականությամբ), Storaci, Gilibert 2019, 528-545:

¹⁹ Պետրոսյան Ա. 2015, 18-19:

²⁰ Պետրոսյան Ա. 2015, 36, Բոթոխյան 2017, 40 և ծնթ. 2՝ գրականության համար: Տե՛ս նաև Բոթոխյան և այլք 2015, 286, Storaci, Gilibert 2019, 536-540:

զոհաբերված ցլի բերանից հոսող ջրերի շիթերի՝ վերը նշված պատկերումներով²¹: Վիշապ-քարակոթողների վաղ և «ծաղկման շրջանի» օրինակները, որոնք հնարավոր է առանձնացնել համապատասխանաբար իրենց պարզ/անզարդ և բարդ/զարդարուն կամ «հիբրիդ» ձևերով²², խմբավորված են ոչ միայն առավել բարձրադիր գոտիներում՝ ծովի մակերևույթից մոտ 2400-3200 մ բարձրության վրա, այլև գտնվում են գերազանցապես հրաբխային լեռներում (Արագածի լեռնազանգված, Գեղամա լեռներ)²³: Ծալքաբեկորային լեռներում գտնվող օրինակները (Զանգեզուրի լեռներ, Տայք), որոնք առանձնանում են հարուստ պատկերագրությամբ և ակնհայտորեն ունեն առավել ուշ թվագրություն, գտնվում են հիմնականում ավելի ցածր, առավելապես՝ նախալեռնային գոտիներում, մոտ 1700-2300 մ բարձրության վրա²⁴: Վերը նշված առաջին՝ վաղ խմբի կոթողների գոտիականությունն ու դիրքը, ըստ երևույթին, պատահականություն չէ և չի կարող բացատրվել միմիայն հեռագնա անասնապահության հաստատմամբ և շարժունակ խմբերի կողմից բարձրադիր, ալպյան մարգագետինների յուրացումով: Կարծում ենք, որ այս երևույթը դարձյալ պատճառաբանված է էկոլոգիական գործոնով: Ամռանը կամ երաշտի շրջանում ծալքաբեկորային լեռներին բնորոշ է ջրի պակասը և այստեղից սկիզբ առնող գետերի սակավաջրությունը, որոնք ամռանը սովորաբար ցամաքում են²⁵: Մինչդեռ համապատասխան իրավիճակներում հրաբխային լեռներում նման խնդիրներն առավել թույլ են դրսևորվում և, ինչպես երևում է, բարձրլեռնային/ալպյան գոտիներում ջրի կենսական կարիք չի զգացվում: Ջրային բավարար պաշարներ ունեցող կենսատարածքի որոնումները միջինբրոնզեդարյան հասարակություններին գոնե մասամբ ուղղորդել են դեպի այդ գոտիներ՝ այն հասանելի դարձնելով առավել մեծաթիվ բնակչության համար:

Եթե ընդհանրացնենք վերը շարադրվածը, ապա կարելի է տեսնել, որ վաղ բրոնզից միջին բրոնզ անցման շրջանում, որի ընթացքում ենթադրվում է նաև վիշապ-քարակոթողների առաջացումը, տեղի են ունեցել հետևյալ գործընթացները.

1. Երկրագործության վրա հիմնված կուր-արաքսյան մշակույթի մշտական բնակավայրերի լքում կամ ավերում, բնակչության արտահոսք, մասնակի կամ համատարած ապաբնակեցում,
2. բնակչության շարժունակության աճ լեռնաշխարհի ներսում, տեղաշարժեր միջուկային գոտուց դեպի ծայրագավառներ,
3. էթնիկական տեղաշարժեր և էթնիկական նոր խմբերի ներհոսք՝ ի դեմս «վաղ դամբանաբլուրների» և հաջորդող «թռեղք-վանաձորյան» մշակույթի կրողների,

²¹ Gevorkyan, Bobokhyan 2014, 49-50, Հարությունյան 2015, 56-58, Պետրոսյան Հ. 2015, 90-93, Մարտիրոսյան 2015:

²² Բոբոխյան և այլք 2015, 294:

²³ Բոբոխյան և այլք 2015, 291, նկ. 34:

²⁴ Բոբոխյան և այլք 2015, 286-289 և նկ. 31:

²⁵ Գաբրիելյան 2000, 179:

4. հնագիտական նոր մշակույթի հաստատման շրջանում՝ մշտական բնակավայրերի բացակայություն կամ թռուցիկ բնակության հետքեր, մշակույթի փաստագրում բացառապես թաղման կառույցների տեսքով (դամբարանաբլուրներ և դամբարաններ),

5. կենցաղավարության փոփոխություն՝ կիսաքոչվոր կամ քոչվորական կենսաձևի հաստատում,

6. հասարակության ռազմականացում, ռազմական գույքի տեսականու փոփոխություն, զինատեսակների քանակական աճ,

7. հիերարխիկ հասարակության հաստատում՝ ի դեմս թաղման հարուստ գույքով ներկայացող «արքայական դամբարանների»:

Շուրջ երեք հարյուրամյակ տևած այս փուլի վերջում նկատվում է մասնակի անցում նստակեցության, երբ ի հայտ են գալիս մշտական բնակավայրեր, թեև կիսաքոչվոր/ քոչվորական կենսակերպը շարունակում է գերակշռող մնալ (հետևորարաքայան II փուլ՝ Ք.ա. XIX-XVIII/XVII դդ.)²⁶:

Այժմ փորձենք դիտարկել Հայկական լեռնաշխարհում տեղ գտած այս գործընթացները հինառաջավորասիական համատեքստում: Մինչ այդ նշենք, որ հետևորարաքայան II փուլի ժամանակագրումը Ք.ա. մոտ 2200-1900 թթ. ճշգրիտ համապատասխանում է հին Առաջավոր Ասիայի պատմության դրամատիկ փուլերից մեկին, որը հայտնի է «Գերերաշտ» (կամ «մեզանից 4.2-3.9 ka տարի առաջ իրադարձություն»/"4.2-3.9 ka BP event") անվանումով:

«Գերերաշտի» ընդհանուր բնութագիրը

Կլիմայական գլոբալ փոփոխության՝ վերը նշված «Գերերաշտի» պատկերը վեր է հանվել տարբեր մասնագետների կողմից²⁷ և հաստատվում է ինչպես տարածաշրջանից, այնպես էլ՝ երկրագնդի տարբեր գոտիներից ստացված հնակլիմայաբանական մեծաթիվ տվյալներով²⁸: Դրանք վկայում են ողջ երկրագնդում դիտարկվող կլիմայական անոմալիայի և եղանակային պայմանների գլոբալ փոփոխության մասին²⁹ պայմանավորված, ըստ երևույթին, «Հյուսիսատլանտյան տատանում» անունը ստացած բնական երևույթի խաթարմամբ կամ այլ գործոններով³⁰: «Հյուսիսատլանտյան տատանումը» պայմանավորում է հյուսիսային կիսագնդի մթնոլորտային հոսանքների շարժերը և տեղումների քանակը Միջերկրածովյան ավազանում, Արևմտյան Ասիայում և այլուր: Այն մեծապես պայմանավորում է նաև Եփրատ և Տիգրիս գետերի ջրերի հոսքը՝

²⁶ Ավետիսյան 2014, 49:

²⁷ Stéu Weiss et al. 1993, 995-1004, Weiss et al. 2012, 163-192, Weiss 2015, 35-53, 2016, 62-63, 2017a, 131-162, 2017b, 93-160, Staubwasser, Weiss 2006, 380-383, Ristvet, Weiss 2013, 257-272:

²⁸ Weiss 2012, 12, 2016, 62. ընդարձակ գրականության համար տե՛ս Staubwasser, Weiss 2006, 383, Weiss 2017a, 131-134, 2017b: Հմմտ., միաժամանակ, Bini et al. 2019, 555-577:

²⁹ Weiss 2016, 62, 2017a, 133-134.

³⁰ Weiss 2017a, 131 և 2017b, 99-104, 134-159՝ գրականության համար: Պատճառների մասին տե՛ս նաև Perşoiu et al. 2019, 781-793, Dang et al. 2020, 110-111:

գետերի ծավալի տատանումները հասցնելով մինչև ± 40 տոկոսի³¹: Խաթարվում և թուլանում է Հնդկական/Ասիական մուսսոնների շրջանառությունը, որն անմիջական ազդեցություն ունի Հնդկական թերակղզու վրա. նրանից են կախված նաև տեղումները հյուսիսարևելյան Աֆրիկայում, որոնք մեծապես ազդում են Նեղոսի հոսքի վրա³²: Տեղ գտած անոմալիայի հետևանքներն են տեղումների քանակի կրճատումը, չորային և առավել ցուրտ եղանակային պայմանների հաստատումը³³, մթնոլորտային փոշու կտրուկ աճը³⁴, բուսականության և անտառածածկ տարածքների կրճատումը և այլն³⁵: Տեղումների նվազման պատճառով միայն Մեռյալ ծովի մակարդակն իջնում է 45 մ³⁶, այդ նույն շրջանում նվազում է Վանա լճի մակարդակը 34-58 մ, իսկ ջերմաստիճանի անկումը ենթադրվում է 2.8°C-ի սահմաններում³⁷:

Հայկական լեռնաշխարհին հարակից առաջավորասիական շրջաններում կլիմայական կտրուկ փոփոխության հետևանքով կարճ ժամանակամիջոցում տեղումների քանակը նվազում է 30-50 տոկոսով, իսկ հաստատված չորային շրջանը տևում է 200-300 տարի՝ Ք.ա. 2200-1900 թթ. սահմաններում³⁸: Տևական երաշտը հանգեցնում է անջրդի երկրագործության վրա հիմնված տարածքների խիստ կրճատմանը՝ խաթարելով կամ անհնար դարձնելով այդ տարածքներում բնակչության հետագա կենսագործունեությունը: Ընդ որում, ասվածը վերաբերում է ոչ միայն բնական տեղումների սահմանային (200-300 մմ), այլև՝ բավարար քանակություն ստացող գոտիներին (400-500 մմ)³⁹: Քննարկվող դարաշրջանում հյուսիսսիրիամիջագետքյան գոտու հնագիտական պատկերը ցույց է տալիս, որ անջրդի երկրագործության համար անհրաժեշտ նվազագույն տեղումների գոտին (տարեկան 200 մմ) տեղաշարժվել է մի քանի հարյուր կիլոմետրով՝ անհնար դարձնելով կամ խիստ դժվարացնելով կյանքը անգամ այնպիսի բնակավայրերում, որոնք ընկած էին, ինչպես վերը նշվեց, 400-500 մմ տեղումների գոտում⁴⁰: Փորձենք մանրամասնել այդ գործընթացները:

«Գերերաշտի» դրսևորումները հյուսիսային Սիրիայում և Միջագետքում

Առաջավորասիական տարածաշրջանում դիտարկվող քաղաքական անկայունության բարձրակետը Աքքադի թագավորության կործանումն էր Ք.ա. մոտ 2200 թ., ինչին հաջորդում է, այսպես կոչված, «կուտիական գերիշխանության»

³¹ Cullen, de Menocal 2000, 853, 859-861.

³² Weiss 2017b, 100-101, Fig. 3.2.

³³ Weiss et al. 1993, 1002, Weiss et al. 2012, 185, Kuzucuoğlu 2007, 463-464, 474, Perşoiu et al. 2019, 782-787.

³⁴ Cullen et al. 2000, 379-382, Zielhofer et al. 2017, 132.

³⁵ Օրինակ՝ Frumkin 2009, 319-328:

³⁶ Frumkin 2009, 326-327, Kagan et al. 2015, 244-247.

³⁷ Lemcke, Sturm 1997, 667, Tab. 1, 672-673.

³⁸ Staubwasser, Weiss 2006, 380-383, Weiss 2015, 42, 46.

³⁹ Weiss 2015, 42.

⁴⁰ Weiss 2015, 46, Fig. 10.

շրջանը⁴¹: Միջազգետքի հարթավայրային՝ արհեստական ոռոգման վրա հիմնված երկրագործական գոտում ձևավորված Աքքադի թագավորությունը նոր բնապաշարների կարիք էր զգում, իսկ նրա արքաների արշավանքների աշխարհագրությունը հուշում է, որ վերջիններս փորձել են մուտք ունենալ և մշտական ներկայություն ապահովել հյուսիսսիրիական և հյուսիսմիջազգետքյան՝ անջրդի երկրագործության վրա հիմնված գոտիներում, նախ և առաջ՝ Խաբուրի հովտում և վերինտիգրիսյան շրջաններում⁴²: Աքքադի համար կենսական նշանակություն ստացան իր տիրապետության տակ հայտնված այդ գոտիներից կամ իր հետ դաշնակցային/վասալական հարաբերություններով կապված մանր թագավորություններից երկրագործական արտադրանքի (հիմնականում՝ հացահատիկի) անխափան մատակարարումները⁴³, որ իրականացվում էին պետական հստակ վերահսկողության մեխանիզմներով օժտված ծայրագավառային կենտրոնների միջոցով (Թել Բրակ = Նագար, Թել Լեյլան = Շեխնա, Թել Բեյդար = Նաբադա, Յորդան Թեփե = Գասուր⁴⁴, թերևս նաև Թել Մոհամմեդ Դիյաբ⁴⁵):

Ք.ա. XXIII դ. երկրորդ կեսի ինչ-որ պահի այս գոտու՝ աքքադական իշխանության տակ գտնվող վերը նշված կենտրոններն ու դրանց շուրջը սփռված հարակից բնակավայրերը լքվում են: Խաբուրի հովտում գտնվող նման կետերից էր շուրջ 100 հա զբաղեցնող Թել Լեյլանը: Աքքադական իշխանության կողմից հապճեպ լքված քաղաքը հետաքքադական շրջանում ցույց է տալիս թռուցիկ բնակության հետքեր, իսկ մի քանի տասնամյակ անց՝ Ք.ա. 2200 թ. սահմաններում, վերջնականապես դառնում է անբնակ⁴⁶: Թել Լեյլանի շրջակա գոտում ընկած բնակավայրերի շուրջ 67 տոկոսը լքվում է, դրանց զբաղեցրած ընդհանուր մակերեսը նվազում է մոտ 87 տոկոսով⁴⁷: Էապես կրճատվում է Թել Բրակի մակերեսը, որտեղ աքքադական կիսակառույցները մնում են անավարտ⁴⁸, քաղաքի հասարակական կառույցները ծխականորեն փակվում են աքքադացիների հեռանալուց անմիջապես առաջ⁴⁹: Ինչպես Թել Լեյլանը, միառժամանակ անց Թել Բրակը ևս, իր շրջակայքով հանդերձ, մեծ մասամբ ապաբնակեցվում է⁵⁰: Նույնը վերաբերում է Խաբուրի հովտում ընկած այլ հնավայրերին (Թել Մոհամմեդ Դիյաբ, Թել Ֆարֆարա, Թել Չադար Բազար, Թել Բեյդար, Թել Համուկար

⁴¹ Van De Mieroop 2007, 71, McMahon 2012, 664-667.

⁴² Weiss 2015, 39-40.

⁴³ Weiss et al. 1993, 1002, Weiss 2012, 4, 2013a, 106, 2017a, 135-136, 2017b, 98-99, Ristvet 2012b, 245-249.

⁴⁴ Ristvet 2012b, 243-244, 2017, 47-48, տե՛ս նաև Van De Mieroop 2007, 68, McMahon 2012, 662-663:

⁴⁵ Ristvet, Weiss 2013, 262.

⁴⁶ Weiss 2013a, 106-110, Ristvet, Weiss 2013, 259.

⁴⁷ Arrivabeni 2012, 268, Figs 2-3, Staubwasser, Weiss 2006, 382, Figs 4-5, Weiss 2012, 7, 2015, 41, Fig. 5, 2017a, 139, Tab. 6.1, Ristvet 2012a, 39, Ristvet, Weiss 2013, 262.

⁴⁸ Ur 2012, 31-32, Weiss 2012, 5, 2013b, 372.

⁴⁹ Weiss 2013b, 372, 2017a, 136.

⁵⁰ Weiss 2015, 42-43, տե՛ս նաև Emberling et al. 2012, 82-83:

և այլն)⁵¹: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ սիրիական Զազիրայի բնակավայրերի ընդհանուր մակերեսը կրճատվում է գրեթե 95 տոկոսով⁵²: Այս շրջանի կարևոր քաղաքական և պաշտամունքային կենտրոններից Թել Մոզանը (=Ուրքեշ) թեև շարունակում է գոյատևել, բայց 6 անգամ կրճատվում է նրա մակերեսը, ապա և, թերևս միառժամանակ, լքվում է Ք.ա. մոտ 2000 թ. (առնվազն ստորին քաղաքը)⁵³: Մեկ այլ խոշոր քաղաքական կենտրոն՝ Թել-Մարդիխը (Էբլա), նույնպես շարունակում է իր գոյությունը, բայց անցնում է աղետների միջով և ավերվում Ք.ա. մոտ 2000 թ., էպպես կրճատվում է քաղաքի մակերեսը, ինչպես նաև նվազում՝ հետագա քաղաքական դերակատարությունը⁵⁴: Արևմտյան Սիրիայում և Եփրատի մեծ ոլորանի շրջանում տարածվող՝ գետի ջրերի ոչ հասանելի, անջրդի երկրագործական գոտիներում ընկած բնակավայրերը (Թիթիշ Հյոյոք, Քազանե Հյոյոք, Թիլբեշար, Թել Թուկան, Թել Ումմ էլ-Մառա, Թել Ալ-Ռավդա և այլն⁵⁵) նույնպես լքվում են: Ավելի քան 60 տոկոսով նվազում է բնակավայրերի թիվը Բալիխ գետի վերին ավազանում՝ Խառանի հովտում, իսկ բնակչությունը պակասում է առնվազն կիսով չափ⁵⁶: Նման գործընթացներ են դիտարկվում նաև հյուսիսային Միջագետքի մերձտիգրիսյան գոտիներում՝ ասորեստանյան միջնաշխարհից անմիջապես հյուսիս, որտեղ նկատվում է բնակավայրերի քանակի ու զբաղեցրած մակերեսի կտրուկ անկում, բնակչության թվի նվազում⁵⁷:

Մյուս կողմից, ստեղծված իրավիճակին իբրև արձագանք, ականատես ենք լինում բնակչության տեղաշարժերի դեպի գետահովտային՝ մշտական/բավարար հոսք ունեցող կամ ստորգետնյա աղբյուրներից սնվող մատչելի ջրի աղբյուրներ ունեցող գոտիներ, որտեղ դեռևս հնարավոր էր զբաղվել արդյունավետ երկրագործությամբ: Այս գործընթացը մասնավորապես նկատվում է ստորգետնյա աղբյուրներից սնվող Օրոնտես գետի ավազանում: Այստեղ մշտական բնակավայրերը շարունակում են գոյատևել և անգամ տարածքային աճ ունենալ՝ ընդունելով մեծաթիվ հավելյալ բնակչություն, ի հայտ են գալիս նոր բնակավայրեր⁵⁸: Ծաղկում է ապրում Թել ալ-Միշրիֆեն (=Կատնա), որի շուրջը գտնվող և

⁵¹ Arrivabeni 2012, 261-262, 269-271, Ur 2012, 30-32, Ristvet 2012a, 37, Weiss et al. 2013, 999, Weiss 2012, 8-11, Figs 2, 4, 2013b, 373-374, 2015, 42-46, Fig. 5, 2017a, 136-143, Tab. 6.1, Figs 6.6a-6.7, 2017b, 106-110, Fig. 3.4, Ristvet, Weiss 2013, 259-262, Figs 116-117, Burke 2017, 283, Tab. 10.3. ամփոփ տե՛ս նաև Burke 2020, 61-69:

⁵² Burke 2020, 69, 73, Tab. 2A.2.

⁵³ Weiss 2015, 43-44, տե՛ս նաև Koliński 2014, 31, հմմտ. Pfälzner 2010, 4-10, 2012, 51-80 և հստկ. 68-69, Figs 16-17.

⁵⁴ Matthiae 2009, 62-66, Weiss 2013b, 375, 2015, 44, Schwartz 2017, 114-115.

⁵⁵ Weiss 2013b, 374-375, 2015, 44, 2017a, 143-144, 2017b, 110-111, Schwartz 2017, 116-120, Schwartz, Miller 2007, 188-189, 199-200, Schwartz et al. 2000, 451, 456, Schwartz et al. 2012, 174, 185, Ökse 2011, 275-276, Morandi Bonacossi 2009, 66, n. 19, 2013, 416, Algaze, Matney 2011, 1009, Barge et al. 2014, 173, Burke 2017, 271-272, 289-291.

⁵⁶ Creekmore 2018, 192, 202, Fig. 8.

⁵⁷ Algaze et al. 2012, 26-27, Figs 4, 6, Appendix 1.

⁵⁸ Morandi Bonacossi 2009, 62-63, 66, n. 19, Weiss 2012, 14, 2013b, 376, 2015, 44-45, 2016, 63, Fig. 2, 2017b, 111-112.

ստորգետնյա աղբյուրներից սնվող խոշոր արհեստական լիճն ապահովում էր երկրագործության կենսունակությունը 25-ից 110 հա-ի աճած քաղաքի համար⁵⁹։ Նույն գործընթացը նկատվում է Եփրատ գետի ափամերձ գոտիներում։ Հայկական լեռնաշխարհում դիտարկվող տեղումների քանակի անկումը Ք.ա. մոտ 2200-2000 թթ. սահմաններում⁶⁰, ինչպես վերը նշվեց, անշուշտ, ազդելու էր Եփրատի ջրերի ծավալի վրա։ Թեև Եփրատ գետի հոսքը նվազում է, բայց գետը շարունակում է ծառայել իբրև ջրի կարևոր աղբյուր՝ արհեստական ոռոգման վրա հիմնված գետամերձ տարածքների համար։ Այդուհանդերձ, անգամ Եփրատի ափամերձ գոտու բազմաթիվ բնակավայրեր միջին հոսանքի շրջանում լքվում են (Ջերաբլուս Թահթանի, Թել Բանաթ, Էլ-Աբդ և այլն), իսկ մի մասի մակերեսն էապես կրճատվում է (Թել-Հարիրի = Մարի, Թել էս Սվեյհատ, Թել Քաբիր, Հալափա և այլն)⁶¹։ Սակայն, ընդհանուր առմամբ Եփրատի ափերին քաղաքային կյանքը շարունակվում է, ինչը երևում է Սամոսատում, Կարքեմիշում, Թութթուլում, Էմարում, Թել Մունբակայում և այլուր։ Ընդ որում, այդ տարածքները ևս ընդունում են հավելյալ բնակչություն՝ թերևս նրանց, ովքեր ստիպված էին լքել անջրդի երկրագործական գոտիներում տարածվող իրենց բնակավայրերը⁶²։ Նման գործընթաց է տեսանելի նաև վերինտիգրիսյան ավազանում, որտեղ՝ Բաթմանի շրջանում՝ Տիգրիսի մերձափնյա հատվածներում, Ք.ա. III հազ. վերջերին կտրուկ աճում է բնակավայրերի թիվը (Հիրբեմերդոն Թեփե, Քավուշան Հոյուք, Սալաթ Թեփե և այլն)⁶³։ Խեցեղենը հուշում է, որ բնակչության հոսքն այստեղ տեղի է ունեցել սիրիական Ջազիրայից⁶⁴։

Իրավիճակն այլ գոտիներում

Նշված գործընթացները կրկնվում են արևմտյան Սիրիայում և Լևանտի ծովափնյա գոտում⁶⁵, հարավային Լևանտում (Պաղեստին և Հորդանան)⁶⁶, Էգեյան ավազանում⁶⁷, Փոքր Ասիայում⁶⁸, Միջին Ասիայում⁶⁹, Ինդոս գետի ավազանում⁷⁰, Չինաստանում⁷¹ և այլուր⁷²։ Այսպես, կտրուկ չորացման հետևանքով

⁵⁹ Morandi Bonacossi 2009, 63-64, Weiss 2013b, 378, Fig. 25.5, Schwartz 2017, 115-116.

⁶⁰ Wick et al. 2003, 673, Kuzucuoğlu 2007, 474.

⁶¹ Cooper 2006, 20-25, Fig. 2.2, Morandi Bonacossi 2013, 416-418, Fig. 28.1.

⁶² Cooper 2006, 26-31, Marro 2007, 396-400, Weiss 2015, 44, 2017a, 145, 2017b, 112, Burke 2017, 279-281, 291-295, Tab. 10.4.

⁶³ Laneri 2014, 125, Ökse, Laneri 2015, 68-69.

⁶⁴ Laneri et al. 2016, 39.

⁶⁵ Harrison 2012, 640, Weiss 2013b, 376, Kaniewski et al. 2018, 1529-1542.

⁶⁶ de Miroshedji 2009, 109-117, Figs 4, 6-7, Tab. 1-2, Harrison 2012, 40-42, D'Andrea 2014, 156, Bieniada 2016, 7-8, Kaniewski et al. 2017, 3-4, տե՛ս նաև Frumkin 2009, 319-320.

⁶⁷ Pullen 2008, 36, Weiberg, Finné 2013.

⁶⁸ Օրինակ՝ Massa, Şahoglu 2015, 64-75:

⁶⁹ St'au Luneau 2019.

⁷⁰ Staubwasser, Weiss 2006, 381, Dixit et al. 2014, 341-342, Giesche et al. 2019, 85-86.

⁷¹ Yang et al. 2015, 702-706, Scuderi et al. 2019, 367-375.

⁷² Weiss et al. 2012, 185-187.

էապես նվազում է տեղումների քանակը Արևելյան Աֆրիկայում՝ Նեղոսի ջրահավաք ավազանում: Նվազում է Վիկտորիա լճի մակարդակը, որից սկիզբ առնող Ճերմակ Նեղոսի ելքը լճից անգամ մի պահ՝ Ք.ա. 2200 թ. սահմաններում, ընդհանրապես դադարում է: Էապես իջնում է Կապույտ Նեղոսը սնուցող Թանա լճի մակարդակը⁷³: Նեղոսի ջրի ծավալների նման անկումն ու վարարումների դադարը⁷⁴ աղետալի հետևանքներ են ունենում Եգիպտոսի Հին թագավորության համար⁷⁵: Ամու Դարյա գետի ջրերի մակարդակի անկման հետևանքով կտրվում է դրանից սկզբնավորվող Ուգբոյ գետի կապը Կասպից ծովի հետ՝ հանգեցնելով ծովի մակարդակի էական նվազմանը⁷⁶: Այս նույն ժամանակաշրջանում խանգարվում է հնդկական/ասիական ամառային և ձմեռային մուսսոնների շրջափուլը՝ հանգեցնելով խոշոր քաղաքներով ներկայացող Խառապայի քաղաքակրթության հասուն շրջանի (Խառապա 3, Ք.ա. 2600-1900 թթ.) անկմանը 3C փուլի ընթացքում (Ք.ա. 2200-1900 թթ.): Անցում է կատարվում հետքաղաքային փուլ, որին բնորոշ է բնակավայրերի ապաքնակեցում և բնակչության զանգվածային տեղաշարժ Ինդոսի միջին ու ստորին ավազանից դեպի վերին ավազան (Խառապա 4, Ք.ա. 1900-1700 թթ.)⁷⁷: Մայրցամաքային Հունաստանում Վաղիելլադան II փուլի վերջին (Ք.ա. 2700-2200 թթ.) բազմաթիվ բնակավայրեր ավերվում կամ լքվում են, նույնը դիտարկվում է Կիկլադյան և Դոդեկանեզյան կղզիներում և այլուր⁷⁸:

Էթնիկական տեղաշարժերը և նստակեցության վերահաստատումը

Կլիմայական փոփոխությանն ի պատասխան դիտարկվող հաջորդ երևույթը բնակչության զանգվածային տեղաշարժերն են դեպի ջրի մատչելի աղբյուրներ և երկրագործական հնարավորություններ ընձեռող գոտիներ, ինչպես նաև՝ մասնակի անցումը նստակեցությունից դեպի քոչվորական կենսակերպի⁷⁹: Ըստ հաշվարկների, Սիրիական Ջազիրայի 14 խոշոր քաղաքային տիպի բնակավայրերից արտագաղթել է շուրջ 115 հազ. մարդ⁸⁰: Ենթադրվում է, որ «Գերերաշտը» պատճառ է դարձել սիրիամիջագետքյան գոտուց ավելի քան 300 հազ. նստակյաց բնակչության հարկադրված տեղաշարժի⁸¹: Մյուս կողմից, տարածաշրջան են սկսում մուտք գործել էթնիկական այլ խմբեր: Դրանց շարքում են կուտիները, որոնք Միջագետքում հաստատում են պարզունակ տիրապետություն⁸²: Ավելի զանգվածային բնույթ ունեին խանայացիների/ամորեացիների տեղաշարժերը Ք.ա. մոտ 2100-

⁷³ Marshall et al. 2011, 159.

⁷⁴ Stanley et al. 2003, 395-402, Welc, Marks 2014, 126.

⁷⁵ Հին թագավորության անկման մասին Ք.ա. 2200 թ. սահմաններում տե՛ս Hassan 1997, 1-23, Welc, Marks 2014, 126-133, Höflmayer 2015, 122-123:

⁷⁶ Leroy et al. 2007, 3359, 3379-3380, Leroy et al. 2014, 107-108.

⁷⁷ Staubwasser et al. 2003, Petrie et al. 2017, Green, Petrie 2018:

⁷⁸ Օրինակ՝ Wiener 2014, S5-S7:

⁷⁹ Weiss 2013b, 376.

⁸⁰ Burke 2017, 282-283, Tab. 10.3.

⁸¹ Weiss 2015, 45, տե՛ս նաև Burke 2020, 81:

⁸² Van De Mieroop 2007, 71, Burke 2020, 101-103.

2000 թթ. մերձմիջինեփրատյան շրջաններից (որտեղ նրանք վկայված են դեռևս Ք.ա. III հազ. կեսերին⁸³) դեպի հարավ-արևելք (կենտրոնահարավային Միջագետք) և հյուսիս (հյուսիսային Սիրիա և հյուսիսային Միջագետք): Ք.ա. III հազ. վերջերին, Ուրի III հարստության կործանմամբ, ստեղծվում է Իսինի առաջին ամորեական թագավորությունը, ինչին հաջորդում է ամորեական հարստությունների հաստատումը Միջագետքում, Սիրիայում և Լևանտում (Ք.ա. 2000-1800 թթ.)⁸⁴:

Ահա այս շրջանում է, որ հատկապես հյուսիսային Սիրիայում ապա և հյուսիսային Միջագետքում փաստագրվում է ամորեացիների ներկայությունը՝ ի դեմս, այսպես կոչված, «Խաբուրյան խեցեղենի մշակույթի»⁸⁵: Ք.ա. 1950-ական թթ. սկսած՝ ամորեացիները մասամբ անցնում են նստակեցության՝ հաստատվելով Խաբուր գետի հովտի անջրդի երկրագործական գոտիներում⁸⁶: Ք.ա. 1950-1900 թթ. սահմաններում որոշ չափով բնակեցվում է Թել Բրակը: Թել Լեյլանը վերաբնակեցվում է լքվելուց մոտավորապես 250 տարի անց՝ Ք.ա. 1950 թ. սահմաններում⁸⁷: Այս նույն շրջանում վերաբնակեցվում են Խաբուրի հովտի լքված կամ նոսրացած մյուս բնակավայրերը ևս (Թել Մոհամմեդ Դիյաբ, Թել Չադար Բազար, Թել Մոզան, և այլն)⁸⁸: Կտրուկ աճում է բնակչության թվաքանակը, ընդ որում, Թել Լեյլանի գոտու բնակավայրերի զբաղեցրած ընդհանուր մակերեսը ավելին էր (767 հա), քան աքքադական շրջանում (397 հա)⁸⁹: Աճում են Խաբուրյան խեցեղենով ներկայացված բնակավայրերի քանակն ու զբաղեցրած մակերեսը (համապատասխանաբար նաև՝ բնակչության թիվը) վերինմերձտիգրիսյան գոտում⁹⁰: Անցումը մասնակի նստակեցության, երկրագործության դերի աճը, բնակավայրերի և բնակչության կտրուկ ավելացումը լքված կամ սակավաբնակ այդ գոտիներում պայմանավորված էր տեղումների քանակական աճով և, շուրջ 300 տարի անց, վերադարձով նախկին մակարդակին, ինչը գլոբալ երևույթ էր⁹¹:

Ք.ա. մոտ. 1900 թ. սկսած՝ սիրիամիջագետքյան գոտու քաղաքական պատկերը կտրուկ փոխվում է՝ հանձինս ամորեական հարստություններով ներկայացված նորակազմ թագավորությունների (Բաբելոնիա, Էշնուննա, Էկալատում, Կատնա, Յամխադ, Մարի և այլն)⁹²: Մի շարք մանր թագավորություններ և ցեղապետություններ են հայտնվում Խաբուրի հովտում (Ապում, Աշնակկում/Սումում,

⁸³ Burke 2020, 20-23.

⁸⁴ Burke 2017, 269-270, 283-287, 2020, 117-132, 150-162, 174-176:

⁸⁵ Oguchi 1997, Koliński 2014, 17-34, Tab. I.

⁸⁶ Weiss 2017a, 146, 2017b, 114.

⁸⁷ Weiss 2015, 43.

⁸⁸ Staubwasser, Weiss 2006, 382-383, Fig. 6, Weiss 2012, Fig. 2, 2015, 42, Fig. 5, Ristvet, Weiss 2013, 262-265, Figs 118-119, Ristvet 2012a, 38-40, Fig. 3, Koliński 2014, 31.

⁸⁹ Հմմտ., օրինակ, Weiss 2017b, 111, Fig. 3.9:

⁹⁰ Algaze et al. 2012, 27-29, Figs 4, 6, Appendix 1, տե՛ս նաև Laneri et al. 2012, 145-146:

⁹¹ Weiss 2017a, 145-146.

⁹² Հմմտ. Van de Mierop 2007, 85-119:

Կախաթ, Նախուր և այլն)՝ կազմելով Իդա-Մարածի համադաշնությունը⁹³, իսկ Թել Լեյլանը Ք.ա. մոտ 1800 թ. դառնում է Շամշի-Ադդուի հզոր թագավորության կենտրոնը՝ Շուբաթ-Էնիլ անվամբ⁹⁴:

Եզրակացություններ

Առաջավոր Ասիայում Ք.ա. III-II հազ. սահմանագծին փաստագրված բնապատմական զարգացումները փաստորեն նույնությամբ կրկնվում են Հայկական լեռնաշխարհում: Դրանք հատկապես ակնհայտ են և փոխկապակցված, երբ համեմատում ենք հյուսիսսիրիամիջագետքյան գոտու և լեռնաշխարհի զարգացումները (աղյուսակ):

Բնական է, որ կլիմայական գլոբալ փոփոխությունը մեծապես ազդելու էր նաև լեռնաշխարհի կլիմայի և շրջակա միջավայրի վրա: Լեռնաշխարհից սկիզբ առնող Եփրատ գետի հոսքի էական նվազումը դրա վկայությունն է, և պետք է ենթադրել, որ այդ նույնը տեղի է ունեցել Արաքսի հետ: Մյուս կողմից, հարկ է նշել, որ կուր-արաքսյան մշակույթի վերաբերյալ ջրանցքների լայն համակարգ փաստացի վկայված չէ, իսկ այդ մշակույթի բնակավայրերի մեծ մասն ընկած է այն գոտիներում, որոնք այժմ ստանում են 400-600 մմ տեղումներ⁹⁵: Հետևաբար, այս մշակույթը հիմնված էր անջրդի երկրագործության վրա, հատկապես՝ Արարատյան և Շարուրի դաշտավայրերում: Մոխրաբլուրի ավելի քան 11 հա մակերես զբաղեցնող ջրամբարի կառուցումը բնակավայրի գոյության վերջին շրջանում⁹⁶ կարող է դիտարկվել իբրև արձագանք կլիմայի չորացմանը⁹⁷: Միաժամանակ, կուր-արաքսյան մշակույթի համար վկայված է խաղողի մշակությունը Արարատյան դաշտավայրում (օրինակ՝ Շենգավիթում⁹⁸), ինչը նշանակում է, որ այս գոտին պետք է ստանար ոչ պակաս, քան 500 մմ տեղումներ՝ անհրաժեշտ նվազագույնը խաղողի հասունացման շրջանում⁹⁹:

Այսօր Արարատյան դաշտավայրը կիսաանապատային գոտի է՝ 200-300 մմ տարեկան տեղումներով, և առանց արհեստական ոռոգման այստեղ անհնար է զբաղվել երկրագործությամբ:

⁹³ Ristvet 2008, 585-599, 2012a, 44-47, Guichard 2014.

⁹⁴ Weiss 2013a, 110-113, Ristvet, Weiss 2013, 265-267, Veenhof 2017, 65-69.

⁹⁵ Sagona 2018, 218.

⁹⁶ Areshian 2005, 79, n. 19, 2007, 37: Մոխրաբլուրի մոտ կառուցված ջրամբարների մասին տե՛ս Զալաբեկյան 1974, 157-162, Արեշյան և այլք 1977, 268:

⁹⁷ Արարատյան դաշտավայրում կուր-արաքսյան բնակավայրերի լքման էկոլոգիական և կլիմայական պատճառների մասին տե՛ս Areshian 2005, 82-84, 2007, 44-47:

⁹⁸ Hovsepyan 2015, 77, Tab. 2, տե՛ս նաև Batiuk 2013:

⁹⁹ Riehl 2009a, 98, Tab. 1, 106-107. նույնը կարելի է ասել մերձեփրատյան գոտու մասին, որտեղ խաղողի մշակությունը վաղ բրոնզի դարի վերջին, ըստ էության, վերանում է (Riehl 2009b, 221-222): Օրինակ, գինու արտադրության հստակ վկայություններ ունեցող հուշարձաններից մեկը՝ Թիթրիշ Հյոյուքը վերինեփրատյան գոտում (Laner 2018, 228-231), լքվում է Ք.ա. III հազ. վերջերին (տե՛ս վերը, ինչպես նաև Ökse 2011, 275): Հինառաջավորասիական երկրագործության վրա «Ք.ա. 4.2 ka իրադարձության ունեցած հետևանքների մասին տե՛ս նաև Riehl 2011, 153-162:

Ք.ա. VIII դ. սկզբներին ուրարտական թագավորության կողմից այստեղ իրականացված լայնածավալ ջրանցքաշինությունը դրա վկայությունն է¹⁰⁰: Հետևաբար, պետք է ենթադրել, որ կուր-արաքսյան մշակույթի երկրորդ փուլում (Ք.ա. մոտ 2900-2500 թթ.)¹⁰¹ Արարատյան դաշտավայրում տեղումներն ավելին էին, քան երրորդ փուլում (Ք.ա. մոտ 2500-2300 թթ.), և շատ ավելին՝ մինչուրարտական շրջանի համեմատությամբ¹⁰²:

Հայկական լեռնաշխարհին բնորոշ վիշապ-քարակոթողների ի հայտ գալը հենց քննարկվող ժամանակահատվածում պետք է դիտարկել վերը նշված գործընթացների համատեքստում՝ որպես հասարակական ճգնաժամը հաղթահարելուն ուղղված արձագանք: Իսկ թե որքանո՞վ էին հետագա դարերում նման քարակոթողները կանգնեցվում այս նույն տրամաբանությամբ, այլ քննարկման հարց է:

Վերջում հավելենք, որ կլիմայի փոփոխությունը և մասնավորապես աստիճանական չորացումը մեկնարկում են դեռևս Ք.ա. մոտ 2500 թ. սկսած¹⁰³ և համընկնում լեռնաշխարհում դիտարկվող կուր-արաքսյան մշակույթի տրոհման գործընթացների մեկնարկի հետ¹⁰⁴: Այս համընկնումը նույնպես պատահական չի կարող լինել և լրացուցիչ պարզաբանման կարիք է զգում: Այս կտրվածքում գուցե պետք է դիտարկել հենց «վաղ դամբանաբլուրների» մշակույթի կրողների հայտնվելը Կովկասից հարավ ընկած տարածքներում՝ Ք.ա. 2500 թ. սկսած¹⁰⁵: Համենայն դեպս, կլիմայական փոփոխության գործոնը կարող էր դեր խաղալ մարդկանց խմբերի նման տեղաշարժերի համար: Նշենք նաև, որ «Գերերաշտի» հետևանքով հյուսիսկովկասյան տափաստանային և նախալեռնային/անտառատափաստանային գոտին ընդգրկող «կատակոմբային մշակույթը» (Ք.ա. 2800-2000 թթ.) անկում է ապրում, և բնակչության արտագաղթի հետևանքով հետագա մի քանի դարերի ընթացքում այդ ողջ գոտին, ըստ էության, ամբողջությամբ ապաբնակեցվում է¹⁰⁶: Փոխարենը կատակոմբային թաղման կառույցներ են հայտնվում Կովկասից հարավ ընկած շրջանների «վաղ դամբանաբլուրների» մշակույթի նյութերով ներկայացված հուշարձաններում (Ք.ա. 2500-2300 թթ.)¹⁰⁷, ինչը ենթադրել է տալիս, որ այս երևույթները փոխկապակցված էին:

¹⁰⁰ Мартиросян 1974, 37, рис. 7.

¹⁰¹ Կուր-արաքսյան մշակույթի փուլաբաժանման և ժամանակագրության մասին տե՛ս Ավետիսյան 2014, Palumbi 2008, 12-16, Tab. 1.1, 319-323, Smith et al. 2009, 33-38, Fig. 2, Badalyan 2014, Palumbi, Chataigner 2014, 248, Fig. 2, Sagona 2018, 224-228:

¹⁰² Ք.ա. մոտ 4000-2000 թթ. Հայկական լեռնաշխարհին վերաբերող հնակլիմայաբանական տվյալները վկայում են ցածրադիր, հարթավայրային գոտիների բավական խոնավ և տաք կլիմայի մասին, որի դրսևորումներից է հատկապես կաղնու անտառների աննախադեպ ծավալումը և լճային ջրերի բարձր մակարդակը (Wick et al. 2003, 673-674, Connor, Kvavadze 2014, 18-19):

¹⁰³ Տե՛ս, օրինակ, Staubwasser, Weiss 2006, 380, Kuzucuoğlu 2007, 463-464, 474-476, Marro, Kuzucuoğlu 2007, 587-588:

¹⁰⁴ Ավետիսյան 2014, 43-44:

¹⁰⁵ Ավետիսյան 2014, 31-33, 43-44, Sagona 2018, 299-305:

¹⁰⁶ Knipper et al. 2020, 5-6, 31.

¹⁰⁷ Ավետիսյան 2014, 33, 44:

Վերն ասվածից հետևում է մեթոդաբանական կարևոր մի եզրակացություն. Հայկական լեռնաշխարհում տեղ գտած պատմամշակութային գործընթացները ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է դրանք մշտապես դիտարկել տարածաշրջանային, և հատկապես՝ հինառաջավորասիական զարգացումների համատեքստում:

Գրականություն

- Ավետիսյան Պ. 2012, Հայկական լեռնաշխարհի հնամշակութային միջավայրի ձևափոխումների հիմնական միտումները վաղ բրոնզի դարում, Պատմաբանասիրական հանդես, N 2, էջ 3-19:
- Ավետիսյան Պ. 2012, Հայկական լեռնաշխարհի հնամշակութային միջավայրի ձևափոխումների հիմնական միտումները վաղ բրոնզի դարում, Պատմաբանասիրական հանդես, N 2, էջ 3-19:
- Ավետիսյան Պ. 2014, Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV-IX դարերում (Սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների), «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման գիտական զեկուցում, Երևան, 92 էջ:
- Արեշյան Գ., Սիմոնյան Հ., Սարգսյան Գ. 1977, Հայագիտական կենտրոնի 1976 թվականի դաշտային հնագիտական աշխատանքները, Բանբեր Երևանի համալսարանի, N 3, Երևան, էջ 266-274:
- Բոբոխյան Ա. 2017, Խորենացու վկայությունը Պաղատի սրբազան տարածքի մասին և վիշապաքարերի խնդիրը, Սաֆրաստյան Ռ. (խմբ.), Հին և միջնադարյան Հայաստանը և իր հարևանները, Հոդվածների ժողովածու նվիրված Գագիկ Խորենի Սարգսյանի ծննդյան 90-ամյակին, «Արևելագիտությունը Հայաստանում», հ. 3, Երևան, «Գիտություն», էջ 32-51:
- Բոբոխյան Ա. 2019, Հեքիաթից դեպի հնագիտություն, Ա. Բոբոխյան, Ա. Զիլիբերտ, Պ. Հնիլա (խմբ.), Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., էջ 8-32:
- Բոբոխյան Ա., Զիլիբերտ Ա., Հնիլա Պ. 2015, Վիշապաքարերի հնագիտություն, Ա. Պետրոսյան, Ա. Բոբոխյան (խմբ.), Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն», էջ 269-396:
- Գաբրիելյան Հ. 2000, Հայկական լեռնաշխարհ, Երևան, ԵՊՀ հրատ., 376 էջ:
- Թումանյան Գ. 2015, Վիշապաքարերի պաշտամունքային-կիրառական գործառույթները, Ա. Պետրոսյան, Ա. Բոբոխյան (խմբ.), Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն», էջ 99-120:
- Հարությունյան Ս. 2015, «Վիշապներ» կոչված քարակոթողների պատկերազրության իմաստաբանության շուրջ, Ա. Պետրոսյան, Ա. Բոբոխյան (խմբ.), Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն», էջ 53-58:
- Մարտիրոսյան Հ. 2015, Լեռնային ակունքի ֆառնը, Արշալույսի դիցուհին և գլխի ու մորթու զոհածեղ վիշապակոթողների իմաստաբանական հենքում, Ա. Պետրոսյան, Ա. Բոբոխյան (խմբ.), Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն», էջ 136-170:
- Պետրոսյան Ա. 2015, Երեսուն տարի անց. Վիշապ քարակոթողները և վիշապամարտի առասպելը, Ա. Պետրոսյան, Ա. Բոբոխյան (խմբ.), Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն», էջ 13-52:
- Պետրոսյան Հ. 2015, Մի քանի դիտողություն վիշապ կոթողների վերաբերյալ, Ա. Պետրոսյան, Ա. Բոբոխյան (խմբ.), Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն», էջ 81-98:
- Ջալալբեկյան Ռ.Լ. 1974, Մոխրաբլուրի պատվարները, Պատմաբանասիրական հանդես, N 4(157), Երևան, էջ 157-162:

- Միմոնյան Հ. 2019, Վիշապակոթողներ և դամբարաններ, Ա. Բորոխյան, Ա. Զիլիբերտ, Պ. Հնիկա (խմբ.), Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., էջ 552-571:
- Март И.Я., Смирнов Я.И. 1931, Вишاپы, Ленинград, «ОГИЗ», 105 с.
- Мартirosян А.А. 1974, Аргиштихинили (Археологические памятники Армении 8. Урартские памятники I), Ереван, изд. АН Армянской ССР, 176 с.
- Algaze G. Hammer E., Parker B., Breuninger R., Knudstad J. 2012, The Tigris-Euphrates Archaeological Reconnaissance Project. Final Report of the Cizre Dam and Cizre-Silopi Plain Survey Areas, *Anatolica*, N 38, p. 1-115.
- Algaze G., Matney T. 2011, Titriş Höyük: The Nature and Context of Third Millennium B.C.E. Urbanism in the Upper Euphrates Basin, in: Sh. S. Steadman, G. McMahon (eds), *The Oxford Handbook of Ancient Anatolia (10,000-323 B.C.E.)*, Oxford, Oxford University Press, p. 993-1011.
- Alizadeh K., Maziar S., Rouhollah Mohammadi M. 2018, The End of the Kura-Araxes Culture as Seen from Nadir Tepesi in Iranian Azerbaijan, *American Journal of Archaeology*, N 122/3, p. 463-477.
- Areshian G.E. 2005, Early Bronze Age Settlements in the Ararat Plain and Its Vicinity, *Archäologische Mitteilungen aus Iran und Turan*, N 37, p. 71-88.
- Areshian G.E. 2007, From Extended Families to Incipient Polities: The Trajectory of Social Complexity in the Early Bronze Age of the Ararat Plain (Central Near Eastern Highlands), in: L.M. Popova, Ch.W. Hartley, A.T. Smith (eds), *Social Orders and Social Landscapes*, Newcastle, Cambridge Scholars Publishing, p. 26-54.
- Arrivabeni M. 2012, Post-Akkadian Settlement Distribution in the Leilan Region Survey, in: H. Weiss (ed.), *Seven Generations Since the Fall of Akkad (Studia Chaburensia 3)*, Wiesbaden, Harrassowitz Verlag, p. 261-278.
- Badalyan R.S. 2014, New Data on the Periodization and Chronology of the Kura-Araxes Culture in Armenia, *Paléorient*, N 40/2, p. 71-92.
- Badalyan R.S., Avetisyan P.S. 2007, Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia, I. Mt. Aragats and its Surrounding Region (*British Archaeological Reports, International Series 1697*), Oxford, Archaeopress, 319 p.
- Barge O., Castel C., Brochier J.É. 2014, Human Impact on the Landscape around Al-Rawda (Syria) during the Early Bronze IV. Evidence for Exploitation, Occupation and Appropriation of the Land, in: D. Morandi Bonacossi (ed.), *Settlement Dynamics and Human-Landscape Interaction in the Dry Steppes of Syria (Studia Chaburensia 4)*, Wiesbaden, Harrassowitz Verlag, p. 173-185.
- Baştürk M.B., Konakçı E. 2005, Settlement Patterns in the Malatya Elazığ Region in the IV and III Millennium BC, *Altorientalische Forschungen*, N 32/1, p. 97-114.
- Batiuk S.G. 2013, The Fruits of Migration: Understanding the ‘long duree’ and the Socio-Economic Relations of the Early Transcaucasian Culture, *Journal of Anthropological Archaeology*, N 32, p. 449-477.
- Bieniada M.E. 2016, Intermediate Bronze Age in Southern Levant (4200-4000 BP) - Why did Four Cities in Transjordan Survive Urban Collapse? *Studia Quaternaria*, N 33/1, p. 5-10.
- Bini M., Zanchetta G., Perşoiu A., Cartier R., Català A., Cacho I., Dean J.R., Di Rita F., Drysdale R.N., Finnè M., Isola I., Jalali B., Lirer F., Magri D., Masi A., Marks L., Mercuri A.M., Peyron O., Sadori L., Sicre M.-A., Welc F., Zielhofer Ch., Brisset E. 2019, The 4.2 BP Event in the Mediterranean Region: An Overview, *Climate of the Past*, N 15, p. 555-577.
- Bobokhyan A., Gilibert A., Hnila P. 2012, Vishaps of the Geghama Mountains. New Discoveries and Propedeutics to a History of Research, *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies*, N 7/2, p. 7-27.

- Bobokhyan A., Gilibert A., Hnila P. 2015, Vishapakars: Current Approaches to Dating of Relief-Decorated Stone Stelae in Armenia, in: M. İşikli, B. Can (eds), International Symposium on East Anatolia - South Caucasus Cultures, vol. 2. Newcastle, Cambridge Scholars Publishing, p. 202-213.
- Bobokhyan A., Gilibert A., Hnila P., Gasparyan B., Danielyan H. 2015 [2016], New Finds of Vishaps on the Southern Slopes of the Mountain Aragats, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, N 9/2, p. 37-43.
- Bobokhyan A., Gilibert A., Hnila P. 2018, Karmir Sar: New Evidence on Dragon Stones and Ritual Landscapes on Mount Aragats, Armenia, in: A. Batmaz, Bedianashvili G., Michalewicz A., Robinson A. (eds), Context and Connection. Studies on the Archaeology of the Ancient Near East in Honour of Antonio Sagona (Orientalia Lovaniensia Analecta 268), Leuven - Paris - Bristol, CT, Peeters, p. 255-270.
- Bobokhyan A., Gilibert A., Hnila P. 2019, The Urartian God Quera and the Metamorphosis of the 'Vishap' Cult, in: P. Avetisyan, R. Dan, Y.H. Grekhan (eds), Over the Mountains and Far Away. Studies in Near Eastern History and Archaeology presented to Mirjo Salvini on the Occasion of his 80th Birthday, Oxford, Archaeopress Archaeology, p. 98-105.
- Burke A.A. 2017, Amorites, Climate Change, and the Negotiation of Identity at the End of the Third Millennium B.C., in: F. Höflmayer (ed.), The Late Third Millennium in the Ancient Near East. Chronology, C14, and Climate Change (Oriental Institute Seminars 11), Chicago, Ill.: The Oriental Institute of the University of Chicago, p. 261-307.
- Burke A.A. 2020, The Amorites and the Bronze Age Near East. The Making of a Regional Identity, Cambridge, Cambridge University Press, 456 p.
- Connor S.E., Kvavadze E.V. 2014, Environmental Context of the Kura-Araxes Culture, *Paléorient*, N 40/2, p. 11-22.
- Cooper L. 2006, The Demise and Regeneration of Bronze Age Urban Centers in the Euphrates Valley of Syria, in: G.M. Schwartz, J.J. Nichols (eds), After Collapse: The Regeneration of Complex Societies, Tucson, The University of Arizona Press, p. 18-37.
- Creekmore A.T. III 2018, Landscape and Settlement in the Harran Plain, Turkey: The Context of Third-Millennium Urbanization, *American Journal of Archaeology*, N 122/2, p. 177-208.
- Cullen H.M., deMenocal P.B. 2000, North Atlantic Influence on Tigris-Euphrates Streamflow, *International Journal of Climatology*, N 20, p. 853-863.
- Cullen H.M., deMenocal P.B., Hemming S., Hemming G., Brown F.H., Guilderson T., Sirocko F. 2000, Climate Change and the Collapse of the Akkadian Empire: Evidence from the Deep Sea, *Geology*, N 28/4, p. 379-382.
- D'Andrea M. 2014, Townships or Villages? Remarks on Middle Bronze IA in the Southern Levant, in: P. Bieliński, M. Gawlikowski, R. Koliński, D. Ławecka, A. Sołtysiak, Z. Wygnańska (eds), Proceedings of the 8th International Congress on the Archaeology of the Ancient Near East, 30 April - 4 May 2012, University of Warsaw, vol. 1, Wiesbaden, Harrassowitz Verlag, p. 151-172.
- Dang Sh., Yu K., Tao Sh., Han T., Zhang H., Jiang W. 2020, El Niño/Southern Oscillation during the 4.2 ka Event Recorded by Growth Rates of Corals from the North South China Sea, *Acta Oceanologica Sinica* 39, p. 110-117.
- de Miroschedji P. 2009, Rise and Collapse in the Southern Levant in the Early Bronze Age, *Scienze dell'Antichità*, N 15, p. 101-129.
- Di Nocera G.M. 2008, Settlements, Population and Landscape on the Upper Euphrates between V and II Millennium BC. Results of the Archaeological Survey Project 2003-2005 in Malatya Plain, in: J.M. Córdoba, M. Molist, M. Carmen Pérez, I. Rubio, S. Martínez (eds), Proceedings of the 5th International Congress on the Archaeology of the Ancient

- Near East, Madrid, April 3-8 2006, vol. I, Madrid, Universidad Autónoma de Madrid Ediciones, p. 633-645.
- Dixit Y., Hodell D.A., Petrie C.A. 2014, Abrupt Weakening of the Summer Monsoon in North-west India ~ 4100 yr Ago, *Geology*, N 42/4, p. 339-342.
- Emberling G., McDonald H., Weber J., Wright H. 2012, After Collapse: The PostAkkadian Occupation in the Pisé Building, Tell Brak, in: H. Weiss (ed.), *Seven Generations Since the Fall of Akkad (Studia Chaburensia 3)*, Wiesbaden, Harrassowitz Verlag, p. 65-87.
- Frangipane M. 2011, Arslantepe-Malatya: A Prehistoric and Early Historic Center in Eastern Anatolia, in: Sh. S. Steadman, G. McMahon (eds), *The Oxford Handbook of Ancient Anatolia (10,000-323 B.C.E.)*, Oxford, Oxford University Press, p. 968-992.
- Frumkin A. 2009, Stable Isotopes of a Subfossil Tamarix Tree from the Dead Sea Region, Israel, and their Implications for the Intermediate Bronze Age Environmental Crisis, *Quaternary Research*, N 71/3, p. 319-328.
- Gevorkyan A., Bobokhyan A. 2014, Bull Sacrifices, in: A. Kosyan, Y. Grekyan, A. Bobokhyan (eds), *The Black & the White. Studies on History, Archaeology, Mythology and Philology in honor of Armen Petrosyan on the Occasion of his 65th birthday (Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies 8/1-2)*, Yerevan, Association for Near Eastern and Caucasian Studies, p. 48-56.
- Giesche A., Staubwasser M., Petrie C.A., Hodell D.A. 2019, Indian Winter and Summer Monsoon Strenght over the 4.2 ka BP Event in Foraminifer Isotope Records from the Indus River Delta in the Arabian Sea, *Climate of the Past*, N 15, p. 73-90.
- Gilibert A., Bobokhyan A., Hnila P. 2012, Dragon Stones in Context: The Discovery of High-Altitude Burial Grounds with Sculpted Stelae in the Armenian Mountains, *Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft*, N 144, Berlin, S. 93-132.
- Green A.S., Petrie C.A. 2018, Landscape of Urbanization and De-Urbanization: A Large-Scale Approach to Investigating the Indus Civilization's Settlement Distributions in North-west India, *Journal of Field Archaeology*, N 43/4, p. 284-299.
- Guichard M. 2014, Political Space - Local Political Structures in Northern Syria: The Case of the Country of Ida-Mara § in the Eighteenth Century BC, in: E. Cancik-Kirschbaum, N. Brisch, J. Eidem (eds), *Constituent, Confederate, and Conquered Space. The Emergence of the Mitanni State (Topoi. Berlin Studies of the Ancient World 17)*, Berlin - Boston, De Gruyter, p. 147-160.
- Harrison T.P. 2012, The Southern Levant, in: D.T. Potts (ed.), *A Companion to the Archaeology of the Ancient Near East (Blackwell Companions to the Ancient World)*, vol. 1, Malden, MA, Wiley-Blackwell, p. 629-646.
- Hassan F.A. 1997, Nile Floods and Political Disorder in Early Egypt, in: H.N. Dalfes, G. Kukla, H. Weiss (eds), *Third Millennium BC Climate Change and Old World Collapse. Proceedings of the NATO Advanced Research Workshop on Third Millennium BC Abrupt Climate Change and Old World Social Collapse, Held at Kemer, Turkey, September 19-24, 1994 (NATO Advance Science Institutes Series 1: Global Environmental Change 49)*, Berlin, Springer Verlag, p. 1-23.
- Hnila P., Gilibert A., Bobokhyan A. 2019, Prehistoric Sacred Landscapes in the High Mountains: The Case of the Vishap Stelae between Taurus and Caucasus, in: B. Engels, S. Huy, Ch. Steitler (eds), *Natur und Kult in Anatolien. Viertes Wissenschaftliches Netzwerk an der Abteilung Istanbul des Deutschen Archäologischen Instituts (Byzas 24)*, Istanbul, Ege Yayinlari, p. 283-302.
- Höflmayer F. 2015, The Southern Levant, Egypt, and the 4.2 ka BP Event, in: H. Meller, H.W. Arz, R. Jung and R. Risch (eds), *2200 BC - A Climatic Breakdown as a Cause for the Collapse of the World? 7th Archaeological Conference of Central Germany*, Oc-

- tober 23-26, 2014 in Halle (Saale) (Tagungen des Landesmuseums für Vorgeschichte Halle 12/1), Halle (Saale), Landesamt für Denkmalpflege und Archäologie Sachsen-Anhalt Landesmuseum für Vorgeschichte, p. 113-130.
- Hovhannisyany A., Arakelyan D., von der Osten H., Hnila P., Gilibert A., Siradeghyan V., Bobokhyan A. 2020, 'Looking for the Tombs of Dragons': Preliminary Results of Archaeo-Geochemical Prospecting Studies at Tirinkatar - Karmir Sar Area, Southern Slopes of Mt Aragats, Armenia, *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies*, N 14/1-2, p. 25-51.
- Hovsepyan R. 2015, On the Agriculture and Vegetal Food Economy of Kura-Araxes Culture in the South Caucasus, *Paléorient*, N 41/1, p. 69-82.
- Kagan E.J., Langgut D., Boaretto E., Neumann F.H. 2015, Dead Sea Levels during the Bronze and Iron Ages, *Radiocarbon*, N 57/2, p. 237-252.
- Kaniewski D., Marriner N., Ilan D., Morhange Ch., Thareani Y., Van Campo E. 2017, Climate Change and Water Management in the Biblical City of Dan, *Science Advances*, N 3(11), p. 1-8.
- Kaniewski D., Marriner N., Cheddadi R., Guiot J., Van Campo E. 2018, The 4.2 ka BP Event in Levant, *Climate of the Past*, N 14(10), p. 1529-1542.
- Knipper C., Reinhold S., Gresky J., Berezina N., Gerling C., Pichler S.L., Buzhilova A.P., Kantorovich A.R., Maslov V.E., Petrenko V.G., Lyakhov S.V., Kalmykov A.A., Belinskiy A.B., Hansen S., Alt K.W. 2020, Diet and Subsistence in Bronze Age Pastoral Communities from the Southern Russian Steppes and the North Caucasus, *PLoS ONE* 15(10), e0239861.
- Koliński R. 2014, 20th Century BC in the Khabur Triangle Region and the Advent of the Old Assyrian Trade with Anatolia, in: D. Bonatz (ed.), *The Archaeology of Political Space. The Upper Mesopotamian Piedmont in the Second Millennium BC* (Topoi. Berlin Studies of the Ancient World 12), Berlin- Boston, De Gruyter, 11-34.
- Kuzucuoğlu C. 2007, Climatic and Environmental Trends during the Third Millennium B.C. in Upper Mesopotamia, in: C. Kuzucuoğlu, C. Marro (eds), *Sociétés humaines et changement climatique à la fin du troisième millénaire: une crise a-t-elle eu lieu en Haute Mésopotamie ? Actes du Colloque de Lyon, 5-8 décembre 2005* (Varia Anatolica 19), Istanbul, Institut Français d'Études Anatoliennes - Georges Dumézil, p. 459-480.
- Laneri N. 2014, Ritual Practices and the Emergence of Social Complexity in the Upper Tigris Region at the Beginning of the Second Millennium BC, in: D. Bonatz (ed.), *The Archaeology of Political Space. The Upper Mesopotamian Piedmont in the Second Millennium BC* (Topoi. Berlin Studies of the Ancient World 12), Berlin - Boston, De Gruyter, p. 119-129.
- Laneri N. 2018, The Impact of Wine Production in the Social Transformation of Northern Mesopotamian Societies during the Third and Second Millennia BCE, *Die Welt des Orients*, N 48/2, p. 225-237.
- Laneri N., Dallai M., Biazzo L. 2016, Phases IIaA, IIB, and IIIA: The Early Bronze Age, in: N. Laneri (ed.), *Hirbemerdon Tepe Archaeological Project 2003-2013 Final Report: Chronology and Material Culture*, Bologna, BraDypUS, p. 27-39.
- Laneri N., Schwartz M., Valentini S. 2012, Hirbemerdon Tepe: A Middle Bronze Age Site in the Upper Tigris River Valley, in: N. Laneri, P. Pfälzner, S. Valentini (eds), *Looking North: The Socioeconomic Dynamics of Northern Mesopotamian and Anatolian Regions during the Late Third and Early Second Millennium B.C.* (Studien zur Urbanisierung Nordmesopotamiens, Serie D, Supplementa 1), Wiesbaden, Harrassowitz Verlag, p. 137-147.
- Lemcke J., Sturm M. 1997, $\delta^{18}\text{O}$ and Trace Element Measurements as Proxy for the Reconstruction of Climate Changes at Lake Van (Turkey): Preliminary Results, in: H.N. Dalfes, G. Kukla, H. Weiss (eds), *Third Millennium BC Climate Change and Old World Collapse. Proceedings of the NATO Advanced Research Workshop on Third Millennium*

- BC Abrupt Climate Change and Old World Social Collapse, Held at Kemer, Turkey, September 19-24, 1994 (NATO Advance Science Institutes Series 1: Global Environmental Change 49), Berlin, Springer Verlag, p. 653-678.
- Leroy S.A.G., López-Merino L., Tudryn A., Chalié F., Gasse F. 2014, Late Pleistocene and Holocene Palaeoenvironments in and around the Middle Caspian Basin as Reconstructed from a Deep-Sea Core, *Quaternary Science Reviews*, N 101, p. 91-110.
- Leroy S.A.G., Marret F., Gibert E., Chalié F., Reyss J.-L., Arpe K. 2007, River Inflow and Salinity in the Caspian Sea during the Last 5500 Years, *Quaternary Science Reviews*, N 26, p. 3359-3383.
- Luneau É. 2019, Climate Change and the Rise and Fall of the Oxus Civilization in Southern Central Asia, in: L.E. Yang, H.-R. Bork, X. Fang, S. Mischke (eds), *Socio-Environmental Dynamics along the Historical Silk Road*, Cham, Springer, p. 275-299.
- Marro C. 2007, Continuity and Change in the Birecik Valley at the End of the Third Millennium B.C.: The Archaeological Evidence from Horum Höyük, in: C. Kuzucuoğlu, C. Marro (eds), *Sociétés humaines et changement climatique à la fin du troisième millénaire: une crise a-t-elle eu lieu en Haute Mésopotamie? Actes du Colloque de Lyon, 5-8 décembre 2005* (Varia Anatolica 19), Istanbul, Institut Français d'Études Anatoliennes - Georges Dumézil, p. 383-401.
- Marro C. 2011, Eastern Anatolia in the Early Bronze Age, in: Sh.R. Steadman, G. McMahon (eds), *The Oxford Handbook of Ancient Anatolia, 10,000-323 B.C.E.*, Oxford, Oxford University Press, p. 290-309.
- Marro C., Kuzucuoğlu C. 2007, Northern Syria and Upper Mesopotamia at the End of the Third Millennium B.C.: Did a Crisis Take Place? in: C. Kuzucuoğlu, C. Marro (eds), *Sociétés humaines et changement climatique à la fin du troisième millénaire: une crise a-t-elle eu lieu en Haute Mésopotamie? Actes du Colloque de Lyon, 5-8 décembre 2005* (Varia Anatolica 19), Istanbul, Institut Français d'Études Anatoliennes - Georges Dumézil / Paris, De Boccard, p. 583-590.
- Marshall M.H., Lamb H.F., Huws D., Davies S.J., Bates R., Bloemendal J., Boyle J., Leng M.J., Umer M., Bryant Ch. 2011, Late Pleistocene and Holocene Drought Events at Lake Tana, the Source of the Blue Nile, *Global and Planetary Change*, N 78, p. 147-161.
- Massa M., Şahoğlu V. 2015, The 4.2 ka BP Climatic Event in West and Central Anatolia: Combining Palaeoclimatic Proxies and Archaeological Data, in: H. Meller, H.W. Arz, R. Jung and R. Risch (eds), *2200 BC - A Climatic Breakdown as a Cause for the Collapse of the World? 7th Archaeological Conference of Central Germany, October 23-26, 2014 in Halle (Saale)* (Tagungen des Landesmuseums für Vorgeschichte Halle 12/1), Halle (Saale), Landesamt für Denkmalpflege und Archäologie Sachsen-Anhalt Landesmuseum für Vorgeschichte, p. 61-78.
- Matthiae P. 2009, Crisis and Collapse: Similarity and Diversity in the Three Destructions of Ebla from EB IVA to MB II, *Scienze dell'Antichità*, N 15, p. 43-83.
- McMahon A. 2012, The Akkadian Period: Empire, Environment, and Imagination, in: D.T. Potts (ed.), *A Companion to the Archaeology of the Ancient Near East* (Blackwell Companions to the Ancient World), Malden, MA, Wiley-Blackwell, vol. 2, p. 649-667.
- Morandi Bonacossi D. 2009, Tell Mishrife and its Region during the EB IV and EBA-MBA Transition, in: P.J. Parr (ed.), *The Levant in Transition: Proceedings of a Conference held at the British Museum on 20-21 April 2004* (Palestine Exploration Fund Annual 9), Leeds, Maney Publishing, p. 56-68.
- Morandi Bonacossi D. 2013, The Northern Levant (Syria) during the Middle Bronze Age, in: M.L. Steiner, A.E. Killebrew (eds), *The Oxford Handbook of the Archaeology of the Levant c. 8000-332 BCE*, Oxford, Oxford University Press, p. 414-433.

- Oguchi H. 1997, A Reassessment of the Distribution of Khabur Ware: An Approach from an Aspect of Its Main Phase, *Al-Rāfidān*, N 18, p. 195-224.
- Ökse A.T. 2011, The Early Bronze Age in Southeastern Anatolia, in: Sh. S. Steadman, G. McMahon (eds), *The Oxford Handbook of Ancient Anatolia (10,000-323 B.C.E.)*, Oxford, Oxford University Press, p. 260-289.
- Ökse A.T., Laneri N. 2015, Along the Northern Mesopotamian Frontier. The Upper Tigris Region and Its Surrounding Regions during the Early Bronze Age (3100-2000 BCE), *The European Archaeologist*, N 43, p. 68-71.
- Özfiat A. 2019, Kurgans in the Highlands of Eastern Anatolia: From the Kura-Araxes Period to the Urartian Kingdom, in: N. Laneri, G. Palumbi, S. Müller Celka (eds), *Constructing Kurgans: Burial Mounds and Funerary Customs in the Caucasus and Eastern Anatolia during the Bronze and Iron Age (Studies on the Ancient Near East and the Mediterranean 4)*, Roma, Arbor Sapientiae Editore, p. 91-103.
- Palumbi G. 2008, The Red and Black. Social and Cultural Interaction between the Upper Euphrates and the Southern Caucasus Communities in the Forth and Third Millennium BC (*Studi di Preistoria Orientale* 2), Roma, Università di Roma 'Sapienza', 343 p.
- Palumbi G., Chataigner C. 2014, The Kura-Araxes Culture from the Caucasus to Iran, Anatolia and the Levant: Between Unity and Diversity. A Synthesis, *Paléorient*, N 40/2, p. 247-260.
- Perşoiu A., Ionita M., Weiss H. 2019, Atmospheric Blocking induced by the Strengthened Siberian High led to Drying in West Asia during the 4.2 ka BP Event - A Hypothesis, *Climate of the Past*, N 15, p. 781-793.
- Petrie C.A., Singh R.N., Bates J., Dixit Y., French Ch.A.I., Hodell D.A., Jones P.J., Lancelotti C., Lynam F., Neogi S., Pandey A.K., Parikh D., Pawar V., Redhouse D.I., Singh D.P. 2017, Adaptation to Variable Environments, Resilience to Climate Change. Investigating Land, Water and Settlement in Indus Northwest India, *Current Anthropology*, N 58/1, p. 1-30.
- Pfälzner P. 2010, Introduction and Synthesis: Urban Developments and Ecology at Tell Mozan, in: K. Deckers, M. Doll, P. Pfälzner, S. Riehl (eds), *Development of the Environment, Subsistence and Settlement of the City of Urkeš and its Region (Studien zur Urbanisierung Nordmesopotamiens: Serie A, Band 3)*, Wiesbaden, Harrassowitz Verlag, p. 1-12.
- Pfälzner P. 2012, The Question of Desurbanisation versus Reurbanisation of the Syrian Jazirah in the Late Third and Early Second Millennium BC, in: N. Laneri, P. Pfälzner, S. Valentini (eds), *Looking North: The Socioeconomic Dynamics of Northern Mesopotamian and Anatolian Regions during the Late Third and Early Second Millennium B.C. (Studien zur Urbanisierung Nordmesopotamiens, Serie D, Supplementa 1)*, Wiesbaden, Harrassowitz Verlag, p. 51-80.
- Pullen D. 2008, The Early Bronze Age in Greece, in: C.W. Shelmerdine (ed.), *The Cambridge Companion to the Aegean Bronze Age*, Cambridge, Cambridge University Press, p. 19-46.
- Riehl S. 2009a, Archaeobotanical Evidence for the Interrelationship of Agricultural Decision-Making and Climate Change in the Ancient Near East, *Quaternary International*, N 197, p. 93-114.
- Riehl S. 2009b, A Cross-Disciplinary Investigation of Cause-and-Effect for the Dependence of Agro-Production on Climate Change in the Ancient Near East, in: R. de Beauclair, S. Münzel, H. Napierala (eds), *Knochen pflastern ihren Weg. Festschrift für Margarethe und Hans-Peter Uerpmann (BioArchaeologica 5)*, Rahden/Westf., Verlag Marie Leidorf GmbH, p. 217-226.
- Riehl S. 2011, Climate and Agriculture Decision Making: Environmental Constrains and Economic Developments in Near Eastern Sites between 5000-3500 cal BP, in:

- N.J. Conard, Ph. Drechsler, A. Morales (eds), *Between Sand and Sea. The Archaeology and Human Ecology of Southwestern Asia. Festschrift in honor of Hans-Peter Uerpmann* (Tübingen Publications in Prehistory), Tübingen, Kerns Verlag, p. 147-166.
- Ristvet L. 2008, *Legal and Archaeological Territories of the Second Millennium BC in Northern Mesopotamia*, *Antiquity*, N 82 (317), p. 585-599.
- Ristvet L. 2012a, *Resettling Apum: Tribalism and Tribal States in the Tell Leilan Region, Syria*, in: N. Laneri, P. Pfälzner, S. Valentini (eds), *Looking North: The Socioeconomic Dynamics of Northern Mesopotamian and Anatolian Regions during the Late Third and Early Second Millennium B.C.* (Studien zur Urbanisierung Nordmesopotamiens, Serie D, Supplementa 1), Wiesbaden, Harrassowitz Verlag, p. 37-50.
- Ristvet L. 2012b, *The Development or Underdevelopment? Imperialism, Economic Exploitation and Settlement Dynamics on the Khabur Plains, ca. 2300-2200 BC*, in: H. Weiss (ed.), *Seven Generations since the Fall of Akkad* (Studia Chaburensia 3), Wiesbaden, Harrassowitz Verlag, p. 241-260.
- Ristvet L. 2017, 'Assyria' in the Third Millennium BC, in: E. Frahm (ed.), *A Companion to Assyria*, Malden, MA, Wiley Blackwell, p. 36-56.
- Ristvet L., Weiss H. 2013, *The Ḫabūr Region in the Old Babylonian Period*, in: W. Orthmann, P. Matthiae, M. al-Maqdissi (eds), *Archéologie et Histoire de la Syrie I. La Syrie de l'époque néolithique à l'âge du fer*, Wiesbaden, Harrassowitz Verlag, p. 257-272.
- Rova E. 2014, *The Kura-Araxes Culture in the Shida Kartli Region of Georgia: An Overview*, *Paléorient*, N 40/2, p. 47-69.
- Sagona A. 2018, *The Archaeology of the Caucasus. From Earliest Settlements to the Iron Age* (Cambridge World Archaeology), New York, NY, Cambridge University Press, 541 p.
- Schwartz G.M. 2017, *Western Syria and the Third- to Second-Millennium B.C. Transition*, in: F. Höflmayer (ed.), *The Late Third Millennium in the Ancient Near East. Chronology, C14, and Climate Change* (Oriental Institute Seminars 11), Chicago, Ill.: The Oriental Institute of the University of Chicago, p. 87-128.
- Schwartz G.M., Curvers H.H., Dunham S.S., Weber J.A. 2012, *From Urban Origins to Imperial Integration in Western Syria: Umm el-Marra 2006, 2008*, *American Journal of Archaeology*, N 116/1, p. 157-193.
- Schwartz G.M., Curvers H.H., Gerristen F.A., MacCormack J.A., Miller N.F., Weber J.A. 2012, *Excavation and Survey in the Jabbul Plain, Western Syria: The Umm el-Marra Project 1996-1997*, *American Journal of Archaeology*, N 104/3, p. 419-462.
- Schwartz G.M., Miller N.F. 2007, *The 'Crisis' of the Late Third Millennium B.C.: Ecofactual and Artifactual Evidence from Umm el-Marra and the Jabul Plains*, in: C. Kuzucuoğlu, C. Marro (eds), *Sociétés humaines et changement climatique à la fin du troisième millénaire: une crise a-t-elle eu lieu en Haute Mésopotamie? Actes du Colloque de Lyon, 5-8 décembre 2005* (Varia Anatolica 19), Istanbul, Institut Français d'Études Anatoliennes - Georges Dumézil, p. 179-203.
- Scuderi L.A., Yang X., Ascoli S.E., Li H. 2019, *The 4.2 ka BP Event in Northeastern China: A Geospatial Perspective*, *Climate of the Past*, N 15, p. 367-375.
- Smith A.T. 2012, *The Caucasus and the Near East*, in: D.T. Potts (ed.), *A Companion to the Archaeology of the Ancient Near East* (Blackwell Companions to the Ancient World), vol. 2, Malden, MA, Wiley-Blackwell, p. 668-686.
- Smith A.T. 2015, *The Political Machine. Assembling Sovereignty in the Bronze Age Caucasus*, Princeton - Oxford, Princeton University Press, 264 p.
- Smith A.T., Badalyan R.S., Avetisyan P. 2009, *The Archaeology and Geography of Ancient Transcaucasian Societies*, vol. 1: *The Foundations of Research and Regional Survey in*

- the Tsaghkahovit Plain, Armenia (Oriental Institute Publications 134), Chicago, Oriental Institute of the University of Chicago, 410 p.
- Stanley J.-D., Krom M.D., Cliff R.A., Woodward J.C. 2003, Short Contribution: Nile Flaw Failure at the End of the Old Kingdom, Egypt: Strontium Isotopic and Petrologic Evidence, *Geoarchaeology: An International Journal*, N 18/3, p. 395-402.
- Staubwasser M., Sirocko F., Grootes P.M., Segl M. 2003, Climate Change at the 4.2 ka BP Termination of the Indus Valley Civilization and Holocene South Asian Monsoon Variability, *Geophysical Research Letters*, N 30/8, p. 1425.
- Staubwasser M., Weiss H. 2006, Holocene Climate and Cultural Evolution in Late Prehistoric - Early Historic West Asia, *Quaternary Research*, N 66, p. 372-387.
- Storaci M., Gilibert A. 2019, Les Poissons Muets. Fish-Shaped Vishaps and Cult of Water in Prehistoric Armenia, in: A. Bobokhyan, A. Gilibert, and P. Hnila (eds), *Vishap between Fairy Tale and Reality*, Yerevan, Publishing House of the Institute of Archaeology and Ethnography, p. 528-545.
- Ur J. 2012, Spatial Scale and Urban Evolution at Tell Brak and Hamoukar at the End of the Third Millennium BC, in: N. Laneri, P. Pfälzner, S. Valentini (eds), *Looking North: The Socioeconomic Dynamics of Northern Mesopotamian and Anatolian Regions during the Late Third and Early Second Millennium B.C. (Studien zur Urbanisierung Nordmesopotamiens, Serie D, Supplementa 1)*, Wiesbaden, Harrassowitz Verlag, p. 25-35.
- Van De Mierop M. 2007, *A History of the Ancient Near East, ca. 3000-323 BC, Second Edition (Blackwell History of the Ancient World)*, Malden, MA, Blackwell, 432 p.
- Veenhof K.R. 2017, The Old Assyrian Period (20th-18th Century BC), in: E. Frahm (ed.), *A Companion to Assyria*, Malden, MA, Wiley Blackwell, p. 57-79.
- Von der Osten H., Hnila P., Gilibert A., Bobokhyan A. 2018, Integrated Archaeo-Geophysical Survey on Volcanic Terrain: The Case of Karmir Sar on Mount Aragats (Republic of Armenia), *Türkiye Bilimler Akademisi Arkeoloji Dergisi, Özel sayı*, p. 197-206.
- Weiberg E., Finné M. 2013, Mind or Matter? People-Environment Interactions and the Demise of Early Helladic II Society in the Northeastern Peloponnese, *American Journal of Archaeology*, N 117/1, p. 1-31.
- Weiss H. 2012, Quantifying Collapse: The Late Third Millennium Habur Plains, in: H. Weiss (ed.), *Seven Generations Since the Fall of Akkad (Studia Chaburensia 3)*, Wiesbaden, Harrassowitz Verlag, p. 1-24.
- Weiss H. 2013a, Tell Leilan and the Dynamics of Social and Environmental Forces across the Mesopotamian Dry-Farming Landscape, in: D. Bonatz, L. Martin (eds), *100 Jahre Archäologische Feldforschungen in Nordost-Syrien - eine Bilanz. Internationales Symposium des Instituts für Vorderasiatische Archäologie der Freien Universität Berlin und des Vorderasiatischen Museums der Staatlichen Museen zu Berlin vom 21. Juli bis 23. Juli 2011 im Pergamonmuseum (Schriften der Max Freiherr von Oppenheim-Stiftung 18)*, Wiesbaden, Harrassowitz Verlag, p. 101-115.
- Weiss H. 2013b, The Northern Levant during the Intermediate Bronze Age, in: M.L. Steiner, A.E. Killebrew (eds), *The Oxford Handbook of the Archaeology of the Levant c. 8000-332 BCE*, Oxford, Oxford University Press, p. 368-387.
- Weiss H. 2015, Megadrought, Collapse, and Resilience in Late 3rd Millennium BC Mesopotamia, in: H. Meller, H. W. Arz, R. Jung and R. Risch (eds), *2200 BC - A Climatic Breakdown as a Cause for the Collapse of the World? 7th Archaeological Conference of Central Germany, October 23-26, 2014 in Halle (Saale) (Tagungen des Landesmuseums für Vorgeschichte Halle 12/1)*, Halle (Saale), Landesamt für Denkmalpflege und Archäologie Sachsen-Anhalt Landesmuseum für Vorgeschichte, p. 35-52.

- Weiss H. 2016, Global Megadrought, Social Collapse and Resilience at 4.2-3.9 ka BP across the Mediterranean and West Asia, *Past Global Changes*, N 24/2, p. 62-63.
- Weiss H. 2017a, 'Seventeen Kings Who Lived in Tents', in: F. Höflmayer (ed.), *The Late Third Millennium in the Ancient Near East. Chronology, C14, and Climate Change* (Oriental Institute Seminars 11), Chicago, Ill., The Oriental Institute of the University of Chicago, p. 131-162.
- Weiss H. 2017b, 4.2 ka BP Megadrought and the Akkadian Collapse, in: H. Weiss (ed.), *Megadrought and Collapse from Early Agriculture to Angkor*, Oxford, Oxford University Press, p. 93-160.
- Weiss H., Courty M.-A., Wetterstrom W., Guichard F., Senior L., Meadow R., Curnow A. 1993, The Genesis and Collapse of Third Millennium North Mesopotamian Civilization, *Science*, N 261(5124), p. 995-1004.
- Weiss H., Manning S.W., Ristvet L., Mori L., Besonen M., McCarthy A., Quenet Ph., Smith A., Bahrani Z. 2012, Tell Leilan Akkadian Imperialization, Collapse and Short-Lived Reoccupation Defined by High-Resolution Radiocarbon Dating, in: H. Weiss (ed.), *Seven Generations Since the Fall of Akkad* (Studia Chaburensia 3), Wiesbaden, Harrassowitz Verlag, p. 163-192.
- Welch F., Marks L. 2014, Climate Change at the End of the Old Kingdom in Egypt around 4200 BP: New Geoarchaeological Evidence, *Quaternary International*, N 324, p. 124-133.
- Wick L., Lemcke G., Sturm M. 2003, Evidence of Lateglacial and Holocene Climatic Change and Human Impact in Eastern Anatolia: High-Resolution Pollen, Charcoal, Isotopic and Geochemical Records from the Laminated Sediments of Lake Van, Turkey, *The Holocene*, N 13/5, p. 665-675.
- Wiener M.H. 2014, The Interaction of Climate Change and Agency in the Collapse of Civilizations ca. 2300-2000 BC, *Radiocarbon*, N 56/4, p. S1-S16.
- Yang X., Scuderi L.A., Wang X., Scuderi L.J., Zhang D., Li H., Forman S., Xu Q., Wang R., Huang W., Yang Sh. 2015, Groundwater Sapping as the Cause of Irreversible Desertification of Hunshandake Sandy Lands, Inner Mongolia, Northern China, *Proceedings of the National Academy of Sciences*, N 112/3, p. 702-706.
- Zielhofer C., von Suchodoletz H., Fletcher W.J., Schneider B., Dietze E., Schlegel M., Schepanski K., Weninger B., Mischke S., Mikdad A. 2017, Millennial-Scale Fluctuations in Saharan Dust Supply across the Decline of the African Humid Period, *Quaternary Science Review*, N 171, p. 119-135.

Ք.Ա. III ՀԱՅԱՐԱՄՅԱԿԻ ՎԵՐՋԻ «ԳԵՐԵՐԱՇՏԸ» ԵՎ ՎԻՇԱԴ-ՔԱՐԱԿՈՌՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Երվանդ Գրեկյան, Արսեն Բոթխյան

Ամփոփում

Հին Առաջավոր Ասիայի պատմության դրամատիկ փուլերից մեկը հայտնի է «Գերերաշտ» (կամ «մեզանից 4.2-3.9 ka տարի առաջ իրադարձություն») անվանումով: Խոսքը Ք.ա. մոտ 2200-1900 թթ. կլիմայական գլոբալ փոփոխության մասին է, որն արտահայտվում է տեղումների քանակի կրճատմամբ, չորային և առավել ցուրտ եղանակային պայմանների հաստատմամբ:

Հոդվածում զարգացվում է տեսակետ, ըստ որի, Հայկական լեռնաշխարհին բնորոշ և ջրի պաշտամունքին առնչվող վիշապ-քարակոթողների ի հայտ գալը պետք է դիտարկել կլիմայական փոփոխության համատեքստում՝ որպես հասարակական ճգնաժամը հաղթահա-

րելուն ուղղված արձագանք: Ենթադրվում է, որ ձկնակերպ և ցլակերպ այդ արձանները տեղադրվել են երաշտի ժամանակ, նվիրաբերվել են ամպրոպի աստվածությանը, ուղեկցվել են ցլի զոհաբերության ծեսով՝ երկնային արգելափակված ջրերը երկիր թողնելու ակնկալիքով (ինչն արտահայտված է կոթողների պատկերագրության մեջ): Ջրային բավարար պաշարներ ունեցող կենսատարածքի որոնումները միջինբրոնզեդարյան հասարակություններին ուղղորդել են դեպի ջրով հարուստ բարձրլեռնային գոտիներ՝ դրանք հասանելի դարձնելով բնակչության կենսական պահանջմունքներին:

Բանալի բառեր՝ Հայկական լեռնաշխարհ, Առաջավոր Ասիա, վաղ և միջին բրոնզի դարեր, Ք.ա. III հազ. վերջ, կլիմայական փոփոխություններ, երաշտ, վիշապ-քարակոթողներ:

«МЕГАЗАСУХА» КОНЦА III ТЫСЯЧЕЛЕТИЯ ДО Н.Э. И ВОПРОС ПРОИСХОЖДЕНИЯ КАМЕННЫХ СТЕЛ ВИШАПОВ

Ерванд Грекян, Арсен Бобохян

Резюме

Одним из драматических этапов истории древнего Ближнего Востока является период «Мегазасухи» (или «событие 4.2–3.9 ка лет назад»). Речь идет о глобальном изменении климата, произошедшем ок. 2200-1900 гг. до н.э. и отразившемся на уменьшении количества осадков.

Авторы данного исследования придерживаются точки зрения, что появление характерных для Армянского нагорья и связанных с культом воды каменных стел вишапов следует рассматривать именно в контексте упомянутых климатических изменений. Установление этих статуй в форме рыб и быков во время засухи преследовало цель «умилостивить» бога Грома, в честь которого они были воздвигнуты, ниспослать дождь, «открыть» дорогу небесным водам (что нашло отражение в иконографии этих памятников).

Поиск мест обитания с достаточными водными ресурсами явился мотивацией для социума среднебронзового века заселить высокогорные ландшафты, что сделало их доступными для жизненно важных нужд населения.

Ключевые слова – Армянское нагорье, Ближний Восток, ранняя и средняя бронза, конец III тысячелетия до н.э., климатические изменения, засуха, каменные стелы вишапы.

THE "MEGADROUGHT" AT THE END OF THE 3RD MILLENNIUM BC AND THE PROBLEM OF ORIGIN OF VISHAP STONE STELAE

Yervand Grekyan, Arsen Bobokhyan

Abstract

One of the dramatic stages in the history of the Ancient Near East is the period of "Megasdrought" (or "4.2-3.9 ka BP event"). It goes about a global climate change that occurred ca. 2200-1900 BC to be reflected in the decrease in precipitations.

The authors of this study adhere to the point of view that the appearance of vishap stone stelae characteristic of the Armenian Highland and associated with the cult of water should be

considered in the context of the mentioned climatic changes. The installation of these statues in the form of fish and bull during a drought pursued the goal of "propitiating" the god of Thunder, in whose honor they were erected, sending down rain, "opening" the way for heavenly waters (which is reflected in the iconography of these monuments) .

The search for habitats with sufficient water resources was a motivation for the society of the Middle Bronze Age to populate highland landscapes, which made them available for the vital needs of the population.

Key words – Armenian Highland, Near East, Early and Middle Bronze Ages, end of the 3rd millennium BC, climate change, drought, vishap stone stelae.

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈԽԼԵՐԸ (ըստ երկրաշարժերի տարեգրության)

Արսեն Հարությունյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան
ՀՀ, Երևան, Չարենցի փ. 15
Էլ. հասցե՝ ars.vimagraget@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 13.08.2021, գրախոսվել է 01.07.2022, ընդունվել է տպագրության 05.07.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.2-250

Ներածություն

Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրությունն արդի հայագիտության առաջնային խնդիրներից է: Պարբերաբար իրականացվող հնագիտական պեղումների արդյունքների, ինչպես նաև կառույցների ճարտարապետական-հորինվածքային լուծումների և գրավոր սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունների հիման վրա լուսաբանվում են հուշարձանների նորոգման, վերակառուցման, նոր շենք-շինություններով համալրման աշխատանքներն ըստ շինարարական փուլերի: Այս առումով նշելի են նաև մատենագրությունից հայտնի բնակլիմայական ու երկրաբանական փոփոխությունների, տարերային աղետների և նմանօրինակ այլ երևույթների մասին վկայությունները, որոնք ուղղակիորեն նպաստում են տվյալ փուլաբաժանումների որոշակիացմանը: Գաղտնիք չէ, որ միջնադարյան Հայաստանի վանական համալիրների բնականոն զարգացմանը խոչընդոտել են ոչ միայն արտաքին թշնամական ուժերի հարձակումներն ու ավարառությունները, այլև՝ երկրաբանական երևույթները, մասնավորապես՝ երկրաշարժերը: Այսու փորձելու ենք պատմական Սյունյաց աշխարհի Ծղուկ գավառի երևելի վանական համալիրներից մեկի՝ Տաթևի վանքի օրինակով ներկայացնել հուշարձանախմբի՝ երկրաշարժերով պայմանավորված շինարարական փուլերի ընդհանուր նկարագիրը¹:

Մեր ուսումնասիրությունները պարզում են, որ Տաթևի վանքը շինարարական առնվազն յոթ փուլ է ունեցել և գրեթե բոլորն էլ պայմանավորված են եղել տեղանքին բնորոշ երկրաշարժերով:

Շինարարական առաջին փուլ

Սյունյաց մետրոպոլիտ, պատմագիր Ստեփանոս Օրբելյանի հաղորդմամբ՝ դեռևս վաղ միջնադարում Տաթևի վանքի տեղում անշուք ու անմշակ քարերով կառուցված եկեղեցի է եղել, որտեղ սակավաթիվ կրոնավորներ էին ճգնում:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 20TTSI-005 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

«Եւ էր ի տեղին՝ ի վերայ բարձրագոյն քարին եկեղեցի խրթին անտաշ վիմօք կրաշաղախ ծուլեալ՝ յոյժ ի հին ժամանակաց՝ յաւուրց անտի սրբոցն Ներսիսի և Սահակայ. և սակաւ կրօնաւորք մշտաջան ճգնութեամբ բնակէին ի նմա»²: Առնվազն VIII դ. երկրորդ կեսին³ Շաղատ գյուղաքաղաքից Տաթև է փոխադրվում Սյունյաց եպիսկոպոսության աթոռանիստը⁴, որն առիթ է դառնում վանքը գնման և նվիրաբերման միջոցով նոր կալվածքներով հարստացնելու համար: Ավելի ուշ՝ 848 թ., Սյունյաց Փիլիպե իշխանը հին եկեղեցուն կից կառուցում է վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, իսկ արդեն IX դարավերջին, մասնավորապես՝ 895-906 թթ., Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսի նախաձեռնությամբ և մի խումբ իշխանների օժանդակությամբ վաղմիջնադարյան եկեղեցու տեղում կառուցվում է վանքի գլխավոր՝ Ս. Պողոս-Պետրոս տաճարը, քանզի հին եկեղեցին երկրաշարժից խարխուլվել ու անմխիթար վիճակում էր հայտնվել. «Տեսանէր երանելիս (Հովհաննես եպիսկոպոսը - Ա.Հ.) այս զեկեղեցին նեղ եւ խրթին եւ հնացեալ ի բազում ժամանակաց, նաեւ ի շարժմանէ իսկ խարխալեալ, եւ զի անպատշաճ էր այնպիսի մեծի մայրաքաղաքի եւ աշխարհագումար ժողովարանի սուրբ հայրապետանոցին առանց մեծ կաթողիկէ եկեղեցոյ լինել...»⁵ (ընդգծումը մերն է - Ա.Հ.): Կարծում ենք՝ Օրբելյանի հիշատակած երկրաշարժը, որը հետագայում առիթ է դարձել եկեղեցին քանդելու և տեղում նորը կառուցելու, Սյունիք-Գանձակ հանգույցի 735 թ. հուլիսի 21-ի Վայոց ձորի մեծ երկրաշարժն է⁶, որը քանիցս նկարագրվել է պատմագիրների երկերում (Կիրակոս Գանձակեցի⁷, Ստեփանոս Օրբելյան⁸ և այլք):

Ուսումնասիրողների գնահատմամբ՝ վայոցձորյան հիշյալ երկրաշարժի հետևանքով երկրի վրա տեղի են ունեցել ռելիեֆի զգալի փոփոխություններ, լեռներում առաջացել ճեղքվածքներ, հիմնովին կործանվել է Մոզ քաղաքը⁹:

² Ստեփանոս Օրբելյան 1910, 202:

³ Վիմագրագետ Գրիգոր Գրիգորյանն աթոռի՝ Շաղատից Տաթև փոխադրումը վերագրում է Սյունյաց Դավիթ եպիսկոպոսին, որը «839 թվականին Սյունյաց հոգևոր կենտրոնը Շաղատ գյուղաքաղաքից տեղափոխում է Տաթև» (Գրիգորյան 1973, 36-38): Իրականում, հիշյալ թվականին Դավիթ եպիսկոպոսը Սյունյաց իշխան Փիլիպեից 10.000 դրամով գնում է Արծիվ գյուղն ու Բերդկաներեջ ագարակը, իսկ մինչ այդ աթոռն արդեն տեղափոխված է եղել, քանզի նույն պատմագրի հաղորդմամբ՝ «յոյժ նեղ և անծուկ էր սահման վանիցն Տաթևոյ, և ոչ էր բաւական պիտոյից աթոռոյն» (Ստեփանոս Օրբելյան 1910, 204):

⁴ Ութմազյան 1958, 160, Մնացականյան 1960, 102:

⁵ Ստեփանոս Օրբելյան 1910, 222:

⁶ Կոստանեսնց 1902, 8:

⁷ Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ՝ «խաւար ի վերուստ անտեսանելի կալաւ զՄոզան սահման, և զաւուրս քառասուն շարժեցաւ վայրն, և խորասոյճ եղեալ ընկղմեցան կենդանոյն ոգիք իբրև տասն հազար» (Կիրակոս Գանձակեցի 1961, 74):

⁸ Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ «կալաւ խաւար շոշափելի զգաւառն (Վայոց ձոր - Ա.Հ.) ամենայն զաւուրս 40, և շարժումն և դրողումն սաստիկ, զի եռայր երկիրն ասեղ դողացմամբ յանդնորց և բարձրանայր մինչև ի վեր և անդէն իբր զալիս ծովու փլուզանիւր. լերինք տապալէին, վէմք ի հիմանց քակւրէին, տունք և ապարանք գեղեցիկք լինէին գերեզմանք բնակչաց, աղբիւրք խցէին, գետք կորնչէին և ամենայն տեղի երերէր տատանմամբ» (Ստեփանոս Օրբելյան 1910, 142):

⁹ Ստեփանյան 1964, 43, Բարսեղյան 1995, 54-55:

Սրանից հետո, մինչև 895 թ., որևէ այլ երկրաշարժ այս տարածաշրջանում չի հիշատակվում, ուստի մնում է հավանական համարել, որ Տաթևի վանքի վաղ-միջնադարյան եկեղեցին, որը կառուցվել էր Ս. Ներսես Մեծի (353-373 թթ.) և Ս. Սահակ Պարթևի (387-436 թթ.) գահակալման ժամանակաշրջանում, այսինքն՝ առնվազն IV-V դդ., 735 թ. երկրաշարժից խիստ վնասվել ու խարխուլվել էր, ինչն էլ հետագայում առիթ է դարձել եկեղեցին ոչ թե նորոգելու, այլ տեղում ի հիմանց նորը կառուցելու:

Այսպես, 895 թ. Հովհաննես եպիսկոպոսը, համաձայն աստվածային տեսիլքի, Սյունյաց մեծ ու փոքր իշխանների օժանդակությամբ հաջողում է Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու կառուցումը¹⁰, որի արևմտյան պատի հարավային կողմում պահպանված զույգ վիմագրերից մեկը վկայում է Հայոց ՅԽԴ (895) թվականին շինարարության մեկնարկի մասին¹¹, իսկ աջակողմյան գիրը հայտնում է, որ «ի նոյն տարուք», այսինքն՝ 895 թ., «կանկնեցաւ արձանս»¹²: Տեղին է նկատել վիմագրի հրատարակիչներից Սեդրակ Բարխուդարյանը՝ նշելով, որ արձանագրությունը վերաբերում է գավազան-սյան կանգնեցմանը, ուստի կարելի է ասել, որ կոթողը կանգնեցվել է ի նշանավորումն եկեղեցու հիմնարկեքի՝ «...յանուն Սրբոյ Երրորդութեանն»¹³:

Գավազան-սյան ճոճման հիմնական գործառույթը ցայսօր բացահայտված չէ. ավանդաբար այն վերագրում են սպասվող երկրաշարժերի, վերահաս թշնամական ուժերի կանխատեսումներին, նաև՝ վանականներին հոգևոր-էներգետիկ ուժ հաղորդելուն, վարդապետական գավազան շնորհելուն և այլն¹⁴: Ճարտարապետության դոկտոր Հովհաննես Խալփախչյանի բնորոշմամբ՝ Տաթևի սյան ճարտարապետը «երկրաշարժի ցնցումներից ապահովելու համար նրան այնպիսի կառուցվածք է տվել, որ սյունը երբեք էր նույնիսկ ձեռքի թեթև սեղմումից»¹⁵:

Շինարարական երկրորդ փուլ

Տաթևում իրականացված շինարարական աշխատանքների այս փուլը պայմանավորում ենք Գանձակի 1139 թ. մարտի 17/8-ի ավերիչ երկրաշարժով¹⁶: Նախքան այդ, վանքում իրականացված շինարարական աշխատանքների մասին են վկայում:

¹⁰ Ստեփանոս Օրբելեան 1910, 224:

¹¹ Ստեփանոս Օրբելեան 1910, 224, Ալիշան 1893, 224, Սմբատեան 1930, 283, Տեր-Մովսիսեան 1938, 44, արձ. 1. Բարխուդարյան 1960, 13, արձ. 1:

¹² Տեր-Մովսիսեան 1938, 45, արձ. 15, Բարխուդարյան 1960, 13, արձ. 2:

¹³ Ստեփանոս Օրբելեան 1910, 225: Կոթողի կանգնեցման մասին վկայող արձանագրությունը պատմագիրը չի հիշատակում, իսկ տասնմեկ տարի հետո շինարարության ավարտն ազդարարող տեղեկությունը բնավ չի ենթադրում, թե այդ նույն թվականին է կանգնեցվել սյունը:

¹⁴ Մնացականյան 1955, 438, Хачиян 2008, 353, Այվազյան, Բաղիշյան 2016, 2:

¹⁵ Խալփախչյան 1962, 46:

¹⁶ Կոստանեանց 1902, 9, Ստեփանյան 1964, 56-57: Երկրաշարժի հետևանքով Ալիարակ լեռան շուրջը փլվածքներ ու սահքեր են գոյացել, նաև՝ ռելիեֆի փոփոխություններ եղել (Ստեփանյան 1964, 56):

ա. Ծագումով Տաթևից և ներկայումս Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում ցուցադրված խաչքարերից մեկի արձանագրությունը, ըստ որի՝ Հայոց ՆԽ (991) թվականին Երիցակ վանականն ինչ-որ եկեղեցի է կառուցել (կամ նորոգել)։ «Յիշեա՛ Քրիստոս, զԵրիցակ Սինեաց վանական՝ շինող տաճարիս, թվին ՆԽ (991)»¹⁷։ Նշված թվականին հուշարձանախմբի կառույցներից որևէ մեկը, մեզ հայտնի տվյալներով, չի կառուցվել, ուստի ավելի հավանական է, որ գիրը վերաբերում է գլխավոր տաճարի նորոգմանը։

բ. Սյունյաց Սմբատ թագավորի օրոք վանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը բարեկարգում է համալիրն ու վերականգնում ասպատակիչների կողմից հրկիզված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որը, ըստ Մեսրոպ Մագիստրոսի, փայտածածկ է եղել¹⁸։ 1043 թ. նույն Հովհաննես եպիսկոպոսը կառուցում է Ս. Պողոս-Պետրոս տաճարի հարավային պատին կից կամարակապ գավիթ-սրահը. «...թվին ՆՂԲ (1043), ի թագաւորոյթեանս Սմակարա՛ որդո Աշոտո, ես՝ տէր Յովանէս, շինեցի զսրահս...»¹⁹։

գ. Պարսպապատի հյուսիսարևելյան անկյան թաղածածկ մուտքի վրա՝ 1087 թ. Գրիգոր եպիսկոպոսի նախաձեռնությամբ կառուցվել է Ս. Աստվածածինն նվիրված գմբեթավոր փոքր եկեղեցին։ Հիշյալ մուտքին և հյուսիսային պարսպապատին կից է մեկ այլ եկեղեցի՝ միանավ, թաղակապ հորինվածքով, որը, ըստ գմբեթավոր եկեղեցու վիմագրի, ժամանակակից է վերջինիս. «...ես՝ Գրիգոր ամենանվաստ ծառա Քրիստոսի եւ ողորմութեամբ նորին եպիսկոպոս Սինեաց, կանգնեցի զկամարքս եւ ի վերա զեկեղեցիս...»²⁰։ Կարծիք կա, թե ստորին հարկաբաժինն իբրև դամբարան է ծառայել²¹, կամ դրանք իրարից անկախ եկեղեցիներ են, իսկ գմբեթավորը միջնադարում տարածված «վերդարպասյա» կառույցներից է²²։

Ստեփանոս Օրբելյանի հաղորդմամբ՝ Գանձակի երկրաշարժի հետևանքով «դողաց երկիր ի հիմանց և գմբեթն մեծ եկեղեցւոյն ի Տաթև բոլորապոյր

¹⁷ Տէր-Մովսիսեան 1938, 45, արձ. 12, Բարխուդարյան 1960, 32, արձ. 62, [Շահինյան] 1984, 19: Ուսումնասիրողներից Ա. Աբրահամյանն ու Ա. Շահինյանն այս խաչքարը վերագրում են Արծվանիկ (ինում՝ Երեցվանիկ) գյուղի՝ 1032 թ. վարպետ Դավթի ձեռքով նորոգված եկեղեցուն՝ նշելով, որ վիմագրում հիշատակված Երիցակ վանականն Արծվանիկի հիշյալ եկեղեցու կառուցողն է (Աբրահամյան, Շահինյան 1975, 116-118): Մեզ համար անընդունելի է հարգարժան գիտնականների այս տեսակետը, քանի որ նախորդ դարասկզբին Տաթևի վանքի վիմագրերն ուսումնասիրած Մեսրոպ Մագիստրոսն իր վիմագրական հավաքածուում հիշատակում է նաև այս գիրը. «Այստեղ յիշենք Տաթեւում գտնւած ամենահին արձանագրութիւնը Լուսաւորչի (Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու – Ա.Հ.) արևելքում՝ հիսիսից հարաւ ձգած պատի (մեկ այլ տեղ՝ պարսպի – Ա.Հ.) մէջ» և վկայակոչում է վերծանությունը (Տէր-Մովսիսեան 1938, 40, 45): Սա լավ հիմք է տվյալ խաչքարը, որի հորինվածքային լուծումները լիովին հարիր են Տաթևի վաղխաչքարային դպրոցին, համարելու Տաթևից փոխադրված։

¹⁸ Տէր-Մովսիսեան 1938, 32:

¹⁹ Զալալեանց 1858, 302, Ալիշան 1893, 235, Տէր-Մովսիսեան 1938, 47, արձ. 39, Բարխուդարյան 1960, 19, արձ. 23:

²⁰ Զալալեանց 1858, 303, Ալիշան 1893, 236-237, Տէր-Մովսիսեան 1938, 49, արձ. 75, Բարխուդարյան 1960, 28, արձ. 48:

²¹ Մնացականյան 1960, 190-191:

²² Հասարթյան 2017-2018, 70:

շրջեկան թռեաւ և անկաւ ի վերայ սուրբ Գրիգորոյն եւ գաւթին, որ ի դրանն կայր ու փլոյց առ հասարակ»²³: Ուսումնասիրողներն այս երկրաշարժին քանիցս են անդրադարձել: Մեսրոպ Մագիստրոսը Ս. Պողոս-Պետրոս տաճարի՝ դեռևս 930 թ. Հակոբ Դվինեցու նախաձեռնությամբ իրականացված որմնանկարների ոչնչացման պատճառ է համարում ոչ միայն տեղի խիստ խոնավ կլիմայական պայմաններն ու անձրևների առատությունը, այլև «յաճախ պատահող երկրաշարժերի հարաձևերը, որ կրկնել են պարբերաբար»²⁴, իսկ դրանցից «ամենաաղետաբերը հանդիսացել է այսպէս կոչւած Շարժն Գանձակայ»²⁵:

Օրբելյանի նկարագրությունը փաստում է, որ հիշյալ երկրաշարժի հետևանքով ավերվել են Սյունյաց Փիլիպե իշխանի կողմից՝ 848 թ. կառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Ս. Պողոս-Պետրոսի գմբեթը և 1043-ին կառուցված գավիթ-սրահը: Նույն պատմիչի վկայությամբ՝ վանքում նորոգչական աշխատանքներ են իրականացվել երկրաշարժից միայն տասնամյակներ անց, մասնավորապես՝ 1170-1216 թթ. առաջնորդ կարգված Ստեփանոս եպիսկոպոսի օրոք, որը «նորոգեաց զխախտեալ եկեղեցին ի Տաթև զսուրբ առաքեալքն, եւ եղ ղնել զգմբեթն ի ձեռն հորն Յակոբայ Ճահկեցոյ»²⁶: Տեղին է Մեսրոպ Մագիստրոսի այն տեսակետը, թե հիշատակված Հակոբ Ճահկեցին, ըստ ամենայնի, շինարար վարպետն է²⁷: Տեղեկություն կա այն մասին, որ Աթենիի Ս. Սիոն եկեղեցու՝ XII դարում վերակառուցված գմբեթի ճարտարապետը նույնպես Հակոբ Ճահկեցին է²⁸, որը, թերևս, Տաթևում գործած միևնույն վարպետն է:

Թեև ոչ վարպետի անվան հիշատակմամբ, բայց Ստեփանոս եպիսկոպոսի օրոք իրականացված նորոգչական աշխատանքների մասին է վկայում նաև ներկայումս Տաթևի վանքի հարավային կողմում գտնվող խոհանոցի կամարակապ սրահի արևմտահայաց որմին ագուցված գեղաքանդակ խաչքարի 1187 թ. արձանագրությունը. «Կանգնեցաւ սբ. խաչս ՈԼԶ (1187) թվին, յամի, յորում նորոգեցաւ սբ. եկեղեցիս, յառաջնորդութեան տեառն Ստեփանոսի»²⁹: Սրանից կարելի է հետևություն անել, որ Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու գմբեթն ի հիմանց վերակառուցվել է XII դ. երկրորդ կեսին և, ինչպես ստորև կտեսնենք, վերանորոգվել է նաև XIII դ. երկրորդ կեսին: Նկատենք, որ թմբուկի արտաքին

²³ Ստեփանոս Օրբելեան 1910, 340-341: Պատմագիրը երկրաշարժի տարեթիվ է նշում Հայոց 587, այսինքն՝ 1138 թ., որը բազմիցս շրջանառվել է հայագիտական ուսումնասիրություններում:

²⁴ Տէր-Մովսիսեան 1938, 10:

²⁵ Տէր-Մովսիսեան 1938, 10: Գանձակի երկրաշարժը Տաթևի գլխավոր տաճարի որմնանկարների ոչնչացման պատճառ է համարում նաև արվեստաբան Սեյրանուշ Մանուկյանը (Манукян 2015, 297):

²⁶ Ստեփանոս Օրբելեան 1910, 342-343:

²⁷ Տէր-Մովսիսեան 1938, 10: Հակառակ սրան, Ստեփանոս Օրբելյանի Պատմության աշխարհաբար թարգմանության մեջ Աշոտ Աբրահամյանը Հակոբ Ճահկեցուն համարում է վանքի վանահայրը՝ հիմք ընդունելով նրա անվանը նախորդող «հայր» բառը (Ստեփանոս Օրբելյան 1986, 284): Մենք ընդունում ենք Մեսրոպ Մագիստրոսի տեսակետը և կարծում, որ Հակոբ Ճահկեցին գմբեթի վերականգման գլխավոր ճարտարապետը կամ, առնվազն, շինարարական աշխատանքների վերակացուն է:

²⁸ Այվազյան 1995, 270, Այվազյան 2012, 107:

²⁹ Բարխուդարյան 1960, 29, արձ. 51, Տէր-Մովսիսեան 1938, 10:

քանդակային հարդարանքում ինքնատիպ են, այսպես կոչված, չընդհատվող «սելջուկյան» շրթային համակցված հյուսածո խաչապատկերների շարքն ու միջխաչային հատվածներում՝ քառանկյուն շրջանակների մեջ պահպանված մարդակերպ-ուրվագծային (ֆիգուրային) հարթաքանդակները³⁰, ինչպես նաև արծվաքանդակը (վնասված): Հյուսածո խաչերը, որոնք լայն տարածում ունեին ուշ միջնադարում, հայտնի են դեռևս X-XI դդ. մանրանկարչական, սակավ նաև քանդակային արվեստում³¹, ուստի չենք բացառում, որ գմբեթի վերակառուցման և հետագա նորոգումների ընթացքում վարպետները փորձել են պահպանել թմբուկի արտաքին գեղարվեստական հարդարանքը³²:

Շինարարական երրորդ փուլ

XIII դ. երկրորդ կեսին՝ Սյունյաց Հայրապետ եպիսկոպոսի օրոք (1252-1292 թթ.), Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս տաճարի գմբեթը դարձյալ նորոգվում է, քանզի «**ի շարժմանէ և ի վաղ ժամանակաց հնուքենէ ապականեալ էր**»³³ (ընդգծումը մերն է – Ա.Հ.): Մեր համոզմամբ՝ պատմիչն այստեղ նկատի չունի Գանձակի 1139 թ. երկրաշարժը, քանզի, ինչպես վերը տեսանք, այդ երկրաշարժից հետո վանքում վերականգնման-նորոգչական աշխատանքներ էին իրականացվել 1180-ականներին, որը, սակայն, ուսումնասիրողների կողմից հաճախ անտեսվել և երկրաշարժից քանդված գմբեթի վերականգնումը վերագրվել է Հայրապետ եպիսկոպոսի ժամանակաշրջանին, այն է՝ 1274 թ.³⁴: Ստացվում է, որ Հայրապետ եպիսկոպոսի նախաձեռնությամբ՝ XIII դարում կատարված շինարարական աշխատանքների պատճառ է դարձել մեկ այլ երկրաշարժ (կամ երկրաշարժեր): Հայտնի է, որ Սյունիքում երկրաշարժեր են գրանցվել նաև 1232, 1235 թթ., որոնց էպիկենտրոնը դարձյալ Գանձակ քաղաքն էր³⁵, հետևաբար, տեղին կլինի XIII դ. կատարված աշխատանքների իրականացման պատճառն այստեղ փնտրել:

Հայաստանի պատմության թանգարանում պահվող՝ Ս. Պողոս-Պետրոս տաճարի արևմտյան դռան արձանագրությունը պարզում է, որ միևնույն Հայրապետ եպիսկոպոսի օրոք՝ 1253 թ. վերակառուցվել են եկեղեցու դասերը (թերևս՝ խորանների տանիքները) և նորոգվել դուռը. «**2Բ (1253), ես՝ Կէր Հայրապետս... կանգնեցի զդասերս եւ նորոգեցի զդուռնս...**»³⁶: Այն, որ Հայրապետ եպիսկոպոսի օրոք նորոգվել է նաև Ս. Պողոս-Պետրոսին արևմուտքից կից երբեմնի գավիթը,

³⁰ Якобсон 1947, 307-308.

³¹ Հայ մանրանկարչության և խաչքարային արվեստի X-XIII դդ. որոշ օրինակներում կարելի է գտնել հյուսածո խաչերի բավական ուշագրավ նմուշներ (տե՛ս Դուրնով 1978, N 46, [Շահինյան] 1984, նկ. 92, 97, Измайлова 1979, 219, Казарян, Манукян 1991, 41, 53, Matevossian, Vardanian 2018, 56):

³² Մեր այս տեսակետը դեռ խոր մասնագիտական հետազոտության կարիք ունի, որին առանձնակի կանդիդատանք:

³³ Ստեփանոս Օրբելեան 1910, 433:

³⁴ Մնացականյան 1960, 104, Թամանյան 1988, 8, Թադևոսյան 2015, 90:

³⁵ Բարսեղյան 1995, 55:

³⁶ Բարխուդարյան 1960, 24, արձ. 40:

վկայում է հին լուսանկարներում հստակ տեսանելի արևմտյան պատի վերնամասում ագուցված 1271 թ. խաչքարը, որը ներկայումս ցուցադրված է Տաթևի նորաբաց թանգարանում:

Այլ է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու՝ 1295 թ. ի հիմանց կառուցումը, որի նախկին՝ 848 թվակիր շինությունը, ինչպես տեսանք, XI դ. հրկիզվել, ապա երկրաշարժից ավերվել էր: XII դ. վանքում կատարված շինարարական աշխատանքների շարքում այս եկեղեցու վերականգնման մասին որևէ վկայություն չկա, ուստի ենթադրելի է, որ այն վերականգնվել է շատ ավելի ուշ՝ Սյունյաց մետրոպոլիտ, պատմագիր Ստեփանոս Օրբելյանի հոգաձությամբ և, ըստ ամենայնի, Մոմիկ վարդապետի ձեռամբ³⁷: Եկեղեցու վերակառուցման մասին վկայող գեղագիր արձանագրությունը պահպանվել է մուտքի ճակատակալ քարին, ըստ որի՝ 1295 թ. եկեղեցին կառուցել է Սյունյաց մետրոպոլիտ, պրոտոֆրոնտեն (նախաթոռ արքեպիսկոպոս) տեր Ստեփանոսը³⁸:

Շինարարական չորրորդ փուլ

Տաթևի վանքն առնվազն XIV դ. 80-ականներից դառնում է նշանավոր գիտակրթական կենտրոն՝ Գլաձորի ավանդույթների կրողն ու շարունակողը, որի գոյության բարձրակետը Տաթևի համալսարանն էր (1390-1435 թթ.): Այստեղ են հաստատվում ժամանակի գիտական մտքի կարկառուն ներկայացուցիչները՝ Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, Մատթեոս Զուղայեցի, Առաքել Սյունեցի և այլք³⁹: Տաթևում վերագարթոնք է ապրում նաև գրչարվեստը, ընդօրինակվում են բազմաթիվ ձեռագրեր. դրանցից շատերը Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրական հավաքածուում են⁴⁰:

Ընդունված է Հովհան Որոտնեցու գործունեության ժամանակաշրջանին վերագրել Տաթևի նախկին զանգակատան կառուցումը (1385-1386 թթ.): «Տէր տուրք Յովհան Որոտնեցի վարդապետն կախիկ, շինեաց զզանգակատունն սրբոյ աթոռոյս...»⁴¹: Տաթևի վանքի վանահայր Անանիա վրդ. Համազասպյանի որոշմամբ 1890 թ. զանգակատունն ու կից հին գավիթը քանդել և տեղում կառուցել են էջմիածնատիպ եռահարկ զանգակատունը⁴² (այժմ միայն ներքնահարկն է պահպանվել): Ավելի ուշ, երբ 1960-ականների վերջերին վանքում կատարվում էին բարենորոգչական աշխատանքներ, հնագետ Արամ Քալանթարյանը փլատակներից դուրս բերեց նախկին զանգակատան արձանագիր զույգ պղնձե զանգերը՝ Ստեփանոս Օրբելյանի անվան հիշատակմամբ: Զանգերի՝ 1302 և 1304 թվականները նկատառելով՝ Ա. Քալանթարյանը վերա-

³⁷ Մնացականյան 1982, 152, Մաթևոսյան 2010, 28-32, Թադևոսյան 2015, 94:

³⁸ Բարխուդարյան 1960, 25, արձ. 41:

³⁹ Գևորգյան 2003, 156-170:

⁴⁰ Եզանեան 2014, 50-61:

⁴¹ Ստեփանոս Օրբելյան 1910, 524:

⁴² Տէր-Մովսիսեան 1938, 38, Սմբատեան 1930, 309-310:

հաստատում է այն միտքը, որ Տաթևում զանգակատուն է կառուցվել դեռևս Ստեփանոս Օրբելյանի օրոք՝ առնվազն XIV դարասկզբին, որը հետագայում նորոգել կամ ավարտին է հասցրել Հովհան Որոտնեցին⁴³:

Մատենագրական աղբյուրների հաղորդմամբ՝ 1406 թ. նոյեմբերի 29-ին Տաթևում երկրաշարժ է գրանցվել, որի հետևանքով, ըստ ամենայնի, ավերածություններ չեն եղել, քանզի գրիչ, պատմագիր Թովմա Մեծոփեցին փառաբանում է Աստծուն, «որ յայսմ շարժմանէ զերծուցէր զմեզ... զի շարժի սուրբ Առաքեալս (Ս. Պողոս-Պետրոս տաճարը – Ա.Հ.) Տաթևու եւ զանկակարունս եւ գաւազանս»⁴⁴: Ստեփանոս Օրբելյանի Պատմության վերջում՝ իբրև հավելված ներկայացված Սյունյաց եպիսկոպոսների շարակարգության մեջ նշվում է, որ Գրիգոր Տաթևացու քրոջ որդի Առաքել Սյունեցին (մատենագիր, տաղասաց) XV դարասկզբին «շինեաց զհարաւային կողման գաւիթն սրբոյ աթոռոյս ի պահպանութիւն ահեղասքանչ մեծի տաճարիս (նկարի ունի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին – Ա.Հ.)», որի առթիվ «խաչ իմն օծեալ ի յիշատակ սրբոյն Գրիգորի Տաթևացոյ, և կառուցեալ յիւրմէ շինեալ գաւթին ի մէջ սեան»⁴⁵: Բավական ուշագրավ այս տեղեկությունը պարզում է, որ գլխավոր տաճարին հարավից կից՝ 1043 թ. կառուցված գավիթ-սրահը հիշյալ ժամանակաշրջանում վերակառուցվել է, որի առիթով ներսում նաև Գրիգոր Տաթևացուն ձոնված խաչքար է ագուցվել: Ասենք, որ այդ խաչքարը ներկայումս գտնվում է Ս. Պողոս-Պետրոս տաճարի արևմտյան կողմում՝ մուտքից ձախ և, ըստ արձանագրության, կանգնեցվել է Հայոց ՊԾԹ (1410) թվականին, Սյունյաց Առաքել եպիսկոպոսի կողմից⁴⁶:

Երկրաշարժերի վիճակագրական աղյուսակներում Տաթևում երկրաշարժ է նշվում դեռևս 1308 թ., երբ ցնցման էպիկենտրոնը եղել է Արցախում, բայց վնասվել է նաև Տաթևի վանքը⁴⁷: Նկատառելով այդ՝ հակված ենք կարծելու, որ Առաքել Սյունեցու նախաձեռնությամբ վերականգնված գավիթ-սրահն ավերված է եղել շուրջ մեկ դար առաջ, որը Գրիգոր Տաթևացու մահից և նույն սրահում՝ տաճարի հարավային մուտքի դիմաց թաղումից հետո (1409 թ.) վերակառուցվել է՝ ի նշանավորումն որի մեծ ռաբունապետի հիշատակին մեծադիր խաչքար է ագուցվել սրահի ներսում, ըստ նախորդ ուսումնասիրողների՝ երկրորդ սյան վրա⁴⁸:

⁴³ Տէր-Մովսիսեան 1938, 40, Քալանթարյան 1974, 117:

⁴⁴ Խաչիկյան 1955, 57: Այս երկրաշարժի մասին տեղեկությունը պահպանվել է Գրիգոր Տաթևացու «Լուծմունք Արտաքին գրոց»-ում, որը ժամանակին հրատարակել է Հ. Ղևոնդ Ալիշանը (Ալիշան 1893, 239-240):

⁴⁵ Ստեփանոս Օրբելեան 1910, 525:

⁴⁶ Տէր-Մովսիսեան 1938, 48, արձ. 48, Լալայեան 1898, 143. Բարխուդարյան 1960, 23, արձ. 36 (Ս. Բարխուդարյանը թվականը ՊԾ (1401) է կարդացել):

⁴⁷ Кондорская, Шебалин 1977, 73, Բարսեղյան 1995, 55:

⁴⁸ Տէր-Մովսիսեան 1938, 48, Լալայեան 1898, 143:



Նկ. 1. Տաթևի վանքը 1888 թ.
(լուսանկարը՝ Դ. Երմակովի)



Նկ. 2. Տաթևի վանքը 1890-ականներին,
նախքան եռահարկ զանգակատան
կառուցումը (լուսանկարը՝ Մ. Փափազյանի)



Նկ. 3. Տաթևի վանքը նախքան 1931 թ.
երկրաշարժը (լուսանկարը՝ Գ. Գրիգորյանի
արխիվից)



Նկ. 4. Տաթևի վանքը 1931 թ. երկրաշարժից
հետո (լուսանկարը՝ Գ. Գրիգորյանի արխիվից)



Նկ. 5. Տաթևի վանքի ընդհանուր տեսքը
հարավ-արևմուտքից
(լուսանկարը՝ Ա. Հարությունյանի, 2015 թ.)



Նկ. 6. Տաթևի վանքի ընդհանուր տեսքը
(լուսանկարը՝ Գ. Ղազարյանի, 2021 թ.)

Սրահի հերթական նորոգումն իրականացվել է շուրջ երկու դար անց։ Այդ է վկայում վանքի արևելյան կողմում՝ պարսպից դուրս ներկայումս ընկած քարերից մեկի արձանագրությունը, ըստ որի՝ գավիթ-սրահը վերանորոգվել է 1605 թ.

տեր Եղիշեի նախաձեռնությամբ, որը «վերստին ետ նորոգել զգալիս քակեալն»⁴⁹, այսինքն՝ գավթի քանդված մասերը:

Շինարարական հինգերորդ փուլ

Տաթևի հուշարձանախմբի շինարարական ու նորոգչական աշխատանքների այս փուլն ընդգրկում է XVII-XVIII դարերը և նշանավորվում է հիմնականում վանքի պարսպակից տնտեսական և օժանդակ շինությունների, ինչպես նաև վանքապատկան այլ շենքերի (ծխոհան, աղբյուր, մարագ) կառուցմամբ: Այն, որ դեռևս X դարում՝ վանքի գլխավոր Ս. Պողոս-Պետրոս տաճարի կառուցումից հետո Հովհաննես եպիսկոպոսը պարսպապատել էր վանքն ու օժանդակ շինություններ կառուցել (սեղանատուն, գրատուն, համբարանոց, գաղտնարան և այլն), վկայում է դեռևս Ստեփանոս Օրբելյանը⁵⁰: Անընդմեջ կրկնվող երկրաշարժերն ու թշնամիների հարձակումները ժամանակի ընթացքում խարխիլել էին նաև պարսպակից շենք-շինությունները, ուստի դրանց ի նորոգ կառուցումը վերապահված էր XVII դ. երկրորդ կեսին, երբ ի թիվս այլ վանքերի, Տաթևում ևս վերազարթոնք է ապրել վանական կյանքն ու ստվարացել միաբանությունը:

Նախ նշենք, որ 1658 թ. Սյունյաց Մեծ անապատի շուրջը՝ թերևս գետնաշարժից գոյացած ճեղքվածքից ամբողջ համալիրը դեպի ձորն է իջել⁵¹: Այս արհավիրքի հետևանքով է, որ անապատի միաբանությունը տեղափոխվում և հիմնում է Տաթևի ներկայիս Մեծ անապատը, որտեղ 1668 թ. հունիսի 6-ին ուխտի եկած Զաքարիա Ագուլեցին գրում է. «Այս անապատիս եկեղեցին դեռ ևս կիսակալարար էր: Քանզի առաջ ուրիշ տեղ ին բնակեալ. հնարից սաբանի՝ տեղն խախտվեցաւ, փլաւ. այս պարճառէս վախեցան, վեր կացան, եկին այս տեղս...»⁵²:

XVII դարում են կառուցվել «Թանաքի» (դահլիճ) կոչված առաջնորդարանի շենքը, սեղանատունը, համբարանոցները և այլ շենքեր: Սեղանատանը կից կամարակապ բաց պատշգամբում պահպանված 1679 թվակիր շինարարական արձանագրության համաձայն՝ այվանն (սրահ) ու խուցը կառուցվել են Զաքարիա վարդապետի նախաձեռնությամբ՝ «ի վայելումն անձին իմոյ եւ յաւարացելոցն ամենայն դաս քահանայից եւ պաշտօնէից, որ յետ մեր նստիք աստ եւ վայելիք...»⁵³:

Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու հյուսիսային պատին պահպանված վիմագրերից մեկի հաղորդմամբ՝ Հայոց ՌԾԾԴ (1705) թվականին տաճարը նորոգվել է ծագումով Տաշտունից Խումարի որդի խոջա Անտոնի միջոցներով, իսկ

⁴⁹ Տէր-Մովսիսեան 1938, 48, արձ. 55, Լալայեան 1898, 142, Բարխուդարյան 1960, 38, արձ. 83, Յարութիւնեան 2016, 145, արձ. ԺԲ:

⁵⁰ Ստեփանոս Օրբելեան 1910, 225:

⁵¹ Առաքել Դարիժեցի 1990, 223, Ստեփանյան 1964, 74-75:

⁵² Զաքարիա Ագուլեցի 1938, 75: Լ. Բարսեղյանը Տաթևում երկրաշարժ է հիշատակում նաև 1668 թ. օգոստոսի 7-ին, որը, սակայն, պատմական աղբյուրներով չի հիմնավորվում (Բարսեղյան 1995, 35):

⁵³ Սաղումյան 2001, 96:

նորոգվել է «*ձեռամբ տեր Միքայելի*»⁵⁴: Հայտնի է, որ վանքի վանահայր Հովհաննես Ղալամյանց Տաթևացին միևնույն ժամանակաշրջանում «*նորոգել է տալիս վանքերի տանիքները, շինել է տալիս ոչխարների արեւմտեան մեծ գոմը... վանքի կալմարագը*»⁵⁵: Այս վերջինի մասին է վկայում Տաթև գյուղի սկզբնամասում պահպանված աղբյուրի կամարակապ շենքի 1745 թ. արձանագրությունը⁵⁶:

XVIII դ. շինարարական աշխատանքների «պսակը» Գրիգոր Տաթևացու գերեզմանին վանահայր Հովակիմ եպիսկոպոսի նախաձեռնությամբ և մի խումբ բռնակոթցիների միջոցներով՝ 1787 թ. կառուցված մատուռ-դամբարանն է, որն ուղղանկյուն հատակագծով, ներքուստ թաղակապ, արտաքուստ երկթեք ծածկով, արևելյան կողմում փոքր խորանով շինություն է:

Շինարարական վեցերորդ փուլ

Տաթևի վանքում՝ XIX դարում իրականացված մեծ ու փոքր շինարարական աշխատանքները հիմնականում նկարագրել է 1922-1926 թթ. Սյունյաց թեմի առաջնորդ և վանքի վանահայր Արտակ եպս. Սմբատյանը⁵⁷, ուստի չկրկնելով՝ միայն նշենք, որ Ս. Էջմիածնի Սինոդի օրագրության 1844 թ. նոյեմբերի 13 թվակիր զույգ հայտարարությունների համաձայն՝ նշված ժամանակաշրջանում նորոգվել է վանքի պարիսպը և «*ինչ-ինչ կարկապանաց շինութեան Տաթևու վանից աւիրելոց յերկրաշարժութենէ*»⁵⁸: Դժվար է ասել, թե ո՞ր երկրաշարժն է հիշատակված, բայց այն, որ ժամանակ անց նորոգվել են նաև Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու արևելյան և հյուսիսային որմերը, վկայում են նույն այդ որմերին պահպանված վիմագրերը: Տաճարի արևելյան պատի 1862 թ. արձանագրության համաձայն՝ Սյունյաց Հովհաննես եպս. Ասլանյանի հոգաձությամբ նորոգվել է շինության արևելյան, իսկ ըստ հյուսիսային պատի վիմագրի՝ 1864 թ., դարձյալ նույն առաջնորդի հոգաձությամբ, նորոգվել է եկեղեցու հյուսիսային կողմը⁵⁹:

Տաթևում հերթական երկրաշարժն է գրանցվել 1881 թ. հուլիսի 20-ին, որը մանրամասն նկարագրել է Ս. Էջմիածնի միաբան, Ս. Գայանե վանքի վանահայր Վահան վրդ. Բաստամյանը, որն այդ օրը Տաթևի Մեծ անապատ ուխտի

⁵⁴ Բարխուդարյան 1960, 18, արձ. 19, 20:

⁵⁵ Սմբատյան 1930, 318:

⁵⁶ Տէր-Մովսիսեան 1938, 53, արձ. 136, Սմբատյան 1930, 318, Բարխուդարյան 1960, 34, արձ. 65:

⁵⁷ Սմբատյան 1930, 319-327:

⁵⁸ ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 17, վավ. 430, թ. 758, բնագիր, ձեռագիր:

⁵⁹ Սմբատյան 1930, 323. Բարխուդարյան 1960, 18, արձ. 21, 22: Ս. Բարխուդարյանը երկրորդ արձանագրության թվականը 1865 է կարդացել և ենթադրել, որ հիշատակված պիտի լինի այդ տարվա առաջնորդ Սարգիս Տեր-Գասպարյանցը, մինչդեռ վկայված են 1864 թ. և միևնույն Հովհաննես Ասլանյանցի անունը: Կարծում ենք՝ վերջինս թաղված է Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում, որի՝ մասամբ վնասված տապանագրի հաղորդմամբ՝ նա վախճանվել է 1876 թ. (Հարությունյան 2016, 227, արձ. 480):

էր եկել. «Ամսոյս 20-ին, երկուշաբթի, մօտ ժամի մէկին, այսպեղ պատահեցաւ բաւական մեծ երկրաշարժ...»⁶⁰:

Դժվար չէ կռահելը, որ 1888-1889 թթ. սկիզբ առած վանքի շինարարական և բարենորոգչական աշխատանքների համար վերջին երկրաշարժն է պատճառ դարձել, որի ընթացքում՝ 1890 թ., վանքի վանահայր Անանիա վարդապետի (1887-1892 թթ.) նախաձեռնությամբ և Մայր Աթոռի թույլտվությամբ քանդել են հին գավիթն ու զանգակատունը՝ տեղում նոր, եռահարկ զանգակատուն կառուցելու համար (նկ. 1-3): Պարզվում է, որ Ալեքսանդրապոլից շինարար վեց վարպետ է հրավիրվել, իսկ ծախսերի համար հանգանակված գումարի (3000 ռ.) մի մասը գոյացել է վանքի եկամտից, մյուսը՝ Բաքվի և Գանձակի հայ ժողովրդի միջոցներից և որոշ բարերարների կողմից⁶¹: Աշխատանքների ավարտին՝ 1896/7 թ. գլխավոր տաճարի արևմտյան մուտքի դիմաց կառուցվում է էջմիածնատիպ, սակայն XIX դ. բնորոշ առավել ընդգծված քանդակներով զանգակատունը⁶²: Այն շուրջ երեք տասնամյակ է կանգուն մնացել և գրեթե ի հիմանց խոնարհվել է 1931 թ. երկրաշարժից:

Շինարարական յոթերորդ փուլ

Տաթևի վանքում հերթական խոշոր երկրաշարժն է գրանցվում 1931 թ. ապրիլի 27-ին⁶³, որի հետևանքով խարխվում և մասամբ ավերվում է ողջ հուշարձանախումբը, մասնավորապես՝ քանդվում են Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու գմբեթը, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, կից գավիթ-սրահը, հին գավթի տեղում կառուցված եռահարկ զանգակատունը, խարխվում է Ս. Աստվածածին եկեղեցին, պարսպակից որոշ շինություններ և այլն (նկ. 4):

Երկրաշարժի հետևանքով խոնարհված մի շարք կառույցներ ցայսօր դեռ վերականգնված չեն: 1938-1939 թթ. վանքում մասնակի վերանորոգումներ են արվել⁶⁴, սակայն բարեկարգման և նորոգման հիմնական աշխատանքները սկիզբ են առել 1960-ականների վերջերից և որոշ դադարներով շարունակվում են մինչ օրս: Նշելի են Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու գմբեթի, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Աստվածածին, պարսպակից միանավ⁶⁵ եկեղեցիների, օժանդակ

⁶⁰ Բաստամեան 1881: Այս և 1844 թ. պարսպի նորոգման մասին վկայող արժեքավոր աղբյուրների մասին մեզ տեղեկացնելու համար շնորհակալություն ենք հայտնում աղբյուրագետ Արմեն Ասատրյանին:

⁶¹ Քրոնիկոն 1889, 2: Հետագայում Անանիա վարդապետը նշանակվում է Ախալցխայի հոգևոր առաջնորդ (1892 թ.), իսկ Տաթևում վանահայր է կարգվում նույն Ախալցխայի առաջնորդ Հովհաննես վրդ. Շիրակունին (Քրոնիկոն 1892, 1):

⁶² Տէր-Մովսիսեան 1938, 13, Սմբատեան 1930, 325, Մկրտչյան 2010, 99:

⁶³ Տէր-Մովսիսեան 1938, 43, Ստեփանյան 1964, 211-212, Хачиян 2008, 356-357, Մկրտչյան 2010, 101, Թադևոսյան 2015, 96:

⁶⁴ Թամանյան 1981, 31-32:

⁶⁵ Այս եկեղեցին 1974-1978 թթ. ամրացվել, ապա վրան վերակառուցվել է Ս. Աստվածածին գմբեթավորը (Թամանյան 1981, 51):

շինությունների, ձիթհանի վերականգնման աշխատանքները⁶⁶: Վանքում վերականգնման և բարեկարգման աշխատանքներ սկսվեցին նաև վերջին տարիներին (վերականգնող ճարտարապետ՝ Ա. Գրիգորյան), որոնց շրջանակում նաև հնագիտական պեղումներ իրականացվեցին (ղեկավար՝ Հ. Մելքոնյան)⁶⁷: Այդ ամենի շնորհիվ ի հայտ եկան արևելյան պարսպապատի, հին գավթի, զանգակատան և գավիթ-սրահի հիմնապատերը, XIV-XVIII դդ. թվագրվող խեցեղեն նյութ, արձանագիր քարեր և այլ առարկաներ: Պեղումներից հետո վերաբացվեց հյուսիսային պարսպապատի կամարակապ մուտքը, որի ներսում հայտնաբերվեց կավե ջրբաժան կարաս. վերականգնումից հետո այն ցուցադրվում է տեղում՝ ապակե ծածկի տակ⁶⁸: Այն ուղղակիորեն աղերսվում է 1875 թ.՝ Ստեփանոս եպս. Մխիթարյանց Ալեքսանդրապոլցու նախաձեռնությամբ գյուղի աղբյուրից կավե փողրակներով դեպի վանք ջուր բերելու և ներսում աղբյուր կառուցելու հետ, իսկ մուտքը բացվել է նույն 1875-ին՝ *«Կալարի ել ու մուտքի համար, որպեսզի վանքի գլխատուր մուտքը անասունների աղբից ազատ լինի»*⁶⁹: Թանգարանի վերածվեցին վանքի պարսպակից հյուսիսային և արևմտյան որոշ սենյակներ, որոնցում մեկտեղվել են բազում ընկած մի շարք խաչքարեր, քանդակազարդ քարեր, փայտափորագիր դռներ, արձանագիր պղնձե պնակներ և այլ արժեքավոր իրեր:

Եզրակացություններ

Ամփոփելով՝ արձանագրենք, որ միջնադարյան Հայաստանի հոգևոր-մշակութային նշանավոր կենտրոն Տաթևն իր հիմնադրումից ի վեր շարունակ ավերվել ու վերաշինվել է, այսինքն՝ անդադար գործող վանական կյանքին համընթաց են եղել շինարարական աշխատանքները, իսկ դրանց բուն պատճառը, անշուշտ, հաճախադեպ ու ավերիչ երկրաշարժերն էին: Ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ երկրաշարժերից ավերված կամ մասամբ խարխված կառույցները վերաշինվել ու նորոգվել են շատ ավելի վայելուչ տեսքով ու շինարարական բարձր մակարդակով, որը, աներկբա վկայում է երկրի ներքին հնարավորությունների մասին:

⁶⁶ 1960-ականների վերջերից մինչև 1977 թ. Տաթևի վանքի հետազոտական, նախագծային աշխատանքներն իրականացրել է անվանի ճարտարապետ Գ. Աղաբաբյանը, իսկ վերականգնման, նախագծային խմբերը կազմավորվել են 1979-1980 թթ., մեկը՝ հոգևոր, մյուսը՝ օժանդակ կառույցների նախագծման համար: Հոգևոր կառույցների վերականգնման նախագծային, հետազոտական աշխատանքներով ստեղծված խումբը ղեկավարել է նախ Ա. Անանյանը, ապա՝ Ա. Բաղիշյանը (1982-1992 թթ.): Նշելի է, որ հիշյալ խմբի կողմից՝ 1988 թ. Մոսկվայում կատարված «Տաթևի գլխավոր հուշարձանախմբի վերականգնման նախագիծ»-ը «Լավագույն նախագիծ ռեստավրացիայի բնագավառում» ստուգատեսում արժանացել է առաջին կարգի դիպլոմի: 2010 թ. Հայաստանի մրցունակության հիմնադրամի պատվերով կատարվել է ձիթհանի վերականգնման նախագիծը (հեղ.՝ Ա. Բաղիշյան, Ս. Այվազյան, Ս. Հանցյան): Ա. Բաղիշյանի նախագծով և անմիջական մասնակցությամբ են իրականացվել ձիթհանի արտադրական սարքավորումները (Ա. Բաղիշյան, բանավոր հաղորդում, 16.06.2021 թ.):

⁶⁷ Melkonyan et al. 2017, 305-320.

⁶⁸ Melkonyan et al. 2017, 310, 315, 316, fig. 3/6, 4/1-2.

⁶⁹ Սմբատեան 1930, 325:

Գրականություն

- Աբրահամյան Ա., Շահինյան Ա. 1975, Արծվանիկի հայերեն նորահայտ ծածկագիրը և նրա վերծանությունը, Պատմաբանասիրական հանդես, N 3, էջ 113-125:
- Ալիշան Ղ. 1893, Սիսական. տեղագրություն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, Ս. Ղազար, 562 էջ:
- Այվազյան Ա. 1995, Նախիջևան. բնաշխարհիկ պատկերազարդ հանրագիտակ, Երևան, «Հուշարձան», 368 էջ:
- Այվազյան Ա. 2012, Նախիջևան. Հայկազունք: Ով ով է: Կենսագրական հանրագիտարան, Երևան, հեղինակային հրատ., 384 էջ:
- Այվազյան Ա., Բադիշյան Ա. 2016, Տաթևի ճոճվող սյունը և նրա կառուցվածքը, «Վարձք», N 12, էջ 1-11:
- Առաքել Դավրիժեցի 1990, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ՝ Լ. Խանլարյանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 592 էջ:
- Բաստամեան Վ. 1881 [Հաղորդագրություն], «Մշակ», N 142, 4 օգոստոսի:
- Բարխուդարյան Ս. 1960, Դիվան հայ վիմագրության, պր. II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 239 էջ:
- Բարսեղյան Լ. 1995, Պատմագրական վկայությունները Հայկական լեռնաշխարհի երկրաշարժերի մասին (հնագույն ժամանակներից մինչև XIX դարի սկիզբը), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 66 էջ:
- Գրիգորյան Գ. 1973, Սյունիքի վանական կալվածատիրությունը IX-XIII դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 267 էջ:
- Գևորգյան Ա. 2003, Վայոց ձորի և Որոտանի մանրանկարչությունը 13-17-րդ դդ., Երևան, «Ձանգակ-97», 184 էջ:
- Դուռնով Լ. 1978, Հայ ձեռագրային զարդանկարչություն, Երևան, «Սովետական գրող», 230 էջ:
- Եգանեան Օ. 2014, Տաթևի գրատան ձեռագրերը, «Աշխատություններ», հրատ. պատրաստեց՝ Գ. Տէր-Վարդանեան, Երեվան, «Նայիրի», էջ 50-61:
- Զաքարիա Ազուլեցի 1938, Օրագրություն, Յերեւան, Արմֆանի հրատ., 198 էջ:
- Թադևոսյան Ն. 2015, Տաթևի վանքի պատմական վերակառուցումները, «Տաթևի վանքը՝ հոգևոր, մշակութային և դպրության կենտրոն» գիտաժողովի նյութեր, պր. II (գլխ. խմբ.՝ Ա. Փիլիպոսյան, Ա. Աբգարյան), Երևան, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, էջ 88-101:
- Թամանյան Յու. 1981, Քարե տարեգրության վերականգնում, Երևան, «Հայաստան», 100 էջ+18 թ. նկ.:
- Թամանյան Յու. 1988, Հուշարձաններին նոր կյանք, Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության ու օգտագործման գլխավոր վարչություն, 138 էջ:
- Լալայեան Ե. 1898, Սիսիան. Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, «Ազգագրական հանդես», գիրք Գ, թ. 1, Թիֆլիս, տպ. Մ.Դ. Ռօսինեանցի, էջ 129-145:
- Խալփախյան Հ. 1962, Տաթևի երեքացող սյունը, «Էջմիածին», Թ, էջ 45-57:
- Խաչիկյան Լ. 1955, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401-1450 թթ.), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 818 էջ:

- Կիրակոս Գանձակեցի 1961, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 426 էջ:
- Կոստանեանց Կ. 1902, Շարժի տարեգրությունն հայոց մէջ, Թիֆլիս, տպ. Տ.Մ. Ռօտի-նեանցի, 24 էջ:
- Հասրաթյան Մ. 2017-2018, Զարգացած միջնադարի հայկական երկհարկ, գմբեավոր եկեղեցիները, «Հուշարձան» տարեգիրք, հ. ԺԲ-ԺԳ, Երևան, էջ 53-74:
- Հարությունյան Ա. 2016, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 548 էջ+5 ներդիր էջ:
- ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 17, վավ. 430, թ. 758, բնագիր, ձեռագիր:
- Մաթևոսյան Կ. 2010, Մոմիկ, Երևան, Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն, 88 էջ:
- Մկրտչյան Վ. արք. 2010, Տաթև վանական համալիրի եկեղեցիների հիմնումը (համառոտ ակնարկ), «Էջմիածին», 2, էջ 92-103:
- Մնացականյան Ա. 1955, Հայկական զարդարվեստ. հիմնական մոտիվների ծագումն ու գաղափարական բովանդակությունը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 658 էջ:
- Մնացականյան Ստ. 1960, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 266 էջ:
- Մնացականյան Ստ. 1982, Վարպետաց վարպետներ. Մանուել, Տրդատ, Մոմիկ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 180 էջ+23 թ. նկ.:
- Յարութինեան Ա. 2016, Տաթևի վանքի վիմագրերի նախընթաց հրատարակությունները եւ ներկայ անելիքները, «Հանդես ամսօրեայ», թ. 1-12, Վիեննա-Երեւան, էջ 129-146:
- [Շահինյան Ա.] 1984, Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX-XIII դարերի խաչքարերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 77 էջ+67 թ. նկ.:
- Ջալալեանց Սարգիս եպս. 1858, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփլիս, ի տպ. Ներսիսեան հոգետոր դպրոցի, 517 էջ:
- Սաղումյան Ս. 2001, Նորահայտ վիմագրեր, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, էջ 93-103:
- Սմբատեան Արտակ եպս. 1930, Համառոտ պատմություն Տաթևի վանքի, «Տաթև» տարեգիրք գրականության եւ արուեստի, 2 տարի, Հալեպ-Սուրիա, տպագր. «Արաքս», էջ 276-351:
- Ստեփանյան Վ. 1964, Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում և նրա մերձակայքում, Երևան, «Հայաստան», 246 էջ:
- Ստեփանոս Օրբելեան 1910, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, Ելեքտրաշարժ տպ. Ն. Աղանեանցի, 618 էջ:
- Ստեփանոս Օրբելյան 1986, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ա. Աբրահամյանի, Երևան, «Սովետական գրող», 616 էջ:
- Տէր-Մովսիսեան Մեսրոպ Մագիստրոս արք. 1938, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինությունները, գրեց՝ Երուսաղեմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 152 էջ:
- Ուլմազյան Հ. 1958, Սյունիքը IX-X դարերում, Երևան, ԵՊՀ հրատ., 380 էջ:
- Քալանթարյան Ա. 1974, Տաթևի վանքի զանգերը և նրանց արձանագրությունները, «Հայագիտական հետազոտություններ», պրակ Ա, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 115-118:
- Քրոնիկոն 1889, «Նոր-դար», Հ^ր 87, Վեցերորդ տարի, Երեքշաբթի, 6 յունիսի:

- Քրոնիկոն 1892, «Նոր-դար», Հ^ր 205, Իններորդ տարի, Շաբաթ, 19 դեկտեմբերի:
- Измайлова Т. 1979, Армянская миниатюра XI века, Москва, «Искусство», 238 с.
- Казарян В., Манукян С. 1991, Матенадаран, Армянская рукописная книга VI-XIV веков, т. 1, Москва, «Книга», 282 с., 402 илл.
- Кондорская Н., Шебалин Н. 1977, Новый каталог сильных землетрясений на территории СССР с древнейших времен до 1975, Москва, «Наука», 536 с.
- Манукян С. 2015, Фрески Татевы (930 г.), «Անտառ Ծննդոց» հոդվածների ժողովածու՝ նվիրված Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի հիշատակին (խմբ.՝ Ջ. Հակոբյան, Լ. Միրալեյան), Երևան, ԵՊՀ հրատ., էջ 296-325:
- Хачиян Э. 2008, Прикладная сейсмология, Ереван, «Гитутюн», 491 с.
- Яacobсон А. 1947, Из истории армянской средневековой архитектуры. III. Татевский монастырь, «Советская археология» т. IX, М.-Л., с. 303-328.
- Matevossian K., Vardanian E. 2018, La Miniature Arménienne Matenadaran, Album publié à l'occasion du XVII^e Sommet de la Francophonie à Erevan, Erevan, "Tigran Mets", 303 p.
- Melkonyan H., Harutyunyan A., Davtyan D. 2017, Excavations at Tatev Monastery in 2014-2015, "Aramazd" Armenian Journal of Near Eastern Studies, vol. XI, Issues 1-2, Yerevan-Oxford, p. 305-320.

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈԽԵՐԸ (ըստ երկրաշարժերի տարեգրության)

Արսեն Հարությունյան

Ամփոփում

Միջնադարյան Հայաստանի վանական համալիրների բնականոն զարգացումը խոչընդոտել են նաև երկրաբանական երևույթները, մասնավորապես՝ երկրաշարժերը: Այդ մասին են վկայում գրավոր սկզբնաղբյուրներում պահպանված բազմաթիվ տեղեկությունները, որոնց վերլուծությամբ փորձել ենք ներկայացնել Սյունյաց եպիսկոպոսանիստ և հոգևոր-մշակութային կենտրոն Տաթևի վանքի շինարարական փուլերի ընդհանուր նկարագիրը: Ուսումնասիրությունը պարզում է, որ հիմնադրումից ի վեր Տաթևի վանական համալիրը դարերի ընթացքում քանիցս հիմնանորոգվել ու նոր շինություններով է համալրվել, որոնց բուն պատճառը տեղանքին բնորոշ երկրաբանական փոփոխություններն ու երկրաշարժերն են: Այսու, կարելի է հատկանշել շինարարական յոթ ընդգրկուն փուլ՝ IX դարից մինչև 1931 թ. մեծ երկրաշարժը (երկրաշարժեր են գրանցվել նաև 735 թ., 1139 թ., 1232 թ., 1235 թ., 1308 թ., 1406 թ., 1658 թ., 1840-ականներ, 1881 թ.), որոնց հետևանքով համալիրը, չնայած կրած վնասներին ու կորուստներին, շարունակել է ընդարձակվել:

Փաստելի է, որ, օրինակ, Ս. Պողոս-Պետրոս տաճարը կառուցվել է 895-906 թթ. երկրաշարժից խարխված վաղմիջնադարյան եկեղեցու տեղում՝ Սյունյաց իշխանների մեկենասությամբ, կամ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որը մեծապես վնասվել էր Գանձակի 1139 թ. երկրաշարժից, 1295 թ. ի հիմանց վերակառուցվել է Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի նախաձեռնությամբ և այլն: Պետք է արձանագրել նաև, որ երկրաշարժերի հետևանքով վերափոխվող վանական համալիրի շինարարական փուլերի արդյունավետությունը պայմանավորված էր նաև այս հոգևոր կենտրոնի՝ ոչ

միայն վանական, այլև կրթամշակութային գործառնությունով, որոնց գազաթնակետը դարձավ Տաթևի բարձրագույն համալսարանը:

Բանալի բառեր՝ Տաթևի վանք, եկեղեցի, երկրաշարժ, երկրաբանական փոփոխություններ, շինարարական փուլեր, վիմագիր, խաչքար:

ЭТАПЫ СТРОИТЕЛЬСТВА ТАТЕВСКОГО МОНАСТЫРЯ (по летописи землетрясений)

Арсен Арутюнян

Резюме

Естественному развитию монастырских комплексов средневековой Армении препятствовали, помимо прочего, геологические процессы, в частности землетрясения, о чем свидетельствуют многочисленные сведения, сохранившиеся в первоисточниках. Исследование Татевского монастыря показало, что со времени своей постройки Татевский монастырский комплекс неоднократно подвергался реставрации и был дополнен новыми строениями, основной причиной чего являются характерные для данной местности геологические изменения и землетрясения. Подводя итоги, для периода с IX века до мощного землетрясения 1931 года (землетрясения были зафиксированы также в 735 г., 1139 г., 1232 г., 1235 г., 1308 г., 1406 г., 1658 г., 1840-х гг., 1881 г.) можно выделить семь крупных этапов строительства, в результате которых комплекс, несмотря на причиненный урон, продолжал расширяться.

Например, храм Св. Павла и Петра был построен в 895-906 годах на месте поврежденной в результате землетрясения раннесредневековой церкви благодаря меценатству князей Сюника; или церковь Св. Григория Просветителя, сильно пострадавшая от землетрясения в Гандзаке в 1139 году, которая в 1295 году была основательно перестроена по инициативе митрополита Сюника Степаноса Орбеяна и т.д. Необходимо также отметить, что результативность строительных этапов преобразовавшегося после землетрясений монастырского комплекса была обусловлена не только религиозно-духовной, но и культурно-просветительской ролью этого комплекса, апогеем чего стал Татевский университет.

Ключевые слова – Татевский монастырь, церковь, землетрясения, геологические изменения, этапы строительства, эпиграфика, хачкар (крест-камень).

THE CONSTRUCTION STAGES OF TATEV MONASTERY (According to Chronology of Earthquakes)

Arsen Harutyunyan

Abstract

The normal development of the monastic complexes of medieval Armenia was also hindered by geological factors, in particular, earthquakes. Numerous data preserved in

written sources testify about them, with an analysis of which we have tried to present a general description of the construction stages of the episcopal see of Syunik and religious-cultural center Tatev monastery. It turned out, that since its foundation, Tatev monastery has been renovated during the centuries and replenished with new buildings, the main reason of which is conditioned by geological factor and particularly earthquakes typical of the place. In the result of our investigation seven comprehensive construction stages can be identified – since IXth century until the earthquake in 1931 (earthquakes have been registered in 735, 1139, 1232, 1235, 1308, 1406, 1658, 1840s, 1881) and despite the damage and losses the monastic complex continued to expand.

For instance, with the help of the princes of Syunik the St. Paul and Peter Cathedral was built during 895-906, in the place of an early medieval church shaken by an earthquake, or St. Gregory the Illuminator church, which was greatly damaged by an earthquake of Gandzak in 1139, was fundamentally reconstructed on the initiative of Syunik Metropolitan Stepanos Orbelyan in 1295 etc. It should be noted that the efficiency of the construction stages of the monastic complex, which was transformed by earthquakes, conditioned not only monastic, but also educational-cultural functions of this religious center, the culmination of which became the Tatev University.

Key words – Tatev monastery, church, earthquake, geological factor, construction stages, epigraphics, khachkar (cross-stone).

ԴԱՇՏԱԴԵՄԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԴՂՅԱԿԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ¹

Աստղիկ Բաբաջանյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ babajanyanastghik@yahoo.com

Սոսե Աղայան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ soseh.aghaian@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 18.05.2021, գրախոսվել է 06.07.2022, ընդունվել է տպագրության 05.07.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.2-268

Ներածություն

Դաշտադեմի ամրոցը Հայաստանի ամրաշինական համակարգի եզակի համալիրներից մեկն է, որը թեև XIX դարից եղել է հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ, նրա ճարտարապետական հորինվածքի և, ընդհանրապես, հիմնադրման պատմության համակողմանի ուսումնասիրություն դեռևս իրականացված չէ: Ամրոցը բաղկացած է միջնադարյան դղյակից², որը, իր հերթին, պարփակված է XIX դ. սկզբին կառուցված արտաքին մեծ պարսպաշարով: Ամրոցից դուրս՝ հարավային կողմում, լայնատարած գյուղատեղին է՝ բնակելի ու արտադրական կառույցների ավերակներով, գերեզմանոցներով ու առանձին կանգնեցված խաչքարերով:

Միջնադարյան դղյակը ներառում է միջնաբերդը, նրա շուրջ կառուցված աշխարհիկ ու պաշտամունքային շենքերը, որոնք շրջափակված են ներքին պարսպատու (նկ. 1): Թեև դղյակը պահպանվել է մեծ մասամբ կանգուն վիճակում, սակայն հետագա և հատկապես XX դ. հուշարձանի տարածքում շարունակական վերաբնակեցումների ու խիտ կառուցապատումների հետևանքով ճարտարապետական հորինվածքը բավական խաթարվել է:

Քանի որ դղյակի հիմնադրման և հետագա կենսագործունեության վերաբերյալ գրավոր սկզբնաղբյուրները կցկտուր են, սույն հետազոտությամբ կփորձենք դիտարկել դղյակի ժամանակագրությունը և կառուցման հաջորդական փուլերը՝

¹ Հեղափոխությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 19YR-6A021 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

² Ամրոց եզրույթն օգտագործելիս ի նկատի ունենք ողջ համալիրը: Դղյակ եզրույթը վերաբերում է միայն ներքին շրջապարսպով ամփոփված հատվածին, որն, ինչպես ցույց է տալիս ճարտարապետական նկարագիրը, զարգացած միջնադարյան շրջանի դասական դղյակի օրինակ է:

հիմնվելով պատմաճարտարապետական վերլուծության ու հնագիտական տվյալների համալիր քննության վրա:

Պատմաաշխարհագրական ակնարկ

Դաշտադեմի ամրոցը գտնվում է Արագածոտնի մարզի Թալին քաղաքից 5 կմ հարավ՝ Դաշտադեմ գյուղի հարավային եզրին: Տեղակայված լինելով Արտեմի լեռան հարավարևելյան կողմում տարածվող սարահարթի վրա (ծ.մ. 1450 մ)՝ ամրոցը հյուսիս-արևմուտքից գերիշխող դիրք ունի Արարատյան դաշտի նկատմամբ: Զարգացած միջնադարում այն գտնվում էր Դվինից Անի տանող քարավանային տարանցիկ ճանապարհների վրա և վերահսկում ու ապահովում էր այդ ճանապարհների անվտանգությունը: Ամրոցից ոչ հեռու գտնվող Թալինի քարավանատունը (XIII դ.) և դղյակի տարածքում իրականացված պեղումներով հայտնաբերված հնագիտական հավաքածուներում առկա XII-XIV դդ. թվագրվող ներմուծված օրինակները (բյուզանդական ապակու նմուշներ, իրանական, մերձավորարևելյան, միջինասիական, չինական խեցանոթներ, ինչպես նաև բյուզանդական, սելջուկյան, վրացական և մոնղոլական դրամներ) վկայում են միջնադարյան ժամանակաշրջանում առևտրական ու մշակութային փոխհարաբերություններում դղյակի ունեցած դերի մասին³:

Դաշտադեմի ամրոցի հիմնադրման և պատմության վերաբերյալ գրավոր սկզբնաղբյուրները սակավաթիվ են: Միջնաբերդի պատերին պահպանվել են մի քանի վիմագրեր. տասնյակ վիմագրերի բեկորներ ի հայտ են եկել պեղումներից⁴: Առաջին թվակիր աղբյուրը միջնաբերդի հարավարևմտյան աշտարակի վրա պահպանված արաբատառ արձանագրությունն է, որի համաձայն՝ Սուլթան իբն Մահմուդ իբն Շավուր Շադդադյանը 1174 թ. սեպտեմբերին հիմնում է այս շինությունը⁵:

Շադդադյանների տոհմը, որը նշանակալի դեր ունեցավ Հայաստանի XI-XII դդ. պատմության մեջ, հաստատվել էր Դվինում, Գանձակում, ապա և Անիում, և իր հսկողության տակ էր պահում Այրարատի և Շիրակի կենտրոնական շրջանները⁶: Շադդադյանների Անիի ճյուղը խնամիական կապեր ուներ Բագրատունիների հետ⁷ և հայտնի է իր շինարարական գործունեությամբ՝ մասնավորապես ամրաշինական կառույցներով, որի մասին վկայում են ինչպես դեռևս կանգուն մնացած շենքերը, այնպես էլ գրավոր աղբյուրները⁸: Սուլթանը Շադդադյան տոհմի Անիի ճյուղի վերջին հայտնի ամիրան էր, որի մասին վերջին հիշատակու-

³ Հմմտ. Հարությունյան 1960, 55-60, Babajanyan et al. 2021, 384-390, fig. 18, 19.

⁴ Melkonyan et al. 2017, 268-270.

⁵ Хачатрян 1987, 46.

⁶ Հմմտ. Minorsky 1953, 33-106, Բոննազյան 1980, 61-63, 235, Մարգարյան 2014ա, 206-211, 216, Մարգարյան 2014բ, 225, 255:

⁷ Վարդան Արևելցի 1862, 123, Minorsky 1953, 81, Բոննազյան 1980, 71:

⁸ Հմմտ. Վարդան Արևելցի 1862, 104, Хачатрян 1987, 53-56, Мapp 2011, 32, 78.

թյունը պահպանվել է Անիի Աբու-լ-մա-Ամրանի մզկիթի պատին⁹: XII դարում Շադդադյանների և Վրաց թագավորության միջև Անի քաղաքի համար մղվող մարտերից¹⁰ մեկի ժամանակ Անիի կառավարիչ և գահի իրավահաջորդ Սուլթանը¹¹ ապաստանում է Դաշտադեմի դղյակում, որն, ինչպես և Արագածոտնի հյուսիսարևմտյան շրջանները, ամենայն հավանականությամբ, իր տիրույթներն էին¹²: 1199 թ. մարտից հետո Շադդադյան տոհմը վերջնականապես դուրս է մղվում պատմության թատերաբեմից: Նրանց տիրույթներն (այդ թվում և Դաշտադեմի դղյակը) անցնում են Զաքարյան իշխանական տան ներկայացուցիչներին¹³:

Դղյակի պատմության երկրորդ առանցքային սկզբնաղբյուրը արաբատառ արձանագրության դիմաց՝ միջնաբերդի մուտքի վերևում, դեռևս XX դ. առաջին կեսին պահպանված 1307 թ. արձանագրությունն է, որի համաձայն՝ Աղպուղա Զաքարյանը ազատում է իր Թալին գյուղը գինու հարկից¹⁴: Մատենագիր և վիճակագիր աղբյուրների, նաև հնագիտական նյութի և ճարտարապետական կառույցների քննության հիման վրա կարելի է պնդել, որ XIII դարից մինչև XIV դարի առաջին քառորդը Դաշտադեմի դղյակը Զաքարյանների Շահնշահյան ճյուղի նստավայրերից մեկն էր¹⁵: Զարկ տալով լայնածավալ շինարարությանն ու հատկապես ամրաշինական համակարգի վերանորոգումներին Անիում և իրենց տիրապետության տակ գտնվող շրջաններում¹⁶ նրանք ամրացրեցին դղյակի միջնաբերդը կիսակլոր աշտարակներով և լրացուցիչ օղակեցին այն շրջապարսպով:

Դղյակի տարածքում իրականացված պեղումների շնորհիվ վավերացվեցին զարգացած միջնադարից (XII դ.) մինչև XX դարն ընդգրկող երեք մշակութային շերտեր՝ XII-XIV դդ., XV- XVIII դդ.՝ բազմաթիվ վերակառուցումների փուլերով և XIX-XX դդ.¹⁷ (նկ. 2): Զաքարյան իշխանական տան գործունեության շրջանը Դաշտադեմի ողջ համալիրի պատմության ու ճարտարապետության ամենաակնառու փուլն է, որը լավ ներկայացված է թե՛ ճարտարապետական կառույցներով, թե՛ վիմագրերով, թե՛ հայտնաբերված հնագիտական նյութով:

Դղյակի ճարտարապետությունը

Դաշտադեմի դղյակը Անի մայրաքաղաքի շուրջը ձևավորված ամրոցների շրջայի հանգույցներից մեկն է և կառուցված է նույն սկզբունքներով, ինչ Տիգնի-

⁹ Minorsky 1953, 100-101.

¹⁰ Անիի համար մարտերը Շադդադյանների և Վրաց թագավորության միջև տեղի են ունեցել չորս անգամ՝ 1124 թ., 1161 թ., 1174 թ. և 1199 թ.: Հմմտ. Մարգարյան 2014ա, 206-211, 224, Մարգարյան 2014բ, 230:

¹¹ 1174 թ., երբ վրաց Գեորգը Իվանե ամիրսպասալարի սադրանքով երկրորդ անգամ գրավում է Անին, իր հետ տանում է (իմա՝ գերեվարում է) Շահնշահ Շադդադյան ամիրային (Սուլթանի եղբորը). Վարդան Արևելցի 1862, 129-130:

¹² Հմմտ. Մարգարյան 2014ա, 206-211, 225:

¹³ Վարդան Արևելցի 1862, 138, Մաթևոսյան 1997, 281-283:

¹⁴ Տե՛ս Babajanyan et al. 2021, 374, fig. 5.

¹⁵ Babajanyan et al. 2021, 392, հմմտ. նաև Մարգարյան 2014բ, 230:

¹⁶ Օրբելի 1966, 1-8, արձ. 1-23:

¹⁷ Պեղումների մասին մանրամասն տե՛ս Babajanyan et al. 2021.

սի, Մաղասբերդի, Երազգավորս-Արալըղի, Բագարանի, Մրենի (ներկայիս Թուրքիայի տարածքում), Վահրամաբերդի, Գուսանագյուղի, Հոռոմի, Անբերդի, Արուծի, Կոշի դղյակները¹⁸: Ըստ միջնադարյան ամրաշինական չափանիշների՝ ամրոցները կամ ամրացված բնակավայրերը կառուցվում էին անառիկ բարձունքներին՝ օգտագործելով տեղագրական դիրքը լրացուցիչ պաշտպանության համար: Ի տարբերություն դրանց՝ Դաշտադեմի դղյակ-ամրոցը զուրկ է բնական անառիկությունից, այդ իսկ պատճառով օղակվել է բավական բարձր պարիսպներով:

Դղյակը բաղկացած է միջնաբերդից և շրջապարսպից, որոնց միջև ստեղծված ներքին բակի տարբեր հատվածներում տեղակայված են պալատական եկեղեցին, աշխարհիկ երկու շենքերը և տնտեսական նշանակության կառույցներ (նկ. 3): Ամբողջ համալիրը կառուցված է առանց որմնախարսխի, բազալտե և տուֆե հիմնաժայռի վրա՝ հետևելով ռելիեֆի առանձնահատկություններին: Խորության նիշերի տարբերությունը (մինչև 3.1 մ) հավասարեցվել է բազալտե անմշակ մեծ քարերով և դեղնավուն կավաշաղախով շարված հիմնապատերի միջոցով¹⁹: Միջնաբերդի և շրջապարսպի միջև բակային հատվածներում հիմնաժայռը հարթեցված է կավե տուփանված հատակով, որոշ տեղերում սալարկվել է տուֆե բլոկներով:

Դղյակի բոլոր համակառույցները շարված են «միդիս» կոչվող տեխնիկայով՝ կրաշաղախային միջնալիցքով: Կախված կառուցվածքների բնույթից՝ պատերի հաստությունը տարբեր է. աշխարհիկ շենքերի ու եկեղեցու պատերի հաստությունը 0.7-0.9 մ է, իսկ շրջապարսպի և միջնաբերդի պատերինը՝ 1.75-2.2 մ: Որմածքում օգտագործված 0.4-0.6 մ չափերով կարմիր, նաև սև տուֆե բլոկներն ունեն հատած բուրգի ձև՝ սրբատաշ հիմքով, որոնք գագաթամասով ագուցված են կրաշաղախի մեջ: Քարերի միացումն արված է մեծ խնամքով, կարանները գրեթե աննկատ են՝ ստեղծելով համաձույլ պատ, որը գեղագիտական տեսքից բացի ունի գործառության կարևոր նշանակություն՝ պաշտպանելով կառույցներն անձրևաջրերի ներհոսքից: Շարերը հորիզոնական են՝ միևնույն բարձրությամբ, ընդ որում՝ դեպի վեր շարերի բարձրությունը նվազում է՝ պայմանավորված տուֆե բլոկների փոքրանալու հետ: Միջնաբերդի աշտարակների պատերն ունեն սեղանաձև կտրվածք՝ ավելի լայն հիմքով և նեղացող վերնամասով, որի նպատակը սեյսմակայունությունն ապահովելն է: Ի տարբերություն կիսակլոր և պայտածև աշտարակների, որոնք անմիջապես նստած են հիմնաժայռի վրա, երեք նիստավոր աշտարակների տուֆե շարվածքը բարձրանում է բազալտե խոշոր, անմշակ քարերով և կավաշաղախով կառուցված 2.5-3.5 մ բարձրության հիմնապատերի վրա:

¹⁸ Հմմտ. Թորամանյան 1948, 123, 176, 194-195, 234-235, Յովհաննեսյան 1970, 744-745, Dangles, Proureau 2005-2007, Dangles 2015, Հարությունյան 1978, Խաչատրյան 2017:

¹⁹ Հմմտ. Melkonyan et al. 2017, 267, fig. 10/1.

Քարերի վրա տեսանելի են գործիքների տարբեր հարվածների հետքերը (ուղիղ կամ թեք գծային, կետային, ծակոտկեն հարվածային)²⁰: Որոշ քարեր, որոնք հանդիպում են միայն շրջապարսպի շարվածքում, կրում են քարտաշ վարպետների փորագիր երկրաչափական նշաններ²¹: Վարպետների այդ նշանները տարածված են Անիի շենքերի շարվածքներում²² և բնորոշ են եղել ոչ միայն XII-XIV դդ. հայկական ճարտարապետությանը, այլև հանդիպում են Կիլիկիայի, Բյուզանդիայի, Մերձավոր Արևելքի, Իրանի ճարտարապետության մեջ²³: Ուշագրավ է, որ շրջապարսպի և նրա հյուսիսային աշտարակներից մեկի վրա եղել են քարգործ *Ովանէսի* անվան հիշատակմամբ երկու վիմագրեր²⁴, ինչպես նաև միջնաբերդի թաղակապ կառույցի արևմտյան ճակատի հարավային կողմում գործիք բռնած մարդու քանդակ, որը, հավանաբար, քարգործ վարպետն է²⁵:

Միջնաբերդը: Ըստ ճարտարապետական վերլուծության՝ նախնական կառույցը միջնաբերդի ուղղանկյուն հատակագծով թաղակապ շինությունն է ($9.5 \times 6.7 \times 7.5$ մ ներքին չափերով), որը կառուցվել է XI-XII դդ. միջակայքում²⁶ (նկ. 4): Հյուսիսարևմտյան և հարավարևելյան երկայնական պատերին կից են պարզ իմպոստային խոյակով մեկական որմնամույթեր, որոնք թաղակապ կառույցի զուսպ ներսույթի միակ հարդարատարրերն են: Դատելով երկայնական պատերի մեջ, որմնամույթերի խոյակների բարձրությամբ փորված վեցական քառանկյուն բնիկներից՝ միջհարկային ծածկերն իրականացվել են գերանների միջոցով:

Թաղակապ շենքի մուտքը հարավային կողմում է, որը հետագայում N 4 աշտարակի կցակառուցման հետևանքով արտաքուստ մնացել է աննկատ: Այն 3.1 մ երկարության նեղ միջանցք է, որի արտաքին դռան 1.15 մ լայնքով բացվածքը ծածկված է բազալտե բարավորով և փակված է եղել քարե դռնով: Դրա մասին են վկայում դռան ծխնիի պտտման համար շենքի քարի մեջ փորված կրունկը և դռնակողքի ուղղահայաց քարի մեջ արված հատուկ փորվածքները՝ դուռը նիգով փակելու համար (նկ. 5/1): Շարժական մեխանիզմով քարե դռները լայն տարածում են ունեցել միջնադարում, որոնք փակում էին ոչ միայն շենքերի, այլև բնակելի քարայրների մուտքերը²⁷ (նկ. 5/3-5):

²⁰ Հմմտ. Bessac 2011, 387, 391-393.

²¹ Տե՛ս Melkonyan et al. 2017, 270: Հմմտ. նաև Bessac 2011, 407-412, Թորամանյան 1942, 269, Ղաֆաղարյան 1952, 100-101, Մնացականյան 1958, Халпахчьян 1967, 217-218:

²² Թորամանյան 1948, 251:

²³ Թորամանյան 1942, 267-270, Bessac 2011, 410, Edwards 1987, 277:

²⁴ Ասատրյան 1990, 2: Ներկայումս իրենց տեղում չեն:


²⁵ Տե՛ս Melkonyan et al. 2017, 265, fig. 11/1-3.

²⁶ Ներկայումս Դաշտադեմի ամրոցը մշակույթի նախարարության կազմած՝ *Դաշտադեմի պարմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում* գրանցված է որպես VII-XIX դդ. ամրոց: Այս թվագրումը, սակայն, հիմնավորված չէ ո՛չ գրավոր աղբյուրներով, ո՛չ հնագիտական նյութով: Գրավոր սկզբնաղբյուրների սակավությամբ, ինչպես նաև միջնաբերդի պեղումների վերաբերյալ հրատարակության բացակայությամբ պայմանավորված՝ դղակի հիմնադրման ստույգ ժամանակի հարցն առայժմ մնում է առկախ:


²⁷ Հմմտ. Հարությունյան 1953, 59:



Նկ. 1. Դաշտադեմի միջնադարյան դղյակի օդայուսանկարը. տեսքը հարավ-արևելքից (լուսանկարը՝ Ս. Աղայանի)



Նկ. 2. 2015 և 2018 թթ. պեղավայրերի շերտագրական հատակագիծը (չափագրությունը՝ Ս. Աղայանի)



Նկ. 3. Միջնադարյան դղյակի հատակագիծը (XII-XIV դդ.)՝ ըստ ժամանակագրական և շինարարական փուլերի (չափագրությունը՝ Ս. Աղայանի)



Նկ. 4. Միջնաբերդի թաղակապ շենքը հյուսիսային կողմից (լուսանկարը՝ Ա. Բաբաջանյանի)



1. Դաշտաղեն. միջնաբերդի մուտքը



2. Դաշտաղեն. գաղտնուղի



3. Արեգնաղեն. քարայր



4. Արուճի աշխարհիկ կառույցը




5. Փարպիի Օիրասավոր եկեղեցին

Նկ. 5. Միջնադարյան քարե դռներ (լուսանկարները՝ Ա. Բաբաջանյանի)



Նկ. 6. Միջնաբերդի տանիքը՝ հարավային կողմից (լուսանկարը՝ Ա. Բաբաջանյանի)




Նկ. 7. Հարավային գլխավոր դարպասը (չափագրությունը՝ Ս. Աղայանի)



Նկ. 8. Պալատական եկեղեցին՝ միջնաբերդից (լուսանկարը՝ Ա. Բաբաջանյանի)



Նկ. 9. Հանդիսավոր դահլիճը (լուսանկարը՝ Ս. Աղայանի)



Նկ. 10. Սյան խոյակ (չափագրությունը և լուսանկարը՝ Ս. Աղայանի)



Նկ. 11. Աշխարհիկ ուղղանկյուն շենքը (լուսանկարը՝ Ս. Աղայանի)



Նկ. 12. Ստորգետնյա ջրամբարը՝ հարավ-արևմուտքից
(լուսանկարը՝ Ա. Բաբաջանյանի)

Կառույցի ներսում՝ հարավարևելյան պատի գրեթե կենտրոնում, հատակից 1.7 մ բարձր տեղադրված է կամարաձև վերնամասով մուտքը, որը նեղ, ոլորապտույտ աստիճաններով տանում է դեպի շինության աստիճանաձև տանիք: Տանիքի կենտրոնում՝ երկայնական ուղղությամբ երեք լուսահորեր են բացված՝ ներքին լուսավորությունն ապահովելու համար:

Մեկ այլ, ավելի ցածր ու առաջին հայացքից աննկատ մուտք է բացվում հյուսիսարևմտյան պատի մեջ: Նեղ, 1-աձև հատակագծով գաղտնի միջանցքը, հասնելով քարե դռանը (նկ. 5/2), թեքվում է ձախ և 4.1 մ շարունակվելով՝ դեմ է առնում N 5 աշտարակի անկյունավոր հատվածի պատին:

Թաղակապ կառույցի հատակը շարված է բնական տուֆե բլոկներով, անհարթությունները պատված էին կավաշաղախով: Կենտրոնում հիմնաժայռի մեջ փորված է անկանոն բազմանիստ ավազան, որի պատերը կառուցված են անմշակ մեծ որձաքարերով՝ սվաղված անջրանցիկ կրաշաղախով: Այն փակված է եղել երեք խոշոր ծածկասալերով²⁸:

Միջնաբերդի կառուցապատման հաջորդ՝ 2ա փուլում, թաղակապ ուղղանկյուն շենքն արտաքուստ՝ իր ողջ պարագծով շրջափակվել է բավական հաստ և ավելի բարձր կրկնապատով, որին կցակառուցվել են երեք նիստավոր և մեկ պայտածև աշտարակները (նկ. 3): Թաղակապ շենքի և այն շրջափակող կրկնապատի միջև երկայնական ուղղությամբ ստեղծվել են նեղ միջանցքներ: Կրկնապատի յուրաքանչյուր ճակատում տեղադրված սլաքաձև և կամարաձև վերնամասով մուտքերը տանում են դեպի աշտարակների բնակելի հարկաբաժիններ (նկ. 6): Կիսակլոր և նիստավոր աշտարակների վերին հարկաբաժիններում տեղադրված են արտաքուստ նեղ, ներքուստ ավելի լայն՝ քառակուսի կամ կամարաձև վերնամասով լուսամուտներ:

XIII դարում թաղակապ շենքի կրկնապատի անկյուններում կառուցվել են ևս երեք կիսակլոր աշտարակներ, որոնք արտաքուստ մուտքեր չունեն, բացառությամբ N 4-ը, որի արևմտյան եզրից մուտք է թողնված դեպի թաղակապ շենքի ներս (նկ. 3): Փաստորեն, XII-XIII դդ. բնակելի հարկաբաժինները տեղակայվել են միջնաբերդի չորս աշտարակների վերին հարկերում, իսկ դրանց ներքնահարկերը, ինչպես նաև անկյունային կիսակլոր աշտարակների հարկաբաժինները ծառայել են տնտեսական կամ օժանդակ նպատակների:

Ներքին շրջապարիսպ: 190 մ երկարության, անկանոն բազմանկյուն հատակագծով շրջապարիսպը՝ տասնմեկ կիսակլոր աշտարակներով և երկու դարպասներով, ընդգրկում է 2500 քմ տարածք: Պատերի պահպանված բարձրությունը 1-1.5 մ է՝ տեղ-տեղ հասնելով մինչև 4.5 մ: Միակ բարձր հատվածը N 8 աշտարակն է՝ 8.4 մ պահպանված բարձրությամբ: Աշտարակների մի մասն ունի միկոդմանի կամ երկկոդմանի սանդուղքներ:

²⁸ Ասատրյան 1990, 5-6: Ներկայումս նշված ծածկասալերը չկան: Միջնաբերդում 2006 թ. վերանորոգումներից հետո դրանք հավանաբար հեռացվել են:

Շրջապարսպի կարևոր և բարդ հորինվածք ունեցող հատվածը գլխավոր դարպասն է, որը գտնվում է հարավային երկու աշտարակների միջև (նկ. 7): Այն նախագծված է որպես 3.5 մ լայնությամբ թաղակապ փոքր սրահ, որի արևելյան կողմում ներքուստ կցակառուցված է նեղ ու երկար խորշ: Երկու կողմից կանգնեցված ուղղահայաց մոնոլիտներով մինչև 1.8 մ լայնքի նեղացված պորտալը տեղադրված է դարպասի կենտրոնական առանցքից ձախ՝ փակելով մինչև նեղ խորշի մուտքի հատվածը: Կամարի տակ՝ ներքին կողմից, դռան ծխնիների համար նախատեսված՝ հիմնաժայռի մեջ փորված երկու քառակուսի փոքր կրունկները թույլ են տալիս ենթադրել, որ գլխավոր դարպասը փակվել է երկփեղկ, փայտե դռնով:

Շրջապարսպի երկրորդ՝ արևելյան դարպասն ավելի պարզ հորինվածք ունի: Երկու կիսակլոր աշտարակների միջև գտնվող 2.15 մ լայնությամբ մուտքի բացվածքում տեղադրված է դռան շեմի միակտուր տուֆե քարը՝ փայտե դռան ծխնիների համար նախատեսված քառակուսի կրունկներով:

Պալատական եկեղեցի: Այն կցակառուցված է շրջապարսպի հյուսիսարևելյան կողմում: Վերաբերում է շինարարական 3գ փուլին և թվագրվում է XIII դարով²⁹ (նկ. 8): Եկեղեցին արտաքին պատերի մեջ ներգծված կիսակլոր աբսիդով միանալով թաղակապ կառույց է, որը կանգնեցված է հարթեցված հիմնաժայռի վրա: Ունի երկու մուտք՝ արևմտյան և հարավային ճակատներում, որոնք միաձուլ են պատերի հարթության հետ: Մուտքերի բացվածքները ծածկված են ուղղանկյուն բարավորով. հարավայինն ունի ելնդավոր եզրագոտիով ընդգծված սլաքաձև տիմպան: Եկեղեցու արտաքին հարդարանքը զուսպ է: Արևմտյան, հարավային և արևելյան ճակատներին մեկական նեղ լուսամուտներ կան, որոնց վերնամասը շրջանցում է պարզ ելնդավոր սլաքաձև պսակը: Եկեղեցին գոտևորում է տրամատավոր քիվը, որն ավարտվում է պատին հաված անկյունային ելուստներով: Հարավային մուտքի առջև կցակառուցված պատերի հիմքերը թույլ են տալիս ենթադրել, որ այն արտաքին սրահաձև շքամուտք է ունեցել, որն, ամենայն հավանականությամբ, ծառայել է որպես հավելյալ տարածություն՝ ծիսակատարությունների ժամանակ ավելի մեծ թվով մարդկանց տեղավորելու համար:

Հարկ է նշել, որ եկեղեցու թվագրման և անվան վերաբերյալ թյուրըմբռնում կա: Եկեղեցու առջև տեղադրված ցուցանակի վրա այն կոչվում է Ս. Սարգիս և թվագրված է X դարով: Այս տեսակետն առաջ քաշելու համար հիմք են ծառայել, ըստ երևույթին, Հ. Շահխաթունյանցի և Թ. Թորամանյանի նկարագրությունները³⁰:

«Դոյակը անմիջապես շրջապարտող պարիսպին մեջ կա մի եկեղեցվո ապերակ, որն ինչպես կերևի, հալոյվ էր դոյակի բնակիչներուն: Այս եկեղեցվո հյուսիսային պարիսպին կից պարիսպի բուրգին վրա, կա մի փոքր արձանագրություն այսպես «Զովաննէս՝ քարգործս յիշեցեք ի ՔՍ»: ...Մի ուրիշ եկեղեցի, որ տեսեր է Շահխաթունյան և ինչպես կերևի նրանից օգրվեր է հ. Ղ. Ալիշան, որուն վրա եղեր է հեյրկյալ արձանագրու-

²⁹ Ասատրյան 1990, 2-3:

³⁰ Շահխաթունյանց 2014, 242, Թորամանյան 1948, 251-252:

թյան կտորը «ՆԿէ թուականս ես Մարիամ, որ ետու զիմ գիրքս ի Սուրբ Սարգիսս...», այս եկեղեցիի ոչ հետքը գտաւ և ոչ արձանագրության բեկորներ գտնուի թափած»³¹:

Մեջբերումից պարզ է դառնում, որ ամրոցի տարածքում երկու եկեղեցի կար: Մեկը դղյակի պալատական եկեղեցին է, որ վերականգնվել է 2006 թ., մյուսը՝ շրջապարսպից դուրս՝ նրա արևելյան կողմում գտնվող Ս. Սարգիս անունով եկեղեցին³²:

Աշխարհիկ շենքեր: XIII դ. բնորոշ և 3գ շինարարական փուլում կառուցված երկու մոնումենտալ շենքերը հայտնաբերվեցին 2015 և 2018 թթ. պեղումների ժամանակ: Դրանցից մեկը քառասյուն, գրեթե քառակուսի հատակագծով հանդիսավոր դահլիճ է, որի պատերը պահպանվել են մինչև 1 մ բարձրությամբ (նկ. 9): Սալարկված դահլիճի կենտրոնում հիմնաժայռի մեջ փորված է ցածր պատերով քառակուսի կառուցվածք՝ լցված մոխրով, որը նախատեսված էր մեծ սրահների ջեռուցման համար: Նմանատիպ վառարան հայտնի է Տողի մելիք Եգանի գլխատան կենտրոնում³³:

Դահլիճի մուտքը հյուսիսարևմտյան անկյունում է, որն անմիջապես հարում է միջնաբերդի N 3 աշտարակին: Այն կարճ պատով փակված է, ինչը հուշում է այդ մուտքի երկրորդական դերի մասին: Հիմնական պորտալը, թերևս, արևմտյան կողմում պետք է լիներ, որը, ցավոք, խիստ խաթարված է: 2021 թ. պեղումներով դահլիճի արևմտյան պատին զուգահեռ բակի սալահատակի տակ բացվեց նոր հիմնապատ՝ տեղ-տեղ պահպանված երկու շարքով: Նորաբաց պատի առկայությունը թույլ է տալիս ենթադրել, որ ինչպես հայկական պալատական կառույցներում, այնպես և Դաշտադեմի դղյակում կենտրոնական դահլիճին կից կառուցված են եղել բնակելի կամ օժանդակ այլ նպատակների ծառայող սենյակներ³⁴:

Հանդիսավոր դահլիճի այս տեսակը սկիզբ է առնում հայկական ժողովրդական ճարտարապետությունից, հայտնի որպես գլխատուն, որը զարգացած միջնադարում լայն կիրառություն գտավ գավիթների և քաղաքացիական շենքերի կառուցման ժամանակ³⁵: Ծածկն իրականացվել է չորս սյուների վրա հենվող փայտե հեծաններով, որոնք պահել են առաստաղը՝ կենտրոնում մարդակներով (purlin) ձևավորելով լուսսիջույցի կամ երդիկի անցքը: Պահպանված երկու սյուների հիմքերը (0.65×0.65 մ) բաղկացած են անկյուններում եռանկյուն թեքությամբ զարդարված քառակուսի պատվանդանից (plinth) և շրջանաձև, ցածր բարձիկից (torus) (նկ. 10):

Նմանատիպ դահլիճները մատենագիրների մոտ հիշատակվում են *յրաճար արքունի*, *սրահ* կամ *խորան* անվամբ, որոնք վերաբերում էին խնջույքների կամ

³¹ Թորամանյան 1948, 251-252:

³² Ս. Սարգիս եկեղեցին պահպանվել է մինչև 1913 թ.՝ Քերոբ և Աբգար Գրիգորյանների տան բակում: Այն քանդել են Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ամրոցի տարածքում հաստատված գաղթականները՝ քարերն օգտագործելով իրենց բնակարանների շինարարության մեջ. տե՛ս Եղիազարյան 1971, 59-60:

³³ Հմմտ. Ժամկոչյան, Բաբայան 2015, հատակագիծ 2, նկ. 2:

³⁴ Հմմտ. Халпахчян 1971, 90-109:

³⁵ Հարությունյան 1976, 57-68, Мнацаканян 1952, 12:

հանդիսավոր ընդունելության համար նախատեսված տոնասրահներին³⁶: Թեև Դաշտադեմի դահլիճի միայն հիմնապատերն են պահպանվել, սակայն հաշվի առնելով ուշ շրջանի վերակառուցումների ընթացքում որպես միջնորմային պատ օգտագործված դեկորատիվ քիվը և հայտնաբերված քանդակազարդ մանրամասները, ինչպես նաև նույն ժամանակաշրջանով թվագրվող Անիի պալատների արտաքին ճոխ հարդարանքը³⁷ և ժամանակի ճարտարապետության ոճական առանձնահատկությունները՝ կարող ենք որոշակի պատկերացում կազմել Դաշտադեմի հանդիսավոր դահլիճի արտաքին հարդարանքի մասին: Դատելով պատմիչների՝ արքունական և նախարարական ապարանքների մանրամասն նկարագրություններից՝ այդպիսի դահլիճների ներսույթը ևս շքեղ կահավորված է եղել³⁸: Հետաքրքիր է Թորամանյանի նկարագրությունը Շապին Գարահիսարի Թամզարա գյուղի հանդիսավոր դահլիճի ներքին կահավորման և տոնախնջույքի անցկացման կարգի մասին՝ հիմնվելով այն փաստի վրա, որ այդ գյուղի բնակիչները Անիից գաղթած հայերն էին և, ըստ ամենայնի, պահպանած պիտի լինեին միջնադարյան արքունի տաճարի ներքին կահավորանքի ոճն ու կենցաղավարության կերպը³⁹:

Շրջապարսպի և միջնաբերդի միջև հարավային և հարավարևմտյան հատվածում 2018 թ. պեղումների ընթացքում բացված երկրորդ աշխարհիկ կառույցը XV-XVIII դդ. կառուցապատումների հետևանքով բազմաթիվ փոփոխություններ է կրել (նկ. 11): Այն N 7 և N 8 աշտարակների միջև ընկած, պարսպապատին կցակառուցված երկարաձգված ուղղանկյուն շենք է, որի միակ մուտքը տեղադրված է երկայնական պատի գրեթե կենտրոնում: Հաշվի առնելով կառույցի 1:3 համամասնությունը, որը համապատասխանում է զարգացած միջնադարում տարածված սեղանատների համամասնությանը⁴⁰, կարելի է նախնական ենթադրություն անել, որ այն ևս ծառայել է իբրև սեղանատուն:

Անկասկած, նորահայտ երկու շենքերը պատկանում էին իշխող վերնախավի ներկայացուցիչներին, և դրանց առկայությունը ցույց է տալիս XIII դարում և XIV դարի սկզբին Դաշտադեմի դղյակի նաև վարչական դերը տարածաշրջանում:

Ջրամբարները և ջրադարը: Միջնադարյան համալիրի կարևոր բաղկացուցիչ կառույցներից է ստորգետնյա ջրամբարը (6.6×3-4.8×3.76 մ չափերով): Այն միանավ եկեղեցու հարավարևմտյան կողմում, ժայռի մեջ փորված անկանոն քառանկյուն շինություն է, որի սրբատաշ տուֆի բլուկներով կառուցված հարթ ծածկը կենտրոնում պահում են երեք կամարածև ջլաղեղները (նկ. 12), որոնց թռիչքի երկարությունը 4.8 մ է, և որոնք անմիջապես հենվում են բազալտե

³⁶ Հմմտ. Փավստոս Բուզանդ 1987, 186, 312, Ղազար Փարպեցի 1982, 258, 418, Թովմա Արծրունի և Անանուն 1985, 452.

³⁷ Հմմտ. Հարությունյան 1992, 284-285:

³⁸ Հմմտ. Թովմա Արծրունի և Անանուն 1985, 452, 456-458.

³⁹ Թորամանյան 1942, 373-375:

⁴⁰ Հմմտ. Халпахчьян 1971, 156.

հիմնաժայռի հարթեցված պատերի վրա: Ջրամբարի միակ մուտքը վերևից է՝ հարավարևմտյան կողմում: Այն տուֆե խոշոր ծածկասալերի մեջ փորված քառանկյուն բացվածք է, որը ծածկված է եղել տուֆե խցանով:

Եկեղեցու արևելյան կողմում՝ շրջապարսպի հիմքի տակ, 1989 թ. պեղումներով բացվել էր դեպի ստորգետնյա ջրամբարը հոսող ջրատարի մի հատված (նկ. 3/բ): Այն հիմնաժայռի մեջ փորված առու է, որի պատերը կառուցված են կոպտատաշ տուֆե բլոկներով և կրաշաղախով, և ծածկված է եղել սալերով⁴¹: Ջրատար առուն դեպի ջրամբար շարունակվել է կավե խողովակաշարով, որի մի հատվածը պահպանվել է ջրամբարի արևելյան պատի հյուսիսային կողմում՝ առաստաղից ցած:

Ստորգետնյա ջրամբարն ու ջրատար առուն ժամանակակից են միջնաբերդի թաղակապ կառույցին և կառուցվել են շինարարական առաջին փուլերի ընթացքում:

Ամրոցի ջրամատակարարման համակարգի մասն է նաև N 7 աշտարակի կիսակլոր պատին կից՝ հատակի տուֆասալերի տակ փորված ստորգետնյա հորը, որն ունի տանձաձև կառուցվածք և պատված է անջրանցիկ սվաղով:

Միջնադարում ջրային տնտեսության կառավարումը կարևոր էր բնակավայրերը խմելու ջրով ապահովելու և գյուղատնտեսական նպատակների համար անջրդի հողերն արդյունավետ օգտագործելու համար, որն իրականացվում էր պետության, խոշոր ավատատերերի, մեծատունների և վանքերի հովանավորությամբ, որոնց վերաբերյալ բազմաթիվ մատենագիր և վիմագիր վկայություններ են պահպանվել⁴²: Միջնադարյան քաղաքներում, բնակավայրերում և ամրոցներում ջրամատակարարման բավական զարգացած համակարգեր են գործել Անիում, Դվինում, Անբերդում, Լոռե բերդաքաղաքում և այլն⁴³: Առանձին ստորգետնյա ջրամբարներ են հայտնի նաև Մաղասբերդում, Արուճում, Բազմաղբյուրում, Բջին ամրոցում, Վարդենուտի դղյակում, Կոշում (վերգետնյա), Թաթուլում և այլն⁴⁴: Դաշտադեմի դղյակի ջրամատակարարման համակարգը կապված է եղել Թալինի՝ բնական աղբյուրներից և հոսող գետերից զուրկ տարածաշրջանում դեռևս վաղ ժամանակներից գործող խմելու ջրի և արհեստական ոռոգման ցանցին, որի մնացորդները ներկայումս դեռ տեսանելի են⁴⁵:

Եզրակացություններ

Ամփոփելով պատմական աղբյուրների, հնագիտական պեղումների արդյունքների և ճարտարապետության վերլուծության հիման վրա մեր ունեցած

⁴¹ Ասատրյան 1990, 3:

⁴² Մանրամասն տե՛ս Վիրաբյան 1975, Епремян 1992, 7-29, Ալիշան 1890, 138:

⁴³ Հմմտ. Март 2011, 67-68, 81-82, 117, 113, Ղաֆադարյան 1952, 78-80, Հարությունյան 1978, 45-48. Епремян 1992, 98-102.

⁴⁴ Հմմտ. Սարգիսեան 1864, 193, Յովհաննէսեան 1970, 728, Հարությունյան 1953, 59, Արեշյան և այլք 1977, 87-88, Ղարիբյան, Հակոբյան 2005, 104, Կարախանյան, Մեղրոնյան 1989, 81, Թորամանյան 1948, 234, ԱԱ 1063-1-1468, թ. 19ա, բ, թ. 20ա, բ:

⁴⁵ Ասատրյան 1989, 83-87:

տվյալները՝ կարող ենք որոշակիացնել, որ Դաշտադեմի միջնադարյան դղյակը ակտիվ կենսագործել է XII-XIV դդ.: Կարևոր դիրք զբաղեցնելով Դվին և Անի քաղաքների միջև առևտրային ճանապարհների վրա՝ XIII դ. և XIV դ. առաջին քառորդին այն եղել է Զաքարյանների իշխանանիստ կենտրոններից մեկը Արագածոտնում: Ի տարբերություն համաժամանակյա մյուս դղյակ-ամրոցների՝ այն միասնական նախագծով ստեղծված համալիր է՝ ընդհանուր շրջապարսպով ամփոփված և դասական դղյակներին հատուկ բոլոր համակառուցներով: Դղյակը կառուցվել է ըստ հայկական ամրաշինական չափանիշների, որոնք մեծ ազդեցություն են ունեցել հայկական Կիլիկիայի, Լևանտի և խաչակիրների թագավորությունների դղյակների և ամրոցների հորինվածքների ձևավորման վրա⁴⁶:

Դաշտադեմի դղյակի ճարտարապետության և հնագիտական հարուստ ու բազմաբնույթ հավաքածուների, ինչպես նաև պատմիչների նկարագրությունների համալիր վերլուծությունը հնարավորություն է տալիս վերակազմելու միջնադարյան իշխանական ապարանքների կենցաղավարությունը, որին կանդրադառնանք մեր առաջիկա հետազոտություններում:

Գրականություն

- ԱԱ 1063-1-1468, 1942-48, Թալինի շրջանի պատմաճարտարապետական և հնագիտական հուշարձանների հաշվառման քարտեր, ՀՀ Ազգային արխիվ, ֆոնդ 1063, ցուցակ 1, N 1468, 70 թերթ:
- Ալիշան Ղ. 1890, Այրարատ, Բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, Ս. Ղազար, 590 էջ:
- Ասատրյան Ե. 1989, Թալինի ջրամատակարարման միջնադարյան համակարգերը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 4, էջ 83-88:
- Ասատրյան Ե. 1990, Հաշվետվություն 1989 թ. Թալինի շրջանի Դաշտադեմ գյուղի ամրոցի հնագիտական պեղումների, «Պատմամշակութային արգելոց թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, Նախագծերի արխիվ (N286-63/122), Երևան, 8 թ.:
- Արեշյան Գ., Ղաֆադարյան Կ., Սիմոնյան Հ., Տիրացյան Գ., Քալանթարյան Ա. 1977, Հնագիտական հետազոտություններ Հայկական ՍՍՀ Աշտարակի և Նաիրիի շրջաններում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 4, էջ 77-93:
- Բոռնազյան Ս.Վ. 1980, Հայաստանը և սելջուկները XI-XII դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 300 էջ:
- Եղիազարյան Հ.Ս. 1971, Ներքին Թալին գյուղի Ս. Քրիստափորի վանքը, նրա վիմագիր արձանագրությունները և գյուղի մյուս հուշարձանները, Էջմիածին, N 8, էջ 52-64:
- Թովմա Արծրունի և Անանուն 1985, Պատմութիւն տանն Արծրունեաց (բնագիրը, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Վ.Մ. Վարդանյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 560 էջ:
- Թորամանյան Թ. 1942, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1 (կազմ. և խմբ. Կ.Գ. Ղաֆադարյան), Երևան, Արմֆանի հրատ., 403 էջ:
- Թորամանյան Թ. 1948, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2 (կազմ. և խմբ. Կ.Գ. Ղաֆադարյան), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 307 էջ:
- Ժամկոչյան Ա., Բաբայան Ֆ. 2015, Մելիք Եգանի պալատական համակառուցի պեղումները Տոդ գյուղում, Էջմիածին, N 5, էջ 122-136:

⁴⁶ Հմմտ. Edwards 1987.

- Խաչատրյան Հ. 2017, Ախուրյանի ավազանի միջնադարյան ամրաշինական կառույցները, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ, N 20, էջ 206-215:
- Կարախանյան Գ.Հ., Մելքոնյան Հ.Ա. 1989, Վարդենուտ (պեղումների արդյունքները), ՀԽՍՀ 1987-1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երևան, էջ 80-82:
- Հարությունյան Ս.Վ. 1978, Անբերդ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 110 էջ:
- Հարությունյան Վ.Մ. 1953, VII դարի աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, N 8, էջ 53-65:
- Հարությունյան Վ.Մ. 1960, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, «Հայպետհրատ», 147 էջ:
- Հարությունյան Վ.Մ. 1976, Միջնադարյան Հայաստանի մոնումենտալ աշխարհիկ ճարտարապետության ձևատեղծումների ժողովրդական ակունքները, Պատմա-բանասիրական հանդես, N 4, էջ 57-68:
- Հարությունյան Վ.Մ. 1992, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, «Լույս», 540 էջ:
- Ղազար Փարպեցի 1982, Ղազարայ Փարպեցոյ պատմություն հայոց. Թուղթ առ Վահան Մամիկոնեան (քննական բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Բ. Ուլուբաբյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 540 էջ:
- Ղարիբյան Ի., Հակոբյան Հ. 2005, Բջնի հնավայրը (ուսումնասիրության նախնական արդյունքները), Հուշարձան տարեգիրք, հ. Գ, Երևան, «Հուշարձան», էջ 103-118:
- Ղաֆադարյան Կ.Գ. 1952, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 299 էջ:
- Մարգարյան Հ. 2014ա, Հայաստանի քաղաքական դրությունը XII դարի 20-80-ական թթ., Շահնագարյան Ա. (պատ. խմբ.), Հայոց պատմություն, հ. 2, գք. 2, Երևան, «Զանգակ», էջ 201-211:
- Մարգարյան Հ. 2014բ, Հայ-վրացական զինակցությունը թուրք-սելջուկների դեմ պայքարում, (պատ. խմբ.՝ Շահնագարյան Ա.), Հայոց պատմություն, հ. 2, գք. 2, Երևան, «Զանգակ», էջ 219-239:
- Մարթնոսյան Կ.Ա. 1997, Անիում Զաքարյանների հաստատման ժամանակն ըստ նորահայտ հիշատակարանի, Պատմա-բանասիրական հանդես, N 1, էջ 280-283:
- Մնացականյան Ստ. 1958, Միջնադարյան Հայաստանի շինարարական գործի կազմակերպման մի քանի հարցերը և քարգործ վարպետների նշանագրերը, Պատմա-բանասիրական հանդես, N 3, էջ 84-105:
- Յովհաննէսեան Կ. Միքայել վ. Մխիթարեան 1970, Հայաստանի բերդերը, Վենետիկ, Ս. Ղազար, 1014 էջ:
- Շահխաթունեանց Յ. եպս. 2014, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Էջմիածին, «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին», 560 էջ:
- Սարգիսեան Ն. 1864, Տեղագրութիւն ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 289 էջ:
- Վարդան Արևելցի 1862, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, Ս. Ղազար, 164 էջ:
- Վիրաբյան Ս.Ա. 1975, Միջնադարյան Հայաստանի ջրաշինարարության և ջրօգտագործման պատմությունից, Պատմա-բանասիրական հանդես, N 1, էջ 145-157:
- Օրբելի Հ. 1966, Դիվան հայ վիմագրության, Անի քաղաք, պր. Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 73 էջ:
- Փավստոս Բուզանդ 1987, Փավստոսի Բիւզանդացիոյ Պատմութիւն Հայոց (բնագիրը՝ Բ. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ստ. Մալխասյանցի), Երևան, ԵՊՀ հրատ., 456 էջ:
- Епремян Р.В. 1992, Водоснабжение древней и средневековой Армении, Ереван, ЕрАСИ, 144 с.
- Март Н.Я. 2011, Ани. Книжная история города и раскопки на месте городища, Ереван, «Гитутюн», 136 с.

- Мнацаканян С. 1952, Архитектура армянских притворов, Ереван, изд. АН АрмССР, 144 с.
- Халпахчян О.Х. 1967, Организация строительного дела в средневековой Армении, Историко-филологический журнал, N 2-3, с. 205-220.
- Халпахчян О.Х. 1971, Гражданское зодчество Армении (Жилые и общественные здания), Москва, Издательство литературы по строительству, 248 с.
- Хачатрян А.А. 1987, Корпус арабских надписей Армении (VIII-XVI вв.), вып. 1, Ереван, изд. АН АрмССР, 235 с.
- Babajanyan A., Aghaian S., Davtyan D., Melkonyan H. 2021, A View on Life in the Medieval Fortress at Dashtadem: Results of the 2015 and 2018 Excavation Campaigns, in Avetisyan P., Bobokhyan A. (eds), "Archaeology of Armenia in Regional Context", Yerevan, "Publishing House of the Institute of Archaeology and Ethnography", p. 373-395.
- Bessac J.C. 2011, Observations sur la construction monumentale dans le nord-ouest de la République d'Arménie, Syria: Archéology, art et histoire, N 88, p. 379-415.
- Dangles Ph. 2015, Aruč. Le site fortifié, Հակոբյան Զ., Միքայելյան Լ. (խմբ.), «Անտառ ծննդոց», Հոդվածների ժողովածու նվիրված Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի հիշատակին, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 222-231:
- Dangles Ph., Prouteau N. 2005-2007, Observations sur quelques forteresses de la région d'Ani, Revue des études arméniennes, N 30, p. 273-299.
- Edwards R.W. 1987, The Fortifications of Armenian Cilicia, Dumbarton Oaks Studies 23, Washington: Dumbarton Oaks Research Library and Collection, 288 p.
- Melkonyan H., Babajanyan A., Harutyunyan A., Davtyan D., Aghaian S. 2017, The Excavations of Dashtadem Fortress: Preliminary Report of 2015 Fieldwork Activity, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, N11/1-2, p. 263-292.
- Minorsky V. 1953, Studies in Caucasian History, London, Taylor's Foreign Press, 207 p.

ԴԱՇՏԱԴԵՄԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԴՂՅԱԿԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Աստղիկ Բաբաջանյան, Սոսե Աղայան

Ամփոփում

Դաշտադեմի միջնադարյան դղյակը ՀՀ տարածքում մասնակի կանգուն մնացած բացառիկ համալիրներից է, որը XIII դ. և XIV դ. սկզբին Զաքարյանների իշխանանիստ կենտրոններից մեկն էր Արագածոտնում: Զարգացած միջնադարում գտնվելով Դվին-Անի քարավանային տարանցիկ ճանապարհների վրա՝ այն վերահսկում և ապահովում էր դրանց անվտանգությունը և ակտիվ մասնակցություն ուներ տարածաշրջանային առևտրական ու մշակութային փոխհարաբերություններում:

Դղյակը միասնական նախագծով ստեղծված համալիր է՝ ընդհանուր շրջապարսպով ամփոփված և դասական դղյակներին հատուկ բոլոր համակառուցվածքներով: Համալիրի առանցքը աշտարակներով համալրված եռահարկ միջնաբերդն է, որի շուրջ ստեղծված ներքին բակի տարբեր հատվածներում տեղակայված են պալատական միանավ եկեղեցին, երկու նորահայտ աշխարհիկ շենքերը՝ հանդիսավոր դահլիճը և մոնումենտալ ուղղանկյուն կառույցը (հավանաբար՝ սեղանատուն), ինչպես նաև ջրամատակարարման համակարգը՝ ստորգետնյա ջրամբարներով: Պատմական, հնագիտական սկզբնաղբյուրների և ճարտարապետական վերլուծության համադրմամբ հստակեցվել են ինչպես դղյակի ժամանա-

կազմությունը և կառուցապատման փուլերը, այնպես էլ կառույցների ճարտարապետական հորինվածքն ու շինարվեստը:

Բանալի բառեր՝ պատմություն, ճարտարապետություն, զարգացած միջնադար, դղյակ, միջնաբերդ, նորահայտ աշխարհիկ կառույցներ, շինարարական փուլեր:

АРХИТЕКТУРА СРЕДНЕВЕКОВОГО ЗАМКА В ДАШТАДЕМЕ

Астхик Бабаджанян, Сосэ Агаян

Резюме

Средневековый замок в Даштадеме – одна из немногих сохранившихся крепостей на территории Республики Армения, являвшихся одной из резиденций княжеской семьи Закаридов в Арагацотнском регионе в XIII – в начале XIV веков. Расположенный на средневековых караванских маршрутах, ведущих с города Двина в столицу Ани, замок обеспечивал безопасность этих дорог и активно интегрировался торгово-культурных взаимоотношениях в регионе.

Замок был спроектирован как единый комплекс, состоявший из типичных для средневековых замков сооружений и окруженный оборонительной стеной. Центром замка являлась трехэтажная цитадель, укрепленная башнями; в разных частях внутреннего двора были расположены церковь, два новооткрытых монументальных сооружения – парадный зал и прямоугольное здание (возможно, трапезная), а также система водоснабжения с подземными резервуарами. Исторические сведения, археологические данные и архитектурный анализ, позволяют прояснить хронологию и строительные этапы замка, а также архитектурные характеристики зданий.

Ключевые слова – история, архитектура, развитое средневековье, замок, цитадель, новооткрытые светские здания, строительные этапы.

ARCHITECTURE OF THE MEDIEVAL CASTLE OF DASHTADEM

Astghik Babajanyan, Soseh Aghaian

Abstract

The medieval castle of Dashtadem is one of the few stand fortresses in the territory of Republic of Armenia which was a seat of government of the Zakaryan princely house in the Aragatsotn region during the 13th and early 14th centuries. Located on the medieval caravan trade routes running from the major city of Dvin to capital city of Ani, the castle was involved in ensuring the safety of those roads and was actively integrated in the trade and cultural interconnections of the region.

The castle was designed as a single complex consisting of the buildings typical of the medieval castles and was enclosed by a defensive wall. The core of the castle is a three-storey citadel protected by the support-towers and surrounded by a church, two newfound monumental edifices - a ceremonial hall and a rectangular building (probably refectory), as well as a water supply system with subterranean cisterns which are located in different parts of the inner courtyard. The historical evidence, archaeological data and architectural analysis clarify the chronology and the construction phases of the castle as well as the architectural characteristics of the buildings.

Key words – history, architecture, High Middle Ages, castle, citadel, newfound secular buildings, construction phases.

ՓԵՐԻԱՀԱՅԵՐԻ ԾԻՍԱՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ. ՆՇԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՐՍԱՆԻՔ

Լիանա Ավետիսյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ lian19921992@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 23.11.2021, գրախոսվել է 25.11.2021, ընդունվել է տպագրության 05.07.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.2-287

Ներածություն

Իրանահայ ականավոր պատմաբան Լևոն Մինասյանը իր ստեղծագործություններից մեկում անդրադարձել է Իրանի Փերիա գավառի գյուղերում կատարվող տոներին՝ դրանք բաժանելով կրոնական-եկեղեցականի և ազգային-ժողովրդականի: Այդ տոներից յուրաքանչյուրն ունի իր առանձին ծեսերն ու սովորությունները: Փերիահայոց ամուսնական ավանդույթներն ունեն իրենց ուրույն դիմագիծը¹:

Ծատուր Զարգարյանի «Պարսկաստանի Փերիայի գավառի հայերի ազգագրությունից»² աշխատանքը լուսաբանում է Փերիա հայաշատ գավառի բնակչության ավանդական նիստուկացի տարբեր կողմերը: Այս արխիվային նյութերում արժեքավոր տեղեկություններ կան իրանահայ մշակույթի մասին, որոնք հեղինակը գրի է առել Հրազդան քաղաքում բնակվող հայրենադարձներից:

Օգտագործելով վերոնշյալ տեղեկությունները՝ ստորև ներկայացնում ենք Փերիա գավառի հայաբնակ գյուղերում նշանադրության (նըշան դըրէք) և հարսանիքի (հաշնիքի) սովորույթները և դրանց առնչվող ծեսերը³:

«Նըշան դըրէք»

Փերիա գավառում ամուսնությունը տեղի էր ունենում երկու ձևով՝ տղայի ցանկությամբ կամ (երբեմն) ծնողների կամքով՝ առանց հաշվի առնելու ամուսնացողի ցանկությունը: Երբ տղան ու աղջիկը սիրում էին միմյանց, տղան այդ մասին հայտնում էր իր ծնողներին և պահանջում, որ գնան այդ աղջկան նշան դնեն: Տղայի ծնողները խորհրդակցում էին միմյանց հետ և իրենց ազգականներից երկու տղամարդ ուղարկում աղջկա հոր տուն, որ աղջկա ծնողներից խոսք առնեն:

¹ Մինասյան 1998, 235-244:

² Զարգարյան 1980, ՀԱԻ արխիվ, թղթ. 26, էջ 1-16: ՀԱԻ արխիվում պահպանվում է նաև ազգագրագետ Դ. Դիլանյանի ֆոնդը, որը նույնպես անդրադարձել է Փերիա գավառի ազգագրական նյութերին, սակայն դրանց մեջ չի ընդգրկվել ամուսնահարսանեկան սովորույթները:

³ Բանասաց՝ Սընկերտ գյուղի ծնունդ, հետագայում Չարենցավանի (գրանցման ժամանակ՝ Լուսավան քաղաքային տիպի ավանի) բնակիչ Հակոբ Գալուստյան:

Խոսք առնողները այնտեղ զրուցում էին զանազան թեմաներով և խոսակցության մեջ հարցնում. «Բա դուք չեք ասում, որ ընչի՞, ու՛ր եք էկի, ընչի՞ եք էկի»: Աղջկա ծնողները պատասխանում էին. «Ո՞նց թե ուր եք էկի: Էկել եք, բարով եք էկի, մեր աչքի վրա տեղ ունեք, մեր պապերը իրար հեղ ախպեր են էլի»: Տղայի կողմից եկածները պատասխանում էին. «Ախպե՛ր, բանը տըրանում չի: Մենք էկել ենք ձեր տնից հարս տանենք, ձեր բաղից «ծաղիգ քաղենք»: Մեր տղեն ձեր աղջկան սիրում է, ի՞նչ կասեք»: Աղջկա ծնողներն ասում էին. «Մենք պիտի տղին տեսնենք, ի՞նչ տիպի տղա է, կարա՞ կնիգ պահի, թե՞ չէ: Աղջկան էլ պիտի հարցնենք տեսնենք ձեր տղին ուզու՞մ է, թե՞ չէ, ընչախն (հետո) էլ մե ջուղապ (պատասխան) կտանք»⁴:

Հաջորդ անգամ բերում էին տղային, աղջկա ծնողները տեսնում էին, իրար հետ խոսում, համաձայնության գալիս և «խոսք տալուց» առաջ էլ հարցնում իրենց աղջկան: Նա պատասխանում էր. «Դու՛ք գիտեք, կտաք՝ կառնեմ, չեք տա՛ չէ»: Աղջկա նման պատասխանից ու վերաբերմունքից հասկանում էին, որ համաձայն էր, և խոսք ուզողներին ասում էին. «Մատանի բերե՛ք, ձեր հարսն է»⁵:

Խոսք առնողները հարսնացուին համբուրում էին, մի փոքր նվեր էլ էին տալիս ու վերադառնում տղայի տուն: Այնուհետև տղայի ծնողներն ու բարեկամները ապագա հարսի համար պատրաստում էին նվերներ. մի զարդարած դանդ (շաքարի կտոր), մի քանի նուռ, սերկևիլ, չամիչ, բադամ (նուշ), մի քանի լուլա նաբաթ (զլանաձև սառնաշաքար), կտորեղեն (զգեստ կարելու համար), վզնոց և մատանի:

Այս ամենը վերցնում էին ու գնում ապագա խնամինների («խնամոնց») տուն: Վառվող մոմերը ձեռքներին՝ մտնում էին աղջկա տուն: Աղջկա ծնողները խնամիներին բարի գալուստ մաղթելուց հետո հյուրասիրում էին ավանդական սովորույթների համաձայն: Երեք կամ չորս հարս (նորահարս) ու աղջիկ, մտնում էին աղջկա մոտ՝ շոր էին հագցնում (զգեստավորում), գլխին կապում էին չթից պատրաստած լաչակ, վրան մի բարակ յայլուխ (թաշկինակ) քաշում, որն էլ ծածկում էր հարսի երեսը: Ապագա հարսնացուին բերում կանգնեցնում էին ապագա «կէտուրկէսրարի» մոտ: Ապագա սկեսրայրը մատանիներ էր դնում հարսի մատներին, վզնոցը զցում վիզը, այնուհետև մյուս հարազատները հանձնում էին իրենց նվերներն ու շարունակում կերուխումը:

Այնքան ժամանակ, քանի դեռ հարսնացուն մնում էր նշանված, ամեն անգամ տղայի հարազատներին տեսնելիս նրանց հետ չէր խոսում, իսկ բարևի փոխարեն գլուխ էր տալիս ու անցնում: Իսկ երբ սկեսրանց կողմից գալիս էին հարսին տեսնելու, նա խոնարհվում էր, գլխով բարևում, բայց նրանց մոտ չէր նստում, չէր ուտում, չէր խմում: Այդ օրերին նրա բերանը շարունակում էր մնալ յամշաղով (թաշկինակով) ծածկված, ինչը խորհրդանշում էր, որ նա զրկված է փեսացուի բարեկամների մոտ խոսելու իրավունքից:

⁴ Չարգարյան 1980, թ. 26:

⁵ Չարգարյան 1980, թ. 26:

Ըստ Լ. Մինասյանի, նախքան հարսնացուի տուն գնալը երիտասարդի կողմը սովորաբար ստանում էր նրա ծնողների համաձայնությունը, և մի երեկո տղայի կողմից մի քանի հոգի գնում էին ապագա հարսնացուի տուն: Հարսնացուի տուն գնացողները խոսակցության ընթացքում ասում էին. «Եկել ենք ձեր բաղից ծաղիկ քաղենք». եթե հարսնացուի կողմը համաձայն էր լինում, ասում էին՝ «Շնորհավո՛ր լինի», իսկ եթե համաձայն չէր լինում, ասում էին՝ «Մեր բաղի ծաղիկը դեռ փոքր է և չի բացվել». այսպիսով մերժում էին, թեև նման դեպքեր քիչ էին պատահում: Ընդունելու պարագայում հարսնացուին, մի քող երեսին գցած, բերում հյուրասենյակ, համբուրում էին նրան և իրենց նվերները տալիս՝ դրամ, կանաչ ու կարմիր թելերով փաթաթված նաբաթ-շաքար, ինչպես նաև մի մատանի⁶:

«Հաշնիք» (հարսանիք)

Փերիահայոց մեջ ընդունված է եղել հարսանեկան արարողությունների համար պատրաստությունը սկսել անմիջապես նշանադրությունից հետո:

Տղայի ծնողները, երբ որոշում էին հաշնիք անել, տղայի հորն ուղարկում էին խնամիների տուն «վադա» («վաղդե») (ժամանակ և թույլտվություն) առնելու հաշնիքի համար, այսինքն, պայմանավորվում էին, թե երբ կարող էին գալ իրենց հարսին տուն տանելու, հարսանիք անելու:

Ավանդական սովորույթի համաձայն, եթե տղայի ընտանիքը հարուստ էր, ապա աղջկա ծնողները իրենց համաձայնությունը տալուց հետո պայմանավորվում էին հարսանեկան ծախսերի վերաբերյալ: Ըստ Զարգարյանի, նրանք կիսահրամայական և կիսախնդրական ձևով ասում էին, օրինակ. «500 թուման փող, չորս դիդր⁷ բրինձ, երկու դիդր եղ (յուղ), դիդրուկես չամիչ, մէկ դիդր նուռ բե՛ր ու արի՛, «վադա» կտանք»: Իսկ եթե աղքատ էր լինում, ասում էին. «Ինչ կարող եք՝ տվեք»: Կէսրանք համաձայնվում էին ու խոստանում, որ կկատարեն այն, ինչ պահանջել էին աղջկա ծնողները:

Տղայի հայրը տուն հասնելիս տնեցիներին հանձնարարում էր, որ պատրաստեն խնամիների պատվերները, ապագա հարսի շորերը, մաշիկներն ու նրան պատկանելիք այլ իրեր, կապում էին մի բօջայի (կապոց) մեջ ու մի քանի հոգու օգնությամբ այն ուղարկում հարսի տուն:

Տղայի բարեկամները վադա առնելուց հետո հավաքվում էին, «հրավերաթուղթ» գրում և տալիս էին գյուղի դաշտվանին⁸ կամ տիրացուին, որոնք թուղթը տանում հարազատներին էին ցույց տալիս ու հայտնում հաշնիքի սկսվելու մասին: Հարազատներն այն ստորագրում էին՝ ասելով. «Աչքներդ լույս, կգանք հաշնիք,

⁶ Մինասյան 1998, 235-236:

⁷ Ընդունված կշռաչափերից է, մեկ դիդրը հավասար է վեց կիլոգրամի:

⁸ Դաշտվանը տվյալ համատեքստում մունետիկն էր, որն ապահովում էր մասնակիցների ներկայությունը հարսանիքներին:

Աստված շնորհավոր անի»։ Հարսանիքից մեկ օր առաջ խորհրդակցում էին ու որոշում, թե ովքեր պիտի մակար (փեսացուի ընկեր)՝⁹ գնան հարսին բերելիս։

Առաջին օրը սազուդընգլ(ի)ով (զուռնա-դիողով) տղայի տանը ուրախանում, երգում-պարում էին մինչև լույս։ Հաջորդ օրը առավոտյան նվագով, խաղ ու պարով գնում էին հարսի տուն։ Ճանապարհի կեսից երկու տղամարդ էին ուղարկում, որ շուտ հասնեն խնամիներին և լուր տան, որ հաշնիքը գալիս է։ Լուր տանողներին դիմավորելիս խնամիք ասում էին. ««Աղվեսները» եկան»։ Խնամիները դիմավորում էին «հաշնքավորներին», հրավիրում հանդեսի տուն։

Հաշնքատանը (աղջկա հոր տանը) նախօրոք հատուկ տեղ էին պատրաստում դաքորի (փեսայի, թագավորի) ու քավորի համար, որոնք կանգնում էին կողք կողքի, ու սկսում էին խնջույքը, որ տևում էր մինչև ուշ գիշեր։ Երկրորդ օրվա հանդեսի վերջում մակարատերերը¹⁰ իրենց մակար-հյուրերին տուն էին տանում՝ մի քանի ժամով քնել-հանգստանալու համար։

Հաշնիքի երրորդ օրը, առավոտյան շուտ, սազանդարն արթնանում էր ու սկսում նվագել իր սազը։ Փեսայի իգական սեռի ազգականները հավաքվում էին, հարսի ձեռքերը հինա դնում։ Իսկ այդ ընթացքում սազանդարն ու ղընգընչին նվագում էին, հաշնքավորներն ու խնամիք պարում այնքան, մինչև որ հարսի ձեռքերի հինան չորանար։ Հետո հարսին տանում էին մի առանձին սենյակ զգեստավորելու։ Նորահարսի մեջքին կապում էին մետաքսից գոտի, գլխին՝ գլխաշոր (լաչակ), բերանը կապում (ծածկում) յամշաղով։ Երեսը ծածկում էին քողով, գլուխը՝ կարմիր շորով¹¹, հետո զգեստավորած հարսին դուրս էին բերում ու տանում ժամ (եկեղեցի) պսակելու։

Տերտերն ու տիրացուն սպասում էին հարսին ու փեսային, քահանան պահպանիչ էր ասում, նրանց երեսները իրար կողմ ուղղում, մի մետաքսյա շորով ծածկում նրանց գլուխները և խաչը հանձնում քավորին, որն էլ այն պահում էր հարսի ու դաքորի գլխին։ Պսակադրության ծիսակատարությունից հետո քահանան Ավետարանը հանձնում էր փեսային, ապա, վառված մոմերը ձեռքերին, նրանք դուրս էին գալիս ժամից, ուղղվում դեպի հարսի հոր տուն, ճանապարհին տերտերն ու տիրացուն իրենց երգն էին երգում, սազանդարն էլ նվագում էր համապատասխան եղանակը։

⁹ Սովորույթի համաձայն, հաշնքավորների ձեռքին փայտ էր լինում։ Խնամիներից ու գյուղի բնակիչներից ոմանք գալիս էին ընդառաջ ու մինչ նրանց հանդեսի տուն մուտք գործելը, վերցնում էին նրանց ձեռքի փեղերն ու հրավիրում իրենց տուն, որպես հյուր. նրանց էլ անվանում էին մակար։

¹⁰ Մակարներին հյուրընկալող ընտանիքները։

¹¹ Նախքան եկեղեցի տանելը հարսին զգեստավորում էին, հետո բերում էին դաքորի (փեսայի) ու քավորի մոտ, կանգնեցնում էին նրանց հետևում, ու փեսայի վզից կապված շալի ծայրը տալիս հարսի ձեռքն ու այդ հանդիսավոր արարողության պահին, երգ ու պարով հաշնքավորներին ուղեկցում էին դեպի ժամ, որտեղ էլ պիտի կատարվեր ամուսնության ծեսը։

Եկեղեցուց տուն դարձող ժողովուրդը հյուրասիրվում էր հարսի հոր տանը, հանգստանում, ապա դուրս գալիս՝ ուղևորվելով դեպի փեսայի տուն¹²:



Նկ. 1. Հարսանիք Փերիայում (ՀԱԻ արխիվ, Սրբ. Լիսիցյանի ֆոնդ, թղթ. 3)

Նորահարսին նստեցնում էին ձիու վրա և ուրախությամբ, պարելով հեռանում նրանց տնից: Նորահարսին հոր տնից ճանապարհում էին հարսնախաչերն ու հարսնաքուրը:

Երբ հասնում էին փեսայի տուն, նորահարսին իջեցնում էին ձիուց, տան դռան առաջ գորգ էին փռում, հարսը վրայով քայլելուց հետո կռանում ու հավաքում էր «խալին» և դնում էր մի անկյունում: Հետո նորահարսին փեսայի ու քավորի մոտից տանում էին մի առանձին սենյակ: Փեսան ու քավորը գնում էին հարսանյաց հանդեսի սրահը՝ մէջլիսի տուն, և սկսվում էր երրորդ գիշերվա հարսանյաց խնջույքը:

Փեսայի տանը՝ մէջլիստանը հյուրասիրվում էին, երգում-պարում, ուրախանում մինչև լույս: Հետո երկու հարս, նորահարսի թևերից բռնած, բերում պարեցնում էին ու տանում իր սենյակը՝ օթաղը:

Առավոտյան քահանան գալիս էր ու «Իսաչվերաց» ասում, որով էլ վերջանում էր հարսանյաց կրոնական արարողությունը: Նորահարսի հետ եկած հարսանքավորները ստանում էին իրենց նվերներն ու վերադառնում տուն:

Իբրև ազգային ու ժողովրդական ավանդույթ և հին սովորույթ՝ նորահարսի երեսը 15 օր չէին բացում: Երբ լրանում էր 15 օրը, հավաքվում էին փեսայի բարե-

¹² Զարգարյանը նշում է, որ եկեղեցուց հետո գնում էին հարսի տուն, ինչը շատ տարօրինակ է: Համեմատելով ասեմք՝ Մինասյանը գրում է, թե եկեղեցուց հետո հարսն ու փեսան գնում էին փեսայի տուն:

կամները, հանում հարսի երեսի քողը, նրան դուրս բերելով սենյակից՝ տանում էին սկեսուր-սկեսրայրի սենյակ, ապա երեսը ծածկում իր լաջակի տուտով (ծայրով)¹³:

Հարսանիքից 40 օր հետո նորահարսի հարազատները գալիս էին իրենց աղջկան այցելության. դա կոչվում էր «գլխավլա»: Դրանից հետո նորահարսին իրավունք էին տալիս գնալու աղբյուր՝ ջուր բերելու, նաև հարևանների տուն գնալ-գալու:

Գլխավլայից հետո աղջկա ծնողները նորահարսին հերանց (դարձ) էին տանում, մեկ-երկու շաբաթ պահում ու հետ բերում սկեսրանց տուն:

Լևոն Մինասյանը, անդրադառնալով փերիահայոց հարսանիքին, նշում է, որ գյուղերում հարսանիքները սովորաբար տևում էին երեքից չորս օր: Եթե հարսնացուն նույն գյուղից էր լինում՝ երեք, իսկ եթե այլ վայրից՝ չորս օր: Հարսանիքները շատ անգամ սկսվում էին երկուշաբթի կամ երեքշաբթի (եթե հարսնացուն այլ գյուղից էր), որպեսզի պսակի օրը ազատ լիներ արարողություններից և չհամընկներ կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին:

Հարսանիքին փեսան մի քանի հոգու հետ գնում էր հարսի գյուղ, նրան ուղեկցող երիտասարդները (մականներ) ձեռքներին փայտ էին ունենում, նախքան գյուղ մտնելը սպասում էին մինչև խնամիները համաձայնության էին գալիս, և երբ ստանում էին այդ իրավունքը՝ նվագով մտնում էին գյուղ, իսկ գյուղացիներն էլ դիմավորում էին նրանց, ամեն մեկը մի մականի իր տուն հյուր էր տանում և հյուրասիրում:

Հարսանիքի նախորդ օրը մսացու էին մորթում, և եթե հարսնացուն նույն գյուղից էր, հրավիրում էին նաև խնամիներին: Երեկոյան փեսային նվագով բաղնիք էին տանում, դրանից հետո էլ սկսվում էր փեսայատեսը՝ քավորի և նրա ընտանիքի մասնակցությամբ: Փեսայի և քավորի հարազատները նրանց շաքար և այլ նվերներ էին տալիս:

Նույն երեկոյան սագի նվագակցությամբ խարջ (բաժին) էին տանում հարսի տուն, աղջկա ձեռքերը հինա դնում: Այդ արարողության ժամանակ հարսը ձեռքերը չէր բացում, մինչև որ լավ նվեր կամ դրամ ստանար: Հարսանքավորները պարում էին, քահանան նշան էր օրհնում, դաքորին նոր զգեստներ էին հագցնում և «ծաղիկ կանչացնում» (դրամական նվեր տալիս)¹⁴:

Հաջորդ օրը փեսային սագով տանում էին հարսի տուն, որտեղ տեղի էր ունենում նշան օրհնելու արարողությունը: Հարսի շորերն օրհնելուց, հոր ու մոր օրհնանքն ստանալուց հետո գնում էին եկեղեցի:

¹³ Սովորույթի համաձայն, սկեսուր-սկեսրայրը հարսին փող էին տալիս՝ որպես «երեստես», որից հետո հարսը բացում էր իր երեսը նրանց մոտ, իսկ քիթ-բերանը պահում ծածկած՝ չխոսելով ոչ մեկի հետ, մինչև որ սկեսուրի և սկեսրայրի թույլտվությամբ իրավունք էր ստանում խոսելու տան փոքրերից մեկնումեկի հետ, որի միջոցով էլ պետք է լսեր ու պատասխաներ տնեցիներին: Ու այդպիսով նորահարսը սկսում էր ապրել նոր տանը որպես տան անդամ:

¹⁴ «Ծաղիկ կանչացնել» կամ «ծաղ կանչել» հարսանիքից հետո էր կատարվում: Գյուղի դալաքը (սափրիչը) կամ ժամկոչը, մատուցարանը ձեռքին, կանգնում էր տան վերևի մասում՝ հյուրերի կողքին և ներկաների նվերները բարձրաձայն հիշատակելով՝ դնում սկուտեղի մեջ: Վերջում հաշվում էր դրամը և տալիս փեսայի ընտանիքին:

Եկեղեցի գնալիս հատուկ մեղեդի էին նվագում, որ հարսի բարեկամներն արտասվեին, քանի որ իրենց աղջկան տանում էին: Եկեղեցի մտնելիս դռան վերևում խաչի նշան էին գծում՝ չար սատանայի աչքը հանելու և նորապսակներին չարից հեռու պահելու համար, իսկ եկեղեցուց դուրս գալիս «Արեգակն արդարութեան»¹⁵ շարականն էին նվագում. Ավետարանը դրվում էր փեսայի կրծքին:

Պսակի ծիսակարգից հետո հարս ու փեսայի վզին կանաչ ու կարմիր թելերից նարոտ էին կապում, տան դռան առջև էլ մի քրեղան (կավե աման) դնում, որը փեսան կտրուր՝ չարը խափանելու նպատակով:

Երբ տան դռնից ներս էին մտնում, սկեսուրը նողմ¹⁶ ու չամիչ էր շաղ տալիս հարսի գլխին, իսկ երբ բակ էին մտնում, հարսը կանգնած էր մնում սենյակի դռան առջև, մինչև սկեսուրը գար և նվեր տար, կամ երբեմն էլ սկեսուրը իր դուլաբի (պահարանի) բանալին էր տալիս, որից հետո հարսը գնում էր ներս:

Պսակի օրը՝ երեկոյան, փեսային աներանց տուն «գող» էին տանում այլ հյուրերի հետ և հյուրասիրում: Հարսի հարազատները հավաքվում էին փեսայի շուրջը և մի քանի ժամ փորձում էին փեսային խոսեցնել, փեսան էլ փորձում էր շատ չխոսել, որ անհարմար իրավիճակում չհայտնվեր:

Փերիայում, ըստ Մինասյանի, հարուստ էին նաև հետամուսնական ծիսական գործողությունները:

Պսակի հաջորդ օրը փեսայի տանը «որս» էր արվում. բարեկամներին էին հրավիրում, որի ընթացքում փեսան դիոլ-զուռնայի նվագի ժամանակ գառ, աքլոր էր մորթում կամ նուռ կտրում և վերև գցում, որը տղաները բռնում էին օդի մեջ, իսկ գառն ու աքլորը խորովում էին և հյուրասիրում հյուրերին:

Հարսանիքներին մատուցվող ուտելիքներից հայտնի էր յախնին (մսախաշու-արգանակ), երբեմն էլ փլավ և խորտիկ էին հյուրասիրում, հիմնականում դա կախված էր հարսանքատիրոջ հնարավորություններից:

Վերջին օրը երեկոյան քահանան գնում էր հարս ու փեսայի սենյակը, աղոթք ասում, «Խաչվերաց» ծեսը կատարում ու նրանց վզից արձակում պսակի ժամանակ կապած նարոտը: Մինչև քահանայի գալը քավորին սագով տանում էին իրենց տուն:

Նույն գիշերը հարսն ու փեսան առազաստ էին մտնում. առանձին սենյակի մի անկյունում վարագույր էին կախում, և հարսը միշտ դրա հետևում էր մնում մեկ-երկու շաբաթ մինչև որ կամաց-կամաց դուրս գալով՝ մտերմանում էր իր նոր ընտանիքի անդամների հետ:

Համեմատական բնութագիր

Համեմատելով Զարգարյանի և Մինասյանի նյութերը՝ տեսնում ենք, որ նրանց բերած տվյալների մեջ կան ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Մինասյանը անդրադարձել է հարսանիքի արարողության ժամանակ կա-

¹⁵ Ս. Ներսես Շնորհալու «Առաւօտ լուսոյ» շարականը:

¹⁶ Շաքար, որի մեջ կար հիլ, համեմի սերմ, քերած ընկույզ, նուշ և գետնանուշ:

տարվող մի շարք գործողությունների, որոնք չի հիշատակել Զարգարյանը իր նյութերում. դրանք են՝ մսացու պատրաստելը, փեսային բաղնիք տանելը, հարսանիքի հրավիրյալների բերած նվերները հայտարարելը, նշան օրհնելու և եկեղեցում կատարվող պսակի արարողությունները, դրանից հետո փեսայի տուն գնալը և սկեսուրի՝ նորահարսին դիմավորելը, ինչպես նաև հետամուսնական ծիսական արարողությունների նկարագրությունը՝ փեսային աներոջ տուն «գող» տանելը, փեսայի տանը «որս» կազմակերպելը, ինչպես նաև հարսանիքի ժամանակ մատուցվող ուտեստները:

Զարգարյանը նկարագրել է հարսանիք կազմակերպելու ժամանակ խնամիների միջև պայմանավորվածությունը, թե ով ինչ ծախս պետք է աներ: Նա խոսում է նաև հարազատների կողմից հարսանիքի հրավիրատոմսերը ստորագրելու մասին, մանրամասն նկարագրում հարսի հագուստը: Ներկայացնում է պսակի արարողությունից հետո հարսի հոր տուն գնալը, այնտեղ հյուրասիրվելը, ինչը շատ տարակուսելի է, իսկ Մինասյանի նյութերում եկեղեցուց հետո գնում են ուղղակի փեսայի տուն: Զարգարյանը անդրադարձել է նաև գլխավային:

Այս տարբերություններն այնքան էական են, որ բացատրության կարիք ունեն: Դրանք կարող ենք կապել այն բանի հետ, որ Մինասյանը նյութերը գրի է առել տեղում՝ Փերիայում, և ժամանակագրական առումով ավելի վաղ, քան Զարգարյանը, որը դրանք գրի է առել Հրազդանում ապրող հայրենադարձներից 1980-ական թվականներին:

Կարծում ենք՝ հնարավոր է, որ դեռևս մնացած լինեն որոշ տվյալներ նույնպես, որոնք բացահայտելու համար անհրաժեշտ է հետևողական ուսումնասիրություն:

Հարսանեկան ծիսական առարկաները

Եթե Լ. Մինասյանի ուշադրության կենտրոնում են հարսանեկան արարողությունները, ապա Ծ. Զարգարյանի նյութերում շեշտը դրվում է մի շարք առարկական խորհրդանիշների մանրամասն նկարագրության և կիրառության վրա:

Հարս ու փեսայի մատանիները

Փերիայի հայկական գյուղերում հարսանիքներին փեսայի համար պատվիրում էին արծաթե կանաչ ակով մատանի, իսկ հարսի (նորահարսի) համար՝ կարմիր ակով: Սովորության համաձայն՝ տղան իր մատին դնում էր կանաչ թելով մատանին, իսկ աղջիկը՝ կարմիր թելերով փնջած («էրկու փունջ») կարմիր մատանի: Պսակի ժամանակ փեսան հանում էր իր մատի մատանին դնում աղջկա մատին, իսկ աղջկա մատի փնջած կարմիր մատանին հանում, դնում էր իր մատին:

Հարսանեկան մասունքներից էր **հարսի փունջը**, որը նորահարսի քողի վրայից է ամրացվել: Այդպես է կոչվել մազաթելը (ծամթելը), որը հարսանիքներին թիկունքի կողմից մազերի վրա կրում էին ամուսնացող աղջիկները, տոնին մասնակցող նորահարսները: Մազաթելի մեջ օգտագործված փնջերը, ուլունքա-

ծոպքերը և մյուս զարդանախշերը, ըստ Զարգարյանի, խորհրդանշել են պտղաբերության, բուսապաշտության, չարի և բարու, նորահարսի մեջքի ամրակազմության գաղափարները: Ժամանակակից Հայաստանում հարսի փունջը ծաղկեփունջն է, որը հարսը հարսանեկան արարողության ժամանակ նետում կամ նվիրում է չամուսնացած աղջիկներից մեկին:

Կանաչ-կարմիր (կոզբանդ). այս առարկաները, որոնք Զարգարյանը հմայիլներ է անվանում, խորհրդանշում են՝ կանաչը՝ կյանք, կարմիրը՝ արև (արյուն), ինչպես նաև ժառանգության, սերնդատվության, զույգերի մեկ մարմին կազմելու գաղափարները: Ցավոք, ո՛չ Լ. Մինասյանը, ո՛չ էլ Ծ. Զարգարյանը չեն նկարագրել, թե հատկապես ինչ ձևով են կապել կանաչ-կարմիրը փերիահայերը:

Խեչփունջը հարսանեկան խորհրդանշիչ է, որը հայտնի է նաև «թագ» անունով: Այն պատրաստել են տղամարդիկ կանաչ, կարմիր, կապույտ և սպիտակ թելերից, որոնց կենտրոնամասում նախօրոք փաթաթում էին սպիտակ բամբակ:

Փնջած փետ (կենաց ծառ). այս առարկան փերիահայոց մեջ հետհարսանեկան ծիսաշարին է վերաբերում: Այն պատրաստում էր առաջին անգամ հոր տուն հյուր գնացած նորահարսը և նվիրում ամուսնու եղբոր տղաներին: Ըստ Զարգարյանի՝ փնջած փետը անարատության և հավատարմության խորհրդանշիչն էր:

Օղջրի հեքալ (ոչխարի հմայիլ). երբ նորահարսն առաջին անգամ ոտք էր դնում փեսայի տուն, տղայի հարազատները, ավանդույթի համաձայն, նորահարսին և փեսային ոչխար էին պատիվ անում, հարսն էլ մեկ ընդհանուր եռանկյունուց պատրաստած փնջած հեքալը կախում էր ոչխարի վզից:

Փերիահայերի հարսանեկան կարևոր խորհրդանշիչներից էին հարսանեկան «**շաքարները**»: Զարդարուն շաքարը պատրաստվում էր փեսայի տանը՝ շաքարից ու մեղրամոմից, վրան նկարում էին փեսայի և հարսի անվանատառերը, տարբեր նախշեր և խորհրդանշաններ¹⁷: Ե՛վ իրանահայերի, և՛ իրանցիների հարսանիքների ժամանակ առկա էր այս շաքարը, միայն զարդարանքներն էին տարբեր: Ավելի հին ժամանակներում այդ նույն շաքարին տիկնիկի տեսք էին տալիս, որը հարսի տուն էին տանում ձեռքերը հինա դնելու օրը¹⁸:

Փերիայի շրջանում հարսանիքներում հաճախակի էր կանաչ և կարմիր գույների համադրությամբ առարկաների կիրառումը, որը չի եղել այլ շրջաններում: Բացի կոզբանդից, որ կա ազգագրական բոլոր շրջաններում, փերիահայերի շրջանում կանաչ-կարմիրի օգտագործումը հանդիպում էր նաև նշանադրության ժամանակ՝ հարսին մատանի նվիրելիս, տալիս էին նաև կանաչ-կարմիր թելերով փաթաթված շաքարի կտոր: Կանաչ-կարմիր թելերի գործածումը առկա էր նաև հարսի ու փեսայի մատանիներ փոխանակելու ժամանակ: Խեչփնջի պատրաստման ժամանակ ևս օգտագործվել են կանաչ-կարմիր թելեր:

¹⁷ Բանասաց՝ Նարինե Սարգսյան, 1981 թ. (Թեիրան):

¹⁸ Բանասաց՝ Արմենուի Դավթյան (Աթոլյան):

Ըստ մեզ հայտնի նյութերի՝ անհասկանալի է մնում ծիսական որոշ առարկաների կիրառումը, ինչպես նաև այն, թե դրանց որ մասն էր հարսանիքից հետո ոչնչացվում, որ մասը պահվում:

Եզրակացություններ

Հետազոտությունները ցույց են տալիս, որ Փերիայում և Հայաստանում բնակվող փերիահայերի հարսանեկան արարողություններին բնորոշ են որոշակի առանձնահատկություններ, ինչպես, օրինակ, հարսանիքի ժամանակ եկեղեցու մուտքի մոտ հմայական-պաշտպանական գործողությունները, որոնց չենք հանդիպում Հայաստանի այլ վայրերում: Եկեղեցի մտնելիս դռան վերևում խաչի նշան էին նկարում՝ չար սատանայի աչքը հանելու և նորապսակներին չարից հեռու պահելու համար:

Փերիայի հարսանիքներում առկա են հատուկ տեղական անվանումներ, օրինակ, հարսի տուն խարջ (բաժին) տանելը, ծաղիկ կամ ծաղ կանչացնելը՝ հարսանիքից հետո նվերներ հայտարարելը: Պսակի օրը՝ երեկոյան, փեսային աներանց տուն «գող» էին տանում և հյուրասիրում, իսկ պսակի հաջորդ օրը «որս» էին կատարում:

Փերիահայերի հարսանիքներում ընդգծված էր խորհրդանիշների դերը: Հարս ու փեսայի մատանիները՝ կանաչ-կարմիր քարերով, այդ նույն գույնի թելերով էին փաթաթված. հարսանիքի ժամանակ հարսն ու փեսան դրանք փոխանակում էին:

Ժամանակակից Հայաստանում հարսի փունջը ծաղկեփունջն է, որը հարսը հարսանեկան արարողության ժամանակ նետում կամ նվիրում է չամուսնացած աղջիկներից մեկին, իսկ փերիահայերի մոտ՝ հարսի փունջը, որը պատրաստվում էր ծամթելից, ուլունքներից և ամրացվում հարսի քողին:

Հարսանեկան «շաքարի» կամ «շաքար-տիկնիկի» օգտագործումը, որը նույնացվում է քաղցրի հետ, պատրաստվում էր շաքարից ու մեղրամոմից, և տանում էին հարսի տուն՝ հինադրեքի ժամանակ: Սա իրանահայերի հարսանիքի ևս մեկ յուրահատկությունն էր:

Լ. Մինասյանի և Ծ. Զարգարյանի աղբյուրներում կան բավականաչափ հակասություններ և տարբերություններ: Այդ տարբերությունները խիստ էական են: Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Մինասյանը նյութերը գրի է առել տեղում՝ Փերիայում, ժամանակագրական առումով՝ ավելի վաղ, քան Զարգարյանը, որը դրանք գրի է առել Հրազդանում ապրող փերիահայերից (1980-ական թթ.):

Խնդիրը դեռևս հետազոտության կարիք ունի՝ հատկապես այն փոփոխությունները նկատի ունենալով, որոնք կատարվել են փերիահայոց հարսանեկան ավանդույթների մեջ հայրենիք տեղափոխվելուց հետո:

Գրականություն

ՀԱԻ արխիվ, Ծ. Զարգարյանի ֆ., թղթ. 26, էջ 1-16:

Մինասյան Լ., 1998, Գիտական բառ ու բան, Նոր Զուղա, տպ. Սբ. Ամենափրկիչ վանքի, 421 էջ:
Ավետիսյան Լ., 2021, Դաշտային ազգագրական նյութեր, Երևան:

ՓԵՐԻԱՀԱՅԵՐԻ ԾԻՍԱՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ. ՆՇԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՐՍԱՆԻՔ

Լիանա Ավետիսյան

Ամփոփում

Իրանի Փերիա գավառի հայաբնակ գյուղերում կատարվող նշանադրության («նըշան դըրեք») և հարսանիքի («հաշնիքի») սովորույթներին ու ծեսերին անդրադարձել է Լևոն Մինասյանը: Ծառուր Զարգարյանը այդ ամենին վերաբերող նյութերը հավաքել է հայրենադարձված փերիահայերից:

Փերիահայերի հարսանիքը տևում էր երեքից չորս օր: Այն սկսվում էր խնամիների՝ իրար տուն գնալուց, հարսանիքի հետ կապված նախապատրաստական պայմանավորվածություններ ձեռք բերելուց հետո:

Հարսանիքի արարողության ժամանակ կատարվող գործողություններից էին՝ մսացու պատրաստելը, փեսային բաղնիք տանելը, նվերներ հայտարարելը, նշան օրհները, եկեղեցում կատարվող պսակի արարողությունները, դրանից հետո փեսայի տուն գնալը և սկեսորի դիմավորելը նորահարսին, գլխավան: Հետամուսնական սովորույթներից էին փեսային աներոջ տուն «գող» տանելը, փեսայի տանը «որս» կազմակերպելը, ինչպես նաև հարսանիքի ժամանակ ուտեստներ մատուցելը:

Փերիահայերի շրջանում ընդգծված սովորույթ էր նաև հարսանեկան ծիսական առարկաների կիրառումը, ինչպես հարս ու փեսայի մատանիները, հարսի փունջը, կանաչկարմիրը (կոզբանդ), խեչփունջը, փնջած փետը, օղջրի հեքալը, հարսանեկան շաքար-տիկնիկը:

Բանալի բառեր՝ Փերիա, նըշանդրեք, հաշնիք, խեչփունջ, հարսի փունջ, փնջած փետ, հարսանեկան շաքար:

РИТУАЛЬНО-КУЛЬТОВАЯ ЖИЗНЬ ПЕРИЙСКИХ АРМЯН: ПОМОЛВКА, СВАДЬБА

Лиана Аветисян

Резюме

Изучением ритуально-культурной жизни, в частности, ритуала помолвки («ншандрек») и свадьбы («хашник») в армянонаселенных деревнях иранской провинции Перия занимался Левон Минасян. Эти исследования пополнились материалами Цатура Заргаряна, собранными у репатриированных перийских армян.

Свадьба перийских армян длилась от трех до четырех дней. Родственники с обеих сторон приходили друг к другу в гости, чтобы подготовиться к свадьбе.

Свадебная церемония включает в себя: поход жениха в баню, озвучивание подарков, церемонию благословения обручения, свадьбу в церкви, далее – посещение дома жениха и приветствие невесты со стороны свекрови, *глхалва* (мытье головы). Имели место также постсвадебные обряды (препровождение жениха в

роли «вора» в дом тестя, организация ритуальной «охоты» в доме жениха), а также подача всяких блюд на свадьбе.

Среди армян Перии также широко распространено использование свадебных ритуальных предметов: кольцо жениха и невесты, волосной убор невесты, зелено-красный *козбанд* (повязка накрест), *хечпундж* (символическая корона), украшенное дерево, *охчри хекал* (амулет), свадебная сахарная кукла.

Ключевые слова – Перия, помолвка, свадьба, букет невесты, хечпундж, украшенное дерево, свадебный сахар.

THE RITUALISTIC AND CULTUC LIFE OF THE ARMENIANS OF PERIA: ENGAGEMENT, WEDDING

Liana Avetisyan

Abstract

Traditions and rituals of engagement (*n'shan d'nel*) and wedding (*hashnik*) in the villages of Iran's Province Peria inhabited by the Armenians were described by Levon Minasyan. As additional archival sources serve materials gathered by Tsatur Zargaryan among the repatriated Armenians from Peria.

The wedding of Peria Armenians lasts three to four days, starting with reciprocal visits of the bride's and the bridegroom's relatives to acquire agreement concerning preparation for the wedding.

Several wedding ceremonies are described such as: slaughtering of the animal, taking the bridegroom to the bath, advertisement of presents, blessing of the engagement, nuptial in the church, subsequent procession to the bridegroom's home and greeting of the mother-in-law for the bride, "headwashing", after-wedding ceremonies such as taking the bridegroom as a "thief" to the house of his father-in-law, organization of the ritual "hunt", as well as dishes served during the wedding.

Peria Armenians used such ritual objects as the rings of the bride and the bridegroom, the hairdress of the bride, the red and green band of the bridegroom, *khechpoonj*, the embellished tree, the sheep's talisman, a wedding doll-sugar.

Key words – Peria, engagement, wedding, *khechpoonj*, embellished tree, wedding sugar.

МОРУС (МАРГАР) АСРАТЯН
(К 120-летию со дня рождения)



Кандидат исторических и филологических наук, доцент, член-корреспондент Академии наук Армянской ССР, заслуженный деятель науки Морус Асратян является видным представителем научной и научно-педагогической интеллигенции Советской Армении периода становления и развития общественно-гумани-

тарных наук и высшего образования нашей республики. Более 50 лет все свои силы, знания и опыт он отдал служению Отечеству. М. Асратян был высокоэрудированным ученым, настоящим подвижником науки, его называли «ходячей энциклопедией». Только перечень занимаемых в трудовой деятельности должностей (см. автобиографию) свидетельствует о больших организаторских способностях Асратяна, сумевшего сплотить вокруг себя коллективы единомышленников. Плодотворной была также многолетняя педагогическая работа в Ереванском государственном университете и в Армянском педагогическом институте.

Разнообразен круг научных интересов М. Асратяна: история армянского народа, революционные движения Армении и Закавказья, филология, археология, архитектура. Широкое признание получили следующие труды Асратяна: «Сурен Спандарян (сборник документов и воспоминаний)», «Майское восстание. 10 лет», «Некоторые принципиальные вопросы из истории первобытнообщинного и рабовладельческого строя», «Политическое и экономическое положение Армении в XV-XVII веках», учебник «История армянского народа. Часть первая» и др. В 1975 г. в Бейруте в соавторстве с Вараздатом Арутюняном была издана его книга «Памятники Армении» (текст на армянском, английском и французском языках). Среди неопубликованных работ отметим: «Хнацах», «Брнакот», «Армяно-иранские отношения», «Археологические раскопки и исследования», «Географический фактор в истории армянского народа», «К вопросу о происхождении армянского народа».

В годы, когда имя национального героя полководца Андраника Озаняна было под запретом, М. Асратян выступил в его защиту от клеветы и содействовал в публикации сборника документов и материалов об Андранике. В своем отзыве от 22 июля 1962 г. он писал: «Андраник являлся самой яркой, самой любимой и по-

пулярной личностью вооруженной борьбы национально-освободительного движения армянского народа».

М. Асратян внес неоценимый вклад в изучение жизни и творчества Саят-Новы, в саятноведение. Его исследование «Критика и толкование текста армянских песен Саят-Новы» 30 декабря 1942г. было представлено на заседании ученого совета Института литературы и языка Армянского филиала АН СССР на соискание ученой степени кандидата филологических наук. Ученый совет, в который входили такие корифеи как Иосиф Орбели, Манук Абебян, Рачия Ачарян и др., высоко оценив работу, счел ее достойной степени доктора наук. Однако подчеркнуто скромный на протяжении всей жизни ученый заметил, что для него и кандидатской степени достаточно. Кстати, еще в 1935 г. квалификационная комиссия Народного комиссариата просвещения ССР Армении своим решением от 23 сентября присвоила Асратяну ученую степень кандидата исторических наук без защиты диссертации за представленные изданные и рукописные работы по истории интервенции и майского восстания 1920 г. в Армении, истории армянской общественной мысли XIX века и очерков истории армянского народа за 1801-1921 гг. (последние две уничтожены после его ареста в марте 1938 г.).

М. Асратян поддерживал тесные связи с зарубежными деятелями науки и культуры армянской диаспоры, активно переписывался с ними.

Морус Асратян умер 25 февраля 1979 г. в Ереване.

Ниже впервые публикуется автобиография М. Асратяна, хранящаяся в его личном фонде Национального архива Армении.

СТЕПАН ГАРИБДЖАНЫН

Кандидат исторических наук

Автобиография М. Асратяна

8 сентября 1970 г.

Асратян Морус (Маргар) Степанович родился 10 сентября 1902 г. в селе Ахлатян Сисианского района Армянской ССР (бывшего Зангезурского уезда Елизаветпольской губернии). До 14 лет жил и учился в деревне. Затем поехал в Баку и на средства брата-рабочего продолжил учебу в Бакинском коммерческом училище. После февральской революции 1917г. мой брат вступил в партию большевиков и был активным участником Бакинской коммуны (погиб в 1920 г. в Армении, будучи членом Ревкома). 14 октября 1917 г. я присутствовал на общем собрании Союза молодежи при Бакинском комитете РСДРП(б), а 20 октября записался в интер-

национальный союз рабочей молодежи г. Баку. После временного падения Советской власти в Баку, с группой бакинских коммунистов пробрался на Северный Кавказ и после долгих мытарств и ареста (агентами Лазаря Бичерахова) попал в г. Нальчик. С начала октября 1918 г. там принимал участие в подпольной работе, а в день первой годовщины Октябрьской революции, когда Нальчик был взят красными частями Агеева, впервые участвовал в боевых действиях и 10 ноября был принят в ряды партии. Через неделю уже в Ессентуках участвовал в отражении налета банды есаула Шкуро. Итак, с конца 1918 г. до июля 1921г. на Северном Кавказе, в Баку (1919) и в Армении (на родине), принимал рядовое участие в подпольной работе и в некоторых вооруженных выступлениях. Летом 1920 г. в нашем селе организовал комсомольскую ячейку и руководил ею в качестве председателя. Вся наша семья в 1920-21 гг. подвергалась страшному гонению, ибо ныне покойный мой старший брат (старый большевик) был одним из организаторов и руководителей Зангезурской уездной организации большевиков.

В 1921 г. немедленно после установления Советской власти в Зангезуре я был избран вторым секретарем Сисианской районной организации КСМ и членом уездного комитета. Обида (второй раз) за выдачу мне новой кандидатской карточки после 4-х летней подпольной работы лишает партстажа, однако продолжаю работать в рядах ЛКСМ и через три года, на общих основаниях в Дилижане, будучи завагитпропотделом уездного комитета ЛКСМ, вновь и на этот раз надолго, как кандидат, вступаю в ряды партии. В 1922-1924 гг. учился в Ереванском университете и преподавал в полковой школе ликбеза. Был мобилизован на ответственную работу в рядах комсомола. В 1925 г. окончил курсы уездных партработников при Закавказском краевом комитете партии, после чего был назначен ответственным секретарем истпартотдела ЦК КП(б) Армении, а через год, по совместительству, занимал также должность заместителя директора Музея революции Армении.

С 1926 г. начинается моя научно-исследовательская, а через год – также беспрерывная педагогическая работа в партшколе, рабоче-педтехникуме, комуниверситете. В 1930-31 гг. прошел аспирантуру в Ленинграде. Вернувшись в Ереван, продолжаю работать в Музее революции в качестве старшего научного сотрудника и политредактора Госиздата Армении. Свыше года, в должности заместителя, исполнял обязанности директора Института истории, по совместительству занимая кафедру ленинизма в университете. Одновременно в 1934-35 гг. преподавал историю партии в аспирантуре Института марксизма-ленинизма. Тогда же получил ученую степень кандидата исторических наук без защиты диссертации.

С начала 1934 по начало 1936 г., по решению ЦК партии Армении, занимал должность директора Музея революции Армении и заместителя директора Института истории партии при ЦК. Вскоре, однако, все изменилось в моей жизни после

выхода в свет злосчастной книги Берия о роли Сталина в Закавказской большевистской организации. За четыре года до выхода книги Берия мною был разработан новый самостоятельный курс истории большевистских организаций Закавказья, по которому три учебных года я читал лекции в Ереванском университете. Ввиду того, что этот курс в значительной степени имел серьезные расхождения с вымышленными и вздутыми тезисами Берия, то я сразу же оказался в ряду первых «злостных искажателей подлинной истории партии». Более того, в 1927 г. вышел подготовленный мной сборник документов и воспоминаний о большевике Сурене Спандаряне, на страницах которого не по моей вине в 1908-1912 годах Сталину относилась второстепенная роль в сравнении со Спандаряном и Орджоникидзе. Мой предмет был снят с планов вузов. Положение мое трижды осложнилось после того, как осенью 1935 г. в качестве представителя ЦК партии Армении я имел выступление в г. Степанаване при открытии памятника и дома-музея Степана Шаумяна, в котором я провел паритетную параллель между Шаумяном и Сталином как верными соратниками и учениками Ленина. Через три дня Берия вызывает к телефону второго секретаря ЦК КП(б)А С. Акопова и в ярости сообщает «О вопиющем и может быть не случайном факте», имевшем место в Степанаване, где мол «представитель ЦК КП(б) Армении с трибуны во всеуслышание объявляет о том, что Степан Шаумян был вождем закавказских большевиков, а Сталин был одним из его учеников». С этого дня и начинается кривая моей биографии. По требованию Акопова меня исключают из партии «как балласта» и отстраняют от обязанностей директора Музея революции Армении, оставив в университете доцентом и в Институте истории партии старшим научным сотрудником как «незаменимого специалиста». Я старался доказать вздорность такого решения и провокационный характер устного обвинения по поводу моего степанаванского выступления. Но вскоре я был изолирован, как говорили из Еревана, и назначен директором Матенадарана (библиотека древних рукописей) в Эчмиадзине, где легче было состряпать обвинение и изолировать окончательно. Так и получилось. Я был арестован 14 марта 1938 г. как «враг народа»... Мне самому пришлось выдумать тягчайшие деяния и подписать, с целью быстрого освобождения от тяжелого хождения по мукам. Все же военный трибунал Верховного суда СССР не утвердил судебное заключение военного трибунала Закавказского военного округа, и я в начале 1940 г. (15 января – С.Г.) был оправдан и освобожден. Но после этой реабилитации целых 14 лет прожил в Ереване в качестве прокаженного специалиста. О восстановлении в правах и в партии не могло быть и речи. Принужден был, вернее принудили отказаться от 15-летней специальности и переключиться на востоковедение, археологию и на древнеармянскую филологию. Первые годы работал в Комитете по охране исторических памятников и преподавал историю древнего мира в 2-х годичном педагогическом институте. В конце 1942 г. защи-


щаю диссертацию и получаю степень кандидата филологических наук. Вскоре стал работать в Институте литературы в качестве старшего научного сотрудника, и недолго – ученого секретаря. Стал работать в Армянском педагогическом институте, а в 1944-46 гг. одновременно занимал должность ученого секретаря Отделения общественных наук Академии наук Армении. В 1947-54 гг. работал в Институте истории – старшим научным сотрудником. С 1954 г. стал работать только в Армянском педагогическом институте доцентом, заведующим кафедрой армянского народа и несколько лет также проректором по научной части. С апреля 1964 г. занимаю должность директора Государственного исторического музея Армении. С начала марта 1965 г. по 22 июля 1966 был в заграничной командировке: по просьбе зарубежных армянских прогрессивных организаций был приглашен в Бейрут и там два учебных года читал лекции в армянском колледже Ай-казян и для организации высших курсов Юсисян по арменоведению. После возвращения из Бейрута продолжал работать в Госисторическом музее Армении. До конца 1969 г. продолжал педагогическую работу также в Ереванском госуниверситете и в Армянском педагогическом институте.

М.С. Асратян. Подпись.

Национальный архив Армении, ф. 1109, оп. 1, д. 1, л. 7-11. Подлинник. Машинопись.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԶԱՎԵՆ ԹԱԳԱԿՉՅԱՆ, Հոգևոր երգատեսակները Զավախքի ժողովրդական ավանդույթում, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, 338 էջ:



ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, Արամ Քոչարյանի անվան ծայնադարանի վարիչ, արվեստագիտության թեկնածու Զավեն Թագակչյանի «Հոգևոր երգատեսակները Զավախքի ժողովրդական ավանդույթում» արժեքավոր մենագրությունը (խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Հռիփսիմե Պիկիչյան):

Մենագրությունը հրատարակվել է ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի հովանավորությամբ, որի համար մեր երախտագիտության խոսքն ենք ուղղում ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանին՝ հայ արվեստագիտության հանդեպ ցուցաբերած հոգատար վերաբերմունքի համար:

Մինչ գրախոսվող աշխատությունն ընթերցողին ներկայացնելը հարկ են համարում ուրվագծել հեղինակի ներդրումը հայ երաժշտական ֆոլկլորագիտության ուսումնասիրության բնագավառում: Զ. Թագակչյանը տիրապետում է երաժշտագետ-ֆոլկլորագետի մասնագիտության բոլոր՝ հավաքչական, վերծանական-նոտագրական, վերլուծական-ուսումնասիրական, խմբագրական ոլորտներին:

Երկար տարիներ Զ. Թագակչյանը զբաղվել է հայ ժողովրդական աշխատանքային երգերի կարևոր տեսակներից մեկի՝ հոռովելների համակարգման հարցերով: Տասնամյակների գիտական պրպտումների հանրագումարը դարձավ ֆոլկլորագետի «Հայոց երկրագործական աշխատանքային երգերի՝ հոռովելների երաժշտալեզվական առանձնահատկությունները. ծայնակարգային կառույցներ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը՝ նվիրված հոռովելների երաժշտալեզվական հատկանիշ-ծայնակարգերի ամբողջական պատկերի լուսաբանմանը: Զ. Թագակչյանը հեղինակ է գիտական հոդվածների, զեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Գնահատանքի է

արժանի 2. Թագակցյանի մանրակրկիտ և բարեխիղճ աշխատանքը Միհրան Թումանյանի ֆոլկլորային ժառանգության չորս հատորները հրատարակության պատրաստելու գործում: Նա է կազմել, ծանոթագրել և խմբագրել Միհրան Թումանյանի «Հայրենի երգ ու բան» հավաքածուի 3-րդ (1986) և 4-րդ (2005) հատորները, որոնք լույս տեսան Թումանյանի մահից հետո: Նշելի են 2. Թագակցյանի ֆոլկլորագիտական գործունեությունը և մասնակցությունը «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի 2-6-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ պրակների (2008-2015) կազմմանը, ծանոթագրմանն ու խմբագրմանը:

Բանահավաքչական ծավալուն գործունեության ընթացքում երաժշտագետ-ֆոլկլորագետը 1967-ին մասնակցել է Զավախքի՝ ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Հայաստանի կոմպոզիտորների միության միացյալ գիտարշավին, ինչպես նաև Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի մի շարք գիտարշավների հավաքչական աշխատանքներին՝ ՎԽՍՀ Թբիլիսի քաղաք և Թելավիի շրջան (1984), Թումանյանի շրջան (1991), Վայոց ձոր (1997-1998), անհատական գիտարշավների ՎԽՍՀ Ախալքալաքի և Բոգդանովկայի (Նինոծմինդա), (1970), Ծալկայի (1971) շրջաններ, ՀԽՍՀ Վարդենիսի և Մարտունու (1976), Ապարանի և Թալինի (1977) շրջաններ, Էջմիածնի շրջանի Մուսալեռ գյուղ (1985): Նրա ղեկավարությամբ են 1985 թ. կայացել ՎԽՍՀ Թբիլիսի քաղաք, Մառնեուլիի, Թեթրի Շղարոյի և Բոլնիս-Խաչենի, Շահումյան ավանի հայաշատ վայրեր կատարված գիտարշավը, ինչպես նաև 1987 թ. մարտ-մայիս ամիսներին Արտաշատի շրջան կատարված 16 գիտարշավները: Այդ ընթացքում իրականացվեցին գյուղական վայրերի երաժշտական կյանքի հետազոտությունն ու ավանդական երաժշտության ծայնագրությունները: Իր բանահավաքչական գործունեության ընթացքում 2. Թագակցյանն ամբարել է շուրջ 2500 ժողովրդական երգ ու նվագ, որոնց զգալի մասը վերծանել-նոտագրել ու հրատարակել է ինչպես «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի պրակներում, այնպես էլ մի շարք հեղինակների գիտական աշխատություններում ու հոդվածներում:

1977-ին փաստագրական ֆիլմերի «Երևան» ստուդիան Թալինի շրջանում նկարահանեց պատմական Հայաստանի Տարոն գավառի երգարվեստին նվիրված «Գորանի» ֆիլմը: 2. Թագակցյանը ոչ միայն արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուֆսյանի համահեղինակությամբ գրեց ֆիլմի սցենարը, այլև կարևոր էր նրա ավանդը նկարահանման նյութերն ընտրելիս իբրև ֆոլկլորային խորհրդատու, մասնակցեց նաև ֆիլմի նկարահանման աշխատանքներին:

2. Թագակցյանը զբաղվել է նաև ֆոլկլորագետի պրակտիկ գործունեությամբ: 1981-ից համատեղությամբ Գեղագիտության ազգային կենտրոնին կից գործող «Գորանի» մանկական ավանդական երգ ու պարի համույթի գեղարվեստական ղեկավարն է: 1987-1993 թթ. ղեկավարել է ՀԽՍՀ հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեի «Հայասա» հայ ավանդական երգի

ու պարի համույթը՝ ներկայացնելով հայ տոհմիկ ժողովրդական երգն ու պարը Հայաստանում և արտասահմանյան մի շարք երկրներում:

Գրախոսվող աշխատության մեջ, որը հեղինակի տասնամյակների ֆոլկլորագիտական պրպտումների հանրագումարն է, առաջին անգամ ներկայացվում է Արվեստի ինստիտուտի Արամ Քոչարյանի անվան ձայնադարանում պահվող ժողովրդական հոգևոր երգերի և եկեղեցական տարբեր արարողություններում հնչող երգերի ժողովրդականացված տարբերակների գիտարշավային ձայնագրությունների (1927-1999 թթ.) երաժշտագիտական քննությունը: Մենագրությունը ներառում է XX դարում ջավախահայերի կենցաղում լայնորեն տարածված հոգևոր տաղերի, շարականների, Սբ Պատարագի երգային հատվածների, Ժամագրոց երգերի, Սբ Ծննդյան և Հարության ավետիսների, երգվող աղոթքների և աշուղական հոգևոր երգերի նոտային և բանաստեղծական տեքստերի վերծանությունները՝ զուգահեռաբար համադրելով ու վերլուծելով ժողովրդական և կանոնական հոգևոր երգերի տարբերակները:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, 7 գլուխներից, օգտագործված գրականության ցանկից և ծավալուն ծանոթագրություններից: Ներածության մեջ հեղինակը ընդգծում է ուսումնասիրության արդիականությունը, նպատակը, այն է՝ «մասնագետների և երաժշտասերների ուշադրությանը ներկայացնել Զավախքում տարածված ժողովրդական հոգևոր երգերի և եկեղեցական տարբեր արարողություններում հնչող կանոնական հոգևոր երգերի ժողովրդականացված տարբերակների մի փունջ, որի վրա է հիմնված երաժշտագիտական քննությունը: Իսկ խնդրո առարկայի բնօրինակ ձայնագրությունները պահվում են ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Արամ Քոչարյանի անվան ձայնադարանում» (էջ 6-7):

Եթե Զավախքի աշխատանքային, ծիսական ու կենցաղային երգերը՝ օրորներն ու սիրերգերը, պարերգ-պարեղանակներն ու մյուս երգատեսակները Կոմիտասից հետո արժանացել են հայ երաժիշտ-բանահավաքների ուշադրությանը, որոնք գրի են առել ու հրատարակել դրանց բազմաթիվ նմուշները, ապա ավանդական հոգևոր երգերի ժողովրդական կատարումների առաջին գրանցումները կատարել է ականավոր երաժշտագետ-բանահավաք Քրիստափոր Քուշնարյանը: 1927-1929 թթ. Հայաստանում և Վրաստանի հայաշատ բնակավայրերում կատարված գիտարշավների ընթացքում նա Թիֆլիսի հայկական եկեղեցու քահանա Հովհաննես Տեր-Գրիգորյանից և Ժամհար Ղևոնդ Մամիկոնյանից գլանավոր ձայնագրիչի օգնությամբ հավերժացրել է շարականների և Ժամերգությունների ընթացքում հնչող երգերի յոթ բարձրարժեք կատարում:

2. Թագակցյանի հետազոտության համար հիմք են ծառայել ինչպես վերոնշյալ, այնպես էլ մինչև XX դարի վերջերը Զավախքում կազմակերպված գիտարշավների ընթացքում հայ երաժշտագետների ձայնագրած հոգևոր երգերի ժողովրդական կատարումների ևս շուրջ հարյուր օրինակ, որոնցից քառասուններ-

կույր գրառել է հենց աշխատության հեղինակը՝ Զավախք (1970 թ.) և Ծալկայի շրջանի հայկական գյուղեր (1971 թ.) կատարած գիտարշավների ընթացքում:

Ու քանի որ Զավախքի՝ Կարին-Էրզրումի ժողովրդական ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում կանոնական հոգևոր երգերի հոգևորական բանասացների մատուցած տաղերի, շարականների, Սբ Պատարագի երգային հատվածների, ժամերգությունների տարբերակային կատարումները, ինչպես նաև ժողովրդի հորինած Սբ Ծննդյան և Հարության ավետիսները, հավատացյալների՝ առ Աստված աղոթքներն ու աշուղների հոգևոր բովանդակության երգերը, ուստի աշխատության յուրաքանչյուր գլուխ նվիրված է դրանցից յուրաքանչյուրի համակողմանի քննությանը:

Ուսումնասիրվող նմուշները հեղինակը դասակարգել է ըստ ժանրային հատկանիշների. դրանք բովանդակում են յոթ առանձնացված երգատեսակ՝ տաղ, շարական, Սբ Պատարագի երգային հատված, Սբ Ծննդյան և Հարության ավետիս, ժամագրոց երգ, աղոթք և հոգևոր բովանդակության աշուղական հորինվածք: 2. Թագակցյանը բացահայտել է, որ տաղերը, շարականները, Սբ Պատարագի երգային հատվածները, ժամագրոց երգերը, Սբ Ծննդյան և Հարության ավետիսները, նաև աղոթքներից մի քանիսը Ն. Թաշճյանի և Ե. Տնտեսյանի գրառումներից խիստ զանազանվող և յուրահատուկ եղանակավորում ունեցող տարբերակներ են: Աղոթքների մեծ մասն ու հոգևոր բովանդակություն ունեցող աշուղական երգերը ժողովրդի ստեղծած հորինվածքներ են՝ ինքնահատուկ կերտվածքով (տե՛ս էջ 8-9):

1920-ականներից մինչև XX դարավերջ Զավախքում ձայնագրված 103 հոգևոր երգերից չորսը տաղեր են, ուստի մենագրության առաջին՝ «Տաղերի ժողովրդական կատարումները» գլխում (էջ 11-26) հեղինակը դրանցից երեքի՝ հրատարակված ավանդական օրինակների հետ համեմատելու միջոցով բացահայտել է բանաստեղծական և մեղեդային կառույցների առանձնահատկությունները: Իր ուսումնասիրությամբ հեղինակը եզրակացրել է, որ Զավախքում ձայնագրած «Այսօր ձայնն Հայրական» հորդորակի երկու տարբերակն էլ հավատացյալ գյուղացիների կատարմամբ եղանակավորմամբ խիստ տարբերվում է դասական օրինակից և մոտ է դյուրըմբռնելի եղանակավորում ունեցող ժամասացություններին (էջ 26): Իսկ «Քրիստոս փառաց թագավոր» տաղի բանասաց քահանա Մաթևոս Ղարազյոզյանի կատարումն իր վանկաչափական ու կառուցվածքային հատկանիշներով էականորեն տարբերվում է տնտեսյանական օրինակից և ձայնակարգային ու եղանակավորման կառույցներով նոր շարադրանքի կատարյալ օրինակ է: «Այդպիսին է նաև Մարտին Առաքելյանի կատարած անանուն հեղինակի գրչին պատկանող «Մայր հավատով» տաղը, որն իր արժանի տեղն է զբաղեցնելու հոգևոր երգերի հայոց անդաստանում», - նշում է 2. Թագակցյանը (էջ 26):

Երկրորդ՝ «Շարականների ժողովրդական ավանդույթի երաժշտալեզվական

առանձնահատկությունները» ծավալուն գլխում (էջ 27-114) ուսումնասիրության համար հիմք են ծառայել XX դարի կեսերին Զավախքի տարբեր բնակավայրերում կազմակերպված գիտարշավների ընթացքում եկեղեցու սպասավորներից (քահանա, սարկավագ, ժամհար) և հավատացյալներից ձայնագրված հայոց հոգևոր երգերը: Այդ արժեքավոր երգերի ինքնությունը պարզելու և առանձնահատկությունները բացահայտելու նպատակով հեղինակը դրանք համեմատել է Նիկողայոս Թաշճյանի և Եղիա Տնտեսյանի՝ միջնադարյան ավանդույթներն առավել հարազատորեն պահպանած գրառումների հետ: Քննության առնված 16 շարականներից չորսը գրի է առել Քր. Քուշնարյանը (1927 թ.) Թիֆլիսի հայկական Սբ Գևորգ եկեղեցում քահանա Հովհաննես Տեր Գրիգորյանից և ժամհար Ղևոնդ Մամիկոնյանից: Եվս չորս նմուշ գրանցվել է 1967 թ. Արվեստի ինստիտուտի, Հայաստանի կոմպոզիտորների միության և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի միացյալ գիտարշավի ժամանակ Ախալքալաքի շրջանի Կիրովական գյուղի Հայ առաքելական եկեղեցու քահանա Մաթևոս Ղարապյոզյանից, Արագվա գյուղի բնակիչ Աննա Այվազյանից և Վարևան գյուղի բնակիչ Հովսեփ Սահակյանից: 1970 թ. Զավախքում իրականացրած անհատական գիտարշավի ընթացքում Զ. Թագակչյանն Ախալքալաքի շրջանի Տուրցխ գյուղի կաթոլիկ եկեղեցու ժամհար Մարտին Առաքելյանից ձայնագրել է ևս չորս շարական, ինչպես նաև մեկական նմուշ Մերենյա գյուղի քահանա Հարություն Ղուկասյանից և Բոգդանովկայի (Նինոծմինդա) շրջանի Մեծ Խանչալի գյուղի բնակիչ Մաթևոս Վարդանյանից: 1999 թ. Հռիփսիմե Պիկիչյանն Ախալքալաքի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ավագ քահանա Տեր Ռուբեն Սաղոյանից գրի է առել ևս երկու շարական: Արվեստի ինստիտուտի ձայնադարանային հավաքածուի ջավախքյան շարականների մեծ մասը (տասնվեցից տասներկուսը) գրանցվել է Հայ առաքելական եկեղեցու հետևորդներից, և միայն չորսը՝ Տուրցխ գյուղի կաթոլիկ եկեղեցու ժամհար Մարտին Առաքելյանից, որոնք նա սովորել է նույն եկեղեցու քահանա հորից:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ձայնադարանի ջավախքյան ձայնագրությունների երաժշտախոսքային կառույցների առանձնահատկությունները պարզելու նպատակով, համեմատական քննություն կատարելով Ն. Թաշճյանի և Ե. Տնտեսյանի հրատարակած ժողովածուներում ամփոփված նույնանուն նմուշների հետ, Զ. Թագակչյանը բացահայտել է, որ եկեղեցու սպասավորներից գրառած տասնչորս նմուշներից «Խորհուրդ մեծ եւ սքանչելի» (թիվ 1-3), «Յաղթող եւ սուրբ հայրապետ», «Զարհուրեալ», «Առաքելոյ աղանդ», «Նահապետացն Աբրահամու», «Ով սքանչելի», «Պարգեւատուն ամենեցուն» և «Յայս յարկ» թվով տասը շարականներում պահպանվել է դասական տարբերակների ձայնեղանակային հենքը: Մինչդեռ մյուս չորս՝ «Խորհուրդ խորին», «Լոյս ի լուսոյ», «Բանդ Աստուած» և «Լեռն վիմաճին», «Այսօր կանգնեցաւ» շարականների ձայնակարգային կառույցները դասականներից տարբերվում են:

Բանասացների կատարած յոթ շարականի՝ «Խորհուրդ մեծ եւ սքանչելի» շարականի երեք տարբերակները, «Բանդ Աստուած և Լեառն վիմաձին», «Ջարիութեալ», «Ով ըսքանչելի», «Պարգեատուն ամենեցուն» եղանակավորումները թեև որոշ ընդհանրություններ ունեն դասական օրինակների հետ, այդուհանդերձ, կարող են դիտարկվել որպես նրանցից էականորեն զանազանվող տարբերակներ: Իսկ գրանցված մյուս յոթ շարականները՝ «Խորհուրդ խորին», «Լոյս ի լուսոյ», «Առաքելոյ աղանոյ», «Այսօր կանգնեցաւ», «Յայս յարկ», «Յաղթող եւ սուրբ հայրապետ» և «Նահապետացն Աբրահամու», նույնանուն դասական օրինակներից խիստ տարբերվում են եղանակավորմամբ և ինքնահատուկ կերտվածք ունենալով՝ առանձնանում են նաև շարադրանքի կատարելությամբ: Ըստ այդմ՝ հիշյալ բարձրարժեք տարբերակները Զ. Թագակյանը որակել է որպես հայ հոգևոր երաժշտարվեստի զուտ ջավախքյան ճյուղի շարականներ:

Երրորդ՝ «Պատարագի երգային հատվածների ջավախքյան տարբերակները» գլխում (էջ 114-130) հեղինակը Զավախքում իր գրառած հայոց եկեղեցու Պատարագի յոթ երգային հատվածի և թաշճյանական գրառումների համեմատական վերլուծության միջոցով բացահայտել է դրանց առանձնահատկությունները: Արվեստի ինստիտուտի ձայնադարանում պահվող՝ Զավախքում 1920-1998 թթ. գրանցված հայոց Պատարագի ինը նմուշից հինգը եղանակավորմամբ էականորեն տարբերվում են թաշճյանական օրինակներից և ունեն ինքնահատուկ կերտվածք:

Արվեստի ինստիտուտի Արամ Քոչարյանի անվան ձայնադարանում պահպանվող ջավախքյան 103 ձայնագրություններից 41-ը ժամագրոց երգեր են, որոնց զգալի մասը լայն տարածում է ստացել ժողովրդի կենցաղում: Դրանց քննությանն է նվիրված մենագրության չորրորդ՝ «Ժամագրոց երգերի ժողովրդական մեկնաբանումները» գլուխը (էջ 152-230): Գիտարշավների ընթացքում միևնույն բանասացից գրանցվել է նույն երգի մի քանի տարբերակ: Զ. Թագակյանի ձայնագրած ժամագրոց երգերի դասակարգումից պարզվել է, որ մեծ մասը Ներսես Շնորհալու «Առաւօտ լուսոյ»-ի, «Նորաստեղծեալ»-ի և «Աշխարհ ամենայն»-ի տարբերակներն են, որոնք գրանցվել են թե՛ եկեղեցականների և թե՛ սովորական հավատացյալների կատարումներից: Զ. Թագակյանը պարզել է, որ ջավախահայության շրջանում առավել տարածված է «Առաւօտ լուսոյ» երգը: Դրավկայությունն է Զավախքի տարբեր բնակավայրերում ձայնագրված և Արվեստի ինստիտուտի հավաքածուում պահվող «Առաւօտ լուսոյ» երգի 22 տարբերակը:

Զավախքյան ժամերգերում առանձնացող՝ եկեղեցու սպասավորների կատարած օրինակներում կարևորվում են թաշճյանական եղանակներից տարբեր, տեղական հոգևոր երգարվեստի ավանդույթների ինքնահատուկ, բարձրարվեստ եղանակավորում ունեցող կառույցները, որոնց բանաստեղծական տեքստերը գրեթե չեն տարբերվում գրական շարադրանքից:

Հինգերորդ՝ «Աբ. Ծննդյան և Հարության ավետիսները» գլխում (էջ 230-244) Զ. Թագակցյանը բացահայտել է, որ Ջավախքում ծայնագրված Աբ Ծննդյան և Հարության ավետիսներն ունեն թաշճյանական գրառումների բովանդակությունն ու խոսքային կառույցների տաղաչափական հենքը:

Վեցերորդ՝ «Աղոթքը Ջավախքի ժողովրդական երգարվեստում» գլխում (էջ 245-294) հեղինակը Ջավախքի ժողովրդական աղոթքները բաժանում է երկու խմբի՝ հայոց Պատարագամատույցի արարողակարգերում հնչող **կանոնական** աղոթք և ժողովրդական ասացողների հոգու խորքից բխող, նրանց հորինած **ժողովրդական** աղոթքների եղանակավոր նմուշներ: Առաջին խմբի աղոթքները, ըստ հեղինակի, խոսքային և եղանակավորման շարադրանքով էականորեն տարբերվում են թաշճյանական գրառումներից, ունեն ինքնահատուկ եղանակավորում ու աղերսվում են հայոց վիպերգերին ու վիպաքնարական ասքերին (էջ 293): Երկրորդ խմբի՝ ժողովրդական աղոթքների դիտարկված տասնմեկ օրինակների քննությունից Զ. Թագակցյանը եզրակացնում է, որ դրանք օժտված են հոգևոր աղոթքների սոսկ **ջավախքյան տիպային** առանձնահատկությամբ:

Մենագրության եզրափակիչ՝ «Աշուղական հոգևոր երգի առանձնահատկությունները» գլուխը (էջ 294-313) նվիրված է հոգևոր բովանդակություն ունեցող աշուղական երգի ութ նմուշների քննությանը, որոնցից յոթը, ըստ բանասացների տեղեկությունների, աշուղ Ղունկիանոս Կարնեցու ստեղծագործություններն են, որոնք կրում են նրա ստեղծագործ մտքի դրոշմը, որը առկա է խոսքային կառույցների շարադրանքում և եղանակավորման երաժշտախոսքային կերտվածքներում: Բանասաց Արաքսյա Թումասյանի երգած «Երանելի և հրաշալի» երգի վերլուծությունից Զ. Թագակցյանը պարզել է, որ դրանում սինթեզվել, միահյուսվել են աշուղական երգն ու աղոթքը, և որ նման ձուլածոներից զերծ չի մնացել նաև Ջավախքի երգարվեստն ընդհանրապես: «Երևույթը բնական համարելով՝ ասենք, որ երգատեսակների փոխադարձ ներգործություններն օժանդակում են նոր գոյացումների ստեղծմանը և զարգացման նախապայմաններից են», - եզրակացնում է հեղինակը:

Անշուշտ, Զ. Թագակցյանի մեծարժեք երկասիրությունը կարևոր ներդրում է հայ երաժշտագիտության, մասնավորապես՝ հայ երաժշտական ֆոլկլորագիտության ասպարեզում:

Ակնհայտ է աշխատության գործնական արժեքը: Գիտական վերլուծություններն ուղեկցվում են նոտային օրինակներով, որոնք հեղինակի վերծանություններն են և գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Դրա շնորհիվ մի կողմից՝ կապահովվեն ոչ նյութական մշակութային ժառանգության ևս մեկ շերտի՝ հայ հոգևոր երաժշտարվեստի նոր՝ զուտ ջավախքյան ճյուղի պահպանությունը, կենսունակությունը և սերնդեսերունդ փոխանցումը, և հանրության շրջանում ճանաչելի կդառնան, կարժևորվեն ու կտարածվեն Ջավախքի երաժշտական կենցաղում հնչող ավանդական հոգևոր երգերը, որոնք իրենց

կառուցվածքով և եղանակավորման բնորոշ ելևէջադարձումներով էապես տարբերվում են կանոնական հայտնի եղանակներից և կրում են տարածքի ժողովրդական երգարվեստին բնորոշ հատկանիշներ: Իսկ մյուս կողմից՝ դրանք ոչ միայն կընդգրկվեն ժողովրդական երաժշտության կատարողների և ժողովրդական գործիքների նվագախմբերի երգացանկերում ու նվագացանկերում, այլև կարժանանան հայ պրոֆեսիոնալ կոմպոզիտորների ուշադրությանը, որոնք դրանց հիման վրա կստեղծեն իրենց գործիքային մշակումներն ու տրանսկրիպցիաները, ինչպես նաև որպես մեջբերումներ կօգտագործեն խոշոր կտավի՝ սիմֆոնիկ և կամերային ստեղծագործություններում:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Արվեստագիտության դոկտոր

ԴԵՐԾՈՎԱԿԱԼ ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐԱՄԻ ՍԱՂՈՅԱՆ

1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի և նրա կամակատար երկրների դեմ տարած հաղթանակում Խորհրդային Միության Կարմիր բանակի և ռազմածովային նավատորմի շարքերում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև ավելի քան 500.000 հայորդիներ, իսկ մոտ 100.000 սփյուռքահայեր պատերազմին մասնակցեցին ԽՍՀՄ-ի դաշնակից երկրների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Կանադայի զինված ուժերի և հակաֆաշիստական դիմադրական և պարտիզանական շարժման շարքերում: Նրանցից շուրջ 200.000-ը իրենց մատաղ կյանքը զոհեցին այդ սրբազան պատերազմում: Նրանք աչքի ընկան ռազմի դաշտում ցուցաբերած հերոսությամբ և մարտավարական ունակություններով: Միայն Կարմիր բանակի շարքերում հայ ռազմիկները տվեցին 100-ից ավելի Խորհրդային Միության հերոսներ, Փառքի շքանշանի 26 լրիվ ասպետներ, շուրջ 70.000-ը պարգևատրվեց մարտական շքանշաններով ու մեդալներով: Պատերազմի մասնակից հայերից Հովհաննես (Իվան) Ստեփանի Տեր-Իսահակյանին (Իսակով) շնորհվել է Խորհրդային Միության նավատորմի ծովակալի, Հովհաննես (Իվան) Խաչատուրի (Քրիստափորի) Բաղրամյանին՝ Խորհրդային Միության մարշալի, Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանին՝ Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի, Արմենակ Արտեմի Խանփերյանցին (Սերգեյ Ալեքսանդրովիչ Խուլյակով)՝ ավիացիայի մարշալի, Սերգեյ Քրիստափորի Ազանովին՝ Ինժեներական զորքերի մարշալի, իսկ շուրջ 160 հոգու՝ գեներալի կոչում: Պատերազմի տարիներին Հ.Ս. Իսակովը եղել է ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի հրամանատարի 1-ին տեղակալ, ծովային գլխավոր շտաբի պետ, Հ.Ք. Բաղրամյանը՝ 1-ին մերձբալթյան, ապա՝ 3-րդ բելոռուսական ռազմաճակատի հրամանատար, Ս.Ա. Խուլյակովը՝ Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի հրամանատարի 1-ին տեղակալ՝ Ռազմաօդային ուժերի շտաբի պետ: Հայ զորավարներից 3-ը եղել են բանակի, 8-ը՝ կորպորալ, 28-ը՝ դիվիզիայի, ավելի քան 100-ը՝ բրիգադի ու գնդի հրամանատարներ¹:

Հայ զինվորները, հրամանատարներն ու զորավարները մասնակցել են պատերազմի գլխավոր ճակատամարտերին բոլոր զորատեսակների կազմում. հրաձիգներ, հրետանավորներ, տանկիստներ, օդաչուներ, սակրավորներ, կապավորներ և այլն: Մի քանի հազար հայորդիներ պատերազմին մասնակցել են նաև ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի շարքերում: Նրանցից շուրջ 1000 ծովայիներն ու ծովային օդաչուներ մարտերում ցուցաբերած խիզախության համար արժանացել են կառավարական պարգևների: Արդեն նշեցինք՝ Հ.Ս. Իսակովին շնորհ-

¹ Арутюнян К. 2018, Армянский народ в Великой Отечественной войне 1941-1945 гг., Ереван, «Зангак», 647.

վել է Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում: Ասենք նաև, որ 4 փառապանծ հայորդիներ արժանացել են փոխ-ծովակալի (вице-адмирал), 4-ն էլ՝ դեր-ծովակալի (контр-адмирал) կոչման: Վերջիններիս թվում էր Արտավազդ Սաղոյանը:

Արտավազդ Արամի Սաղոյանը ծնվել է 1904 թ. հունվարի 16-ին Վրաստանի Ախալցխա քաղաքում: 1921 թ. ավարտել է 2-րդ դասի դպրոցը: Մեկ տարի անց՝ 1922 թ. հոկտեմբերին ընդունվել է Բաթում քաղաքի ռազմածովային ուսումնարանը և այդուհետև կյանքը նվիրել ծովային գործին: 1924-1927 թթ. սովորել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) Ֆրունզեի անվան ռազմածովային ուսումնարանում, ապա ծառայել Կասպիական ռազմական նավատորմում, սկզբում՝ «Մարկին», հետո՝ «Կարմիր Ադրբեջան» ռազմանավերի վրա՝ որպես հերթապահող (вахтенный): 1930-1931 թթ. սովորել է Կարմիր բանակի ռազմածովային ուժերի հրամանատարների կատարելագործման հատուկ դասընթացների հրետանային դասարանում: Ավարտելուց հետո ծառայությունը շարունակել է Դվինա գետի ռազմական նավատորմի «Հարվածային» («Ударный») հրետանավակի վրա՝ որպես հրետանու հրամանատար: 1932 թ. ընդունվում է կոմկուսի շարքերը: 1933 թ. հունվարին առաջ է քաշվում Դվինայի գետային ռազմական նավատորմի շտաբի գլխավոր հրետանավորի պաշտոնում: 1936 թ. հոկտեմբերին կապիտան-լեյտենանտ Արտավազդ Սաղոյանն ընդունվում է Կ.Ե. Վորոշիլովի անվան Ռազմածովային ակադեմիան՝ հրետանային կրակի կառավարման սարքեր մասնագիտությամբ, որն ավարտում է 1941 թ. ապրիլին՝ գերազանցությամբ: Ուսման ընթացքում, 1937 թ. մարտին նրան շնորհվում է 3-րդ կարգի կապիտանի, իսկ 1941 թ. փետրվարին՝ 2-րդ կարգի կապիտանի զինվորական կոչում: Ակադեմիան ավարտելուց հետո նշանակվում է Կարմրադրոշ բալթյան նավատորմի թեթև ուժերի նավախմբի գլխավոր հրետանավոր: Այդ պաշտոնում 2-րդ կարգի կապիտան Ա.Ա. Սաղոյանը ծառայում է մինչև Հայրենական մեծ պատերազմի սկսվելը²:

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից 2-րդ կարգի կապիտան Ա.Ա. Սաղոյանը ակտիվորեն մասնակցում է Բալթիկ ծովում գերմանական զավթիչների դեմ մղված ծովային մարտերին, իսկ 1941 թ. հուլիսի 10-ից մինչև 1944 թ. օգոստոսի 9-ը՝ Լենինգրադի համար մղված մարտերին: Պատերազմի առաջին օրը նա գտնվում էր Կարմրադրոշ բալթյան նավատորմի գլխավոր ռազմածովային հենակետ Տալլինում և ղեկավարում էր «Суровый» և «Статный» էսկադրային ականակիրների հրետանային գործողությունները Ֆիննական ծոցի հենակետերի պաշտպանության ժամանակ: Իսկ երբ 1941 թ. օգոստոսի 5-ից սկսվեցին բուն Տալլինի ռազմածովային հենակետի պաշտպանական մարտերը, որոնք շարունակվեցին մինչև օգոստոսի 28-ը, մինչև հակառակորդի կողմից նավահանգիստ-քաղաքի զավթումը կապիտան Ա. Սաղոյանը ղեկավարում էր նավատորմի ռազմանավերի հրետանու կրակը, հետ մղում գերմանական վերջրյա և ստորջրյա

² ՌԴ ՌԾՆԿԱ (Ռուսաստանի Դաշնության ռազմածովային նավատորմի կենտրոնական արխիվ), Դերծովակալ Արտավազդ Արամի Սաղոյանի ծառայողական-անձնական թերթիկ, թիվ 760380, թ. 1:

ուժերի գրոհները, այնուհետև ակտիվ մասնակցություն ունենում Տալլինի շրջանից Բալթյան նավատորմի ռազմանավերի դուրս բերման և Կրոնշտադտ փոխադրելու գործողությանը: Հակառակորդի շրջափակումից դուրս բերված ռազմանավերն ու դրանց անձնակազմերը խիզախորեն մարտնչեցին Լենինգրադի հերոսական պաշտպանության ժամանակ, որը տևեց ավելի քան 900 օր: Երբ նավատորմի զգալի մասը բարեհաջող հասավ Կրոնշտադտ (29 օգոստոսի), Արտավազդ Սաղոյանը ծանր վիրավորվել էր և տեղափոխվեց հոսպիտալ: 1941 թ. սեպտեմբերի վերջին, սակայն, նա կրկին շարքում էր և ղեկավարում էր Բալթյան նավատորմի թեթև ուժերի նավախմբերի հրետանու գործողությունները: 1941 թ. վերջերին Արտավազդ Սաղոյանը առաջ քաշվեց Բալթյան նավատորմի գլխավոր հրետանավորի պաշտոնում, նրան շնորհվեց նաև 1-ին կարգի կապիտանի կոչում: Այդ պատասխանատու պաշտոնում իր արժանի ավանդը ներդրեց Լենինգրադի հերոսական պաշտպանության մեջ մասնավորապես և ճակատամարտում տարած հաղթանակի գործում: 1941 թ. հունիսի 22-ից մինչև դեկտեմբերի վերջը ծովային հրետանու գործողությունները հմտորեն ղեկավարելու և Տալլինի պաշտպանության օրերին ցուցաբերած խիզախության համար Բալթյան նավատորմի հրամանատար, փոխ-ծովակալ Վ.Ֆ. Տրիբուցի՝ 1942 թ. փետրվարի 4-ի թիվ 2 հրամանով Ա. Սաղոյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով³:

Նավատորմի հրետանու գործողությունների հմուտ կազմակերպիչը մարտավարական ունակություններով և խիզախությամբ աչքի ընկավ նաև Լենինգրադի հերոսական պաշտպանության ժամանակ. 1942 թ. փետրվար – 1944 թ. հունվար ամիսներին հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելի կերպով կատարելու համար 1944 թ. հունվարի 23-ին Բալթյան նավատորմի էսկադրայի (նավախմբի) հրամանատար փոխծովակալ Յու. Ֆ. Ռալլիի թիվ 5 հրամանով 1-ին կարգի կապիտան Ա. Սաղոյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի երկրորդ շքանշանով⁴: Նրա պարգևատրման թերթիկում էսկադրայի շտաբի պետ, 1-ին կարգի կապիտան Հ. Սվյազովը նշել է. «Բարձր որակավորում և կրթություն ունեցող ծովային հրետանավոր ընկ. Ս.Ա. Սաղոյանը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմի բազմաթիվ գործողությունների Ռիգայի և Ֆիննական ծովածոցերում, հրետակոծել հակառակորդի ափամերձ ամրությունները: 1941 թ. Տալլինի պաշտպանության ժամանակ նա ղեկավարում էր նավախմբի հրետանու կրակը, հմտորեն համաձայնեցնում և կազմակերպում նավային հրետանու գործողությունները՝ ցամաքային զորքերի հետ համատեղ, որի հետևանքով մեծ չափով բարձրացրեց Տալլինի պաշտպանության արդյունավետությունն ու երկարատևությունը»⁵: 1944 թ. հունվարի 15-23-ին, լինելով Բալթյան նավա-

³ ՌԴ ՌԾՆԿԱ, Դեր-ծովակալ Արտավազդ Արամի Սաղոյանի ծառայողական-անձնական թերթիկ, թիվ 760380, թ. 1:

⁴ ՌԴ ՌԾՆԿԱ, թիվ 760380, ֆ. 88, ց. 2, գ. 523, թ. 172:

⁵ ՌԴ ՌԾՆԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 523, թ. 172: Տալլինի պաշտպանությունը տևել է 1941 թ. հունիսի 22-ից մինչև օգոստոսի 28-ը:

տորմի էսկադրայի (նավախմբի) գլխավոր հրետանավոր, որի իրավունքները հավասարազոր էին 2-րդ նավախմբի հրետանու հրամանատարի իրավունքներին, Ա. Սաղոյանը, հաջողությամբ մշակեց և իրականացրեց 2-րդ էսկադրայի հրետանու համագործակցության պլանը՝ 42-րդ համագորային և 2-րդ հարվածային բանակների գործողությունների հետ:

«Նավախմբի հրետանու գործողությունները հմտորեն ղեկավարելու և զգալի հաջողությունների հասնելու համար 1-ին կարգի կապիտան Ա. Սաղոյանը արժանի է պարգևատրվելու Կարմիր դրոշի շքանշանով»⁶:

Կարմրադրոշ բալթյան նավատորմի ակտիվ համագործակցությունը Լենինգրադը պաշտպանող խորհրդային ցամաքային ուժերի հետ մեծ չափով նպաստեց հերոս-քաղաքի պաշարման վերացմանը: 1944 թ. հունվարի 27-ի երեկոյան Լենինգրադում հրետանային հրավառություն տրվեց: Սակայն քաղաքի լրիվ անվտանգությունն ապահովվեց միայն 1944 թ. օգոստոսի 9-ին, երբ թշնամին ամբողջովին դուրս շարտվեց Լենինգրադի մարզից: Այդ մարտերին ակտիվորեն մասնակցեց Բալթյան նավատորմը, այդ թվում նաև նավատորմի գլխավոր հրետանավոր Սաղոյանը (այս բարձր պաշտոնին նա նշանակվել էր 1944 թ. հունիսի 6-ին)՝ արժանանալով ծովային սպաների համար նախատեսված՝ Նախիմովի 2-րդ աստիճանի շքանշանին⁷: Նրա պարգևատրման թերթիկում նավախմբի հրամանատար դերժովակալ Լ.Ա. Վլադիմիրսկին 1944 թ. հուլիսի 4-ին գրել է. «Կարելյան պարանոցում Լենինգրադյան ռազմաճակատի 1944 թ. հունիսի 9-16-ին իրականացրած հարձակողական գործողության ժամանակ 1-ին կարգի կապիտան Ա. Սաղոյանը Կարմրադրոշ բալթյան նավատորմի նավախմբի շտաբի գլխավոր հրետանավորն էր: Հրետանային կրակի պլանավորման, նպատակակետերի հետախուզման և նշանառության ճշտման համակարգի ծավալման նպատակով իրականացված հսկայական աշխատանքի շնորհիվ նավախմբի նավերի հրետանային կրակը իրագործվեց բացառիկ արդյունավետությամբ: Կարմրադրոշ բալթյան նավատորմի նավախմբի հեռահար հրետանու կրակը շարքից հանեց ֆիննական ծոցի ափամերձ շրջաններում տեղաբաշխված հակառակորդի կրակային հանգույցները, որը մեծ չափով նպաստեց Լենինգրադյան ռազմաճակատի զորքերի առաջխաղացմանը: Նավախմբի նավերի կողմից Լենինգրադյան ռազմաճակատի զորքերին հրետանային ակտիվ աջակցություն ցույց տալու գործը հաջողությամբ կազմակերպելու համար 1-ին կարգի կապիտան Ա.Ա. Սաղոյանը արժանի է պարգևատրվելու Նախիմովի 2-րդ աստիճանի շքանշանով»⁸: Հաշվի առնելով նավախմբի հրամանատարի միջնորդությունը՝ Բալթյան նավատորմի հրամանատար, ծովակալ Վ.Ֆ. Տրիբուցը 1944 թ.

⁶ ՌԴ ՌԾՆԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 523, թ. 172:

⁷ ՌԴ ՌԾՆԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 523, թ. 176:

⁸ ՌԴ ՌԾՆԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 523, թ. 176:

հուլիսի 8-ի թիվ 64 հրամանով 1-ին կարգի կապիտան Արտավազդ Սաղոյանին պարգևատրեց Նախիմովի 2-րդ աստիճանի շքանշանով⁹:

1944 թ. աշնանը, նկատի ունենալով Արտավազդ Սաղոյանի անբասիր ծառայությունը նավատորմում¹⁰, Բալթյան նավատորմի շտաբի պետ, դերժովակալ Ա.Ն. Պետրովը 1944 թ. սեպտեմբերի 16-ին նրան ներկայացրեց պարգևատրման՝ Կարմիր դրոշի շքանշանով: Շտաբի պետը Ա.Ա. Սաղոյանի պարգևատրման թերթիկում նշել է. «1-ին կարգի կապիտան Սաղոյանը կարգապահ, լավ պատրաստված սպա է: Հայրենական մեծ պատերազմում նա իրեն դրսևորել է որպես բարեխիղճ, իր գործը լավ իմացող մասնագետ-հրետանավոր: Իր գիտելիքներով և եռանդով նա նպաստել է նավախմբի հրետանային պատրաստության մակարդակի բարձրացմանը: Անձամբ ակտիվորեն մասնակցել է նավատորմի մի շարք մարտական գործողությունների: 1944 թ. նոյեմբերի 7-ին լրանում է նավատորմում նրա ծառայության 21 տարի 4 ամիսը: Արժանի է պարգևատրվելու Կարմիր դրոշի շքանշանով»¹¹: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. նոյեմբերի 3-ի հրամանագրով Արտավազդ Սաղոյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով:

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո 1-ին կարգի կապիտան Արտավազդ Սաղոյանը, որպես Բալթյան նավատորմի գլխավոր հրետանավոր, ծառայեց մինչև 1947 թ. դեկտեմբերի 11-ը, պարգևատրվեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի (1946 թ.), Լենինի (1947 թ.) շքանշաններով, ապա առաջ քաշվեց ԽՍՀՄ ռազմածովային ուժերի գլխավոր շտաբի մարտական պատրաստության բաժնի գլխավոր հրետանավորի պաշտոնում: 1951 թ. հունվարի 27-ին Արտավազդ Սաղոյանին շնորհվում է դերժովակալի կոչում: 1951 թ. դեկտեմբեր – 1953 թ. ապրիլ ամիսներին դերժովակալ Ա.Ա. Սաղոյանը ԽՍՀՄ Ռազմածովային ուժերի 2 ինստիտուտի (գտնվում էր Լենինգրադում) պետի տեղակալն էր՝ հրետանային կրակի կառավարման սարքերի և օպտիկայի գծով: 1953 թ. ապրիլի 29-ին դերժովակալ Ա.Ա. Սաղոյանին վստահում են Ա.Ն. Կոիլովի անվան ռազմածովային ակադեմիայի մարտավարական ամբիոնի ավագ դասախոսի պաշտոնը, որը նա վարում է մինչև 1956 թ. ապրիլի 12-ը: 1954 թ. պաշտպանում է գիտական ատենախոսություն և ստանում ռազմածովային գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1956 թ. նրան շնորհվում է դոցենտի կոչում: Ա. Սաղոյանը հեղինակ էր 2 մենագրության, շուրջ 10 գիտական հոդվածների՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռազմածովային ուժերի հրետանու մարտական օգտագործման, գետային նավատորմի նավերի, հրետանային կրակի, նավատորմի գլխավոր հենակետ Տալլինի պաշտպանության գործում նավային հրետանու դերի, Բալթյան նավատորմի 1941-1945 թթ.

⁹ ՌԴ ՌԾՆԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 523, թ. 176:

¹⁰ Ա.Ա. Սաղոյանը նավատորմում ծառայում էր 1922 թ. հոկտեմբերի 30-ից:

¹¹ ՌԴ ՌԾՆԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 523, թ. 173:

գործունեության վերաբերյալ թեմաներին: 1956 թ. ապրիլի 12-ին Ա. Սաղոյանը նշանակվում է ԽՍՀՄ ռազմածովային ուժերի գիտատեխնիկական կոմիտեի 4-րդ բաժանմունքի անդամի պաշտոնում: Նույն թվականին ռազմածովային նավատորմի հրետանու զարգացման գործում ունեցած մեծ ավանդի համար պարգևատրվում է Կարմիր դրոշի երրորդ շքանշանով¹³: 1959 թ. փետրվարի 18-ից դերծովակալը կատարում էր ԽՍՀՄ ռազմածովային ուժերի գլխավոր հրամանատարի հատուկ կարևոր նշանակության հանձնարարությունները: Ընդ որում, պահպանվում էին նրա ծառայողական-իրավական կարգավիճակը և վերջին աշխատավայրում ունեցած պաշտոնի աշխատավարձը: Արտավազդ Սաղոյանը նավատորմում ծառայեց մինչև 1959 թ. հոկտեմբերի 16-ը և պաշտոնաթող եղավ հիվանդության պատճառով: Դրանից հետո մինչև իր մահը՝ 1971 թ. հոկտեմբերի 17-ը, ապրում էր Մոսկվայում՝ Կրասնոպրեսնենսկի շրջանում: Հայազգի անվանի ծովակալը թաղվել է Մոսկվայի Նովոդևիչի գերեզմանոցում¹⁴:

Այսպիսով, 1941-1942 թթ Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի ավելի քան 600.000 (այդ թվում՝ 100 000 սփյուռքահայ) պանծալի զավակներ իրենց արժանի ավանդը ներդրեցին ֆաշիզմի դեմ տարած պատմական հաղթանակում՝ մեծ դեր ունենալով վճռական ճակատամարտերում: Հայերը աչքի ընկան նաև ռազմածովային նավատորմի շարքերում: Հովհաննես Իսակովն արժանացավ Խորհրդային Միության նավատորմի ծովակալի ամենաբարձր կոչման, որին արժանացել է ընդամենը 3 հոգի: Հայ ծովային սպաներից 4-ին շնորհվել է փոխծովակալի, 4-ին՝ դերծովակալի կոչում: Այս կոչմանն արժանացած Արտավազդ Սաղոյանը աչքի է ընկել Լենինգրադի համար մղված հերոսամարտում: Պատերազմի տարիներին նա վարում էր Կարմրադրոշ բալթյան նավատորմի գլխավոր հրետանավորի պաշտոնը: Քաջարի հայորդու կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը կարող է մեծ չափով նպաստել մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը, հայկական զինուժի անձնակազմի բարոյական և մարտական ոգու բարձրացմանը:

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

¹³ Лурье В.М. 2007, Адмиралы и генералы ВМФ СССР 1946-1960, Москва, «Кучково поле», 465.

¹⁴ Арутюнян К. 2020, Участие сынов армянского народа в битве за Ленинград (10 июля 1941 г. – 9 августа 1944 г.), Ереван, «Эдит-принт», 63-66.

ЕГИШЕ ЧАРЕНЦ В РУССКО-АРМЯНСКИХ ЛИТЕРАТУРНЫХ СВЯЗЯХ (К 125-летию со дня рождения поэта)

Заря двадцатого века перевернула все устои цивилизованного мира – бурные социально-политические события, докатившиеся и до Кавказских гор, отражались не только на судьбах народов и стран, но и их рядовых гражданах. Глазастый мальчик из армянского провинциального города Карса на русско-турецкой границе – Егише Согомонян был воодушевлен ветром перемен, долетевшим в их глухие края с холодных суровых равнин России, новыми идеями «всемирного братства и единения народов», назревающим часом освобождения родного армянского народа, истерзанного резней и погромами турецких варваров...

Революционные события 1917 года застали поэта в России, а последовавшая вслед за ними гражданская война явилась для него своеобразным «университетом», когда в солдатских окопах, в редкие минуты затишья между боями, он обдумывал новые стихи и поэмы, записывал куда попало пламенные строки своих знаковых произведений...

В декабре 1921 г. Егише, уже взявший себе печально-многозначительный псевдоним – Чаренц, заканчивает свое новое, нашумевшее в армянском обществе сочинение – «Всепоэму», на которую обратил внимание видный русский поэт В. Брюсов, взявшийся перевести ее на «великий и могучий». Это не было случайностью – взаимный интерес армянских и русских мастеров слова друг к другу имел глубокие корни.

С первых же шагов творческой деятельности Чаренц, оказавшийся в водовороте российской действительности, проявлял глубокий интерес к русской литературе. Так, в своей статье «Современная русская поэзия» (1923) Чаренц отмечал: «Любое литературное движение, происходившее в России, сразу же находило отклик у нас, подталкивало вперед колесо нашей литературы, намечало для нее пути и тропы, а армянский читатель воспитывался на замечательных образцах великой русской литературы»¹. Этот, по его словам, «неоспоримый факт» Чаренц объяснял вековыми торгово-экономическими и общественно-культурными связями Армении и России. Поэт недвусмысленно обличает тех деятелей, которые пытаются воздвигнуть стену между духовной жизнью русского и армянского народов, и подмечает, что именно «с русских бескрайних полей» армянам «ударил в лицо весенний ветер» перемен. Эпоха требовала своих глашатаев, и она получила их: в России наиболее значительным был Владимир Маяковский, в Армении – Егише Чаренц. Ценителям поэзии, знакомым с творчеством этих глашатаев нового общества, нельзя было не заметить общности эстетических принципов обоих

¹ Армянские писатели о русской литературе 1978, Ереван, 219.

поэтов, одинаковой идейной направленности их произведений, близости или сходства интонаций, характеристик, элементов построения образов и т.д. В поэтические строки и русского, и армянского поэта прежде всего выкристаллизовывались именно те понятия и образы, которые жили в сознании народов и в которых наиболее рельефно воплощалась историческая реальность, эпоха перемен глобального масштаба.

Тридцатые годы XX века были ознаменованы небывалым оживлением литературной жизни как в России, так и в Армении. Призыв Горького к писателям лучше познавать творчество друг друга возымел действие: один за другим появляются переводные сборники произведений национальных поэтов; Москва и Ленинград становятся центрами притяжения для разноязычного племени поэтов и писателей огромной страны, в том числе и для деятелей армянской литературы. В начале десятилетия появляется несколько сборников армянских стихов на русском языке. Так, в «Современной армянской поэзии» (1931) наиболее интересным, пожалуй, автором оказался Егише Чаренц, представленный целым рядом сочинений в переводах (к сожалению, не самых лучших переводчиков).

Чаренц, любивший и высоко ценивший русскую поэзию, считал, что переводы его собственных стихов, возможно, даже стыдно «показывать таким изощренным читателям, для которых Пушкин, Блок, Маяковский, Пастернак – свои, отечественные поэты», а потому опасался «средних» переводов, которые рядом с оригинальными стихами русских поэтов – «ничто»². И неудивительно, что армянский писатель был очень строг в выборе переводчиков. Так, в 1933 г. он писал Анне Иоаннисиан, дочери выдающегося поэта Иоаннеса Иоаннисиана, о том, что готовится сборник его стихов в переводе русских поэтов, и просил: «...не можешь ли ты связаться с ленинградскими русскими поэтами, например, с Тихоновым и Тыняновым, чтобы они взяли на себя часть этих переводов... Я бы хотел иметь дело только с ними, а не с какими-нибудь халтурщиками»³.

В последующие годы он пытается сделать все, чтобы его сочинения попадали к талантливым русским переводчикам и редакторам. К сожалению, это удавалось не всегда – лишь отдельные переводы А. Ахматовой, Б. Пастернака, А. Тарковского, П. Антокольского, В. Звягинцевой, А. Гатова и некоторых других более или менее соответствовали духу самобытной поэзии Чаренца, который как-то высказался в том ключе, что, если перевод не удался, лучше его «выкинуть, чем иметь в сборнике вещь малоценную и банальную»⁴.

Однако если поэту что-то нравилось даже чисто субъективно (порою в противовес литературным критикам), он не мог не выразить своей радости и благо-

² Չարենց Ե. 1967, Երկերի ժողովածու, 6 հատ., հ. 6, Երևան, 438:

³ Литературная Россия, N 40, 29.09.1967.

⁴ Мкртчян Л. 1968, Армянская поэзия и русские поэты XIX-XX вв., Ереван, 197.

дарности тому или иному русскому поэту и переводчику. Так, весной 1934 г. Егише Чаренц писал А.Гатову: «С величайшим удовольствием прочитал Ваши переводы моих стихов и поэм и, первым делом, должен сказать Вам, что я прямо в восторге от некоторых переводов: они почти 4 адекватны оригиналам. Вы удивительно хорошо почувствовали и смогли передать в переводе не только почти буквальный смысл моих стихов, строка в строку, но (что самое главное) – подлинный стиль и дух моих писаний – за что я бесконечно признателен Вам высокой благодарностью друга и поэта»⁵.

Несомненно, именно русские переводы произведений Чаренца сделали его имя известным далеко за пределами Армении, и еще на Первом Всесоюзном съезде писателей армянский поэт предстал уже в одном ряду с самыми прославленными мастерами художественного слова. В своем ярком, эмоциональном выступлении на писательском форуме он подчеркнул важность «живого обмена творческим опытом путем взаимных переводов», которые способствуют не только «расширению сфер влияния» национальных поэтов, но и собственному творческому обогащению. Среди тех русских поэтов, у которых он, по собственным словам, «учился», Чаренц назвал Николая Тихонова, Владимира Маяковского, Бориса Пастернака, Илью Сельвинского⁶...

Тридцатые годы особенно расширили круг русских друзей армянского поэта – благодаря писательским форумам, поэтическим вечерам и встречам в Москве, Ленинграде, Ереване; наконец, благодаря оживленным личным контактам в связи с переводческой и литературно-общественной деятельностью (Тихонов, Антокольский и др.). Неизгладимое впечатление произвела на Егише Чаренца личность Максима Горького, побывавшего в Армении в конце двадцатых. Когда же великого писателя не стало, армянский поэт откликнулся пронзительной статьей «Путь гениев и звезд» (1936), в которой представил блестящий портрет «гениального русского писателя», человека «легендарной славы», «величайшего гражданина мира». Чаренц видит перед собой «мудрое лицо шествующего по путям новой человеческой истины интеллектуального чудотворца с взглядом пророка, которому предстояло «обессмертиться в веках не феноменом, поднявшимся со дна социального океана, а родившимся из лона гениального русского народа гениальным писателем и великим гражданином, своим литературным талантом происходившим из величественного рода Пушкина и Толстого, последним органичным звеном в классической цепи русской литературы»⁷.

⁵ Եղիշեն Ե. 1967, 436:

⁶ Եղիշեն Ե. 1967, 257:

⁷ Չարենց Ե. 1967, 285-293:

В середине тридцатых годов Чаренц, в связи с подготовкой первой послебрюсовской «Антологии армянской поэзии», сближается с Н. Тихоновым и П. Антокольским, назначенными русскими редакторами этого объемистого сборника.

С Тихоновым Чаренц встречался еще в двадцатые годы, во время пребывания русского поэта в Армении. В письме от 1935 года, адресованном московскому литератору К. Микаэлян, Тихонов, очарованный талантом и личностью Чаренца, писал: «...Хорошо бы, если бы Вы уговорили... приехать Чаренца. Он бы, во-первых, поговорил о поэзии так, как он умеет говорить, – подробно и блестяще, во-вторых, мы бы с ним поговорили не без взаимного интереса...»⁸.

Высоко ценили друг друга Егише Чаренц и Павел Антокольский. Известный русский поэт и переводчик немало потрудился над армянской поэзией в период работы над антологией, в том числе и над сочинениями Чаренца. Хотя армянское литературоведение весьма скептически восприняло переводы Антокольского, тем не менее они сыграли немаловажную роль в представлении русскоязычному читателю таких сложных и разноплановых произведений, как поэма «Хмбапет Шаварш», стихотворения «Гимн художникам-миниатюристам», «Гимн нашим великим мастерам», и наиболее удачные до сих пор находят себе место в русских изданиях Чаренца.

В одном из своих очерков Антокольский дал выразительный портрет Чаренца, которого он увидел в Ереване в 1935 году: «На лице его были горькие морщины, такие резкие и глубокие, как будто они еще прочерчены углем... душевный творческий возраст все же обозначался. Этот возраст говорил о сложном жизненном опыте, о том, что за плечами этого человека большая, недаром пройденная дорога, полная всего, что может выпасть на долю страстного и очень одаренного человека»⁹.

Егише Чаренц – подлинный поэт-интернационалист, искренний поборник духовного родства народов, в частности армянского и русского, однозначно доказавший это всей своей недолгой, но яркой жизнью и кипучей, плодотворной деятельностью.

РОБЕРТ БАГДАСАРЯН

Доктор филологических наук

⁸ Багдасарян Р. 1995, Николай Тихонов и Армения, Ереван, 148.

⁹ Багдасарян Р. 2004, Антокольский и Армения, Ереван, 89-90.

ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿԵՐՊԱՐԸ ԵՂԻՇԵ ՔԱՋՈՒՆՈՒ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բարեբախտություն է, որ հայ մեծանուն ու փառաբանված զորավար Անդրանիկ Օզանյանի (1865-1927 թթ.) կողքին և նրա շրջապատում եղել են նաև ազնվակորով ու ոգեշունչ թիկնապահներ ու օգնականներ, գրագիրներ և գրողներ, որոնք ազնվորեն արձանագրել և սերունդների հիշողությանն են հանձնել այն ամեն կարևորագույնն ու առանձնահատուկը, ինչը որ տիպական ու բնորոշ է եղել Զորավարի գործունեությանն ու կերպարին:

Նրանց շարքում կարևոր դեմք է Եղիշե Քաջունին: Քաջունին ծնվել է 1889 թ. նոյեմբերի 27-ին Խարբերդի նահանգի Արաբկիր գյուղաքաղաքում: Հայրը՝ Հուսիկ քահանան, սկզբում աշխատել է որպես ուսուցիչ, ապա ձեռնադրվել է քահանա:

Եղիշեն հազիվ հինգ տարեկան էր, երբ մահացավ մայրը՝ Նարդուհի Շապոյանը՝ որբ թողնելով չորս արու զավակներին ու միակ դստերը:

Նրանց ընտանիքը ևս կրում է 1895-1896 թթ. հայոց կոտորածների սարսափները: 1897 թ. տեր Հուսիկին, որպես անբարեհույս անձի, աքսորում են Կ. Պոլիս, որն իր հետ տանում է նաև չորս որդիներին: Այստեղ կյանքի նոր շրջան է սկսվում պատանի Եղիշեի համար: 1903 թ. նա հաճախում է Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանը, որն ավարտում է 1908 թ.՝ «Պատվո աշակերտ» աստիճանով: Երիտթուրքական հեղաշրջումից հետո ուսումը շարունակում է Կ. Պոլսի պետական իրավաբանական վարժարանում: 1914 թ. ավարտելով վերոնշյալ դասընթացը՝ մեկնում է Վան, որտեղ, փաստաբանությունից բացի, տեղի Կեդրոնական վարժարանում ստանձնում է օսմանյան տերության պատմության ուսուցչի պաշտոնը:

1915 թ. ապրիլյան ինքնապաշտպանական մարտերի ընթացքում Եղիշեն զինվորական մասնակցություն է ունենում «Քաջալ Միրզա» կոչված կռիվներին: Վանի ազատագրումից հետո կազմվում է նահանգապետությունը, և Քաջունին նշանակվում է դատարանի անդամ, ապա դատավոր:

Վանի հայության առաջին նահանջի ժամանակ նա հետիոտն հասնում է Էջմիածին, հետո Երևան: Ապա դարձյալ վերադառնում է Վան և այքի է ընկնում զանազան դերակատարություններով:

Նրա կյանքում շրջադարձային է դառնում 1918 թվականը, երբ միանում է Զորավար Անդրանիկի հրամանատարության ներքո գործող Հայկական առանձին հարվածող զորամասին, նախ՝ որպես գանձապահ, ապա նաև՝ քարտուղար:

Այդ զորամասի կազմում նա մասնակցել է Անդրանիկի ռազմական բոլոր ձեռնարկումներին՝ Զուլֆայի, Խոյի, Նախիջևանի, Զանգեզուրի ռազմերթերին:

Քաջունին Ձորավարի հետ վերադարձել է Էջմիածին և նրա հետ տարագրվել արտասահման: Այստեղ ևս անբաժան է եղել իր առաջնորդից:

Անդրանիկը անգլիական Մանչեսթեր քաղաքում հիմնում է հայ գաղթականների հագուստեղենի ֆոնդը, և Քաջունին ընտրվում է այդ ֆոնդի ներկայացուցիչը Կովկաս-Հայաստան գծով: Ձորավար Անդրանիկի հետ նրա մտերմությունն ու համագործակցությունը տևել է մինչև վերջ: Եղիշեի ամուսնության կնքահայրը նույնպես եղել է Անդրանիկը: Հետմահու հրապարակվել է նրա «Ձորավար Անդրանիկ. Հայկական առանձին հարուածող զորամասը» հուշագրությունը, որ Ձորավարի գլխավորած զորամասի կատարած ռազմերթերի օրագրությունն է: Ե. Քաջունին պատմությանը, գալիք սերունդներին է թողել այդ բախտորոշ, ճակատագրական ժամանակներում կատարված դեպքերի և իրադարձությունների ճշմարտացի նկարագրությունը:

Եվ այսօր մենք նրան ենք պարտական պատմական իրականությունը անաչառ ներկայացնելու համար:

Բացի այն բանից, որ սույն հուշագրություն-օրագրությունը գրված է դեպքերի կիզակետում գտնվող ականատեսի և մասնակցի կողմից, այն արժեքավոր է նաև նրանով, որ հասուն ու փորձառու մտքի և մտածողության արգասիք է: Հեղինակը հստակ պատկերացնում է տարածաշրջանում կատարվող իրադարձությունների ամբողջական տրամաբանությունը, պատճառահետևանքային կապերն ու հետևանքները՝ իրենց համադրություններով ու հակադրություններով: Հուշագրությունը թվագրական առումով սկսվում է 1918 թ. ապրիլի 10-ից և ավարտվում 1919 թ. ապրիլի 27-ին, երբ Ձորավարը հավատարիմ անձանց փոքրիկ խմբի հետ հեռացավ հայրենիքից:

Նախաբանում հետևյալն է շարադրված. «Համաշխարհային պատերազմի ամբողջ ընթացքին չէ եղած հայ զորամաս մը աւելի առանձնայատուկ պայմաններու տակ, ռեւէ զորամաս չէ ունեցած աւելի նշանակալից գործունէութիւն, քան «Հայկական առանձին հարուածող զորամասը»: Բոլոր զինուորական ուժերը առավել կամ նուազ կապուած են եղած որեւէ մեծ զանգուածի, պետութեան հետ եւ, հետեւաբար, չեն ունեցած այն «զուտ ազգային-քաղաքական ինքնուրոյն բնոյթն ու նշանակութիւնը», որը ունեցած է «Առանձին հարուածող»-ը...» (Եղիշե Քաջունի, «Ձորավար Անդրանիկ. Հայկական առանձին հարուածող զորամասը», երրորդ հրատարակութիւն, Ե., 2015, էջ 17):

Հուշագրության հեղինակը հակիրճ ներկայացնում է «Հայկական առանձին հարվածող զորամասի» ստեղծման, ձևավորման նախադրյալներն ու միջավայրը, ռազմավարական նպատակադրումները:

Հստակ ընդգծվում է, որ 1918 թ. հուլիսի 4-ին Բաթումում կնքված հաշտության պայմանագրից հետո զորավար Անդրանիկը գործեց Հայաստանի Առաջին հանրապետության վարիչներից անկախ ու առանձին: Նմանապես և իր ղեկավարած աննկուն ու աննվաճ զորամիավորումը, որը Բաքվի կոմունայի անկումից

հետո, «թառած Զանգեզուրի լեռներուն մէջ, կազմեց միակ եւ վերջին կանգուն ֆրոնտը այն բազմաթիվ ֆրոնտներէն, որը հայ ժողովուրդը կերտեց իր հաւատքով ու արիւնով Կովկասի մէջ եւ մնաց անպարտելի, յաղթական» (ն.տ., էջ 19):

Անդրանիկի կերպարը տեսանելի թեւ անտեսանելի կերպով ներկա է գրքի ամեն մի էջում, յուրաքանչյուր իրադարձության խորքում:

Ըստ հեղինակի դիտարկման՝ Անդրանիկն ուներ երկու «հզօր ու հիմնական կիրք – անվերապահ տեսլուծութիւն մեր ազգին թշնամիներու նկատմամբ, ու խոր սէր՝ դէպի ժողովուրդը, մանավանդ խոնարի խավերը: Եղաւ միշտ արդարամիտ ու յանդուգն՝ առասպելական չափերով: Կռիւ վարելու, դիրքեր ընտրելու անոր ընդունակութիւնը մարգարէութեան կը մոտենար: Միշտ խնայեց իր զինուորներուն ու փոքրաթիւ զոհերով մեծ գործեր կատարեց» (էջ 7):

Նրան որպէս զորական ներկայացնելով՝ հեղինակը շեշտադրում է. «Ունեցաւ նաեւ զինակիցներ, ավելի շատ՝ հետեւորդներ, որոնք մնացին իր ծանր ծեռքին տակ՝ կարգապահ ու հնազանդ: Աւելի՛ն, մնացին կապուած անոր: Անոր դեկավարութեան տակ, մանաւանդ կռուի պահերուն, ինքզինքնին ապահով զգացին բոլորը: Իր գթառատութիւնն ու արդարամտութիւնը յարգանք ներշնչեցին նոյնիսկ մեր թշնամիներուն» (ն.տ.):

Իսկ որպէս մարդ, Քաջունու բնութագրումով, Անդրանիկը անշահախնդիր էր, ուղղամիտ ու արդարադատ: Ուներ սքանչելի հիշողություն և պատմելու շնորհք: Անառարկելի և, իհարկե, դրվատելի է հեղինակի այն մեկնությունը, որ հայ ժողովուրդն ինքը մեծագույն պատիվը «մատոյց անոր, երբ իր անսխալական բնազդով ճանչցաւ անվիճելի մեծութիւնն անոր, որ իր ողջութեանն իսկ, գովեց ու երգեց զայն մեկէ աւելի անգամներ՝ «Իբրեւ Արծի», «Հերոս մռնչեց», «Դաշնակցական խումբ» եւ այլն» (ն.տ.):

Հույժ ճշմարիտ է այն դիտարկումը, թե՛ հանգամանքների բերումով, Անդրանիկը եղավ ամենից շատ դատափետված, ամբաստանված, բայց նաև սիրված, հարգված, փառաբանված և օրհնված դեմքը հայ իրականության մեջ: Եվ հակառակ ամեն տեսակ ու ամեն կարգի վատաբանությունների ու վայրահաչությունների՝ քաջարի զորավարը, արդարամիտ անձնավորությունը մնաց իր գահին ու պատվանդանին ամուր և անսասան:

Անդրանիկի հերոսական կերպարը, նրա բարձր որակները, մարդկային, ազնիվ քաղաքացուն ու հանճարեղ զորավարին բնորոշ գծերն ու հատկանիշները ակներև երևակվում են վերոնշյալ ժամանակաշրջանի ծանր և դժնդակ համայնապատկերի վրա, այն ժամանակահատվածի, երբ թվում էր, թե երկրի ու երկնքի բոլոր ուժերը ձգտում են հայ ազգի խսպառ ոչնչացմանը:

Հեղինակը, բացի օրագրային ճշգրիտ գրառումներից, կարողացել է լավագույնս ներկայացնել այդ ժամանակաշրջանը, երբ գործել են Զորավարն ու Հայկական առանձին հարվածող զորամասը: Զորավարի՝ չարիքի հետ անհաշտ, ըմբոստ բնավորությունը, անվերապահ նվիրվածությունը հայրենիքին, ամեն

տեղ, ամեն մի դրվագում զգացվում է: Մանավանդ երկրի համար ճակատագրական պահերին: Այդպիսի մի դրվագ է Բաթումի հաշտության անպատվաբեր պայմանագրի կնքումը: Ջորավարը, ծանոթանալով այդ հաշտության պայմաններին, ցասումով է լցվում այն կնքողների հանդեպ. «Ինչպէ՞ս թոյլ տար, երբ ինք զինուած կեցումս է, թշնամին իր քովէն անցնի երթայ Պաքու կամ Պարսկաստան՝ հարուածելու հայ ոյժ մը կամ դաշնակից ուժ մը: Ինչպէ՞ս վստահիլ թիւրքի խօսքին, զինաթափ լինել և յանձնել բոլոր ճամբաները, երբ Սարըղամիշի, Կարսի և Ալեքսանդրապոլի դրուժան գործելակերպը ծանոթ է» (էջ 35):

Բաթումի խայտառակ հաշտության պայմանագիրը կնքողներին և այն հյու-հնազանդ ընդունողներին է ուղղված Անդրանիկի սույն հեռագիրը՝ հասցեագրված հայկական կորպուսի հրամանատարությանը. «Այս հաշտութեան պայմաններով դարերու ստրկութեան շղթան դուք ձեր ձեռքով ձեր վիզը ու ձեր ոտքերը անցուցիք: Մինչեւ երեք օր ղրկեցէք ուժ՝ բռնելու համար դիրքերը» (ն.տ., էջ 35):

Չընդունելով Բաթումի պայմանագիրը՝ Անդրանիկը որոշում է իր զորամասով դուրս գալ հայկական պետության սահմաններից, որը նախանշել, գծագրել էին թուրքերը:

Հուշագրության հեղինակը օր առ օր նկարագրում է զորամասի և նրա առասպելական հրամանատարի նիստ ու կացը, կենցաղը, հանգիստը, շփումները հայ բնակչության տարբեր խավերի հետ: Բացի բուն փաստագրությունից, եղիշե Քաջունին գրողի, արվեստագետի վարպետությամբ ներկայացնում է օրվա անցքերն ու իրադարձությունները, Ջորավարի հարաբերությունները տարբեր անձանց հետ, տարբեր հանգամանքներում և միջավայրերում: Հետաքրքիր ու հուզիչ դրվագները շատ են: Դրանցից մեկը վերաբերում է Անդրանիկի գլխավորած զորամասի շարժին դեպի Խոյ (1918 թ. հունիսին): Այդ ուղով ռազմարշավի կարևոր կետը Ջուլֆայի կամուրջն էր, որը նաև սահման էր՝ բաժանելով ռուսական Կովկասը Պարսկաստանից. «Կամուրջին երկու կողմը կան երկու Ջուլֆաները՝ ռուսականը և պարսկականը, ռուսականը հայոց ձեռքն է, իսկ պարսկականը՝ թիւրքերու, որոնք այնտեղ ղրկած են պահակախումբ՝ կամուրջը պահելու համար» (էջ 49): Պետք էր արագ գրավել կամուրջը, քանի դեռ թշնամին չէր նկատել հայկական ուժերի երևան գալը և նոր համալրումներով չէր ուժեղացրել դրա պաշտպանությունը: Ահա այդ դրության մեջ Անդրանիկի հնարագետ և վճռական միտքը գտնում է հնարը:

Ջորավարը, ձիավոր հարյուրյակի գլուխն անցած, շարժվում է դեպի կամուրջը՝ թուրքական դիրքը: Ձիավորներն ունեին նաև ջութակ և սրինգ, որով հնչեցնում են թուրքական եղանակներ: Կամրջի վրա թուրք պահակապետը հարցուփորձ է անում Անդրանիկին, թե՛ «Ո՞վ եք, եւ թե՛ կարելի չէ անցնիլ: Անդրանիկ կը պատասխանէ, թե ինք հայ զինվորական X-ն է, որ արդէն հաշտութիւնը կնքուած է հայոց եւ թիւրքերու միջեւ, եւ ինք պաշտօն ունի, թրքական ֆրոնտի հրամանատար Վէհիպ փաշայի եւ Հայկական կառավարութեան կողմէ, գաղթա-

կանութիւնը այդ գծով տանիլ իրենց երկիրը՝ Թիւրքիա, և թէ ինք կը զարմանայ որ Վէհիպ փաշան այդպիսի կարևոր խնդրոյ մասին հեռագիր չէ տուած Ճուլֆայի հրամանատարին»:

Եվ մինչև թուրք պահակապետը ժամանակ է խնդրում հեռագրով հարցում անելու համար, Անդրանիկի խիզախ ձիավորները անցնում են կամուրջը և ձերբակալում պահակներին: Ահա այսպես, առանց կոիվ տալու և արյուն թափելու Զորավարը գրավում է Ջուլֆայի կամուրջը և շարունակում առաջխաղացումը:

Քաջունու աշխատության էջերում լավագույնս է ներկայացվում մեծն Զորավարը՝ իր բնավորությամբ, խոհերով, ապրումներով, մեծ ու փոքր անհանգստություններով և տագնապներով, վերանձնական խոկումներով ու ակնկալիքներով:

Այս գիրքը ևս մեկ հոյակապ հուշարձան է Զորավար Անդրանիկի անմահ ցորդ ու անսակարկելի հայրենասիրության, զինվորասիրության, խորին արդարամտության և անկասելի արդարադատության:

Այն փաստագրված, օրերով ու ամիսներով, երբեմն նաև ժամերով ներկայացնում է Արևելյան Հայաստանի տարածքում Անդրանիկի և իր առաջնորդած զորամասի ունեցած դրաման ու ողիսականը՝ հար և նման հայ ժողովրդի պատմական փոթորկոտ ճակատագրին:

Զարմանալիորեն անաչառ, անվերապահորեն բացառիկ ու ներդաշնակ գործ է Եղիշե Քաջունու օրագրությունը, որն օրագրային նշումների միջոցով արտացոլում է տվյալ ժամանակաշրջանը՝ իրեն բնորոշ վարքուբարքով, տրամադրություններով, կենցաղով, հակասություններով ու հակադրություններով: Եվ այդ ամբողջ համայնապատկերի վրա Զորավար Անդրանիկն է՝ իր անզուգական՝ խիզախ կերպարով, հայ ժողովրդին ու հայ զինվորին անմնացորդ նվիրվածությամբ, վճռականությամբ, բանիմացությամբ, շիտակությամբ և անսակարկ հայրենասիրությամբ:

Քաջունու գրչի ներքո վեր է հառնում Զորավարի նվիրական կերպարը՝ մեզ ծանոթ ու դեռևս անծանոթ շատ կողմերով ու հատկանիշներով:

Անդրանիկի՝ այս հերոսական անհատականության մասին պատմող հուշագրությունն արժևորվում է նաև այդ առումով, քանզի հայ ժողովրդի պաշտելի կերպարի բացահայտումը հույժ անհրաժեշտ և անչափ ուսանելի է հայության հետագա սերունդների համար:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՆԵՐԱՇԽԱՐՀԻՑ ԴԵՊԻ ՆՐԱՆՑ ԲՆԱԶԱՆՑԱԿԱՆ ՀԵՌԱՍՏԱՆՆԵՐԸ

(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Համլետ Գևորգյանի ծննդյան 95-ամյակի առթիվ)



Դժվար է եղել հայոց փիլիսոփայության ճանապարհը պետականության բացակայության դարավոր ժամանակաշրջանում: XX դարում նրա ընթացքը հայտնվել է պետականության աստղի տակ և դրանով պայմանավորված՝ սոցիալ-քաղաքական առանձնահատուկ միջավայրում: Ապագա հետազոտողները XX և XXI դարերի հայ փիլիսոփայական մտքի ձեռքբերումները անկասկած կկապեն այդ իրողության հետ և, հավանաբար, կառանձնացնեն երկու կարևոր հանգամանք: Նախ՝ 1920-ական թթ. բուհական և ապա Երկրորդ աշխարհամարտի տարիներին ակադեմիական համակարգերի ձևավորումն էր, որ թույլ տվեց պետականորեն հովանավորվող կազմակերպական ձևերում առաջ տանել հայ հասարակագիտական, նաև փիլիսոփայական միտքը: Մյուս առավել կարևոր հանգամանքն այն է, որ շուրջ 70 տարի ԽՍՀՄ-ում հաստատված էր մարքսիստական փիլիսոփայության մենաշնորհը: Նրան տրված էր պետական փիլիսոփայական դոկտրինի կարգավիճակ՝ դրանից բխող գիտական, գաղափարախոսական ու գործնական բնույթի բոլոր հետևանքներով: Բոլշևիզմը, որը մարքսիզմը փոխակերպել էր մարքսիզմ-լենինիզմի, նրա մեջ առաջին հերթին տեսնում էր խորհրդային քաղաքական կարգի պահպանման գաղափարախոսական գործիք՝ ձգտելով այն դարձնել ցանկացած փիլիսոփայական այլախոհություն բացառող անառարկելի կաղապարների համակարգ: Իշխանական վերևներից դրանց չհակասելու հրահանգներ էին ստանում գիտության բոլոր ոլորտները. կիբեռնետիկան ու գենետիկան, որոնց կապը քաղաքական հարցերի հետ նույնիսկ տեսանելի չէր, հայտարարվեցին բուրժուական և հետևաբար գաղափարապես վտանգավոր գիտություններ: Ուղիղ երեք սերնդի տևողությամբ այդ շրջանի փիլիսոփայության ապագա հետազոտողները անպայման պետք է հաշվի առնեն այդ հանգամանքը ըստ արժանվույն գնահատելու համար խորհրդային հասարակագետների, ի թիվս որոնց և հայ հասարակագետների աշխատանքը: Բարոյահոգեբանական արգելանքները, ավելի կոշտ ու գաղափարական վերահսկողությունը ավելի խիստ էին հատկապես փիլիսոփայության ոլորտում, որին ծնված օրից իր բնությամբ ներհատուկ է բազմակարծության ու ստեղծագործական ազատության ոգին, և հակացուցված են մտածողությունը կաղապարող կապանքները: Այդ պայմաններում խորհրդային շատ փիլիսոփաներ հնարամտեցին տարբեր ձևերով դուրս գալ մասնագիտական ազատախոհության ուղեծրեր՝ քննարկումների դաշտ բերելով արևմտյան ոչ մարքսիստական փիլիսո-

փայական հայեցակարգեր: Նրանք դա անում էին մարքսիզմի ստեղծագործական զարգացման կամ «բուրժուական փիլիսոփայության քննադատության» ձևաչափերում, և պետք է ասել, որ Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Մինսկում, Թբիլիսիում և Երևանում նրանց շատ բան հաջողվեց անել հատկապես բնագիտության փիլիսոփայության ու իմացության տեսության ոլորտներում, որտեղ մասնագիտական նյութի բարդությունը և գաղափարախոսական սուր հարցադրումների հետ ակնհայտ կապերի բացակայությունը հնարավորություն էին ընձեռում արևմտյան փիլիսոփայական մտքի նվաճումները «գաղափարախոսական ուղեփակոցների» շրջանցումով հասանելի դարձնել խորհրդային իմաստասիրական համայնքին: Ընդհուպ 60-ական թվականները խորհրդային Միության ու Արևմուտքի միջև փիլիսոփայական գաղափարների «ազատ ելումուտ» չկար, և գիտական իմացության փիլիսոփայության հարցերով զբաղվող խորհրդային փիլիսոփաները մարքսիզմի «ստեղծագործական զարգացման կաղապարներում» նոր խոսք ասելու համար կարող էին հենվել գրեթե միայն փիլիսոփայության դասականների վրա: Խորհրդային տարիներին իմաստասիրական մտքի ազատության սահմանափակումների այս իրողությունների խորքի վրա պետք է ապագայում իրենց համարժեք գնահատականները ստանան իմացության փիլիսոփայությանը վերաբերող այն ուսումնասիրությունները, որ արել են ակադեմիական համակարգի հայ իմաստասերները XX դարի 50-90-ական թթ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Համլետ Ամբակումի Գևորգյանի գլխավորությամբ: Բնութագրական է, որ Համլետ Գևորգյանը այդ տարիների այն եզակի իմաստասերներից էր, որ երջանկահիշատակ Վազգեն Չալոյանի նման չմտավ կոմունիստական կուսակցության շարքերը: Նման բան «կուսակցական վերևները» կարող էին հանդուրժել բացառիկ դեպքերում՝ նկատի ունենալով գիտնականի մասնագիտական բարձր արժանիքները:

Համլետ Գևորգյանի կենսագրության մեջ հատկապես արգասաբեր է եղել 1957 թվականը, երբ Հայաստանի ԳԱ փիլիսոփայության սեկտորը լույս ընծայեց նրա երեք գործերը՝ «Ինչ է գիտական կանխատեսումը», «Հիպոթեզը և նրա դերը գիտության մեջ» և «Իմացության մեջ արատարակցիայի դերի մասին» (վերջինս ռուսերեն՝ «О роли абстракции в познании») վերտառություններով: Դրանց թեմաներն արդեն իսկ նշանավորում էին դեռ երեսունը չբոլորած հեղինակի՝ արտագիտական, գաղափարախոսական պարտադրանքները շրջանցելու և գիտական իմացության իմաստասիրական խորքերը թափանցելու կողմնորոշումը: Դրանք մարքսիստական փիլիսոփայության ավանդական հարցերին ստեղծագործական նոր լիցք հաղորդելու իմաստով խորհրդանշական էին ոչ միայն հայ, այլև ընդհանրապես խորհրդային փիլիսոփայության համար:

Այդ տարիներին արևմտյան փիլիսոփայական շրջաններում գիտակցվում էր գիտության վերակազմության նեոպոզիտիվիստական ծրագրի ծախողումը, ծրագիր, որը գիտելիքի լեզվական կեցության հարթության վրա փորձում էր մաթեմատիկական տրամաբանության ընձեռած միջոցներով ճշգրտության բարձր չափանիշներով տալ փիլիսոփայական բազմաթիվ հարցերի պատասխաններ, որոնց քննարկումը ավանդական մեթոդներով դիտարկվում էր որպես սպեկուլյատիվ տեսախոսություն: Առավելապաշտական նկրտումներով գիտելիքի ձևական տրամաբանական վերլուծության նեոպոզիտիվիստական նախագծի ծախողումը բնավ չէր նշանակում, թե նրա իրագործման ջանքերը անպտուղ էին: Հակառակը՝ գիտության լեզվի տրամաբանական վերլուծությունը բացահայտեց գիտելիքի

ծների և հատկապես գիտական տեսության կառուցվածքային այնպիսի կարևոր առանձնահատկություններ, որոնք տեսանելի չէին, քանի դեռ ստեղծված չէր գիտելիքի վերլուծության այնպիսի հզոր գործիք, որը մաթեմատիկական տրամաբանությունն է: Բայց հենց այդ ճանապարհին հարացույցի ջատագովներին սպասում էր հիասթափություն: Նրանք ստիպված էին հրաժարվել գիտական գիտելիքի փիլիսոփայական վերլուծությունը գիտության լեզվի տրամաբանական վերլուծությամբ փոխարինելու ոչ իրատեսական նպատակներից, որից հետո ի վերջո տարրալուծվեցին վերլուծական փիլիսոփայության տարբեր հոսանքներում: Խորհրդային փիլիսոփաները դուրս մնացին նորպոզիտիվիստական ծրագրի մասնակցությունից ոչ միայն այդ տարիներին երկխոսության հարթակի բացակայության պատճառով:

Արևմտյան փիլիսոփայության ուղղություններից մենք այստեղ նորպոզիտիվիզմը առանձնացնում ենք ոչ միայն այն պատճառով, որ հենց նրա շրջանակում էր փորձ արվում նոր լուծումներ տալ իմացության փիլիսոփայության հազարամյակների պատմություն ունեցող հարցերին: Բանն այն է, որ իմաստասիրական խնդրակարգի հենց նույն դաշտում էին ստեղծագործում Համլետ Գևորգյանը և նրա գլխավորած ԳԱ փիլիսոփայության և իրավունքի սեկտորի (հետագայում՝ ինստիտուտի) պրոբլեմային խմբի իմաստասերները: Նույնն էր փիլիսոփայական խնդրակարգը, նույնն էին առաջադրվող հարցերը, բայց տարբեր՝ դավանվող հայեցակարգային կողմնորոշումները: Հետազոտություններում չէր նսեմացվում գիտելիքի տրամաբանական վերլուծության նշանակությունը, բայց դրա հետ մեկտեղ նրա աշխատանքների հիմքում ընկած էր այն մոտեցումը, որ այդ վերլուծությունները, որոնք նշանակալից արդյունքներ կարող են տալ գիտելիքի կառուցվածքի, ներգիտական կապերի ու անցումների բացահայտման հարցերում, չեն կարող օրակարգից հանել գիտելիքի՝ որպես այդպիսին իմացաբանական քննության հարցերը (ինչպես դա փորձում էին անել նեոպոզիտիվիստական հարացույցի հետևորդները), չեն կարող փոխարինել գիտելիքի իմացաբանական քննությանը: Դա մի մոտեցում էր, որը գիտելիքի ներգիտական արժանիքների, նրա ճշմարտության ներգիտական պայմանների հարցերը, որ հիմա գիտակցվում են որպես էպիստեմոլոգիայի իրավասության հարցեր, տարանջատեց նույն այդ հարցերի ավանդական իմացաբանական իմաստավորումից, որում առաջին պլան էր մղվում այդ արժանիքների գնահատումը «գիտելիք-արտաքին աշխարհ» հարաբերության համատեքստում: Ճշմարտության՝ որպես իմացության փիլիսոփայության առանցքային հասկացության, էպիստեմոլոգիական ու իմացաբանական ըմբռնումների տարբերակման այս դիրքերից Համլետ Գևորգյանի գլխավորած հետազոտական խումբը գիտելիքի վերլուծությունը ուղղորդեց դեպի նրա գոյաբանական, մետաֆիզիկական, բնագանցական հարցադրումները՝ այն համոզմունքով, որ առանց դրանց գիտելիքի լեզվաբանական-տրամաբանական վերլուծությունները զրկվում են իմաստային հենքից, դառնում պակասավոր:

Հայեցակարգային լիցք ունեցող այդ դիրքորոշման հետևողական կիրառության շնորհիվ է ստեղծվել Հ. Գևորգյանի «Հավանական և հավաստի գիտելիք» («Вероятное и достоверное знание», Ереван, 1965) ուղենիշային աշխատությունը: Հենց այդ ուսումնասիրության մեջ է հստակ ցույց տրվում, որ հավանականությունը՝ որպես գիտելիքի իմացաբանական բնութագիր տարբեր իմաստ ունի պատահարի հավանականությունից, հավա-

նականությունների մաթեմատիկական տեսության մեջ ընդունված նրա տրամաբանական մեկնաբանությունից, այսպես կոչված, սուբյեկտիվ հավանականությունից և չի հանգեցվում այդ մեկնաբանություններից ոչ մեկին: Գիտելիքի իմացաբանական այդ բնութագիրն առանձնացվեց իբրև հավանականության զուտ ներգիտական կիրառություններից տարբեր իմաստային ծանրաբեռնվածություն ունեցող ուրույն հասկացություն: Հետագայում իր հայերեն աշխատություններն ամփոփող «Փիլիսոփայություն. պատմություն. մշակույթ» ժողովածուում, անդրադառնալով այդ հարցին, Հ. Գևորգյանը նկատում է, որ դա հենց այն բանալին է, որի օգնությամբ է միայն հնարավոր բացել իմացաբանական հարցադրումների իմաստը: Ինչպես պարզվեց, նրբագույն մտածական գործողություններով գիտելիքի իմացաբանական բնութագրերի սահմանազատումը հաճախ նույն անուններով ներկայացվող նրա ներգիտական-էպիստեմոլոգիական բնութագրերից (հավանականությունը այդ օրինակներից մեկն է) նոր իմաստներ է հաղորդում իմացության փիլիսոփայության ավանդական հարցերին: Դա, ըստ էության, այնպիսի դիտակետ է, որտեղից միաժամանակ տեսանելի են և՛ իմացության գոյաբանական ու բնազանցական հեռաստանները, և՛ գիտելիքի ճանաչողական արժեքների ներգիտական իմաստները:

«Հավանական և հավաստի գիտելիք» (ռուսերեն) մենագրության մեջ գիտելիքի իմացաբանական ու ներգիտական բնութագրերի՝ 1965-ին իրագործված այդ սահմանազատումը հարացուցային ներուժ ունեցավ: 1965-ին հաջորդած տասնամյակներին գիտական իմացության «ներգիտական կյանքի» նկարագրությունը աստիճանաբար առանձնացվեց և դարավերջին գիտակցվեց որպես փիլիսոփայական հատուկ մի գիտակարգի՝ էպիստեմոլոգիայի իրավասության առարկա: Մենագրությունը բացեց առաջադրված գաղափարի ծավալման դաշտ՝ իմացության փիլիսոփայության խնդրակարգում գիտելիքի էպիստեմոլոգիական ու իմացաբանական բնութագրերը տարանջատելու և այդ համատեքստում իմացաբանական բնութագրերի վարկը վերականգնելու իմաստով:

Բնական էր, որ որպես այդ ծավալման մերձավոր թեմա պիտի ընտրվեր գիտելիքի տրամաբանական որակների և իմացաբանական բնութագրերի հարաբերության դասական հարցը: Գաղափարը 70-80-ականներին դարձավ ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի այն բաժնում կատարվող հետազոտությունների տանող թելը, որ գլխավորում էր Համլետ Գևորգյանը: Մաթեմատիկայում իմացաբանականի և տրամաբանականի փոխհարաբերության հարցին էր նվիրված Սուրեն Ավետիսյանի դոկտորական ատենախոսությունը: Նույն հարացույցի շրջանակում են կատարվել բաժնի կամ ինչպես այն տարիներին կատակով ասվում էր՝ «*համլետանոցի*» աշխատակիցների գործերը: «Философские вопросы логического анализа научного знания» («Գիտական գիտելիքի տրամաբանական վերլուծության փիլիսոփայական հարցեր») խորագիրն ունեին խնդրին նվիրված ժողովածուների երեք պրակները, որոնք լույս տեսան 1969, 1971 և 1974 թթ: Ժողովածուների երրորդ պրակն ամփոփում էին 1972-ին Երևանում կայացած՝ գիտության տրամաբանության, մեթոդաբանության և փիլիսոփայության հարցերին նվիրված համամիութենական գիտաժողովի նյութերը, որոնցում քննարկվող առանցքային թեման գիտական գիտելիքում իմացաբանականի և տրամաբանականի հարաբերության հարցն էր: Դա հաստատումն էր այն փաստի, որ Հ. Գևորգյանի իմաստասիրական խմբի աշխատանքները ստացել են համամիութենական ճանաչում:

Գաղափարի հետագա ծավալումը քննարկումների դաշտ պիտի բերեր գիտելիքի ներգիտական այնպիսի կարևոր բնութագրեր, ինչպիսիք են օբյեկտիվությունը, պարզությունը, գիտելիքի ճանաչողական արժեքը ներկայացնող մյուս բնութագրերը: Այդպես էլ եղավ: Այդ խնդրակարգը դարձավ ինչպես իր՝ Համլետ Գևորգյանի, այնպես էլ նրա գլխավորած բաժնի աշխատակիցների ուսումնասիրությունների թիրախային ոլորտը: Խնդիրն իր հրատապությունը պահպանում է նաև մեր օրերում: Հարացույցն ունի ծավալման, զարգացման ներքին հնարավորություններ, և կարևոր է, որ հայ իմաստասերները չլքեն անցյալ դարի կեսերին իմացության փիլիսոփայության բնագավառում երևանում գրանցում ստացած այն դիտակետը, որտեղից բացվում է իմացության փիլիսոփայության ուրույն մի համայնապատկեր, որը միավորում է գիտելիքի ճշմարտության, օբյեկտիվության, հավանականության, հավաստիության իմացաբանական-բնագանցական իմաստները նրանց ներգիտական-էպիստեմոլոգիական-ֆենոմենոլոգիական կեցության հետ: Այդ հայեցակետը, ոչ միայն նոր հարցադրումներ բացահայտելու, այլև իմացության փիլիսոփայության ավանդական հարցերը նորովի իմաստավորելու հնարավորություն է ընձեռնում:

Բանն այն է, որ իմացաբանությունն ու էպիստեմոլոգիան ըստ էության խորհրդանշում-ներկայացնում են ճանաչողության երկու մարտավարություն՝ դեպի իմացության առարկայի գոյաբանությունն ունեցած տարբեր մոտեցումներով: Իմացական գործընթացը փիլիսոփայական մի պատկերով ու նկարագրով է ներկայանում, եթե այն ուղղորդված է դեպի հետազոտության առարկայի կեցության հիմքերը, գոյաբանական սահմանային հարցերը, և նույն գործընթացը մեկ այլ փիլիսոփայական պատկերով է ներկայանում, եթե հետազոտողն անօգուտ ու էվրիստիկական ներուժից զուրկ է համարում այդ հարցադրումները և որոշում է գիտական գիտելիքների սահմաններում լուծել դրանց ճանաչողական արժեքին վերաբերող հարցերը: Ճանաչողության այս երկրորդ մարտավարությունը՝ որպես գիտական իմացության փիլիսոփայական հարացույց միանգամից ու անակնկալ ձևով չի հայտնվել XX դարի իմաստասիրության օրակարգում: Տարբեր հարցադրումների տեսքով նրա նախաձևերը առկա են եղել սենսուալիզմի, էմպիրիզմի ուղղություններում, ճշմարտության հարցի դեկարտյան պատկերացումներում, մախիզմում, պոզիտիվիզմում, պրագմատիզմում, նեոպոզիտիվիզմի մեկնարկային տարբերակներում: Այսօր այն տարբեր մեթոդաբանությամբ ներկայացնում են վերլուծական փիլիսոփայությունը և հետմոդեռնիզմը:

Ճանաչողության՝ միմյանցից տարբեր նշված երկու մարտավարությունները, բնական է, տարբեր լուծումներ են տալիս իմացության տեսության ու մեթոդաբանության առանցքային հարցերին, տարբեր պատասխաններ են տալիս ոչ միայն բնագիտության ու ճշգրիտ գիտությունների, այլև սոցիալական իմացության փիլիսոփայության մեթոդյա հրատապ հարցերին: Ի դեպ, գոյաբանական խնդրակարգի շրջանցումը մեր ժամանակներում հատկապես ակնառու է դրսևորվում գլոբալ քաղաքական հիմնախնդիրների ու կոնֆլիկտների կարգավորման հարցերում: Պարզվում է, որ խնդիրը միայն իմացության հարցերում անշահախնդիր և սկզբունքային փիլիսոփայական դիրքորոշման մեջ չէ, ինչպես հաճախ կարծում են. կան դրանք անտեսելու սոցիալ-քաղաքական շարժառիթներ, որ կա վախ առ ճշմարտությունը, որ ունեն քաղաքական հարաբերությունների բոլոր այն սուբյեկտները, որոնց շահերին հակասում է գլոբալ հիմնախնդիրների գոյաբանական խորքերում գոյող

ճշմարտությունը: Իզուր չի ասվում, որ կոնֆլիկտների առաջին զոհը դառնում է ճշմարտությունը, որի սպանության գործը սովորաբար նախաձեռնում է անարդար կողմը:

Կոնֆլիկտների կարգավորման պարագայում խնդրի գոյաբանական հիմքերը շրջանցելու կամ այդ հարցադրումները մերժելու մարտավարությունը երևութանում է որպես ճշմարտության ու արդարության գաղափարները կարգավորման բանակցային խոսույթից դուրս մղելու միտում: Նման մոտեցմամբ դուրս է մղվում նաև խնդրի պատմությունը, որ հակամարտության գոյաբանությունը տանող ուղին, նրա կայանատեղին ու զետեղարանն է: Այդ բոլորի տեղը զբաղեցնում է քաղաքական իրավիճակային նպատակահարմարության սկզբունքը՝ հակամարտող կողմերի հետ աշխատելու հատուկ մի մեթոդաբանությամբ, որը գիտակցված շրջանցում է օբյեկտիվության ու ճշմարտության չափանիշները: Վերջին տասնամյակներում հետմոդեռնիստական հովերով վարակված այդ մոտեցումը ավելի քան ակնհայտորեն դրսևորվել է ԵԱՀԿ հովանու տակ ընթացող Ղարաբաղյան հարցի բանակցային գործընթացում, որտեղ, մի կողմ թողած հիմնախնդրի պատմական, իրավական ու քաղաքական միջազգայնորեն ընդունված փաստերն ու փաստաթղթերը, միջնորդները զբաղվել են հակամարտության կարգավորման ԵԱՀԿ-ի կողմից ընդունելի դիտվող փորձերով:

Գոյաբանական, բնագանցական հարցադրումների շրջանցումը կամ գիտակցված անտեսումը, ինքնին հասկանալի է, փակում է սոցիալական երևույթների սահմանային հիմքերը տանող ուղիները, թույլ չի տալիս միասնական համայնապատկերում միավորել գիտելիքի իմացաբանական ու էպիստեմոլոգիական կերպարները՝ բացահայտելով սոցիալական ճգնաժամերի ու կոնֆլիկտների արմատական պատճառները: Դրանց հաղթահարման խնդիրները հանգեցվում են ճգնաժամային երևույթների հետևանքների դեմ մեծ իմաստով անհեռանկար ու հաճախ անարդյունավետ պայքարին բարեփոխությունների ու օպտիմիզացման մասնակի ծրագրերի՝ առանց այդ ճգնաժամերը սերող խորքային պատճառների քննության: Արցախյան խնդրի դեպքում, ինչպես հայտնի է, դա հանգեցրել է 2020 թ. 44-օրյա պատերազմին, երբ ցեղասպանական վարք դրսևորած Ադրբեյջանը այդպես էլ չստացավ իր արարքին համարժեք իրավական ու քաղաքական գնահատական:

Ասվածից բխում է, որ իմացական մարտավարությունները, որոնց մասին խոսվեց վերը, ընդհանրական բնույթ ունեն այն իմաստով, որ կիրառվել են (և կիրառվում են) թե՛ բնագիտական, թե՛ սոցիալական իմացության ոլորտներում: Փիլիսոփայի համար կարևոր է այդ երկու մարտավարությունների ճանաչողական ներուժի, դրանց կիրառությանն ուղեկցող հարցադրումների իմացությունը՝ դեպի երևույթների գոյաբանությունն ուղղորդված իմացական մարտավարության անհրաժեշտությունը հասկանալու և այն որդեգրելու համար: Անկասկած է, որ այն ձևավորում է հասկացությունների, հարցադրումների, հետազոտության կիրառվող մեթոդների իմաստները ճշգրտելու մտածական մի արվեստ, համայնապատկերային մի մտածողություն, որ Համլետ Գևորգյանը գործադրել է նաև պատմության ու մշակույթի փիլիսոփայությանը նվիրված հետազոտություններում: Դրանք հաստատապես ուղենիշային նշանակություն ունեն ոչ միայն այն մեթոդաբանության շնորհիվ, որի մասին խոսվեց վերը, այլև քննարկվող հարցերում այնպիսի տեսանկյունների բացահայտմամբ, որ հնարավոր է միայն Հ. Գևորգյանին հատուկ համայնապատկերային

մտածողության շնորհիվ: Պատկերացնելու համար, թե ինչքան գունեղ է հեղինակի գիտական ներկայանակը, և ինչքան լայն են սոցիալական փիլիսոփայության նրա ընդգրկումները, թվարկենք դրանց մի քանիսի վերտառությունները՝ «Հայ փիլիսոփայության պատմության մշակութաբանական տեսանկյունները», «Հայոց պատմությունը և մշակույթը Առնոլդ Թոյնբրիի պատմության փիլիսոփայության լույսի տակ», «Քրիստոնեության ընդունումը Հայաստանում պատմության փիլիսոփայության տեսանկյունից», «Եկեղեցին որպես հասարակական հաստատություն և ազգային կյանքը», «Դիտողություններ պատմության փիլիսոփայության առարկայի մասին Կանտից մինչև նեոկանտականություն», «Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ»:

Մտածողության այդ կերպը, այդ հայեցակարգը որդեգրած իմաստասերը մեզանում կատարել է ճշմարտության «տատմերության» սկրապուլոսի գործը, բայց ոչ թե երկխոսությունների, այլ այլընտրական գիտական վարկածների ու տեսությունների մրցակցության ձևաչափում:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Համլետ Գևորգյանը եղել է իմ գիտական ղեկավարը: Իմ բախտը բերել է այդ հարցում, և ես շնորհակալ եմ ճակատագրին: Գիտելիքի ճանաչողական բնութագրերի իմացաբանական-բնագանցական ու էպիստեմոլոգիական-ներգիտական իմաստների տարանջատման, ավանդաբար նույն անվան տակ թաքնված իմաստների սահմանազատման մեթոդաբանական այդ հարացույցն էր ընկած նաև իմ թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների հիմքում: Վերջինը նվիրված էր գիտական գիտելիքի օբյեկտիվության հիմնախնդրին: Նույն մեթոդաբանությամբ եմ առաջնորդվել նաև Ղարաբաղյան հակամարտությանը նվիրված իմ հոդվածներում, գրքերում, ելույթներում ու դասախոսական աշխատանքում:

Հարացույցի ներուժ ունեցող այդ մոտեցումը, բարեբախտաբար, չի մնում միայն գրքերում: Այսօր ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ապագա շրջանավարտները «Իմացության տեսություն», «Գիտության մեթոդաբանություն», «Գիտական գիտելիքի հիմնավորման ու օբյեկտիվության հիմնախնդիրը», «Կոնֆլիկտի փիլիսոփայություն» դասընթացների միջոցով ծանոթանում են հարացույցին և իմանում, որ նրա առաջադրումը կապված է ակադեմիկոս Համլետ Գևորգյանի անվան հետ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր

Հայերեն նյութերի բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**
Սեդա Քուփեյան
Ռուսերեն նյութերի բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седа Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan**
Seda Kupelyan
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**
Computer design and pagination **Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 1176
Ստորագրված է տպագրության 28.07.2022 թ.:
Տպագրական 21 մամուլ: Տպաքանակը՝ 200:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4:
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 28.07.2022 г.
21 л. Тираж – 200. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.
Тел. 581902

Signed for printing 28.07.2022
21 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press,
Yerevan, Marshal Baghramyan av. 24.
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24/4.
Tel. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://Iraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ Iraber@sci.am
Официальный сайт журнала: <http://Iraber.sci.am>
Электронная почта журнала: Iraber@sci.am
Official site of the Journal: <http://Iraber.sci.am>
E.mail of the Journal: Iraber@sci.am